Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ **http://www.armin.am**

էլ. փոստ՝ **info@armin.am**

ՎԱՐԴԳԵՍ ԵՂԻԱՅԱՆ
ԱՐԱ ԱՐԱԲՅԱՆ

ՄԻՍԱՔ ԹՈՌԼԱՔՅԱՆԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ԵՐԵՎԱՆ 2008

ՀՏԴ 941 (479.25)
ԳՄԴ 63.3 (2 Հ)
Ե 384

Հրատարակված է պետական պատվերով

ԵՂԻԱՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ, ԱՐԱԲՅԱՆ ԱՐԱ:
Ե 384 «Միսաք Թոռլաքյանի Դատավարությունը»: Թարգմանություն անգլերենից.-Եր.: Գրաբեր, 2008.-248 էջ:

ԱՆԳԼԵՐԵՆԻՑ ԹԱՐԳՄԱՆԵՑ **ՎԱՀԵ ԳԱԲՈՒՋՅԱՆԸ**

ԽՄԲԱԳԻՐ՝ **ՍԵՅՐԱՆՈՒՀԻ ԳԵՂԱՄՅԱՆ**

ՇԱՊԻԿԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ՝ **ԱՐԻ ԲՈՅԱՋՅԱՆԻ**

ԳՄԴ 63.3 (2 Հ)

ISBN 978-99941-863-6-5

© Վարդգես Եղիայան
© «Գրաբեր» հրատարակչություն,
հայերեն հրատարակության համար, 2008

«ՄԻՍԱՔ ԹՈՌԼԱՔՅԱՆԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՐԵՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

Վարդգես Եղիայանի և Արա Արաբյանի «Միսաք Թոռլաքյանի դատավարությունը» աշխատությունն ունի բացառիկ գիտական և քաղաքական նշանակություն: Հարուստ փաստագրական նյութի վրա հիմնված այդ աշխատությունը նվիրված է հայ ժողովրդի արժանի զավակ Միսաք Թոռլաքյանի կողմից Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետության ներքին գործերի նախկին նախարար Բեհբուդ խան Ջիվանշիրի սպանության գործի դատավարությանը:

Աշխատանքը վերաբերում է պատմական իրադարձություններով լի 1918-1920 թթ. ժամանակաշրջանի ողբերգական էջերից մեկին՝ Բաքվի հայության 1918 թվականի սեպտեմբերին տեղի ունեցած կոտորածին: Այստեղ հարկ է նշել, որ Ադրբեջանը որդեգրել էր նորաստեղծ հանրապետության իր նախանշած տարածքը անցանկալի էթնիկական տարրերից, առաջին հերթին՝ հայերից մաքրելու քաղաքականությունը, որն իրականացվում էր մեթոդիկ և նպատակաուղղված կերպով: Այդ քաղաքականության առաջին դրսևորումներից մեկն էլ եղավ Բաքվի հայության 1918թ. սեպտեմբերյան ջարդը:

Օսմանյան Թուրքիայի օգնությամբ Բաքուն գրավելուց հետո, Ֆաթալի խան Խոյսկու կառավարությունն իր առջև նպատակ ուներ ապահովել Ադրբեջանի ապագա մայրաքաղաքի թաթարական նկարագիրը: Բաքուն Ադրբեջանին պետք էր առանց հայերի: Քաղաքի հայաթափման համար ԱԴՀ կառավարությունը, իր պատկերացմամբ, ուներ հարմար պատրվակ՝ 1918 թ. մարտի իրադարձությունների տեսքով, որոնք որակվում էին որպես «հայերի կողմից Բաքվի մուսուլման բնակչության կոտորած»: Մինչդեռ հայտնի է, որ այդ դեպքերի ժամանակ Բաքվի հայությունն ապաստան էր տվել հազարավոր թաթարների: Հայության կողմից փրկվածների թվում էր նաև տխրահռչակ Բեհբուդ խան Ջիվանշիրը, որը վարձահատույց եղավ նրանով, որ դարձավ սեպտեմբերին Բաքվի հայության ջարդի կազմակերպիչներից մեկը: Բացի այդ, քաղաքի փողոցներում մի կողմից՝ Բաքվի խորհրդի և Հայոց Ազգային խորհրդի և մյուս կողմից՝ Մուսավաթի միջև ծավալված մարտերի զոհ էին գնացել թե՛ հայեր և թե՛ թաթարներ, ուստի ճիշտ չէ այդ իրադարձությունները որակել որպես հայերի կողմից թաթարների ջարդ:

Մյուս կողմից, բազմաթիվ ականատեսների, այդ թվում՝ օտարերկրյա դիվանագետների վկայությունները ցույց են տալիս, որ Բաքուն գրավելուց հետո իրականացվեց հայության կոտորած, ըստ որում, դրա նախաձեռնությունը պատկանում էր ԱԴՀ կառավարությանը: Բաքվի հարուստ նավթատերի որդի Էսադ բեյը վկայում է, որ քաղաքը երեք օրով զորքի կողմից կոտորածի ու թալանի հանձնելու նախաձեռնությունը պատկանում էր հենց խան Խոյսկու կառավարությանը: Նա նշում է, որ թուրքական հրամանատարության հետ այդ հարցը համաձայնեցնելուց հետո Ադրբեջանի կառավարությունը հրապարակեց որոշում, ըստ որի՝ «թշնամու ոսկին, կյանքը և կանայք» երեք օրով տրվում էին բանակին: Այս և բազմաթիվ այլ վկայությունները ցույց են տալիս, որ Բաքվի հայության կոտորածը Ադրբեջանի իշխանությունների կանխամտածված քաղաքականության արդյունք էր: Հայաստանի արտգործնախարարության բողոքի հայտագրին ի պատասխան, Բաքուն հերքում էր հայության ջարդը, իսկ ԱԴՀ խորհրդարանում ունեցած իր ելույթում վարչապետ խան Խոյսկին հայտարարեց, որ աշխարհում ոչ մի կառավարություն չէր կարող կանխել դա, քանի որ այդտեղ սպանվել էին մուսուլ-

մաններ և, բացի այդ, քաղաքը գրավվել էր եռամսյա մարտերից հետո, ու բնակչության զայրույթը հասել էր գագաթնակետին: Փաստորեն, «դեմոկրատական» հանրապետության կառավարությունը արդարացնում էր կոտորածը՝ որպես արժանի պատասխան մարտի դեպքերին:

Այս ամենի համատեքստում ակնհայտ է Վարդգես Եղիայանի և Արա Արաբյանի աշխատության մեծ արժեքը, քանի որ այն պարունակում է մի շարք հետաքրքիր փաստաթղթեր և ժամանակակիցների վկայություններ, որոնք հավելյալ լույս են սփռում Ադրբեջանի կառավարության իրագործած այդ ոճրագործության վրա: Աշխատությունը կարևորվում է նաև Ադրբեջանի պատմության ուսումնասիրության տեսանկյունից, մանավանդ որ հայրենական պատմագրությունը դեռևս բավարար ուշադրություն չի ընծեռել ոչ միայն գիտական, այլև քաղաքական տեսակետից կարևոր այդ բնագավառին:

Դժվար է գերագնահատել նաև աշխատության արդիականությունը՝ նկատի ունենալով ԼՂ հիմնահարցի առկայությունը և հայ-ադրբեջանական լարված հարաբերությունները: Ներկայումս ադրբեջանական պատմագրությունը, կատարելով Բաքվի քաղաքական պատվերը, փորձում է գիտականորեն հիմնավորել Ադրբեջանի ծավալապաշտական նկրտումները: Խեղաթյուրելով 1918-1920 թթ. Անդրկովկասի պատմական իրադարձությունները և փաստերը՝ ադրբեջանցի պատմագիրները նպատակ ունեն ԱԴՀ-ն ներկայացնել որպես կայացած պետականություն, որի կառավարման համակարգի հիմքում ընկած են եղել ժողովրդավարության սկզբունքները, իսկ տարածաշրջանային քաղաքականության հիմքում՝ հարևան հանրապետությունների հետ խաղաղ, բարիդրացիական հարաբերությունների հաստատումը: Հատկապես խեղաթյուրվում են այդ շրջանում հայ-ադրբեջանական հարաբերություններում առկա հակասությունների էությունը և պատճառները, 1918 թ. մարտի դեպքերը ներկայացվում են որպես ադրբեջանցի ժողովրդի «ցեղասպանություն», մինչդեռ սեպտեմբերյան ջարդը լռության է մատնվում:

Ուստի անհրաժեշտ է չափազանց հանգամանալից ուսումնասիրել հատկապես ադրբեջանական պատմագրության մեջ արծարծվող դրույթները՝ պատմական իրադարձություններով և հակասություններով լի շրջադարձային այդ փուլի մասին, ինչը հնարավորություն պետք է տա հայ պատմագրությանը պայքարել դրանց դեմ ու գիտականորեն հերքել այդ բազմաթիվ խեղաթյուրումները: Այդ առումով «Միսաք Թոռլաքյանի դատավարությունը» աշխատությունը մեծ ծառայություն է մատուցում՝ ցույց տալով, թե իրականում ով է եղել զոհը, իսկ ով՝ դահիճը:

ԴԱՎԻԹ ԿՆՅԱԶՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու
31.07.2008

ՆԱԽԱԲԱՆ

«Միսաք Թոռլաքյանի Դատավարությունը» ամերիկահայ անվանի փաստաբան Վարդգես Եղիայանի նախաձեռնած «Հայկական դատը և հայոց ցեղասպանությունը» մատենաշարի չորրորդ գիրքն է: Այն օսմանահպատակ մի հայի՝ Միսաք Թոռլաքյանի դատավարության պատմությունն է: Դատը սկսվել է Կոստանդնուպոլսի Բրիտանական զինվորական դատարանում՝ 1921 թվականի օգոստոսի 11-ին ժամը 10-ին եւ տևել է 38 օր: Թոռլաքյանը մեղադրվում էր 1921 թվականի հուլիսի 18-ին, Կոստանդնուպոլսի Պերա Փալաս պանդոկի մուտքի մոտ Ադրբեջանի նախկին Ներքին գործերի նախարար Բիհբուդ խան Ջիվանշիրի սպանության համար:

«Միսաք Թոռլաքյանի Դատավարությունը», ըստ էության, «Սողոմոն Թեհլերյանի Դատավարության» երկրորդումն է: Երկու դատավարություններն էլ կապված են արյունարբու դահիճների սպանության հետ և երկու իրականացնողներն էլ անմեղսունակ են ճանաչվել: Այս դատավարությունները սոսկ դատական գործընթաց չեն եղել, քանի որ երկու դեպքում էլ, թե՛ Թոռլաքյանի դատավարության ընթացքում՝ Կոստանդնուպոլսի Զինվորական դատարանում, և թե՛ Թեհլերյանի դատավարության ընթացքում, կողմերը, վկայակոչելով պատմությունը, դավանաբանությունը, փիլիսոփայությունը, բնախոսությունը և քաղաքականությունը, փորձել են ազդեցություն գործել դատարանի վրա՝ ներկայացնելով սեփական տեսակետները: Այսպիսով, բացի իրավական իրադարձություններ լինելուց, այս երկու դատավարություններն ի հայտ բերեցին Առաջին համաշխարհային պատերազմի արդյունքում գերմանացիների, թուրքերի, հայերի և ազերիների շրջանում տիրապետող մտայնություններն ու քաղաքական ռազմավարությունը:

1917 թվականի բոլշևիկյան հեղափոխությունից հետո Ռուսական կայսրության կործանումը հնարավորություն տվեց, որպեսզի պան-թուրանական ազգայնական վերնախավերը, թեկուզ մի կարճատև ժամանակի համար, կազմավորեն իրենց անկախ պետությունները, որի նպատակն էր միավորվել օսմանցի ազգակիցների հետ և իրենց տարածքներում իրականացնել էթնիկ զտումներ:

Կարճատև կյանք ունեցող այդ պետություններից մեկն էլ հենց Ադրբեջանն էր, որը 1918-ի մայիսից մինչև 1920-ի ապրիլը, իր 23-ամսյա կարճատև գոյության ընթացքում, կառավարվում էր Միություն և առաջադիմություն կուսակցության կողմից, որը պան-թուրանական ղեկավարության գործուն կլանից էր: Դժբախտաբար, այս կարճատև ժամանակաշրջանի սկզբում, Կովկասի տարածաշրջանի այն տարաբախտ հայերը, ովքեր բնակվում էին Ադրբեջանում, զոհ գնացին բնաջնջման համակարգված արշավի:

Այս գրքում, դատավարության ընթացքում որպես վկա հանդես եկած ականատեսների վկայությունների միջոցով բացահայտվում է Հայոց ցեղասպանության պատմության մեջ քիչ հայտնի մի դրվագ՝ Միսաք Թոռլաքյանի գործունեությունը, այնպիսի մի անձի, ով վերապրելով օսմանյան ցեղասպանությունից՝ վրեժխնդիր եղավ իր ժողովրդի կրած տառապանքների համար: 1921 թվականի հուլիսի 18-ին, Միացյալ ուժերի կողմից գրավված Կ. Պոլսում, նա սպանեց Ադրբեջանի Հանրապետության նախկին ներքին գործերի նախարարին: 1921 թվականի աշնանը նույն քաղաքում գտնվող Բրիտանական զինվորական դատարանում կայացած դատն ավարտվեց Թոռլաքյանի արդարացմամբ, և նա, որպես ազատ մարդ՝ մեկնեց Հունաստան:

Սպանվածը՝ Բիհբուդ խան Ջիվանշիրը, ազգայնական և պան-թուրանական

Մուսավաթ կուսակցության ղեկավարության մի անդամն էր, կուսակցություն, որը Ադրբեջանի անկախ գոյության կարճատև ժամանակաշրջանում կառավարեց երկիրը: Այդ կառավարության ներքին գործերի նախարար Ջիվանշիրը մեղադրվում էր Ադրբեջանի տարբեր շրջաններում հազարավոր հայերի սպանության մեջ: Նրա և իր հանցակիցների իրականացրած վայրագությունների գագաթնակետը հանդիսացավ 1918-ի սեպտեմբերին Ադրբեջանի մայրաքաղաք Բաքվում 30,000 հայերի կոտորածը:

Թոռլաքյանի դատավարության ժամանակ ներկայացված վկայությունները հնարավորություն տվեցին ի մի բերել պատկերացումները Բաքվում 1918-ի սեպտեմբերին կատարվածի մասին: Դրանք, միաժամանակ, բանալի տվեցին ըմբռնելու այդ դեպքերի բուն իմաստը, ինչպես նաև հայազգի հպատակների դեմ ավելի վաղ թուրք-ազերի պարագլուխների կողմից կատարված եղեռնագործությունների փոխկապակցվածությունը: Սակայն Բաքվի դեպքերը տեղի ունեցան Առաջին համաշխարհային պատերազմի ավելի ուշ շրջանում, աշխարհաքաղաքական հեղհեղուկ պայմաններում: Այդ դեպքերի ստորև բերվող համառոտագրությունը տալիս է իրադարձությունների ժամանակագրական ու պատմական բովանդակությունը և բնութագրում նրա գլխավոր կազմակերպիչներին:

ՎԱՐԴԳԵՍ ԵՂԻԱՅԱՆ

ԱՆՁՆԱԿԱՆ ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

1955-1960 թվականներին, երբ ես Կալիֆոռնիայի Բերկլի համալսարանի ուսանող էի, առիթ էի ունենում հանդիպել Միսաք Թոռլաքյանին ամեն անգամ, երբ նա Սան Ֆրանցիսկո էր գալիս Սողոմոն Թեհլերյանի և Արշավիր Շիրակյանի՝ հետ մասնակցելու Հեյթ Էշբըրիում գտնվող Հայկական կենտրոնում կազմակերպվող միջոցառումներին:

Քանի որ Սողոմոն Թեհլերյանը և ես բնակվում էինք Սան Ֆրանցիսկոյում, բնականաբար, նրան ավելի մոտիկից գիտեի, քան Արշավիր Շիրակյանին կամ Միսաք Թոռլաքյանին:

Միջոցառումներին նրանք երեքով էին նստում և, առանց բացառության, միշտ զբաղեցնում էին դահլիճի վերջին շարքը: Մինչև կյանքիս վերջը պիտի ափսոսեմ, որ չփորձեցի ավելի հանգամանալից զրույցներ ունենալ Միսաք Թոռլաքյանի հետ:

Բանն այն չէ, թե չեմ փորձել: Սակայն ամեն անգամ, երբ մոտենում էի և ձեռք էի թոթվում երեքի հետ, մի քանի խոսք փոխանակելուց հետո, Սողոմոն Թեհլերյանը միշտ ասում էր, որ ես գնամ և նստեմ իմ հասակակիցների հետ: Իր ամբողջ կյանքի ընթացքում Թեհլերյանը ձգտեց իրական կյանքից առավել առասպելական դարձնել այն ամենը, ինչը նրանք երեքով վայելում էին:

Այսպիսով, այն ընդհանուր տպավորությունը, որ ունեցա Միսաք Թոռլաքյանից և Արշավիր Շիրակյանից այն էր, որ նրանք շատ խոնարհ, իրենց վրա ուշադրություն չհրավիրող, ամաչկոտության հասնող պարկեշտության տեր անձնավորություններ էին և իրենց պահում էին այնպես, կարծես մարդկանց հետ հաղորդակցվելու սովոր չլինեին:

Թոռլաքյանը հաճելի դեմք, տխուր աչքեր և նուրբ հումոր ուներ: Նա ապրում էր համեստ, Լոս Անջելեսի Մոնթեբելլոյի մի հանգիստ թաղամասում, որն այն ժամանակ ապաստան էր հայ ներգաղթողների համար, ովքեր այնտեղ էին տեղավորվել Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո:

Թոռլաքյանը մի մարդ էր, որի սարսափած աչքերը, ի տարբերություն մեզ, հայերի կրած տառապանքը տեսել էին ո՛չ թե լուսանկարներով, այլ իրականում. քայլող մեռյալներ, կմախքացած տղամարդիկ ու կանայք, անապատներում սփռված դիակներ...

Այդ զոհերը ապրող, շնչող կենդանի էակներ են եղել, ովքեր ընդամենը մի քանի օր առաջ լեցուն են եղել հույսով ու կյանքով: Նրա հիշողության մեջ ապրող տեսարանները ո՛չ թե երևակայական տեսարաններ էին, այլ իրական, ապրված մղձավանջներ:

Հակառակ իր կրած տանջանքներին, Թոռլաքյանը մի մարդ էր, որն իր պարկեշտությամբ ժողովրդին ու երկրին ծառայելու օրինակ էր տալիս մնացած հայերին: Նա տոգորված էր մի այնպիսի նվիրումով, որը դժվար է գտնել մեկ ուրիշի մոտ: Թոռլաքյանը մարդկանց ներշնչում էր լայնախոհ լիբերալիզմ և մարդիկ ձգտում էին նմանվել նրան: Երբ նրան հարցնում էին, թե՝ արժե՞ր անել այն, ինչ որ արվեց, նա առանց երկմտելու միշտ պատասխանում էր՝ «Այո՛»:

«Միսաք Թոռլաքյանի դատավարությունը» կազմելու համար երկու աղբյուրներ են օգտագործվել. մեկը՝ թրքական, մյուսը՝ բրիտանական: Ընդհանուր նյու-

թը բրիտանական աղբյուրներից է* , իսկ վկաների ցուցմունքները վերցված են թե՛ բրիտանական աղբյուրներից, և թե՛ «Իլերի» օրաթերթի թղթակից Ահմեդ Չեմալեդդինի թրքերեն լեզվով գրված «Մեր ժամանակների ամենամեծ և ամենահետաքրքիր դատավարությունը՝ Թոռլաքյանի դատավարությունը»** գրքից:

Չեմալեդդինը հետևյալ ձևով է բացատրել նյութերը հավաքագրելու իր շարժառիթը. *«Իմ նպատակն է բառացի վերարտադրել այն դատավարության ընթացքը, որ ես լսեցի: Ընթերցողին կմնա անել բանական եզրակացություն»:*

Ես երկրորդում եմ նրա նպատակը:

* British Foreign Office Documents – The Lemkin Collection.
** Ali Shukru Printing House – Babliali Cagaloglu Boulevard, 1921.

ԱԿՆԱՐԿ 1918-ԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ ՏԻՐՈՂ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

XX դարի սկզբներին մեծ թվով հայեր էին ապրում Կովկասում, որն այն ժամանակ ցարական Ռուսաստանի ծայրամասերից մեկն էր: Հայերը մեծ մասամբ կենտրոնացած էին մեծ քաղաքներում, ինչպես օրինակ՝ Թիֆլիսում, Բաքվում և Գյանջայում, որոնք, ըստ էության, բազմազգ քաղաքներ էին, և ոչ մի էթնիկ խումբ դրանցում տիրապետող չէր:

1917-ի նոյեմբերի բոլշևիկյան հեղափոխությունը ամբողջ ռուսական կայսրությունը ներքաշեց խառնաշփոթ վիճակի եւ իրարանցման մեջ, որը, ի վերջո, հասցրեց կործանման: Այն նաև պատճառ դարձավ Առաջին համաշխարհային պատերազմից Ռուսաստանի դուրս քաշվելուն, որը ձևակերպվեց Բրեստ-Լիտովսկի 1918-ի մարտի պայմանագրում: Այդ պայմանագրի համաձայն, Ռուսաստանը զիջեց Ուկրաինան և Վրաստանը իբրև անկախ պետություններ, իսկ Արևելյան Թուրքիայի հայերով բնակեցված մեծ տարածքները թողնվեց Օսմանյան կայսրությանը:

1918-ի մարտին տեղի ունեցած քաղաքական և տարածքային փոփոխությունները, որոնք զուգորդված էին բոլշևիկների և սպիտակ ռուսների միջև մղվող պատերազմով, հասցրեցին Կովկասում փոքր պետությունների և այլ միավորումների ստեղծմանը: Մասնավորապես, 1918-ի փետրվարին Թիֆլիսում, կազմավորվեց Անդրկովկասյան Սեյմը (Պառլամենտը)՝ իբրև կիսանկախ Անդրկովկասյան Դաշնության օրենսդիր մարմին, որը ներկայացնում էր շրջանի հայերին, ազերիներին և վրացիներին:

Սեյմի և Դաշնության կազմավորումը տեղի ունեցավ Կովկասում ծայրահեղ խառնաշփոթ ժամանակ: Որոշ ազգայնական խմբեր այդ ընթացքում էթնիկ զտումներ էին իրականացնում: Բոլշևիկները, սպիտակ ռուսները և Ռուսաստանում իշխանության ձգտող այլ մրցակիցներ, զբաղված էին մարտեր մղելով: Տարբեր խմբավորումներ պայքարում էին առանձին պետությունների անկախության համար: Գոյության համար մղվող այս պայքարը և մարտերը արագորեն խախտում էին տարբեր խմբերի միջև կնքված փխրուն միությունները, ինչը հանգեցնում էր իրադրությունների փոփոխություններին թե՛ մարտադաշտերում, և թե՛ սովորական մարդկանց կյանքում:

Քաոսային իրավիճակը և դրան ուղեկցող հետևանքները կորստաբեր եղան Բաքվի հայության համար: 1918-ի մարտին բոլշևիկների և Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցության միջև կազմվեց մի անհավանական միություն: Այն հեղաշրջման միջոցով վերցրեց Բաքվի իշխանությունը, փորձելով թույլ չտալ, որ պան-թուրանական ուժերն իրենց ձեռքը վերցնեն Ադրբեջանի հսկողությունը: Բոլշևիկների նպատակն էր Ադրբեջանը պահել կոմունիստական վերահսկողության տակ: Դաշնակցության նպատակն էր կանխել կոտորածների կրկնողությունը, որոնք տեղի էին ունեցել Կովկասում, մուսավաթական կուսակցության ուժերի հսկողության տակ գտնվող այլ տարածքներում: Մարտերի ընթացքում երկու կողմից հազարավոր զոհեր եղան: Հեղաշրջման արդյունքում կազմվեց «Բաքվի Կոմունան», որի բոլշևիկ ղեկավարը հայազգի Ստեփան Շահումյանն էր: Վերջինիս ազգային պատկանելությունն այն ժամանակ ամրապնդեց ազերիների ենթադրությունն այն մասին, թե հայերը բոլշևիկների դաշնակիցն են:

1918-ի մայիսին Անդրկովկասյան Դաշնությունը կազմալուծվեց: Պատճառը

բաղկացուցիչ տարրերի միջև անհամաձայնությունները և Եվրոպայում ու Կովկասում ռազմական վիճակի արագ փոփոխություններն էին: 1918-ի մայիսին Հայաստանը, Ադրբեջանը և Վրաստանը հռչակվեցին անկախ պետություններ: Ազերի պետությունը վայելում էր պան-թուրանական Օսմանյան կայսրության աջակցությունը, որն այն ժամանակ կարծես համաշխարհային պատերազմում հաղթելու շանսեր ուներ: Օսմանյան պետության դաշնակից Գերմանիան սատարում էր Վրաստանին: Բաքվի Կոմունան վերահսկում էր Բաքուն: Այդ պատճառով անկախ Ադրբեջանի նոր մուսավաթական կառավարությունը՝ վարչապետ Խան Խոյսկու գլխավորությամբ, հաստատվել էր Գյանջայում: Այս կառավարության մեջ Բիբուդ խան Ջիվանշիրը Ներքին գործերի նախարարն էր:

1918-ի հուլիսի վերջերին Բաքվի կոմունան տապալվեց՝ իրեն «Կասպյան մեծ բռնակալություն» կոչող մի կազմակերպության ուժերով, որը բրիտանացիների կողմից պաշտպանվող մի միություն էր: Դրանից կարճ ժամանակ անց՝ օգոստոսի սկզբներին, մոտ 1,000 մարդուց բաղկացած բրիտանական մի արշավային ուժ Պարսկաստանից հասավ Բաքու: Մտահոգված այն բանով, որ օսմանյան թուրքերի կողմից քաղաքը գրավվելու դեպքում գերմանացիները ազատ մուտք պիտի ունենային քաղաքի նավթային տարածություններ, բրիտանական ուժը՝ գեներալ մայոր Լիոնել Ս. Դանստերվիլի հրամանատարությամբ, ուղարկվեց օգնելու քաղաքը պաշտպանելու օսմանյան Թուրքիայի հսկա բանակից, որը առաջանում էր Թիֆլիսից: Բրիտանական ուժը, որը նաև հայտնի էր իբրև «Դանստերֆորս», քաղաքի պաշտպանությունը կազմակերպեց ռուսական միավորման վերապրուկների հետ միասին, որոնք նույնպես Բաքու էին հասել Պարսկաստանից: Ռուսական միավորումը, որը բաղկացած էր գլխավորապես ռուսական կազակներից և հայերից, գտնվում էր գեներալ-մայոր Լազար Բիչերաքովի հրամանատարության ներքո:

Նուրի փաշան առաջնորդում էր Օսմանյան Թուրքիայի առաջ շարժվող բանակը: Նրա եղբայրը՝ Էնվեր փաշան, Օսմանյան Կայսրության ռազմական նախարարն էր և Միություն ու Առաջադիմություն կուսակցության պան-թուրանական գլխավոր գաղափարախոսը: Երբ բոլշևիկների՝ իշխանության գլուխ գալուց հետո ռուսական բանակը քայքայվեց և 1918-ի մարտին Ռուսաստանը պաշտոնապես դուրս եկավ պատերազմից, Էնվեր փաշան, Բաքուն վերցնելու համար, Մուրսել փաշայի ղեկավարությամբ, մի բանակ ուղարկեց, այն նկատառումով, որ դրանով իր հսկողության տակ վերցնի Կենտրոնական Ասիան և սկսի ստեղծել մի պան-թուրանական կայսրություն: Սակայն այդ ջանքերը ձախողվեցին մասամբ այն պատճառով, որ գերմանացիները Թուրքիային չտրամադրեցին այն օգնությունը, որի կարիքը նա ուներ:

Չկամենալով թույլ տալ, որ իրենց օսմանյան դաշնակիցները հսկողություն ձեռք բերեն Բաքվի նավթատարածքների վրա, Գերմանիան ուզում էր վերահսկել Բաքուն կա՛մ ուղղակիորեն իր սեփական ուժով, կամ էլ դաշնակցելով բոլշևիկների հետ: Այդ նպատակին հասնելու համար 1918-ի գարնանը և վաղ ամռանը գերմանացիները Թիֆիսի իրենց հենակետից օգնեցին Բաքվի կոմունային: Գերմանիայի դիրքորոշումը Բրիտանիային մղեց միջամուխ լինել այն ուժերի կողմից, որոնք դիմադրում էին ինչպես Բաքվի կոմունային, այնպես էլ առաջխաղացող թրքական բանակին: Հավանական է, որ միջամուխ լինելու վերաբերյալ բրիտանական որոշումը ընդունված պետք է լինի 1918-ի մայիսին, երբ Արևմտյան ճակատում գերմանական մեծ հարձակումը դարձավ իրական հնարավորություն Առաջին Համաշխարհային պատերազմում Գերմանիայի վերջնական հաղթանակի վտանգով:

Թեև երկու ամսից ավելի տևեց, որպեսզի Հնդկաստանի և Պարսկաստանի բրիտանական ստորաբաժանումները կազմակերպեին իրենց արշավային ուժերը, սակայն դրանց Բաքու հասնելու ժամանակ Եվրոպայում պատերազմի ընթացքը արդեն նորից փոխվել էր: Գերմանական հարձակումը ձախողվել էր: Թվում էր, որ Գերմանիայի պարտությունը ժամանակի հարց է միայն:

Օգտվելով Գերմանիայի թուլությունից, Էնվեր փաշան, Բաքուն վերցնելու նպատակով, նորից զորք ուղարկեց, դարձյալ իր եղբոր՝ Նուրիի հրամանատարությամբ, այս անգամ 60,000 մարդուց բաղկացած մի բանակ, որը հայտնի էր որպես «Իսլամի բանակ»: Վերջնական նպատակը նույնն էր. շրջանի պան-թուրանական ուժերի օգնությամբ գրավել Կենտրոնական Ասիան: Այս բանակը Բաքվի դարպասներին հասավ 1918-ի սեպտեմբերին և միացավ Մուրսել փաշայի զորախմբի հետ, որն սպասում էր քաղաքի արվարձաններում, քանի որ 1918-ի մայիսին և հունիսին գերմանացիներին արտոնված չէր քաղաքը վերցնել: Քաղաքը պաշտպանող ուժը բաղկացած էր 7,000 հայերից և Բիչերաքովի հրամանատարության տակ գտնվող 3,000 ռուսներից, ինչպես նաև բրիտանական Դանստերֆորսից: Շուրջ 10 օր տևած մեկուսացած մարտերից և հրետանային պաշտպանական կրակոցներից հետո, Դանստերվիլը որոշեց, որ անօգուտ է կռվելը:

1918-ի սեպտեմբերի 14-ի գիշերը նա նավով դուրս բերեց իր զորքերը: Հաջորդ օրը ռուս-հայկական պաշտպանական բանակը քաղաքը հանձնեց Նուրի և Մուրսել փաշաների բանակին:

Հանձնումից հետո, թրքական բանակի հետ կռվող թուրք և թաթար անկանոն զորախմբերը մտան քաղաք: Նրանք, տեղի մուսավաթիստական տարրերի հետ միասին իրականացրեցին Բաքվի հայ բնակչության եռօրյա համատարած, խառնաշփոթ սպանություններ ու թալան: Այդ երեք օրերի ընթացքում այնտեղ ներկա էին նաև Գյանջայի Մուսավաթ կառավարության բարձրաստիճան պաշտոնյաները, որոնք, սակայն, ոչ մի բան չձեռնարկեցին ջարդերը դադարեցնելու համար: Թրքական կանոնավոր բանակը Բաքու մտավ 1918-ի սեպտեմբերի 18-ին և վերականգնեց քաղաքի անդորրը: Մինչ այդ 30,000 հայեր էին կոտորվել: Վերապրողների մեծ մասը բռնի ուժով հեռացվեց: Հայերի համար զավեշտաբար, Օսմանյան կայսրությունը Դաշնակիցներին հանձնվեց 1918-ի հոկտեմբերի 31-ին՝ կոտորածներից միայն վեց շաբաթ հետո, և բրիտանական հաղթական ուժերը Բաքու վերադարձան 1918-ի նոյեմբերի 17-ին:

Սովետական բանակը Բաքու մտավ 1920-ի ապրիլի 17-ին. դրանից երկու ամիս առաջ, 1920-ի փետրվարի 15-ին, Ադրբեջանի կառավարությունը ձևականորեն մերժեց բրիտանական պահանջը, հանձնել թուրք մեղադրյալներ Նուրի և Հալիլ (Էնվերի եղբայրը և հորեղբայրը) փաշաներին՝ առարկելով, որ նման գործողությունը մի կողմից հյուրընկալական օրենքների խախտում կլիներ, մյուս կողմից պետք է հաշվի առնվեին Նուրիի և Հալիլի ծառայությունները Ադրբեջանին:

1918-ի սեպտեմբերի կեսին Բաքվում սանձազերծված ոչ այնքան հայտնի ողբերգությունը մարդկային վերջակետ դրեց Բաքվում հայկական մեծ ու բարգավաճ ներկայության պատմությանը: Հայերի մեծ մասը այլևս քաղաք չվերադարձավ, մինչև Երկրորդ Համաշխարհային պատերազմից հետո կանոնավոր կյանքի վերականգնումը: Այդ եղեռնագործությունը կրկնվեց 1988-ին, և հայերը, որոնք Բաքվում հաշվվում էին 200,000, կրկին ենթարկվեցին վայրագությունների և քշվեցին Բաքվից, այս անգամ որպես Սովետական Միության կազմալուծումից հետո Լեռնային Ղարաբաղի կապակցությամբ Հայաստանի և Ադրբեջանի միջև առաջացած հակամարտության հետևանք:

ԼՍՈՒՄՆԵՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

Միսաք Թոռլաքյանը, Պերա Փալաս հյուրանոցի դիմաց սպանել էր Ադրբեջանի ներքին գործերի նախկին նախարար Բիհբուդ խան Ջիվանշիրին, այն ժամանակ, երբ վերջինս, իր կնոջ և երկու եղբայրների հետ միասին վերադառնում էր Թեփեբաշի զբոսայգուց:

Բրիտանական զինվորական դատարանը այդ գործը սկսեց լսել 1921 թվականի հուլիսի 18-ին:

Դատարանի կազմը հետևյալն էր.
Նախագահող - Մայոր Ֆրեզբի, Հեմփշիրի Առաջին գնդի հրամանատար
Առաջին անդամ - Կապիտան Բերկլի
Անդամներ – Կապիտան Օ'Կոններ և կապիտան Ռիկատսոն Հաթ:
Գնդապետ Բալլարդի օգնականը հանդես էր գալիս իբրև մեղադրող:

Դատապաշտպանները նստած էին մի առանձին սեղանի շուրջ, որը տեղադրված էր դատավորական կազմի սեղանի աջ կողմում:

Միսաք Թոռլաքյանի դատապաշտպաններն էին՝ (Հմայակ) Խոսրովյան էֆենդին՝ Ստամբուլի համալսարանի քրեական իրավունքի նախկին պրոֆեսոր, Մալթայի Դոկտ. Միզզին, «Լևանտ Հերալդ» օրաթերթի նախկին տնօրենի որդին, մի թերթ, որը հրատարակվում էր Ստամբուլում, (Տիգրան) Բարսամյան էֆենդին, նախկին պատգամավոր Սեբաստիայից և դատավարության ժամանակաշրջանում Ստամբուլի համալսարանի դասախոս: Դատավորական կազմի սեղանի ձախ կողմում, հենց դատապաշտպանների սեղանին դեմ-հանդիման, նստած էր Ջիվանշիր ընտանիքի պաշտպանական կազմը՝ Հայդար Ռիֆատ բեյը, թարգմանիչ Ռեշիդ Դանյալ բեյը և քարտուղարը՝ իրավագիտության ուսանող Սուրեյա Ագաևա խանումը: Մեղադրող Ռիկատսոն Հաթը նստած էր անմիջապես հանրային փաստաբանների կողքին: Դատախազի մյուս կողմը վերապահված էր մամուլի ներկայացուցիչների համար:

Դատապարտյալը նստած էր անմիջապես դատավորական կազմի սեղանի դիմաց՝ մի նստարանի վրա, երկու թուրք և մեկ անգլիացի ոստիկանների հսկողության տակ:

Դատավարությունը սկսվեց Ստամբուլում՝ Օկուպացիոն միացյալ ուժերի հրամանատար, գեներալ Հարինգտոնի կողմից ստորագրված հետևյալ հայտարարության ընթերցմամբ.

«Օսմանյան քաղաքացի Միսաք Թոռլաքյանը 1921 թվականի հուլիսի 18-ի գիշերը, Բեյօղլուի մեջ սպանել է Բիհբուդ խան Ջիվանշիրին: Նա մեղադրվում է մարդասպանության մեջ և պիտի դատվի զինվորական դատարանում»:

Այդ հայտարարությունը ընթերցելուց հետո, առաջին վկան՝ Բիհբուդ խանի եղբայր Ջամշիդ խանը կանչվեց վկայության:

ՄԵՂԱԴՐՈՂ ԿՈՂՄԻ ՎԿԱՆԵՐԸ

ԱՌԱՋԻՆ ՎԿԱ

Սպանվածի եղբայր Ջամշիդ խան Ջիվանշիրը երդվելուց հետո տվեց հետևյալ ցուցմունքը.

-Անցյալ հուլիսի 18-ին, ժամը 12:30-ի մոտ, իմ երկու եղբայրներս, հարսս և ես դուրս եկանք Թեփեբաշի զբոսայգուց և սկսեցինք քայլել դեպի «Պերա Փալաս» հյուրանոցը: Հյուրանոցին մոտենալիս, ատրճանակի երկու-երեք կրակոց լսեցի հետևի կողմից: Ես քայլում էի իմ եղբորից՝ Բիհբուդից առաջ: Երբ կրակոցները լսեցի, նայեցի շուրջս և տեսա, որ մեկը ատրճանակով կրակում է եղբորս վրա: Վստահ եմ, որ կրակողը այս պաշտպանյալն էր: Եղբայրս փորձեց բռնել մարդասպանին, բայց չկարողացավ, որովհետև վիրավորված էր: Հետո նա ընկավ գետին: Նա միաժամանակ գոռաց՝ «Օգնություն, օգնություն»: Ես փորձում էի բռնել պաշտպանյալին, որն ուզում էր կրակել. մի պահ բռնեցի նրան: Այդ ժամանակ պաշտպանյալը կրակեց իմ վրա և վիրավորեց իմ ձախ աչքի կողքը: Կրտսեր եղբայրս, հարսս և ես պահեցինք նրան, որպեսզի չփախչի մինչև ոստիկանության հասնելը: Դեպքի վայր հասավ նախ թուրքական ոստիկանությունը: Ես պաշտպանյալին հանձնեցի ոստիկաններին և դարձա դեպի իմ եղբայրը: Եղբայրս դեռ կենդանի էր: Տեսա, որ վիրավորված է երկու տեղից: Մեկ վերքը կրծքի աջ կողմում էր, մյուսը՝ ստամոքսի ձախ կողմում: Եղբայրս մահացավ հիվանդանոց հասցնելուց երեք քառորդ ժամ հետո: Ես ներկա էի հուղարկավորությանը հուլիսի 20-ին: Այդ գիշեր ես առաջին անգամ տեսա պաշտպանյալին: Եղբայրս երբեք որևէ նախազգուշացում չէր ստացել, թե ինքը կարող է մարդասպանության թիրախ լինել: Ես եղբորս հետ Ստամբուլ էի եկել հունիսի 25-ին և այդ ժամանակվանից մնում էինք «Պերա Փալաս» հյուրանոցում: Ադրբեջանում վերջին երեք տարիներին ապրում էի եղբորս հետ: Ես չգիտեմ, որ եղբայրս ընդգրկված լիներ որևէ գործողության մեջ, որը տաներ դեպի հայերի կոտորածներ:

Ջամշիդ խանը մեղադրվող կողմի դատապաշտպան Խոսրովյան էֆենդիի հարցերին պատասխանեց հետևյալ կերպ*.

-Ես Գյանջա քաղաքում էի, երբ բրիտանացիների՝ Բաքվից քաշվելուց հետո տեղի ունեցան կոտորածները: 1918-ին Բաքվից նրանց առաջին անգամ դուրս քաշվելուց հետո, այսինքն՝ բոլշևիկյան առաջին ապստամբության ժամանակ, իմ եղբայր Բիհբուդը և ես Գյանջայում էինք: Նրանց երկրորդ անգամ դուրս քաշվելուց հետո ես Բաքվում էի եղբորս հետ միասին: Բրիտանացիների այս երկու տեղատվությունների ընթացքում, թուրք զինված ուժերի կողմից Բաքուն գրավվելուց երեք օր հետո եղբայրս գնաց Բաքու: Ես Բաքու գնացի 1919-ի մայիսին: Բրիտանական զինված ուժերը Բաքվից առաջին անգամ հեռացան 1918-ին, օգոստոսի մոտերը:

Մինչև 1918-ի վերջը եղբայրս մուսավաթ կուսակցության անդամ էր: Դրանից հետո եղբայրս և ուրիշներ թողեցին այդ կազմակերպությունը:

* Այս հատվածում հարցերը գրառված չեն

Ես երբեք մուսավաթ կուսակցության անդամ չեմ եղել: Մինչ բոլշևիկյան հեղափոխությունը մուսավաթ կուսակցությունը գաղտնի կազմակերպություն չէր: Այն ժամանակ կառավարությունը ղեկավարում էր (Ֆատալի) խան Խոյսկին: Նա մուսավաթ կուսակցության անդամ էր: Ըստ իս, Մուսավաթ կազմակերպությունը հիմնադրվել էր բոլշևիկյան հեղափոխությունից առաջ՝ 1917-ին կամ 1918-ին: Ես չգիտեմ, կուսակցությունը հեղափոխությունից առաջ գոյություն ունե՞ր, թե՞ ոչ: 1917-ի հեղափոխությունից առաջ Մուսավաթ կուսակցությունը գաղտնի կազմակերպություն չէր: Ես ծանոթ չեմ կուսակցության ծրագրին: Միակ բանը, որ գիտեմ, այն է, որ այն ձախաթևյան կազմակերպություն չէր: Բոլշևիկյան առաջին գրավման ժամանակ եղբայրս բոլորովին հետաքրքրված չէր քաղաքականությամբ: Նա բոլշևիկներին սկսեց ծառայել 1920-ի հունիսից: Նա աշխատեց իբրև ինժեներ մի հանձնաժողովի մեջ, որը կոչված էր կոմունիստական սկզբունքներով կազմակերպելու անշարժ գույքի վերահսկողությունը:

Մինչև թուրքերի կողմից Բաքվի գրավումը ես ոչինչ չգիտեի հայկական կոտորածների մասին: Սակայն ավելի ուշ իմացա, որ հայեր են սպանվել: Հայերը ասում են, որ հազարավոր մարդիկ են սպանվել: Իմ հայրենակիցներից իմացել եմ, որ 2000-ից 3000 հայ է սպանվել: Դրանց մեջ մտնում են մարդիկ, որոնք մահացել են պատերազմի ժամանակ: 1918-ին եղբայրս Ներքին գործոց նախարարն էր: Ես չգիտեմ, եղբայրս հանդիպե՞լ է «Խարկովսկոյե սլովո» թերթի թղթակցի հետ, թե՞ ոչ: «Խարկովսկոյե սլովոն» հայերեն թերթ է, որը հրատարակվում է Թիֆլիսում:

Ջամշիդ խանը դատական ատյանի հարցին պատասխանեց հետևյալ կերպ.

-Եղբայրս բոլշևիզմի հետ կապեր չուներ: Նրան ստիպել էին աշխատել բոլշևիկյերի համար, այլապես նա սոված կմնար: Բոլշևիկները նրան ինժեներական աշխատանք տվեցին: Եղբայրս հաճույքով համաձայնեց կատարել այդ աշխատանքը, որովհետև այն իր մասնագիտության շրջանակներում էր:

ԵՐԿՐՈՐԴ ՎԿԱ

Բրիտանական 82-րդ Ընդհանուր հիվանդանոցի «Բ» բաժնի կապիտան Ջ.Գ.Ֆ. Հիլը երդվելուց հետո կատարեց հետևյալ բացահայտումները.

-Հուլիսի 18-ի գիշերը, ժամը 11:00-ի և 12:00-ի արանքում, ես հերթապահ բժիշկն էի հիվանդանոցի «Բ» բաժնում: Մի մարդ բերեցին հիվանդանոց: Ես տեսա, որ մարդուն ինքնաշարժից հանում էին և բերում ընդունելության սենյակ: Քննեցի նրան: Նա երեք տեղերում փամփուշտի վերքեր ուներ: Թեև ամեն մի վերքը առանձին վերցրած լուրջ չէր, սակայն երեքը միասին դառնում էին կյանքի համար վտանգավոր: Մարդը շատ լուրջ վիճակում էր: Նրան անմիջապես փոխադրեցի հիվանդասենյակ, այնտեղ խնամեցի վերքերը: Վերքերը խնամելուց հետո թրքական ոստիկանությանը թույլ տրվեց մոտենալ հիվանդին և հարցեր տալ: Լրացուցիչ բուժում կատարել հնարավոր չէր, որովհետև հիվանդը մահացավ հիվանդանոց մտնելուց 35 րոպե հետո: Երբ մահացավ, ես իր կողքին էի:

Կապիտան Ջ.Գ.Ֆ. Հիլը մեղադրվող կողմի դատապաշտպան Խոսրովյան Էֆենդիի հարցերին պատասխանեց հետևյալ կերպ.

-Հաստատվեց, որ հիվանդը կյանքին սպառնացող այլ հիվանդություններով չէր տառապում: Հիվանդը որոշ բացահայտումներ արեց ոստիկանությանը, սակայն դրանք ինձ համար նշանակություն չունեին:

ԵՐՐՈՐԴ ՎԿԱ

Տիկին Բիհբուդ խան Ջիվանշիրը երդվելուց հետո կատարեց հետևյալ բացահայտումները.

-Մոտ 20 օր առաջ, երեկոյան ժամը 11:00-ից հետո, ամուսինս, իր 2 եղբայրները և ես, Թեփեբաշի թատրոնից դուրս գալուց հետո քայլում էինք դեպի «Պերա Փալաս» հյուրանոցը: Այդ ժամանակ հետևի կողմից ատրճանակի մի քանի կրակոց լսեցի: Ատրճանակը այնքան մոտ տարածության վրա կրակեց, որ ես նույնիսկ վառոդի հոտը զգացի: Առաջին կրակոցը լսելուց հետո մի քանի քայլ արեցի դեպի առաջ, հետո հետ նայեցի, տեսա ամուսնուս գետնին կիսապառկած: Այս պաշտպանյալը իմ ամուսնու վրա կրակողն է: Ամուսինս փորձեց բռնել մարդասպանին. Ամուսնուս եղբայրը և ես բռնեցինք մարդասպանին: Այդ ընթացքում մարդասպանը դեպի օդն էր կրակում: Փողոցում շատ մարդ կար, սակայն ոչ ոք չմոտեցավ: Օգնություն կանչելուս վրա մեկ հոգի մոտեցավ: Հետև նայեցի և ամուսնուս տեսա գետնին պառկած, արյունլվա: Այդ պահին հավաքված ամբոխի մեջ ես չէի տեսնում ո՞րն է մարդասպանը: Զբաղված էի ամուսնուս հագուստները հանելով: Ինձ թույլ չտվեցին հիվանդանոց գնալ: Հաջորդ առավոտ իմացա, որ գիշերը ամուսինս մահացել էր հիվանդանոցում: Մահանալուց երեք օր հետո ամուսնուս թաղեցինք: Մենք վեց տարի ամուսնացած էինք: Ամուսնանալուց հետո մենք միշտ միասին ենք ապրել:

Ես իմ ամուսնու քաղաքական գործունեության ականատեսն եմ եղել, որովհետև միշտ նրա հետ էի: Մինչև 1917-ի ռուսական առաջին հեղափոխությունը, ամուսինս Բաքվի մեջ նավթի մի ընկերության տնօրենն էր: Նա, լինելով լավ ուսում առած մարդ, մինչև այդ հեղափոխությունը զբաղվում էր հայերի և թաթարների միջև ծագած խնդիրներով: Մինչև 1918-ը նա բազմաթիվ քաղաքական հավաքների էր մասնակցում և մի քանի քաղաքական միությունների անդամ էր: Օրինակ՝ նա Մուսավաթ կուսակցության անդամ էր, որն իր հիմնադրման ժամանակ ո՛չ թե կուսակցություն էր, այլ միություն: Առաջին հեղափոխությունից հետո ամուսինս Բաքվի վարչատարածքի պատգամավորներից մեկն էր: Երբ ռուսական բանակը թուրքերից պարտվելուց հետո Բաքվից քաշվեց, հայերը և թաթարները քաղաքի մեջ մի միացյալ կոմիտե կազմեցին՝ թալանի կանխումը կազմակերպելու նպատակով: Բայց երբ ռուսները մտան Բաքու, հայերը թաթարներին և մուսուլմաններին քաղաքից դուրս քշեցին: Հայերը շատ մուսուլմանների սպանեցին: Հայերը 11,000 մուսուլման սպանեցին: Կոտորածների ժամանակ ամուսինս եկավ այն բնակարանը, որտեղ ապրում էինք և բոլորս միասին լքեցինք բնակարանն ու թաքնվեցինք մի մուսուլմանի տանը: Այդ մուսուլմանի տանը մոտ վեց օր մնալուց հետո մենք փախանք Գյանջա և այնտեղ մնացինք երեք ամիս: Թուրքերի կողմից քաղաքը գրավվելուց վեց օր հետո ամուսինս վերադարձավ Բաքու: Ես մնացի Գյանջայում: Ամու-

սինս 1918-ի սեպտեմբերին Բաքվի ներքին գործերի նախարարն էր:

Կառավարությունից դուրս գալուց հետո ամուսինս մնաց Բաքվում և սկսեց զբաղվել իր մասնավոր գործերով: Նա Ադրբեջանի պառլամենտի անդամ էր: Ավելի ուշ նա եկավ Ստամբուլ: Ամուսինս Ադրբեջանի Անկախություն կուսակցության ղեկավար դեմքերից էր: Երբեք չեմ լսել, որ նա մեղադրված լիներ հայկական կոտորածներին մասնակից եղած լինելու համար:

Ամուսինս միշտ աշխատում էր Ադրբեջանի հայերի և մուսուլմանների միջև խաղաղություն հաստատելու ուղղությամբ: Նա երբեք չի մասնակցել կամ պատասխանատու չի եղել հայկական կոտորածների համար: 1918-ի մարտ ամսից հետո, այսինքն՝ Բաքվից փախչելուց հետո, ամուսինս գիտեր, որ իր կյանքը վտանգի տակ է, սակայն ոչ թե, որ ինքը պատասխանատու էր հայկական կոտորածների համար, այլ որովհետև հայերն իրեն ատում էին որպես մուսուլման:

Ես հիշում եմ, որ պաշտպանյալին տեսա ամուսնուս սպանությունից երկու, կամ երեք օր առաջ: Նա ամուսնուս հետևում էր Թեփեբաշի զբոսայգում:

Մեղադրյալի դատապաշտպան Խոսրովյան էֆենդիի հարցերին պատասխանեց հետևյալ կերպ.

-Նախքան թուրքերի Բաքու մտնելը, Մուսավաթ կուսակցությունը քաղաքի մուսուլմանների շահերն էր պաշտպանում: Թուրքերի՝ Բաքու մտնելուց անմիջապես հետո ամուսինս թողեց կուսակցությունը: Սկզբնապես կառավարությունը կազմված չէր միայն այս կուսակցության անդամներից: Երբ հասա Գյանջա, թրքական ռազմական ուժերը արդեն այնտեղ էին: Ամուսինս զինվորական ուժեր չհավաքագրեց բրիտանական ուժերի դեմ կռվելու համար: Սերժ Ռաֆատովիչ անունով մարդ չեմ ճանաչում, ոչ էլ հիշում եմ, որ նա մեր տունը եկած լինի: Ոչ էլ լսել եմ, որ ամուսինս նախարար եղած ժամանակ որևէ հայ մտավորականի արտաքսած լինի քաղաքից:

Ես ճանաչում եմ Դոկտոր Տիգրան Սաչարյանին: Ճանաչում եմ Ջամշուտ Հարությունյանին (Բաքվի նախկին քաղաքագլուխ): Կոնստանտին Քալանթարյանին չեմ ճանաչում: Ստեփան Տիգրանյանին չեմ ճանաչում: Առևտրական բանկի տնօրեն Միքայել Աթաբեկյանին չեմ ճանաչում: Սաչարյանը երբեք մեր բժիշկը չի եղել:

Ըստ տեղեկությունների, երբ թուրքերը մոտենում էին Բաքվին, մուսուլմանները սպանեցին 3000 հայերի, որոնք զենք էին վերցրել: Երբ այդ սպանությունները տեղի էին ունենում, ամուսինս Բաքվում չէր: Մինչև թուրքերի Բաքու մտնելը, ամուսինս հակաբրիտանական ծրագրերի, կամ հայկական կոտորածների հետ ոչ մի կապ չի ունեցել:

Նուրի փաշան մեր տուն եկավ թուրք զինվորների Բաքուն գրավելուց երեք շաբաթ հետո միայն: Էնվեր փաշան երբեք տունս չի մտել: Նուրի փաշայի այցելությունը պաշտոնական էր: Մենք Նուրի փաշային հանդիպեցինք այն ժամանակ, երբ Դաղստանի վրայով նա Գյանջա հասավ 1918-ի հունիսին:

Ամուսինս շարունակ ասում էր, որ կուզենար հայերին և մուսուլմաններին հաշտ տեսնել: Մենք Բաքուն թողեցինք այն բանից հետո, երբ թուրքեր կոտորվեցին: Ահմեդ Աղաևը մեր տուն եկավ Բաքվում: Չգիտեմ նա ի՞նչ կուսակցության է պատկանում: Ես տեղյակ չեմ, որ նա բրիտանացիների կողմից ձերբակալված է եղել հայերի կոտորածները կազմակերպած լինելու մեղադրանքով: Լսել եմ, որ Աղաևը անդամակցել է Միություն և Առաջադիմություն կուսակցությանը (Թուրքիայում), բայց դա ինձ չի հետաքրքրել: Երբ Աղաևը միացավ ամուսնուս, նրանք քննարկեցին մեր ընտանիքին վերաբերող հարցեր ու խնդիրներ: Ամուսինս երբեք ոչինչ չի արտահայտվել Միացյալ Ուժերի դեմ: Քամպբել անունով ոչ մի բրիտանական սպա չեմ ճանաչում, ոչ էլ տեղյակ եմ նրա հետախուզման հրամանի մասին:

Տիկին Ջիվանշիրը դատական ատյանի կողմից տրված հարցին պատասխանեց հետևյալ կերպ.

-Ես գիտեմ, որ Մուսավաթ կուսակցությունը զբաղվում էր միայն մուսուլմանական շահերով:

ՉՈՐՐՈՐԴ ՎԿԱ

Գալաթասարայի ոստիկանության կայանի թուրք ոստիկան Ալի էֆենդին (հ. 205) երդվելուց հետո դեպքի մասին տվեց հետևյալ տեղեկությունը.

-Հուլիսի 18-ի կեսգիշերին, երբ ես ծառայության մեջ էի Թեփեբաշիում, կրակոցներ լսեցի մոտ տարածության վրա: Սուլիչս սուլեցի և վազեցի այդ ուղղությամբ: Տեսա մեկը երեսնիվայր պառկած է գետնին և մի կին ու երկու երիտասարդներ, որոնք պահում էին այս մեղադրյալին: Վերջինս փորձում էր փախչել: Մեղադրյալը ձեռքին ատրճանակ ուներ: Ես հաստատում եմ, որ այն ժամանակ իր բռնած ատրճանակը նույնն է, ինչ ցուցադրված է այս դատարանում: Ինձ օգնելու եկած մի ուրիշ ոստիկանի հետ միասին բռնեցի մարդու դաստակից մինչև Միացյալ Ուժերի ոստիկանական ծառայության պահակախմբի անդամների հասնելը. նրանց ուղեկցեցի մինչև պաշտպանյալին Գալաթասարայի ոստիկանատուն հասցնելը: Ես մեղադրյալին կրակելիս չեմ տեսել:

Պատասխանելով Հայդար Ռիֆատ Բեյի հարցմանը՝ (վկան ասաց).

-Ես այնտեղ հասա մեկ վայրկյանում: Ուստի անկարելի է, որ մեկ ուրիշը տուժողին վիրավորած և փախած լիներ:

<u>ՄԵՂԱԴՐՎՈՂ ԿՈՂՄԻ ՎԿԱՆԵՐԸ</u>

ԱՌԱՋԻՆ ՎԿԱ

Ալթունյանը, ռուսական քաղաքացիություն ունեցող մի հայ, երդվելուց հետո դատապաշտպան Խոսրովյան էֆենդիի հարցերին պատասխանեց հետևյալ կերպ.

-Ես Բաքվից եմ և ապրում էի Բաքվում: Այնտեղ նավթահորեր փորելու գործի մեջ էի: Երբ բրիտանացիները Բաքու եկան, ես նրանց մոտ անցա աշխատանքի որպես թարգմանիչ: Քաղաքում մնացի մինչև բրիտանացիների քաշվելը: Ականատես եղա բրիտանացիների մեկնումից հետո քաղաքում կատարվող բոլոր կոտո-

րածներին: Հայերն էին կոտորածների թիրախը: Այդ կոտորածների հանցագործները թաթար և թուրք զինվորներն էին: Ես Բաքվում էի կոտորածների առաջին օրը միայն:

Բիհբուդ խան Ջիվանշիրին երկու անգամ եմ հանդիպել Բաքվում: Նա Բաքվի Ներքին գործերի նախարարն էր: Հավատացած եմ, որ նա էր պատասխանատուն այդ կոտորածների համար: Նա ղեկավար դեմքերից էր Ազգային կուսակցության, կամ Մուսավաթ կուսակցության, որը միշտ հակադրվում էր հայերին: Լսել եմ, որ կոտորածներից հետո մի օրենք է հրապարակվել, որով ամեն ոք կարող էր իր գործին վերադառնալ, բայց հայերը՝ ոչ, որովհետև նրանք խռովարարներ էին համարվում: Երբ զինադադարը կնքվեց, ես աշխատում էի բրիտանացիների համար՝ Թագավորական ինժեներների գնդում: Բաքու վերադարձա նրանց հետ միասին: Ահա այդ ժամանակ էր, որ իմացա այդ օրենքի մասին: Օրենքը ստորագրված էր խան Խոյսկու և Ջիվանշիրի կողմից: Ես ճանաչում եմ պարոն Փովադեբարին: Նա Բաքվում ֆրանսիական առաքելության անդամներից էր: Կարդացել եմ նրա գրած ու հրատարակած գիրքը՝ Բաքվում կատարված կոտորածների մասին:

Երբ կոտորածներ էին տեղի ունենում, ես մի ռուսի տանն էի: Տեսա, որ թաթարներ եկան և հարցրին, թե հայեր կա՞ն ներսում: Ես լսեցի ռուս կնոջ պատասխանը, թե տանը հայեր չկան: Թաթարն ասաց, որ իրենք մտադրված չեն ոչ մի բան անել ռուսներին, թե միայն հայերի հետևից են եկել: Գիշերն այդ տնից հեռացա ժամը 9:00-ին: Փողոցներին շատ դիակներ տեսա: Շատերը հայ երեխաներ էին: Ես տեսա մի շուն՝ երեխայի մարմնի մի մաս բերանում բռնած: 1918-ի հուլիսին, երբ ռուսները թողեցին Բաքուն, հայերը մնացին քաղաքում: Հայերը լսել էին այն կոտորածների մասին, որ կատարվում էին Գյանջայում, Ղարսում ու այլ քաղաքներում և վախենում էին, որ նույնը կկատարվի Բաքվում: Նրանք զենք վերցրեցին ինքնապաշտպանության համար: Ես Բաքվում էի, երբ տեղի ունեցան 1918-ի մարտի դեպքերը: Այդ ժամանակ թաթարների և ռուսների միջև մեծ հակասություն կար: Մարտի 7-ին թաթարները հարձակվեցին բրիտանական զորանոցների վրա և կռվեցին երեք օր: 11,000 թաթարներ եկան հայկական թաղամասեր և թաքնվեցին տներում: Երբ թաթարների և ռուսների միջև զինադադար կնքվեց, բոլորը վերադարձան իրենց տները: Իմ տանը մնում էին 11 թաթարներ: Թաթար առաջնորդներից մեկը շնորհակալական նամակ հղեց Հայկական Ազգային Խորհրդին: Այդ անձը նաև թուրքերին ասաց, որ հայերը էական օգնություն են ցույց տվել թաթարներին: Այս բոլորի մասին ես կարդացել եմ թերթերում: Չեմ հասկանում, թե ինչու Կովկասում կամ Թուրքիայում հայեր էին սպանվում:

Մուսավաթ կուսակցությունը կազմված էր թուրք զինվորականներից և պատերազմի հանցագործներից: Այս կուսակցությունը համանման էր Միություն և Առաջադիմություն կուսակցությանը: Այդ ժամանակ Ջիվանշիրը կառավարության մեջ էր և այդ պատճառով նա պատասխանատու է բոլոր կոտորածների համար:

Ես ծնվել եմ Բաթումում: 1913-ից մինչև 1919-ը եղել եմ Բաթումում: Այն ընկերությունը, որտեղ ես աշխատում էի, ռուսական էր:

Երբ վերադարձա, հարևաններն ասացին, որ թուրքերը կողոպտել են տունը: Ես մուսուլմանի մոտ երբեք չեմ աշխատել:

Ջիվանշիրը նավթահորեր փորող մի ընկերության տնօրենն էր: Այն ժամանակ նա քաղաքականությամբ հետաքրքրված չէր: Ջիվանշիրի հետ մեր ունեցած երկու հանդիպումների ընթացքում մենք զրուցել ենք առևտրական բիզնեսին վերաբերող հարցերի մասին միայն:

Միություն և Առաջադիմություն կուսակցությունը ազգայնական կուսակցություն է՝ հիմնադրված թուրք ազգի շահերը պաշտպանելու համար: Մուսավաթ կուսակցության անդամները ժողովրդի տարբեր դասակարգերից էին: Մտավորականներ էին կուսակցության ղեկավարները միայն:

Խաչաձև հարցաքննության ժամանակ վկան կատարեց հետևյալ բացահայտումները.

-Ես գիտեմ, որ Ջիվանշիրը պատասխանատու է կոտորածների համար, որովհետև լինելով Ներքին գործերի նախարար, նա կարող էր կանխել դրանք: Ես նույնիսկ լսել եմ, որ նա է եղել կոտորածների կազմակերպման հրամայողը: Այսպես եմ ասում, որովհետև նա էր պատասխանատու նախարարը:

Կոտորածներից հետո ճնշումը և անարդարությունները շարունակվեցին՝ դարձյալ Ջիվանշիրի նախարարության շրջանում: Ես իմ աչքերով, տեսա թե ինչպես էին թաթարները կոտորում հայերին: Բայց ես չգիտեմ, թե այդ թաթարները ի՞նչ դասակարգի մարդիկ էին: Կոտորածների հանցագործների մեջ կային զինվորներ և քաղաքացիներ: Տեսա, որ հրամայողները թուրք սպաներ էին: Թաթար զինվորներին հրամայում էին թուրք սպաներ, որոնցից ոմանք շատ լավ էին հագնված: Նրանցից մի քանիսին անձամբ հանդիպեցի: Ես տեղյակ չեմ, որ մուսուլմաններ սպանված լինեն հայերի կողմից:

Ռուսների՝ Բաքվից հեռանալուց հետո կազմված կոալիցիոն կառավարությունը կազմված էր ռուսներից և հայերից: Նրանում թաթարներ չկային:

Մինչև բրիտանացիների հասնելը, քաղաքը հայերի ձեռքում էր: Թուրքերը և թաթարները ասեցին, որ եթե հանձնվեինք, մեզ չէին կոտորելու: Բայց, եթե մենք կառչած մնայինք քաղաքին ու նրանք վերցնեին քաղաքը, ապա մեզ պիտի կոտորեին: Իմ կարծիքով, հայերի ջարդերի պատճառը դա է: Կոտորածները կատարվում էին թուրք և թաթար զինվորական իշխանությունների ցուցումով:

Կոտորածների ժամանակ, քաղաքում տիրող խառնաշփոթ և անհանգիստ մթնոլորտի պատճառով, զինվորները և քաղաքացիները աշխատում էին միասին: Այդ ժամանակ ես Բաքվում էի, բայց Ջիվանշիրը՝ ոչ: Գյանջայից և այլ վայրերից եկող հայ փախստականները բողոքում էին Ջիվանշիրի դաժանություններից:

Կրկին հարցաքննվելով, վկան տվեց հետևյալ ցուցմունքը.

-Գյանջա և Ելիզավետպոլ՝ նույն քաղաքի երկու անուններն են: Մուսավաթ կուսակցության ղեկավարները իրենց ձեռքն էին վերցրել ազերի կառավարությունը: Ես բավական տեղյակ եմ ազերի գործերից:

Հայցվորի դատապաշտպան Հայդար Ռիֆատ Բեյը դատարանի հատուկ թույլտվությամբ վկային մի քանի հարցեր տվեց և ստացավ հետևյալ պատասխանները.

-Ես որևէ կուսակցության անդամ չեմ եղել: Գնդապետ Բրաունի հետ միասին աշխատում էի մի մայորի համար, որը նավագնացային գործակալ էր: Անցյալում ես մի քանի անգամ եղել եմ Ստամբուլում, բայց այնտեղ երբեք չեմ ապրել: Ստամբուլում ոչ մեկին չեմ ճանաչել և այստեղ ոչ մեկի մոտ չեմ աշխատել: Ամուսնացել եմ Բեյոօղլուում 1909-ին: Չեմ հիշում այն տան հասցեն, որտեղ ապ-

ում էի ամուսնացածս ժամանակ: Կնոջս օրիորդական ազգանունը Սինջիկյան է: Նրանք ապրում էին սպաների ակումբի դիմացը: Կնոջս ծնողները մահացած են: Կնոջս հորաքույրը ապրում էր Ստամբուլում, Մահմութ Փաշա № 121 հասցեում: Ներկայումս ես աշխատում եմ Ջեներալ Մարին կոչվող ընկերությունում: Անցյալում որևէ դատավարությունում իբրև վկա հանդես չեմ եկել: Այս դատավարության մասին ես իմացել եմ Քինալիադա գնացող մի լաստանավի վրա՝ երկու փաստաբանների խոսակցությունից: Այդ փաստաբաններին մինչ այդ չեմ տեսել: Տեղյակ չեմ, որ Բաքվում սեպտեմբերյան կոտորածների ժամանակ ռազմական վիճակ է հայտարարված եղել: Տեղյակ չեմ, որ Ջիվանշիրը ռազմական նախարար է եղել: Գիտեմ, որ Մուսավաթ կուսակցությունը և Միություն ու Առաջադիմություն կուսակցությունը հիմնադրվել են նույն պատճառներով և հետապնդել են նույն նպատակները: Նրանց քաղաքական գաղափարախոսությունները նույնանման են: Այլ կերպ ասած, նրանց նպատակը հայերի բնաջնջումն է:

Պաշտպանյալին ես այսօր առաջին անգամ եմ տեսնում: Ես չգիտեմ, որ Մուսավաթ կուսակցությունը հայերին ջարդելու մասին հրաման, կամ ազդարարություն հրապարակած լինի: Ինչ որ գիտեմ այն է, որ հայերի կոտորածները սկսվեցին Մուսավաթ կուսակցության հիմնադրումով: Ես չգիտեմ, թե ջարդերը քանի օր տևեցին, որովհետև քաղաքում միայն մեկ օր մնացի: Կարծում եմ, որ կոտորածները շարունակվեցին չորս օր: Դրանք սկսվեցին մի կիրակի օր: Ես չգիտեմ ովքեր էին ջարդերի կազմակերպիչները:

Թուրքերի հանդեպ թշնամանք չունեմ:

ԵՐԿՐՈՐԴ ՎԿԱ

Մինաս Հայրապետյանը երդվելուց հետո տվեց հետևյալ վկայությունը.

-Ես մեխանիկ եմ, 41 տարեկան. Բաքվում ապրել եմ 18 տարի: Բաքուն թողել եմ 1919-ի հունիսին:

1918-ի սեպտեմբերին, այսինքն՝ հայկական կոտորածների ժամանակ, ես Բաքվում էի: Այդ ժամանակ թաթարները սպառնում էին հայերին: Կոտորածներն սկսվեցին թուրքերի քաղաք մտնելուց հետո: Թաթարները հայերին սպանում էին դաժանորեն, առանց խտրականության՝ առանց նկատի առնելու տարիքը: Ես կարողացա ապաստանել մի հրեայի տանը չորս օրով:

Երբ դուրս եկա փողոց, այն դիակներով ծածկված գտա:

Ջարդերը տևեցին երեք օր: Այդ օրերի ընթացքում բոլոր հայ մտավորականները սպանվեցին: Ես գիտեմ, որ բոլոր այն 17 անձինք, որոնց անունները նշվեցին այս դատարանում, սպանվեցին ջարդերի ընթացքում:

1918-ի մարտին հայերը թաթարներին փրկել էին ռուսներից: Այն ժամանակ թաթար առաջնորդները շնորհակալություն հայտնեցին Հայկական Ազգային Խորհրդին՝ ջերմ ընկերականության համար:

Ես գիտեմ, թե ով է կազմակերպել ջարդերը. խան Խոյսկին և Ջիվանշիրը կազմակերպեցին այդ ջարդերը՝ կառավարության անունից: Այդ ժամանակ Ջիվանշիրը Ներքին Գործոց նախարարն էր: Ջարդերի երկրորդ օրը հետևյալ բովանդակությամբ մի հայտարարություն հրապարակվեց.

«Հերոսական թրքական զորքը ազատագրեց Ազերի հայրենիքի մայրաքաղաքը: Մենք ակնկալում ենք, որ շուտով խաղաղություն և ապահովություն պիտի վերահաստատվի: Եթե հայերը կառավարության նկատմամբ որևէ թշնամություն ցուցաբերեն, պիտի պատժվեն խստորեն»:

Հայտարարությունը ռուսերեն ու թրքերեն էր և ստորագրված էր Խան Խոյսկիի և Ջիվանշիրի կողմից: Այո, Ջիվանշիրը այցելեց բանտ և հանդիպեց Ամիրյանին, որը բանտարկված էր այնտեղ: Ես ներկա էի այդ հանդիպումներին: Հանդիպումները կայացան կոտորածներից մեկ ու կես ամիս հետո:

Ամիրյանը Ջիվանշիրին հարցրեց, թե ե՞րբ է ազատ արձակվելու, և պահանջեց իմանալ, թե ինչո՞ւ են հայերը բանտարկվում: Ջիվանշիրը պատասխանեց, որ այդ հարցին պիտի անդրադառնա և ձեռք առնի անհրաժեշտ քայլեր:

Ամիրյանը ասաց. «Ես ոճիր չեմ գործել, որը հիմք ծառայեր իմ բանտարկության համար: Դու քաջություն ունե՞ս արդյոք ընդունելու, որ ես բանտում եմ գտնվում միայն այն բանի համար, որ Հայ եմ: Ինձ այստեղ պահում եք ապօրինաբար, ճիշտ այնպես, ինչպես անցյալում ապօրինաբար սպանում էիք հայերին»: Ջիվանշիրը պատասխանեց. «Դուք՝ հայերդ, մեղավոր եք: Դուք պետք է պատժվեք մինչև խելքի գաք»:

Բանտարկված էին 70 հայ մտավորականներ: Կոտորածների ժամանակ նրանց հաջողվել էր իրենց կյանքը փրկել, թաքնվելով հրեաների և այլ օտարականների տներում:

Այս հայերի կյանքը փրկեց բրիտանացիների երկրորդ մուտքը Բաքու: Արդարև այդպես է, որ ես փրկվեցի: Այո, ես լսել եմ Մուսավաթ կոչվող կուսակցության գոյության մասին: Համաշխարհային պատերազմի ժամանակ Մուսավաթ կուսակցությունը գործեց Թուրքիայի մի մեծ կուսակցության ծրագրերին համապատասխան: Մուսավաթ կուսակցությունը ներկայացնում է թաթար ազգի մի մեծ հատվածը: Հայերի խնդիրը իրենք իրենց պահելն ու պաշտպանելն էր և աշխատելը ռուսական տարրի հետ:

Պատերազմի ժամանակ հայերի և ազերիների միջև մի քաղաքական ճեղքվածք կար: Համաշխարհային պատերազմի ընթացքում թաթարները օգնեցին թուրքերին, իսկ հայերը ճիշտ հակառակ դիրքը բռնեցին: Թաթարները բացեիբաց հայտարարեցին, որ Ադրբեջանում թուրքերի ներկայությունը իրենց շահերին համապատասխանում է, քանի որ նրանք նույն կրոնքն ունեն: Թաթարների և հայերի միջև գաղափարախոսական տարաձայնություններն ու վեճերը ծագում էին պարզապես նրանց կրոնական և էթնիկական տարբերություններից: Իմ նկարագրածից ավելի ես շատ բան չգիտեմ հայերի հետ Ջիվանշիրի ունեցած հարաբերությունների մասին: Ջարդերը ես իմ սեփական աչքերով չեմ տեսել: Թաքնվել էի մի հրեայի տանը, լսում էի հայկական տներից եկող կրակոցների և ճիչերի ձայները: Կոտորածների ժամանակ 25,000 հայեր զոհվեցին: Ես Բաքվից հեռացա, որպեսզի ջարդերին ականատես չլինեմ:

Դատախազ Ռիկատսոն Հաթի հարցին վկան տվեց հետևյալ ցուցմունքը.

-Ես չեմ լսել, որ հայերը Բաքվում մուսուլմանների սպանած լինեն: Ես Ջիվանշիրին անձնապես ճանաչել եմ: Նրա հետ աշխատել եմ նավթագործության բնագավառում: Այն ժամանակ նա դեռ ակտիվ չէր քաղաքական ասպարեզում: Հայերի խնդիրների շուրջ ես նրա հետ զրույցներ չեմ ունեցել, բայց իր հանքահորում ոչ մի հայ չէր աշխատում: Բանտում նրա հետ չեմ խոսել: Ես 18 ծերբակալվածներից մեկն եմ եղել: Ոչ ոք իմ դեմ ոչ մի մեղադրանք չի առաջադրել: Մենք ծերբակալվեցինք մեր հայ լինելու պատճառով: Սպանության մեղադրանքով ոչ մի մու-

սուլման բանտարկյալ չկար:

Հիսուն հայեր մեղադրվեցին թուրքերի սպանության մեղադրանքով: Ես ասում եմ, որ Ջիվանշիրը դեր ուներ հայերի կոտորածների մեջ, որովհետև նա հեղինակավոր դիրք էր զբաղեցնում: Ավելին, նա էր հայտարարությունը ստորագրողը և նա էր, որ հայերին ապստամբներ անվանեց: Միայն մեկ հրաման ստորագրելով, նա կարող էր մեկ ժամում դադարեցնել կոտորածները: Այդ անելու համար նա քաղաքի տարբեր վայրերում կախել տվեց երեք Ռուս կանանց, երեք հայերի և չորս թաթարների: Ես կարծում եմ, որ Ջիվանշիրը դադարեցնել տվեց կոտորածները, կարծելով, որ կենդանի հայեր այլևս չեն մնացել: Կոտորածներից հետո քաղաքում մնացել էին միայն 9,000 հայեր: Այդ վերապրածներին նրանք տեղափոխեցին քաղաքից դուրս: Այդ թշվառներից միայն 400-ը կարողացավ քաղաք վերադառնալ: Այս լուրերը ես ստացա մի ընկերակցությունից, որի անդամն եմ ես: Դա գաղտնի ընկերակցություն չէր: Դա մի պաշտոնական ընկերակցություն էր, որը բրիտանական գրավման շրջանում գործակցում էր կառավարության հետ:

Վկան հետևյալ պատասխանները տվեց դատապաշտպան Խոսրովյան էֆենդիի հարցերի երկրորդ հերթին.

-Երբ բրիտանական բանակը թողեց Բաքուն, մոտ 10,000 հայեր փախան քաղաքից: Հայերի ունեցվածքի ոչնչացումից առաջացած վնասը բրիտանական պաշտոնյաների կողմից գնահատվեց 530,000,000 ռուբլի: Այն ժամանակ 60 ռուբլին համարժեք էր մեկ բրիտանական փաունտի: Ջիվանշիրը հենց սկզբից կարող էր կանխել կոտորածները, եթե ուզենար, որ դրանք տեղի չունենային: Ինն հազար հայերին, որոնց քաղաքից դուրս բերեցին, աշխատեցրին Բաքու- Քիաքի երկաթգծի վրա:

Հայդար Ռիֆատ Բեյի խնդրանքով ատյանի կողմից տրված հարցերին վկան պատասխանեց հետևյալ կերպ.

-Ես երբեք որևէ քաղաքական կուսակցության անդամ չեմ եղել: Երբեք չեմ կանչվել որևէ դատարան: Սա առաջին անգամն է, որ ես Թուրքիայում եմ: Ես աշխատել եմ Բաքվի նավթահանքերում: Ամուսնացած եմ և ունեմ երեք երեխա: Հայերեն թերթերից մեկում կարդացի մի հայտարարություն, որում այն անձանց, որոնք որևէ բան գիտեն Բաքվի կոտորածների մասին, խնդրվում էր դատարանում վկայություն տալ: Ահա թե ինչու եմ ես այստեղ:

ԵՐՐՈՐԴ ՎԿԱ

Տիկին Արուս Խանեդանյանը երդվելուց հետո տվեց հետևյալ ցուցմունքը.

-Ես 29 տարեկան այրի եմ, Կովկասի Գյանջա քաղաքից: 1918-ից մինչև 1919-ը ապրել եմ Բաքվում: Մոտ 14 ամիս աշխատել եմ որպես հայկական որբանոցի տնօրեն: Այդ հաստատության որբերը Բաքվի և Գյանջայի շրջանում գտնվող Նուխի կոչվող վայրում սպանվածների զավակներն էին: Շրջանի բոլոր հայերը սպանված էին: Այդ կոտորածները տեղի ունեցան 1918-ին, այսինքն՝ մինչև Բաքվի ջարդերը: Որբանոցի ծախսերը վճարում էին բոլշևիկները: Որբանոցում 500

որբեր կային: Մեկ ամսվա ընթացքում շատ ջարդեր տեղի ունեցան: Այդ ջարդերը կատարեցին թուրքերն ու թաթարները՝ բրիտանական ուժերի դուրս քաշվելուց հետո: Որբերից ոմանք փրկվել էին կոտորածից: Առավել ուժեղ ու տարիքով ավելի մեծ որբերին ես կարողացա դնել շոգենավի մեջ: Միայն 150-ը մնացին որբանոցում: Ովքեր շոգենավ էին բարձրացել, փախան: Ես փորձեցի որբերին տեղափոխել ինքնաշարժերով, բայց մինչև ես կկարողանայի մեքենայի ճար անել, արկեր և փամփուշտներ սկսեցին տեղալ որբանոցի վրա: Մնացած երեխաներին ես չկարողացա փրկել: Ինքնաշարժերը քաղաքից ոտքով քառորդ ժամվա հեռավորության վրա էին: Ես գնացի այնտեղ ինքնաշարժ գտնելու համար, բայց չկարողացա քաղաք վերադառնալ: Երբ երեք օր հետո վերադարձա որբանոց, երեխաներին մեռած գտա, իրենց մարմնի մասերը շենքում ցաք ու ցրիվ էին եկած:

Ջիվանշիրը պատասխանատու է Նուխիում տեղի ունեցած ջարդերի համար, որովհետև նա Ներքին Գործերի նախարարն էր: Երբ բրիտանացիները քաղաք մտան երկրորդ անգամ, Հայկական Ազգային Խորհուրդը բրիտանական զինվորական իշխանություններին բողոքեց կոտորածների կապակցությամբ: Չգիտեմ դա ինչ արդյունք ունեցավ: Ես Ջիվանշիրին ճանաչում էի: Նրան մի անգամ տեսել էի կոտորածներից առաջ: Մի ուրիշ անգամ նրան տեսա ինքնաշարժի մեջ և գոռացի՝ «Մարդասպան, ինչո՞ւ սպանեցիր իմ որբուկներին»: Ինձ պատասխանելու փոխարեն Ջիվանշիրը իր օգնականներից մեկին հրամայեց ինձ ծեծել: Նրանցից մեկը ինձ մոտեցավ և խփեց ուսիս: Հազարավոր դիակներ տեսա փողոցներում: Շներն ուտում էին երեխաների մարմինները: Խնդրում եմ, ինձ մի հիշեցրեք այդ ահավոր տեսարանները: Իմ ընկերներից շատերը սպանվեցին: Որոշ մասը անհետացավ և նրանց ունեցվածքը կողոպտվեց:

Վկան պրն. Ռիկատսոն Հաթի հարցերին տվեց հետևյալ պատասխանները.

-Երբ ես Ջիվանշիրին տեսա իր ինքնաշարժի մեջ, դա առաջին անգամն էր, որ խոսեցի իր հետ: Ջիվանշիրին պատասխանատու են համարում, որովհետև այդ ժամանակ նա էր Ներքին Գործերի նախարարը: Ամեն մարդ ասում էր, թե նա է պատասխանատու: Տեսա հայտարարությունը, որն ստորագրված էր խան Խոյսկու և Ջիվանշիրի կողմից: Այդ հայտարարության մեջ Խոյսկին և Ջիվանշիրը նշում էին, որ իրենց գործն ավարտված է, որովհետև հայերը սպանված են: Հայտարարությունը գրված էր հայերեն և ռուսերեն: Հայերեն տարբերակի կապակցությամբ ես վստահ չեմ, բայց կարդացել եմ ռուսերեն տարբերակը: Հայտարարությունը տպված էր տարբեր տեսակ թղթերի վրա և երկու լեզվով: Հայտարարությունը ասում էր թե. «Ադրբեջանի շրջանը այժմ պիտի լինի խաղաղ ու հանդարտ» և «Հայերը, որ Ադրբեջանի թշնամիներն են, ոչնչացված են»:

Հայերը և թուրքերը լավ հարաբերությունների մեջ չեն եղել սկսած 1905-ից: Թշնամանքը գագաթնակետին հասավ 1918-ին: Երբ թուրքերին ոչնչացնում էին, հայերը հաճախ նրանց վերցնում էին և պատսպարում իրենց տներում: Չգիտեմ, թե քանի մուսուլման սպանվեց ջարդերի ընթացքում: Փողոցներում դիակներ չտեսա, որովհետև ես տնից դուրս չէի գալիս: Հայերի կոտորածների ժամանակ ոչ թե ռուսական, այլ ադրբեջանական կառավարությունն էր իշխում: Ես Ադրբեջանի քաղաքացի եմ: Ինչպես ես, այնպես և մյուս բոլոր հայերը, ովքեր այնտեղ են ապրում, Ադրբեջանի քաղաքացիներ են: Ադրբեջանի հայերը, Միացյալ Ուժերին օգնություն ցույց տալու ձևով ադրբեջանական կառավարությանը չեն դավաճանել: Հայերը պաշտպանեցին Բաքուն թուրքերից ու թաթարներից մինչև բրիտանացի-

ների քաղաք մտնելը: Նրանք քաղաքը հանձնեցին միայն այն պատճառով, որ վախենում էին, թե կկոտորվեն:

Ադրբեջանի հայ քաղաքացիները կառավարության թշնամիներ չէին: Լավ կառավարությունը արդյո՞ք կսպանի իր քաղաքացիներին: Հայերը, լինի Թուրքիայում, թե Ադրբեջանում, մինչև կոտորածները իրենց կառավարությունների հավատարիմ քաղաքացիներն են եղել: Կոտորածներից հետո ստիպված էին զենք վերցնելու ինքնապաշտպանության համար: Բրիտանացիները խոստացել էին փրկել հայերին:

Ի պատասխան պաշտպանական կողմի փաստաբանի հարցերի, վկան ասաց.

-Հայերը թուրքերի և բրիտանացիների միջև թշնամանքի մեջ մասնակցություն չունեին: Թուրքերի և բոլշևիկների միջև կռիվների ժամանակ ապաստան տվեցին և պաշտպանեցին շուրջ 15,000 թուրքերի: Այդ օգնության համար թաթարները գրավոր շնորհակալություն հայտնեցին: Փրկվեց նույնիսկ Թաղիևը՝ թաքնվելով հայի տան մեջ: Ավելի ուշ նա շնորհակալություն հայտնեց այդ հային: Նուխիի բոլոր հայերը սպանվեցին: Միայն կանանց ու երեխաներին ձեռք չտվեցին: Բաքվի դեպքերից առաջ կոտորածներ տեղի ունեցան բազմաթիվ այլ տեղերում:

Հայտար Ռիֆատ Բեյի խնդրանքով դատական ատյանի կողմից տրված հարցերին վկան պատասխանեց հետևյալ կերպ.

Այժմ 18 ամիս է, ինչ Ստամբուլում եմ: Ապրում եմ Իսկուդարում: Երեկվա հրդեհը ոչնչացրեց իմ տունը, որը գտնվում էր Իսկուդարի Սելամսիզ շրջանում: Ներկայումս ես տնօրենն եմ այն հյուրանոցի, որը կոչվում է Բույուկադայի Հայկական Սանատորիա: Բաքվի որբանոցը կոչվում էր Հայկական որբանոց: Կոտորածները տևեցին երեք օր: Ես Ջիվանշիրին տեսա կոտորածներից երեք օր հետո: Թուրք և ազերի զինվորները, ինչպես նաև քաղաքացիական ամբողջ բնակչությունը, մասնակցում էին կոտորածներին: Ջիվանշիրը Ադրբեջանի ռազմական նախարարը չէր: Ես չգիտեմ, նա թրքական պաշտոնյա՞ էր, թե՞ ոչ: 1905-ից սկսյալ հայերի նկատմամբ վերաբերմունքի ընդհանուր վատթարացումը պայմանավորված էր հայերին ոչնչացնելու թաթարների ցանկությամբ, որը դրդված էր նրանց ունեցվածքին ու հարստությանը տիրանալու մարմաջով:

Որբերին շոգենավ բերեցին կոտորածներից մեկ օր հետո: Ես կանխատեսում էի, որ թուրքերը քաղաք կմտնեն շաբաթ օրը: Ինձ հետ վերցրի որբեր ինչքան որ կարող էի: Որբանոցը ծովեզերքից մեկ մղոն հեռու էր:

Մուսուլմանների առաջին ջարդի ժամանակ ես սովորական աշխատող էի և ազատ չէի գործատեղիից դուրս գալու: Հայերի կոտորածների ժամանակ ես որբանոցի պատասխանատուն էի և պատրաստ էի անգամ կյանքս զոհելու գնով դուրս գալ՝ միայն ստուգելու համար, թե ինչ է կատարվում նրանց հետ: Մարտ ամսի կոտորածների ժամանակ ես Սև ծովի հիվանդանոցում բուժքույր էի:

ՉՈՐՐՈՐԴ ՎԿԱ

Արամ Բոգդանովիչը երդվելուց հետո պաշտպանական կողմի փաստաբան Խոսրովյան էֆենդիի հարցերին պատասխանեց հետևյալ կերպ.

-Ես 47 տարեկան եմ: Ծնվել եմ Բաքվում: Ինժեներ եմ: Բնակվում եմ Ստամբուլում, Էլմադաղ փողոցի № 8 տանը: Զբաղված եմ առևտրով: Փախել եմ բոլշևիկներից: Ստամբուլ հասա 1920-ի հուլիսին: 1918-ի սեպտեմբերի հայկական կոտորածների ժամանակ ես Բաքվում էի:

15,000-ից 30,000 հայեր սպանվեցին: Ես մնում էի Բաքվում մի հրեայի տանը: Թալանը ընդհանուր էր, բայց սպանվողները միայն հայերն էին: Ես Հայկական Ազգային Խորհրդի անդամ էի: Այն ժամանակ Ջիվանշիրը Ներքին Գործերի նախարարն էր: Ջիվանշիրը ջարդերը դադարեցրեց երրորդ օրը: Եթե նա չուզենար, ջարդերը չէին լինի:

Ճիշտ է, որ հայ մտավորականներից շատերը, որոնք հաղորդել էին ջարդերի մասին, բանտարկվեցին: Երբ հարցնում էին, թե ինչու են բանտարկվում, նրանց պատասխանում էին. «Ջիվանշիրը ձեզ կբացատրի»: Այդ հայերից շատերը առևանգվեցին: Երբ բրիտանացիները Բաքու մտան, բոլոր հայերը ազատ արձակվեցին: Ես չգիտեմ, թե ինչու էին թուրքերն ու թաթարները սպանում հայերին:

Առաջին անհամաձայնությունը բոլշևիկների և Մուսավաթ կուսակցության միջև ծագեց 1918-ի մարտին: Հայերը շատ ջանք թափեցին նրանց հաշտեցնելու համար: Անհամաձայնությունը ծագեց այն ժամանակ, երբ բոլշևիկները բռնագրավեցին թաթարներին պատկանող 34 հրազեններ: Հայերը թաթարներին 34 հրազեններ տալով, փորձեցին վեճը փակել: Հայերը ապաստան տվեցին 5,000 թաթարների, նրանց թաքցրեցին կինոներում ու թատրոններում, ուտելիք տվեցին: Մի թաթար պատվիրակություն եկավ Հայկական Ազգային Խորհուրդ՝ շնորհակալություն հայտնելու համար: Սեպտեմբերյան կոտորածների չորրորդ օրը հրապարակված մի հայտարարություն ասում էր. «Ամեն ոք պետք է վերադառնա տուն և վերսկսի աշխատել»: Այդ հայտարարությունը ոչ մի ակնարկ չէր անում հայերի մասին: Այդ հայտարարությունը ես իմ սեփական աչքերով չեմ տեսել: Ուշադրություն չեմ դարձրել, թե ինչպես էր այն գրված: Ջիվանշիրը Մուսավաթ կուսակցության ղեկավարն էր:

Հայերի և թաթարների միջև հարաբերությունները սկսեցին վատթարանալ 1905-ին, այսինքն՝ Ռուսական հեղափոխությունից առաջ: Համաշխարհային պատերազմը սկսվելուց հետո, Ռուսաստանի փոքր պետությունները սկսեցին անկախություն պահանջել: Վրացիները, թաթարները և թուրքերը թեքվեցին դեպի Գերմանիա: Հայերը պաշտպանեցին Միացյալ ուժերը: Դա էր ատելության պատճառը: Կոտորածները, բնականաբար, այդ մասշտաբի չէին լինի, եթե չլիներ Ադրբեջանի կառավարության համաձայնությունը: Նուրի փաշան ղեկավարում էր զինվորական կառավարությունը, իսկ Ջիվանշիրը՝ Ներքին Գործոց նախարարությունը, որը քաղաքացիական կառավարության գլխավոր ճյուղն էր: Այն ժամանակ զինվորական և քաղաքացիական կառավարությունները միացած էին և միասին էին ղեկավարում երկիրը:

Ես չգիտեմ, թե Ջիվանշիրը հայերին զրկում էր իրենց քաղաքացիական իրավունքներից: Ամեն առավոտ հայերին հավաքում էին, դնում էին ինքնաշարժերի ու երկաթուղային կառքերի մեջ և հանրության աչքի առաջ տանում էին քաղաքից դուրս: Թուրքերի վերցրած հայ գերիներին սպանում էին: Այլ ազգության բան-

տարկյալներին ազատ էին արձակում: Թալանը ընդհանուր էր, առանց ազգային խտրականության:

Բարձր շենքի իմ բնակարանից ես կարող էի տեսնել, թե ինչպես էին զինվորները մտնում տները: Մտնելով տները, զինվորները հարցնում էին՝ թե հայեր կա՞ն արդյոք բնակարանում: Հայերին սպանում էին կամ տեղն ու տեղը, կամ էլ քաղաքից դուրս հանելուց հետո: Իմ քրոջ հետ եղող հայ կանայք բռնաբարվեցին: Հայ կանանց բռնաբարումները որոշ ժամանակ շարունակվեցին կոտորածները վերջանալուց հետո ևս: Կոտորածների ժամանակ Ազգային խորհուրդը ցրվեց, բայց կոտորածները վերջանալուց հետո դարձյալ կյանքի կոչվեց: Հայ սրբազանն ինձ պատմեց կանանց հետապնդումների մասին: Այդ ժամանակ խան Խոյսկին վարչապետն էր, իսկ Ջիվանշիրը՝ Ներքին գործոց նախարարը: Ջիվանշիրը լայնարձակ ուժ և մեծ հեղինակություն ուներ: Հայտարարության մասին ես չգիտեմ: Այնուամենայնիվ, թերթերը, ինչպիսին է «Կասպին», հակահայկական հոդվածներ էր տպագրում: Երբ բրիտանացիները մտան Բաքու, Միացյալ Ուժերի հանձնախումբ կազմվեց: Այդ հանձնախումբը որոշում էր միայն նյութական վնասները: Ինչքան ես հիշում եմ, հանձնախումբը վնասը գնահատեց 40,000,000 ռուբլի, այսինքն՝ մոտավորապես 1,000,000 ֆունտ ստեռլինգ:

Ռուսական հեղափոխությունից հետո ռուսները քաշվեցին դեպի Ռուսաստան և սահմանների պաշտպանությունը թողեցին ռուսական բանակում ծառայող հայերին: Թաթարները կտրել էին դեպի սահմանները տանող հաղորդակցության միջոցները, այդ իսկ պատճառով թշնամություններ առաջացան թաթարների ու ռուսների և հայերի ու թաթարների միջև: Այդ թշնամությունների ընթացքում երկու կողմերի գյուղեր այրվեցին: Ջիվանշիրին ճանաչում էի: Նա, ինչպես ես, ինժեներ էր և այդ իմաստով գործընկերներ էինք: Ջիվանշիրին տեսա կոտորածների չորրորդ օրը:

Հատախազի հարցերին վկան տվեց հետևյալ պատասխանները.

-Կոտորածները դադարեցին այն ժամանակ, երբ հրապարակվեց մի օրենք, որով հրամայվում էր, որ ամեն ոք պետք է վերադառնա գործի: Ես տեսել եմ մի քանի թաթար և թուրք պաշտոնյաների կախված՝ այս օրենքին չենթարկվելու պատճառով: Ես չգիտեմ, թե այս բանի համար Ջիվանշիրը պատասխանատո՞ւ էր, թե՞ ոչ:

Կոտորածների չորրորդ օրը ես տեսա, որ մի թուրք սպա ծեծում էր թալանչիներին: Հայկական շրջաններում ծառայող ռուսական բանակի հայ զինվորները զինված էին, բայց քաղաքացիական բնակչությունը զենք չուներ:

Այդ հայ զինվորները պաշտպանում էին քաղաքը, որը դեռևս ռուսական էր, դեռևս նվաճված չէր նոր կազմավորված ադրբեջանական հանրապետության կողմից: Թուրքերը Բաքու մտան 1918-ի սեպտեմբերի 16-ին: Մինչ այդ, առաջին հեղափոխությունից հետո, Բաքվում կար ժամանակավոր կառավարություն: Դրան հաջորդեց բոլշևիկյան կամ սովետական կառավարությունը, որ դարձյալ բռնապետական կառավարություն էր: Ես էնվեր Փաշային Բաքվում երբեք չեմ տեսել:

Խոսրովյան էֆենդիի հարցերին վկան պատասխանեց հետևյալ կերպ.

Կոտորածները սպաներն էին ղեկավարում: Ես չգիտեմ զինվորներին հրամայող սպաների ինքնությունը: Ջիվանշիրը Մուսավաթ կուսակցության ղեկավարն էր:

-Կոտորածներից հետո շարունակվում էին հայերի սպանությունները, բայց ավելի քիչ թվերով: Ամեն ոք հասկանում էր, որ մեղավորը կառավարությունն էր:

Ես չգիտեմ կառավարության առանձին անդամների մտածելակերպը, ոչ էլ այն, թե Ջիվանշիրը հոգուտ կոտորածների խոսե՞ց, թե՞ ոչ:

Ես չգիտեմ՝ էնվեր Փաշան Գյանջա գնա՞ց, թե՞ ոչ:

Հայդար Ռիֆատ Բեյի խնդրանքով տրված դատական ատյանի հարցերին վկան պատասխանեց հետևյալ կերպ:

-1918-ի մարտին բոլշևիկների կողմից Բաքվում կազմակերպված կոտորածների ժամանակ հայերը իրենց չեզոք հայտարարեցին: Այնուամենայնիվ, բոլշևիկների բանակում ծառայող հայ սպաները մասնակցություն ունեցան թուրքերի կոտորածներին:

1918-ի կոտորածներին 2,000 - 3,000 թուրք սպանվեց: Ջիվանշիրը իր վարքով բավական կիրթ մարդ էր: 1905-ի Ռուսական հեղափոխության ժամանակ Ռուսական կառավարության քաղաքականությունը նպատակ էր հետապնդում կայսրության փոքր ազգերին լարել միմյանց դեմ: Այդ տարի թաթարներն ու հայերը զենք վերցրին և թշնամական գործողություններ սկսեցին: Թաթարները, որոնք փորձառության ու կրթության պակաս ունեին, քարոզչությունից խաբվեցին և սկսեցին թշնամանալ հայերի դեմ: Հայկական Ազգային Խորհուրդը կազմված էր տարբեր կուսակցությունների անդամներից: Ես Ազգային ժողովրդավարական կուսակցության անդամ եմ: Դաշնակ կուսակցությունը նույնպես իր պատգամավորներն ուներ ժողովում:

Շատ տարբերություն չկա թուրք և ազերի սպաների համազգեստների միջև: Որոշ ազերի սպաներ ռուսական ուսադիրներ էին կրում:

Ընտանիքը, որի տանը թաքնվել էի, Լիբանանի հրեա էր: Ես չեմ հասկանում ինչո՞ւ հայերը պետք է թուրքերին գրգռեին, որ իրենց սպանեն: Վերջին հաշվով, հայերը Բաքուն պաշտպանող բազմազգ ուժերից էին:

Դաշնակ կուսակցությունը սոցիալիստական կուսակցություն է: Այն կոմունիստական կուսակցություն չէ, այլ այդ կուսակցության գաղափարների սաստիկ հակառակորդը:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՎԿԱ

Պավել Թզիկյանը երդվելուց հետո Խոսրովյան էֆենդիի հարցերին հետևյալ պատասխանները տվեց.

-Ես 29 տարեկան եմ: Ապրում եմ Տաքսիմի Ռոթոր ռեստորանում: Ռուսական բանակի սպա եմ: 1918-ին ես Բաքվում էի: Այդ տարի Բաքվում հայերի լայնատարած կոտորած տեղի ունեցավ: Կարծում եմ, որ շուրջ 30,000 հայ սպանվեց: Թաթար հրոսակախմբեր մտան Բաքու և ջարդերն իրականացրին: Չգիտեմ ովքեր էին նրանց ղեկավարները: Ես լսել եմ Մուսավաթ կուսակցության մասին: Այն թաթար կուսակցություն է: Նաև Ջիվանշիրի անունն եմ լսել: Կարծում եմ, որ Ջիվանշիրն էր պատասխանատու կոտորածների համար: Նա կարևոր հասարակական դիրք էր զբաղեցնում: Թաթարները և հայերը չէին, որ կատարեցին կոտորածները, ինչպես հրապարակվում է: Ես տեսել եմ մի թաթար, որ հայ երեխային գետին

նետեց և մորը սվինահար արեց: Կոտորածները տևեցին երեք օր: Թուրք զորքերը Բաքու մտնելուց հետո ազերի կառավարությունը դադարեցրեց կոտորածները: 1916-ին Բաքվում չէի: Տեսա, որ որոշ հայերի և ռուսների տներ թալանվում էին: Ես փողոց դուրս եկա մի քանի անգամ: Թեև մի քանի անգամ ձերբակալվեցի, սակայն ամեն անգամ, երբ պսում էի, որ ռուս եմ, ինձ ազատ էին արձակում:

Մի հայտարարություն հրապարակվեց, որում նշված էր, որ խաղաղություն և ապահովություն է հաստատված: Համենայն դեպս, հայտարարությունը միաժամանակ ասում էր, որ հայերը չպետք է հանգիստ մնան, որովհետև հայերը չեն ուզում, որ թուրքերը մտնեն Բաքու:

Ես կարծում եմ, որ ջարդը կազմակերպված էր: Ազերի բանակի հրամանատարը չէր կարող կանխել կոտորածները, որովհետև թաթար հրոսակախմբերը ավելի ուժեղ էին, քան փոքր և մասնատված ազերի բանակը: Մինչև կոտորածները Բաքվում էի: Քաղաքը թուրք և ազերի ուժերի կողմից գրավման վրա էր:

Թաթար խաժամուժը հարձակվող և պաշտպանվող ուժերի արանքում էր:

Դատախազի հարցերին վկան պատասխանեց հետևյալ կերպ.

-Ես նույնպես լսել եմ, որ Կովկասում մուսուլմաններ են սպանվել հայերի կողմից: Երկու կողմերը սպանում էին մեկը մյուսին: Բաքվում ամեն մարդ նկարագրում էր, թե ինչքան վատ էր վերաբերվում Ջիվանշիրը հայերի հետ: Ես չեմ հասկանում, ինչո՞ւ էին հայերը սպանվում: Հայտարարությունը գրված էր ռուսերեն և թաթարերեն: Իմ ընկերներից մեկը ինձ ցույց տվեց հայտարարությունը: Այն ստորագրված էր Ջիվանշիրի և մեկ ուրիշի կողմից: Ամենայն հավանականությամբ, հայերը սպանվում էին, որովհետև նրանք փորձում էին խափանել թուրքերի մուտքը Բաքու:

Ռիֆատ Բեյի խնդրանքով դատական ատյանի կողմից տրված հարցերին վկան պատասխանեց հետևյալ կերպ.

-Ես Ստամբուլ եկա այն բանից հետո, երբ գեներալ Վրանգելը քաշվեց Ղրիմից: Այստեղ արձանագրված եմ Ռուսական Հյուպատոսարանում: Ես չեչենական հեծյալ խմբում լեյտենանտ էի: Խոսում եմ միայն ռուսերեն: Իմ հայ ընկերներից մեկը ինձ ցույց տվեց մի թերթում հրապարակված հայտարարությունը: Այն բանից հետո, երբ ինձ հարցրեց ես Բաքվում եղե՞լ եմ, թե՞ ոչ, ինձ տարավ իր իրավաբանի մոտ: Ես այդ քաղաքում էի պաշտոնապես, որպես պատասխանատու անձ թուրքերի՝ Բաքու մուտքի համար: Կոտորածները տևեցին երեք օր: Հայերը սպանվում էին, որովհետև նրանք չէին ուզում, որ թուրքերը մտնեն Բաքու: Հայտարարությունը սպառնում էր հայերին, որոնք պաշտպանում էին քաղաքը:

ՎԵՑԵՐՈՐԴ ՎԿԱ

Դավիդ Տեր-Դավիդյանը երդվելուց հետո Խոսրովյան էֆենդիի հարցերին պատասխանեց հետևյալ կերպ.

-Ես 36 տարեկան եմ: Ապրում եմ Գալաթայի (Ստամբուլ) «Օսմանիե» հյուրանոցում: Ներկայումս չեմ աշխատում: Ես զինվոր եմ, իսկ մինչ այդ առևտրական

էի: Ես ռուսական քաղաքացիություն ունեի, ազգությամբ հայ եմ: Այժմ Ադրբեջանի քաղաքացի եմ: 1918-ի կոտորածների ժամանակ ես Բաքվում էի: Իմ հարսը ինձ թաքցրեց իրենց տանը: Հորեղբայրս սպանվեց: Նա և մի քանի այլ պատգամավորներ կոտորածների ընթացքում գնացել էին տեսակցելու Ջիվանշիրի հետ: Նրանք գնացել էին խնդրելու, որ վերջ տա ջարդերին:

Հորաքույրս ինձ պատմում էր, որ Ջիվանշիրը ասել է, թե քաղաքում 20 հայ է մնացել: Ջիվանշիրը հորեղբորս տուն է ուղարկել թուրք պահակախմբի ուղեկցությամբ, իսկ երեք օր հետո հորեղբորս բանտարկել են: Հորեղբայրս 15,000 ռուբլի է վճարել, որպեսզի բանտից ազատվի, բայց բանտից դուրս գալուց հետո սպանեցին նրան: Այդ եղելությունը վրացական նախկին իշխանություններին լավ հայտնի էր: Հորեղբայրս լավ ճանաչված ինժեներ էր, ազգանունը՝ Քալանթարով: Մորս և քրոջս սպանեցին թաթարները: Նրանք սպանվեցին 15 ամիս առաջ, Շուշանի փողոցի թիվ 401 տանը:

Ես ուղղափառ հայ եմ: Երբեք չեմ կարողանա ներել իմ մորը սպանողին:

Դատախազի հարցերին վկան պատասխանեց հետևյալ կերպ.

-Ես Բաքվում ապրել եմ ընդհանուր առմամբ ութ տարի: Ջիվանշիրին ճանաչում էի միայն անձնապես: Նա Մուսավաթ կուսակցության ղեկավարներից մեկն էր: Այդ կուսակցությունը հիմնադրված էր հայերին բնաջնջելու նպատակով: Մուսավաթ կուսակցությունը գաղտնի կազմակերպություն չէր: Եթե մորս սպանողին գտնեմ, նրան կհանձնեմ կառավարությանը:

Հայդար Ռիֆատ Բեյի խնդրանքով դատական ատյանի կողմից տրված հարցերին վկան պատասխանեց հետևյալ կերպ.

-Հորեղբորս մահվան մասին ես իմացա թերթերից: Ջիվանշիրը Բաքու եկավ կոտորածների երկրորդ օրը: Կոտորածներն սկսվեցին մինչև թրքական բանակների Բաքու մտնելը: Մինչև թրքական զինվորների քաղաք մտնելը թաթարական մի հրոսակախումբ հասավ Բաքու: Նրանք գործում էին Ներքին Գործոց նախարարության հրամաններով: Թրքական զինվորներին ղեկավարում էր Նուրի փաշան: Իմ կարծիքով, թրքական զորքերի քաղաք մտնելուց հետո կոտորածները դադարեցված չլինելու կապակցությամբ պատասխանատու պետք է համարվի Նուրի փաշան: Մորսել փաշայի մասին ես երբեք ոչ մի բան չեմ լսել: Նուրի փաշան և Ջիվանշիրը գործում էին համատեղ:

Ջիվանշիրը զորքերի հետ քաղաք մտավ կոտորածների երկրորդ օրը: Ազերի կառավարության ղեկավարները Գյանջայում էին, բայց ես կարծում եմ, որ վարչապետը Բաքու քաղաքում էր զորքի հետ: Հրոսակախմբերը բաժանված էին երեք մասի՝ անկանոն խմբեր, հետևակ և հեծելազոր: Անկանոն խմբերը թրքական բանակից ավելի բազմամարդ էին: Նրանց թիվը կազմում էր 70,000-ից մինչև 80,000: Թրքական բանակը ուներ ընդամենը 10,000 զինվոր: Պատերազմի սկզբից մինչև 1918-ը ես ռուսական բանակում ծառայել եմ իբրև կամավոր: Բաքվի 1918-ի պաշտպանությանը մասնակցություն չեմ ունեցել: Ջիվանշիրի և խան Խոյսկու կողմից հրապարակված հայտարարությունը ասում էր.

«Ազերի և թուրք բանակները գրավել են քաղաքը: Ապահովությունը վերականգնված է: Որևէ մեկը, ով դիմադրություն ցույց տա քաղաքի պաշտպանությանը, պիտի պատժվի: Հայերը օրենքի առաջ կորցրել են իրենց բոլոր իրավունքները»:

Հայտարարությունը գրված էր ռուսերեն և թաթարերեն: Քաղաքը պաշտպանողներից մի քանիսը փախան և այդպիսով փրկեցին իրենց կյանքը: Ովքեր մնացել էին, բանտարկվեցին:

ՅՈԹԵՐՈՐԴ ՎԿԱ

Գրիգոր Ամիրյանը երդվելուց հետո Խոսրովյան էֆենդիի հարցերին պատասխանեց հետևյալ կերպ.

-Ես 34 տարեկան եմ: Ապրում եմ Իսկուդարում, Կարաբիչյան փողոց, թիվ 39: Հայկական Բարեգործական Ընկերության հիմնադիրն եմ: Ներկայումս Քուլեյի որբանոցի տնօրենն եմ: Ես Բաքվում էի: Բաքու գնացի իբրև գեներալ Սեպուհի օգնականը: Երբ գեներալը Հյուսիսային Կիպրոսում էր, մենք տեղեկացանք, որ Բաքվում գտնվող բրիտանական զինված ուժերը պիտի պահպանեն այդ քաղաքը, ուստի նա կամավորներ հավաքագրեց և գնաց Բաքու:

1918-ի սեպտեմբերի կոտորածների ժամանակ ես Բաքվում էի: Սեպտեմբերի 9-ի երեկոյան բրիտանական ուժերը քաղաքից դուրս քաշվեցին: Գեներալ Սեպուհը քաղաքից հեռացավ բրիտանացիների հետ միասին: Ես, հատուկ առաջադրանքով, պետք է Բաքվում մնայի: Իմ առաջադրանքն այն էր, որ հետևեի, որպեսզի քաղաքը պաշտպանող բոլոր զինվորները թողնեին Բաքուն: Հենց որ բրիտանացիները քաղաքից հեռացան, կոտորածներն սկսվեցին: 20,000-ից 30,000 հայեր սպանվեցին: Կոտորածները կազմակերպված էին Գյանջայի ադրբեջանական կառավարության կողմից, խան Խոյսկու և Ջիվանշիրի խողովակով: Ես գիտեմ, որ նրանք էին կազմել պլանները, որովհետև նրանք էին կառավարության և Մուսավաթ կուսակցության ղեկավարները:

1918-ի հուլիսին ես, իբրև դաշնային կառույցում թրքերեն խոսող սպա, պետք է որոշ բռնագրավյալ փաստաթղթեր թարգմանեի հայերեն: Դրանք գրավոր հրամաններ էին, ստորագրված Ներքին գործերի նախարար Ջիվանշիրի կողմից, ուղղված որոշ քաղաքապետների և ունեին հետևյալ բովանդակությունը. «Սա սուրբ պատերազմ է, հանուն թուրք ցեղի բոլոր հատվածների միացման: Դա անելու համար անհրաժեշտ պիտի լինի առաջին հերթին ոչնչացնել հայ ցեղը: Հայերը Բրիտանիայի ձեռքումն են և նրանք խոչընդոտ են մեր քաղաքականության ճանապարհին, որի նպատակն է գնալ Հնդկաստան: Անհրաժեշտ է ոչնչացնել հայերին և նրանց դիակների վրայով քայլել դեպի մեր նպատակը: Ոչ մեկին մի՛ խնայեք և խստորեն կատարեք այն, ինչ ձեզ ասված է: Այսպիսով է, որ Ստամբուլը կարող է ողջունել Հնդկաստանը»:

Ես այն ժամանակ հասկացա, որ հայերի շարունակական սպանությունները կատարվում են Ջիվանշիրի հրամանով: Թուրքերը և թաթարները կարող են միանալ միայն Հայաստանի վրայով:

Ես շատ լավ եմ ճանաչում գեներալ Դանստերվիլին և գնդապետ Ստոկսին: Փաստաթղթերն ինձ թարգմանելու տվեց գնդապետ Ավետիսյանը, որն այն ժամանակ ավագ սպա էր: Նա գնդապետ Ստոկսի հետ հերթափոխում էր: Կարծում եմ, որ գեներալ Դանստերվիլը ինձ վստահում էր:

Գյանջան 200 վերստ, այսինքն՝ 150 մղոն հեռու է Բաքվից: Սակաբբաս և Նուխի նահանգներում ոչ մի կենդանի հայ չմնաց: Շամակտ և Գեոկչե նահանգներից փոքր թվով հայեր փախան:

Դատախազի հարցերին վկան պատասխանեց հետևյալ կերպ.

-Ես Ջիվանշիրին անձնապես չեմ ճանաչում: Փաստաթղթերը բռնագրավված են Բաքվի պաշտպանության համար կազմված միջազգային ուժի կողմից: Բաքվի կառավարությունը մի բռնատիրության ձեռքում էր: Նրանք կռվում էին Գյանջայում կազմված կառավարության դեմ, որն իրեն անվանում էր Ադրբեջանի կառավարություն: Փաստաթղթերը թաթարերեն էին.

«Բիհբուդ խան Ջիվանշիր, Ներքին գործերի նախարար» ստորագրությամբ հեռագրեր կային, որոնցից յուրաքանչյուրի վերևը գրված էր՝ «Բնագիրը ծածկագրված»:

Ես գործերի կառավարիչը չէի և թարգմանվելուց հետո փաստաթղթերը իմ միջոցով էին փոխանցվում: Բաքվի բանակի հրամանատար գեներալ Դոգուչաևը, հավանաբար, իրենց մոտ էր: Ես չգիտեմ, ուր է նա այժմ: Կարդացել եմ փաստաթղթեր, որոնք հանձնարարում էին ոչ թե խիստ միջոցներ ձեռնարկել, այլ ոչնչացնել հայ բնակչությունը: Ծանոթ եմ նույն բովանդակությամբ նաև այլ փաստաթղթերի: Երբեք չեմ լսել, որ հայերը կոտորեն մուսուլմաններին:

Հայդար Ռիֆատ Բեյի խնդրանքով դատական ատյանի կողմից տրված հարցերին վկան պատասխանեց հետևյալ կերպ.

-Բանակցություններն սկսվեցին քաղաքը հանձնելուց մեկ շաբաթ առաջ: Կարծում եմ, որ գեներալ Բագրատունին բանակցում էր Բաքվի ուժերի անունից: Մուրսել փաշան թրքական և թաթարական բանակների հրամանատարն էր: Երկու կողմերը պաշտոնյաներ էին ուղարկել հաղորդակցությունների գործընթացը հեշտացնելու համար: Մուրսել փաշան չընդունեց իր մոտ ուղարկված բանագնացներին: Նա գրություն ուղարկեց քաղաք: Ես այն թարգմանեցի: Ահա թե ինչ էր այնտեղ ասված.

«Գերմանական և թրքական բանակները որոշել են Բաքուն վերցնել ինչ գնով էլ լինի: Բաքուն պետք է մեր ձեռքում լինի հանուն հետագա գործողությունների: Մենք հայերին խորհուրդ ենք տալիս չխաբվել բրիտանացիների դատարկ խոստումներից, այլապես բոլոր հայերը կոչնչացվեն: Նախազգուշացնում ենք»:

Գրությունը հասցեագրված էր Հայկական Ազգային Խորհրդին: Երբ բրիտանացիները քաղաքից հեռանում էին, պատվիրակներից կազմված Խորհուրդը, օտար երկրների հյուպատոսների հետ միասին, այցելեց Մուրսել փաշային: Պատվիրակությունը գլխավորում էր Հայ եպիսկոպոս Խորենը: Խորհուրդը գնում էր հանձնվելու, որովհետև քաղաքում արդեն զինվորներ չէին մնացել: Խորհուրդը նախկինում դիմել էր Ազերի կառավարությանը և ստացել. «Արդեն ուշ է» պատասխանը: Մուրսել փաշան իրենց ասաց. «Դուք մերժել եք իմ առաջարկները, պետք է պատրաստ լինեք դիմագրավելու հետևանքները»: Քաղաքը հանձնվեց և թաթարները քաղաք մտան առանց որևէ դիմադրության հանդիպելու: Կանոնավոր զորքը մնաց հետևում: Այդպես էր արված, որպեսզի թաթար խաժամուժը գործեր ազատորեն: Թաթարներին հրամայում էին իրենց ղեկավարները, ինչպես նաև թուրք և գերմանացի սպաները:

ՈՒԹԵՐՈՐԴ ՎԿԱ

Կարապետ Յազիճյանը երդվելուց հետո Խոսրովյան էֆենդիի հարցերին տվեց հետևյալ պատասխանները.

-Ես 38 տարեկան եմ: Երկաթագործ եմ: Ապրում եմ Քինալիադայում: Ծննդով Տրապիզոնից եմ: Բաթումը թողել եմ 1895-ին: Այդ ժամանակվանից Տրապիզոնում միայն մեկ անգամ եմ եղել. դա 1912-ին էր: Տրապիզոնում մնացի մեկ տարի: Իմ բոլոր բարեկամները Տրապիզոնից են: Հայրս մահացել է: Մայրս կենդանի է: Պատերազմի ժամանակ նա տեղահանվեց: Մորս քշեցին մինչև Հալեպ և Տեր Զոր: Ես պաշտպանյալին ճանաչում եմ, նույն գյուղից եմ, այսինքն՝ Քուշանայից: Քուշանան Տրապիզոնից չորս ժամ հեռու է: Երբ ես 1895-ին Տրապիզոնը թողեցի, պաշտպանյալը չորս տարեկան էր: Ճանաչում եմ պաշտպանյալի հորը: Նրա անունը Հակոբ է: Հակոբը գյուղի լավագույն ագարակապաններից մեկն էր: Նրա ընտանիքը շատ համեստ էր:

Ես պաշտպանյալին տեսա 1912-ին, երբ այցելել էի Տրապիզոն: Նա շատ հանդարտ և բարեկիրթ մարդ էր: Ես կարող էի իմ ամբողջ դրամը իրեն վստահել: Նրան երբեք չեմ տեսել ստելիս, խմած վիճակում կամ գողություն անելիս:

Դատախազի հարցերին վկան պատասխանեց հետևյալ կերպ.

-1912-ին ես շատ հաճախ էի տեսնում պաշտպանյալին՝ շաբաթը 2-3 անգամ: Պաշտպանյալը ամուսնացած չէր, նրա հայրն ու մայրը կենդանի էին:

ԻՆՆԵՐՈՐԴ ՎԿԱ

Տիկին Գոհար Սարիյանը Խոսրովյան էֆենդիի հարցերին պատասխանեց հետևյալ կերպ.

Ես բնակվում եմ Քինալիադայում: Երեսուներեք տարեկան եմ: Դերձակուհի եմ: Ծնվել եմ Տրապիզոնում: Իմ նախնիները Տրապիզոնից են: Արամ Սարիյանի հետ ամուսնացել եմ Տրապիզոնում: Ամուսինս կանացի քողեր էր վաճառում: Նա մահացավ Տրապիզոնում, որովհետև տարագրված էր: Նրան դրեցին մի նավի վրա, հետո սպանեցին: Երեք զավակ ունեմ, բոլորն էլ կենդանի են: Ամուսինս սիրում էր բարեգործություն անել: Թուրքերը ամուսնուս ամբողջ հարստությունը բռնագրավեցին: Ստիպված էի դավանափոխ լինել և ամուսնանալ թուրքի հետ:

Զինադադարից հետո ես ամուսնուս տնից փախա և գնացի Թիֆլիս: Պաշտպանյալին ճանաչում եմ: Նա Քուշանայից է: Մենք ամեն ամառ Քուշանա էինք գնում: Պաշտպանյալի բարեկամները ազնիվ և լավ մարդիկ են: Թոռլաքյանին տեսա Թիֆլիսում՝ զինադադարից հետո: Նա այնտեղ շուրջ երեք օրով մեր տան հյուրն էր: Կարծում եմ, որ նա գնում էր Բաքու իր ազգականին տեսնելու համար: Պաշտպանյալի հորը նույնպես ճանաչում եմ: Նրա անունը Հակոբ է: Քուշանայում հայկական եկեղեցի կա: Մենք գնում էինք այնտեղ ու նստում: Պաշտպանյալի հորեղբայրը քահանա էր: Նա դյուրագրգիռ մարդ էր, նաև՝ խելագար: Ամեն ոք նրան «գիժ տերտեր» էր անվանում: Նա, իրոք, գիժ էր: Նա մի անգամ հանեց իր

կրոնական արտահագուստը և փողոցում թափառեց քաղաքացիական զգեստով: Մի ուրիշ անգամ նա իր եկեղեցին վերածեց թատրոնի: Կոտորածներից երկու ամիս առաջ նա միացավ թրքական բանակին: Այսուհանդերձ, նրան սպանեցին: Թուրքերը ուզում էին բոլոր հայերին ոչնչացնել: Քահանան և պաշտպանյալի հայրը մի ագարակ և ոչխարների հոտեր ունեին: Պաշտպանյալը ամուսնացած էր: Նրա կնոջը ճանաչում եմ, սակայն նրան շատ հաճախակի չէի տեսնում: Թոռլաքյանի զավակներից մեկը և ես միասին խաղում էինք: Այդ ժամանակ նա էպիլեպտիկ նոպա էր ունենում և նրան տուն էին տանում: Երբ պատերազմն սկսվեց, Հակոբը իր ամբողջ ընտանիքը ուղարկեց Կովկաս: Ես չգիտեմ, ինքն էլ գնա՞ց, թե՞ ոչ: Տրապիզոնում իրարանցումն արդեն սկսվել էր: Պաշտպանյալի հայրը հարգված մարդ էր: Համենայն դեպս, զավակը տարօրինակություններ ուներ: Նա իր գրպանում միշտ քարեր ուներ: Ինչքան գիտեմ, պաշտպանյալը ուներ մեկ կամ երկու զավակ, մի քույր և մի եղբայր:

Դատախազի հարցերին վկան պատասխանեց հետևյալ կերպ.

-Կոտորածների ժամանակ ես մնացի հիվանդանոցում՝ մի քանի ուրիշ աղջիկների հետ միասին: Ինձ հիվանդանոցից վերցրին, ստիպեցին ամուսնանալ թուրքի հետ և դավանափոխ լինել: Ինձ ասացին, որ հակառակ դեպքում ինձ կսպանեն: Թուրք ամուսինս լավ մարդ էր և ինձ միշտ լավ էր վերաբերվում: Վեց ամիս հետո ամուսնուս թողեցի և մեկնեցի Բաքու՝ այնտեղ թաքնվելու: Երբ ռուսական բանակը Տրապիզոն մտավ, վերադարձա քաղաք: Կոտորածներից առաջ պաշտպանյալի ընտանիքը կենդանի էր:

Հայդար Ռիֆատ Բեյի խնդրանքով դատական ատյանի կողմից տրված հարցերին վկան պատասխանեց հետևյալ կերպ.

-Պաշտպանյալն ամուսնացավ 1912-ին: Ես վստահ եմ, որովհետև 1915-ին պաշտպանյալը մի քանի զավակ ուներ:

Ծնվել եմ օսմանահպատակ, սակայն ամուսնացել եմ մի ռուսահպատակի հետ:

Ինձ և երեխաներիս համար մեկ հատ անձնագիր ունեմ: Այն դատարանով չեմ ստացել: Ապրում եմ Թաշջան հյուրանոցում, Քինալիադայում:

Ես ճանաչում եմ տրապիզոնցի թուրքեր Քիրզադեին և Նեմլիզադեին, մասնավորապես Մուսթաֆային, որը Քիրզադեի կամ փեսան էր, կամ աներորդին. նա էր, որ երեք անգամ կյանքիս սպառնաց և ինձ ստիպեց մուսուլման դառնալ: Իմ թուրք ամուսինը այնտեղ շատ լավ էր ճանաչված: Էդդեմ էֆենդի էր նրա անունը, թրքական դատարաններում եղել եմ իբրև վկա: Վկա եմ եղել Ավնի բեյի գործով. դատարանի նախագահը Մուսթաֆա փաշան էր:

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՎԿԱ

Երդվելուց հետո Տիկ. Համասփյուռ Խոյանը հայտարարեց.

-Ես 37 տարեկան եմ, ապրում եմ Քինալիադայում:

Ամուսնացած եմ: Ամուսինս քահանա է: Ամուսնուս անունն է Խոյան Տեր-Վա-

հան: Ծնվել եմ Տրապիզոնում: Տրապիզոնը թողել եմ 22 տարի առաջ:

Մեղադրյալին ճանաչում եմ: Նա ամուսնացած է քրոջս դստեր հետ: Նրա անունն է Միսաք Թոռլաքյան:

Տրապիզոն գնացի 1913-ին: Այնտեղ մնացի երեք ամիս: Ես Քուշանա գյուղից եմ: Քուշանան քայլելով չորս ժամ հեռու է Տրապիզոնից: Կարող ես նաև նավով գնալ Քուշանա:

Ես ճանաչում եմ մեղադրյալի հորը: Նրա անունը Հակոբ է: Ճանաչում եմ նրա մորը: Նրա անունը չգիտեմ: Նրան մենք «մամա» էինք անվանում: Ճանաչում եմ մեծ հորը: Նրա անունն էր Տեր-Կարապետ: Ճանաչում եմ Հակոբի եղբորը: Նա քահանա էր: Նրա անունը Տեր-Արիստակես էր: Նա մեղադրյալի հորեղբայրն է: 1913-ին, իմ այցելության ժամանակ ես լսեցի, որ նախորդ տարի, իմ այցելությունից 18 ամիս առաջ, մեղադրյալը ամուսնացել է իմ զարմուհու հետ:

1913-ին մեղադրյալը մեկ զավակ ուներ: Կարծեմ նա ավելի ուշ, Բաքումում երկրորդ զավակն ունեցավ: Նա մի եղբայր ուներ Երվանդ անունով և մի քույր, որի անունն էր Աղավնի: Քույրը տեղահանվեց Տրապիզոնից և հնարավոր է, որ սպանված լինի:

Ես երկու զավակ ունեի: Մեկը մահացել է: Նա սպանվեց անգլիացիների և ֆրանսիացիների համար կռվելիս: Երբ ես առաջին անգամ թողեցի Տրապիզոնը, մեղադրյալը 7 կամ 8 տարեկան էր: Նրա մայրը ուրիշ երեխաներ էլ ուներ, որոնք մահացան երիտասարդ հասակում: Մեղադրյալը թուլակազմ էր, կանոնավոր քայլել չէր կարողանում և ուշաթափվում էր, էպիլեպտիկ էր: Նա սկսեց քայլել ու խոսել, երբ երե՞ք, թե չորս տարեկան էր:

Սկզբնական շրջանում հայրը լավ էր, բայց հետո դուրս չէր գալիս՝ վախենալով, թե մեկը կարող է իրեն սպանել:

Հորեղբայրը յուրահատուկ մարդ էր: Նա սովորություն ուներ հանել իր քահանայական արտահագուստը և փողոցում քայլել առանց դրա: Հետո իբրև զինվոր կասավոր գրվեց թրքական բանակում և երբ Թիֆլիսում էր, սպանվեց այլ հայ զինվորների հետ:

Մեղադրյալը 1913-ին հարգված և լավ մարդ էր: Ծնողները հաջողակ էին, շատ հողեր ունեին:

Մոտ յոթ կամ ութ ամիս առաջ, երբ նա եկավ Կովկասից, այցելեց և մեզ մոտ մնաց իբրև մեր բարեկամը: Նա պատմեց պատերազմի ժամանակ արկածախնդրությունների մասին, Տրապիզոնից իր փախուստի, այնտեղից Բաքում, ապա Թիֆլիս անցնելու մասին:

Ես գոհ էի, որ զարմուհիս ամուսնացել էր նրա հետ:

Ես չեմ կարծում, որ մեղադրյալը ընդունակ է որևէ վատ բան անելու:

ԽԱՉԱՏԵՎ ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

-Ես մեղադրյալին ճանաչում էի մինչև 8-9 տարեկանը: Նա էպիլեպտիկ էր, որի պատճառով ընկնում և բերանը փրփրում էր:

Չգիտեմ, մեծանալուց հետո ինչպիսին է եղել նրա առողջական վիճակը: Քույրս ինձ ասել է, որ երբ իր աղջկան նրա հետ ամուսնացրեց, չգիտեր, թե գիշերաշրջիկ է. դա հետո է իմացել: Ես չգիտեմ, նա թրքական բանակում ծառայե՞լ է, թե՞ ոչ:

Ես երբեք չեմ լսել Բիհբուդ խան Չիվանշիրի մասին: Մեղադրյալը խոսում էր Բաքվում բոլոր խառնաշփոթների և կոտորածների մասին, սակայն երբեք չի հի-

շատակել Չիվանշիրի անունը:

Ես մինչ այս, դատարանում երբեք չեմ եղել:

ԴԱՏԱԿԱՆ ԱՏՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՏՐՎԱԾ ՀԱՐՑԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԵՑ.

-Նա մեզ ասել է Չիվանշիրի անունը իբրև կոտորածների պատասխանատու: Ես առաջ սխալվել էի: Հիշում եմ, հիմա հիշում եմ, որ նրա մասին լսել էի: Կոտորածների հետ կապված ուրիշ ոչ մեկ այլ մարդու անուն չեմ լսել:

Չիվանշիրի շահերի պաշտպանի հարցին պատասխանեց.

-Մեղադրյալը պետք է լինի 31-32 տարեկան:

Այստեղ գալուց հետո մեղադրյալը մեր տուն է եկել 3-4 անգամ: Ես չգիտեմ, թե Ստամբուլում նա որտեղ է ապրում:

Մուշանայում իմ տունը իր տնից ոտքով 15 րոպե հեռավորության վրա էր:

Նա հաճախ քնած վիճակում քայլում էր:

Ես նրան էպիլեպտիկ վիճակում տեսել եմ երիտասարդ ժամանակ: Բայց չեմ տեսել քնած ժամանակ քայլելիս:

Նա քայլում էր ու զարթնում՝ իրեն գտնում մեկ այլ վայրում: Մեղադրյալը երբեք բանտում չի եղել:

Ես չգիտեմ, որ հայերը թուրքերին կոտորել են:

Մեղադրյալը քնած վիճակում քայլում էր աչքերը փակ: Ես չգիտեմ, նրան բժշկի տարե՞լ են արդյոք գիշերաշրջիկության կապակցությամբ:

Քուշանան կառավարվում է մի պաշտոնյայի կողմից Չիֆթլի քաղաքում, որը 4 ժամ հեռու է: Քուշանան մի քիչ ավելի դեպի երկրի ներսն է, 2-3 ժամվա քայլելու հեռավորության:

Ես չգիտեմ, թե 1913 -ին ո՞վ էր Տրապիզոնի կառավարիչը: Չգիտեմ, թե երբ մեղադրյալն ինձ մոտ եկավ, դրամ ունե՞ր, թե՞ ոչ: Ես ապրում եմ ամուսնուս հետ:

ՎԵՐԱԿԱՆՉՎԱԾ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԱՐՑԱՔՆՆՎԱԾ ՄԵՂԱԴՐՈՂԻ ԿՈՂՄԻՑ ԻԲՐԵՎ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

-Պատերազմի սկզբում նա, իր հոր, մոր, կնոջ և զավակների հետ միասին փախավ Բաքումի: Այդտեղից նրանք գնացին Թիֆլիս, ապա՝ Բաքու: Թիֆլիսում եղած ժամանակ մեղադրյալը կամավոր զինվորական արձանագրվեց, բայց ես չգիտեմ թե ե՞րբ և ո՞ր բանակում: Բայց դա իր ծնողներին, կնոջը և երկու զավակներին Բաքումից Բաքու ուղարկելուց հետո էր: Հետո ինքը մեկնեց Թիֆլիս: Երբ նա լսեց, որ իրարանցում և ջարդեր կան Բաքվում, բանակը թողեց և գնաց այնտեղ: Նա ինձ ասաց, որ բոլոր հայերը, այդ թվում իր ծնողները, կոտորվել են: Նա փախել էր, ունենալով մի քանի վերքեր: Իր ծնկի մեջ մի փամփուշտ կա և վերքեր՝ ձեռքին ու մեջքին:

Իր կինը և զավակները սպանվել են միաժամանակ: Նա Ստամբուլ եկավ, որովհետև արդեն հարազատներ չուներ, որ գնար Ամերիկա, կամ որևէ օտար երկիր:

ԽԱՉԱՋԵՎ ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

-Նա ինձ չի ասել, թե որ բանակում է ծառայել: Նա անձամբ ինքն է ինձ ասել իր ընտանիքի սպանդի մասին: Իր ընտանիքի սպանդի ժամանակ նա ներկա է եղել և վիրավորվել է: Նրան մի հայ կին է խնամել: Լավանալուց հետո գնացել է Թիֆլիս:

Ես այս բոլորը գիտեի դատարան գալուց առաջ: Մեղադրյալը այդ մասին ինձ պատմում էր, երբ գալիս էր մեր տուն: Փորձում էի իրեն կանգնեցնել (բնագրում այստեղ մի տող պակասում է) 1920-ի նոյեմբերին կամ դեկտեմբերին: Իսկ վերջին այցելությունը մոտ երեք ամիս առաջ էր: Երբ նա այլևս չեկավ, մտածեցի որ արտասահման է մեկնել: Հետո իմացա, որ այս դժբախտության մեջ է ընկել:

Նա միշտ մենակ էր գալիս: Երբեմն նա մի երկու գիշեր մնում էր:

Ես չգիտեմ, թե մեղադրյալը Քինալիադա կղզում մի թուրքի հետ խոսե՞լ է, թե՞ ոչ: 1913-ին Տրապիզոնի մեջ Տիկ. Գոհար Սարիյան չեմ ճանաչել: Ստամբո՞ւլի կամ Քինալիադայի մեջ նրա հետ երբեք չեմ խոսել, բայց գիտեմ, որ ամռանը կղզում էր ապրում:

Չգիտեմ, նա Քուշանայից էր, թե՞ Տրապիզոնից:

Չգիտեմ, մեղադրյալը որևէ ընկերակցության պատկանո՞ւմ է, թե՞ ոչ:

Չգիտեմ, երբ նա եկավ ինձ տեսնելու զինվա՞ծ էր, թե՞ ոչ:

Նա թուրքերի հանդեպ իր զգացումները չէր արտահայտում:

Իր (բացթողում) վրայի վերքի պատճառով, երբ հուզվում էր, նրա շունչը կտրվում էր: Ուստի, չէի թողնում որ շատ երկար խոսի:

ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ ՎԿԱ

Վահան (ԽՈՅԱՆ) քահանան, որ Քինալիադայի ավագ քահանան է և Պատրիարքական ժողովի անդամ, երդվելուց հետո պատասխանեց խոսքավան էֆենդիի հարցերին:

(Հա խոսում էր մանրամասնորեն մեղմ, ասես եկեղեցում աղոթելիս լիներ):

ՀԱՐՑ. Ինչո՞ւ թողեցիր Տրապիզոնը և Ստամբուլ եկար:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես ծնվել եմ Տրապիզոնում: Ստամբուլ եկա 1897-ին: Ես 37 տարի քահանա եմ եղել: Տրապիզոնում մեր ամենամարդաշատ եկեղեցվո քահանան էի: Տրապիզոնը բաղկացած էր 1895-ի դեպքերից հետո բանտարկվեցի 18 ամսով: Ինձ մատնում էին ուսանողներ: Հանկարծ այն փոխարինվեց ցկյանս բանտարկությամբ: Ազատ ինձ աքսորեցին Ստամբուլ: Թուրքերը ինձ ներքանալեցին: Դրանից հետո ես գնում էի Անգլիայի դիտարանի մոտ և նրան պատմում էի հայերի դեմ գործադրվող բռնությունների մասին: Բրիտանական դեսպանատան անունն էր Լոնդոն: Նա ասում էր՝

Իմ մասին դատավճիռը ստեղծվեց բրիտանական դեսպան Ֆրիլ Կուրտի միջնորդությամբ: [illegible] Հանդիսավոր "Դատապարտյալներ հետապնդել" [illegible] Տրապիզոնում [illegible] մասնակցությունից և ոչ մեկը չպատժվեց: [illegible] գործում էին քաղաքի կառավարչի դատավճիռներով: Կոտորածները Տրապիզոնից տարածվեցին մեծի

Անատոլիայի այլ նահանգներ:

Ինչքան գիտեմ, ոչ ոք չպատժվեց կոտորածների համար: Պատերազմից առաջ Տրապիզոնում կար շուրջ 1,600 հայ ընտանիք, բոլորը միասին կազմելով 7-ից 8 հազար մարդ:

Բացի իմ հեռավոր ազգականներից, Տրապիզոնում 1915-ին կոտորվեցին Քուշանայում ապրող եղբայրս, նրա կինը և զավակները, աներորդիները՝ իրենց կանանց և երեխաների հետ միասին: Ընդհանուր առմամբ, մոտ 30 հոգի: Իմ եղբոր դուստրը Սինոպում էր. նրան ստիպեցին թուրք դառնալ: Նա դեռ այնտեղ է և ես տանջվում եմ, որ նրան չենք կարող հետ բերել: Նրանից լուր եմ ստացել 6 ամիս առաջ:

Իմ որդին, 1000 հայ կամավորների հետ Ֆրանսիական բանակի կազմում կռվեց Շամպեյնի ճակատում. նա սպանվեց: Այդ 1000 հոգուց միայն 50-ը կենդանի մնացին:

ՀԱՐՑ. Ճանաչո՞ւմ ես դատապարտյալին:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես նրան մկրտել եմ Քուշանայում:

ՀԱՐՑ. Հորը ճանաչո՞ւմ ես:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, նրա անունը Հակոբ էր:

ՀԱՐՑ. Նրա ընտանիքից ուրիշ որևէ մեկին ճանաչո՞ւմ ես:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես ճանաչում եմ մեծ հորը, մեծ մորը, քրոջը և բոլոր մոտիկ բարեկամներին: Նրա մեծ հոր անունն էր Կարապետ Թոռլաքյան, մեծ մոր անունը՝ Տիրուհի: Հորեղբայրը քահանա էր: Եղբոր անունը Երվանդ էր, իսկ քրոջ անունը՝ Աղավնի:

ՀԱՐՑ. Ինչպիսի՞ն էր դատապարտյալի առողջական վիճակը:

ՊԱՏԱՍԽԱՆ. Երեք-չորս տարեկանում քայլել չէր կարողանում: Այնպիսի տպավորություն կար, որ նա վատառողջ է: Երբ ես Քուշանայում էի, նրա հայրը և մայրը երբեմն գալիս էին ինձ մոտ և խնդրում, որ գնամ և աղոթեմ իրենց որդու առողջության համար: Նա մեկ-երկու ժամ անգիտակից վիճակում էր մնում:

ՀԱՐՑ. Նա հաճա՞խ էր ուշագնաց լինում:

ՊԱՏԱՍԽԱՆ. Շաբաթը մեկ կամ երկու անգամ:

ՀԱՐՑ. Մայրը երեխային բժշկի մոտ տանո՞ւմ էր:

ՊԱՏԱՍԽԱՆ. Որովհետև գյուղը քաղաքից հեռու էր, նրան քաղաք էին տանում մեկ կամ երկու անգամ: Համենայն դեպս, չգիտեմ թե բժիշկը ինչ էր ասում:

ՀԱՐՑ. Նայիր պաշտպանյալին: Ինչպիսի՞ն է այժմ նա:

ՊԱՏԱՍԽԱՆ. Կարծում եմ նիհարել է:

ՀԱՐՑ. Դու ասացիր, որ 1910–ին Տրապիզոնում ես եղել: Այն ժամանակ դատապարտյալը ամուսնացա՞ծ էր:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ, նա ամուսնացավ 1912 -ից հետո:

ՀԱՐՑ. Ինչպե՞ս է, որ գիտես նրա ամուսնության տարին:

ՊԱՏԱՍԽԱՆ. Գիտեմ, որովհետև նա ամուսնացավ իմ կնոջ զարմուհու հետ:

ՀԱՐՑ. Երբ պատերազմը սկսվեց, նրա ընտանիքը Տրապիզոնո՞ւմ էր:

ՊԱՏԱՍԽԱՆ. Նրանք Քուշանայում էին:

ՀԱՐՑ. Որևէ բան գիտե՞ս Բաքվում հայերի՝ թուրքական կոտորածների մասին:

ՊԱՏԱՍԽԱՆ. Դրանց մասին լսել եմ, սակայն անձամբ չեմ տեսել:

ՀԱՐՑ. Ակներևաբար, դատապարտյալը գալիս էր ձեր տուն: Նա որևէ բան խոսո՞ւմ էր կոտորածների մասին:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ասում էր, թե երբ պատերազմը սկսվեց, նա, ընտանիքի հետ միասին, փախավ Բաթումի, այնտեղ մնաց 3 տարի. երբ թրքական բանակը սկսեց առաջանալ դեպի Կովկաս, նա իր ընտանիքին ուղարկեց Բաքու, իսկ ինքը գնաց Թիֆլիս: Հետո, երբ լսեց, որ Բաքուն դատարկվում է, 1918-ին գնաց այնտեղ, միանալու իր ընտանիքին:

ՀԱՐՑ. **Պաշտպանյալը ինչո՞ւ եկավ Ստամբուլ:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Նա, հավանաբար, Ստամբուլ եկավ ետևում թողնելու համար վատ հիշողությունների հետ կապված վայրերը, որովհետև իր բոլոր հարազատները սպանված էին: Նա ասաց, որ այստեղից գնալու է Միացյալ Նահանգներ:

ՀԱՐՑ. **Կա՞ն բոլշևիզմից փախած հայեր, որոնք ապաստան են գտել Ստամբուլում:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո:

ՀԱՐՑ. **Մարդասպանության մեղադրանքով արդյոք որևէ մեկը ուղարկվա՞ծ է թրքական դատարան:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո:

ՀԱՐՑ. **Որևէ մեկը պատժվա՞ծ էր:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Միայն մեկը:

ՀԱՐՑ. **Ո՞վ էր դա:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Քեմալը, Յոզղատի կառավարիչը:

ՀԱՐՑ. **Քուշանան մե՞ծ գյուղ էր:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այնտեղ կար 300 հայկական ծուխ:

ՀԱՐՑ. **Այնտեղ միայն հայկակա՞ն ծխեր կային:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Գյուղը կազմված էր հայկական, հունական և թրքական տնտեսություններից:

ՀԱՐՑ. **Ի՞նչ պատահեց Քուշանայի բնակչության հետ:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Նրանք տեղահանվեցին: Նրանց մասին որևէ տեղեկություն չկա:

ՀԱՐՑ. **Դու ասացիր, որ միայն մեկ մարդ էր պատժված: Ինչպե՞ս իմացար, որ Նուսրեթ բեյ անունով մի մարդ ևս պատժված է:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, Մուսթաֆա փաշայի ռազմական դատարանը պատժեց Նուսրեթ բեյին, բայց Քեմալին պատժեց մեկ ուրիշ դատարան:

ՀԱՐՑ. **Ինչպե՞ս թաղվեց Քեմալը, մարդասպանի՞ պես:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ, ընդհակառակը, նրան թաղեցին դրոշակներով փաթաթված: Հուղարկավորության ժամանակ ճառեր արտասանվեցին: Այլ կերպ ասած՝ նա մարդասպանի պես չթաղվեց: Արդարև, ինչ որ իմացա թերթերից, երբ կառավարությունը փոխվեց, Մուսթաֆա Փաշան պաշտոնից հանվեց մուսուլմանների սպանած լինելու համար:

ՀԱՐՑ. **Իբրև Պատրիարքարանի պաշտոնյա, դու պետք է, որ իմանաս հետևյալի մասին. կոտորածների կապակցությամբ որևէ թուրք պատժվա՞ծ է:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Միայն մեկ մարդ: Ավնի Բեյը նույնպես մեղադրվեց, բայց ազատվեց, երբ Մուսթաֆա Փաշան պաշտոնից հանվեց:

Դատախազը հետևյալ հարցերը տվեց վկային.

ՀԱՐՑ. **Երբ մեկ տարի առաջ տեսար դատապարտյալին, անգիտակցության որևէ նշաններ նկատեցի՞ր:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Նա ազդված էր իր վերքից, բայց անգիտակցության նշաններ ես չնկատեցի:

ՀԱՐՑ. **Նախկինում ինչո՞ւ էիր բանտարկված:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Որովհետև ես Բրիտանական հյուպատոսին տեղեկություն էի տվել Տրապիզոնում 1895-ի հայկական կոտորածների մասին:

ՀԱՐՑ. **Ես լսել եմ, որ դու անդամակցել ես Հայ հեղափոխական կուսակցություններից մեկին և որ դու այդ պատճառով ես բանտարկվել: Սա ճի՞շտ է:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ, ես երբեք նման կուսակցության անդամ չեմ եղել:

ՀԱՐՑ. **Տրապիզոնում հեղափոխական կուսակցություններ կայի՞ն:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Չկային:

ՀԱՐՑ. **Երբևիցե լսե՞լ ես, որ հայերը ապստամբում էին թրքական կառավարության դեմ:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ, չեմ լսել: Համենայն դեպս, թուրքերը նման պատմություններ հորինում էին հայերին ջարդելու համար:

ՀԱՐՑ. **Գիտե՞ս այնպիսի մի կոմիտեի մասին, որը 1895–ին ժնևից կազմակերպեց ապստամբությունները:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես քահանա եմ: Ես զբաղված եմ իմ եկեղեցով: Ես չգիտեմ:

ՀԱՐՑ. **Ի՞նչ էիր անում բրիտանական հյուպատոսարանում: Ինչո՞ւ անհրաժեշտ համարեցիր մի օտարերկրացու բողոքել քո երկրի մասին:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայերը գալիս էին ինձ մոտ ու բողոքում թուրքերից: Ես բրիտանական հյուպատոսարան գնացի իբրև իրենց թարգմանիչը և մասամբ որպես իմ պարտականությունը՝ չարիքի դեմն առնելու:

ՀԱՐՑ. **Կա՞ այսպիսի մի ընկերակցություն՝ Դաշնակ գաղտնի ընկերակցություն անունով:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, ես լսել եմ այդ մասին:

ՀԱՐՑ. **Դու այդ ընկերակցության անդա՞մ ես:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես բողոքում եմ: Ես երբեք որևէ կուսակցության չեմ միացել, քանի որ քահանա եմ:

ՀԱՐՑ. **Չլինելով հանդերձ այդ ընկերակցության անդամ, որևէ կապ ունե՞ր այդ ընկերակցության որևէ անդամի հետ:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Եկեղեցվո միաբանությունում և համայնքում կային անհատներ, որոնք դաշնակցության անդամներ էին:

ՀԱՐՑ. **Ընդհանուր առմամբ պատերազմի ժամանակ քանի՞ հայ մահացավ Թուրքիայում և Ռուսաստանում:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Միայն Թուրքիայում մոտավորապես մեկ միլիոն:

ՀԱՐՑ. **Դու ասում ես, որ մեկ միլիոն հայեր են սպանվել: Իսկ ընդհանուր առմամբ Թուրքիայում և Ռուսաստանում քանի՞ հայ կար:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Միայն Թուրքիայում կար շուրջ 2 միլիոն հայ:

ՀԱՐՑ. **Դա նշանակում է հայերի կեսը սպանվեց, ճի՞շտ է:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո:

ՀԱՐՑ. **Դու ասացիր, որ մեկ միլիոն հայեր սպանվեցին: Չե՞ս լսել հայերի կողմից թուրքերի սպանված լինելու մասին:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ, երբեք:

ՀԱՐՑ. **Այդ դեպքում ինչո՞ւ թուրքերը, որոնք այդքան երկար տառապել են, պիտի մեկ միլիոն հայ սպանեին:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Թուրքերի նպատակն էր արմատախիլ անել հայերի ազգային զգացումները:

ՀԱՐՑ. **1896–ին հրատարակված Բրիտանական «Կապույտ Գիրքը», թուրքերի դեմ հայերի կողմից կատարված դաժանությունների մասին Վանի**

Բրիտանական հյուպատոսի ներկայացրած տեղեկանքից մեջբերում է հետևյալ տողերը. «Հայկական դաժանությունների նկատմամբ թուրքերի համբերությունը հասել է սահմանին»: Տեղյակ չե՞ս այս զեկուցագրին: Զեկուցագիրը ուղարկվել է հյուպատոս Մայոր Ուիլյամսի կողմից:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես տեղեկություն չունեմ դրա մասին:

ՀԱՐՑ. **Դու ասում ես, թե հայերը ոչինչ չեն արել: Ինչպե՞ս կարող է բրիտանական մի հյուպատոս ուղարկել մի զեկուցագիր, որը ճիշտ հակառակը զեկուցի բրիտանական կառավարությանը: Ի՞նչ ես մտածում այս մասին:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես չգիտեմ: Ես քաղաքական դեմք չեմ և չգիտեմ, թե ինչ է արել հյուպատոսը:

ՀԱՐՑ. **Հյուպատոսը գրել է այն, ինչ տեսել է իր աչքերով և ո՞չ թե իր ստացած տեղեկությունների հիման վրա:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես չգիտեմ:

ՀԱՐՑ. **Դու խոսեցիր «Մուսթաֆա Քեմալ» ռազմական դատարանի և այդ դատարանի կողմից պատժված անձանց մասին: Դու Մուսթաֆա փաշայի ժամանա՞կ երևացիր:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ:

ՀԱՐՑ. **Թեև դու դատարանում չերևացիր, այնուամենայնիվ, իբրև Պատրիարքարանի մի անդամը, Մուսթաֆա Փաշա ռազմական դատարանին որևէ վկայություններ տրամադրեցի՞ր:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ:

ՀԱՐՑ. **Գիտե՞ս, որ ամեն մի ազնիվ, հայրենասեր թուրք անիծում է Մուսթաֆա Փաշայի անունը:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, հայկական թերթերը հաղորդել են, նրանք հայհոյում են Մուսթաֆա Փաշային:

ՀԱՐՑ. **Գիտե՞ս, որ Մուսթաֆա Փաշան փախավ այս երկրից, որովհետև վախենում էր արդարադատությունից:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես մի տեղ կարդացի, որ նա գնացել է Դամասկոս:

ՀԱՐՑ. **Չե՞ս լսել, որ Մուսթաֆա Փաշան բանտարկված է եղել մի քրիստոնյայի մահվան դատապարտելու համար:**

ՊԱՏԱՍԽԱՆ Լսել եմ: Սակայն լսել եմ, որ նա բանտարկվել է ո՛չ թե նրա համար, որ իր կատարածը սխալ էր, այլ որովհետև Ազգային Ազատագրական Բանակի անդամները իր կատարածը համարեցին սխալ:

Պրն. Ռիկատսոն Հաթը ավարտեց իր հարցաքննությունը.

Պաշտպանական կողմի փաստաբանի տված հարցին վկան պատասխանեց հետևյալ կերպ.

-Միություն և Առաջադիմություն Կուսակցության պատգամավորները իմ ներկայությամբ հաստատեցին, որ Սուլթան Համիդի կառավարությունը անարդար վարվեց հայերի հետ, և որ հայերը շատ տանջվեցին այդ կառավարության օրոք:

Ապա դատական ատյանի նախագահը հարցրեց.

ՀԱՐՑ. **Չէ՞ որ այդ ասելուց ինն ամիս հետո Միություն և Առաջադիմություն կուսակցության ղեկավարությունը Ադանայի մեջ 30,000 հայ սպանեց:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո:

Հետո Հայդար Ռիֆատ Բեյի խնդրանքով, դատական ատյանը հարցրեց.

ՀԱՐՑ. Ո՞վ էր վարչապետը:

ՊԱՏԱՍԽԱՆ. Հուսեյն Հիլմի Փաշան:

ՀԱՐՑ. **Հուսեյն Հիլմի Փաշան թերթերում հայտարարություն արե՞ց այն մասին, թե կոտորածների համար հայերն էին պատասխանատու:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, արեց:

ՀԱՐՑ. **Քուշանայում հայկական դպրոց կա՞ր:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Մեկ տարրական դպրոց կար:

ՀԱՐՑ. **Տրապիզոնում և՞ս կար:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Մեկը կար. դա բարձր մակարդակի դպրոցի հաստատություն էր:

ՀԱՐՑ. **Ուսուցման լեզուն հայերե՞նն էր:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո: Այլ լեզուներ ևս սովորեցնում էին:

ՀԱՐՑ. **Ստամբուլում ովքե՞ր էին ավելի հարուստ, հայե՞րը, թե՞ թուրքերը:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Չգիտեմ:

ՀԱՐՑ. **Կարո՞ղ էին հայերը Օսմանյան հողի վրա ազատորեն առևտրով զբաղվել:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Չգիտեմ:

ՀԱՐՑ. **Վկան գիտե՞, որ ութ տարի առաջ Թուրքիայի արտաքին գործոց նախարարը հայ էր:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Գիտեմ. Գաբրիել Նորադունգյան էֆենդին:

ՀԱՐՑ. **Գիտե՞ս, որ Սաքիզլի Օհաննես Փաշան Ֆինանսների նախարարն էր և Փորթաքալ Փաշան՝ Սուլթանի գանձապահը:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Գիտեմ, որ Հակոբ Փաշան Սուլթանի գանձապահն էր:

ՀԱՐՑ. **Գիտե՞ս, որ զինադադարից հետո Հայերը ծառայել են Ֆինանսների ենթաքարտուղարությունում, Ֆինանսների բարեփոխումների հանձնաժողովում, Ֆինանսների հաշվառման գրասենյակում և որ նույնիսկ այսօր, նրանք ծառայում են որպես դատարանների նախագահներ:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Դա հնարավոր է, բայց ես չգիտեմ:

ՀԱՐՑ. **Վկան ասում է, որ իր զավակները ուսուցիչներ էին Հայկական գումարտակներում: Թուրքիայում քրիստոնյաները զինվորական ծառայության չէին կոչվում: Որտե՞ղ է նա ստացել իր զինվորական պատրաստվածությունը:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես երկու զավակ ունեի: Նրանք վիրավորվեցին Սամպանիայում, դասալիք եղան և անցան Ֆրանսիական բանակ: Ապա նրանք որպես կամավորներ միացան Հայկական բանակին:

ՀԱՐՑ. **Այդ ինչպե՞ս է, որ իր զավակը սովորեց զինվորություն անել, լինելով հանդերձ ուսուցիչ հայկական վարչակազմում:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Նախկինում նա աշխատել է որպես հրահանգիչ Բոյ սկաուտների համար: Բանակում նա զինվոր էր:

ՀԱՐՑ. **Թուրքերը հայոց լեզվին, կամ հայկական դպրոցներին չդիպան: Նրանք չարգելեցին հայերենը իբրև դասավանդման լեզու, ինչպե՞ս վարվեցին ռուսաց լեզվի հետ: Նրանք դիպա՞ն պաշտամունքի, կամ կրոնական ազատության այլ բնագավառների:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես չգիտեմ միջամուխ լինելու որևէ դեպքի մասին:

ՀԱՐՑ. **Դու ասացիր, որ Ստամբուլի թուրքերը վատ կարծիք ունեն Մուսթաֆա Փաշայի մասին, որը քուրդ է: Նրա հանդեպ ինչպե՞ս են Անատոլիայի**

թուրքերը:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես չգիտեմ:

ՀԱՐՑ. **Գիտե՞ս, որ Մուսթաֆա Փաշան Դամասկոս գնաց, որպեսզի քրդերին դրդի ապստամբել Օսմանյան պետության դեմ:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես չգիտեմ:

ՎԵՐԱՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

-Ինչքան գիտեմ, հայերը չէին կարող բողոքել թրքական իշխանություններին: Սրբազան Շիշմանյանը, որը բողոքել էր Լորդ Սալիզբերիին, արտաքսվեց թուրքերի կողմից: Հայերը գլխավորապես հույս ունեին Բրիտանական կառավարությունից ստանալու իրենց բողոքների պատասխանները: Հայերը պատկառանքով էին մոտենում Գլադստոնին, որպես իրենց պաշտպանի: Ես լսել եմ, որ Լորդ Սալիզբերիի կառավարությունը հանձնախումբ էր ուղարկել Հայաստան: Թերթերում կարդացել եմ, որ բրիտանական ազգը կարեկցանքով էր մոտենում հայերի դժբախտություններին:

Հայ Պատրիարք Զավենը ինձ ասել է, որ ինքը մի քանի անգամ գնացել է Սուբլիմ Քորտ ընդունելություն խնդրելու համար, սակայն մերժվել է: Հետագայում նա արտաքսվել է: Լսել եմ պատերազմի ժամանակ Հայկական կոտորածներին վերաբերող «Կապույտ Գրքի» մասին, սակայն չեմ կարդացել: Հայկական թերթերում կարդացել եմ Սըր Էդուարդ Գրեյի նախաբանը:

Հայերը իրավունք ունեին իրենք իրենց պաշտպանելու, սակայն նրանք չկարողացան այդ անել հաջողությամբ: Պատրիարքարանի արձանագրությունների մեջ տեսել եմ, որ պատերազմի ժամանակ կոտորվեցին 500 քահանաներ և 60-70-ից ավելի բարձր պաշտոնյաներ: Հայերը երբեք չեն ապստամբել թրքական իշխանության դեմ: 1909-ին, երբ երիտթուրքերը իշխանության եկան, պաշտոնապես հայտարարեցին, որ նախկին իշխանության օրոք հայերը առանց պատճառի կոտորվել են: Հակառակ դրան, 9 ամիս հետո Ադանա քաղաքի մեջ նրանք 30,000 հայերի կոտորեցին:

Այն ժամանակ Հուսեյն Հիլմի փաշան էր վարչապետը: Ես թերթերի մեջ կարդացել եմ Հիլմի Փաշայի հայտարարությունը, որտեղ ասվում էր, թե այդ ջարդերի համար հայերը պատասխանատու չեն: Ես չգիտեմ, թե մուսուլման թուրքերը իրենց կառավարության կողմից ճնշվելու դեպքում օտար հյուպատոսների դիմե՞լ են, թե՞ ոչ: Մեծ Վեզիր Քուչուք Սայիդ փաշան 1895-1896 թվականներին ապաստանեց բրիտանական դեսպանատանը:

ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՎԿԱ

(Սուրեն) Թահմազյանը, տրապիզոնցի մի երիտասարդ, երդում տվեց: Նա ասաց, որ համաշխարհային պատերազմի ժամանակ Տրապիզոնում է եղել: Իր հայրը, Տրապիզոնում հաջողակ մի առևտրական, և եղբայրը տարագրված էին: Հետագայում նա թուրքերից լսել էր, որ հայրը սպանվել էր մինչև Գումուշեյն հասնելը: Եղբայրը արտաքսվել էր Յոզգատ, որտեղ և մահացել էր: Մայրը բնական մահով մահացել էր մինչև տեղահանությունը:

Հետո նա հետևյալ կերպ պատասխանեց պաշտպանական կողմի փաստաբան Խոսրովյան էֆենդիի հարցերին.

ՀԱՐՑ. **Ի՞նչ պատահեց եղբորդ հետ:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Նա, ինչպես և հայրս, սպանվեց:

ՀԱՐՑ. **Քեզ ինչպե՞ս հաջողվեց կենդանի մնալ:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես փախա, որովհետև ապաստան էի գտել Օմեր էֆենդի անունով մի թուրքի մոտ, որը և ինձ դավանափոխ արեց: Ես այդ մարդու հետ մնացի մինչև ռուսական ներխուժումը:

ՀԱՐՑ. **Ընտանիքիցդ բաժանվելուց հետո ամբողջ ժամանակ դու Տրապիզոնո՞ւմ մնացիր:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ռուսական ներխուժման ժամանակ մի հույն իրավաբան ինձ ուզում էր տանել: Սակայն իմ խնամակալ Օմար էֆենդին ինձ թույլ չտվեց գնալ: Փոխարենը, նա ինձ տարավ Օնա՝ Օրդուի մոտ:

ՀԱՐՑ. **Ի՞նչ պատահեց այնտեղ:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես այնտեղից փախա մի 12 տարեկան ընկերոջ հետ և գնացի Օրդու: Ինձ պահում էի թուրքի նման: Մի թուրք նավավարի հետ մենք համաձայնության եկանք, որ նա մեզ Օրդուից Տրապիզոն հասցնի, և Օրդուն թողեցինք ծովով: Ճանապարհին մեզ կանգնեցրեց ռուսական նավատորմը: Ընկերոջս և ինձ տարան ռուսական ռազմանավ: Նավի անունը ես չեմ հիշում: Ռազմանավը մեզ հասցրեց Նովոռոսիյսկ: Երբ ռուսները տեսան, որ հայ եմ, ինձ այդ քաղաքում բաց թողեցին: Այդտեղից ես գնացի Բաքու: Այնտեղ ես եղբայր ունեի: Բաքու հասա 1916-ին:

ՀԱՐՑ. **Բաքվում հայ փախստականներ կայի՞ն:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո:

ՀԱՐՑ. **Հատուկ վայրեր, կամ հաստատություններ կայի՞ն հայ փախստականների համար:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, քաղաքից ոչ հեռու մի ապաստարան կար, որը կոչվում էր Էրմենիքենտ (Հայկական քաղաք):

ՀԱՐՑ. **Ի՞նչ գիտես փախստականների մասին:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Նրանցից շատերը կորցրել էին իրենց ընտանիքները:

ՀԱՐՑ. **Փախստականների մեջ բնիկ տրապիզոնցիներ կայի՞ն:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, կային:

ՀԱՐՑ. **Դատապարտյալին ճանաչո՞ւմ ես:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, ես նրան Տրապիզոնից գիտեմ:

ՀԱՐՑ. **Ի՞նչ է իր անունը, որտեղի՞ց է նրա ընտանիքը:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Նրա անունը Միսաք է, ընտանիքը Տրապիզոնից է:

ՀԱՐՑ. **Դու էրմենիքենտում այս մարդուն հանդիպե՞լ ես:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես նրա շատ մոտիկ ազգականներին տեսա այնտեղ:

ՀԱՐՑ. **Նա մենա՞կ էր:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այնտեղ էին նրա հայրը, մայրը, եղբայրը, քույրը և երկու երեխաները:

ՀԱՐՑ. **Ինչքա՞ն մնացիր Բաքվում:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես այնտեղ մնացի ավելի քան երեք տարի: Այդ քաղաքը թողեցի 1918-ի հոկտեմբերին:

ՀԱՐՑ. **Քո Բաքվում եղած ժամանակ ռուսների և թաթարների միջև կռիվներ գնու՞մ էին:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, 1918-ին կռիվներ էին մղվում: Հայերը չէին մասնակցում ռուսների պաշտպանությանը՝ թաթարների դեմ մղվող կռիվներին: Ընդհակառակը, նրանք պաշտպանում էին թաթարներին:

ՀԱՐՑ. Այս ձևով քանի՞ թաթար փրկվեց:

ՊԱՏԱՍԽԱՆ. Շուրջ 5,000:

Այստեղ Ատյանը հետևյալ հարցը տվեց.

ՀԱՐՑ. Նա որտեղի՞ց գիտի: Ի՞նչ է, հաշվե՞լ է:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այդպես եմ լսել:

ՀԱՐՑ. Փրկված քանի՞ թաթար ես տեսել:

ՊԱՏԱՍԽԱՆ. Մոտավորապես 5,000

ՀԱՐՑ. Դու նրանց հաշվե՞լ ես:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես նրանց տեսել եմ, երբ փողոցով անցնում էին:

Ապա պաշտպան փաստաբանը շարունակեց հարցաքննությունը.

ՀԱՐՑ. Նրանք որտեղի՞ց էին գալիս և ո՞ւր էին գնում:

ՊԱՏԱՍԽԱՆ. Նրանք գալիս էին Մայլով թատրոնից, ուր ապաստան էին գտել:

ՀԱՐՑ. Հայերը պաշտպանեցին այդ թաթարներին այն ժամանակ, երբ նրանք գալի՞ս էին:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո:

ՀԱՐՑ. Նրանք սպանե՞լ են հայերին, երեխաներին և ծերերին:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո:

ՀԱՐՑ. Որտե՞ղ էիր դու կոտորածների ժամանակ:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես մի հրեայի տանն էի:

ՀԱՐՑ. Դու ինչքա՞ն մնացիր այդ տանը:

ՊԱՏԱՍԽԱՆ. Հինգ կամ վեց օր:

ՀԱՐՑ. Քանի՞ օր տևեցին կոտորածները:

ՊԱՏԱՍԽԱՆ. Երեք օր:

ՀԱՐՑ. Եթե կոտորածները տևեցին երեք օր, ինչո՞ւ հրեայի տանը վեց օր մնացիր:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ջիվանշիրի և խան Խոյսկու կողմից ստորագրված մի հայտարարություն ասում էր, որ ամեն մարդ, բացի հայերից, կարող է վերադառնալ աշխատանքի: Ես վախեցած էի և չուզեցի դուրս գալ:

ՀԱՐՑ. Ինչպե՞ս իմացար այդ հայտարարության մասին:

ՊԱՏԱՍԽԱՆ. Դա ինձ բերեց այն հրեա մարդը, որի տանը մնում էի:

ՀԱՐՑ. Ո՞վ է Ջիվանշիրը:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ջիվանշիրը հայատյաց, մի չար մարդ է:

ՀԱՐՑ . Այդ մարդը պաշտոնական դիրք ունե՞ր Ազերի կառավարության մեջ:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, նա Ներքին գործերի նախարարն էր:

ՀԱՐՑ . Գիտե՞ս, որ Թուրքիայում կար մի քաղաքական կուսակցություն, որը կազմակերպում էր հայերի ջարդերը:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, Միություն և Առաջադիմություն կուսակցությունը:

ՀԱՐՑ. Ադրբեջանում նման կուսակցություն կա՞ր:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, Մուսավաթ կուսակցությունը կար:

ՀԱՐՑ. Ովքե՞ր էին այս Մուսավաթ կուսակցության ղեկավարները:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ջիվանշիրը, Խան Խոյսկին, Ագաևը և մի քանի այլ մարդիկ, որոնց անունները չեմ հիշում:

ՀԱՐՑ . Դու ասացիր, որ 1918-ին Բաքվում հայերի սպանդ տեղի ունեցավ: Քանի՞ հայ կոտորվեց:

ՊԱՏԱՍԽԱՆ. 20-ից 25 հազար:

Այստեղ Ատյանը հետևյալ հարցը տվեց.

ՀԱՐՑ. Վկան հաշվե՞լ է նրանց:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այդպես լսել եմ:

Խոսրովյան էֆենդին շարունակեց հարցաքննությունը.

ՀԱՐՑ . Դու ասացիր, որ մի հրեայի տանն էիր: Շենքը քանի՞ հարկ ուներ և ո՞ր հարկի վրա էիր դու ապրում:

ՊԱՏԱՍԽԱՆ. Շենքը չորս հարկ ուներ: Ես ապրում էի ամենավերևի հարկում:

ՀԱՐՑ . Այն փողոցի վրա, որ այդ շենքը գտնվում էր, ջարդեր տեղի ունենո՞ւմ էին:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, ես պատուհանից տեսնում էի:

ՀԱՐՑ. Ինչպե՞ս իմացար, որ սպանվող մարդիկ հայեր էին:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես տեսնում էի, որ սպանվող մարդիկ գլխարկներ ունեին: Միայն հայերն են գլխարկ դնում:

ՀԱՐՑ. Ջարդարարները թաթարնե՞ր, թե՞ օսման թուրքեր էին:

ՊԱՏԱՍԽԱՆ. Խառն էին:

ՀԱՐՑ. Մեծամասնությունը ովքե՞ր էին:

ՊԱՏԱՍԽԱՆ. Թաթարներն էին:

ՀԱՐՑ. Վեց օր հետո Արմենիքե՞նտ գնացիր:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո:

ՀԱՐՑ. Տեսա՞ր, կամ լսեցի՞ր, որ քո ծանոթներից մեկին սպանած լինեին Տրապիզոնում:

ՊԱՏԱՍԽԱՆ. Յոթ հոգի, որոնց ճանաչում էի, սպանված էին:

Այստեղ Ատյանը հետևյալ հարցը տվեց.

ՀԱՐՑ. Դու ի՞նչ տեսար:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես նրանց չտեսա վիրավորված *(ինչպես որ հրատարակված է):*

Խոսրովյան էֆենդին շարունակեց հարցաքննությունը.

ՀԱՐՑ. Լսե՞լ ես, որ Թոռլաքյանի ազգուտակից սպանված լինեն:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո:

ՀԱՐՑ. Ի՞նչ ես լսել:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես լսել եմ, որ նրանց բոլորին սպանել են:

Ատյանը հետևյալ հարցը տվեց.

ՀԱՐՑ. Ումի՞ց լսեցիր դա:
ՊԱՏԱՍԽԱՆ. Թոռլաքյանից:

Խոսրովյան էֆենդին շարունակեց հարցաքննությունը.

ՀԱՐՑ. Բաքվում եղածդ ժամանակ պաշտպանյալին տեսա՞ր:
ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, ես նրան տեսա կոտորածներից առաջ:
ՀԱՐՑ. Նա քեզ ի՞նչ ասաց:
ՊԱՏԱՍԽԱՆ. Նա ասաց, որ իր ընտանիքի բոլոր անդամները, բացի իրենից, սպանվել են: Ասաց, որ ինքը երեք-չորս անգամ վիրավորվել է, և որ մի փամփուշտ կա խրված-մնացած սրունքի մեջ:
ՀԱՐՑ. Պաշտպանյալին ո՞րտեղ տեսար, և ի՞նչ վիճակում էր նա:
ՊԱՏԱՍԽԱՆ. Նրան տեսա փողոցում: Նա քայքայված էր և ուժասպառ:
ՀԱՐՑ. Նա հիվա՞նդ էր:
ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, հիվանդ էր:
ՀԱՐՑ. Դու ասացիր, որ հայրդ Տրապիզոնում հայտնի վաճառական էր: Ի՞նչ եղավ նրա հարստությունը:
ՊԱՏԱՍԽԱՆ. Բոլորը թալանվեց:
ՀԱՐՑ. Քո հոր հարստությունը ինչքա՞ն կարժենար:
ՊԱՏԱՍԽԱՆ. Շուրջ 100,000 ոսկե փաունդ:

Ատյանը հետևյալ հարցը տվեց.

ՀԱՐՑ. Օսմանյան փաո՞ւնդ, թե՞ բրիտանական փաունդ:
ՊԱՏԱՍԽԱՆ. Օսմանյան փաունդ:

Պաշտպան փաստաբանը շարունակեց հարցաքննությունը.

ՀԱՐՑ. Նշանակում է, քո հայրը Տրապիզոնի ամենահարուստ վաճառակա՞նն էր:
ՊԱՏԱՍԽԱՆ. Այո:
ՀԱՐՑ. Հորդ և եղբորդ հիշատակը սրտումդ պահե՞լ ես:
ՊԱՏԱՍԽԱՆ. Ես երբեք չեմ կարող մոռանալ նրանց:
ՀԱՐՑ. Նրանց սպանողներին ներո՞ւմ ես:
ՊԱՏԱՍԽԱՆ. Ես նրանց թողնում եմ Աստծո դատաստանին:
ՀԱՐՑ. Հորիցդ և եղբորիցդ բացի, ընտանիքիդ այլ անդամներ տարագրված եղե՞լ են:
ՊԱՏԱՍԽԱՆ. Մեծ մայրս, հորեղբայրս, հորաքույրս և զարմիկս, բոլորը տարագրվել են: Միայն նրանց փոքր զավակներին էին թողել:
ՀԱՐՑ. Նրանք վերադարձա՞ն:
ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ:
ՀԱՐՑ. Մեծ մայրդ քանի՞ տարեկան էր:
ՊԱՏԱՍԽԱՆ. 65-ից 70 տարեկան:
ՀԱՐՑ. Մեծ մայրդ արտաքսված էր ինչ-որ զինվորական անհրաժեշտությա՞ն պատճառով:
ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ:
ՀԱՐՑ. Ի՞նչ պատահեց Տրապիզոնի հայերի խանութների և ունեցվածքի հետ:

ՊԱՏԱՍԽԱՆ. Տները և խանութները թալանվեցին:
ՀԱՐՑ. Պատերազմից առաջ Տրապիզոնում ինչքա՞ն հայ էր ապրում:
ՊԱՏԱՍԽԱՆ. 10-ից 15 հազար:
ՀԱՐՑ. Կա՞ մեկը, որին նախկինում դու գիտեիր, որի հետ ներկայումս չես հաղորդակցվում, բայց որը ներկայումս դեռ Տրապիզոնում է:
ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ, այժմ ես Տրապիզոնում ոչ ոք չունեմ:
ՀԱՐՑ. Դու որևէ այլ դատարանում վկայություն տվե՞լ ես կապված Տրապիզոնի դեպքերի հետ:
ՊԱՏԱՍԽԱՆ. Այո:
ՀԱՐՑ. Որտե՞ղ:
ՊԱՏԱՍԽԱՆ. Այստեղ. Ստամբուլում: Ես վկայություն եմ տվել Ավնի Բեյի դեմ: Նա մեղադրվում էր Տրապիզոնի հայերի ջարդերը կազմակերպելու մեջ:
ՀԱՐՑ. Ի՞նչ պատահեց Ավնի Բեյի հետ այն բանից հետո, երբ դու և ուրիշներ իր դեմ վկայություններ տվեցիք:
ՊԱՏԱՍԽԱՆ. Նա պահվեց կալանքի տակ, բայց ազատ արձակվեց, երբ քուրդ Մուսթաֆա Փաշան հրաժարական տվեց:
ՀԱՐՑ. Ի՞նչ գիտես Ավնի Բեյի մասին:
ՊԱՏԱՍԽԱՆ. Նա առաջ մեզ մոտ գալիս էր տեսակցության: Տեղահանությունից հետո նա մի օր եկավ մեր տուն և մեզ խաբելով . . .

Այստեղ Ատյանը առաջարկեց դադարեցնել Ավնի Բեյի քննարկումը, որովհետև շատ ժամանակ պիտի զբաղեցներ: Պաշտպանական կողմը, ընդհակառակը, առարկեց, որ իրադրությունը լավ հասկանալու համար այդ մանրամասնությունները անհրաժեշտ են:

Որոշ ժամանակ հարցը քննարկելուց հետո, ատյանը որոշեց, որ Ավնի Բեյի խնդիրը կարող է բարձրացվել դատի վերջում:

Ապա դատախազ Ռիկատսոն Հաթը սկսեց մատնանշել վկայի ցուցմունքների մեջ առկա հակասությունները, տալով սուր և մանրակրկիտ հարցեր.

ՀԱՐՑ. Վկան ասաց, որ 1916-ին ինքը Բաքվում էր: Նա ե՞րբ վերադարձավ այնտեղից:
ՊԱՏԱՍԽԱՆ.1918-ին:
ՀԱՐՑ. Նա Ջիվանշիրին ճանաչո՞ւմ էր:
ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ:
ՀԱՐՑ. Ջիվանշիրի նկատմամբ որևէ չարակամություն տածո՞ւմ ես:
ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ:
ՀԱՐՑ. Ինչպե՞ս կարող է նա հայեր սպանած լինելու հարցով Ջիվանշիրի դեմ հայց ներկայացնել, եթե նրան չի ճանաչել:
ՊԱՏԱՍԽԱՆ. Ես լսել եմ, որ Ջիվանշիրը պատասխանատու է ջարդերի համար և ես այն եզրակացրի հայտարարությունից:
ՀԱՐՑ. Ինչպե՞ս է նա ձեռք բերել հայտարարությունը. դրանք պատերին փակցվա՞ծ էին:
ՊԱՏԱՍԽԱՆ. Հայտարարությունը բերեց այն հրեա մարդը, որի տանը ես մնում էի:
ՀԱՐՑ. Ուրեմն հայտարարությունը կարդալու և հասկանալու համար նա

բավարար ռուսերեն գիտե՞ր:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես բավարար գիտեմ:

ՀԱՐՑ. **Ի՞նչ է նա հասկանում «բավարար» ասելով:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ռուսերեն շատ լավ չգիտեմ:

ՀԱՐՑ. **Եթե նա չգիտի, ինչպե՞ս կարող է այս դատարանում հայցել, որ հայտարարությունը հայերի դեմ սպառնալիքների մասին տեղեկություն էր պարունակում: Թող կրկնի ճիշտ այն բառերը, որ կարդացել է:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես թրքերեն տեքստը չեմ կարդացել, որովհետև շատ քիչ թրքերեն գիտեմ: Ես համալսարանի շրջանավարտի պես ռուսերեն չեմ խոսում, բայց հասկանում եմ:

ՀԱՐՑ. **Ռուսերենի այդքան քիչ իմացությամբ ինչպե՞ս կարող է նա այս դատարանում ասել, որ հայտարարությունը պարունակում էր «այս կարգի նախադասություններ»: Հայերի մասին ի՞նչ նախադասություններ էին օգտագործված հայտարարության մեջ: Թող նա կրկնի այդ նախադասությունները ռուսերենով:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայտարարությունում ասվում էր՝ «Արմենայազի Բեզաքոֆ»:

ՀԱՐՑ. **Կոտորածների ժամանակ Ջիվանշիրը Բաքվո՞ւմ էր, թե՞ ոչ:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Չգիտեմ:

ՀԱՐՑ. **Նա չի՞ լսել, նա այնտեղ է, թե ոչ. նկատի ունենալով, որ նրան պատասխանատու է համարում:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես այդ մասին իմանալու միջոցները չունեի:

ՀԱՐՑ. **Նշանակում է, նա միջոցներ չունե՞ր իմանալու, Ջիվանշիրը Բաքվո՞ւմ է, թե՞ ոչ: Ապա ի՞նչ միջոցներով է նա իմացել որ 15,000 հայեր են սպանվել:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Հրեա մարդու տունը թողնելուց հետո, այդ մասին իմանալը հեշտ էր:

ՀԱՐՑ. **Հրեա մարդու տանը եղած ժամանակ քանի՞ հայերի սպանությանն է ականատես եղել:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես ականատես եմ եղել շատ հայերի սպանությանը:

ՀԱՐՑ. **Քանի՞ հայերի սպանությանն է ականատես եղել իր սեփական աչքերով:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես իմ սեփական աչքերով ականատես եմ եղել քսան հայերի սպանությանը:

ՀԱՐՑ. **Ի՞նչ էին անում այդ մարդիկ փողոցներում կոտորածների ժամանակ:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոմանք թաքարներից էին փախչում, ոմանք սպանվում էին:

ՀԱՐՑ. **Ովքե՞ր էին սպանողները: Մարդասպաններին պետական ծառայողնե՞րն էին առաջնորդում:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Խառն էին, զինվորներ և քաղաքացիներ:

ՀԱՐՑ. **Քանի՞ թաքար կար այնտեղ:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Մի քանի հարյուր:

ՀԱՐՑ. **Ուրեմն, այս մի քանի հարյուր թաքարները 20 հա՞յ սպանեցին:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Նրանք սպանում էին ումը որ հանդիպում էին:

ՀԱՐՑ. **Մարդասպանների մեջ նա սպայի համազգեստով որևէ մեկին տեսե՞լ է:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Շատ քիչ:

ՀԱՐՑ. **Ո՞ր պետության համազգեստն է տեսել:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Թաքարական բանակի:

ՀԱՐՑ. **Վկան լսե՞լ է, որ հայերը Բաքվում ապրող թուրքերի են սպանել:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ:

ՀԱՐՑ. **Նա չի՞ լսել, որ 1918–ի մարտին, կամ ուրիշ որևէ ժամանակ թուրքեր են սպանվել:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես չեմ հիշում:

ՀԱՐՑ. **Ի՞նչ է նշանակում «չեմ հիշում»: Ինչպե՞ս է նա հիշում հայերի ջարդերը, իսկ չի հիշում թուրքերինը:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Չգիտեմ:

ՀԱՐՑ. **Կոտորածների ժամանակ Բաքուն ո՞վ էր կառավարում: Զինվորա-կա՞ն, թե՞ քաղաքացիական կառավարություն էր:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես չգիտեմ:

ՀԱՐՑ. **Ո՞վ էր գլխավորում այդ կառավարությունը:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես շատ տեղյակ չեմ կառավարության կազմակերպման հարցերում:

ՀԱՐՑ. **Ես չեմ խոսում կառավարության մասին: Հարցնում եմ, թե ո՞վ էր բարձրագույն կառավարական պաշտոնյան:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ջիվանշիր, խան Խոյսկի, Ագաև:

ՀԱՐՑ. **Դրանից հետո բանակը չեկա՞վ:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, եկավ:

ՀԱՐՑ. **Ո՞վ էր գլխավորում բանակը:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Նուրի փաշան:

ՀԱՐՑ. **Նուրի փաշա՞ն, թե՞ Ջիվանշիրը:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Կարծում եմ Նուրի փաշան էր:

ՀԱՐՑ. **Մի քիչ առաջ նա ասաց, որ բարձրագույն կառավարական պաշտոնյան Ջիվանշիրն էր: Այժմ նա իրեն ուղղելով ասում է, որ Նուրի փաշան էր: Ես ասացի կոտորածներից հետո: Նա գիտի՞ որևէ հայտարարության մասին, որը Նուրի փաշան ուղղած լինի քաղաքի բնակիչներին:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Նուրի փաշայի հայտարարությունը ասում էր, որ ամեն ոք պետք է գնա աշխատանքի: Արդարև, հինգ կամ վեց օր հետո ոչ ոք չդիպավ հայերին: Ամեն մարդ հետ վերադարձավ աշխատանքի: Ես այդ հայտարարությունը չեմ տեսել: Ես միայն լսել եմ դրա մասին:

ՀԱՐՑ. **Այսպիսով, վկան չգիտի, թե ինչ կառավարություն էր Բաքվում: Հենց հիմա ասաց, որ գիտեր: Հիմա, վկան որևէ բան լսե՞լ է Հայ հեղափոխականների մասին:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո: *(բազմաթիվ հակասական պատասխաններից և շատ անվճռականությունից հետո):*

ՀԱՐՑ. **Նա որևէ բան չի՞ լսել Դաշնակցություն միության մասին:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, լսել եմ:

ՀԱՐՑ. **Նա այդ միությանը չի՞ միացել:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ:

ՀԱՐՑ. **Ինչո՞ւ համար Տրապիզոնի հայերը տեղաշարժ արվեցին դեպի երկրի խորքերի բնակավայրերը: Ի՞նչը կարող էր լինել դրա պատճառ:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայերը տեղահանվեցին, հայերի ունեցվածքը բռնագրավվեց և կառավարությունը ծախսերը չփոխհատուցեց:

(Այս պահին Բարսամյան էֆենդին միջամտեց: Նա զգուշացրեց, որ դատարանի թարգմանիչը վկային հայերենով տրված հարցերը պատշաճ ձևով չի թարգմանում անգլերեն: Նա հայտարարեց, որ վկան չէր ուզում ասել, որ Տրապիզոնում հայերի ունեցվածքը բռնագրավվեց կառավարության կողմից, այլ ասաց, որ թալանվեց:

Նա ավելացրեց, որ Թուրքիայում ուրիշի սեփականության տիրանալը թալանել և բռնագրավել է համարվում: (Վկային) ասվեց, որ ավելի պատշաճ կլիներ ասել կառավարության կողմից «բռնագրավված», փոխանակ «թալանվածի») Ապա ատյանը շարունակեց:

ՀԱՐՑ. Տրապիզոնում ջարդեր տեղի ունեցա՞ն:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ:

ՀԱՐՑ. Եթե ժողովուրդը տեղահանվելուց հետո սպանվեց, ինչո՞ւ կառավարությունը նրանց չսպանեց հենց Տրապիզոնում:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես չգիտեմ: Հավանաբար կառավարությունը մտածեց, որ այդպես ավելի հարմար կլինի:

Պաշտպան փաստաբան մըսյո Միզզիի հարցերին վկան պատասխանեց հետևյալ կերպ.

ՀԱՐՑ. Ո՞ր իշխանություններն էին պատասխանատու Երկրորդ համաշխարհային պատերազմի համար, զինվորակա՞ն, թե՞ քաղաքացիական:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես չգիտեմ զինվորակա՞ն, թե՞ քաղաքացիական իշխանություններն էին պատասխանատու պատերազմի համար: Ես գիտեմ, որ Թալեաթ փաշան էր պատասխանատու Թուրքիայի հայերի կոտորածների համար:

Այս պահին դատախազ Ռիկատսոն Հաթը առարկեց, ասելով, որ տվյալ հարցը գլխավոր նյութից դուրս է, բայց ատյանը թույլ տվեց, որ հարցերի շարքը շարունակվի.

ՊԱՏԱՍԽԱՆ. Կարծեմ նա վարչապետն էր:

ՀԱՐՑ. Տեղյա՞կ ես, որ Ստամբուլում ռազմական վիճակ էր հայտարարված:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ:

ՀԱՐՑ. Գիտեի՞ր, որ պատերազմի ժամանակ Թալեաթ փաշան ռազմական վիճակ հայտարարեց՝ հակառակ զինվորականների ցանկության:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ:

ՀԱՐՑ. Ե՞րբ հայտարարվեց ռազմական վիճակ:

ՊԱՏԱՍԽԱՆ. Գաղափար չունեմ:

ՀԱՐՑ. Հայերը կարո՞ղ են Թալեաթ փաշայի գործողությունները ներել:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ:

ՀԱՐՑ. Ռազմական վիճակի ժամանակ Թալեաթ փաշան զինվորական վարչության հրամաններին ենթակա՞ էր:

ՊԱՏԱՍԽԱՆ.Ինչքան ես գիտեմ, Թալեաթ փաշան վարչապետն էր: Կառավարության մեջ նրա ունեցած այլ դիրքերի մասին ես չգիտեմ:

Հետո դատարանը Ջիվանշիրի ընտանիքի փաստաբանի խնդրանքով հարցաքննեց վկային.

ՀԱՐՑ. Պատերազմ հայտարարվելուց հետո վկան պաշտպանյալին հանդիպե՞լ է որևէ տեղ, բացի Բաքվից:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ:

ՀԱՐՑ. Վկան պաշտպանյալի հետ Բաքվում հանդիպումներ ունեցե՞լ է:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես նրան միայն մեկ անգամ եմ տեսել:

ՀԱՐՑ. Պաշտպանյալի երկու զավակները քանի՞ տարեկան էին, երբ նրանք Տրապիզոնում էին:

ՊԱՏԱՍԽԱՆ. Տրապիզոնում ես նրա զավակներին չեմ տեսել: Այն ժամանակ նրանք շատ փոքր եղած պիտի լինեին:

ՀԱՐՑ. Մինչև ոճիրը, պաշտպանյալը Ստամբուլում որտե՞ղ էր ապրում: Վկան նրան որտե՞ղ տեսավ:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես չգիտեմ: Ես նրան Ստամբուլում երբևիցե չեմ հանդիպել:

ՀԱՐՑ. Ոճիրից առաջ հանդիպե՞լ է:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես երբեք չեմ հանդիպել նրան:

ՀԱՐՑ. Միություն և Առաջադիմություն կուսակցության և Մուսավաթ կուսակցության մասին վկան արեց մի քանի նկատառումներ: Կարելի՞ է եզրակացնել, որ նա կուսակցական գործերի մեջ է: Վկան երբևիցե որևէ կուսակցության անդամ եղե՞լ է:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես որևէ կուսակցության հետ չեմ եղել:

ՀԱՐՑ. Ո՞րն է նրա ներկա զբաղմունքը:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես աշխատում եմ Օ Տիգր խանութում, 38 Սուլթանհամամ հասցեում:

ՀԱՐՑ. Վկան ինչո՞ւ գնաց էրմենիքենտ:

ՊԱՏԱՍԽԱՆ. Երբ Ռուսաստան էի գնացել, ես շատ վատ վիճակում էի: Ֆիզիկապես և հոգեպես շատ խռովված էի: Ժամերով աննպատակ քայլում էի սենյակումս: Իմ հորաքրոջ ամուսինը մշտապես խորհուրդ էր տալիս ինձ դուրս գալ: Այդպես է, որ ես դուրս եկա և հաղորդակցություն հաստատեցի հայերի հետ:

ՀԱՐՑ. 1918–ի մարտին հայերը վերահսկո՞ւմ էին Բաքուն: Բոլշևիկներից ավելի ուժե՞ղ էին:

ՊԱՏԱՍԽԱՆ. Նրանք բոլշևիկներից ավելի թույլ էին:

ՀԱՐՑ. Այդ դեպքում ինչպե՞ս կարող էին հայերը բոլշևիկների կողմից գրավված մի թատրոնի մեջ պաշտպանել այդ հազարավոր թուրքերին:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես չգիտեմ, թե նրանց ինչպես պաշտպանեցին: Ես միայն տեսա նրանց փողոցում քայլելիս, հայ զինվորներով պաշտպանված:

ՀԱՐՑ. Հայաստանի և Բաքվի միջև ադրբեջանական մի ընդարձակ տարածք կա: Այն Հայ զինվորները, որոնց տեսար, թուրքահայե՞ր էին, ռուսահայե՞ր էին, Հայաստանի՞ց էին, թե՞ բոլշևիկ հայեր էին:

ՊԱՏԱՍԽԱՆ. Նրանք ռուսահայեր էին բոլշևիկյան հրամանատարության ներքո: (*վկան ճշգրտեց իր* ցուցմունքը): Նրանք հայեր էին ռուսական բանակից, բայց ես վստահ չեմ, որովհետև նրանք բոլշևիկ հրամանատարության ենթակայության տակ էին:

ՀԱՐՑ. Հայերը 1918-ի ո՞ր ամսում սպանվեցին թուրքերի կողմից:

ՊԱՏԱՍԽԱՆ. Դա սեպտեմբերին էր:

ՀԱՐՑ. Այսօր ամսի քանի՞սն է:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այսօր օգոստոսի 26-ն է *(տատանողական):*

ՀԱՐՑ. Քանի՞ օր կտևի Կասպյան ծովից գնացքով Բաքու գնալը:

ՊԱՏԱՍԽԱՆ. Կարիք չկա գնացք նստել: Բաքուն նավահանգիստ է Կասպյան ծովի վրա:

ՀԱՐՑ. ***(Ըստ վկայի)*** **հրապարակված էր մի հայտարարություն, որում ասված էր, որ հայերից բացի ամեն ոք պետք է վերադառնա իր նորմալ գործունեությանը: Նա ասաց, որ Ջիվանշիրն է գրել այդ հայտարարությունը: Վկան չէ՞ր վախենում փողոց դուրս գալ մի այնպիսի ժամանակ, երբ հայտարարությամբ առաջացած վախը դեռ շարունակվում էր: Նկատի ունենալով, որ կոտորածները շարունակվեցին երեք օր, վկան չէ՞ր վախենում փողոց դուրս գալ հինգերորդ օրը, այսինքն՝ մի ժամանակ, երբ դեռ հայտնի չէր, թե կոտորածները վե՞րջ են գտել, թե՞ ոչ: Սա խելքի մո՞տ բան է: Նա ասում է, որ հայտարարությունը ենթադրում էր, որ հայերի կյանքը վտանգի տակ է:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ահա թե ինչպես դուրս եկա ես: Նախ ես լսեցի, որ հայերը փողոց կարող են դուրս գալ: Այդ օրը ես դուրս եկա վարանելով: Երբ ես տեսա, որ վտանգ չկա, ավելի ուշ դուրս եկա ավելի վստահ:

ՀԱՐՑ. **Եթե այդպես է, հայտարարության մեջ «բացի հայերից» արտահայտությունը որևէ նշանակություն ունի՞:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այդ կապակցությամբ ես անկարող եմ որևէ բան ասել:

ՀԱՐՑ. **Վկան ասաց, որ կոտորածների ժամանակ սպանվողները հայեր էին, ելնելով նրանց գլխարկներից: Կա՞ր որևէ հրաման, որն արգելեր հույներին, ռուսներին, հրեաներին և եվրոպացիներին կրելու այդ նույն գլխարկներից:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Որևէ հրաման չկար, որը միայն հայերի համար սահմանափակեր այդ գլխարկների օգտագործումը: Քրիստոնեական համայնքի անդամները սովորաբար գլխարկ են դնում: Ես հետո իմացա, որ գլխարկներ կրող սպանվածները հայեր էին: Հույն, կամ այլ համայնքներից որևէ մեկը չբողոքեց, թե իր հարազատներից որևէ մեկը սպանվել է:

ՀԱՐՑ. **Ինչքան գիտեմ, Բաքվի հայերը մորթե փափախ էին կրում և ոչ թե գլխարկ:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Բաքվի հայերը կրում էին եվրոպական ոճի գլխարկներ: Միայն փոքրաթիվ երիտասարդներ էին, որ սև մորթե գլխարկներ էին հագնում որոշ առիթներով:

ՀԱՐՑ. **Էրմենիքենդում հայ կենդանի մնա՞ց:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Շատ հավանական է, որ ոմանք փախան:

ՀԱՐՑ. **Նա վստա՞հ է:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, դա հնարավոր է:

ՀԱՐՑ. **Մարդկանց կոտորելը նողկալի գործողություն է: Թուրքերը ինչո՞ւ պետք է կոտորեին հայերին և չդիպչեին տեղի հրեաներին, հույներին և ռուսներին:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Քանի որ ես քաղաքագետ չեմ, պատճառը չգիտեմ: Ինչ որ գիտեմ հետևյալն է. հայեր կոտորվեցին ինչպես այդ դեպքերից առաջ, այնպես էլ հետո:

ՀԱՐՑ. **Նա զինադադարից հետո Տրապիզոն գնացե՞լ է:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ, պարոն:

ՀԱՐՑ. **Երեկվա իր ցուցմունքի մեջ վկան ասաց, որ «Տրապիզոնի հետ ոչ մի կապ չունի» և որ «այնտեղ մնացած բարեկամներ չունի»: Նա դատավորների առաջ երդվել է, որ ճշմարտությունը պիտի ասի: Եթե նա զինադադարից հետո Տրապիզոն չի գնացել, *(իր երեկվա ցուցմունքի մեջ նա նաև ասել էր, որ ոչ մի Տրապիզոնցի հայ չի վերադարձել)* ինչպե՞ս կարող է պատահել, որ զինադադարից հետո Տրապիզոն վերադարձած չլինելով հանդերձ, նա գիտի, որ ոչ մեկ հայ չի վերադարձել Տրապիզոն:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Տրապիզոնը թողնելուց հետո ես երբեք չեմ վերադարձել այնտեղ: Ավելի ուշ իմ հորաքրոջ ամուսինը վերադարձավ: Նա ինձ ասաց, որ ոչ մի Տրապիզոնցի չի վերադարձել: Այդ մասին ես իմացել եմ նաև այլ տրապիզոնցիներից:

ՀԱՐՑ. **Այլ կերպ ասած, իր ցուցմունքը ասեկոսե է: Իր հորաքրոջ ամուսինը տեղահանված չի՞ եղել:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ, որովհետև տեղահանումների ժամանակ նա Ռուսաստանում էր:

ՀԱՐՑ. **Վկան ասաց, որ նա կարդացել է հայտարարության ռուսերեն տարբերակը: Ես այստեղ մի շատ պարզ գիրք ունեմ, գրված ռուսերեն և թրքերեն լեզուներով: Մենք Ջիվանշիրի փաստաբաններն ենք: Մեր և դատարանի մտքի հանգստության համար ես խնդրում եմ, որ դատարանը թույլ տա վկան կարդա մի քանի տող այս գրքից:**

Որոշ քննարկումից հետո, ատյանը նախագահողն ասաց.

-Ես չեմ ստիպում, որ վկան կարդա այս գիրքը, սակայն պիտի առաջարկեմ, որ կարդա:

Այս պահին պաշտպան փաստաբան Միզգի էֆենդին խնդրեց առաջարկել վկային տալ մի քանի հարցեր ռուսերենով, մինչև Հայդար Ռիֆատ բեյի առաջարկությունը ընդունելը:

Գիրքը տվին վկային: Նա (մի քանի տող) կարդաց և թարգմանեց հայերենի, որն իր հերթին, դատավորների համար անգլերենի թարգմանվեց դատարանի թարգմանչի կողմից:

(Ենթադրաբար, Հայդար Ռիֆատ բեյը շարունակել է հարցաքննությունը)

ՀԱՐՑ. **Հայերը տեղահանումների ժամանակ, և բացի տեղահանումից, որը ճիշտ կամ սխալ հրամայված էր պատերազմի ընթացքում, այլ հարձակումների ենթարկվեցի՞ն: Ես նկատի ունեմ եկեղեցիները, ունեցվածքը, կյանքը կամ պատիվը:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ինչպես ասացի, տեղահանումների ժամանակ 14 տարեկան էի: Դեռ մինչև տեղահանումները թուրք թափառող երեխաների հանդիպելիս ես միշտ վախենում և փախչում էի նրանցից:

Այս պահին դատարանը որոշեց, որ վկան պարտավոր չէ պատասխանել նման հարցերի, քանի որ տեղահանումների ժամանակ շատ երիտասարդ է եղել: Ի պատասխան այս որոշման, Հայդար Ռիֆատ բեյը ատյանին խնդրեց, որ պաշտպան փաստաբաններին հնարավորություն տրվի, որպեսզի նրանք վերածևակերպեն իրենց այն հարցերը, որոնք վերաբերում էին թե արդյո՞ք՝ «Ագաևը, Ջիվանշիրը և խան Խոյսկին Մուսավաթ կուսակցության ղեկավարներն էին», արդյո՞ք «Թուրքերը 1918–ի սեպտեմբերին 30,000 հայեր կոտորեցին», «ովքե՞ր էին Մուսավաթ կուսակցության ղեկավարները», «1918 –ի սեպտեմբերին Բաքվում կոտորածներ տեղի ունեցե՞լ են», «ո՞վ ու՞մ կոտորեց և քանի՞ մարդ զոհվեց»: Ատյանը համաձայնություն տվեց այս առաջարկին:

Ատյանը վկային հարցեր ուղղեց.

ՀԱՐՑ. **Ավնի բեյի դատավարությանը դու ներկա՞ էիր:**
ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, ներկա էի և վկայություն տվեցի:
ՀԱՐՑ. **Ովքե՞ր էին Ավնի բեյի զոհերը:**
ՊԱՏԱՍԽԱՆ. Հայերը:
ՀԱՐՑ. **Քանի՞ հոգի ցուցմունք տվեց իբրև վկա:**
ՊԱՏԱՍԽԱՆ. Երեք կամ չորս հոգի վկայություն տվեցին:
ՀԱՐՑ. **Ինչպիսի՞ն էր դատարանի վճիռը:**
ՊԱՏԱՍԽԱՆ. Ես չգիտեմ, թե դատարանը ինչ վճիռ կայացրեց: Սակայն ես գիտեմ, որ Ավնի բեյը բանտարկվեց մեղավոր և անմեղ քուրդ Մուսթաֆա փաշայի ժամկետով *(բերվում է այնպես, ինչպես հրատարակված է եղել)*: Ըստ տեղեկությունների, նա հետագայում ազատ է արձակվել:
ՀԱՐՑ. **Նա դատից հետո բանտարկվե՞լ է:**
ՊԱՏԱՍԽԱՆ. Այո:
ՀԱՐՑ. **Ի՞նչ ժամկետով:**
ՊԱՏԱՍԽԱՆ. Ես չգիտեմ:
ՀԱՐՑ. **Ինչո՞ւ ազատ արձակեցին Ավնի բեյին:**
ՊԱՏԱՍԽԱՆ. Ես չգիտեմ:
Այս պահին Թահմազյանի ցուցմունքը բավարար համարվեց ու նա դատարանի դահլիճից դուրս առաջնորդվեց:

ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՎԿԱ

Բորիս Բայկովն ասաց, որ ծնվել է Դոնի նահանգի Ռոստով քաղաքում, որ նա դատարանի փաստաբան է, 50 տարեկան, որ պատերազմի ժամանակ Կովկասում Ռուսական Ազգային Կոմիտեի նախագահն է եղել, Կովկասում ապրել է 30 տարի, որ վատթարացող պայմանների պատճառով Բաքուն թողել է երկու տարի առաջ, և որ ազերի կառավարությունը բռնագրավել է իր ունեցվածքը:

Նրան հարցաքննեց պաշտպան փաստաբան Մըսյո Միզգին.

ՀԱՐՑ. **1918-ի սեպտեմբերին դու Բաքվո՞ւմ էիր:**
ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, այդ ժամանակ ես Բաքվում էի:
ՀԱՐՑ. **Այնտեղ Մուսավաթ կոչվող կուսակցություն կա՞ր:**
ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, կար:
ՀԱՐՑ. **Ովքե՞ր էին այդ կուսակցության ղեկավարները և ո՞րն էր դրա նպատակը:**
ՊԱՏԱՍԽԱՆ. Կուսակցության ղեկավարը Ռազուլզադե անունով մի մարդ էր: Մուսավաթ կուսակցությունը հետևում էր Միություն և Առաջադիմություն կուսակցության քաղաքական գաղափարախոսությանը: Պառլամենտի մեջ ևս որոշում էր կայացվել այդ քաղաքականությանը հետևելու մասին: Այդ կուսակցության բարձրագույն պաշտոնյաներն էին Հասան Աղաչինսկի Ագայևը, Բիհբուդ Խան Ջիվանշիրը և Ալի Մերդան բեյ Թոփչուբաշովը:
ՀԱՐՑ. **Ջիվանշիրը Ներքին գործո՞ց, թե՞ Հասարակական աշխատանքների նախարարն էր:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես չգիտեմ: Ես միայն կարող եմ ասել, որ թրքական գրավյալ վիճակում Ջիվանշիրը Ներքին գործոց նախարարն էր: Ավելի ուշ նա ծառայեց նաև իբրև Հասարակական աշխատանքների նախարար:
ՀԱՐՑ. **Լսե՞լ ես, որ 1918–ի սեպտեմբերին որևէ մեկը սպանված լինի Բաքվում:**
ՊԱՏԱՍԽԱՆ. Կոտորածների վտանգը կար: Բայց այն ընդգրկում էր բոլոր *էթնիկ* տարրերը: Ճիշտ ծմռանից առաջ, Մարտին *(ամիսը նշված է, ինչպես հրատարակության մեջ)* հայերի կոտորած տեղի ունեցավ: Այդ կոտորածներից հետո հայ մտավորականները հսկողության տակ էին:
ՀԱՐՑ. **Քանի՞ հայ սպանվեց:**
ՊԱՏԱՍԽԱՆ. Ես թիվ չէի ասի: Կառավարական վիճակագրություն է պետք գնահատական տալու համար: Այսուհանդերձ, իմ փեսան այդ տարածքի Օգնության կոմիտեի նախագահն էր: Նրանից իմացել եմ, որ 18,000 հայեր են սպանվել:
ՀԱՐՑ. **Լսե՞լ ես որևէ բան, որ թելադրեր, թե Ջիվանշիրն էր պատասխանատու կոտորածների համար: Կամ, որևե բան տեսե՞լ ես քո սեփական աչքերով: Որպես իրավաբան, կարո՞ղ ես մեզ ասել, թե ինչ գիտես Ջիվանշիրի մասին:**
ՊԱՏԱՍԽԱՆ. Նախապես կոտորածները սկսեցին Բաքվի շրջանի թաթարները: Սակայն, թուրք և թաթար զորքերի քաղաք մտնելուց հետո, կոտորածները ընդունեցին տեղական բնույթ:
ՀԱՐՑ. **Ի՞նչ գիտես հայ մտավորականների սպանությունների մասին: Ո՞վ էր պատասխանատու այդ սպանությունների համար:**
ՊԱՏԱՍԽԱՆ. Ես անձնական բարեկամություն ունեի մի քանի հայ մտավորականների, ինչպես օրինակ՝ դոկտոր Սամսոն Ամիրյանի, Սաչարյանի և Աղավեզյանի հետ: Կոտորածներն սկսելուց հետո, իմ փեսան և ես կապվեցինք Ջիվանշիրի հետ: Ես տեղեկություն խնդրեցի դոկտոր Սամսոն Ամիրյանի մասին: Ջիվանշիրը ասաց, որ տեղեկություն չունի մեր բարեկամի մասին և որևէ բան իմանալու դեպքում խոստացավ կանչել մեզ: Երկու օր հետո մենք կրկին կապվեցինք հետը: Մենք նորից հարցրինք, թե որևէ լուր կա՞ր արդյոք Սամսոն Ամիրյանից և մեր զարմանքը արտահայտեցինք այն կապակցությամբ, որ հակառակ իր ուժին և հեղինակությանը, չէր կարողացել որևէ տեղեկություն ստանալ մեր բարեկամի մասին: Նախարարը մեզ ասաց, որ ինքը որևէ լուր չէր ստացել մեր բարեկամի մասին և եթե որևէ լուր լիներ, ինքը պատճառ չուներ այն մեզնից թաքցնելու: Նա մեզ ուղարկեց Արդարադատության նախարարի մոտ: Այս մարդը Գյանջայի ամենահայտնի իրավաբաններից մեկն էր: Մենք Արդարադատության նախարարին հարցրինք մեր բարեկամի մասին: Նա պատասխանեց, որ ինքը շատ բան չգիտի այդ հարցերի վերաբերյալ և թե ինքը դոկտոր Ամիրյանի ձերբակալման մասին հրաման չի արձակել: Նա մեզ ուղարկեց թուրք օկուպացիոն ուժերի հրամանատար Մուրսել փաշայի մոտ՝ լրացուցիչ տեղեկություն ստանալու համար: Մուրսել փաշան մեզ ասաց, որ ինքը այդ հայերի ձերբակալման մասին հրաման չի արձակել: Մենք ասացինք, որ դա շատ զարմանալի է, որովհետև ամեն մարդ ասում է, որ նա է արձակել այդ ձերբակալությունների հրամանը: Մուրսել փաշան ասաց, որ մենք չպետք է հավատանք նման մեղադրանքների, այդ ամենը ազերիների անհեթեթություններն են, որով ուզում են մեղքը բարդել թուրքերի վրա:
Երրորդ հարցազրույցից հետո իմ փեսան և ես դարձյալ այցելեցինք Ջիվանշիրին: Նրան տեղեկացրինք, որ Մուրսել փաշան ասել է, թե թուրքերը չեն կարող խառնվել Ադրբեջանի կառավարության ներքին գործերին: Ապա նրան բացատրե-

ցինք. քանի որ կառավարության գործելակերպը այժմ ադրբեջանական կառավարության ձեռքում է, Սամսոն Ամիրյանին և մյուս հայերին գտնելը նրանց պարտականությունն է: Զիվանշիրը պատասխանեց, որ ամեն միջոց պիտի ձեռք առնի նրանց գտնելու համար: Մենք ենթադրում էինք, որ նրանց Գյանջա են ուղարկել: Ուրիշ մարդիկ ուղարկված են եղել այնտեղ և երբեք չեն վերադարձել: Ես տեղեկություն չունեմ, թե Բաքվից դեպի Գյանջա ճանապարհին որևէ մեկը սպանված եղե՞լ է: Մենք լսեցինք, որ նրանք պետք է, որ Բաքվում լինեին: Իմ փեսան և ես կրկին այցելեցինք Զիվանշիրին հայտնելու համար, որ նրանք ոստիկանապետ Բոգա էդդեմ բեյի հսկողության տակ են, մի մարդ, որը քաղաքում հայտնի էր իր դաժանությամբ: Նա անվարան պատասխանեց, որ ոչինչ չգիտի այդ մասին և մեզ դուրս հրավիրեց, ասելով, թե մեզ համար որևէ բան անելն իր ուժերից վեր է: Երկու, երեք շաբաթ ոչինչ չլսեցինք: Երբ ես հանդիպեցի գյուղական շրջանի իմ հաճախորդներից մեկին, նա ասաց, որ տեղեկություն ունի Սամսոն Ամիրյանի մասին: Այդ օրվանից ի վեր ոչ մի բան չենք լսել նրա մասին: Այն լուրերը, որ լսել ու կարդացել եմ, վերաբերում են Բաքվի հայ համայնքի մտավորականներին.

Նրանք հետևյալներն են.

Դոկտոր Թաքեոս Զաքարյան
Դոկտոր Զաքար Ավիլյան
Ստեֆեն Այվազյան
Սարգիս Սառլաթերյան
Ալքսանդր Մազիլյան
Սիմեոն Այդինզյան
Ստեֆեն և Գրիգոր Ստեփանյաններ
Գրիգոր Աղաջանյան
Հովհաննես Չիթանզյան
Հոսթանինս Քալանթարյան
Արամ Քաֆաթոֆ
Լևոն Փազիրկյան
Ինժեներ Գևորգ Մովսեսյան
Լևոն Գևորգ Փեռնյան

Բոլոր այդ դեպքերը՝ ծերբակալությունները և մահապատիժները տեղի ունեցան կառավարությունը ադրբեջանական իշխանությանն անցնելուց հետո:

Ես էրմենիքենտը գիտեմ: Թրքական պաշարումից հետո բոլոր այն հայերը, ովքեր չէին կարողացել փախչել, ապաստան գտան էրմենիքենտում: Սրանք, ուրիշների հետ միասին, կոտորվեցին, երբ քաղաքը գրավվեց: Էրմենիքենտը քաղաքի արվարձան է:

1918-ի մարտին իշխանության գլուխ անցան բոլշևիկները: Ավելի ուշ, հուլիս ամսին բոլշևիկները լուծվեցին և նրանց փոխարինեցին մենշևիկները: Մենշևիկները կապի մեջ մտան գեներալ Դընստերվիլի հետ և նրան խնդրեցին գալ իրենց օգնության: Նա հավանություն տվեց և այդ ժամանակվանից կառավարությունը բրիտանացիների և մենշևիկների ձեռքում էր միացյալ, թուրքերի և թաթարների դեմ: Երբ բոլշևիկները իշխանության գլուխ էին, թաթարները չէին կարող ընդունել նրանց գաղափարախոսությունը ու դադարեցին նրանց հետ համագործակցել: Այդ ժամանակ՝ 1918-ի մարտին, բոլշևիկները հարձակվեցին թաթարների վրա և սպանեցին մի խումբ թաթարների: Այն ժամանակ քաղաքը բաժանված էր տարբեր հատվածների: Այնպես պատահեց, որ թաթարները հայկական տարածքին մոտ էին և ապաստանեցին հայերի մոտ: Հայերը նրանց օգնության ձեռք մեկնեցին, որովհետև նույն նպատակն էին հետապնդում: Կարող է պատահած լինել, որ որոշ հայեր, լինելով համոզված բոլշևիկներ, թաթարներին հակառակ գործեին, ինչպես բոլոր բոլշևիկները: Ես հաստատ գիտեմ, որ մի քանի հարյուր թաթարներ ապաստանեցին Մայլով թատրոնում, որտեղ հայերը նրանց սնեցին ու հոգ տարան:

Ես Զիվանշիրին երբեք չեմ մոտեցել որևէ հայ հաճախորդի անունից: Ես Բաքվում Սկրիբինսկի հաստատությունը գիտեմ: Դա հատուկ անտառանյութով զբաղվող, լավ ճանաչված հաստատություն էր:

Միրզայանը անտառանյութի բիզնեսի մեջ Սկրիբինսկու գործընկերն էր: Երբ քաղաքը սեպտեմբերին գրավվեց, հաստատության պատասխանատու անդամներից և ոչ մեկը Բաքվում չէր: Այդ ժամանակ այնտեղ էին գանձապահը, հաշվապահը և նման լիազորություններ չունեցող աշխատողներ միայն: Հետևաբար, նկատի ունենալով, որ հաստատության անտառանյութի պահեստը հաճախ բացվել ու թալանվել էր, գանձապահը մոտեցավ ինձ, որպես հաստատության այլ խնդիրների ու առիթների խորհրդատու: Այս առիթով ես մոտեցա Զիվանշիրին, որն այն ժամանակ միաժամանակ Ներքին գործերի և հասարակական աշխատանքների նախարարն էր: Ես նրան մի հայտարարություն արեցի և առաջարկեցի պաշտպանել ռուսական հաստատությունը: Նա հարցրեց, թե որևէ հայկական հետաքրքրություն կա՞ր հաստատության նկատմամբ: Ես ասացի «Այո, բայց հետաքրքրության 90 տոկոսը ռուսական է»: Իրեն բավարարելու համար ես ներկայացրի բաժնետերերի ցանկը, արձանագրությունները և ընկերության ընդհանուր ժողովների տեղեկանքները:

Այդ փաստաթղթերը քննելուց հետո Զիվանշիրը կարծիք հայտնեց, որ ընկերությունը գլխավորապես հայերի հետ գործ ունի, ուստի պաշտպանության ենթակա չէ:

Հետո վկան հարցաքննվեց դատախազ Ռիկատսոն Հաթի կողմից հետևյալ ձևով.

<u>ՀԱՐՑ</u>. 1918–ի մարտին հայերը, ըստ տեղեկությունների, գործակցեցին բոլշևիկների հետ և կոտորեցին մուսուլմաններին, սա ճի՞շտ է:

<u>ՊԱՏԱՍԽԱՆ.</u> Բոլշևիկներն է, որ կատարեցին մուսուլմանների ջարդերը: Նրանց թվում կային որոշ հայեր:

<u>ՀԱՐՑ</u>. Քանի՞ հայ կար այնտեղ:

<u>ՊԱՏԱՍԽԱՆ.</u> Ես չէի կարող փողոց դուրս գալ, որովհետև շատ վտանգավոր էր: Հետևաբար, չգիտեմ:

<u>ՀԱՐՑ</u>. Համենայն դեպս, գիտես չէ՞, որ մեծ թվով մուսուլմաններ սպանվեցին:

<u>ՊԱՏԱՍԽԱՆ.</u> Շատ հնարավոր է, որ շատ մուսուլմաններ սպանված լինեն հայ բոլշևիկների կողմից 1918-ի մարտ ամսին:

<u>ՀԱՐՑ</u>. Ուստի, տրամաբանական է, որ Կովկասի մուսուլմանները կարող էին իրավունք ունենալ վրեժ լուծել հայերից, այնպես չէ՞:

<u>ՊԱՏԱՍԽԱՆ.</u> Այո:

<u>ՀԱՐՑ</u>. Գիտե՞ս, որ Ռուսաստանի հրեաները հեղափոխությունից առաջ հաճախ խռովություն էին բարձրացնում ու ապստամբում:

<u>ՊԱՏԱՍԽԱՆ.</u> Այո, դա բացարձակապես ճիշտ է:

ՀԱՐՑ. Հայերը Թուրքիայում և Կովկասում նույն դրության մեջ են, ինչ հրեաներն են ձեր երկրում: Թուրքերը սպանում էին այն հայերին, որոնք փորձում էին ապստամբել: Հետևաբար, երկու զարգացումները նման չե՞ն արդյոք:

ՊԱՏԱՍԽԱՆ. Հրեաները ուրիշ են, հայերը ուրիշ:

ՀԱՐՑ. Ինչո՞ւ:

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայերը չէին ապստամբում:

ՀԱՐՑ. Ես ապստամբության մասին չեմ խոսում: 1918-ի մարտին նրանք, բոլշևիկների հետ համագործակցած, գործեցին մուսուլմանների դեմ, և մուսուլմանները վրեժ լուծեցին: Երբ Նուրի փաշան Բաքու մտավ, դու բանակը տեսա՞ր քաղաքով տողանցելիս:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես տեսա թուրք զինվորներ տողանցելիս ժամը 12:00 -ի և 13:00-ի արանքում:

ՀԱՐՑ. Լսե՞լ ես, որ հուլիսի 12-ին և 22-ին Մուրսել փաշան հաղորդագրություն էր ուղարկել քաղաքը պաշտպանող հայկական կոմիտեին՝ խոստանալով հայերի կյանքը պարգևել, եթե քաղաքը հանձնվեր:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, լսել եմ:

ՀԱՐՑ. Այս նկատառումներով, հայերը իրավունք ունե՞ն բողոքելու այն բանի համար, ինչ որ պատահեց իրենց հետ:

ՊԱՏԱՍԽԱՆ.Այս հարցում հայերը որևէ դեր խաղացած լինել չէին կարող, որովհետև նրանք կառավարությունը չէին վերահսկում: Գնդապետ Շատըլուորթն էր Բաքվի հրամանատարը: Նա քաղաքից քաշվեց օգոստոսի 31-ին:

ՀԱՐՑ. Վկան երեկ ցուցմունք տվեց այն մասին, որ թուրք և քուրդ զինվորները *(ինչպես հրատարակված է)* կատարեցին ջարդերը:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ:

ՀԱՐՑ. Նա այդպես ասե՞լ է, թե՞ ոչ:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես այդ չեմ ասել:

ՀԱՐՑ. Ես իմ ձեռքում ունեմ սղագրությունը: Այդպես է ասված այստեղ:

ՊԱՏԱՍԽԱՆ. Թարգմանիչը պետք է սխալ հասկացած լինի: Ես այդպիսի բան չեմ ասել: *(Նույնիսկ սղագրությունը ցույց տալուց հետո վկան պնդեց, որ ինքը այդպիսի բան չի ասել)*:

ՀԱՐՑ. Կարծում ես, որ Ջիվանշիրը և Օսմանյան բանակը կոտորածների համար պատասխանատու չէի՞ն, որ կոտորածները կատարվեցին միայն կողոպտելու և թալանելու նպատակո՞վ, որ դա մի իրադարձություն էր, ոչ ավելին, քան անգիտակից մարդկանց վրեժը՝ 1918–ի մարտ ամսվա դեպքերի համա՞ր:

ՊԱՏԱՍԽԱՆ.Դա հնարավոր է:

ՀԱՐՑ. Դու ասացիր, որ Միություն և Առաջադիմություն կուսակցությունը և Մուսավաթ կուսակցությունը հետապնդում էին նույն նպատակներն ու խնդիրները: Դու գիտե՞ս Միություն և Առաջադիմություն կուսակցության ծրագրի խնդիրներն ու նպատակները:

ՊԱՏԱՍԽԱՆ.Ոչ, Միություն և Առաջադիմություն կուսակցության խնդիրները ես չգիտեմ: Բայց ես տեսա մի հայտարարություն՝ հրապարակված Մուսավաթ կուսակցության կողմից: Այդ հայտարարությունում ասվում էր, որ Մուսավաթ կուսակցությունն ունի նույն նպատակները, ինչ Միություն և Առաջադիմություն կուսակցությունը:

ՀԱՐՑ. Դու գիտե՞ս, որ երբ Միություն և Առաջադիմություն կուսակցությունը հիմնադրվեց, նրան միացա՞ն երկրի նշանավոր քաղաքացիներ:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ, ես չգիտեմ:

ՀԱՐՑ. Ի՞նչ է վկայի ազգությունը:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես կազակ եմ:

ՀԱՐՑ. Իսկ քո հայրը՞:

ՊԱՏԱՍԽԱՆ. Նա նույնպես կազակ է:

ՀԱՐՑ. Կովկասում քո ընկերները հիմնականում հայե՞ր էին, թե՞ թուրքեր:

ՊԱՏԱՍԽԱՆ. Թուրքերը կարծում էին, որ ես «հայերի բարեկամն եմ», իսկ հայերը կարծում էին, թե ես «թուրքերի բարեկամն եմ»: Ելնելով իմ իրավաբան լինելու հանգամանքից...

ՀԱՐՑ. Դու գիտե՞ս, որ ռուսական կառավարությունը զգալի քանակությամբ դրամ ծախսեց Կովկասի և Թուրքիո մեջ հայերի ու թուրքերի միջև միջադեպեր ստեղծելու նպատակով:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, կարող է պատահել:

ՀԱՐՑ. Գիտե՞ս, որ հայերը Կովկասի մեջ իրենց դպրոցները քարոզչական կենտրոնների վերածեցին:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ, հայերը այդպիսի բան չարեցին:

Հետո Հայդար Ռիֆատ բեյը վկային հարցաքննեց հետևյալ ձևով.

ՀԱՐՑ. Աշխարհագրական սահմանների առումով Բաքուն Ադրբեջանի՞ն է պատկանում, թե՞ Հայաստանին:

ՊԱՏԱՍԽԱՆ.Այդ հարցին հնարավոր չէ պատասխանել, որովհետև Ռուսաստանը ...

ՀԱՐՑ. Ես պատմության մասին չեմ հարցնում: Մենք գիտենք Ռուսաստանի հանգամանքները: Իմ հարցումը հետևյալն է. աշխարհագրական տեսակետից Բաքուն Ադրբեջանո՞ւմ է, Վրաստանո՞ւմ, թե՞ Հայաստանում:

ՊԱՏԱՍԽԱՆ. Պատերազմից առաջ Ադրբեջան չկար, հետևաբար ինչպե՞ս կարող եմ այդ հարցումին պատասխանել:

ՀԱՐՑ. Կարող է կառավարություններ չլինեին, բայց ազգեր միշտ եղել են:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ռուսներն էին Բաքվում:

Դատարանը կրկնեց Հայդար Ռիֆատ բեյի հարցը.

ՀԱՐՑ. Բաքուն Ադրբեջանի՞ կազմի մեջ է, թե՞ Հայաստանի:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այն բանից հետո, երբ դաշնակիցները ճանաչեցին Ադրբեջանի անկախությունը, Բաքուն Ադրբեջանի մաս դարձավ:

ՀԱՐՑ. Բաքուն պատմականորեն երբևիցե Հայաստանին պատկանե՞լ է:

ՊԱՏԱՍԽԱՆ.Երբեք:

ՀԱՐՑ. Երբ 1918–ին Ռուսաստանի Արևմտյան ճակատը տապալվեց, հայերը (*Ռուսական բանակի մեջ գտնվող*) Բաքվի միջով անցան: Այդ ժամանակ տեղի հայերը փորձեցի՞ն հայկական ամբոխ ստեղծելու նպատակով պահել նրանց իրենց զենքերով:

ՊԱՏԱՍԽԱՆ. Շուրջ 6,000-ից 7,000 հայեր անցան Բաքվի միջով, բայց այնտեղ ոչ ոք չկար, որպեսզի նրանց տեղում պահեր: Սակայն, որովհետև մուսուլմանները վերահսկում էին Զանգեզուր տանող ճանապարհը, այդ զինվորները այլ ելք չունեին, քան քաղաքում մնալը:

ՀԱՐՑ. **Ես տարբերակների մասին չեմ հարցնում: Ես ուզում եմ պատասխաններն այն հարցերի, որոնք տալիս եմ: Վկան պետք է պատասխանի հարցերին: Նա չպետք է ընդհանուր տեղեկություն տա, ոչ էլ արտահայտի իր անձնական կարծիքը: Մենք ավելի շատ տեղեկություն ունենք, քան այն, ինչ դուք կարող եք տրամադրել: Ես նորից եմ հարցնում. Կերենսկու անկումից հետո Բաքվի հայերը էրզրումի ճակատից հետ քաշվող ռուս զինվորներից զենքեր գնեցի՞ն:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, հայերը զենքեր գնեցին, բայց մուսուլմանները նույնպես գնեցին:

ՀԱՐՑ. **Երբ 1918–ի մարտին բոլշևիկները վերահսկում էին հայերին, նրանց հետ վերաբերվում էին իբրև եղբո՞ր:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Բոլշևիկյան կառավարությունը հսկողության տակ էր պահում ինչպես Մուսավաթ կուսակցության, այնպես և Հայկական ազգային խորհրդի քաղաքականությունը:

ՀԱՐՑ. **Ես Մուսավաթ կուսակցության մասին չեմ խոսում: Հայերը համագործակցո՞ւմ էին բոլշևիկների հետ:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ի՞նչ ձևով:

ՀԱՐՑ. **Նրանց սկզբունքներին հավանություն տալու ձևով: Նրանց կոմիսարների հրամաններին ենթարկվելու ձևով:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այն ժամանակ ամեն ոք ենթարկվում էր կոմիսարների հրամաններին: Բայց մարտ ամսվա ջարդերն այն աստիճան վախեցրեցին մուսուլմաններին, որ նրանք թողեցին Բաքուն: Այդ պատճառով քաղաքում մնացին միայն ռուսներ, հրեաներ ու հայեր:

ՀԱՐՑ. **Բոլշևիկների անկումից հետո հայերը գտա՞ն ուղիներ մենշևիկների ուժերին միանալու համար:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Բաքվի ժողովուրդը կոտորածներից այնքան էր վախեցած, որ պատրաստ էր ընդունել ցանկացած կառավարություն:

ՀԱՐՑ. **Ռուսական նավատորմը ռմբակոծե՞ց Սիթադելի մուսուլմանական շրջանները:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ: Միայն մուսուլմանական շրջաններին կից մի քանի հայկական տներ վնասվեցին:

ՀԱՐՑ. **Ինչո՞ւ ռուսները ռմբակոծեցին մուսուլմանական շրջանները և ոչ հայկականները:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Հավանաբար այն պատճառով, որ բոլշևիկները Մուսավաթ կուսակցության հակառակ էին և մտածեցին, որ այնտեղ թրքական զորք կա:

ՀԱՐՑ. **Ի՞նչ տեսակ վկա է սա: Հինգ րոպե առաջ ասաց, որ Մուսավաթ կուսակցությունը և Հայկական ազգային կուսակցությունները բոլշևիկների հետ լավ էին յոլա գնում: Ամեն պարագայի, այն ժամանակ թրքական զորքերի ոչ մի նշան չկար: Այսպիսով, ինչո՞ւ նավատորմը չռմբակոծեց հայկական շրջանները:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Գրավումից հետո բոլշևիկները թշնամացան բոլոր հայկական կուսակցություններին: Մինչ այդ նրանք թշնամացել էին միայն Մուսավաթին:

ՀԱՐՑ. **Երբ ռուսական պետությունը դեռ գոյություն ուներ, հայերի զինվորագրո՞ւմ էր իր բանակում:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո:

ՀԱՐՑ. **Զինվորական ծառայությունը պարտադի՞ր էր ազերիների, այսինքն՝ մուսուլման թուրքերի համար:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Մինչև վերջերս Կովկասի մարդիկ զինվորական պարտավորվածություններ չունեին:

ՀԱՐՑ. **Երբ 22 տարի առաջ բացվեց առաջին Դուման, Ռուսաստանը հայերին գրգռե՞ց մուսուլմանների դեմ, որպեսզի մուսուլման պատգամավորներ չունենա:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես չգիտեմ: Այն ժամանակ Բաքվից միայն մեկ պատգամավոր էր ընտրված, այն էլ մուսուլման էր: Նրա անունն էր Ալի Մերդան բեյ Թոփչուբաշով:

ՀԱՐՑ. **Վկան չի՞ կարծում, թե բնական է, որ ազերիները պիտի ուզենային հայերից (որոնք փոքրամասնություն էին), վերցնել իրենց բնական մայրաքաղաքը՝ Բաքուն, որը պատմականորեն, աշխարհագրականորեն և էթնոգրաֆիկ տեսակետից թրքական է:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Բաքուն երբեք թրքական չի եղել: Այն պարսկական քաղաք է և ինչ որ այնտեղ կատարվեց, դա կոտորած էր:

ՀԱՐՑ. **Մուսուլմանները արդարացի՞ էին կազմակերպելով կոտորածները, եթե իրոք, իրենք էին կատարողները:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Եթե նկատի ունենանք, թե մինչ այդ ինչքան էին չարչարվել, ապա, իրականության մեջ, արդարացի էին:

ՀԱՐՑ. **Ո՞վ է ավելի վստահելի, հայե՞րը, թե՞ ազերիները:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես չգիտեմ:

ՀԱՐՑ. **Ազերիները պատերազմից առաջ հայերի ջարդեր կազմակերպե՞լ են:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես հիշում եմ, որ նրանք մուսուլմանների ջարդեր կազմակերպեցին 1905-ին *(ինչպես հրապարակված է):*

ՀԱՐՑ. **Ինչպիսի՞ն էր Չիվանշիրի անձնական կյանքը, ինչպիսի՞ մարդ էր նա:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այս նյութի շուրջ ես ոչինչ չեմ կարող ասել, որովհետև նրան անձնապես չէի ճանաչում:

ՀԱՐՑ. **Ես հարցրեցի ինչպիսի՞ մարդ էր նա, ինչպիսի՞ն էր նրա կերպարը և հեղինակությունը քաղաքում:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես նրա մասին ոչինչ չեմ լսել, նույնիսկ մուսուլմաններից:

ՀԱՐՑ. **Որևէ վատ բան լսե՞լ եք:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Մի քանի օր առաջ, իմ մի ընկերը Բաքվից եկավ Ստամբուլ: Բեդրի բեյ անունով մի մուսուլման ինձ ասաց. «Ինչպե՞ս է, որ Չիվանշիրը Ստամբուլ է գալիս. եթե նույնիսկ հայերը նրան չխփեն, Մուսավաթ կուսակցությունից որևէ մեկը նրան խփելու է»:

ՀԱՐՑ. **Ես նրա ոչ թե քաղաքական, այլ անձնական կերպարի մասին եմ հարցնում, հարցնում եմ նրա գիտելիքների մասին: Նա սուտասա՞ն էր: Նա խաղամո՞լ էր: Դավաճանո՞ւմ էր իր ընտանիքին: Հայրենասե՞ր էր:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Նա շատ խաղամոլ էր: Մուսուլմանները նրան անվանում էին «աղվես»:

ՀԱՐՑ. **Մեկ րոպե առաջ նա ասաց, որ այս նյութի շուրջ տեղեկություն չունի: Հիմա ասում է, որ նա խաղամոլ էր ու նրան անվանում էին «աղվես»:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես նրան անձնապես չգիտեի, բայց ես նրան հանդիպում էի ակումբում: Բնականաբար, ես կարող եմ այդ նյութի հետ կապված պատասխաններ տալ:

ՀԱՐՑ. **Նա հայրենասե՞ր էր: Նա իր հայրենիքին հավատարի՞մ էր:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Իրականության մեջ, այո:

ՀԱՐՑ. Երբ Ռուսաստանում ռազմական դրություն հայտարարվեց, իշխանությունը քաղաքացիակա՞ն, թե՞ զինվորական կառավարության ձեռքում էր:

ՊԱՏԱՍԽԱՆ. Բնականաբար՝ զինվորական կառավարության:

ՀԱՐՑ. Ես հարցնում եմ որպես իրավաբան և կոչ եմ անում իր խղճին, եթե մի ադրբեջանական և մի հայկական պետություն հիմնադրվեին, ապա ո՞ր պետության մեջ նա պիտի նախընտրեր ապրել:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես երբեք այլևս պիտի չուզենայի դրանցից ոչ մեկը:

ՀԱՐՑ. Ո՞ւր պիտի նախընտրեիր գնալ, եթե ուրիշ տեղ չունենայիր գնալու:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ասված գիտե: Գուցե նույնիսկ ես ինքնասպանություն գործեի և այդ երկուսից և ոչ մեկ տեղը չգնայի:

ՀԱՐՑ. Երբ Սեպտեմբեր 18-ին թրքական զորքերը քաղաք մտան, ո՞ր զորքերը թվական գերազանցություն ունեին. թրքակա՞ն, ադրբեջանակա՞ն, թե՞ ռուսական:

ՊԱՏԱՍԽԱՆ. Նուսել և Նուրի փաշաներն էին հրամանատարները: Թվում էր, որ կանոնավոր զորքը կազմված է ադրբեջանցիներից:

ՀԱՐՑ. Ինչո՞ւ էին հայ մտավորականները հսկողության տակ վերցված:

ՊԱՏԱՍԽԱՆ. Դժվար է ասել: Օրինակ՝ ցանկում մի քաղաքական դեմքից հետո մի դերձակ էր: Դժվար է որևէ բան ասել այս մասին:

ՀԱՐՑ. Եթե Ջիվանշիրը համաշխարհային պատմության մեջ գոյություն ունեցած չլիներ, Ադրբեջանում տեղի ունեցած դեպքերը չէի՞ն կատարվելու:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այդ կապակցությամբ ոչինչ չեմ կարող ասել:

ՀԱՐՑ. Բոլշևիկ հրամանատարը և իր զինվորները *(Բաքվից)* դուրս եկան օգոստոսի 31-ին: Ինչո՞ւ հայերը չհանձնվեցին: Ինչո՞ւ կռվեցին:

ՊԱՏԱՍԽԱՆ. Բրիտանացիների հեռանալուց հետո քաղաքը պաշտպանելու համար մարդ չէր մնացել:

ՀԱՐՑ. Բիհբուդ խանը Գյանջայում էր կոտորածների առաջին, երկրորդ, երրորդ, չորրորդ և հինգերորդ օրերին: Ես իմ տրամադրության տակ փաստաթղթեր ունեմ: Վկան ինչպե՞ս կարող է ասել, որ «նրա հետ խոսել է Բաքվում»:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ազերի կառավարությունը Բաքու վերադարձավ թրքական բանակի մեկ, առավելագույնը երկու օր քաղաք մտնելուց հետո: Ջիվանշիրն արդեն այնտեղ էր:

ՏԱՍՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՎԿԱ

Հայկական համայնքի անդամներից մեկը՝ Տիկին Չաչո Քելլերյանը, երդում տալուց հետո պատասխանեց Խոսրովյան էֆենդիի հարցերին.

-Նա ասաց, որ 28 տարեկան է, ապրում է Բեյօղլուի Սուրբ Հակոբ շրջանում, Նալբանդ փողոցի վրա, Մուհիդդին շենքում, թիվ 3 բնակարանում: Նա Տրապիզոնից է, ամուսնացած: Տրապիզոնում ապրել է ծնողների հետ: Երբ հայերի տեղահանությունը սկսվել է, նա Տրապիզոնում է եղել: Իր հորեղբայրները և հորաքույրները դեռ Տրապիզոնում են: Երբ տեղահանությունը սկսվեց, նրանց ընտանիքը կազմում էին հայրը, մայրը, ինքը, չորս քույրերը և մեկ եղբայրը:

ՀԱՐՑ. Ե՞րբ քեզ ասվեց, որ տեղահանվելու ես:

ՊԱՏԱՍԽԱՆ. Նրանք ոչինչ չասացին: Միայն ասացին, որ եթե զենքերը հանձնենք, միայն տղամարդիկ պիտի տեղահանվեն:

ՀԱՐՑ. Զենքերը հանձնեցի՞ք:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, զենքերը կառավարությանն էին հանձնված:

ՀԱՐՑ. Հետո ի՞նչ տեղի ունեցավ:

ՊԱՏԱՍԽԱՆ. Նրանք մեզ ասացին, որ մենք տեղահանվող առաջին խումբն ենք լինելու, որ Տրապիզոնը պատերազմական գոտի է լինելու, և որ մինչև պատերազմի վերջը մենք պիտի մնանք Գումուշեյնում:

ՀԱՐՑ. Դուք կամավոր ձևո՞վ գնացիք:

ՊԱՏԱՍԽԱՆ.Իհարկե ոչ: Մեզ բռնի ուժով ուղարկեցին:

ՀԱՐՑ. Նրանք ձեզ որևէ երաշխիք տվեցի՞ն այն մասին, որ ճանապարհին անվտանգ եք լինելու:

ՊԱՏԱՍԽԱՆ. Երբ մենք Դեգիրմենդերե հասանք, հրամանատարը իր երեխաներով երդվեց *(որ մենք ապահով ենք լինելու):*

ՀԱՐՑ. Դուք ճամփա ընկաք դեպի Գումուշեյն: Հետո ի՞նչ պատահեց:

ՊԱՏԱՍԽԱՆ. Մինչև Գումուշեյն հասնելը, Դալտաբանի կողմերում ինչ-որ տեղ, ժանդարմները հարձակվեցին մեզ փոխադրող կառքերի վրա: Սպաները, որոնք կոչված էին մեզ պաշտպանելու, մեզ լքել և գնացել էին Գումուշեյն: Այսպիսով, ժանդարմները հարձակվեցին:

ՀԱՐՑ. Ի՞նչն էր կառքերի վրա հարձակվելու նրանց նպատակը:

ՊԱՏԱՍԽԱՆ. Նրանք ուզում էին մեզ կողոպտել: Նրանք վերցրին ամենը, ինչ որ ունեինք:

ՀԱՐՑ. Ի՞նչ ես ուզում ասել «ամենը» ասելով:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոսկի, զարդեղեն, արժեքավոր իրեր:

ՀԱՐՑ. Քո թվարկածներից բացի, ուրիշ բան վերցրեցի՞ն:

ՊԱՏԱՍԽԱՆ. Նրանք վերցրին ամեն ինչ, մինչև իսկ մեր հագուստները:

ՀԱՐՑ. Ի՞նչ պատահեց հորդ հետ:

ՊԱՏԱՍԽԱՆ. Նրանք կառքից դուրս քարշ տվեցին հորս և կողոպտեցին նրան: Զարդեղենները քրոջս մոտ էին:

ՀԱՐՑ. Այդ կողոպուտից հետո ի՞նչ տեղի ունեցավ:

ՊԱՏԱՍԽԱՆ. Մեզ կողոպտելուց հետո այդ մարդիկ փախան: Երբ Դալտաբան հասանք, Գումուշեյնի կառավարիչը մեզ դիմավորեց մի հրոսակախմբի ղեկավարի հետ միասին:

ՀԱՐՑ. Հետո ի՞նչ տեղի ունեցավ:

ՊԱՏԱՍԽԱՆ. Հրոսակախմբի ղեկավարը հրամայեց տղամարդկանց անջատվել: Կանանց հավաքեցին ծեղնահարկում: Այնտեղ մնացինք ամբողջ գիշեր: Տղամարդկանց պահեցին պանդոկում: Նրանք առավոտյան եկան պարաններով: Տղամարդկանց ձեռքերը կապեցին և նրանք ճամփա ընկան մեզնից առաջ: Հետո մենք սկսեցինք շարժվել: Որոշ ժամանակ քայլելուց հետո, մենք տեսանք, որ սարի վրա ծուխ է բարձրանում և հրազենի կրակոցներ լսեցինք: Ես հասկացա, որ հայրս և ազգականներս սպանված են:

ՀԱՐՑ. Դու ծուխ տեսար և կրակոցներ լսեցիր: Ինչպե՞ս իմացար, որ հայրդ սպանված է:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ժանդարմներն ասացին:

ՀԱՐՑ. Այն բանից հետո, երբ տղամարդիկ առանձնացվեցին կանանցից, դու հորդ կամ ազգականներիդ տեսա՞ր:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ, ես նրանցից ոչ մեկին չտեսա:

ՀԱՐՑ. Այն բանից հետո, որ ազգականներից դու բաժանվեցիր, ի՞նչ արեցիր:

ՊԱՏԱՍԽԱՆ. Սկսեցինք շարժվել դեպի էրզինկան: Բայց, մինչև մեր էրզինկան հասնելը, հարձակվեցին մեր վրա և մի քանի կանանց վերցրեցին: Մեր շարախումբը հսկող սպան փորձեց վերցնել իմ կրտսեր քրոջը:

ՀԱՐՑ. Քանի՞ տարեկան էր քույրդ:

ՊԱՏԱՍԽԱՆ. Տասներկու:

ՀԱՐՑ. Քույրդ այստե՞ղ է, կարո՞ղ է երևալ դատարանում:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, նա այստեղ է և կարող է դատարան ներկայանալ:

ՀԱՐՑ. Ինչո՞ւ էր սպան ուզում քրոջդ վերցնել:

ՊԱՏԱՍԽԱՆ. Որպեսզի ամուսնանա հետը:

ՀԱՐՑ. Կարո՞ղ է տասներկու տարեկան մեկը ամուսնանալ:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ, բայց ...

ՀԱՐՑ. Ուրեմն, ի՞նչ տեղի ունեցավ. դու քրոջդ տվեցի՞ր այդ մարդուն:

ՊԱՏԱՍԽԱՆ. Իմ ավագ քույրը նրան ասաց, որ կարող է ամուսնանալ հետը, եթե նա երկու տարի սպասի: Բայց սպան չհամաձայնվեց և վեց ամիս ժամանակ տվեց:

ՀԱՐՑ. Հետո ի՞նչ տեղի ունեցավ:

ՊԱՏԱՍԽԱՆ. Մենք ասացինք, որ մեր քրոջը կտանք պայմանով, որ ամբողջ ընտանիքը խնայվի: Սպան խոստացավ փրկել մեր ընտանիքը: Հորաքույրս, որը մեզ հետ էր, ուզեց Տրապիզոն վերադառնալ: Նա իր ցանկությունը հայտնեց սպային: Սպան պատասխանեց, որ կարող է գնալ, պայմանով, որ փոքր քրոջս հետը վերցնի: Նա ուզում էր նրան ամուսնության պատրաստ տեսնել, երբ ինքը վերադառնար Տրապիզոն:

ՀԱՐՑ. Քրոջդ Տրապիզոն ուղարկեցի՞ր:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես նրան հորաքրոջս հետ Մադեն գյուղում թողեցի: Քույրս տեղյակ չէր, թե ինչ է տեղի ունենում: Հետո մենք մեր ճանապարհը շարունակեցինք: Սպան եկավ և ինձ, մորս, հորաքրոջս ու քրոջս խոստացավ բոլորիս ուղարկել Տրապիզոն: Մենք հասանք մի գյուղ՝ երեք ժամ հեռավորության վրա: Այդ ժամանակ մենք սպային հարցրեցինք, թե ե՞րբ է մեզ ուղարկելու Տրապիզոն: Նա մորս ուղարկեց, բայց ինձ իր հետ պահեց: Ես էրզինկան հասա: Կարծում եմ, որ մայրս քրոջս և հորաքրոջս միացած պետք է լիներ:

ՀԱՐՑ. Ի՞նչ պատահեց այն բանից հետո, երբ դու էրզինկան հասար:

ՊԱՏԱՍԽԱՆ. Մեզ ուղարկեցին հայկական գերեզմանատուն: Հետո սպան քրոջս ուզեց:

(Այստեղ վկան բացատրեց, որ իր կրտսեր քույրը, որը հորաքրոջ հետ ուղարկվել էր Տրապիզոն, կառավարական ուժերի կողմից բռնվել և հետ էր ուղարկվել էրզինկան: Արդյունքում՝ չորս քույրերը միացել էին էրզինկանում)

ՀԱՐՑ. Ի՞նչ պատահեց մորդ հետ: Նա Տրապիզոն հասա՞վ, թե՞ նա նույնպես հետ ուղարկվեց էրզինկան:

ՊԱՏԱՍԽԱՆ. Հորաքույրս վերադարձավ: Նրանք եղել էին մի կառքի մեջ, որի վարողը պատմել էր, թե ինչ է պատահել մորս հետ:

ՀԱՐՑ. Ի՞նչ էր պատահել մորդ:

ՊԱՏԱՍԽԱՆ. Նրանք մորս սպանել էին կառքի մեջ:

ՀԱՐՑ. Այդ ընթացքում դու մորդ տեսա՞ր:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ:

ՀԱՐՑ. Երբ դուք հասաք էրզինկան, ի՞նչ պատահեց ընտանիքիդ անդամների հետ:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես իմ աչքերով տեսա, որ սպանում էին ընտանիքիս այն անդամներին, որոնք չէին կարողանում քայլել: Մեր շարախումբը կողոպտվեց:

ՀԱՐՑ. Սպան խոստացել էր, որ ձեզ պիտի փրկի: Կատարե՞ց իր խոստումը:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, բոլոր չորսիս թաքցրեց:

ՀԱՐՑ. Ի՞նչ պատահեց էրզինկանի հայ բնակչությանը:

ՊԱՏԱՍԽԱՆ. Նրանք տեղահանվեցին:

ՀԱՐՑ. Հետո ի՞նչ տեղի ունեցավ:

ՊԱՏԱՍԽԱՆ. Սպան, իմ կրտսեր և ավագ քույրերը մնացին էրզինկանում: Մյուս քույրս և ես ուղարկվեցինք Քեմահ:

ՀԱՐՑ. Ի՞նչն էր ձեզ մեկը մյուսից բաժանելու նպատակը:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես չգիտեմ, բայց խոստացան, որ մեզ բոլորիս պիտի վերադարձնեն Տրապիզոն:

ՀԱՐՑ. Ի՞նչ պատահեց ձեզ հետ, տեղահանված մյուս մարդկանց հետ:

ՊԱՏԱՍԽԱՆ. Մենք միասին շարժվեցինք: Բայց Քեմահի մեջ սպան բոլորին, բացի մեզանից, հանձնեց Քեմահի կառավարչին:

ՀԱՐՑ. Նրանցից բաժանվելուց հետո նրանց կրկին տեսե՞լ ես:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ:

ՀԱՐՑ. Ի՞նչ լսեցիր իրենց մասին:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոմանք, որոնց հաջողվել էր փախչել, ասացին, որ նրանց ուղարկել են Դեր-էլ-Զոր *(Սիրիայում)*:

Դատարանը տվեց հատևյալ հարցը.

ՀԱՐՑ. Սակայն վկան ավելի շուտ ասել էր, որ նրանցից որևէ մեկին այլևս չի տեսել:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես այդ մասին լսեցի մեկ-երկու մարդուց:

Պաշտպան փաստաբանը շարունակեց հարցաքննությունը.

ՀԱՐՑ. Ո՞ւր էին քո չորս քույրերը:

ՊԱՏԱՍԽԱՆ. Էրզինկայում էին:

ՀԱՐՑ. Ինչո՞ւ էիր բանտարկված:

ՊԱՏԱՍԽԱՆ. Որոշ հայեր բողոքեցին, որ կողոպտվել են: Այդ պատճառով սպան բանտարկեց: Նրա հետ միասին բանտարկեցին նաև մեզ:

ՀԱՐՑ. Քեզ ինչո՞ւ բանտարկեցին:

ՊԱՏԱՍԽԱՆ. Որովհետև նրանց ասացինք ով էր մեզ կողոպտողը:

ՀԱՐՑ. Ինչպե՞ս վարվեցին քեզ հետ բանտում:

ՊԱՏԱՍԽԱՆ. Մեզ բանտարկեցին ոճրագործների հետ միասին: Միևնույն ժամանակ, ժանդարմերիայի հրամանատարը մեզ զերծ պահեց նրանց հետ շփվելուց:

ՀԱՐՑ. Ինչպե՞ս դուրս եկար բանտից:

ՊԱՏԱՍԽԱՆ. Որոշ ժամանակ հետո մեզ ազատ արձակեցին: Սպան քրոջս գտավ և ստիպեց ամուսնանալ իր հետ: Մի ամիս մի տան մեջ ապրեցինք: Հետո սպան վերցրեց քրոջս և գնաց էրզրում: Մենք հետ մնացինք:

ՀԱՐՑ. Հետո՞:

ՊԱՏԱՍԽԱՆ. Մենք կարծում էինք, որ Էրզրումի ռազմական դրության դատարանի նախագահը պաշտպանում է մեզ: Բանից դուրս եկավ, որ նա կրտսեր քրոջս ուզում է իր աներծագի համար:

ՀԱՐՑ. Դա ինչպե՞ս իմացար:

ՊԱՏԱՍԽԱՆ. Նա պարզապես գրեց ֆրանսերենով: Մենք մերժեցինք: Մենք ասացինք, որ ավելի լավ է մեռնենք, քան մեր քրոջը տանք:

ՀԱՐՑ. Դրան ի՞նչ պատասխանեց ռազմական դրության դատարանի նախագահը:

ՊԱՏԱՍԽԱՆ. Դրանից հետո նա մեզ չպաշտպանեց:

ՀԱՐՑ. Հետո՞:

ՊԱՏԱՍԽԱՆ. Մոտ կես ժամ մեզ բանտում պահեցին: Հինգ օր, հինգ ժանդարմների հսկողության տակ քայլելուց հետո, հասանք Քեմահ: Քեմահի քննիչ դատական ներկայացուցիչը մեզ ուղարկեց շրջանի գլխավորի մոտ: Գնացինք նրա մոտ:

ՀԱՐՑ. Քեմահի մեջ հայեր կայի՞ն:

ՊԱՏԱՍԽԱՆ. Չգիտեմ, թե պատերազմից առաջ այնտեղ հայեր կայի՞ն, թե՞ ոչ: Բայց երբ գնացինք, այնտեղ հայեր կային:

ՀԱՐՑ. Խնդրում եմ, առանց մանրամասնությունների մեջ մտնելու, նկարագրեք թե ինչպե՞ս փախաք: Քեմահից հետո ո՞ւր գնացիք:

ՊԱՏԱՍԽԱՆ. Սադիկ Բեյ անունով մի բարեգործ անձնավորություն, որն այս աշխատանքային կազմակերպության սեփականատերն էր, մեզ իր տուն տարավ և պաշտպանեց: Ավելի ապահով լինելու համար, Սադիկ Բեյի խորհրդով և օգնությամբ, մենք մեր կրոնը փոխեցինք: Այդ ժամանակ ռուսները մոտենում էին: Սադիկ Բեյը իր ընտանիքը ուղարկեց երկրի խորքերը: Այդպիսով մենք Քուրդիստան ընկանք: Քուրդերը մեզ հանձնեցին հայերին և մեծ փորձություններով էրզրում հասանք: Այնտեղ սկսեցինք աշխատանք փնտրել: Չէինք գտնում մորս: Ավելի ուշ, հայերի պաշտպանության տակ, էրզրումի ճամփով գնացինք Կովկաս:

ՀԱՐՑ. Ինչպիսի՞ն էր ձեր ընկերային վիճակը Տրապիզոնում:

ՊԱՏԱՍԽԱՆ. Լավ էր:

ՀԱՐՑ. Ի՞նչ է ձեր ազգանունը:

ՊԱՏԱՍԽԱՆ. Արաբյան:

ՀԱՐՑ. Ձեր ընտանիքը հարո՞ւստ էր:

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայրս կտորեղենի հարուստ վաճառական էր:

ՀԱՐՑ. Ինչպիսի՞ն է ձեր ֆինանսական վիճակը այժմ:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ մի բան չի մնացել:

ՀԱՐՑ. Ի՞նչ եղավ ձեր ունեցվածքը:

ՊԱՏԱՍԽԱՆ. Թրքական կառավարությունը բռնագրավեց:

ՀԱՐՑ. Բացի ծնողներից, ընտանիքի ուրիշ ի՞նչ անդամներ ես կորցրել:

ՊԱՏԱՍԽԱՆ. Հորեղբորս, հորաքույրերիս և այլ ազգականների:

ՀԱՐՑ. Ո՞վ էր Տրապիզոնում տեղահանման պատասխանատուն:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես չգիտեմ:

Պաշտպան փաստաբանը ավարտեց հարցաքննությունը: Դատախազ Ռիկատսոն Հաթը սկսեց վկայի հարցաքննությունը.

ՀԱՐՑ. Ինչպիսի՞ն էր Տրապիզոնում թրքական ուժերի չափը մինչ պատերազմը:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես չգիտեմ:

ՀԱՐՑ. Վկան ասաց, որ հայերը հանձնեցին իրենց զենքերը: Նշանակում է, որ հայերը իրենց տներում զե՞նք ունեին:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, ինքնապաշտպանության համար:

ՀԱՐՑ. Ումի՞ց պիտի պաշտպանվեին:

ՊԱՏԱՍԽԱՆ. Թուրքերից:

ՀԱՐՑ. Պատերազմից քանի՞ տարի առաջ է, որ հայերը իրենց տներում զենք էին պահում:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես չգիտեմ:

ՀԱՐՑ. Պատերազմից առաջ Հայ հեղափոխական քարոզիչները Տրապիզոնում ակտի՞վ էին:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այս նյութի շուրջ տեղեկություն չունեմ:

ՀԱՐՑ. Տրապիզոնում Հայ դաշնակցական միություն գոյություն ունե՞ր:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ:

ՀԱՐՑ. Վկան գիտե՞, որ հայերը երկար տարիներ զբաղված էին սադրանքներով Օսմանյան կառավարության դեմ:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ:

ՀԱՐՑ. Վկան գիտե՞, թե հայերը ի՞նչ արեցին Տրապիզոնում:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ:

ՀԱՐՑ. Նա Տրապիզոնում դպրոց չի՞ գնացել:

ՊԱՏԱՍԽԱՆ. Գնացել եմ:

ՀԱՐՑ. Հայկական դպրոցները քահանանե՞ր էին վարում:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո:

ՀԱՐՑ. Թրքական Կրթության նախարարությունը խառնվո՞ւմ էր այդ դպրոցների գործերին, թե՞ այդ դպրոցները ազատ էին անելու այն, ինչ ցանկանում էին:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես չգիտեմ:

ՀԱՐՑ. Այս նյութի շուրջ նա ոչինչ չի՞ լսել:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ:

ՀԱՐՑ. (թուրքերը) կրոնական կամ կրթական հարցերի մեջ խառնվո՞ւմ էին:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես չգիտեմ, պարոն:

ՀԱՐՑ. Քանի՞ Հայկական դպրոց կար Տրապիզոնում:

ՊԱՏԱՍԽԱՆ. Մեկ աղջիկների և մեկ տղաների դպրոց կար:

ՀԱՐՑ. Քանի՞ *(հայկական)* եկեղեցիներ կային այնտեղ:

ՊԱՏԱՍԽԱՆ. Երեք եկեղեցի:

ՀԱՐՑ. Վկան գիտի՞, որ Տրապիզոնում հայկական քարոզչությունը կազմակերպված էր քահանաների կողմից:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես չգիտեմ:

ՀԱՐՑ. Հայերը կարո՞ղ էին Տրապիզոնում ազատ առևտուր անել:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո:

ՀԱՐՑ. Շատ (հայ) հարուստ վաճառականներ կայի՞ն:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, մի քանիսը կային:

ՀԱՐՑ. Վկան գիտե՞, որ Տրապիզոնի մեջ հայ բանկիրները բարձր տոկոսադրույքով դրամ էին փոխառության տալիս թուրքերին և երբեմն բռնագրավում էին նրանց ունեցվածքը:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այդ նյութի շուրջ ես ոչինչ չգիտեմ:

ՀԱՐՑ. Վկան որևէ գաղափար ունի՞, թե հայերը ինչու էին տեղահանվում Տրապիզնից:

ՊԱՏԱՍԽԱՆ. Թուրքերը ուզում էին ոչնչացնել հայերին:

ՀԱՐՑ. Ինչո՞ւ էին թուրքերը ուզում հայերին հանել Տրապիզոնից:

ՊԱՏԱՍԽԱՆ. Նրանք վախենում էին ապստամբությունից:

ՀԱՐՑ. Դա նշանակում է, որ թուրքերը պատճառ ունեին վախենալու հայերից:

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայերը վախենո՞ւմ էին իրենց կյանքի համար:

ՀԱՐՑ. Դա նշանակում է, որ հայերը ապստամբում էին թուրքերի դեմ, որովհետև իրենց կյանքի համար վախենում էին: Դա չի՞ նշանակում, որ Օսմանյան կառավարությունը զգում էր, որ նրանց պետք է տեղահանի, որովհետև նրանց հավատարմությանը չէր վստահում:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես չգիտեմ, պարոն:

ՀԱՐՑ. Եթե հայերը տեղահանվում էին, դա նշանակո՞ւմ է, որ նրանք չէին վայելում Օսմանյան կառավարության վստահությունը:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես չգիտեմ:

ՀԱՐՑ . Վկան ո՞ր տարում Տրապիզոն վերադարձավ:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես վերադարձա 1917-ին:

ՀԱՐՑ . Նա այնտե՞ղ էր, երբ ռուսները վերադարձան: Վկան գիտե՞, որ հայ ելուզակներ թուրքերի սպանեցին այն ժամանակ, երբ ռուսները Տրապիզոնի մոտերքն էին:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես Տրապիզոնում մնացի 15 օր և նման բան չլսեցի:

ՀԱՐՑ. Վկան գիտե՞, որ հայերը Չևիզլիկ մզկիթը եկեղեցիի վերածեցին:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ:

ՀԱՐՑ. Նա գիտե՞ Մոլակա, Մաչկա և Իպսիլա գյուղերը:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես նրանց անուններն եմ միայն լսել:

ՀԱՐՑ. Ի՞նչ տեսակ մարդիկ էին զինվորական սպաները, որոնց նա տեսավ տեղահանման ժամանակ:

ՊԱՏԱՍԽԱՆ. Սպաները ուսում առած մարդիկ էին, բայց ժանդարմները՝ անգրագետ:

ՀԱՐՑ. Իր վրա հարձակում եղե՞լ է:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ:

ՀԱՐՑ. Տրապիզոնցի քանի՞ հայ է սպանվել:

ՊԱՏԱՍԽԱՆ. Չգիտեմ:

ՀԱՐՑ. Վկան լսե՞լ է, որ հայեր կոտորած լինեն հայերի:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ:

ՀԱՐՑ. Երբ ռուսները գրավեցին Տրապիզոնը, հայերը թուրքերին կոտորեցի՞ն:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես չգիտեմ, պարոն:

Դատախազ Ռիկատսոն Հաթը ավարտեց հարցաքննությունը և դատապաշտպան Խոսրովյան էֆենդին վկային կրկին հարցաքննեց.

ՀԱՐՑ. Տրապիզոնում հայկական որևէ ապստամբություն տեղի ունեցա՞վ:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ:

ՀԱՐՑ. Տեղահանության ժամանակ հայերը որևէ դիմադրություն ցույց տվեցի՞ն, թե՞ հանձնվեցին ոչխարների նման:

ՊԱՏԱՍԽԱՆ. Նրանք ենթարկվեցին առանց դիմադրության:

ՀԱՐՑ. Եթե քաղաքում մի հատուկ կոմիտե լիներ, հայերը կկարողանա՞ին պաշտպանվել:

ՊԱՏԱՍԽԱՆ. Անշուշտ:

ՀԱՐՑ. Գիտե՞ս, որ Ստամբուլի Ազգային Ժողովի պատգամավորները ընտրվում էին Միություն ու Առաջադիմություն և Դաշնակցություն միությունների հավանությամբ:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո:

ՀԱՐՑ. Տրապիզոնի բնակչության մեծ մասը հայե՞ր էին, թե՞ թուրքեր:

ՊԱՏԱՍԽԱՆ. Թուրքեր:

ՀԱՐՑ. Ո՞վ էր պատասխանատու իրավական սիստեմի, ապահովության և զինվորականության համար:

ՊԱՏԱՍԽԱՆ. Թուրքերը:

Հետո Բարսամյան էֆենդին հետևյալ հարցերը տվեց.

ՀԱՐՑ. Գիտեի՞ր, թե պատերազմը որտեղ էր տեղի ունենում:

ՊԱՏԱՍԽԱՆ. Չգիտեմ:

ՀԱՐՑ. Գիտեի՞ր, որ էդրինեում պատերազմ է:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ:

ՀԱՐՑ. Էդրինեն պատերազմի գոտի՞ էր:

ՊԱՏԱՍԽԱՆ. Չգիտեմ:

Հետո Հայդար Ռիֆատ Բեյը հետևյալ հարցերը տվեց.

ՀԱՐՑ. Ուզո՞ւմ են հայերը ազատ և անկախ լինել, ինչպես ամեն մի խելացի ազգ:

ՊԱՏԱՍԽԱՆ. Նրանք ազատություն են ուզում, բայց ես չգիտեմ, թե նրանք անկախություն ուզո՞ւմ են թե՞ ոչ:

ՀԱՐՑ. Կուզենայի՞ն նրանք ունենալ մի Հայաստան, թեկուզ փոքրիկ, որն ազատ լիներ:

ՊԱՏԱՍԽԱՆ. Չգիտեմ:

ՀԱՐՑ. Վկան գիտե՞, որ հայերը Արևելյան Անատոլիայի վեց նահանգների նկատմամբ պահանջ ունեին:

ՊԱՏԱՍԽԱՆ. Չգիտեմ:

ՀԱՐՑ. Նա լսե՞լ է, թե հայ հերոսները ի՞նչ արեցին Զեյթունում, Մարաշում և Անատոլիայի սրտում:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես չեմ լսել:

ՀԱՐՑ. Նա գիտե՞, որ այս երկրում սահմանադրություն կա:

ՊԱՏԱՍԽԱՆ. Չգիտեմ:

ՀԱՐՑ. Նա նաև չգիտի՞, որ Ազգային Ժողով կա:

ՊԱՏԱՍԽԱՆ. Գիտեմ:

ՀԱՐՑ. Նա չգիտի՞, որ մի կառավարությունը, իմանալով հանդերձ, որ գոյություն ունի մի խումբ, որն ուզում է անջատել երկրի տարածքի մի մասը և չի կանգնեցրել այդ շարժումը, պիտի մեղադրվեր դավաճանության մեջ և

նրա նախարարները մահվան պիտի դատապարտվեին:

ՊԱՏԱՍԽԱՆ. Չգիտեմ:

ՀԱՐՑ. **Կառավարությունները իրավունք ունե՞ն իրենց քաղաքացիների մոտ պահվող զենքը բռնագրավել, անկախ պատճառից և նպատակից:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես չգիտեմ:

ՀԱՐՑ. **(*Նա ասաց,* որ) երբ թուրքերը ռուսների առաջ նահանջեցին, հայերը մնացին այնտեղ որտեղ էին: Եթե նրանցից զենքը վերցված չլիներ, թրքական բանակի նահանջի գիծը վտանգված չէ՞ր լինելու:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես չգիտեմ:

ՀԱՐՑ. **Վկան գիտե՞, որ տեղահանությունները կատարվեցին՝ հենվելով մի օրենքի վրա, որն ընդունվեց պառլամենտում, որտեղ հայերը պատգամավորներ ունեին, և որ հայերը մասնակցեցին այդ որոշման քվեարկությանը:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես չգիտեմ:

ՀԱՐՑ. **Նա գիտե՞, որ հայկական տների խուզարկությունների ժամանակ ռումբեր և գնդացիրներ հայտնաբերվեցին:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Չգիտեմ:

ՀԱՐՑ. **Նա գիտե՞, որ հայերը հարձակվեցին Բաբիալի վրա (Սաբլայմի նավահանգիստ) և որ նրանք ներխուժեցին Օսմանյան բանկ:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Չգիտեմ:

ՀԱՐՑ. **Բացի պատերազմի ժամանակ տեղահանման հրամանից (ինչպես կատարվեց նաև Ռուսաստանում) թուրքերը երբևիցե կոտորե՞լ են հայերին:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ, նրանք միայն դժվարություններ էին հարուցում անձնագրեր տալու ժամանակ:

ՀԱՐՑ. **Ո՞վ էր անհանգստացնում կանանց:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ժանդարմները և զինվորական համազգեստով մարդիկ: Ես հիշում եմ միայն մեկի անունը՝ Մեհմեդ:

ՀԱՐՑ. **Խմբին քանի՞ ժանդարմ էր ուղեկցում:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Շուրջ 500: Երբ Քեմահ հասանք, այնտեղ կառավարական պաշտոնյաներին բողոքեցինք կատարված կողոպուտի մասին: Հետաքննություն սկսվեց:

ՀԱՐՑ. **Ինչո՞ւ չբողոքեցիք բռնաբարումների մասին:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Մենք առիթը չունեցանք այդ մասին բողոքելու: Մենք թաքնվում էինք, հույս ունենալով, որ կկարողանանք փախչել:

ՀԱՐՑ. **Այստեղ հիշատակելու համար նա պետք է տեղյակ լիներ այդ բողոքի մասին:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայցվորուհիներից մեկը հորաքույրս էր:

ՀԱՐՑ. **Այդ դեպքում ինչո՞ւ ոչ մեկը չբողոքեց բռնաբարված լինելու մասին:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես չգիտեմ:

ՀԱՐՑ. **Որևէ կրոն հավանություն տալի՞ս է բռնի ամուսնությանը:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո:

ՀԱՐՑ. **Ի՞նչ աստիճան ուներ այն ժանդարմ սպան, որն ուզում էր ձեր քրոջ հետ ամուսնանալ, երբ նրանք Ադրբեջանում էին:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Նա լեյտենանտ էր:

ՀԱՐՑ. **Դու ասացիր, որ Սադիկ Բեյը լավ մարդ էր: Սադիկ Բեյը կպաշտպանե՞ր ձեզ առանց կառավարության հավանությանը:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Նա լայն իրավասություններ ուներ: Կառավարությունը նրան

կանգնեցնել չէր կարող:

ՀԱՐՑ. **Վկայի հայրը ի՞նքն է ստեղծել իր հարստությունը:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ, նա այն ժառանգել է իր ընտանիքից:

ՀԱՐՑ. **Այն մարդիկ, որ այդ հարստությունը ստեղծել էին, դա արել էին Միացյալ Նահանգերո՞ւմ, Ավստրիայո՞ւմ, թե՞ Թուրքիայում:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Նրանք դա արել էին Թուրքիայում:

ՀԱՐՑ. **Պատերազմից առաջ ո՞վ էր ավելի հարուստ, հայե՞րը թե՞ թուրքերը:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Թուրքերը:

ՀԱՐՑ. **Նա գիտե՞, որ հայերը Ստամբուլում ունեին Ազգային Խորհուրդ և որ նրանք ներկայացուցիչներ ունեին պառլամենտում: Դրանով հայերը թուրքերից ավելի արտոնյալ չէի՞ն դառնում:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, դա ճիշտ է:

ՀԱՐՑ. **Վկան լսե՞լ է նման բան մի որևէ այլ պետությունում: Նա ասաց, որ Ազգային Խորհրդի մեջ երեք քաղաքական կուսակցություններ կային և յուրաքանչյուրն ուներ իր թերթը, որը ծառայում էր որպես իրենց մամուլի օրգանը: Ի՞նչ էին այդ թերթերի անունները:**

ՊԱՏԱՍԽԱՆ. «Ազատամարտ», «Բյուզանտիոն»: Երրորդի անունը չեմ հիշում:

ՀԱՐՑ. **Վկան տեսե՞լ է թուրքերին՝ կանանց և երեխաների խողխողելիս:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես նրանց սպանվելիս չեմ տեսել, տեսել եմ նրանց դիակները:

ՀԱՐՑ. **Երբ վկան նկարագրում էր իր հետ կատարված դեպքերը, նա չնշեց, որ դիակներ է տեսել: Տիկինը պատերազմից առաջ թուրքերի կողմից հալածված եղե՞լ է:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ:

ՏԱՍՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՎԿԱ

Հայ գրող Երվանդ Օտյան էֆենդին երդվելուց հետո պատասխանեց պաշտպան փաստաբան Խոսրովյան էֆենդիի հարցերին.

ՀԱՐՑ. **Դուք որտե՞ղ էիք 1914-ին և 1915-ին:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես Ստամբուլում էի:

ՀԱՐՑ. **Որտե՞ղ էիք պատերազմի մյուս տարիներին:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Տեղահանված էի:

ՀԱՐՑ. **Ձեզ նման ուրիշ մտավորականներ նույնպե՞ս տեղահանված էին:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես գիտեմ, որ բազմաթիվ այլ մտավորականներ նույնպես տեղահանվեցին 1915-ին, մինչև իմ տեղահանումը:

ՀԱՐՑ. **Քեզ սկզբում ո՞ւր ուղարկեցին:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Իմ տնից ինձ տարան Շիշլիի (Ստամբուլ) ոստիկանատուն: Քաղաքական բաժնում վեց օր պահելուց հետո, ինձ ուղարկեցին Քոնիա:

ՀԱՐՑ. **Դու մենա՞կ էիր:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ինձ երկու ընկեր էին ուղեկցում:

ՀԱՐՑ. **Քոնիայում քեզ ի՞նչ արեցին:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այնտեղ ինձ մի օր բանտում պահեցին, հետո ուղարկեցին Էրեգլի:

ՀԱՐՑ. **Էրեգլիում ուրիշ տեղահանված հայերի հանդիպեցի՞ր:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այնտեղ վրանների տակ 5,000-ից 6,000 փախստականներ կային:
ՀԱՐՑ. Այդ փախստականները որտեղի՞ց էին բերվել:
ՊԱՏԱՍԽԱՆ. Էսքիշեհիր, Ադաբազար, Իզմիթ, Արսլան Բեյ և Քարատաղ շրջաններից:
ՀԱՐՑ. Նրանց մեջ երեխաներ կայի՞ն:
ՊԱՏԱՍԽԱՆ. Մեծամասնությունը կանայք, երեխաներ և ծեր մարդիկ էին:
ՀԱՐՑ. Ի՞նչ էր պատահել տղամարդկանց և ավելի երիտասարդների հետ:
ՊԱՏԱՍԽԱՆ. Զինվորական տարիք ունեցողներին վերցրել էին բանակ: Մյուսները կորել էին տեղահանության ընթացքում:
ՀԱՐՑ. Դու Էրեգլիում մնացի՞ր, թե՞ քեզ մի այլ տեղ ուղարկեցին:
ՊԱՏԱՍԽԱՆ. Ես Էրեգլիում մնացի 10 օր: Հետո ինձ ուղարկեցին Փոզանտի:
ՀԱՐՑ. Փոզանտի ուղարկվածները բոլորը տեղ հասա՞ն:
ՊԱՏԱՍԽԱՆ. Մեծամասնությունը հասավ կենդանի: Բայց կային հիվանդներ և հղի կանայք: Նրանք մահացան:
ՀԱՐՑ. Ինչքա՞ն մնացիք Փոզանտիում և ի՞նչ տեսաք այնտեղ:
ՊԱՏԱՍԽԱՆ. Փոզանտիում մեկ օր մնալուց հետո ինձ ուղարկեցին Տարսուս:
ՀԱՐՑ. Տարսուսի մեջ հայ փախստական տեսա՞ր:
ՊԱՏԱՍԽԱՆ. Տարսուսից մեկ կամ երկու ժամվա հեռավորության վրա կա Քյուրեք կայարանը, որտեղ վրանների տակ ապրում էին 5,000-ից 6,000 փախստականներ:
ՀԱՐՑ. Այդ փախստականները որտեղի՞ց էին բերվել:
ՊԱՏԱՍԽԱՆ. Նրանք տեղահանվածներ էին մեծ մասամբ Բահջեչիքից և Ադաբազարից: Ոմանք Քոնիայից էին, նույնիսկ Էդիրչնեից: Տարսուսում մնացի 12 օր: Հետո ես փախա քաղաք ու թաքնվեցի: Տարսուսում մնացի 7 օր (*ինչպես հրատարակված է*): Սակայն այն մարդիկ, որ ինձ թաքցրել էին, սկսեցին սպառնալիքներ ստանալ: Ինձ Օսմանիե ուղարկեցին Գարեգին անունով մի քուսհանայի հետ, որը Քոնիայի պատվիրակ էր: Օսմանիեյում շուրջ 9 օր մնալուց հետո մեզ ուղարկեցին Իսլահիե:
ՀԱՐՑ. Իսլահիեում որևէ Հայ փախստական տեսա՞ր:
ՊԱՏԱՍԽԱՆ. Իսլահիեում շատ ավելի մեծ թվով կային: Այնտեղ 40,000-ից 50,000 հայ փախստականներ կային:
ՀԱՐՑ. Իսլահիեի փախստականները ուրի՞շ այլ շրջաններից էին, քան դու արդեն նշել ես:
ՊԱՏԱՍԽԱՆ. Այո: Նրանք փախստականներ էին Բիլեչիկից, Իզմիրից, Քաստամանուից, Այդընից, Անկարայից, Մուդանյայից, Բանդըրմայից և Թեքիրդաղից:
ՀԱՐՑ. Հետո ձեզ ո՞ւր ուղարկեցին և ի՞նչ պատահեց:
ՊԱՏԱՍԽԱՆ. Իսլահիեում որոշ ժամանակ մնալուց հետո, Քոնիայի պատվիրակը կարողացավ արտոնագիր ձեռք բերել: Մենք միասին գնացինք Հալեպ:
ՀԱՐՑ. Հալեպում Տրապիզոնից եկած հայերի հանդիպեցի՞ք:
ՊԱՏԱՍԽԱՆ. Ես Տրապիզոնից եկած շատ կանանց տեսա: Միակ տղամարդը, որ տեսա, Արաբյան անունով մի մարդ էր:
ՀԱՐՑ. Քանի՞ տարեկան էր նա:
ՊԱՏԱՍԽԱՆ. Մոտ 70 տարեկան:
ՀԱՐՑ. Ի՞նչ պատահեց այդ մարդուն:
ՊԱՏԱՍԽԱՆ. Ըստ երևույթին, նա իր կնոջ հետ ուղարկվեց Դամասկոս, որտեղ և մահացավ տիֆից:
ՀԱՐՑ. Հալեպում հայ մտավորականների հանդիպեցի՞ր:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո: Ուսուցիչների, փաստաբանների և բժիշկների: Բժիշկ Պողոսյանը (*հաջորդ վկան*) նույնպես նրանց թվում էր:
ՀԱՐՑ. Երբ դու Հալեպ հասար, Զոհրապը և Վարդգեսը (առաջատար *Հայ մտավորականներ և Օսմանյան Ազգային Ժողովի պատվիրակներ*) արդեն սպանվա՞ծ էին:
ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, նրանք մահացած էին:
ՀԱՐՑ. Որտե՞ղ էին նրանք սպանված:
ՊԱՏԱՍԽԱՆ. Նրանց տարել էին երկրի խորքը և սպանել:

Դատական ատյանը միջամտեց.

ՀԱՐՑ. Վկան իր աչքերո՞վ տեսավ նրանց սպանվելը:
ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ, ես լսեցի:

Պաշտպան փաստաբանը վերսկսեց իր հարցաքննությունը.

ՀԱՐՑ. Հալեպից հետո ո՞ւր գնացիր:
ՊԱՏԱՍԽԱՆ. Մեզ ճամփու դրեցին դեպի Դեր-էլ-Զոր: Ճանապարհին, մի քանի հոգու հետ փախանք և գնացինք դեպի Համա:
ՀԱՐՑ. Համան Հալեպից ինչքա՞ն է հեռու:
ՊԱՏԱՍԽԱՆ. Գնացքով վեցից յոթ ժամ:
ՀԱՐՑ. Համայում հայ փախստականներ կայի՞ն:
ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, 5,000-ից 6,000 փախստականներ կային:
ՀԱՐՑ. Ինչպիսի՞ն էր փախստականների վիճակը:
ՊԱՏԱՍԽԱՆ. Փախստականների մեծ մասը Համայում ծայրահեղ թշվառ պայմաններում էր: Բայց ոմանք հաստատվել էին այնտեղ:
ՀԱՐՑ. Այդ փախստականները մնացի՞ն այնտեղ մինչև պատերազմի վերջը:
ՊԱՏԱՍԽԱՆ. Այո:
ՀԱՐՑ. Դեր-էլ-Զորը Հալեպից ինչքա՞ն է հեռու:
ՊԱՏԱՍԽԱՆ. Մեր ճամփորդությունը տևեց 6 օր՝ կառքով և 19 օր՝ քայլելով: Տասնչորս հոգի էինք, յոթը Հալեպից, յոթը Համայից:
ՀԱՐՑ. Դեր-էլ-Զորի մեջ քանի՞ հայ փախստական կար:
ՊԱՏԱՍԽԱՆ. Դեր-էլ-Զորի մեջ 2,000 հայեր կային, մեծ մասամբ կանայք: Ես լսել եմ, որ Դեր-էլ-Զոր է աքսորվել 200,000 հոգի:
ՀԱՐՑ. Ո՞վ էր Դեր-էլ-Զորի կառավարիչը:
ՊԱՏԱՍԽԱՆ. Զեքի փաշան:
ՀԱՐՑ. Հետո ի՞նչ տեղի ունեցավ:
ՊԱՏԱՍԽԱՆ. Երբ Համայում էինք, ստիպեցին փոխել մեր կրոնքը:
ՀԱՐՑ. Ինչպե՞ս փոխեցիր կրոնքդ:
ՊԱՏԱՍԽԱՆ. Դամասկոսից եկավ Միություն և Առաջադիմություն կուսակցության ներկայացուցիչ Քեմալ Բեյը: Նա ասաց, ով որ հրաժարվի մուսուլման դառնալուց, պիտի սպանվի: Հրաժարվողներին հավաքեցին մի վայր, որի անունը այժմ չեմ հիշում:
ՀԱՐՑ. Ինչքա՞ն մնացիր Դեր-էլ-Զորում:
ՊԱՏԱՍԽԱՆ. Այնտեղ 8 օր մնալուց հետո, ինձ ուղարկեցին Ալ-Բասուրա՝ անապատի մեջ: Այնտեղ մնացի երեք ամիս: Երբ այնտեղ հասա, արդեն հայեր

գրեթե չէին մնացել: Ովքեր կենդանի էին մնացել, ասացին, որ շուրջ 10,000 հոգի կոտորվել են: Ինձ ետ տարան Դեր-էլ-Զոր, ուր մնացի հինգ ամիս: Ես շատ հայերի գիտեմ, որոնք Դեր-էլ-Զորում էին, իսկ այժմ Ստամբուլում են: Հետո Դեր-էլ-Զորից փախա և 19 օր քայլելուց հետո հասա Հալեպ: Հալեպում նորից ձերբակալվեցի: Այնտեղ մեկ ամիս բանտում մնալուց հետո ինձ ուղարկեցին Քոնյա: Քոնյայում մնացի 10 օր: Հետո ինձ ուղարկեցին Սուլթանիա: Այնտեղ մնացի մինչև զինադադարը:

ՀԱՐՑ. **Դու տեղյա՞կ ես, որ Անդոնյան անունով մեկը Միություն և Առաջադիմություն կոմիտեին պատկանող որոշ փաստաթղթեր էր ձեռք գցել:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո: Նա ինձ այդ մասին ասաց, երբ Հալեպում էինք:

Պաշտպան փաստաբանը դատական ատյանին տվեց փաստաթուղթը և այդ փաստաթղթին վերաբերող մի գիրք: Այդ գիրքը՝ «Նեյլ Բեյի հուշերը» խորագրով է, որի հեղինակը Արամ Անդոնյանն էր: Նրանում հրատարակել էր իր հուշերը այն մասին, թե ինչ է տեսել տեղահանության ժամանակ:

Պաշտպան փաստաբանը շարունակեց իր հարցաքննությունը.

ՀԱՐՑ. **Ո՞րն էր պատերազմի ժամանակ հայերի վրա գործադրված ծանշումների պատճառը:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Դա արվեց ոչ միայն հայերի, այլև բուլղարների, ալբանների, սերբերի, արդարև՝ ամեն մեկի նկատմամբ, ով նրանց հակադրվում էր:

ՀԱՐՑ. **Կարո՞ղ է թրքական կառավարությունը հայերի տեղահանությունը արդարացնել ռազմական հողի վրա:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես անկարող եմ լրիվ գնահատական տալ այդ մասին: Միայն սահմանամերձ տեղահանությունը կարող էր հիմք ծառայել նման ծայրահեղության համար: Բայց սահմանից հեռու շրջաններից մարդկանց տեղահանման համար չի կարող բացատրություն լինել, մանավանդ, երբ այն կիրառվում է անխտիր՝ կանանց, երեխաների և թույլ մարդկանց նկատմամբ:

ՀԱՐՑ. **Պատերազմի ժամանակ որևէ հեղափոխական շարժում կա՞ր, որում հայերը մեծամասնություն կազմեին:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես այդպիսի բան չեմ հիշում: Համենայն դեպս, տեղահանվողները ինքնապաշտպանության համար չապստամբեցին:

ՀԱՐՑ. **Հայերի շրջանում գաղտնի կոմիտեներ ու միություններ կայի՞ն:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Սահմանադրական կարգի մասին հայտարարությունից հետո բոլոր գաղտնի միությունները մակերես ելան և արձանագրվեցին կառավարության մոտ:

ՀԱՐՑ. **Կարո՞ղ ես այդ կուսակցությունների անունները տալ:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Դաշնակցություն, Հնչակյան, Ռամկավար, Ազատական:

ՀԱՐՑ. **Ունենալով կառավարության հավանությունը, այդ կուսակցությունները ունեի՞ն իրենց ներկայացուցիչները Օսմանյան Ազգային ժողովի մեջ:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, ունեին:

ՀԱՐՑ. **Ովքե՞ր էին Դաշնակցության ներկայացուցիչները:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Համբարձում Բոյաջյանը:

ՀԱՐՑ. **Ռամկավարները Ազգային ժողովի մեջ ներկայացուցիչ ունեի՞ն:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես չեմ հիշում: Վստահ չեմ: Մեկը կար Դաղավարյան անունով,

բայց չգիտեմ, թե նա ռամկավա՞ր պատգամավոր էր: Զոհրապը նույնպես դաշնակցական պատգամավոր էր:

ՀԱՐՑ. **Այդ միությունը ակումբ ունե՞ր:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, ուներ:

ՀԱՐՑ. **Թերթեր ունե՞ր: Ի՞նչ էր դրանց անունները:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, ուներ: Դաշնակները ունեին «Ազատամարտը»: Այդ թերթը այժմ էլ գոյություն ունի «Ճակատամարտ» անունով: Հնչակյանները Ստամբուլի մեջ երկու թերթ ունեին: Մեկը կոչվում էր «Մուրճ», մյուսը՝ «Առավոտ»: Երկու այլ թերթեր ևս գոյություն ունեին. մեկը կոչվում էր «Կոհակ», իսկ մյուսը՝ «Նոր Աշխարհ»: Այս վերջինն այլևս գոյություն չունի:

ՀԱՐՑ. **Ի՞նչ կարծիք ունես ներկա թերթերի և կուսակցությունների կապի մասին:**

ՊԱՏԱՍԽԱՆ. «Ազատամարտը» փոխարինվեց «Ճակատամարտով»: Այս թերթը այժմ դաշնակների մամուլի օրգանն է: Հնչակներն այժմ հրատարակում են «Երկիրը»: «Ժողովրդի Ձայնը» ռամկավարների թերթն է: «Առավոտը» ազատականներինն է:

ՀԱՐՑ. **Այս կուսակցությունները ներկայացուցիչներ ունեին կառավարության մեջ: Նրանք Հայկական Ազգային Խորհրդի և Պատրիարքարանի ժողովի մեջ նույնպե՞ս ներկայացուցիչներ ունեին:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, այն ժամանակ ունեին և այժմ էլ ունեն:

ՀԱՐՑ. **Վկան որևէ միության անդամ եղե՞լ է:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո:

ՀԱՐՑ. **Այդ միություններից ո՞րն է աշխատել Միություն և Առաջադիմություն ընկերության հետ:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Դաշնակցություն միությունը:

ՀԱՐՑ. **Դաշնակցություն միությունը և Միություն ու Առաջադիմություն կուսակցությունը ընտրությունների ժամանակ համագործակցեցի՞ն:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, այդ երկու ընկերությունները համաձայնություն ունեին:

ՀԱՐՑ. **Դաշնակցություն ընկերակցությունը որևէ ձևով օժանդակո՞ւմ էր Միություն և Առաջադիմություն ընկերակցությանը:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այն շատ օգտակար եղավ հատկապես 1909-ի մարտի հեղափոխության ժամանակ:

ՀԱՐՑ. **Ուրեմն երկու կուսակցությունները միմյանց հետ շատ բարեկամական հարաբերությունների մե՞ջ էին:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո:

ՀԱՐՑ. **Դաշնակ պատգամավորները այժմ կենդանի՞ են:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այն ժամանակ պատգամավոր եղածներից և ոչ մեկը այժմ կենդանի չէ:

ՀԱՐՑ. **Ի՞նչ պատահեց նրանց հետ, նրանք մահացա՞ն:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Դոկտոր Փաշայանը և Վարդգեսը տեղահանվեցին ու սպանվեցին: Նրանց հետ Վահրամյան անունով մեկ ուրիշը ևս կար:

ՀԱՐՑ. **Դոկտոր Դաղավարյանը կենդանի՞ է:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ, կենդանի չէ:

ՀԱՐՑ. **Ի՞նչ պատահեց նրան:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Նրան սպանեցին:

Դատական ատյանը հետևյալ հարցը տվեց.

ՀԱՐՑ. Որտեղի՞ց գիտես:
ՊԱՏԱՍԽԱՆ. Զինադադարից հետո թրքական թերթերը նրա սպանության մասին գրեցին մանրամասնորեն:

Պաշտպան փաստաբանը վերսկսեց իր հարցաքննությունը.

ՀԱՐՑ. Զինադադարից հետո թրքական թերթերը նրա սպանության մասին ափսոսանք կամ ցավակցություն հայտնեցի՞ն:
ՊԱՏԱՍԽԱՆ. Թուրք մի պատգամավոր կառավարությունից բացատրություն պահանջեց: Սակայն մեծամասնությունը անտեսեց այդ հարցը:
ՀԱՐՑ. Ազգային ժողովի մեջ կա՞ր որևէ հայ պատգամավոր, որը փաստաբան լիներ:
ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, Գրիգոր Զոհրապը:
ՀԱՐՑ. Ո՞ւր է նա այժմ:
ՊԱՏԱՍԽԱՆ. Նրան ևս սպանեցին:

Դատական ատյանը միջամտեց.

ՀԱՐՑ. Որտեղի՞ց գիտես:
ՊԱՏԱՍԽԱՆ. Ամուսնու *(ծերբակալվելուց)* երեք ամիս անց կինը հարցում արեց իր ամուսնու առողջական վիճակի վերաբերյալ: Պատասխանեցին, թե նա ճանապարհին մահացել է:

Պաշտպան փաստաբանը վերսկսեց իր հարցաքննությունը.

ՀԱՐՑ. Դու Հայկական Ազգային ժողովի անդա՞մ ես:
ՊԱՏԱՍԽԱՆ. Այո:
ՀԱՐՑ. Երբվանի՞ց:
ՊԱՏԱՍԽԱՆ. 1909-ից:
ՀԱՐՑ. Որո՞նք են Հայկական Ազգային ժողովի պատասխանատվությունները:
ՊԱՏԱՍԽԱՆ. Նրա պատասխանատվությունն է հոգալ համայնքի քաղաքական և ներքին գործերը, կազմակերպել Պատրիարքի ընտրությունները Ստամբուլում ու երկրում:
ՀԱՐՑ. Քո վկայությունից երևում է, որ հայերը պատգամավորներ էին ուղարկում Ազգային ժողովին և իրենց սեփական Խորհրդին: Այդ մարդիկ նույն անհատնե՞րն էին:
ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, բայց դա մի մեծ բան չէր: Հույներն ու հրեաները նույնպես ունեին *(իրենց սեփական խորհուրդները)*:
ՀԱՐՑ. Օսմանյան կառավարությունը ազատ ղեկավարության իրավունք տալի՞ս էր Հայկական Ազգային Խորհրդին:
ՊԱՏԱՍԽԱՆ. Սուլթան Աբդուլհամիդի կառավարման տասներկու տարիների ընթացքում Հայկական Ազգային Խորհուրդը փակ էր:
ՀԱՐՑ. Ի՞նչ պատահեց պատերազմի ընթացքում:
ՊԱՏԱՍԽԱՆ. Այն փակ մնաց պատերազմի ամբողջ ընթացքում:

Պաշտպան փաստաբան Խոսրովյան էֆենդին ավարտեց հարցաքննությունը. Դատախազ Ռիկատսոն Հաթը սկսեց վկայի խաչաձև հարցաքննությունը.

ՀԱՐՑ. Վկան ասաց, որ նրան Ստամբուլից տեղահանել են: Ինչո՞ւ է նա տեղահանվել:
ՊԱՏԱՍԽԱՆ. Ես չգիտեմ:
ՀԱՐՑ. Կառավարության կողմից տեղահանվածները պարզապես հեղափոխության կողմնակիցներ լինելու համա՞ր տեղահանվեցին:
ՊԱՏԱՍԽԱՆ. Ես համաձայն եմ, որ կառավարությունը տեղահանեց այն հայերին, որոնց կասկածում էր:
ՀԱՐՑ. Երբևիցե որպես կառավարական պաշտոնյա ծառայե՞լ ես:
ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ:
ՀԱՐՑ. Հնարավո՞ր է, որ կառավարությունը անհրաժեշտ համարեց հայերին պատերազմական գոտուց տեղահանել ռազմական նկատառումներով: Եթե այդպես է, Օսմանյան կառավարությունը այդ արտակարգ դրության պայմաններում բնականաբար պետք է բոլոր միջոցները ձեռք առներ:
ՊԱՏԱՍԽԱՆ. Այդ պատճառաբանությունը չի կարող ընդհանրացվել ամբողջ հայ ազգի վերաբերյալ: Դա մի բան է, որը կարող էր ազդել մի քանի անհատների վրա: Եթե 1,000 մարդ միացավ ռուսական բանակին, ապա 100,000-ը ծառայեց Օսմանյան կառավարությանը:
ՀԱՐՑ. Բալկանյան պատերազմի ժամանակ էդիրնեում ու Բալկաններում որևէ բան արվե՞ց Օսմանյան կառավարության դեմ:
ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ, ես ոչինչ չգիտեմ:
ՀԱՐՑ. Վկան գիտե՞, որ հայերը փորձեցին խնդիրներ ստեղծել՝ օգտվելով Օսմանյան կառավարության թույլ վիճակներից:
ՊԱՏԱՍԽԱՆ. Ես չգիտեմ:
ՀԱՐՑ. Նա գիտե՞, որ Ռուսաստանում կա հայերից կազմված մի զինվորական ուժ, որը կռվեց Օսմանյան կառավարության դեմ:
ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, գիտեմ: Նույն դրությունը գոյություն ուներ ֆրանսիական և բրիտանական բանակներում նույնպես:
ՀԱՐՑ. Նա գիտե՞, որ ռուսական բանակի վրա հենված այդ անկանոնների կողմից թուրքական քաղաքների և ժողովրդի դեմ կատարված գործողությունները անցան ամեն տեսակ ընդունելի սահմանները:
ՊԱՏԱՍԽԱՆ. Ես լսել եմ, որ Անատոլիայում ռուսական բանակի միավորումների մեջ ծառայող հայերը ջարդեր կազմակերպեցին, իբրև իրենց վրեժը՝ թուրքերի կողմից հայերի ոչնչացման դեմ:
ՀԱՐՑ. Վկան գիտե՞, որ երբ հունական բանակը գրավեց Իզմիրը, զինադադարից հետո հայերը օգնեցին հույներին՝ թուրքերին ջարդելու գործում:
ՊԱՏԱՍԽԱՆ. Չեմ կարծում որ այդպես է: Հավանաբար ես չգիտեմ:
ՀԱՐՑ. Մի՞թե տրամաբանական է, որ այսպիսի խելացի ու մտավորական անձը դա չիմանա, կամ չիմանա տեղահանման պատճառը:
ՊԱՏԱՍԽԱՆ. Չգիտեմ: Գուցե կառավարությունը ինձ նույնպե՞ս կասկածում էր:
ՀԱՐՑ. Ի՞նչ կասկած կարող էր ունենալ քո վերաբերյալ:
ՊԱՏԱՍԽԱՆ. Իմ մեջ միշտ թշնամի էին տեսնում, որովհետև Միացյալ Ուժերի բարեկամն եմ եղել:
ՀԱՐՑ. Դա նշանակում է, որ կառավարությունը հայերին տեղաշարժում

էր, որովհետև նրանց չէ՞ր վստահում:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, կարծում եմ:

ՀԱՐՑ. **Պատերազմից առաջ թրքական քաղաքների հայկական տներում թուրքերի դեմ օգտագործելու նպատակով պայթուցիկներ և զինամթերք կա՞ր թաքցրած:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայերը զինված էին հիմնականում Միություն և Առաջադիմություն կառավարության կողմից:

ՀԱՐՑ. **Ո՞րն է այդ պատասխանի իմաստը: Ումի՞ց պիտի պաշտպանվեին իրենք:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Միություն և Առաջադիմություն կուսակցությունը հայերին զինեց Աբդուլ Համիդ 2-րդի տիրապետության ժամանակ:

ՀԱՐՑ. **Վկան գիտե՞, որ օսմանյան հայերի մի մեծ հատված ծառայեց ռուսական բանակում:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, լսել եմ:

ՀԱՐՑ. **Երբ օսմանյան հպատակը ծառայի թշնամու բանակում, նա դավաճան չի՞ դառնում:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, համաձայն եմ դրա հետ:

ՀԱՐՑ. **Վկան իր ցուցմունքում ասաց, որ Օսմանյան կառավարությունը դարերով հետապնդում էր հայերին ոչնչացնելու քաղաքականությունը:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ թե միայն հայերի, այլ բոլոր քրիստոնյաների:

ՀԱՐՑ. **Այդ դեպքում ինչո՞ւ հայերին չոչնչացրեց եվրոպական ինտերվենցիայից տարիներ առաջ:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այդ քաղաքականությունը ի հայտ եկավ Միություն և Առաջադիմություն կուսակցության դեկավարության ընթացքում:

ՀԱՐՑ. **Ոչ, դա այն չէ, ինչ նա ասել էր: Նա ասաց, որ թուրքերը դարերով ուզում էին ոչնչացնել հայերին: Ինչո՞ւ թուրքերը հայերին չոչնչացրին 50, կամ 100 տարի առաջ, երբ ավելի ուժեղ էին: Ինչո՞ւ էին նրանք սպասում:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես չգիտեմ: Քաղաքականությունը սկսվեց Միություն և Առաջադիմություն կուսակցության ժամանակ: Չելալ Նուրի բեյի գրած գիրքը քննադատեց հաղթողին *(Սուլթան Մեհմեդին)* այն բանի համար, որ նա թույլ տվեց քրիստոնյաները գոյատևեն:

ՀԱՐՑ. **Ես պնդում եմ իմ հարցի վրա: Վկային նորից հարցրեք:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես ասացի դարերով, բայց ես նկատի ունեի, որ թրքական կառավարությունը դարերով հետապնդում էր տարբեր խմբերի ոչնչացման քաղաքականությունը:

ՀԱՐՑ. **Հայերը այդ խմբերի մեջ չէի՞ն:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Նրանք հայերին սպանում էին 60 տարի առաջ ևս:

ՀԱՐՑ. **Եթե սպանեին կամ ոչնչացնեին *(հայերին)* 100 տարի առաջ, ոչ ոք որևէ բան չէր ասի Օսմանյան կառավարությանը: Այդ դեպքում ինչո՞ւ Օսմանյան կառավարությունը այդ բանը չարեց այն ժամանակ:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայկական հարցը երևան եկավ Բեռլինի համաժողովից հետո, այսինքն՝ Սուլթան Աբդուլհամիդի իշխանության ժամանակ:

ՀԱՐՑ. **Եթե հայերը մշտապես ճնշված էին, այդ ինչպե՞ս է, որ կառավարական բարձր դիրքեր էին զբաղեցնում և իրենց կրոնական, կրթական ու առևտրական գործերում ազատ էին անել այն, ինչ ցանկանում էին:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Թուրքերը որոշ հայերի նախարար նշանակեցին, որովհետև նրանց կարիքն ունեին:

ՀԱՐՑ. **Հայկական հարցը այդ աստիճանին հասավ գլխավորապես այն պատճառով, որ կառավարությունը վճռական միջոցներ ձեռք առավ Օսմանյան կառավարության նկատմամբ ապստամբությունների և խռովությունների դեմ, որոնք կազմակերպված էին անհատների կողմից: Վկան համաձա՞յն է սրա հետ:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայերը բարեփոխումներ էին ուզում:

ՀԱՐՑ. **Հայերը ի՞նչ միջոցների դիմեցին այդ բարեփոխումներն ստանալու համար:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Միություն և Առաջադիմություն կուսակցությունը պարտավորվեց այդ բարեփոխումները կիրառել սահմանադրական կարգը հաստատելուց հետո: *(Հայերը)* փորձեցին իրենց նպատակին հասնել գլխավորապես գործակցելով Միություն և Առաջադիմություն կուսակցության հետ: Բայց, երբ նրանք ծախողեցին, դիմեցին Միացյալ Ուժերին, խնդրելով, որ պատգամավորներ ուղարկեն Անատոլիա:

ՀԱՐՑ. **Վկան գիտե՞, որ հայերն իրենք սպանեցին այն հայերին, ովքեր համաձայն չէին հայկական ազգայնամոլական գաղափարների հետ:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Կոմիտեն նույնիսկ սպանեց կոմիտեի այն անդամներից ոմանց, ովքեր համաձայն չէին այդ գաղափարների հետ:

ՀԱՐՑ. **Կոմիտեի մտածմունքներն ու նպատակները պետք է ծայրահեղ գաղտնի եղած լինեին, որպեսզի կոմիտեին մղեին մարդասպանության դիմել հանուն նրա, որ գաղտնիքները չբացահայտվեին:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Կոմիտեն որևէ գաղտնի շարժառիթ չուներ: Սակայն որոշ հայեր, Կոմիտեների ղեկավարությունը ստանձնելուց հետո, իրենց գործընկերների մասին տեղեկացնում էին կառավարությանը: Ահա թե ինչու էին նրանց սպանում:

ՀԱՐՑ. **Այդ անհատներն սպանվում էին, որովհետև, հակառակ իրենց տված երդմանը, ոստիկանությանն էին հայտնում Կոմիտեի գաղտնիքնե՞րը:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես երբեք այդ միությունների անդամ չեմ եղել: Սակայն, ինչպես լսել եմ, նրանք սպանվում էին մեկը մյուսից դրամ գողանալու համար:

ՀԱՐՑ. **Վկան հիշո՞ւմ է որևէ հայի, որն սպանված լիներ Կոմիտեի գաղտնիքները բացահայտելու համար:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես չգիտեմ, որովհետև ես որևէ միության անդամ չեմ եղել:

ՀԱՐՑ. **Դու էական տեղեկություն տվեցիր Դաշնակցության մասին: Այդ միության անդամները դրամ տալի՞ս էին կազմակերպությանը:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես չգիտեմ:

ՀԱՐՑ. **Ըստ լուրերի, Իսկուդարի և Թոփքափիի որոշ հայեր սպանված էին, որովհետև հրաժարվել էին Դաշնակցությանը դրամ տալ: Փաստաբան Սեպուհ Քարագյոզյանը, Ինջիջյանը սպանվել են այդ պատճառով: Վկան չգիտե՞:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես լսել եմ, որ Քարագյոզյանին սպանել են, որովհետև նրանից դրամ են ուզել, և նա հրաժարվել է տալ: Քարագյոզյանին սպանեցին Հնչակյանները:

ՀԱՐՑ. **Երբ մի միություն այսպես սպանում է մարդկանց դրամ չտալու համար, սա չի՞ նշանակում, որ նա դրա հետ միաժամանակ դառնում է կառավարության ընդդիմադիր:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես դա չեմ տեսնում:

ՀԱՐՑ. **Վկան գիտե՞, որ պատերազմից շատ տարիներ առաջ Հայկական Պատրիարքարանը, համագործակցելով Ռուսաստանի հետ, գաղտնի նախապատրաստություններ արեց ուղղված Օսմանյան կառավարության դեմ:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Երբ ռուսական բանակը հայտնվեց Այա Ստեփանոսում, հայ Պատրիարքը գնաց այնտեղ և ռուսական կառավարությունից խնդրեց, որպեսզի խաղաղության պայմանագրի մեջ ներառեն կետեր՝ հայերի հետ ավելի լավ վերաբերմունքի մասին:

ՀԱՐՑ. **Եթե կառավարությունը ոչ-մուսուլմաններին ոչնչացնելու քաղաքականություն էր հետապնդում, ինչո՞ւ նման քաղաքականություն չէր հետապնդում հրեաների դեմ: Արդյոք պատճառն այն չէ՞, որ հրեաները միշտ հավատարիմ են մնացել կառավարությանը: Այսօր հրեաները ամենահավատարիմ հպատակներն են: Հայերը դրան հասան, որովհետև (հավատարիմ) չէին: Այդպես չէ՞:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Հրեական հարցը չի կարող նյութ դառնալ: Ստամբուլի մեջ հրեաները փոքրամասնություն են:

ՀԱՐՑ. **Չէ՞ որ պատերազմից առաջ շատ հայեր թողեցին Ռուսաստանը և ապաստան գտան Օսմանյան կայսրությունում:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Դա միայն 6,000-ից 7,000 հայեր էին, որոնք տեղահանվել էին Ռուսաստանից: Դրանք դաշնակներ էին և Ստամբուլ ուղարկվեցին կուսակցության կողմից:

Դատախազ Ռիկատսոն Հաթն ավարտեց իր հարցաքննությունը: Հետո վկային հարցաքննեց պաշտպան փաստաբաններից մեկը՝ Դոկտոր Միզգին.

ՀԱՐՑ. **Թուրքիայում ռազմական վիճակ մտցվեց համաշխարհային պատերազմ հայտարարվելուց առա՞ջ: Ռազմական վիճակ մտցվելուց հետո հայերը հանձնեցի՞ն իրենց զենքերը, այդ թվում նաև ամենափոքր զենքերը:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո:

ՀԱՐՑ. **Կարո՞ղ ես պատկերացնել մի ժողովուրդ, զրկված իր բոլոր զենքերից, որ վտանգ սպառնա կառավարությանը, կազմելով հանդերձ բնակչության միայն քսանհինգ տոկոսը:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ:

ՀԱՐՑ. **Պատերազմի հավանական գոտիները որտե՞ղ էին:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայերով բնակեցված ռուսական սահմանը:

ՀԱՐՑ. **Չէ՞ որ այդ շրջանը հազարավոր մղոններ հեռու է այն վայրերից, որտեղ տեղի ունեցան տեղահանությունները:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո:

ՀԱՐՑ. **Տարօրինակ չէ՞, որ կառավարությունը հայերին տեղահանեց դեպի պատերազմական գոտիներ, փոխանակ հեռացնելու այդ գոտիներից:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, շատ տարօրինակ է:

ՀԱՐՑ. **Ավելի հարմար չէ՞ր լինի պատերազմի գոտում գտնվող բոլոր հայերին հավաքել մի հիմնական տարածքում:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես կարծում եմ տեղահանությունը հայերին ոչնչացնելու նպատակին ուղղված քաղաքականություն էր:

ՀԱՐՑ. **Օսմանյան կառավարության ղեկավարները և ժողովուրդը հավանություն տալի՞ս էին կառավարության տեղահանման քաղաքականությանը:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, թուրք բնակչության ամեն հատված հավանություն էր տալիս:

ՀԱՐՑ. **Գիտեի՞ր, որ որոշ թուրք բարձրաստիճան պաշտոնյաներ տեղահանումներին ու կոտորածներին հավանություն չէին տալիս:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, ինչքան հիշում եմ, ծերակուտականի անդամներից Ահմեդ Ռիզա Բեյը հավանություն չէր տալիս:

ՀԱՐՑ. **Լսե՞լ ես, որ շատ գյուղերի թուրք բնակիչներ փորձել են կանգնեցնել տեղահանումները:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, լսել եմ, որ Քյոթահիա գյուղի թուրք բնակիչները կառավարիչին խնդրել են դադարեցնել տեղահանումները:

ՀԱՐՑ. **Գիտե՞ս, որ թուրք ավագ իշխանությունները հայերի նկատմամբ լավ են տրամադրված եղել:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, նրանք հայերին սիրում էին:

ՀԱՐՑ. **Ինչո՞ւ ես կարծում, որ հայերին ոչնչացնելու քաղաքականությունը մակերես բարձրացավ սահմանադրական կարգը հայտարարվելուց հետո:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Իմ ենթադրությունն այն է, որ դա հայերի՝ բարեփոխումների պահանջի հետևանքն էր:

ՀԱՐՑ. **Թուրք բնակչությունը բարեփոխումների նույնքան կարիք չունե՞ր, որքան քրիստոնյաները:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, նրանք այդ կարիքն ունեին:

ՀԱՐՑ. **Ժողովուրդը կառավարության հակահայկական քաղաքականությանը հավանություն տալի՞ս էր:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես համաձայն եմ, որ բնակչության 90 տոկոսը անտեղյակ էր և պետք է կառավարությանը մեղադրել:

ՀԱՐՑ. **Նա չգիտի՞, որ շատ արաբներ, հույներ և հրեաներ պատերազմից առաջ նույն պատճառներով փախան օտար երկրներ: Միայն հայե՞րն էին, որ փախան:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այդ նյութի շուրջ ես ոչ մի կարծիք չունեմ:

ՀԱՐՑ. **Չե՞ս կարծում, որ կառավարությունը ավելի լավ արած կլիներ, եթե հույներին և հայերին ապահով տեղեր ուղարկած լիներ:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Կլիներ, բնականաբար:

ՀԱՐՑ. **Բնակչությունը գնե՞ց հայերին պատկանող իրերը:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Որոշ տեղերում գնեցին, ուրիշ տեղերում՝ ոչ:

ՀԱՐՑ. **Գիտե՞ս, որ տեղահանման և կոտորածների ենթարկված հայերը անհամեմատ ավելի շատ էին, քան այն հայերը, ովքեր ընդդիմացան Օսմանյան կառավարությանը:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո:

ՀԱՐՑ. **Պատիժը համաչա՞փ էր ոճրին:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ինչ որ տեղի ունեցավ ոչ թե պատիժ էր, այլ ոչնչացման քաղաքականություն:

ՀԱՐՑ. **Գիտե՞ս, որ կային նաև թուրքեր, որոնք ընդդիմանում էին Միություն և Առաջադիմություն կուսակցությանը:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո:

ՀԱՐՑ. **Դու Օդյանի բարեկա՞մն ես, այն մարդու, որ Միթաթ Փաշայի հետ միասին կազմեց սահմանադրության նախագիծը:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, ես այդ անձնավորության առաջին սերնդի զարմիկն եմ:

Միզգի էֆենդին վերադարձավ իր տեղը, Խոսրովյան էֆենդին վերսկսեց հարցաքննությունը.

ՀԱՐՑ. **Սուլթան Աբդուլհամիդի իշխանության ժամանակ հայ համայնքնե-**

ը, բացի բարեփոխումներից, միապետից որևէ այլ բան պահանջո՞ւմ էին:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ:

ՀԱՐՑ. **Երկա՞ր ժամանակ Եվրոպան չէր խառնված այս գործի մեջ:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, երկար ժամանակ:

ՀԱՐՑ. **Չէ՞ որ Նորվեգիան և Շվեդիան՝ Բրիտանիայի միջամտությամբ, բարեփոխումների մի նախագիծ առաջարկեցին, և չէ՞ որ շվեդացի տեսուչները (Մայոր Նիկոլայը և Լուիս Ուեստենենկը) 1914-ին Անատոլիայի հայկական նահանգներ եկան:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո:

ՀԱՐՑ. **Չէ՞ որ պատերազմ հայտարարվելուց հետո թուրքերը այդ տեսուչներին հետ ուղարկեցին:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո:

ՀԱՐՑ. **Չէ՞ որ Սուլթան Աբդուլհամիդի տիրապետության ընթացքում 500,000 հայեր Օսմանյան կայսրությունից արտագաղթեցին Ռուսաստան:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո:

ՀԱՐՑ. **1828–ի ռուս-թրքական պատերազմի ընթացքում շատ հայեր Ռուսաստան չփախա՞ն:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո:

Ապա Օտյան էֆենդին խաչաձև հարցաքննվեց Հայդար Ռիֆատ բեյի կողմից.

ՀԱՐՑ. **Վկան քանի՞ տարեկան է:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես հիսուն տարեկան եմ:

ՀԱՐՑ. **Ես նկատի ունենում այն 50 տարիները, երբ վկան ապրում է. այդ ընթացքում Թուրքիայում կատարվե՞լ է մի բան, որ նրան վիրավորեր:**

ՊԱՏԱՍԽԱՆ. 60 տարի է, որ նման բաներ են տեղի ունենում :

ՀԱՐՑ. **Ես անորոշ և ընդհանուր հարցեր չեմ տալիս: Թող ամսաթվեր և վայրեր նշի:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես չեմ կարող ամսաթվեր ու վայրեր նշել:

ՀԱՐՑ. **Ստամբուլում խռովության կրկնադեպք տեղի ունեցա՞վ: Ես նկատի ունեմ Բալիաբի և Բանկ Օթոմանի դեպքերը:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Բալիաբի դեպքերից հետո հայերը հարձակվեցին Բանկ Օթոմանի վրա:

ՀԱՐՑ. **Ես նկատի չունեմ կառավարությունը, երբ դա վերաբերում է Օտյան էֆենդիի տեղահանման խնդրին: Նա թուրքերից որևէ բողոք ունի՞:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ:

ՀԱՐՑ. **Թուրքերն իրենց բնավորությամբ վստահելի՞ են, հյուրընկա՞լ, թե՞ վրեժխնդիր, կռվարար և ատող են:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ինչ որ կատարվեց պատերազմի ժամանակ, ցույց է տալիս թուրքերի հոգեբանությունը:

ՀԱՐՑ. **Ես ասացի՝ տեղահանությունից դուրս:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես թուրք ժողովրդի մասին լավ կարծիք ունեի:

ՀԱՐՑ. **Տեղահանությունների ժամանակ կոմիտեներ ստեղծվեցին հայերի ունեցվածքի համար: Հայերի ունեցվածքը (չէր) թալանված, ոչ էլ գնված դրամով: Սա ցույց չի՞ տալիս, որ թուրքերը ազնվահոգի ժողովուրդ են:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Դրանք բացառություններ էին:

ՀԱՐՑ. **Օսմանյան կայսրությունը 600 տարիների ընթացքում չէ՞ր ձգտում տարբեր ազգեր ներկայացնել:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ:

ՀԱՐՑ. **Վկան ասաց, որ սահմանի եզրով կատարված տեղահանությունը տրամաբանական կլիներ: Մի պատերազմի մեջ, որում, օրինակ՝ ընդգրկված լիներ Բրիտանիան, երկրի ո՞ր մասը կարող էր համարվել ոչ-սահմանային:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Պատերազմի ժամանակ միայն ռուսական սահմանը, Պաղեստինը և Իրաքն էին մարտական գոտիներ: Ավելին, հայերը տեղահանվեցին դեպի Իրաք և պաղեստինյան գոտի:

ՀԱՐՑ. **Պատերազմի ո՞ր տարում է, որ տեղահանվեցին հայերը:**

ՊԱՏԱՍԽԱՆ. 1915-ի մայիսին:

ՀԱՐՑ. **Նա գիտե՞, որ մինչև 1916-ը Հյուսիսային Իրաքում Մոսուլը և Դեյր-էլ-Զորը պատերազմի ճակատներ չէին:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Բրիտանացիները Հյուսիսային Իրաքում Մոսուլը գրավեցին 1916-ին, կամ 1917-ի սկզբներին: Հետևաբար, Մոսուլը պետք է համարվեր պատերազմի գոտի:

ՀԱՐՑ. **Նա գիտե՞, որ Մոսուլը Բաղդադից 15 օրվա հեռավորության վրա է:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Կարող է պատահել:

ՀԱՐՑ. **Նա համաձա՞յն է, որ Մարմարայի ավազանը վերահսկվում էր Միացյալ ուժերի սուզանավերի կողմից, իսկ ռուսական նավատորմը վերահսկում էր Սև Ծովը:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այն ժամանակ ես տարագրված էի: Ես չգիտեմ:

ՀԱՐՑ. **Նա չպե՞տք է մեղադրի մի կառավարության, որը թույլ էր տվել Ստամբուլում մնալու իր նման մի անձնավորության, որն իր գրչով կարող էր ոտքի հանել աշխարհը:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես չեմ կարծում, որ իմ տեղահանությունը անհրաժեշտ էր, որովհետև այն ժամանակ գրաքննություն կար: Կարող է ես ոչ մի բան էլ չանեի:

ՀԱՐՑ. **Ամեն մարդ զորակոչված չէ՞ր այս պատերազմում:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, ամբողջ օսմանյան ժողովուրդը զորակոչված էր:

ՀԱՐՑ. **Այդ դեպքում նա տրամաբանական չի՞ համարում, որ Էրեգլիում և Քոնիայում միայն տարիքավոր մարդիկ ու կանայք պետք է լինեին: Երիտասարդ մարդիկ, բնականաբար, պետք է ռազմաճակատում լինեին: Ինչո՞ւ է նա ասում, որ այդ երիտասարդները, որոշակիորեն, սպանված էին:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այն երիտասարդները, որոնք պետք է իրենց ընտանիքներին հոգ տանեին, զինվորական ծառայությունից ազատված էին: Մեծամասնությունը այդ բացառությունը ստանում էր համապատասխան սակը վճարելու ձևով:

ՀԱՐՑ. **Վկան հիշո՞ւմ է, որ համաշխարհային պատերազմի ժամանակ զորակոչումից ազատվելու այդ ձևը վերացվեց:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես կարծում եմ, որ դա սխալ է, որովհետև պատերազմի առաջին և վերջին տարիներին զորակոչումից ազատվում էին: Հենց այդ ժամանակ է, որ հայերին առաջարկվեց ծառայել բանակում:

ՀԱՐՑ. **Հայերը, ինչպես ամեն մի խելացի ժողովուրդ, ցանկանո՞ւմ էին անկախ լինել:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Հնարավո՞ր է, որ որևէ ժողովուրդ չուզենա անկախ լինել:

ՀԱՐՑ. **Ուրեմն, Վարդգես և Զոհրապ էֆենդիները Հայ դատին դավաճանո՞ւմ էին:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես չգիտեմ, պարոն:

ՀԱՐՑ. Ես հարցրեցի՝ նրանք դավաճանո՞ւմ էին Հայ դատին:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ինչպես երևում է Ազգային Ժողովում այդ երկու անհատների հայտարարություններից, նրանք բարեփոխումներ էին ուզում:

ՀԱՐՑ. Վկան հենց հիմա ասաց, որ ամեն մի հայ անկախություն էր ուզում: Այս երկու անհատները բացառությո՞ւն էին:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես նրանց մտքի մեջ չէի, որպեսզի իմանայի, թե ինչ են մտածում:

ՀԱՐՑ. Վկայի հեղինակությունը նույնքան բարձր էր, ինչքան Վարդգեսինը և Զոհրապինը: Վկան բոլոր տեղահանված վայրերից փախել է: Ինչո՞ւ նա չսպանվեց, ինչպես Վարդգեսը և Զոհրապը:

ՊԱՏԱՍԽԱՆ. 1915-ից մինչև 1916-ի սկիզբը հայերը սպանվում էին հրազենով: Հետագայում (ես չգիտեմ ինչի հետևանքով) նրանց հրազենով չէին սպանում, այլ տեղահանում էին:

ՀԱՐՑ. Նա նրանց հրազենով սպանվելիս տեսե՞լ է:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ, պարոն:

ՀԱՐՑ. Վկան ասաց, որ հայերին նախարար էին նշանակում, որովհետև թուրքերը նրանց կարիքն ունեին: Այսօր հայերը ծառայում են շատ բարձր դիրքերում, ինչպես օրինակ՝ որպես դատավորներ, նախագահող դատավորներ, չնայած նրանք լքել են թուրքերին: Սրա պատճա՞ռն էլ այն է, որ նրանց կարիքն ունեն:

ՊԱՏԱՍԽԱՆ. Եթե թուրքերը գտնեին հայերին փոխարինելու համար նույն կարողություններ ունեցող մարդկանց, ապա հայերին նրանց ներկա դիրքերում չէին պահի:

ՀԱՐՑ. Վկան գիտե՞, որ Ադրբեջանի Արտաքին գործերի նախարար Ալի խան Խոյսկին սպանվել է մի հայի կողմից:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես չգիտեմ:

ՀԱՐՑ. Մի հայ փորձեց սպանել ազերի արդարադատության նախարար Մեհմեդովին, որն այսօր մնում է վիրավորված: Վկան գիտե՞ այդ մասին:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես չգիտեմ:

ՀԱՐՑ. Մի հայ սպանեց Ադրբեջանի Ազգային ժողովի խոսնակ Հուսնու բեյին ճիշտ այնպես, ինչպես Բիհբուդ խանին: Վկան տեղյա՞կ է այդ մասին:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ, ես տեղյակ չեմ:

ՀԱՐՑ. Վկան կհամաձայնի՞, որ այս ահաբեկչությունները շարունակվեցին, որովհետև մարդասպաններին առիթ էր տրվել փախչելու:

ՊԱՏԱՍԽԱՆ. Չեմ կարծում, որ այդպես է: Ահաբեկիչները ձերբակալվել են և ստացել են իրենց պատիժը:

ՀԱՐՑ. Իմ թվարկած երեքից ոչ մեկն էլ չէր ձերբակալված:

ՊԱՏԱՍԽԱՆ. Հնարավոր է դա ճիշտ լինի:

ՀԱՐՑ. Ահաբեկչության այս քաղաքականությունը վկան հայերի համար օգտակա՞ր է համարում:

ՊԱՏԱՍԽԱՆ. Մարդասպանությունը ես երբեք չեմ կարող արդարացնել:

ՀԱՐՑ. Վկան գիտե՞, որ տեղահանության օրենքը (հաստատվեց) Բարսամյան և Իհսանովիկ էֆենդիների ներկայությամբ:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես չգիտեմ, որ Ազգային ժողովում այդպիսի մի օրենք է ընդունվել: Եթե նույնիսկ եղել է, այդ մարդիկ դրա օգտին քվեարկած կլինեն իրենց կյանքը փրկելու համար:

ՀԱՐՑ. Դա որոշակիորեն մի օրենք էր: Սակայն այդ օրենքի գործադրության ժամանակ սխալներ էին թույլ տրվել: Վկան համաձա՞յն է:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ինչքան ես գիտեմ, այդ գործողությունները կատարվեցին հրամանների հիման վրա:

ՀԱՐՑ. Վկան գիտե՞, երբ կառավարությունը լսեց, որ գործադրության ժամանակ սխալներ են թույլ տրվում, վերահսկիչ խորհուրդներ կազմեց: Ադանայում Քեմալ Փաշայի հրամանով երկու հոգու կախեցին այն բանի համար, որ նրանք զբաղվել էին այդպիսի անվայել գործողություններով:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես գիտեմ, որ Հալեպում երկու արաբի կախեցին հայերի հետ վատ վարվելու համար: Ադանայում որևէ մեկի կախված լինելու մասին ես երբևիցե որևէ բան չեմ լսել:

ՀԱՐՑ. Վկան երեկ ասաց, որ ժողովուրդը սատար էր կանգնում կառավարությանը, միաժամանակ ընդունեց, որ Քյոթահիայի բնակիչները կառավարչին խնդրեցին, որպեսզի դադարեցնի տեղահանումները: Քյոթահիան մի անկախ կայսրություն չէ: Այն ենթակա է Ստամբուլին: Ընդդիմության բացասական կեցվածքը Քյոթահիայի կառավարչի տեղահանության քաղաքականության նկատմամբ, չի՞ հակասում վկայի հայտարարություններին: Ավելին. այս դրությունը չի՞ վկայում, որ տեղահանվում էին իրենց գործողություններով կասկածելի հայերը:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես վստահ եմ, որ Քյոթահիայի, կամ Թուրքիայի բոլոր մյուս քաղաքների հայերի վրա կասկածելու ոչ մի պատճառ չկար:

ՀԱՐՑ. Ո՞ր քաղաքական կուսակցության հետ է վկան միացած:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես ոչ մի քաղաքական կուսակցության հետ չեմ:

ՀԱՐՑ. Ե՞րբ տեղի ունեցան այդ սպանությունները (կատարված հայկական կազմակերպությունների կողմից):

ՊԱՏԱՍԽԱՆ. Այդ սպանությունները կատարվեցին քսանհինգ տարի առաջ և, բնականաբար, գաղտնի էին պահված:

ՀԱՐՑ. Վկան գիտե՞, որ Օսմանյան պատգամավոր Գարեգին Բաստրմաջյանը, մինչև Ազգային ժողովում ընտրվելը, Ռուսաստանում մեղադրված էր, որ ընտրվելուց հետո, երբ ճանապարհորդեց դեպի Ռուսաստան, ռուսները նրան բանտարկեցին. որ Միություն և Առաջադիմություն կառավարությունը, այսինքն՝ Ազգային ժողովը ամեն ինչ արեց, որ նրան ազատ արձակեին և վերջապես կարողացան այդ անել:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես չգիտեմ, որ Բաստրմաջյանը ռուսների կողմից մեղադրված է եղել: Գիտեմ, որ երբ ճանապարհորդեց դեպի Ռուսաստան, այնտեղ խնդիրներ ունեցավ և թրքական կառավարությունը նրան փրկեց:

ՀԱՐՑ. Վկան գիտե՞, որ այս նույն Բաստրմաջյան էֆենդին, Վանի և Բիթլիսի նահանգներում գործակցելով բանդիտների հետ, հարձակումներ կազմակերպեց և շատ վնաս հասցրեց՝ պառլամենտի պատգամավորի տիտղոսը ունենալով հանդերձ:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես Բաստրմաջյանի մասին ոչ մի բան չեմ լսել: Ես միայն գիտեմ, որ հայ կամավորները վերցրին Վանը, բայց դուրս քաշվեցին, երբ թուրքերը կրկին վերահսկեցին քաղաքը:

ՀԱՐՑ. Վկան ասաց, որ տեղահանություն կարող էր կատարվել պատերազմական գոտիներում: Նա ասաց, որ տեղահանությունը կատարվեց պատերազմական գոտիներից հազարավոր մղոններ հեռու: Նա կարո՞ղ է մի տեղի անուն տալ:

ՊԱՏԱՍԽԱՆ. Քոնյա, Բուրսա, Քասթամոնու, Իզմիթ, Ադանա և Անթալիա:

ՀԱՐՑ. Վկան գիտե՞, որ անունների այն ցանկում, որ նա թվարկեց, Անթալ-

իան, Իզմիրը և Բուրսան առափնյա քաղաքներ են և կարող են համարվել պատերազմական գոտիներ, քանի որ զինվորական ցամաքահանման վտանգի առաջ են որևէ ժամանակ:

ՊԱՏԱՍԽԱՆ. Եթե ամբողջ Թուրքիան սպառնալիքի տակ էր, հայերին ո՞ւր պիտի տեղահանեին:

Դատական ատյանը տվեց հետևյալ հարցը.

ՀԱՐՑ. **Ի՞նչ ունես ասելու Քոնիայի մասին:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Բոլոր հայերը սիրում էին Քոնիայի կառավարիչ Չելալ բեյին: Քոնիայում ոչ մի հայի չդիպան:

Հայդար Ռիֆատ Բեյը շարունակեց.

ՀԱՐՑ. **Հայերը կարող էին տեղահանվել Մոսուլ և Դեր-էլ-Զոր: Վկան ասաց, որ «Թուրքիայում մենք բարեփոխումների էինք սպասում»: Միություն և Առաջադիմություն կուսակցությունը ղեկավարել է 14 տարի: Այդ ժամանակաշրջանում կառավարությունը կարողացե՞լ է մի պահ հեշտ շնչել:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայերը բարեփոխումների էին սպասում ոչ թե 14, այլ 60 տարի:

ՀԱՐՑ. **Թուրքերը նույնպե՞ս այդպիսի բարեփոխումների էին սպասում:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Բնականաբար:

ՀԱՐՑ. **Թուրքերը իրենց Ազգային խորհուրդները չունեին, բայց հայերը ունեին: Այդ Ազգային խորհուրդները ավելորդ չէի՞ն:**

Ատյանն ասաց, որ այդ հարցերին նախորդ նիստում պատշաճ ձևով պատասխանված են եղել.

ՀԱՐՑ. **Վկան ասաց, որ շվեդացի տեսուչներ եկան *(Անատոլիա)*, բայց երբ պատերազմը սկսվեց, տուն վերադարձան: Այդ ժամանակաշրջանում բարեփոխությունների կարելիությունը կա՞ր:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Դա անկարելի էր:

ՀԱՐՑ. **Վկան գիտե՞, որ ինը տարի առաջ, գլխավոր նախարար Հաքքի փաշան Բրիտանիային խնդրեց տեսուչներ ուղարկել, որը Բրիտանիան ինչոր պատճառով մերժեց ուղարկել, և որ փոխարենը շվեդացի տեսուչներ ուղարկվեցին:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես չեմ իմացել:

ՀԱՐՑ. **Այն ժամանակ Քոնիայի կառավարիչը մայոր Չելալ Բեյն էր: Վկան չգիտե՞, որ հայերը իրեն շնորհակալություն հայտնեցին մի խորհրդականի միջոցով:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես Չելալ Բեյին ճանաչում եմ անձնապես: Ես նաև գիտեմ, որ նա հայերին հավանում է: Նա շատ լավ մարդ է: Թերևս դրա համար է, որ հայերը նրան շնորհակալություն հայտնեցին:

Հայդար Ռիֆատ Բեյը իր հարցաքննությունը հայտարարեց ավարտված և Օտյան էֆենդին դատական սենյակից դուրս առաջնորդվեց: Խոսրովյան էֆենդին առաջարկեց, որ Քոնիայի նախկին կառավարիչ Չելալ Բեյը ներկայանա դատարան իբրև վկա: Դատախազ Ռիկատսոն Հաքը պատասխանեց, ասելով, որ (բրիտանական) դեսպանությունը այս նյութի կապակցությամբ ունի Չելալ Բեյի ցուցմունքը: Դատական ատյանը որոշեց, որ այդ թղթապանակները ներկայացվեն դատարան և փակեց լսումները:

ՏԱՍՆՎԵՑԵՐՈՐԴ ՎԿԱ

Երդվելուց հետո Դոկտոր Արշակ Պողոսյանը պատասխանեց պաշտպան փաստաբան Խոսրովյան էֆենդիի հարցերին.

-Նա ասաց, որ բժիշկ է, որ պատերազմի ժամանակ ծառայել է Օսմանյան բանակում, զորահավաքի ժամանակ ծառայել է 10-րդ բանակի 31-րդ զորագնդում, ամրացված է եղել Ամասիայում և Էրզրումում:

Պատասխանելով Խոսրովյան էֆենդիի մի հարցի, Դոկտ. Պողոսյանն ասաց.

ՊԱՏԱՍԽԱՆ. Հրամանատար Ֆեյզի փաշայի հրամանով ես գնացի Դիվրիկ քաղաք, Սարիղամիշի մոտ: Այնտեղ պաշտոնական կարգավիճակով միակ բժիշկն էի: Մոտ 800 հիվանդ ունեի: Հետագայում ռուսները եկան և ամեն ինչ վերահսկեցին: Բանտարկյալների հետ միասին մեզ ուղարկեցին Թիֆլիս: Թիֆլիսում հիվանդացա բրոնխիտով: Ուրիշ վիրավորված և հիվանդ բանտարկյալների հետ միասին ինձ տարան հիվանդանոց: Առողջությունս վերագտնելուց հետո, ես այնտեղ սկսեցի բուժել թուրք վիրավոր զինվորներին: Մի քանի ամիս հետո, հայերի պնդմամբ, ես սկսեցի նաև տեղում գտնվող փախստական հայերի բուժումը, ինչպես նաև այն հայերի, որոնք գալիս էին սահմանից: 1918-ի մարտին ինձ վերցրեց տեղի Կարմիր խաչի ընկերությունը: Որոշ ժամանակ նրանց համար աշխատելուց հետո, հուլիսի վերջերին գնացի Բաքու: Թուրքերի կողմից գրավվելուց հետո այդ քաղաքում մնացի 15 օր:

ՀԱՐՑ. **Բաքվում անվտանգության հետ կապված դեպքեր կայի՞ն:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Թուրք զինվորները գրավեցին Բաքուն և քաղաքը հանձնվեց սեպտեմբերի 14-ին:

ՀԱՐՑ. **Միացյալ ուժերի զորքեր կայի՞ն:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, քաղաքում բրիտանական ուժեր կային: Բրիտանացիների վրա հարձակվեցին թուրք և թաթար բանակները, որոնք գալիս էին Գյանջայից: Հետո բրիտանական զինվորները քաշվեցին և թուրքերը քաղաք մտան:

ՀԱՐՑ. **Դեպքեր տեղի ունեցա՞ն:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, հայերին դուրս էին հանում իրենց տներից և սպանում:

ՀԱՐՑ. **Դու որտե՞ղ էիր այդ դեպքերի ժամանակ:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Մի հրեա անձնավորության տանը:

ՀԱՐՑ. **Այդ տնից, որտեղ դու թաքնվել էիր, որևէ բան տեսա՞ր կամ լսեցի՞ր:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես լսեցի իրենց տներից դուրս քաշքշվող մարդկանց ճչոցները և կրակոցներ: Վարագույրների ետևից տեսա բռնի ուժով դուրս քաշվող հայերի, որոնցից շատերին սպանում էին փողոցում:

Ես Վահան Մանուկյան անունով մի ուրիշ հայի հետ էի: Մենք այնտեղ թաքնվեցինք մոտ 10 օր: Ես ուզում էի դուրս գալ և տեսնել շրջապատը, սակայն ընկերս թույլ չտվեց: Առաջին անգամ դուրս եկա հինգերորդ օրը: Առաջին հինգ օրերի ըն-

թացքում ճչոց, լաց և կրակոցներ էին. նայելով վարագույրների հետևից, ես տեսա հայերի, որոնք դուրս էին քաշվում դիմացի տներից և սպանվում: Ես նրանց հայ լինելը հասկացա ինչպես իրենց հագուստներից, այնպես և լեզվից, որով նրանք խնդրում էին. Նրանք «Աստված» էին կանչում: Գիտեի, որ մարդասպանները թաթարներ էին, որովհետև տաբատի վրա սպիտակ երիզ ունեին և տարբերիչ գլխարկներ էին կրում:

ՀԱՐՑ. **Դու ասում էիր, որ հինգերորդ օրը դուրս եկար: Հետո ո՞ւր գնացիր:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես գնացի էրմենիքենտի մոտ գտնվող օգնության կայան, հետո թաքնվեցի:

ՀԱՐՑ. **Ինչո՞ւ նորից թաքնվեցիր:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Տանտերն ինձ մի հայտարարություն ցույց տվեց: Հայտարարությունում ասված էր, որ ամեն ոք կարող է գնալ իր տունը և իր աշխատատեղին, իսկ հայերը չեն կարող օգտվել այս ընդհանուր արտոնությունից, որովհետև խռովարարներ են: Ես ու ընկերս դուրս եկանք և մի նավավարի կաշառեցինք, որպեսզի մեզ տանի Պետրովսկ: Մենք այնտեղ հասանք երեք օր նավարկելով: Այնտեղից մենք գնացինք Էնելի, այնտեղից Համադան: Ես գնացի Բաղդադ, աշխատեցի հայ-սիրիական մի խմբի մեջ, բրիտանացիների ենթակայության տակ, մինչև 1919-ի փետրվարը: Ես բրիտանացիների կողմից տրված փաստաթղթեր ունեմ:

ՀԱՐՑ. **Ջիվանշիր անունով մարդուն ճանաչո՞ւմ ես:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, ես նրա անունը լսել եմ և նրա մասին կարդացել եմ թերթերում: Նա Ադրբեջանի Ներքին Գործերի նախարարն էր:

ՀԱՐՑ. **Բաքվում քանի՞ հայ սպանվեց:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Կարծում եմ 15,000-ից 20,000:

ՀԱՐՑ. **Ո՞վ էր պատասխանատու այդ կոտորածների համար:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ամենից առաջ Մուսավաթ կուսակցությունն էր պատասխանատու այդ կոտորածների համար:

ՀԱՐՑ. **Ովքե՞ր էին Մուսավաթ կուսակցության ղեկավար դեմքերը:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Սուլթանով, Ջիվանշիր, խան Խոյսկի և այլն:

ՀԱՐՑ. **Ի՞նչ նպատակներով էր հիմնադրված Մուսավաթ կուսակցությունը:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ինչքան ես գիտեմ, նրանց նպատակն էր հիմնել մի «Թուրանական միություն», որը պիտի միավորեր բոլոր թուրքերին:

ՀԱՐՑ. **Թուրանական միությունը ի՞նչ կապ կարող էր ունենալ հայկական ջարդերի հետ:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Մի թաթար ընկեր մի անգամ ինձ ասեց. «Մենք Բաքուն կարող էինք լրիվ վերահսկել, եթե հայերը չլինեին»: Դրան գումարած, ես տեսա Մուսավաթ միությանն ուղղված մի նամակ, գրված Ջիվանշիրի կողմից: Նամակը գտնվում էր Աճառյան անունով մի թարգմանչի մոտ: Նամակում ասված էր, որ բրիտանացիները չեն կարող զինվորական կանոնավոր ուժ բերել, որ Նուրի փաշայի հետ քննարկված է հայերին ոչնչացնելու անհրաժեշտությունը, և որ այս նպատակը կարող է հեշտությամբ իրականացվել, որովհետև ռուսները դուրս են քաշվում: Ինչպես բացահայտ է, հայ մտավորականության ոչնչացումը Մուսավաթ կուսակցության ծրագրի մի մասն էր:

Մինչև հուլիսի վերջը Բաքու քաղաքը կառավարվում էր բոլշևիկների կողմից: Հետո բոլշևիկները ժողովներում հայտարարեցին, որ իրենք քաղաքը պիտի հանձնեն և դուրս գան: Հասկացվում էր, որ դրանից հետո այն պիտի կառավարվեր միացյալ ձևով: Երբ բրիտանացիները եկան, քաղաքի կառավարումը անցավ

նրանց ձեռքը: Ինչքան ես գիտեմ, մինչև բրիտանացիների քաշվելը, ադրբեջանական կառավարություն երբեք գոյություն չի ունեցել: Էրմենիքենտի փախստականների թվում *(նրանք էին)*, ովքեր եկել էին Հարպուտից, Տրապիզոնից, և Քուշից: Ես իմ մասնագիտությունը էրմենիքենտում կիրառում էի:

ՀԱՐՑ. **Ի՞նչ պիտի պատասխանեիր, եթե քեզ հարցնեին՝ ազերիները հայերին կոտորում էին, որովհետև վերջիններս ապստամբո՞ւմ էին:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այդպիսի ապստամբություն չի եղել:

ՀԱՐՑ. **Թոռլաքյան անունով մարդ ճանաչո՞ւմ ես:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, ճանաչում եմ մեկին՝ Հակոբ Թոռլաքյան անունով: *(Բաքվում)* շատ փախստականներ Տրապիզոնից էին: Նրանց մեջ էր Հակոբ Թոռլաքյանը իր զավակների հետ միասին:

ՀԱՐՑ. **Նրա աղջկան տեսե՞լ ես: Ի՞նչ է նրա անունը:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Նրա անունն էր Աղավնի: Ես նրան տեսել եմ և գիտեմ նրան:

ՀԱՐՑ. **Ի՞նչ պատահեց նրան:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես տեսա նրա դիակը, ինչպես նաև այլ կանանց դիակներ:

ՀԱՐՑ. **Դու նրա մարմինը քննեցի՞ր:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես այն քննեցի այնքան, ինչքան կարող էի: Այդ դիակներից շատերը արդեն քայքայված էին:

ՀԱՐՑ. **Գիտե՞ս, որ Մուրսել փաշան հայերին առաջարկեց հանձնվել:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, այդ լուրը տարածվեց սեպտեմբերին, երբ բրիտանացիները դեռ այնտեղ էին: Ըստ էության, հայերը չէին կարող ընդունել Մուրսել փաշայի առաջարկը, որովհետև բրիտանացիներն էին թելադրում ամեն ինչ:

Հետո դատախազը կանգնեց և սկսեց խաչաձև հարցաքննել վկային.

ՀԱՐՑ. **Վկան չի՞ լսել, որ 1909–ին *(տարին այնպես, ինչպես հրատարակված է)* հայերը կոտորեցին Թուրքերին:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ինչ որ ես լսել եմ ճիշտ ու ճիշտ հակառակն է:

ՀԱՐՑ. **Այդ ինչպե՞ս է, որ նա չգիտի, որ հայերը հազարավոր թուրքերի են կոտորել:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես չգիտեմ:

ՀԱՐՑ. **Ինչո՞ւ պիտի թուրքերը սպանեին հայերին:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Որովհետև հայերը թաթարների նպատակներն իրականացնելուն, այսինքն՝ Թուրքեստանի և մյուս թուրքերի միավորման արգելք էին:

ՀԱՐՑ. **Նա գիտի՞ որ, երբ 1918–ի սեպտեմբերին Մուրսել փաշան Բաքու մտավ, հայկական անկանոնները դեռ շարունակում էին իրենց վայրագությունները կատարել:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ:

ՀԱՐՑ. **Կոտորածներին մասնակցում էին թաթար անկանոնն՞երը, կանոնավոր ուժե՞րը, թե՞ սովորական ժողովուրդը:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես հավատացած եմ, որ թաթարները կատարում էին իրենց ղեկավարների հրամանները:

ՀԱՐՑ. **Վկան դա իր աչքով տեսե՞լ է:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ:

ՀԱՐՑ. **Դա նշանակում է, որ նա չգիտի, թե մարդիկ ինչպե՞ս էին սպանվում, քանի որ դա իր աչքով չի տեսել: Չի՞ կարող պատահել, որ նրանք սպանված լինեն կռվելիս:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ի՞նչ պիտի ասենք կանանց և երեխաների մասին. նրանք նույնպե՞ս սպանվեցին կռվելիս:

ՀԱՐՑ. Քանի՞ կին սպանվեց:

ՊԱՏԱՍԽԱՆ. Շատ-շատ:

ՀԱՐՑ. Որտեղի՞ց գիտես:

ՊԱՏԱՍԽԱՆ. Երբ ես քաղաքից դուրս եկա, շատ կանանց դիակներ տեսա:

ՀԱՐՑ. Երբ կոտորածները կատարվեցին, թրքական բանակն արդեն քաղաքո՞ւմ էր:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, թուրք զինվորականությունը քաղաքում էր:

ՀԱՐՑ. Ջիվանշիրը քաղաքո՞ւմ էր:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես չգիտեմ:

ՀԱՐՑ. Վկան քանի՞ տարի եղավ Կովկասում:

ՊԱՏԱՍԽԱՆ. Երեք տարի, 1914-ի դեկտեմբերից մինչև 1917-ի դեկտեմբերը *(ինչպես հրատարակված է):*

ՀԱՐՑ. Վկան ի՞նչ գիտե Մուսավաթ կուսակցության մասին:

ՊԱՏԱՍԽԱՆ. Մուսավաթ կուսակցությունը համանման է Միություն և Առաջադիմության կուսակցությանը:

Նախագահող դատավորը միջամտեց՝

ՀԱՐՑ. Ես ոչինչ չգիտեմ Միություն և Առաջադիմություն կուսակցության մասին: Վկան պետք է բացատրի:

ՊԱՏԱՍԽԱՆ. Երկու ընկերությունները նույն նպատակն էին հետապնդում:

ՀԱՐՑ. Որո՞նք էին նրանց նպատակները:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչնչացնել քրիստոնեությունը:

Դատախազը շարունակեց.

ՀԱՐՑ. Նա որտեղի՞ց գիտե այդ նպատակները: Նրանց կանոնադրությունը կարդացե՞լ է: Ինչպե՞ս կարող է նա այդքան ստույգ լինել այդ նյութի շուրջ:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես տեսա թաթարներին՝ ռուսներ սպանելիս, երբ ռուսները Բաքվից քաշվում էին:

ՀԱՐՑ. Համենայն դեպս, այդ գործողությունները ի՞նչ կապ ունեին Մուսավաթ կուսակցության հետ: Երևում է, որ վկան որևէ հատուկ գիտելիք չունի Մուսավաթ կուսակցության մասին: Նա ի՞նչ ունի ասելու այս մասին:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես հիշատակեցի այն նամակը, որ Ջիվանշիրը ուղարկել էր Նուրի փաշային: Սա ցույց չի՞ տալիս, թե ինչ էր Մուսավաթ կուսակցությունը:

Նախագահող դատավորը կարդաց նամակը: Դատախազը շարունակեց իր հարցերը.

ՀԱՐՑ. Ինչպես ակնհայտ է, նամակը վերաբերում է Նուրի փաշային: Դրա ո՞ր մասն է Ջիվանշիրին վերաբերում:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես կուզենայի, որ այդ հասցեագրումը ուղղվեր:

Նախագահող դատավորն ասաց.

ՀԱՐՑ. Դու պատասխանատու ես քո ցուցմունքների սխալների համար:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այդ նամակը վերաբերում է մի համաձայնության Նուրի Փաշայի և Ջիվանշիրի միջև, և Ջիվանշիրը այդ նամակը ուղարկել է Մուսավաթ ընկերությանը:

ՀԱՐՑ. Վկան նախկինում ասել էր, որ հրեան իրեն կարդացել էր հայտարարությունը: Հայտարարությունը ի՞նչ լեզվով էր գրված:

ՊԱՏԱՍԽԱՆ. Թուրքերեն և ռուսերեն:

Հետո Հայդար Ռիֆատ բեյը (Ջիվանշիր ընտանիքի փաստաբանը) տվեց հետևյալ հարցերը.

ՀԱՐՑ. Վկան ասաց, որ «Բաքուն հանձնվեց 1918–ի սեպտեմբերի 14–ին». վկան հաստատո՞ւմ է այս հայտարարությունը:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, հաստատում եմ:

ՀԱՐՑ. Լավ: Հանրահայտ է, որ բրիտանացիները Բաքվից քաշվեցին սեպտեմբերի 17–ին և թուրքերը քաղաք մտան սեպտեմբերի 18–ին: Ինչպե՞ս է, որ այդ մարդը ասում է սեպտեմբերի 14–ին. Վկան ստո՞ւմ է:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ինչքան որ ես գիտեմ՝ 14-ին էր (սեպտեմբերի):

ՀԱՐՑ. (Թուրքերը) առաջին անգամ քաղաք մտան սեպտեմբերից մեկ ամիս առաջ: Մարտեր էին տեղի ունենում փողոցներում և այդ մարտերի ընթացքում թրքական երկու գումարտակներ ոչնչացվեցին: Վկան համաձա՞յն է:

ՊԱՏԱՍԽԱՆ. Եթե ես Բաքվի մասին հարցեր տայի փաստաբաններին, արդյոք կկարողանայի՞ն պատասխանել:

Նախագահող դատավորն ասաց.

ՀԱՐՑ. Վկան իրավունք չունի որևէ հարց տալու փաստաբաններին:

Վկան շարունակեց իր ցուցմունքը.

ՊԱՏԱՍԽԱՆ. Այդ երկու գումարտակների մասին ես որևէ բան չգիտեմ, բայց գիտեմ, որ թուրքերը լուրջ վնասներ կրեցին:

ՀԱՐՑ. Այդ ժամանակ տեղի հայե՞րն էին կռվում նրանց դեմ, թե՞ ուրիշները:

ՊԱՏԱՍԽԱՆ. Դրանք ռուսական կանոնավոր զինվորներն էին գնդապետ Բիշարեֆովի հրամանատարության ներքո: Այդ գնդապետը հրամաններն ստանում էր բրիտանացիներից:

ՀԱՐՑ. Ջիվանշիրը Մուսավաթ կուսակցության անդամ էր երկու ամսով: Հետո նա թողեց կուսակցությունը: Վկան ասաց, որ Ջիվանշիրը Մուսավաթ կուսակցության ղեկավարն էր: Սա արժանահավա՞տ է:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես չգիտեմ նա քանի ամիս մնաց կուսակցության մեջ: Նա Ներքին գործոց նախարարն էր և Մուսավաթ կուսակցությունը վերահսկում էր Ներքին գործոց նախարարությունը:

ՀԱՐՑ. Վկան քանի՞ անգամ է եղել Ստամբուլում:

ՊԱՏԱՍԽԱՆ. Սա երկրորդ անգամն է, որ ես այստեղ եմ:

ՀԱՐՑ. Նա Առողջապահության բաժնի հետ համագործակցո՞ւմ է:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես համագործակցում եմ Անատոլիայի հետ: Ես այստեղ կապ չունեմ Առողջապահության տնօրինության հետ:

ՀԱՐՑ. Կարո՞ղ է վկան ասել, նա Սեբաստիայո՞ւմ է ապրում, թե՞ մի այլ գյուղում:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես Յարով էֆենդիի որդին եմ, որը սպանվել է:

ՀԱՐՑ. Դա բավական չէ: Վկան պետք է հասցե ասի:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես ապրում եմ Ֆահրի Բեյի տան մոտ, կառավարության տան շրջանում:

ՀԱՐՑ. Վկան Ստամբուլում ապրող ի՞նչ հայտնի սեբաստացիների է ճանաչում:

ՊԱՏԱՍԽԱՆ. Վերջին անգամ երբ եկա, ես նրանցից մի քանիսին հանդիպեցի: Այս տարի ես ոչ մեկին չտեսա:

ՀԱՐՑ. Նա Ջիվանշիրի ստորագրությունը ճանաչո՞ւմ է:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ:

ՀԱՐՑ. Այդ դեպքում նա ինչպե՞ս գիտե, որ իրեն կարդացված նամակը կապ ունի Ջիվանշիրի հետ:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես չեմ կարող հիշել մի ստորագրություն, որը տեսել եմ երեք օր առաջ:

ՀԱՐՑ. Եթե նույնիսկ նա ստորագրությունը չի ճանաչում, ինչի՞ց գիտե, որ նամակը իսկական է:

ՊԱՏԱՍԽԱՆ. Իմ լսածի համաձայն, նամակը գտնվել էր մի դասալիքի մոտ, որը թշնամուց փախչում էր դեպի Բաքու:

ՀԱՐՑ. Դա բավակա՞ն է, որ այն իսկական դառնա:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես դա չգիտեմ: Դա այն է, ինչ ասացին գրասենյակում:

ՀԱՐՑ. Նա ինձ կհավատա՞, եթե ասեմ, որ նամակը կեղծված էր:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես, բնականաբար, պիտի չհավատայի էֆենդիին, որովհետև նրան չեմ ճանաչում:

Նախագահող դատավորը նույն հարցը տվեց.

ՀԱՐՑ. Վկան ինչպե՞ս կարող է ասել, ո՞ր նամակն է իսկական, ո՞րը՝ ոչ: Խնդիրը ստորագրությանն է վերաբերում: Ինչպե՞ս կարող է ապացուցել, որ այդ նամակի մեջ ստորագրությունը Ջիվանշիրինն է:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ճիշտն ասած, ես չգիտեմ հիմքը:

ՀԱՐՑ. Նա բժիշկ է: Նա ասում է, որ հենվելով կարդացված նամակի վրա, Մուսավաթ կուսակցությունը նպատակ ուներ ոչնչացնել հայերին: Նա այս դատարանում հանդես եկավ իբրև մի վկա այդ նամակի հիման վրա: Սա բավակա՞ն է *(կուսակցության) ծրագրի մասին կարծիք կազմելու համար:*

Նախագահող դատավորը՝

ՀԱՐՑ. Ամփոփելով, վկան որևէ բան գիտե՞ Մուսավաթ կուսակցության մասին:

ՀԱՐՑ. Վկան կոտորածների հինգերորդ օրը դուրս եկավ փողոց: Նա քննեց դիակները և ճանաչեց պաշտպանյալի աղջկան: Կարո՞ղ է որևէ խելացի մարդ հավատալ սրան: Ինչպե՞ս կարող էր նա քննել և քայքայված մարմինների մեջ ճանաչել մի աղջկա դիակը:

ՊԱՏԱՍԽԱՆ. Աղջկա մարմինը ընկած էր իմ կանգնած տեղին մոտիկ և ես այն ճանաչեցի: Ես նույնիսկ կարողացել էի ճանաչել հորս անգլուխ մարմինը իր մահանալուց 18 օր անց:

ՀԱՐՑ. Էրմենիքենտը ինչքա՞ն հեռու է Բաքու քաղաքի սահմաններից:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այն ընդամենը 15 րոպե է հեռու քաղաքի սահմաններից:

ՀԱՐՑ. Վկան պաշտպանյալի հետ կապվա՞ծ է ամուսնական հարաբերություններով:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ, կապված չեմ:

Նախագահող դատավորը՝

-Ես կողմ չեմ այս վկային լրացուցիչ քաղաքական հարցեր տալուն:

ՏԱՍՆՅՈԹԵՐՈՐԴ ՎԿԱ

Օրիորդ (Նորա) Բրաունը, բրիտանական քաղաքացի, երդում տալուց հետո պատասխանեց հարցերին: Ասելուց հետո, որ ծնվել է Լոնդոնում և իր հայրը՝ պրն. Ջեյմս Բրաունը ծառայել է Ծովակալությունում, օրիորդ Բրաունը պատասխանեց պաշտպան փաստաբան Խոսրովյան էֆենդիի հարցերին.

ՀԱՐՑ. Ի՞նչ է ձեր զբաղմունքը:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես անգլերենի ուսուցիչ եմ:

ՀԱՐՑ. Կովկասում եղե՞լ եք:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես եղել եմ Մոսկվայում, Պետերբուրգում, Թիֆլիսում և Բաքվում:

ՀԱՐՑ. Բաքվում և՞ս եղել եք:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո:

ՀԱՐՑ. Ինչո՞ւ եք եղել այնտեղ:

ՊԱՏԱՍԽԱՆ. 1918-ին ես Թիֆլիսը թողեցի և գնացի Շուշա՝ այնտեղ երեք երեխաներ փրկելու համար:

ՀԱՐՑ. Ի՞նչ ազգության էին նրանք:

ՊԱՏԱՍԽԱՆ. Նրանք հայեր էին: *(Նրանք)* մի կալվածքում էին Շուշայից 40 վերստ հեռու: Կալվածքը պատկանում էր նրանց մեծ հորը՝ Յուզբաշյանին: Ես այնտեղ եղա 1918-ի մարտից մինչև դեկտեմբեր ամիսը: Շուշայի բնակչության մեծ մասը հայեր էին: Այնտեղ եղած ժամանակ լսեցի, որ 1918-ի սեպտեմբերի 14-ից 16-ը թաթարները Բաքվում կոտորում էին հայերին: Դեպի Յուզբաշյան կալվածք գնալիս, ճանապարհին տեսա սպանված հայ քաղաքացիներ: Ես տեսա, որ հայերից մեկին սպանում էին 3-4 թաթարներ: Հայերը թաթարների վրա չէին կրակում, որովհետև զենք չունեին:

ՀԱՐՑ. Լսեցի՞ր, որ Բաքվում լուրջ դեպքեր են տեղի ունենում:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո:

ՀԱՐՑ. Ի՞նչ լսեցիր:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես լսեցի, որ թաթարները հայերին կոտորել են մինչև սեպտեմբերի 14-ը:

ՀԱՐՑ. Մինչև Թիֆլիս, *(Յուզբաշյանին)* գտնելդ ի՞նչ տեսար:

ՊԱՏԱՍԽԱՆ. Մահացած հայ քաղաքացիներ՝ փողոցներում:

ՀԱՐՑ. Կարո՞ղ ես ասել, ո՞վ էր սպանել այդ հայերին:
ՊԱՏԱՍԽԱՆ. Թաթարները:

Դատական ատյանը տվեց հետևյալ հարցը.

ՀԱՐՑ. Ինչպե՞ս իմացար:
ՊԱՏԱՍԽԱՆ. Ես դա տեսա իմ սեփական աչքերով:
ՀԱՐՑ. Հայերը թաթարների վրա հարձակվեցի՞ն:
ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ: Հայերը պաշտպանվելու միջոցներ չունեին:
ՀԱՐՑ. Դու ասացիր. «Տեսա, որ թաթարները հարձակվեցին հայերի վրա»: Քո վրա և՞ս հարձակվեցին:
ՊԱՏԱՍԽԱՆ. Այո:
ՀԱՐՑ. Դու ո՞ր փողոցում հարձակման ենթարկվեցիր:
ՊԱՏԱՍԽԱՆ. Իմ վրա հարձակվեցին, երբ ես Իվալչ էի գնում: Ես ճամփորդում էի Բեյբուտով անունով մի կարևոր թաթար մարդու անձնական կառքով. ինձնից և երկու հայ տիկիններից բացի, մեզ հետ էին Բեյբուտովի անձնական զինված մարդիկ: Բեյբուտովը իր սեփական ինքնաշարժն ուներ, բայց այնտեղ ինձ համար տեղ չկար: Ինձ տվեցին մի ձի և երկու զինված մարդ: Պետք է գնայի քառասուն վերստ: Քսան վերստից հետո ճամփորդությունը դադարեցրի, որպեսզի ձիերը հանգստանան: Երկու թաթարներն ասացին, որ պետք է գնանք մի թաթարական գյուղում գտնվող փոքրիկ պանդոկ: Ես մտածում էի, որ ձիերի հանգստանալուց հետո մենք նորից ճամբա կընկնեինք, բայց երկու թաթարները այլ կարծիք ունեին. մյուս կողմից արդեն մութն ընկնում էր և ճանապարհից կրակոցներ էին լսվում: Մտա մի փոքրիկ սենյակ և այնտեղ երկու թաթարների միջև մի քննարկում էր տեղի ունենում: Նրանցից մեկը, որն ավելի ուժեղ էր թվում, մնաց ինձ հետ: Նա մի քիչ բրինձի փլավ և թեյ պատվիրեց: Սենյակում երեք բազմոց կար և նա ցանկացավ քնել նույն սենյակում, որտեղ և ես: Ի՞նչ պետք է անեի: Նա փորձեց ինձ համբուրել: Ուժեղ պայքարի ժամանակ ես հարվածեցի նրա քթին, սկսեց արյունել: Նա շատ ջղայնացավ, դանակը հանեց, կոկորդիցս բռնեց և դանակը պահեց վզիս: Ես իրեն կանգնեցրի, ասելով, որ ես անգլիացի աղջիկ եմ և ճամփորդում եմ Բեյբուտովի պաշտպանության տակ: Հաջորդ առավոտ ես ուզեցի իմ ձին և նա թողեց, որ ինքս թամբեմ ձին: Մնացած ճամփորդությունը արեցի մենակ:
ՀԱՐՑ. Ինչո՞ւ էին թաթարները սպանում հայերին:
ՊԱՏԱՍԽԱՆ. Թաթարները գերմանամետ էին, իսկ հայերը՝ բրիտանամետ: Այդ իսկ պատճառով հայերին սպանում էին: Երբ ես Յուզբաշյանների մոտ էի, անընդհատ կրակոցներ էին լինում և մենք շատ վախեցած էինք, մտածելով, թե ինչ կարող է պատահել մեզ հետ, որովհետև այն ժամանակ թաթարները շատ ու շատ հայերի էին սպանում: Կառավարությունը ոչ մի ձևով չէր պաշտպանում հայերին: Ջիվանշիրը այդ ժամանակ Ներքին գործոց նախարարն էր: Ամեն մի հայ միշտ նրա մասին էր խոսում և սարսափում նրանից: Բեյբուտովը հիմա կենդանի չէ: Թաթարները նրան սպանեցին այն բանի համար, որ հայերին պաշտպանում էր:
ՀԱՐՑ. Ջիվանշիրը ե՞րբ եկավ Բաքու:
ՊԱՏԱՍԽԱՆ. Ջիվանշիրը Բաքու եկավ, երբ բրիտանացիները քաշվեցին քաղաքից: Խոսվում էր այն մասին, որ այդ ժամանակ Ջիվանշիրը Գյանջայում էր և Բաքու գնաց, երբ բրիտանացիները դուրս եկան: Բեյբուտովը ինձ հետ խոսում էր Ջիվանշիրի մասին և ասում, որ նա շատ հայերի մահվան պատճառ է լինելու:

Դատական ատյանը տվեց հետևյալ հարցերը.

ՀԱՐՑ. Ինչպե՞ս գիտես:
ՊԱՏԱՍԽԱՆ. Այն տանը, որտեղ ապրում էինք, բոլորն էին ասում:
ՀԱՐՑ. Նա ի՞նչ տեսակ մարդ էր:
ՊԱՏԱՍԽԱՆ. Նա չար և դաժան մարդ էր:
ՀԱՐՑ. Ինչպե՞ս գիտես:
ՊԱՏԱՍԽԱՆ. Բոլոր հայերը սարսափում էին նրանից:

Պաշտպան փաստաբանը շարունակեց իր հարցաքննությունը

ՀԱՐՑ. Ջիվանշիրի մասին ի՞նչ էիք լսում:
ՊԱՏԱՍԽԱՆ. Ասում էին, որ Ջիվանշիրը հայերի դահիճն է:
ՀԱՐՑ. Որևէ բան լսե՞լ եք մի թաթարական կազմակերպության մասին:
ՊԱՏԱՍԽԱՆ. Մուսավաթ կուսակցությունը:
ՀԱՐՑ. Ջիվանշիրը թաթարների կողմից հարգվա՞ծ էր:
ՊԱՏԱՍԽԱՆ. Այո:
ՀԱՐՑ. Այն տանը, որտեղ ապրում էիք, որևէ բան ասո՞ւմ էին Մուսավաթ կուսակցության մասին:
ՊԱՏԱՍԽԱՆ. Ասում էին, որ այն գործակցում է Միություն և Առաջադիմություն կուսակցության հետ: Բեյբուտովը հարգված էր թաթարների կողմից և ազդեցիկ մարդ էր: Ես լսել եմ, երբ նա ասաց, որ Մուսավաթը կապի մեջ է Թուրքիայի Միության հետ: 1920-ին, բրիտանացիների հեռանալուց հետո, ես գնացի Բաքու: Այնտեղ գնացի գնդապետ Ռուլի հետ: Այնտեղ էի երեք շաբաթ և իր հետ միասին Բաքուն թողեցի՝ բոլշևիկների գալուց երեք օր առաջ:
ՀԱՐՑ. Հայերը ուզո՞ւմ էին, որ բրիտանացիները մնան Բաքվում:
ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, բնականաբար:
ՀԱՐՑ. Խնդրեմ, կարո՞ղ եք ասել՝ ինչո՞ւ:
ՊԱՏԱՍԽԱՆ. Որովհետև նրանք փրկվում էին կոտորածներից:
ՀԱՐՑ. Երբ դու Բաքվում էիր, հայերը վախենո՞ւմ էին մի երկրորդ կոտորածից:
ՊԱՏԱՍԽԱՆ. Այո:
ՀԱՐՑ. Ինչպե՞ս գիտես:
ՊԱՏԱՍԽԱՆ. Թաթարները հայերի դռներն էին ծեծում ամեն օր: Մենք միշտ լսում էինք, թե ինչպես են դռները ծեծում: Այն ընտանիքը, որտեղ ապրում էի, 17 տարեկան մի աղջիկ ուներ և դուռը չէին բացում: Իմ այնտեղ եղած ժամանակ թաթարները չէին գալիս, բայց շատ նախազգուշացումներ էին լինում այն մասին, որ թաթարները գալիս են աղջիկների հետևից: Յուզբաշյանները շատ հարուստ մարդիկ էին, բայց վերջում քայքայվեցին, թաթարները նրանց կալվածքը հրդեհեցին: Նրանք մի քանի տներ ունեին Բաքվում, բայց բոլորը վաճառեցին, որովհետև վախենում էին այնտեղ մնալ: Ջիվանշիրի կողմից Յուզբաշյաններին անձնապես հետապնդման մասին չգիտեմ, բայց նրանց կալվածքը վառվեց՝ նրա պաշտոնի գլուխ եղած ժամանակ: Յուզբաշյանը դժվարությամբ էր դուրս գալիս տնից, իր կյանքը բազմիցս վտանգի տակ է եղել:
ՀԱՐՑ. Ջիվանշիրը եթե ուզեր, կարո՞ղ էր կանխել այդ վայրագությունները ու կոտորածները:
ՊԱՏԱՍԽԱՆ. Անկասկած:

Խոսրովյան էֆենդին ավարտեց իր հարցաքննությունը:

Հետո դատախազ Ռիկատսոն Հաթը վկային տվեց հետևյալ հարցերը.

ՀԱՐՑ. Դու Լոնդոնո՞ւմ ես ծնվել:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո:

ՀԱՐՑ. Ի՞նչ էիր անում Մերձավոր Արևելքում:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես կրթական ծառայություններ էի մատուցում:

ՀԱՐՑ. Որպես ուսուցիչ աշխատե՞լ ես Միսիոներների դպրոցում:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ:

ՀԱՐՑ. Քո տեղեկատվական աղբյուրները միշտ հայե՞րն են եղել:

ՊԱՏԱՍԽԱՆ. Բոլորը հայեր չեն եղել: Բեյբուտովը թաթար էր: Առաջինը ես նրանից իմացա Ջիվանշիրի մասին: Նրա մասին իմացա նաև Յուզբաշյանի թաթար ընկերներից: Ես այնտեղ գնացի այդ երեխաների համար, որովհետև նրանց մայրը հայ էր և վախենում էր: Որպես անգլիացի, գնացի: Արևելքում չորս տարի եղել եմ նույն ընտանիքի հետ: Հայերեն մի փոքր հասկանում եմ: Ես միշտ անգլերեն էի խոսում: Բեյբուտովի հետ ռուսերեն էի խոսում:

ՀԱՐՑ. Ռուսերեն որտե՞ղ ես սովորել:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ռուսաստանում:

ՀԱՐՑ. Ինչքա՞ն ժամանակ ես ապրել Ռուսաստանում:

ՊԱՏԱՍԽԱՆ. Վեց տարի:

ՀԱՐՑ. Հայերի տված տեղեկությունների ճշգրտությանը վստահո՞ւմ ես: Դրանք չափազանցված չե՞ն:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ:

ՀԱՐՑ. Թուրքերի հանդեպ ինչպիսի՞ զգացումներ էին տածում հայերը:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես չգիտեմ, բայց հայերը ապրում էին վախի մեջ:

ՀԱՐՑ. Հայերը թաթարներին արհամարհում, կամ ատո՞ւմ էին՝ նրանց մուսուլման լինելուն համար:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես չգիտեմ:

ՀԱՐՑ. Ի՞նչն էր հայերի դիրքի, կամ ձգտումների էությունը:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես ոչինչ չգիտեմ այդ մասին:

ՀԱՐՑ. Դու ասացիր, որ այդ կոտորածները կատարվեցին, որովհետև հայերը բրիտանամետ էին, իսկ թաթարները՝ գերմանամետ: Երբեք չե՞ք լսել, որ մուսուլմանները այդ կոտորածները կատարեցին իբրև հայերի կողմից մուսուլմանների նկատմամբ կատարված կոտորածների վրեժ:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ:

ՀԱՐՑ. Լսե՞լ ես, որ բոլշևիկները թուրքերին կոտորել են հայ կամավորների հետ միասին:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ:

ՀԱՐՑ. Հայերի մեջ մեծ կալվածատերեր կայի՞ն:

ՊԱՏԱՍԽԱՆ. Անկասկած, այո:

ՀԱՐՑ. Հայերն է, որ տիրում էին հարստությանը, այդպես չէ՞:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո:

ՀԱՐՑ. Դա չի՞ վկայում, որ նախկինում մուսուլմանները վատ չեն վերաբերվել նրանց:

ՊԱՏԱՍԽԱՆ. Դա ճիշտ էր միայն Թիֆլիսում, բայց ոչ Բաքվում:

ՀԱՐՑ. Ինչպիսի՞ զգացումներ ունես մուսուլմանների նկատմամբ:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես նրանց չեմ ատում:

ՀԱՐՑ. Կովկասում որևէ հայերեն թերթ հրատարակվո՞ւմ էր:

ՊԱՏԱՍԽԱՆ. Կարծեմ, այո:

ՀԱՐՑ. Այդ թերթերից որևէ մեկը կարդացե՞լ ես:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ:

ՀԱՐՑ. Որո՞նք էին Մուսավաթ կուսակցության նպատակները: Ի՞նչ է քո կարծիքը: Ինչպե՞ս էին հայերը նայում մուսուլմաններին:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այդ նյութի մասին ես ոչինչ չգիտեմ:

ՀԱՐՑ. Դու ասացիր, որ նրանք նույն գաղափարներն ունեին, ինչ Միություն և Առաջադիմություն կուսակցությունը: Ի՞նչ տեսակ մարդիկ էին միութենականները:

ՊԱՏԱՍԽԱՆ. Չար մարդիկ էին:

ՀԱՐՑ. Սա քո՞ կարծիքն է, թե՞ քո հայ ընկերների կարծիքը:

ՊԱՏԱՍԽԱՆ. Սա իմ կարծիքն է: Սա այն է, ինչ լսել եմ:

ՀԱՐՑ. Որևէ բան գիտե՞ս Կովկասում հայկական միությունների մասին:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ:

ՀԱՐՑ. Իմացե՞լ ես ադրբեջանական կառավարության դեմ հայերի գործողությունների մասին:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես երբեք ոչ մի բան չեմ լսել:

ՀԱՐՑ. Դու ասացիր, որ հայ քաղաքացիներ մեռած-պառկած էին փողոցներին: Քանի՞ հատ մարմին կար այնտեղ:

ՊԱՏԱՍԽԱՆ. Չորս: Բայց և տեսա, որ մեկի վրա հարձակվում էին:

ՀԱՐՑ. Որտե՞ղ, քաղաքո՞ւմ, թե՞ դրսում:

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքից դուրս:

ՀԱՐՑ. Բաքվի կոտորածները կատարում էին կանոնավոր զինվորական ուժե՞րը, թե՞ անկանոնները:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես լսել եմ, որ դրանք կատարվել են կազմակերպված խմբերի կողմից:

ՀԱՐՑ. Նրանցից որևէ մեկին տեսե՞լ ես:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ:

ՀԱՐՑ. Որտեղի՞ց գիտես, որ Ջիվանշիրը պատասխանատու էր:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ջիվանշիրը իշխանություն ուներ: Նա կարող էր կանխել կոտորածները:

ՀԱՐՑ. Ուրեմն, Ջիվանշիրը մեղադրվում է ոչ թե նրա համար, որ կազմակերպել է կոտորածները, այլ որովհետև չի՞ կանգնեցրել դրանք:

ՊԱՏԱՍԽԱՆ. Նա նաև կազմակերպել է դրանք:

ՀԱՐՑ. Որտեղի՞ց գիտես:

ՊԱՏԱՍԽԱՆ. Լսել եմ:

ՀԱՐՑ. Ներքին գործերի նախարարը ինչո՞ւ պետք է ոճիրներ կազմակերպեր:

ՊԱՏԱՍԽԱՆ. Որովհետև հայերը բրիտանամետ էին:

ՀԱՐՑ. Ինչպիսի՞ն էր մուսուլմանների թվի համեմատությունը հայերի թվի նկատմամբ:

ՊԱՏԱՍԽԱՆ. Մուսուլմանները զգալիորեն ավելի շատ էին:

ՀԱՐՑ. Հայերը բրիտանացիների կողքին կռվում էին իրենց սեփական կառավարության դեմ, այնպես չէ՞:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես դա չգիտեմ:

ՀԱՐՑ. Քո նկատառումները այդ եզրակացությանը չե՞ն հանգեցնում:

ՊԱՏԱՍԽԱՆ. Կարծում եմ՝ այո:

Այս պահին դատախազ Ռիկատսոն Հաթը վերադարձավ իր տեղը: Պաշտպան փաստաբան Խոսրովյան էֆենդին վկային տվեց հետևյալ լրացուցիչ հարցերը.

ՀԱՐՑ. Դատախազը վկային դժվար դրության մեջ դրեց՝ ասելով, որ Ազերի կառավարություն կար: Բաքուն պատկանում էր թաթարների՞ն, թե՞ ռուսներին:

ՊԱՏԱՍԽԱՆ. Թաթարներին:

ՀԱՐՑ. Ես նկատի ունեմ աշխարհագրականորեն:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այն ռուսներին էր պատկանում:

ՀԱՐՑ. Կարո՞ղ էր Բաքուն, որը պատկանում էր ռուսներին, անկախ լինել:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այն ռուսներին էր պատկանում:

Ապա փաստաբան Հայդար Ռիֆատը սկսեց վկայի խաչաձև հարցաքննությունը.

ՀԱՐՑ. Դու ե՞րբ եկար Ստամբուլ:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես Բաքումի ճամփով Ստամբուլ հասա 1920-ի հուլիսի 4-ին:

ՀԱՐՑ. Քո հասնելուց հետո ո՞ր ընտանիքի հետ էիր մնում:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես Բոսֆորում շաբաթը երեք օր Ինջիջյանների հետ էի մնում: Մյուս օրերը լինում էի տեր և տիկին Խոսրովյանների հետ:

ՀԱՐՑ. Տիկին Ինջիջյանից առաջ ո՞ւմ էիր ուսուցանում:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես միայն այդ ընտանիքներին եմ ուսուցանել:

ՀԱՐՑ. Ո՞վ ներկայացրեց Խոսրովյան էֆենդիին:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես ներկայացվեցի բրիտանական դեսպանության կողմից:

ՀԱՐՑ. Տիկին Ինջիջյանին քեզ ո՞վ երաշխավորեց:

ՊԱՏԱՍԽԱՆ. Խոսրովյան էֆենդին:

ՀԱՐՑ. Բրիտանական դեսպանությունում հույն կամ հայ աշխատողներ կա՞ն: Ո՞վ է երաշխավորել նրանց:

ՊԱՏԱՍԽԱՆ. Պաշտոնական դիմում էր կատարված դեսպանություն:

ՀԱՐՑ. Մինչև այժմ ոչ մի թուրք ընտանիքի հետ կապեր չե՞ս հաստատել:

ՊԱՏԱՍԽԱՆ. Երբ Ստամբուլում էի, ուսուցանում էի մի թուրք ընտանիքի:

ՀԱՐՑ. Ո՞րն էր այն:

ՊԱՏԱՍԽԱՆ. Նա մի բժիշկ էր:

ՀԱՐՑ. Մի ընտանիքի *(անունը)* չի՞ կարող հիշել:

ՊԱՏԱՍԽԱՆ. Կարծում եմ՝ ոչ:

ՀԱՐՑ. Դա նշանակում է, նա որևէ թուրք ընտանիք չի՞ ճանաչում:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ:

ՀԱՐՑ. Լոնդոնի ի՞նչ ընտանիքից է նա սերում:

ՊԱՏԱՍԽԱՆ. Բրաուն *(գերմանական)* ընտանիքից:

ՀԱՐՑ. Նա Բաքվում է ապրել 1910-ին *(տարին նշված է ինչպես հրատարակության մեջ: Հավանաբար պետք է լինի 1920)* Նշանակում է, ինչ որ ասաց՝ ասեկոսեների վրա է հիմնված:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո: Ինչ որ ասացի՝ հիմնված է իմ լսածների վրա:

ՀԱՐՑ. Նա ասաց, որ շատ մարմիններ է տեսել փողոցում: Այդ մարդիկ ե՞րբ էին սպանվել:

ՊԱՏԱՍԽԱՆ. Նրանք նոր էին սպանվել:

ՀԱՐՑ. Նա հայտարարում է, որ դրանք հայերի մարմիններ էին: Ինչի՞ց գիտե, որ դրանք մուսուլմաններ չէին:

ՊԱՏԱՍԽԱՆ. Իրենց գլխարկներից:

ՀԱՐՑ. Նա ասաց «Տեսա չորս թաթարների, որոնք հայերի էին սպանում»: Ինչպե՞ս տեսավ նրանց:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես ձիու վրա էի: Արագ էի գնում: Տեսա, որ այդ չորս թաթարները հարձակվեցին հայերի վրա:

ՀԱՐՑ. Վկան ասաց, որ նա *(Բաքու)* գնաց 1920–ին: Բրեստ-Լիտովսկի համաձայնագրում, որը ստորագրվեց 1918–ին, գերմանացիները պահանջեցին Բաքվի սիրտը, այսինքն՝ նավթահորերը: Այդպիսով, ինչպե՞ս կարող էին ազերիները գերմանամետ լինել:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես այդ դաշնագրի մասին չգիտեմ:

ՀԱՐՑ. Վկան ասաց, որ Ջիվանշիրը դաժան էր: Մենք հարցրեցինք՝ ինչո՞ւ: Նա պատասխանեց՝ «Որովհետև հայերը նրանից սարսափում էին»: Վկան ի՞նչ պիտի ասի, եթե ես ասեմ, որ հայերն էին դաժան, որ Ջիվանշիրը արդար մարդ էր և այդ է պատճառը, որ հայերը վախենում էին նրանից:

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայերը չար չէին:

ՀԱՐՑ. Վկան ասաց, որ բոլշևիկները եկան իր՝ 1920–ին Բաքու հասնելուց հետո: Բոլշևիկները հասնելուց հետո բրիտանացիները մնացի՞ն այնտեղ:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ուժերը դուրս քաշվեցին: Մնացին միայն նրանք, ովքեր աշխատում էին նավթի հորերում:

ՀԱՐՑ. 1920–ին Ջիվանշիրը կառավարության մե՞ջ էր:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, բայց ես վստահ չեմ: *(Մի փոքր անորոշությունից հետո)* Նա, անկասկած, կառավարության մեջ էր:

ՀԱՐՑ. Ոչ, նա չկար: Հրեամետ, կամ հույնամետ մարդիկ կայի՞ն Բաքվում:

ՊԱՏԱՍԽԱՆ. Թբիլիսիում ես տեսա միայն թաթարներ, հայեր և ռուսներ: Որևէ հույն չեմ տեսել:

ՀԱՐՑ. Ռուսները նույնպե՞ս գերմանամետ էին:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես չգիտեմ:

ՀԱՐՑ. Ի՞նչ քաղաքացիություն ունեին ռուսական տերիտորիաներում գտնվող հայերը:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես չգիտեմ:

ՀԱՐՑ. Ովքե՞ր էին կազմում բնակչության մեծամասնությունը, հայե՞րը, թե՞ թաթարները:

ՊԱՏԱՍԽԱՆ. Թաթարները:

ՀԱՐՑ. Քանի որ հայերը փոքրամասնություն էին, պետք չէ՞ որ նրանք խուսափեին որևէ խնդիրներ ստեղծելուց:

ՊԱՏԱՍԽԱՆ. Դրա պատճառը արդեն բացատրել եմ: Հայերը բրիտանամետ էին:

ՏԱՍՆՈՒԹԵՐՈՐԴ ՎԿԱ

Երդվելուց հետո գնդապետ Բորիս Գեխտման Սաքվարալիձեն ասաց, որ ինքը ռուսական բանակի գնդապետ է: Հետո պատասխանեց պաշտպան փաստաբան Խոսրովյան էֆենդիի հարցերին.

ՀԱՐՑ. Դու Բաքվում եղե՞լ ես:
ՊԱՏԱՍԽԱՆ. Ես այնտեղ էի 1918-ի ապրիլից նոյեմբեր:

Դատական ատյանը հարցրեց.

ՀԱՐՑ. Ուզում ես ասել, զինադադարից առա՞ջ:
ՊԱՏԱՍԽԱՆ. Այո:

Պաշտպան փաստաբանը շարունակեց հարցաքննությունը.

ՀԱՐՑ. 1918–ի սեպտեմբերին ի՞նչ տեսար Բաքվում:
ՊԱՏԱՍԽԱՆ. Օգոստոսի վերջերին տեսա բրիտանական ուժերի դուրս քաշվելը քաղաքից:
ՀԱՐՑ. Բրիտանական բանակի դուրս քաշվելուց հետո ի՞նչ տեղի ունեցավ:
ՊԱՏԱՍԽԱՆ. Բրիտանացիների քաշվելուց հետո թաթար հրոսակախմբեր եկան և սկսեցին հայերի ջարդերը: Ես դա իմ աչքով եմ տեսել:
ՀԱՐՑ. Կարո՞ղ ես նկարագրել այն դեպքերը, որոնց դու ականատես ես եղել:
ՊԱՏԱՍԽԱՆ. Ես մուսուլմանական թաղամասում էի ապրում: Երբ փողոց դուրս եկա, տեսա հայերի դռները բաց: Թաթարները հայերին դուրս էին բերել փողոց և սպանում մի քանի տղամարդկանց ու կանանց:
ՀԱՐՑ. Ինչքա՞ն տևեց այդ ջարդը:
ՊԱՏԱՍԽԱՆ. Այն տևեց երեք օր և երեք գիշեր:
ՀԱՐՑ. Ջարդը միայն հայերի՞ դեմ էր:
ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ, մի քանի ռուսներ ևս սպանվեցին: Ըստ էության, ես շատ հայեր չտեսա սպանվելիս. ես տեսա նրանցից վեց, կամ յոթ հոգի սպանվելիս:
ՀԱՐՑ. Ինչո՞ւ էին թաթարները սպանում հայերին:
ՊԱՏԱՍԽԱՆ. Ես կարծում եմ, որ ջարդը թաթարների և հայերի միջև որոշ պատմական թշնամության արդյունքն էր: Ենթադրում եմ, որ թաթարները համակրում էին գերմանացիներին և թուրքերին, իսկ հայերը՝ Միացյալ ուժերին:
ՀԱՐՑ. Վկան ասաց, որ ջարդերը տևեցին երեք օր և երեք գիշեր: Հետապնդումները դրանից ավելի երկար չտևեցի՞ն:
ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, հետապնդումները շարունակվեցին, բայց սպանությունները՝ ոչ:
ՀԱՐՑ. Ո՞վ էր կազմակերպում և ղեկավարում այդ սպանությունները:
ՊԱՏԱՍԽԱՆ. Դա դժվար է ասել: Համենայն դեպս, կարծում եմ, որ կառավարությունն էր կազմակերպում:
ՀԱՐՑ. Ջիվանշիր անունը լսե՞լ ես;
ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, նա Ադրբեջանի Ներքին գործերի նախարարն էր:
ՀԱՐՑ. Ջիվանշիրին երբևէ տեսե՞լ ես;
ՊԱՏԱՍԽԱՆ. Ես նրան տեսել եմ, բայց նրա հետ չեմ խոսել:
ՀԱՐՑ. Նրան տեսել ես կոտորածներից առա՞ջ, թե՞ հետո: Որտե՞ղ ես տեսել նրան:
ՊԱՏԱՍԽԱՆ. Ես նրան տեսել եմ փողոցում, թե՛ կոտորածներից առաջ, և թե՛ հետո:
ՀԱՐՑ. Այդ կոտորածների համար Ջիվանշիրը կարո՞ղ է պատասխանատու համարվել:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, առանց որևէ կասկածի:

Այս պահին դատարանը զգուշացրեց պաշտպանին և խնդրեց վերախմբագրել իր հարցը: Պաշտպան փաստաբանը հետևյալ կերպ վերաձևակերպեց հարցը.

ՀԱՐՑ. Ո՞վ էր պատասխանատու կոտորածների համար:
ՊԱՏԱՍԽԱՆ. Կառավարությունն էր պատասխանատու, որովհետև, եթե ցանկանար, կառավարությունը կարող էր կանգնեցնել ջարդերը:
ՀԱՐՑ. Կառավարությունը ոչ մի ջանք չգործադրե՞ց կանգնեցնելու կոտորածները, որոնք տևեցին երեք օր և երեք գիշեր:
ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ, նա ոչ մի ջանք չգործադրեց:
ՀԱՐՑ. *(Դու)* սպա ես: Աստծո անունով և *(քո)* խղճով, ո՞վ է կրում մեղադրանքն ու պատասխանատվությունը այդ կոտորածների համար:
ՊԱՏԱՍԽԱՆ. Ես կարող եմ ասել, որ հայերը ոչ մի ձևով պատասխանատու չէին: Պատասխանատվությունը կրում են միայն նրանք, ովքեր կազմակերպել էին այն:
ՀԱՐՑ. Նկատի ունենալով, որ Բաքուն ադրբեջանական քաղաք է, կարո՞ղ է պատահել, որ հայերը ջարդերի ենթարկվեցին, որովհետև ապստամբություն էին սկսել:
ՊԱՏԱՍԽԱՆ. Ես Բաքուն միշտ համարել եմ ռուսական քաղաք և ոչ թե ադրբեջանական:

Խոսրովյան էֆենդին ավարտեց իր հարցաքննությունը: Դատախազ Ռիկատսոն Հաթը վկային հետևյալ հարցերը տվեց.

ՀԱՐՑ. Վկան Բաքու գնաց 1918–ին, ճի՞շտ է:
ՊԱՏԱՍԽԱՆ. Այո:
ՀԱՐՑ. Այն ժամանակ լսե՞ց, որ հայերը մուսուլմանների են սպանում:
ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ:
ՀԱՐՑ. Չի՞ լսել, որ բոլշևիկները մարտին կոտորածներ են կատարել:
ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ:
ՀԱՐՑ. Բոլշևիկները կամ հայերը մարտ ամսին Բաքվո՞ւմ էին:
ՊԱՏԱՍԽԱՆ. Հայ բոլշևիկներ կային:
ՀԱՐՑ. Ի՞նչ է ուզում ասելով՝ «Հայ բոլշևիկներ կային»: Հայերը բոլշևի՞կ դարձան, թե՞ բոլշևիկները հայ դարձան:
ՊԱՏԱՍԽԱՆ. Հայերը բոլշևիկ դարձան:
ՀԱՐՑ. Այդ հայերը ի՞նչ արեցին:
ՊԱՏԱՍԽԱՆ. Հայ բոլշևիկները և կառավարության մեջ եղող բոլշևիկները կառավարությունը վերցրին իրենց ձեռքը, մինչև ռուսական բանակի հասնելը:
ՀԱՐՑ. Վկան չգիտի՞ մարտ ամսին կառավարությունը իրենց ձեռքը վերցրած հայ բոլշևիկների կողմից մուսուլմանների նկատմամբ կատարված կոտորածների մասին:
ՊԱՏԱՍԽԱՆ. Ես այդպիսի բան չեմ լսել:
ՀԱՐՑ. Դա ռուսական սովորությո՞ւն է, որ մի քաղաք վերցնելուց այնտեղ կոտորածներ կազմակերպեն:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ ամեն քաղաքում *(ինչպես հրատարակված է)*:

ՀԱՐՑ. Վկան պատերազմից առաջ Կովկասյան մասերում զինվորական ծառայություն կատարե՞լ է:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես Թիֆլիսում ծառայել եմ իբրև Ցարական կառավարության զինվորական սպա:

ՀԱՐՑ. Ե՞րբ էր դա:

ՊԱՏԱՍԽԱՆ. 1914-ին: Պատերազմը սկսվելուց հետո ես մոտ մեկ ամիս մնացի Թիֆլիսում:

ՀԱՐՑ. Այդ մեկ ամսվա ընթացքում ինչպիսի՞ն էր հայերի վերաբերմունքը մուսուլմանների հանդեպ:

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայերի և մուսուլմանների միջև ամեն ինչ շատ հանգիստ էր:

ՀԱՐՑ. Վկան գիտե՞, որ Կովկասի ազգերին միմյանց դեմ լարելը ցարական կառավարության քաղաքականությունն էր:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ:

ՀԱՐՑ. Եկեք խոսենք Բաքվի կոտորածների մասին: Ո՞վ էր ղեկավարում կոտորածները:

ՊԱՏԱՍԽԱՆ. Թաթարները:

ՀԱՐՑ. Նա սեփական աչքո՞վ է տեսել, այո՞:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո:

ՀԱՐՑ. Թաթարները զինվորականնե՞ր էին, թե՞ քաղաքացիներ:

ՊԱՏԱՍԽԱՆ. Դժվար է ասել:

ՀԱՐՑ. Ուրեմն, քաղաքացիներ էին:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո:

ՀԱՐՑ. Նշանակում է նրանք անկանոններն էին, որոնք գնում էին կողոպուտի համար:

ՊԱՏԱՍԽԱՆ. Մի կողմից՝ այո, բայց մյուս կողմից՝ ոչ, որովհետև, եթե կառավարությունը ուզենար, կարող էր կանգնեցնել կոտորածը:

ՀԱՐՑ. Վկան չգիտե՞, որ հայերը նույնպես մասնակցում էին թալանին:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ:

ՀԱՐՑ. Վկան ասաց, որ կոտորածը կազմակերպված էր: Նա ինչպե՞ս կարող է նման հաստատում անել, նկատի ունենալով, որ կոտորածներ կատարողները անկանոններն էին:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես միշտ լսել եմ, որ թաթարները ուզում են ոչնչացնել հայերին:

ՀԱՐՑ. Ես հարցնում եմ՝ կոտորածները ի՞նչ ձևով էին կազմակերպված:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես գտնում եմ, որ դրանք կազմակերպված էին: Կառավարությունը կոտորածները կանգնեցնելու ոչ մի փորձ չարեց:

ՀԱՐՑ. Այդ ժամանակ որևէ հայտարարություն տեսե՞լ է:

ՊԱՏԱՍԽԱՆ. Տեսել եմ:

ՀԱՐՑ. Ո՞վ էր դա հրատարակել:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես այն չեմ կարդացել:

ՀԱՐՑ. Ի՞նչ լեզվով էր գրված:

ՊԱՏԱՍԽԱՆ. Թաթարերեն: Ինչ որ լսել եմ, այն կազմված էր Մուսավաթ կուսակցության կողմից:

ՀԱՐՑ. Բաքվից դուրս ի՞նչ բանակ էր կանգնած:

ՊԱՏԱՍԽԱՆ. Թրքական բանակը:

ՀԱՐՑ. Ո՞վ էր հրամանատարը:

ՊԱՏԱՍԽԱՆ. Նուրի փաշան:

ՀԱՐՑ. Օսմանյան բանակը քաղաք մտավ կոտորածներից առա՞ջ, թե՞ հետո:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այն մտավ կոտորածներից հետո:

ՀԱՐՑ. Իր ուժերը քաղաք մտցնելուց հետո Նուրի փաշան կոտորածները կանգնեցնելու համար որևէ միջոց ձեռնարկե՞ց:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, հենց որ քաղաք մտավ, Նուրի փաշան իսկույն կանգնեցրեց կոտորածները:

ՀԱՐՑ. Նա Ի՞նչ միջոցներ ձեռք առավ:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես չգիտեմ, բայց երբ Նուրի փաշան քաղաք մտավ, կոտորածները դադարեցին:

ՀԱՐՑ. Ուրեմն, կոտորածների դադարեցումը նա վերագրում է Նուրի փաշայի՞ն:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, Նուրի փաշան կանգնեցրեց այն:

ՀԱՐՑ. Բաքվում ի՞նչ կառավարություն կար, երբ Նուրի փաշան քաղաք մտավ:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ազերի կառավարությունն էր:

ՀԱՐՑ. Նուրի փաշան ազերի կառավարության հետ համագործակցե՞ց:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո:

ՀԱՐՑ. Նշանակում է՝ ազերի կառավարությունը հավանություն էր տալիս Նուրի փաշայի գործողություններին:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, անկասկած:

ՀԱՐՑ. Հետևաբար, ինչպես վկան ընդունում է, Նուրի փաշայի ձեռնարկած միջոցառումների շնորհիվ կոտորածների դադարեցումը կարելի է վերագրել նաև ազերի կառավարությանը: Վերջապես, ազերի կառավարությունը հավանությո՞ւն էր տալիս Նուրի փաշայի արածներին: Ճի՞շտ է:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ, որովհետև Նուրի փաշան ուզում էր, որ բանակը քաղաք մտներ իր, որպես բանակի հրամանատարի, արժանապատվությամբ: Այդ պատճառով է, որ նա հանդարտություն էր ուզում քաղաքում:

ՀԱՐՑ. Նկատի ունենալով, որ Նուրի փաշան և ազերի կառավարությունը միասին էին աշխատում, հաշվի առնելով վկայի ցուցմունքը, որ Նուրի փաշան դադարեցրեց կոտորածները և որ նա քաղաքում հանդարտություն էր ուզում, նշանակում է, ազերի կառավարությունը նույնպես քաղաքում հանդարտություն էր ուզում:

ՊԱՏԱՍԽԱՆ. Դա հնարավոր է:

ՀԱՐՑ. Օսմանյան բանակը քաղաքում մնա՞ց:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո:

ՀԱՐՑ. Օսմանյան բանակը որևէ կողմի հանդեպ կողմնապահություն անո՞ւմ էր:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ:

ՀԱՐՑ. Նուրի փաշան հայերի վրա հարձակվելու հրաման տվե՞ց:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ:

ՀԱՐՑ. Վկան ասաց, որ նա ապրում էր քաղաքի մուսուլմանական հատվածում: Ինչո՞ւ էր այնտեղ ապրում:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես այնտեղ էի ապրում, որովհետև իմ ռուս ընկերոջ տունը այնտեղ էր:

ՀԱՐՑ. Կոտորածների ժամանակ նա իր ընկերների հե՞տ էր:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես մի քանի անգամ փողոց դուրս եկա, որովհետև ես մոտիկից

կապ ունեի քաղաքում տեղի ունեցող դեպքերի հետ:

ՀԱՐՑ. **Մուսուլմանական հատվածում շա՞տ մարդ սպանվեց:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, ջարդեր տեղի ունեցան թրքական հատվածում գտնվող հայերի տներում:

ՀԱՐՑ. **Նշանակում է, թրքական հատվածում հայերի տնե՞ր կային:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Շատ քիչ:

ՀԱՐՑ. **Այդ երեք օրերին Ջիվանշիրը Բաքվո՞ւմ էր:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես չգիտեմ:

ՀԱՐՑ. **Վկան Ջիվանշիրին տեսե՞լ է կոտորածներից առաջ:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես նրան տեսա մեկ շաբաթ ավելի շուտ:

ՀԱՐՑ. **Ջիվանշիրը ի՞նչ հեղինակություն ուներ թաթարների և ռուսների մոտ:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Նա ճանաչված էր իբրև ուժեղ ազգայնամոլ:

ՀԱՐՑ. **Դա նշանակում է, որ Ջիվանշիրը մի մարդ էր, որը սիրում էր իր երկիրը և կրոնը: Վկան ի՞նչ է մտածում այս մասին:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, նա այդպիսի մարդ էր: Նա սիրում էր թուրքերին և թաթարներին:

Դատախազը ավարտեց հարցաքննությունը: Խոսրովյան էֆենդին վերադարձավ և նոր հարցեր տվեց վկային.

ՀԱՐՑ. **Վկան ասաց, որ նա Բաքու գնաց 1918–ի ապրիլին: Սա նշանակո՞ւմ է, որ մարտի դեպքերին նա այնտեղ չէր:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ:

ՀԱՐՑ. **Բրիտանական բանակի Բաքվում եղած ժամանակ կառավարությունը բոլշևիկների՞նն էր, թե՞ ազերիներինը:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Մինչև թուրքերի քաղաք մտնելը բոլշևիկյան կառավարություն էր: Երբ բրիտանացիները այնտեղ էին, ադրբեջանական կառավարությունը իշխանության գլուխ էր: Դա ռուսների և հայերի միացյալ կառավարություն էր:

ՀԱՐՑ. **Պատասխանելով դատախազի հարցերից մեկին, վկան ասաց, որ Նուրի Փաշան կոտորածները կանգնեցրեց: Կոտորածները կարող են կանգնեցվել երկու ձևով: Այն կանգնեցվեց դանդաղորե՞ն, թե՞ միանգամից:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Կոտորածները մարեցին աստիճանաբար, քաղաքից դուրս շարունակվելով հանդերձ:

ՀԱՐՑ. **Դատախազին տված իր տեղեկության մեջ վկան իր սեփակա՞ն տեղեկությունն էր տալիս, թե՞ ուրիշ տեղից ստացված տեղեկություն:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Նուրի փաշայի գործողությունների վերաբերյալ խաչաձև հարցաքննության ժամանակ իմ տված ցուցմունքները իմ անձնական տպավորություններն են:

ՀԱՐՑ. **Ինչպես հայտնի է, Նուրի փաշան մի հայտարարություն հրապարակեց, որը պահանջում էր հանձնել բոլոր զենքերը: Հայերը հնազանդվեցի՞ն այս հայտարարությանը, հանձնեցի՞ն իրենց զենքերը:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, հանձնեցին: Ես չեմ կարծում, որ հայերը հանձնած լինեն այն ժամանակ, երբ Նուրի փաշան իրենց առաջարկեց հանձնել, քանի որ այն ժամանակ բրիտանացիների հսկողության տակ էին:

ՀԱՐՑ. **Դու այդ տեսա՞ր, թե՞ լսեցիր այդ մասին:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես դա չեմ տեսել, ես պարզապես լսել եմ:

ՀԱՐՑ. **Եթե վկան լիներ Բաքվի մեջ բրիտանական բանակի հետ աշխատող հայկական բանակի մի սպա, նա, Նուրի փաշայի հայտարարությանը հնազանդվելով կհանձնե՞ր իր զենքերը:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ, չէի հանձնի:

Այս պահին Խոսրովյան էֆենդին չկարողացավ զսպել իրեն և ասաց՝ «Բռավո» հարցին տրված պատասխանի համար.

ՀԱՐՑ. **Վկայի այն կարծիքը, թե թաթարները ազգայնամոլներ են, կազմված է թաթարների թերթերի՞ց, թե՞ քաղված է ռուսական ավանդույթներից:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Որ թաթարները ազգայնամոլներ են, ես կարդացել եմ ռուսական թերթերում և լսել այլ տեղերում:

ՀԱՐՑ. **Նա կարդացե՞լ է թաթարների կողմից հրատարակվող ռուսալեզու թերթեր:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես այդ մասին կարդացել եմ ադրբեջանական պաշտոնական թերթերում:

Խոսրովյան էֆենդին վերադարձավ իր տեղը: (Ջիվանշիրի ընտանիքի) փաստաբան Հայդար Ռիֆատ բեյը վկային տվեց հետևյալ հարցերը.

ՀԱՐՑ. **Վկան հայերեն խոսո՞ւմ է:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ:

ՀԱՐՑ. **Այստեղ նա որտե՞ղ է ապրում:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես ապրում եմ Բեյօղլու, Էվլիյա փողոց, թիվ 69:

ՀԱՐՑ. **Նա որպես գնդապետ ո՞ր գնդի, ո՞ր գումարտակում է ծառայել:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես որպես գնդապետ եմ ծառայել թիվ 17 Դրագունզում, Նիժեգորոդսկի գնդում:

ՀԱՐՑ. **Նա կարո՞ղ է մեզ ասել բրիտանական բանակի Բաքվից մեկնելու ճշգրիտ ամսաթիվը:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Դա հին տարեցույցով օգոստոսի 28-ին կամ 29-ին էր:

ՀԱՐՑ. **Վկան ասաց, որ Ջիվանշիրին տեսել է: Ջիվանշիրը կուզ ունե՞ր: Նա լրի՞վ մորուք ուներ, թե՞ անմազ էր: Նա քանի՞ տարեկան էր: Թող նկարագրի արտաքինը:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես նրան միայն փողոցում տեսա: Ի՞նչ կարող եմ ասել իր տեսքի մասին: Կարծում եմ, նա մի քիչ բարձրահասակ էր և պարսիկի էր նման:

ՀԱՐՑ. **Նա մորուք ունե՞ր:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Նա մորուք չուներ:

ՀԱՐՑ. **Նա նրան տեսել է նաև ինքնաշարժում՝ երկու անգամ:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես նրան շատ անգամներ եմ տեսել ինքնաշարժով մեր կողքով անցնելիս: Ամեն մարդ ասում էր «Ջիվանշիրն է անցնում»:

ՀԱՐՑ. **Վկան ասաց, որ հայերը բրիտանամետ էին: Որտեղի՞ց գիտե դա:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես տեսել եմ հայ կամավորներ բրիտանական բանակի հետ քաղաք մտնելիս:

ՀԱՐՑ. **Բաքվում միայն հայեր ու թաթարներ կայի՞ն, թե՞ հրեաներ ու հույներ ևս կային:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Մեծամասնությունը հայեր, թաթարներ ու ռուսներ էին: Բայց նաև մի քանի հրեաներ ու հույներ կային:

ՀԱՐՑ. Հայերը կոտորվեցին, հավանաբար, այն բանի համար, որ բրիտանամետ էին: Հույները գերմանամե՞տ էին:

ՊԱՏԱՍԽԱՆ. Չգիտեմ:

ՀԱՐՑ. Թաթարները և թուրքերը առանց դիմադրությա՞ն, թե՞ կռվելով քաղաք մտան:

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքում կռիվներ չեղան:

ՀԱՐՑ. Դա նշանակում է, քաղաքի հայ զինվորները քաղաքից դո՞ւրս էին սպասում:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես չգիտեմ:

ՀԱՐՑ. Թաթարների և թուրքերի քաղաք մտնելուց մեկ ամիս առա՞ջ է, որ թաթարները հարձակվեցին քաղաքի վրա:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես չեմ հիշում:

ՀԱՐՑ. Արձանագրությունը ցույց է տալիս, որ երկու գումարտակներ ոչնչացվել են *(քաղաքում)* մեկ ամիս շուտ: Վկան հինգ ամիս քաղաքում էր: Ինչպե՞ս է, որ նա չի հիշում: Ես դա շատ տարօրինակ եմ համարում:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես այդպիսի բան չեմ լսել:

ՀԱՐՑ. Վկան ասաց, որ Ջիվանշիրին տեսել է թուրքերի և թաթարների քաղաք մտնելուց մեկ շաբաթ առաջ: Ինչպե՞ս կարող էր Ջիվանշիրը երևալ այն ժամանակ, երբ հայերն ու թաթարները կռվում էին: Ինչպե՞ս կարող է վկան սա համաձայնեցնել իրականության հետ:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես չգիտեմ:

ՀԱՐՑ. Վկան 1918–ի մարտի վերջերին որտեղի՞ց եկավ Բաքու:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես այնտեղ եկա Խարկովից՝ փախչելով բոլշևիկներից:

ՀԱՐՑ. Վկան ասաց, որ փախչում էր բոլշևիկներից: Մինչդեռ, սկսած մարտ ամսից, Բաքուն բոլշևիկների ձեռքում էր: Վկան ինչպե՞ս կարող էր այնտեղ գնալ:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես ճամփա դուրս չեկա Բաքու գնալու մտադրությամբ: Ես Թիֆլիս էի գնում, բայց տեսնելով, որ բոլշևիզմը տարածված է ամենուրեք, մնացի Բաքվում:

ՀԱՐՑ. Նա իր սեփական ցանկությա՞մբ Բաքու գնաց:

ՊԱՏԱՍԽԱՆ. Բոլշևիկները ինձ ձերբակալեցին Խարկովում: Ես փախա և գնացի Բաքու:

ՀԱՐՑ. Հայերը Բաքվում բոլշևիկների հետ համագործակցո՞ւմ էին:

ՊԱՏԱՍԽԱՆ. Բաքվի հայերի մեծ մասը հարուստ էր: Հետևաբար, նրանք չէին կարող բոլշևիկ լինել: Բայց որոշ հայ աշխատավորներ կարող է բոլշևիկ դարձած լինեին:

ՀԱՐՑ. Կոտորածները տեղի ունեցան 1918–ի սեպտեմբերին: Վկան ասաց, որ հայերը պատասխանատու չէին կոտորածների համար: Ճի՞շտ է, որ հայերը, իրոք, ոչ մի բան չարեցին կոտորածների պատճառ դառնալու համար:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես չգիտեմ:

ՀԱՐՑ. Վկան իր ցուցմունքում ասաց, որ հայերը բոլշևիկների կողքին էին, իսկ թաթարները բոլշևիկներին դեմ էին: Դա չէ՞ր կարող կոտորածների պատճառ դարձած լինել:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես ասացի, որ թաթարները գերմանացիների կողմն էին, իսկ հայերը՝ Միացյալ ուժերի: Այն հայերը, որոնք բոլշևիկների կողմն էին, քաղաքի մեջ էին: Բայց, եթե դա լիներ կոտորածների պատճառը, հայերի հետ ռուսներ ևս պիտի սպանվեին:

ՀԱՐՑ. Երբ թուրքերը քաղաք մտան, թուրքերը և թաթարները թվով գերազանցո՞ւմ էին հայերին:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ինչքան որ կարող էի տեսնել՝ փողոցներում, ավելի շատ թուրքեր ու թաթարներ կային:

ՀԱՐՑ. Նա գնդապետ է, կրթված մարդ, պետք է որ թվեր ասի:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես չգիտեմ:

ՀԱՐՑ. Պատկերացրու բանակ, որը հաղթականորեն մտնում է մի քաղաք: Եթե այն հայերի նկատմամբ թշնամական լիներ, պիտի չոչնչացնե՞ր բոլոր հայերին: Սա չի՞ ապացուցում, որ սպանվեցին միայն այն հայերը, որոնք դիմադրություն ցույց տվեցին:

Դատարանը չարտոնեց այս հարցը: Սակայն դատախազը միջամտեց և դրությունը բացատրող այս հարցը կրկնվեց.

ՊԱՏԱՍԽԱՆ. Այն մարդիկ, ովքեր Բաքվում հարձակման ենթարկվեցին, գլխավորապես հարուստ դասակարգից էին: Բայց հարուստներն ի վիճակի էին տեղափոխման համար վճարել, ուստի կարողացան փախչել: Աղքատները մնացին: Սրանցից ոմանք սպանվեցին: Բայց, բնականաբար, ես չեմ կարող իմանալ, թե ինչո՞ւ բոլորը չէ, որ սպանվեցին:

ՀԱՐՑ. Ո՞րն էր Ադրբեջանի մայրաքաղաքը մինչև Բաքուն մայրաքաղաք դառնալը:

ՊԱՏԱՍԽԱՆ. Նախ ես չգիտեմ, թե ի՞նչ է Ադրբեջանը:

ՀԱՐՑ. Նա Գյանջա քաղաքը գիտե՞:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո:

ՀԱՐՑ. Տրամաբանակա՞ն է, որ ազերի կառավարությունը գնար Բաքու, մինչև դրա գրավումը:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես չգիտեմ:

ՀԱՐՑ. Մյուս կողմից, այն ժամանակ ռազմական դրություն էր հայտարարված: Ջիվանշիրը ի՞նչ ուժ ուներ, որ պատասխանատու համարվեր:

ՊԱՏԱՍԽԱՆ. Կոտորածները տեղի ունեցան մինչև Նուրի փաշայի հասնելը, հետևաբար՝ մինչև ռազմական դրության հայտարարվելը:

ՀԱՐՑ. Նա ասաց, որ կառավարությունը չկանգնեցրեց կոտորածները: Բայց չէ՞ որ կոտորածները պիտի շարունակվեին, եթե դադարեցված չլինեին:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այս հարցի մասին ոչինչ չեմ կարող ասել: Բայց որոշ տեղերում կոտորածները շարունակվում էին նույնիսկ եռօրյա կոտորածներից հետո:

ՀԱՐՑ. Վկան ասաց, որ երբ 1918–ի սեպտեմբերին թրքական բանակը Բաքու մտավ, Բաքվում իշխանությունը բոլշևիկների ձեռքն էր: Ճշմարտությունն այն է, որ բոլշևիկները քաշվեցին հուլիսին և բրիտանացիները քաղաք մտան: Բրիտանացիները չէին կարող քաղաք մտնել, եթե բոլշևիկները իշխանության գլուխ լինեին: Սա չի՞ ապացուցում, որ վկան կեղծ ցուցմունք է տվել:

ՊԱՏԱՍԽԱՆ. Բոլշևիկները իշխանության գլուխ էին մարտ և հուլիս ամիսների միջև: Հետո մենշևիկները վերցրին իշխանությունը: Ես ասացի, որ բոլշևիկները ավելի ուշ եկան:

ՀԱՐՑ. Նուրի փաշայի հայտարարությունը ռուսերե՞ն էր, թե՞ թրքերեն:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այն թրքերեն և հայերեն էր:

ՀԱՐՑ. Ավելի առաջ վկան ասել էր, որ հայտարարությունը թաթարերեն էր:

ՊԱՏԱՍԽԱՆ. Դա մի ուրիշ հայտարարություն էր: Դա Մուսավաթ կուսակցության հայտարարությունն էր:

ՀԱՐՑ. Վկան ի՞նչ ազգ է:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես կես վրացի, կես ռուս եմ: Մայրս վրացի է:

Վկան ասաց, որ սա իր մասնագիտության բնագավառը չէ, և դատարանին պիտի ասի միայն այն, ինչ գիտե:

Հայդար Ռիֆատ բեյը ավարտեց հարցաքննությունը: Դատարանը առաջարկեց լսումները հետաձգել երեկոյան, սակայն փաստաբանների խնդրանքով հետաձգվեց հաջորդ օրվան:

ՏԱՍՆԻՆՆԵՐՈՐԴ ՎԿԱ

Ռուս իշխանուհի Թամարա Վոլկոնսկին, երդվելուց հետո պատասխանեց պաշտպան փաստաբան Խոսրովյան էֆենդիի հարցերին.

ՀԱՐՑ. Բաքվում երբևիցե եղե՞լ եք:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, ես այնտեղ էի 1917-ի դեկտեմբերից մինչև 1919 -ի հունվարը:

ՀԱՐՑ. Բաքվում որևէ ծառայության մեջ եղե՞լ եք:

ՊԱՏԱՍԽԱՆ. Կարմիր Խաչի քույր էի:

ՀԱՐՑ. Ո՞ր հիվանդանոցում:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այն հիվանդանոցում, որը հարմարեցված էր Բաքվի առևտրական դպրոցի շենքում:

ՀԱՐՑ. Ինչքա՞ն ժամանակ եք եղել հիվանդանոցում:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես հիվանդանոցում ծառայեցի մինչև թրքական բանակի գալը:

ՀԱՐՑ. Դուք ո՞ւր էիք, երբ թրքական բանակը Բաքու մտավ:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես Շամախիում էի *(Բաքվի մի շրջան)* բրիտանական և ռուսական միավորումների հետ:

ՀԱՐՑ. Կարո՞ղ է նա նկարագրել պատահած կոտորածները, երբ օսմանյան բանակը Բաքու մտավ:

Ատյանը առաջադրեց հետևյալ պայմանը.

ՀԱՐՑ. Նա պետք է նկարագրի ինչ որ տեսել է, և ոչ թե այն, ինչ լսել է:

ՊԱՏԱՍԽԱՆ. Միավորումները, որոնց ես ուղեկցում էի, վերադարձան *(Բաքու)* սովածության և ծարավի պատճառով: Ես տեղափոխվեցի Բաքվի Նիկոլաևսկի Բուլվարի վրա գտնվող հիվանդանոց, որովհետև վիրավորված էի: Սեպտեմբերի 14-ի առավոտյան քաղաքը ռմբակոծվեց և մեծ թվով մարդիկ վիրավորվեցին: Հիվանդանոցում եղող ինձ նման քույրերը ցրվեցին քաղաքով՝ վիրավորվածներին օգնելու համար: Թեև *(բրիտանական)* զինված ուժերը Բաքվից քաշվել էին, հիվանդանոցի քույրերը մնացին: 14-ի երեկոյան թաթար անկանոնները քաղաք մտան և սկսեցին կոտորածները: Ես տեսա կանանց և երեխաների՝ սպանվելիս այդ մարդասպանների կողմից: Սեպտեմբերի 15-ին, առավոտյան ժամը 4-ի և 5-ի

արանքում, մի քանի թաթար սպաներ եկան հիվանդանոց. քույրերը ընդունեցին նրանց, ուտելիք տվեցին: Մենք սպաներին խնդրեցինք, որ հաջորդ օրը գան: Սակայն սպաների հեռանալուց հետո քույրերը թողեցին հիվանդանոցը և գնացին իրենց տները: Երբ 15-ին վեր կացա, տեսա, որ փողոցում թաթարները սպաների հրամանով հայերի են սպանում: Ես ապրում էի հայերով բնակեցված շենքում, 5 Ռոմանովսկի Բուլվար հասցեում: Այդ շենքում ապրող բոլոր հայերը՝ տղամարդիկ, կանայք և երեխաներ, սպանվեցին: Բնակարանները ամբողջովին կողոպտվեցին: Երբ մտա իմ բնակարանը՝ տեսա, որ դռները ջարդված են: Ծառաները գնացել էին: Հետո իմացա, որ ծառաներիս սպանել էին: Իմ բնակարանում մի քանի թաթարներ կային, որոնք ոսկի և արժեքավոր իրեր էին փնտրում: Վազեցի դեպի հեռախոսը: Գիտեի, որ թաթար ավազակ սպաները մնում են Մետրոպոլ պանդոկում: Նրանց ասացի, որ մի քանի թաթարներ թալանում են մի ռուս բուժքրոջ բնակարանը: Շատ կարճ ժամանակ հետո, Ելիզավետպոլի գումարտակից մի թաթար սպա և մի քանի զինվորներ եկան և թաթար գողերին հանեցին իմ բնակարանից: Սպան ինձ ասաց, որ իր պարտականությունն է կատարում: Նա ինձ ասաց, որ ես ապրում եմ հայկական շենքում և ուզեց իմանալ, թե ես իմ բնակարա՞նն եմ պաշտպանում, թե՞ որևէ հայի բնակարանը, և եթե ես հայի բնակարան եմ պաշտպանում, ապա այսուհետև իրենց պաշտպանությունը պետք չէ ակնկալեմ: Հետո նա ինձ հարցրեց, թե շենքում հայեր, կամ զենքեր մնացե՞լ են: Ես ասեցի «ոչ» և սպան հեռացավ: Բնակարանում մնացի երկու օր, բայց վերքը նեղացնում էր ինձ: Մյուս կողմից՝ բնակարանում ուտելիք ու խմելիք չէր մնացել: Այդ պատճառով երկու օր հետո դուրս եկա և փորձեցի գնալ հիվանդանոց: Վոկզալնի, Տորգովայա, Ռոմանսկի և Մորսկի փողոցների վրա տեսա շատ հայ կանանց ու երեխաների, որոնք թաթարների հսկողության տակ տարվում էին: Փողոցներում նրանք լիքն էին: Թաթարները զինված էին: Հայերը սարսափահար էին երևում: Նրանց մեջ ես տեսա մարդկանց, որոնց ճանաչում էի: Նրանց մեջ կային բժիշկներ, փաստաբաններ, բուժքույրեր: Նրանցից երկուսը ինձ խնդրեցին ազատել իրենց: Երբ մոտեցա, որպեսզի փորձեմ փրկել նրանց , թաթարներից մեկն ինձ կոպտորեն հրեց և հարցրեց. «Դու հա՞յ ես»: Ես ասացի. «Ոչ»:

Որովհետև ես միայն մի կարճ ժամանակ էի ապրել Կովկասում, չգիտեի հայերի և թաթարների միջև գոյություն ունեցող ատելության մասին: Այդ իսկ պատճառով անակնկալի եկա, տեսնելով ջարդերը: Այդ պատճառով մի ծանոթ թաթարի (որը մի փոքրիկ խանութի տերն էր) հարցրի, թե ո՞ւր են տանում շարքերով մարդկանց: Թաթարը ծիծաղեց ու ասաց՝ նրանց ուղարկում են մի շատ ապահով ու հանգստավետ տեղ: Հայերի աչքերին մի աննկարագրելի անհանգստության և վախի արտահայտություն կար: Բոլոր ճանապարհները ծածկված էին հայ տղամարդկանց, կանանց ու երեխաների դիակներով: Դա մի ահավոր տեսարան էր:

Երբ Նիկոլևսկի փողոց հասա, տեսա որ թաթարները սպանում էին հիվանդանոցի պահակներից մեկին: Դուրս եկա փողոց, հիվանդանոցի երկու բժիշկների (նրանցից մեկը դոկտոր Բուսչմանն էր) և երկու բուժքույրերի հետ միասին՝ վիրավորներին օգնելու համար: Մենք տեսանք վիրավոր մի կնոջ պառկած փողոցում: Նա պառկած էր գետնին, գրկին մի փոքր երեխա: Սկսեցինք կնոջը օգնել: Այդ ժամանակ մի քանի թաթարներ եկան և սպանեցին կնոջն ու երեխային: Մեզ հետ որոշ դեղորայք ունեինք հիվանդանոցից: Օլգա փողոցի վրա մի ուրիշ վիրավոր հայ տեսանք: Երբ հասկացանք, որ փողոցում պիտի չկարողանանք օգնել, նրան տեղափոխեցինք մի շենքի մուտք: Հայը լացում էր ու ճչում: Մենք նրան ասեցինք «Բերանդ փակ պահի, այլապես թաթարները կլսեն, կգան ու կսպանեն քեզ»: Նա

լուռ մնաց: Սակայն, չկարողացանք օգնել, որովհետև նրան պանդոկի շենքը տանելիս մեզ տեսնող էր եղել: Այսպիսով, մի քանի թաթարներ եկան և սպանեցին նրան:

Այդ դեպքից հետո գիտակցեցինք, որ օգնելու մեր ջանքերը իզուր են: Այդ պատճառով վերադարձանք հիվանդանոց: Ես հետ գնացի տուն: Երբ փողոցով քայլում էի, պատերին հայտարարություն տեսա: Չկարողացա այն կարդալ, որովհետև այս բոլոր իրադարձությունները ինձ շատ էին խանգարել: Դժվար էր հայտարարությունը կարդալ այդ բոլոր սարսափելի իրադարձությունների պայմաններում: Սակայն, ավելի ուշ, որոշ ռուսներից ու հրեաներից իմացա, որ այդ հայտարարությունը Կովկասի բոլոր հայերին հայտարարում էր խռովարարներ:

Օսմանյան բանակի քաղաք մտնելուց հետո, մի ուրիշ հայտարարություն հրապարակվեց մամուլի միջոցով: Այն գրված էր ռուսերեն և թրքերեն լեզուներով: Երկրորդ հայտարարությունը ստորագրված էր Խան Խոյսկու և Ջիվանշիրի կողմից:

Դատարանը հարցրեց.

ՀԱՐՑ. **Վկան այդ երկրորդ հայտարարությունը կարդացե՞լ է:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, կարդացել եմ: Այդ հայտարարությունը ասում էր, որ հրեաները, վրացիները և ռուսները կարող են ազատորեն հետ գնալ իրենց գործին, սակայն հայերը չէին նշվում: Հայտարարության վերջում ասված էր, որ որևէ մեկը, ով հայերի թաքցնի, կհամարվի, որ կառավարության դեմ կատարել է քաղաքական ոճիր և կպատժվի: Այնտեղ ասված էր, որ ամեն ոք պետք է հրամանատարության կենտրոնատեղի հայտնի թաքնվող հայերի մասին: Իմ բնակարանային շենքը կառավարությունը գրավեց, որովհետև հայի էր պատկանում: Մի թուրք սպա եկավ ինձ մոտ և ասաց, որ եթե ինձ հետ ապրի, ինձ ոչ մի վտանգ չի սպառնա: Իմ բնակարանը 8 սենյակ ուներ, ես 3 սենյակը տվեցի այդ սպային: Ես մի քանի հայ կանանց ու երեխաների էի թաքցնում: Թուրք սպան իմացավ այդ մասին: Մի գիշեր նա տնից դուրս եկավ առանց ինձ որևէ բան ասելու և տուն բերեց մի քիչ միս, շաքար և այլ մթերքներ: Այդ բաները նա ինձ տվեց և ասաց՝ «Սրանք այն մարդկանց համար են, որոնց թաքցնում ես տանդ մեջ»: Սպային հարցրեցի, թե ինչո՞ւ է այդքան բարի հայերի նկատմամբ և հիշեցրի, որ 2-3 օրվա մեջ 29,000 հայեր էին սպանվել: Սպան ասաց, որ ինքը Օսմանյան կանոնավոր բանակի մեջ է, որ միայն թաթար ղեկավարներն է, որ թույլ տվեցին կոտորածը, որ իր կարծիքով թաթարները ինչ-որ հաշիվներ ունեն լուծելու հայերի հետ, և որ կոտորածները չէին կարող կանխվել, որովհետև Օսմանյան բանակի ժամանումը ուշացավ:

Նույն շենքի մեջ, հարևան բնակարանում ապրում էր Ադրբեջանի երկաթգծի նախարար Մելիք Արսլանովը: Այս մարդը փորձեց վերցնել իմ բնակարանը, բայց Օսմանյան սպան դա թույլ չտվեց: Մելիք Խանը կրթված մարդ էր: Ես նրան հարցրեցի՝ ինչպե՞ս կարող էր թույլ տալ այս կոտորածները: Իր պատասխանն էր՝ «Մենք մեր զենքերը ցած չենք դնելու, մինչև չվերացնենք հայերի ներկայությունը Ադրբեջանի մեջ»:

Որոշակիորեն պետք է ասել, որ թրքական բանակը քաղաքում հայ կամ թաթար բնակչությանը վատ չէր վերաբերվում: Երկու, կամ երեք շաբաթ հետո քաղաքում վերականգնվեց լիակատար ապահովությունը: Նույնիսկ հայերը կարող էին ապահով դուրս գալ փողոց: Կառավարությունը հրապարակեց մի հայտարարություն, որտեղ ասված էր, թե այն մարդիկ, որոնց ունեցվածքը կողոպտված է,

պետք է բողոք ներկայացնեն Ներքին գործերի նախարարություն: Մի բողոք ներկայացրի նախարարություն, որովհետև իմ մի քանի գորգեր և զարդեղեններ գողացված էին: Ես հանդիպեցի նախարարին:

Նախագահող դատավորը հարցրեց.

ՀԱՐՑ. **Ո՞վ էր նախարարը:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Նրա անունը չգիտեմ: Ես նրան տվեցի պակասող իրերիս ցուցակը: Նախարարը հավաստիացրեց, որ պակասող իրերիս համար ինձ կփոխհատուցեն և խոստացավ, որ երբ ավազակները գտնվեն, նրանք խստորեն կպատժվեն: Նա միաժամանակ ասաց, որ իմ շահերը պահանջում են, որ ես հայկական գործերի մեջ չխառնվեմ, այլապես կզրկվեմ կառավարության պաշտպանությունից: Ավելի ուշ ներվային խանգարում ունեցա: Երեք անգամ ուշաթափ եղա: Ես չգիտեմ, թե այդ ընթացքում ի՞նչ պատահեց քաղաքում: Երբ հիվանդությունից ապաքինվեցի, օսմանյան բանակը քաշվել և բրիտանական բանակը գրավել էր քաղաքը:

Խոսրովյան էֆենդին հարցրեց.

ՀԱՐՑ. **Վկան ի՞նչն է համարում կոտորածների պատճառը:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես դա լավ չգիտեմ: Այն կարող է լինել թշնամանքը հայերի և թաթարների միջև: Կարող է նաև լինել արդյունքը այն բանի, որ թաթարները ընդդիմանում էին բրիտանացիներին, մինչդեռ հայերը նրանց կողմն էին:

Խոսրովյան էֆենդին ավարտեց հարցաքննությունը: Դատախազ Ռիկատսոն Հաթը վկային տվեց հետևյալ հարցերը.

ՀԱՐՑ. **Վկան որտե՞ղ է ծնվել:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Պետրոգրադում:

ՀԱՐՑ. **Նա Կովկասցի ընտանիքի՞ց է:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ:

ՀԱՐՑ. **Նա էական ցուցմունք տվեց սեպտեմբերին հայերի կոտորածների մասին: Կարո՞ղ է նա որևէ տեղեկություն տալ մարտ ամսին տեղի ունեցած մուսուլմանների կոտորածների մասին:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, ես լսեցի, որ հայերը մուսուլմանների են սպանել:

ՀԱՐՑ. **Վկան գիտե՞, որ հայերը մուսուլմաններին սպանեցին՝ գործակցելով բոլշևիկների հետ:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես լսեցի, որ մուսուլմաններ են սպանվել, բայց ես չգիտեմ թե ով է սպանել նրանց:

ՀԱՐՑ. **Ո՞վ կազմակերպեց մուսուլմանների կոտորածները:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այն ժամանակ հայերի, ռուսների և թաթարների միջև տարբերություն չկար. այն ավելի ուշ երևան եկավ:

ՀԱՐՑ. **Ո՞վ սպանեց թաթարներին:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես ջարդերը չեմ տեսել, դիակներն եմ տեսել միայն: Նրանց կարող է բոլշևիկները սպանած լինեն:

ՀԱՐՑ. **Նա գիտե՞ մարտ ամսին հայերի և թաթարների միջև թշնամանքի մասին:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այն ժամանակ այնտեղ էր Կովկասի Կարմիր բանակը:

ՀԱՐՑ. **Ո՞վ կար Կովկասի Կարմիր բանակի մեջ:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այն խառն ուժ էր, կազմված հայերից, ռուսներից և վրացիներից:

ՀԱՐՑ. **Վկան կարծո՞ւմ է, որ մուսուլմանների կոտորածները կարող են եղած լինել սեպտեմբերյան կոտորածների պատճառը:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Դա հնարավոր է:

ՀԱՐՑ. **Քանի՞ մուսուլման սպանվեց:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես լսել եմ, որ 3,000-ից 4,000 մուսուլմաններ են սպանվել: Շատ թաթարներ փրկվեցին հայերի, բոլշևիկ հայերի կողմից:

ՀԱՐՑ. **Ի՞նչ էր վկայի զբաղմունքը անցյալում:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես աշխատել եմ Կարմիր խաչի համար:

ՀԱՐՑ. **Ի՞նչ ազգության են իր ընկերները:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես, բացի հիվանդանոցի բժիշկներից ու բուժքույրերից, այլ ընկերներ չեմ ունեցել:

ՀԱՐՑ. **Սեպտեմբերյան կոտորածները կազմակերպված էին միայն որպես մուսուլմանների վրիժառության գործողությո՞ւն, թե՞ կազմակերպված էին կառավարության կողմից:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այդ մասին ես ոչ մի կարծիք չունեմ:

ՀԱՐՑ. **Նա ասաց, որ տեսել է մարդկանց սպանվելիս: Ովքե՞ր էին սպանողները: Դրանք անկանոնն՞ե՞րն էին, թե՞ կանոնավոր զինվորներ:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Դժվար է ասել: Նրանք որևէ համազգեստ չունեին իրենց հագին: Համենայն դեպս, ես շատ վախեցած էի:

ՀԱՐՑ. **Նա կառավարությանը մեղադրո՞ւմ է:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ինչքան ես գիտեմ, կառավարությունը, եթե ցանկանար, կարող էր կանգնեցնել կոտորածները:

ՀԱՐՑ. **Երբ ազերի բանակը փորձում էր Բաքուն գրավել, հայերը քաղաքը պաշտպանո՞ւմ էին: Քանի՞ հայ զինվոր կար:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայկական առանձին բանակ չկար: Բրիտանական և ռուսական բանակները խառնված էին: 5,000-ից 6,000 հայ *(զինվորներ)* կային:

ՀԱՐՑ. **Հայերն իրենց տներում զենք ունեի՞ն:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Որտեղի՞ց իմանամ:

ՀԱՐՑ. **Իր տեսած հայտարարությունում ասվա՞ծ էր, թե հայերի կյանքը և ունեցվածքը ապահով պիտի լինեն, եթե նրանք իրենց զենքերը հանձնեն:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես չեմ հիշում:

ՀԱՐՑ. **Խան Խոյսկու և Ջիվանշիրի կողմից ստորագրված հայտարարությունը վերաբերում է որո՞շ հայերի, թե՞ հայերին ընդհանրապես:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այն կարող էր հասկացվել երկու ձևով էլ:

ՀԱՐՑ. **Օսմանյան բանակի Բաքու մտնելուց հետո թուրքերը իրենց լավ պահեցի՞ն:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես չեմ տեսել օսմանյան բանակը քաղաք մտնելիս, բայց բանակը քաղաք մտնելուց հետո կոտորածները դադարեցին և խանութները բացվեցին:

ՀԱՐՑ. **Վկան գիտե՞, որ Նուրի փաշան արդյունավետ միջոցներ ձեռք առավ կոտորածները կանգնեցնելու համար և պատժեց որոշ ավազակների:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես տեսել եմ թաթարներ, նույնիսկ թուրք զինվորներ կախված՝ թալանի ու գողության համար:

ՀԱՐՑ. **Նա գնաց Ներքին գործոց նախարարին տեսնելու, չէ՞: Նախարարը նրան ազնվորեն ընդունե՞ց:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո:

ՀԱՐՑ. **Նա միայն մե՞կ անգամ գնաց:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո:

ՀԱՐՑ. **Երբ Ջիվանշիրը Ներքին գործոց նախարարն էր, նա ի՞նչ վարկ ուներ հայերի մոտ:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես լսել եմ, որ ժողովուրդը կոտորածների համար մեղադրում էր Խան Խոյսկուն, Ջիվանշիրին և Սուլթանովին:

Խոսրովյան էֆենդին վերսկսեց իր հարցերը.

ՀԱՐՑ. **Դատախազի խաչաձև հարցաքննության ժամանակ Նորին մեծություն իշխանուհին ասաց, որ բոլշևիկների և հակաբոլշևիկների միջև ջարդեր էին տեղի ունենում: Սա ճի՞շտ է:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո:

ՀԱՐՑ. **Ուրեմն, կոտորածները կարող են համարվել ո՛չ որպես թշնամանք հայերի և թաթարների միջև, այլ որպես թշնամանք բոլշևիկների և բոլշևիկների ընդդիմադիրների միջև:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, դա ճիշտ է:

ՀԱՐՑ. **Այդ ջարդերի ընթացքում հայերը փրկե՞լ են հազարավոր թաթարների կյանքը:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այդ կոտորածների ընթացքում թաթարներին պաշտպանելու համար օգտագործվել է հինգ շենք: Հայերը 22,000 թաթարների փրկեցին: Հայկական ազգային խորհուրդը օգնեց նրանց: Թաղիևը, մի թաթար ղեկավար, հրապարակայնորեն, թերթերում շնորհակալություն հայտնեց Հայկական ազգային խորհրդին՝ թաթարներին փրկելու համար:

ՀԱՐՑ. **Իշխանուհին դատախազին ասաց, որ Մելիք Արսլանովը իրեն ասել էր, թե զենքերը ցած չեն դնելու մինչև բոլոր հայերը ոչնչացված չլինեն: Նա կարո՞ղ է սա հաստատել:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո:

ՀԱՐՑ. **Իր ցուցմունքի մեջ Նորին մեծությունը նաև ասաց, որ օսմանյան բանակը կոտորածների գործում ընդգրկված չի եղել: Իշխանուհին Նուրի փաշայի հետ հանդիպե՞լ է:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես Նուրի փաշայի հետ մի անգամ խոսել եմ: Նրան խնդրեցի կանխել իմ բնակարանի բռնագրավումը: Նա ինձ հետ շատ լավ վարվեց: Իրեն պահեց ջենտլմենի պես: Պետք է ասեմ, որ թրքական բանակը ժողովրդի հետ վարվեց լավ ու արդար: Որոշ մարդիկ ասում են, որ Ջիվանշիրը, խան Խոյսկին և Նուրի փաշան են պատասխանատու կոտորածների համար: Ես այդ մասին ոչինչ չգիտեմ:

ՀԱՐՑ. **Երբ իշխանուհին տեսավ Ներքին գործերի նախարարին, ի՞նչ տպավորություն ունեցավ:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Իմ առաջին տպավորությունը շատ լավ էր: Նա լավ կրթված, քաղաքավարի ու բարեկիրթ մարդ էր: Սակայն, իր հետ խոսելուց հետո ես հասկացա, որ նա մոլեռանդ ազգայնամոլ է: Հայերի մասին խոսելիս նույնիսկ դեմքն էր փոխվում: Այդ տեսակետից նա շատ դաժան թվաց:

ՀԱՐՑ. **Իշխանուհին ասաց, որ հայտարարության տակ խան Խոյսկու և Ջիվանշիրի ստորագրությունները կային: Ուրիշ ո՞վ էր ստորագրել այն:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես Խոյսկու անունը շատ լավ չեմ հիշում: Բայց Ջիվանշիրի հետ

հանդիպելուց հետո հավատացած եմ, որ իր անունը կար այնտեղ: Համենայն դեպս, շատ լավ չեմ հիշում:

Խոսրովյան էֆենդին ավարտեց հարցաքննությունը: Հայդար Ռիֆատ բեյը տվեց հետևյալ հարցերը.

ՀԱՐՑ. Վկան այստեղ որտե՞ղ է բնակվում:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այնքան շատ մարդկանց կողմից եմ որպես վկա կանչվել, որ ես կշտացել եմ: Կնախընտրեմ հասցես չտալ, որպեսզի ինձ նորից չանհանգստացնեն:

ՀԱՐՑ. Նա այստեղ բերվելու ձևից անհանգստացե՞լ է:

ՊԱՏԱՍԽԱՆ. Կասկած կա՞ այդ մասին:

ՀԱՐՑ. Այստեղ նա ի՞նչ զբաղմունք ունի:

ՊԱՏԱՍԽԱՆ. Աշխատում եմ Իտալական հիվանդանոցում: Ես ռևմատիզմով հիվանդացա: Ձիվանշիրի սպանությունից հետո, շատ հետաքրքված էի այս դատավարությամբ: Այդ մասին կարդացի թերթերում: Ճշմարիտն ասած, ուզում էի իրականությունն ասել՝ ցուցմունք տալով իբրև վկա այս դատավարությունում, որովհետև ճշմարտությունն իմացող շատ քիչ մարդու եմ հանդիպել: Այդ է պատճառը, որ իմ խղճի պարտքը համարեցի գալ այստեղ ու վկայություն տալ:

ՀԱՐՑ. Իտալական հիվանդանոցում նրան որպես Իշխանուհի Թամարա՞ գիտեն:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո:

ՀԱՐՑ. Ի՞նչ թուրք ընտանիքներ գիտի վկան Ստամբուլում:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես ոչ մի ընտանիք չգիտեմ:

ՀԱՐՑ. Նա Բաքվում մուսուլմանական շրջանների հետ որևէ առնչություն ունեցե՞լ է:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես մի քանի ընտանիքներ գիտեի, օրինակ՝ Թաղիև ընտանիքը, այն էլ պաշտոնական ձևով: Նրանց հետ գործ ունեցա միայն պաշտոնական գործառնությունների ընթացքում: Նրանք հիվանդանոցին նվերներ էին անում:

ՀԱՐՑ. Մուսուլմանական հատվածը կրակոցների ենթարկվե՞ց:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես չգիտեմ, պաշտոնի գլուխ էի:

ՀԱՐՑ. Բոլշևիկները 6,000 մուսուլմանների պահեցին Մայլովի Թատրոնում և 3,000 Մուսուլմանների՝ Ռեկոր կոչվող կինոթատրոնում: Վկան այս մասին որևէ բան գիտե՞:

ՊԱՏԱՍԽԱՆ. Միակ բանը, որ գիտեմ, այն է, որ 22,000 թուրքեր ազատվեցին:

ՀԱՐՑ. Երբ Նուրի փաշան Բաքու մտավ, իշխանությունը օսմանցիների ձեռքո՞ւմ էր, թե՞ ազերի կառավարության:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես չգիտեմ:

ՀԱՐՑ. Քաղաքը թրքական բանակի կողմից գրավվելուց քանի՞ օր հետո է, որ Նուրի փաշան քաղաք մտավ:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես չգիտեմ:

ՀԱՐՑ. Նա ասաց, որ թաթարները սպանում էին հայերին: Հայերը որոշակիորեն տարբերվո՞ւմ էին:

ՊԱՏԱՍԽԱՆ. Շատ հեշտ է թաթարներին ճանաչել իրենց դեմքերից: Բոլոր դեպքերում, բնականաբար, մուսուլմաններն է, որ սպանեցին քրիստոնյաներին: Վերջապես, մուսուլմանները ուրիշ մուսուլմանների չէին սպանելու:

ՀԱՐՑ. Վկան ասաց, որ թաթար սպաներ եկան հիվանդանոց, որտեղ ինքն էր աշխատում: Հեռացան այն բանից հետո, երբ նրանց խնդրեցին հաջորդ օրը գալ: Նա ժամը քանիսի՞ն թողեց հիվանդանոցը:

Նախագահող դատավորը՝

ՀԱՐՑ. Ինչո՞ւ է այս հարցը անհրաժեշտ:

(Հայդար Ռիֆատ բեյ) - Որովհետև հասկանալի չէ, որ կոտորածների առաջին օրը, երբ այն առավել կատաղի էր, նա պիտի թողեր մի այնպիսի ապահով վայր, ինչպիսին է հիվանդանոցը և գնար տուն: Թերևս իր տունը շատ մոտիկ էր:

Դատարանում կարդացվեց այս նյութի շուրջ վկայի ցուցմունքը.

ՀԱՐՑ. Վկայի տունը հիվանդանոցից ի՞նչ հեռավորության վրա է:

ՊԱՏԱՍԽԱՆ. Քայլելով քառորդ ժամ կտևի, բայց ես չգիտեմ ինչքան տևեց, նկատի ունենալով տեղի ունեցող իրադարձությունները:

ՀԱՐՑ. Նա հիվանդանոցը թողեց բավական շուտ և գնաց տուն: Նա ծառաներին և հայերին մեռած գտավ: Ինչպե՞ս իմացավ, որ թաթար հրամանատարը քաղաք էր մտել, ո՞ւր էր նա մնում, ո՞րն էր նրա հեռախոսի թիվը որպեսզի կարողացած լիներ զանգահարել նրան:

ՊԱՏԱՍԽԱՆ. Դա այդքան էլ շուտ չէր: Երբ ես տուն հասա, առավոտյան ժամը 7:00 կլիներ:

ՀԱՐՑ. Նա ոտքո՞վ գնաց տուն:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, ես քայլեցի, որովհետև գնալու այլ կերպ չկար:

ՀԱՐՑ. Իր ծառաները հայե՞ր էին:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես մի ռուս խոհարար և մի հայ տնտեսուհի ունեի: Միայն հայ տնտեսուհին էր սպանված:

ՀԱՐՑ. Երբ վկան սոված դուրս եկավ փողոց, տեսավ հայկական շարասյունը, որը շարժվում էր թաթարի հսկողությամբ և փորձեց ազատել այն հայերին, որոնց ճանաչում էր, ինչպե՞ս ապացուցեց, որ ինքը ռուս է:

ՊԱՏԱՍԽԱՆ. Նրանք ինձ փողոցում կանգնեցրին, բայց երբ իմացան որ ռուս եմ, բաց թողեցին:

ՀԱՐՑ. Վկան կարծո՞ւմ է, որ թաթարները վստահելի մարդիկ են:

ՊԱՏԱՍԽԱՆ. Երբ ես թաթարներին տեսա իմ բնակարանում, հանկարծակի գոռացի, ո՛չ այն պատճառով, որ ես նրանց վստահում եմ:

ՀԱՐՑ. Թաթար հրամանատարը անմիջապես պատասխանեց. «Ես պատրաստ եմ ձեզ ծառայել» և ձերբակալեց թալանչիներին: Սա Ի՞նչ է ցույց տալիս:

Դատարանն ասաց, որ այս հարցը նյութին չի վերաբերում.

ՀԱՐՑ. Նրանք վկային թույլ տվեցին գնալ, երբ նա ասաց, որ ինքը հայ չէ: Չէի՞ն կարող ձերբակալված հայերը նույնպես ասել, որ հայ չեն ու փախչել:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ինչպե՞ս կարող եմ իմանալ, թե մյուսները ինչ են արել: Ես ասում եմ միայն այն, ինչ գիտեմ:

ՀԱՐՑ. Վկան գիտե՞, որ երբ 1918–ի օգոստոսին թաթարները և թուրքերը հարձակվեցին Բաքվի վրա, նրանց երկու գումարտակները այնտեղ ոչնչացվեցին:

ՊԱՏԱՍԽԱՆ. Օգոստոսին թուրքեր չկային: Քաղաքը մի քանի անգամ հար-

ձակման ենթարկվեց, բայց հաջողությամբ պաշտպանվեց բրիտանական և *(ռուսական)* զորքերի կողմից՝ Բիշարեքովի հրամանատարության տակ:

ՀԱՐՑ. Սեպտեմբերին քաղաքը հանձնվե՞ց, թե՞ թուրքերը ուժով մտան:

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքը գրավվեց առանց կռիվի, որովհետև *(բրիտանական և ռուսական զինված ուժերը)* քաղաքը դատարկեցին նախորդ գիշերը:

ՀԱՐՑ. Քաղաքի դարբասների մոտ կռիվներ չեղա՞ն:

ՊԱՏԱՍ ԱՆ. Անտարակույս, եղան: Ամեն մարդ գիտի դա: Թրքական բանակը, բնականաբար, քաղաք մտավ, քաղաքից դուրս կռվելուց հետո:

ՀԱՐՑ. Վկան ասաց, որ իր կարդացած հայտարարությունը ստորագրված էր խան Խոյսկու կողմից: Այս հայտարարությունը, ենթադրաբար, ասում էր, որ թաքնված հայերի մասին պետք է զեկուցվի հրամանատարության կենտրոնատեղի: Քաղաքացիական և զինվորական ղեկավարները տարբեր են: Վկան պնդո՞ւմ է այս ցուցմունքի վրա:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այդ անձնավորությունների ստորագրությունները այնտեղ էին: Ես չգիտեմ ո՞վ հրատարակեց հայտարարությունը:

ՀԱՐՑ. Նա ասում է, որ հայտարարված էր, թե հայերին թաքցնելը քաղաքական ոճիր է: Ինչպե՞ս է, որ նա մի թուրք սպայի վերցրեց իր տունը: Սա տրամաբանակա՞ն է:

Նախագահող դատավորը ասաց.

ՀԱՐՑ. Իշխանուհին չհրավիրեց սպային, սպան ինքը եկավ:

Հայդար Ռիֆատ բեյ.

- Մինչև հիմա վկաները ասում էին, որ կոտորածները տևեցին երեք օր: Իշխանուհին ասում է, որ դրանք տևեցին երեք շաբաթ:

Նախագահող դատավորը՝

ՀԱՐՑ. Նա այդպիսի բան չասաց:

Հայդար Ռիֆատ բեյ . Նա ասաց, պարոն:

Վերջապես որոշվեց իշխանուհուն տալ նույն հարցը: Վկան պատասխանեց.

ՊԱՏԱՍԽԱՆ. Կոտորածները երեք օր տևեցին, հետո թրքական բանակը եկավ:

ՀԱՐՑ. Վկան Ջիվանշիրի որևէ վատ արարքի մասին գիտե՞:

ՊԱՏԱՍԽԱՆ. Չեմ կարող որևէ բան ասել, որովհետև ես անձնապես նրա հետ որևէ գործ չեմ ունեցել: Գնացի և իրեն տեսա միայն մի խնդրի կապակցությամբ:

Այս պահին դատախազը ընդմիջեց և ասաց՝ «Վկան ընդունեց, որ Ջիվանշիրի կողմից որևէ չարակամության մասին ինքը ոչինչ չգիտե»:

ՔՍԱՆԵՐՈՐԴ ՎԿԱ

Նիկոլաս Քինդիակովը, մի ռուս քաղաքացի, երդվելուց հետո ասաց, որ ուսանող է և Բաքվում է եղել 1918–ի մայիսից մինչև հոկտեմբերի կեսը: Նա ասաց, որ Բաքու է գնացել բոլշևիկներից փախչելիս, որոնք գրավել էին Թոյլսկի նահանգը: Նա ասաց, որ բոլշևիկները իրենից հարկի ձևով մեծ գումար են պահանջել, քանի որ իր երկրում սեփականություն ուներ, և դրա համար էլ փախել է:

Հետո նա պատասխանեց Խոսրովյան էֆենդիի հարցերին.

ՀԱՐՑ. Կարո՞ղ ես մեզ ասել այն դեպքերի մասին, որոնք *(1918–ի)* սեպտեմբերի մոտերը տեղի ունեցան *(Բաքվում)*:

ՊԱՏԱՍԽԱՆ. Սեպտեմբերի սկզբներին Բաքվի կառավարությունը բրիտանացիների ձեռքում էր: Բրիտանացիները Բաքուն թողեցին սեպտեմբերի 14-ին: Թաթար անկանոնները մտան քաղաք և անմիջապես սկսեցին հայերի ջարդերը:

Նախագահող դատավորն ասաց.

- Ես պատմվածք չեմ ուզում. թող ասի այն, ինչ տեսել է:

Վկան շարունակեց.

- Լավ: Ես իմ սեփական աչքով տեսա, որ թաթարները սպանում էին հայերին, երիտասարդ թե ծեր: Թալանում էին հայերի տներն ու ունեցվածքը: Սեպտեմբերի 14-ի երեկոյան իմ սեփական աչքերով փողոցներում տեսա հայերի դիակներ: Ես մնում էի մի հայ ընտանիքի հետ՝ մի ռուսի պատկանող շենքում: Այդ ընտանիքը ապրում էր իմ սենյակին կից սենյակում: Ընտանիքի կազմում էին մայրը, տղան և երկու աղջիկները: Տղան փախել էր մինչև թաթարների քաղաք մտնելը: Երբ 14-ի երեկոյան տուն վերադարձա, տեսա, որ վեց զինյալ թաթարներ մտել էին այն սենյակը, որտեղ հայ ընտանիքն էր ապրում, սպանել էին մորը և մեծ աղջկան: Փոքր աղջկան տարան: Երեք օր հետո ես հանդիպեցի իմ հայ ընկերներից մեկի քրոջը. նա ասաց, որ թաթարները իր եղբորը ևս սպանել են:

Նախագահող դատավորը՝

-Կարիք չկա կրկնել այն, ինչ ուրիշներն են իրեն ասել: Թող նկարագրի միայն այն, ինչ ինքն է տեսել:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես ուրիշ բան չեմ տեսել, որովհետև իմ սենյակից դուրս չեմ եկել: Քաղաքում կոտորած էր տեղի ունենում: Բնականաբար, դուրս գալը վտանգավոր էր:

ՀԱՐՑ. Քանի՞ օր շարունակվեց այդ կոտորածը:

ՊԱՏԱՍԽԱՆ. Երեք օր:

ՀԱՐՑ. Այդ երեք օրերից հետո քաղաքում ապահովությունը վերականգնվե՞ց: Այլ կերպ ասած՝ դադարեցրի՞ն հայերին վնասելը:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ջարդերը շարունակվեցին այդ երեք օրերից հետո ևս: Ես տեսա հավաքագրված շատ հայերի, որոնց թաթարները տանում էին:

ՀԱՐՑ. Այդ ձերբակալված հայերը մե՞ծ խմբեր էին, թե՞ տարվում էին անհատապես:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես տեսա, որ նրանք տարվում էին մեկական և երկուական: Որոշ դեպքերում տարվում էին մի ամբողջ ընտանիքի անդամները միասին: Այս վիճակը շարունակվեց մոտ մեկ ու կես շաբաթ:

ՀԱՐՑ. Նա լսե՞լ է, որ ուղարկված հայերը երբևիցե քաղաք վերադառնան:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, լսել եմ, որ նրանցից ոմանք վերադարձել են:

ՀԱՐՑ. Իր կարծիքով, ո՞վ է պատասխանատու այս կոտորածների համար:

ՊԱՏԱՍԽԱՆ. Կառավարության մեջ Խան Խոյսկին և Ջիվանշիրն էին ղեկավարները: Հետևաբար նրանք էին պատասխանատուները:

Նախագահող դատավորը՝

ՀԱՐՑ. Ես դա չեմ կարող ընդունել, դա վկայի անձնական գնահատականն է:

ՊԱՏԱՍԽԱՆ. Կոտորածների երրորդ օրը ես պատերին հայտարարություններ տեսա: Հայտարարությունը ասում էր, որ ամեն մարդ պետք է հանդարտվի և վերադառնա գործի, բայց հայերը չեն կարող վայելել քաղաքացիական օրենքի բարիքները:

ՀԱՐՑ. Նա Բաքվում հրատարակվող թերթերը կարդալու սովորություն ունե՞ր:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, Ես կարդում էի ռուսալեզու մի թերթ, որը կոչվում էր «Ադրբեջան»: Սա կառավարության պաշտոնական օրգանն էր: Այս թերթը հայերի մասին խոսում էր իբրև ազգային թշնամի և ազերի ժողովրդին դրդում էր բռնագրավել հայերին պատկանող ունեցվածքն ու պատկանելիքները և ոչնչացնել նրանց:

ՀԱՐՑ. Ինչպե՞ս էր ճանաչված Ջիվանշիրը իբրև մարդ: Ի՞նչ հեղինակություն ուներ նա:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ջիվանշիրը ուժեղ ազգայնամոլ էր և հայտնի էր իբրև հայերին կրքոտ չսիրող:

ՀԱՐՑ. Վկան ասաց, որ բրիտանացիները քաղաքից քաշվեցին, թաթարները քաղաք մտան և կոտորածները տևեցին երեք օր: Ազերի կառավարությունը ե՞րբ մտավ քաղաք:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ըստ էության, այն քաղաք մտավ թաթար անկանոնների հետ միասին, բայց կառավարության քաղաք մուտքի մասին հայտարարվեց մեկ օր հետո:

Խոսրովյան էֆենդին ավարտեց հարցաքննությունը: Հետո դատախազ Ռիկատսոն Հաթը խաչաձև հարցաքննեց վկային.

ՀԱՐՑ. Երբ վկան Բաքու գնաց, բոլշևիկները այնտեղ չէի՞ն:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այնտեղ էին:

ՀԱՐՑ. Նա ասաց, որ ինքը փախչում էր բոլշևիկներից: Ուրեմն, նա մեկ թշնամուց փախավ դեպի մյո՞ւսը:

ՊԱՏԱՍԽԱՆ. Բաքվում ոչ մի բոլշևիկ ինձ չէր ճանաչում:

ՀԱՐՑ. Բաքվի հայերը բոլշևիկներին հակամե՞տ էին:

ՊԱՏԱՍԽԱՆ. Կառավարությունը խառն էր: Այն կազմված էր հայերից, ռուսներից, թաթարներից:

ՀԱՐՑ. Վկան որևէ բան տեսե՞լ, կամ լսե՞լ է, թե հայերը որևէ բան արել են թաթարներին սեպտեմբերից առաջ:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ:

ՀԱՐՑ. Վկան ասաց, տեսել է, որ թաթարները սպանում են հայերին: Թաթարներն իրեն ասացի՞ն որևէ պատճառ, թե ինչու են հայերին սպանում:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես մարդասպանների հետ չխոսեցի: Բայց ես խոսեցի մի գյուղացու հետ: Նա ասաց, որ հայերը քրիստոնյաներ են և սպանվում են, որովհետև իրենց կրոնի թշնամիներն են:

ՀԱՐՑ. Նրանք որևէ այլ պատճառ չհիշատակեցի՞ն: Օրինակ՝ նրանք չասացի՞ն, որ. «Հայերը մեզ այս, կամ այն արեցին, հիմա էլ մենք ենք իրենց սպանում»:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այդ երկու խմբերի միջև նաև պատմական թշնամանք կա:

ՀԱՐՑ. Բաքվում վկայի ընկերները հայե՞ր են, թե՞ ռուսներ:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես շատ քիչ ընկերներ ունեի, որովհետև Բաքվում շատ կարճ ժամանակ եմ ապրել:

ՀԱՐՑ. Իր բնակավայրը հայկակա՞ն թաղում էր:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո:

ՀԱՐՑ. Ինչ որ գիտե Ջիվանշիրի մասին հայերի՞ց է լսել:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ միայն հայերից: Ես նրա մասին լսել եմ նաև թաթարներից:

ՀԱՐՑ. Նա ասաց, որ Ջիվանշիրը «թունդ ազգայնամոլ էր»: Ի՞նչ է ուզում ասել դրանով: Նա նկատի ունի մի մարդ, որը հայրենասե՞ր է, թե՞ մոլեռանդ է:

ՊԱՏԱՍԽԱՆ. «Ազգայնամոլ» ասելով ես հասկանում եմ մի մարդ, որը բացառապես իր ազգն է սիրում և ատում է մյուս ազգերին:

Դատախազը ավարտեց հարցաքննությունը: Ապա Հայդար Ռիֆատ բեյը խաչաձև հարցաքննեց վկային.

ՀԱՐՑ. Վկան ինչքա՞ն ժամանակ է ապրել այստեղ:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ստամբուլում ապրում եմ սկսած անցյալ տարվանից:

ՀԱՐՑ. Որտե՞ղ է նա բնակվում:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես չեմ ցանկանում հասցես տալ: Ինձ հետ հեշտ է կապվել հյուպատոսարանի միջոցով:

Նախագահող դատավորը ասաց.

ՀԱՐՑ. Նա ինչո՞ւ չի ուզում իր հասցեն տալ:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես մտահոգ եմ, որ կարող են ինձ անհանգստացնել: Լավ, կասեմ: Ապրում եմ Թառլաբաշիի մեջ, Ֆիչիսի փողոց թիվ 8:

Հայդար Ռիֆատ բեյը շարունակեց.

ՀԱՐՑ. Ի՞նչ է վկայի զբաղմունքը:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես ոչ մի զբաղմունք չունեմ:

ՀԱՐՑ. Ինչպե՞ս է յոլա գնում նա:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես այժմ զբաղմունք չունեմ, բայց անցյալում առևտրի մեջ եմ եղել:

ՀԱՐՑ. Ի՞նչ լեզվով է խոսում:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես միայն ռուսերեն եմ խոսում:

ՀԱՐՑ. Ի՞նչ կապակցությամբ է այստեղ եկել: Ո՞ւմ հետ է խոսել և ի՞նչ լեզվով:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես հանդիպել եմ իմ հայ ընկերներից մի քանիսին: Նրանք ինձ խնդրեցին վկայություն տալ Բաքվի կոտորածների մասին:

ՀԱՐՑ. Նա ասաց, որ բրիտանացիները սեպտեմբերի 14–ին քաշվեցին Բաքվից: Ժամը քանիսի՞ն հեռացան նրանք: Առավոտյա՞ն, թե՞ երեկոյան:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես վստահ չեմ, բայց կարծում եմ՝ երեկոյան: Հավանաբար արևամուտից առաջ էր:

ՀԱՐՑ. Թաթարները ժամը քանիսի՞ն քաղաք մտան:

ՊԱՏԱՍԽԱՆ. Նրանք գիշերը մտան:

ՀԱՐՑ. Թաթարների քաղաք մտնելուց հետո ինչքա՞ն ժամանակ անց նա փողոց է դուրս եկել:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես փողոց եմ դուրս եկել դեպքից դեպք:

ՀԱՐՑ. Վկան ասաց, որ տեսել է հայերի պատկանելիքները թալանվելիս: Գուցե այդ իրերի իսկական տերերը հենց իրե՞նք էին տանում:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես տեսա թաթարների, որոնք իրերը տանում էին հայկական տներից:

ՀԱՐՑ. Նա ասաց, որ սովորություն ուներ կարդալ «Ադրբեջանը», որը կառավարության մամուլի պաշտոնական օրգանն էր: Նա նաև ասաց, որ կառավարությունը հայտարարել է, որ մուսուլմաններին արտոնված է հայերի ունեցվածքը վերցնել: Այս թերթը նա որտե՞ղ է կարդացել:

ՊԱՏԱՍԽԱՆ. Թերթը սկսեց հրատարակվել *(ազերի)* կառավարության Բաքու հասնելուց երեք օր հետո:

ՀԱՐՑ. Այդ թերթի սեփականատերը և գլխավոր խմբագիրը իմ մտերիմ ընկերն է: Վաղը ես կբերեմ այդ թերթի արխիվները: Դատարանին առաջարկում եմ խնդրել վկային, որ նա գա և ցույց տա այն համարը որտեղ այդ պարբերությունն է:

Նախագահող դատավորը՝

-Եթե թերթի արխիվը ներկայացվի, այն ժամանակ վկայի ցուցմունքը կբեկանվի: Սակայն մինչ այդ, վկայի ցուցմունքը մենք կընդունենք որպես ճշմարիտ:

Հայդար Ռիֆատ բեյը ավարտեց իր հարցաքննությունը: Նախագահող դատավորը հարցրեց՝

ՀԱՐՑ. Ո՞ւմ ստորագրությունները կային այն հայտարարության տակ, որ վկան կարդաց:

ՊԱՏԱՍԽԱՆ. Դրա տակ խան Խոյսկու և Ջիվանշիրի ստորագրություններն էին:

ՔՍԱՆՄԵԿԵՐՈՐԴ ՎԿԱ

Երդվելուց հետո, տիկին Հրանուշ Խաչատուրյանը պատասխանեց Խոսրովյան էֆենդիի հարցերին.

Նա ասաց, որ ծնունդով Ալեքսանդրապոլից (Գյումրի) է, 1915–ից սկսել է ապրել Բաքվում, քաղաքը թողել է 1920–ին: 1918–ի կոտորածների ժամանակ ապրելիս է եղել Գոգոլսկայա փողոցի վրա և տեսել է թաթար հրոսակախմբերի՝ շատ հայերի սպանելիս:

-Սեպտեմբերի 14-ին՝ շաբաթ օրը, բրիտանացիները քաշվեցին, և հաջորդ առավոտ թուրքերը մտան: Ես օգնության ճիչեր և լաց լսեցի: Կեսօրից հետո՝ ժամը 3-ի մոտերքը, տեսա, որ զինված խաժամուժը մտնում էր իմ տան դիմացի խանութները և հայերին սպանում: Նաև թուրք կանանց տեսա, որոնք իրենց ուսերին լիքը պարկերով դուրս էին գալիս այդ խանութներից: Շաբաթ օրը մարդկանց սպանություններ չտեսա, բայց կիրակի և երկուշաբթի օրերին տեսա մարդկանց սպանվելիս: Որտեղ ես ապրում եմ, ներխուժեցին զինված մարդիկ: Այնտեղ ապրում էին մի ծեր մարդ և իր կինը՝ մոտ 80 տարեկան: Տեսա, որ նրանց երկուսին դուրս քարշ տվեցին: Կինը փարվել էր զինվորին, աղաչելով կյանքը պարգևել. զինվորը հանեց ատրճանակը և երկուսին էլ սպանեց: Փողոցներում դիակներ տեսա: Ես տեսա մահացած կանանց ու երեխաների:

Կոտորածները շարունակվեցին երեք ցերեկ և երեք գիշեր: Ես չեմ կարող ասել, որ հետո կարգ ու կանոն ստեղծվեց, որովհետև հայերի ծերբակալություններն ու նրանց ունեցվածքի կողոպուտը շարունակվեց: Մի շաբաթ անց ես դուրս եկա իմ տնից՝ ծպտված, ինչպես ռուս սպասավոր: Իմ եղբայրները, մի թուրք ընկերոջ խորհրդով, մինչև կոտորածների սկսվելը թողել էին հայկական հատվածը և գնացել էին կենտրոնական մայրուղիներից մեկի մոտ: Քույրս ապրում էր թրքական հատվածում, մի հրեայի տանը: Կոտորածներից մի շաբաթ առաջ մարդիկ էին եկել այդ տուն և հարցրել, թե հայեր ապրո՞ւմ են այդտեղ: Քույրս վախեցել ու հեռացել էր տնից:

Ինձ թվաց, որ սպանությունները և թալանը կատարվում էին սիստեմատիկաբար: Ամեն մի խումբ իր տարբեր պարտականություններն ուներ և չէին խառնվում միմյանց գործերի մեջ: Մի խումբ եկավ այն տունը, որտեղ ապրում եմ և ասաց. «Մենք ուզում ենք հայեր և նրանց արյունը»: Այդ ժամանակ երեք ռուս կանայք դուրս եկան և ասացին, որ այստեղ հայեր չկան:

Ի պատասխան Խոսրովյան էֆենդիի այն հարցին, թե. «Ինչպե՞ս դադարեցին կոտորածները», նա ասաց.

ՊԱՏԱՍԽԱՆ. Ինքն իրեն: Կառավարությունը հայտարարություններ հրապարակեց, որոնցում ասված էր, որ թալանչիները և մարդասպանները խստորեն պիտի պատժվեն: Մենք նաև լսեցինք, որ հայերը տեղահանվում են:

ՀԱՐՑ. Թաթարները ռուսերեն հրատարակվող թերթ ունեի՞ն, և ինչպե՞ս էր այն կոչվում:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ունեին: Այն կոչվում էր «Ադրբեջան»: Դա պաշտոնական թերթ էր:

ՀԱՐՑ. Դու այն կարդո՞ւմ էիր:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո: Սկզբից մինչև վերջ հայերի դեմ կոպիտ լեզու էր օգտա-

գործվում և ժողովրդին հրահրում էր մարդասպանության:

ՀԱՐՑ. Վկան ի՞նչ է կարդացել «Ադրբեջանի» մեջ:

ՊԱՏԱՍԽԱՆ. «Ադրբեջանի» մեջ հրատարակվում էին Մուսավաթի ժողովի արձանագրությունները և ես դրանք կարդում էի: Չեմ հիշում՝ ո՞վ էր ստորագրում այդ արձանագրությունները: Արձանագրությունները տալիս էին Մուսավաթի կողմից առաջադրված նախագծերը և պլանները: Բոլոր մուսուլմաններին ստիպում էին միավորվել: Այնտեղ ասվում էր, որ մուսուլմաններին ամենուրեք անարդարորեն վատ են վերաբերվում և այդ իսկ պատճառով այլ ազգություններ հարստանում են: Այդ հոդվածների նպատակն էր արթնացնել թուրանականության գաղափարը:

ՀԱՐՑ. Այդ հոդվածները հայերին վերաբերո՞ւմ էին:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես կարդացել եմ հետևյալը. «Հայերը մեր թշնամիներն են և խոչընդոտում են մեր քաղաքականությանը: Եթե մենք մեր նպատակին հասնենք, այս աշխարհում հանգիստ կապրենք, որովհետև կկազմենք 300 միլիոնից բաղկացած մի ազգ»:

ՀԱՐՑ. Բաքվում որևէ առանձնահատուկ դեպք տեղի ունեցա՞վ 1918–ի մարտին:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո: Վիճաբանություն կար բոլշևիկների և թուրքերի միջև:

ՀԱՐՑ. Ի՞նչ դիրք գրավեցին հայերը այդ դեպքերի ընթացքին:

ՊԱՏԱՍԽԱՆ. Նրանք թրքական հատվածի թաթարներին տարան հայկական հատված: Կռիվներ տեղի ունեցան բոլշևիկների և տեղի թուրքերի միջև: Բոլշևիկների մեծամասնությունը ռուսներ էին, բայց բոլշևիկյան բանակում կային նաև թաթարներ Կազանից, կային տեղի թուրքեր, հրեաներ և հայեր: Հայկական ազգային խորհուրդը թուրքերին բողոքեց թաթարներին թուրքական հատվածից հայկական հատված փոխադրելու կապակցությամբ: Երբ ես ասում եմ «թուրք», նկատի ունեմ «մուսուլման»: Եղբայրս Մայլով թատրոնի մեջ 8000 թաթար փրկեց: Եղբայրս Մամիկոնյան ազգանունով մի ինժեներ է: Սերոբյան անունով իմ փեսան մի ուրիշ կինոդահլիճում փրկեց մոտավորապես 11,000 թաթար: Հետո հայերը սպանվեցին թաթարների կողմից, մասնավորապես Թաղիևի կողմից, որը մի հայտնի և հարուստ թաթար էր:

Դատախազ Ռիկատսոն Հաթը տվեց հետևյալ հարցերը.

ՀԱՐՑ. Վկան տեսե՞լ է օսմանյան բանակը քաղաք մտնելիս:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո: Նուրի փաշան նրանց հրամանատարն էր:

ՀԱՐՑ. Վկան տեսե՞լ է Նուրի փաշայի կողմից ստորագրված մի հայտարարություն՝ հրատարակված մինչև նրա քաղաք մտնելը: Այդ հայտարարությունում ասվո՞ւմ էր, որ հայերի կյանքը և ունեցվածքը պիտի ապահովվի, եթե նրանք զենքերը հանձնեն:

ՊԱՏԱՍԽԱՆ. Մուրսել փաշան էր գրել դա: Ես այդ ժամանակ *(հայկական)* Ազգային խորհրդի կազմում էի: Այնտեղ եմ ես դա տեսել: Այն գրված էր գերմաներեն և ձեռագիր էր:

ՀԱՐՑ. Ես նկատի ունեմ օսմանյան բանակը: Թրքական զորքերը Բաքվում իրենց լավ պահեցին, այնպես չէ՞:

ՊԱՏԱՍԽԱՆ. Միայն քրդերն էին, որ սարսափելի բաներ կատարեցին ռուսական թաղամասերում:

ՀԱՐՑ. Թաթարները, որոնց նա տեսել է, համազգեստո՞վ էին:

ՊԱՏԱՍԽԱՆ. Թաթարները, որոնց տեսել եմ զինված խմբերում, քաղաքացիներ էին: Թաթարները, որոնց ես տեսա երկուշաբթի օր, համազգեստով էին: Դրանք թուրք զինվորներ էին:

Նախագահող դատավորն ասաց.

ՀԱՐՑ. Բացառելով քուրդ ցեղախմբերը, ինչպե՞ս պահեցին իրենց թուրք զինվորները:

ՊԱՏԱՍԽԱՆ. Թուրք զինվորները թալանին չէին մասնակցում, բայց նրանք վերցնում էին թաթարների դրամները:

ՀԱՐՑ. Ինչո՞ւ այս բացահայտումները նա ավելի վաղ չարեց: Ես իրեն հարցրել եմ այս մասին:

ՊԱՏԱՍԽԱՆ. Եղբայրս ասաց այդ մասին:

Նախագահող դատավորը՝

ՀԱՐՑ. Ինքը դա անձամբ տեսե՞լ է:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ:

ՀԱՐՑ. Նուրի փաշան որևէ փորձ արե՞ց կոտորածները դադարեցնելու համար:

ՊԱՏԱՍԽԱՆ. Թուրք զինվորները սվիններով պահակ էին կանգնած քաղաքի գլխավոր փողոցներում և պաշտպանում էին քաղաքը: Թաթարներն էին թալանողները:

ՀԱՐՑ. Նուրի փաշան թալանողներից որևէ մեկին կախե՞ց:

ՊԱՏԱՍԽԱՆ. Երեք օր հետո մի հրովարտակ հրապարակեց, որ մարդասպաններն ու թալանողները պիտի կախվեն:

ՀԱՐՑ. Կոտորածների ժամանակ տիկինը հայի տա՞նն է ապրել:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո: Տերը մի ռուս էր, բայց նրա կինը հայ էր:

ՀԱՐՑ. Ուրեմն վկան ռուսի՞ հյուրն էր:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես ուսուցիչ էի:

ՀԱՐՑ. Նա ինչքա՞ն մնաց բնակարանում, մինչ կոտորածները:

ՊԱՏԱՍԽԱՆ. Սկսած մարտ ամսից:

ՀԱՐՑ. Թաթար անկանոններից որևէ մեկը այդ տունը եկա՞վ:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, եկան: Ոչ մեկը մեր բնակարան չմտավ, բայց նրանք մտան վերևի բնակարանը և թալանեցին:

ՀԱՐՑ. Անկանոնները, ենթադրաբար, եկան իր բնակարանը և պահանջեցին հայերին և նրանց ազգականներին: Ո՞վ էր ասում դա:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այն թաթար անկանոնները, որոնք Բաքու էին եկել: Նրանք այդ ասում էին ռուսերեն:

Նախագահող դատավորը՝

ՀԱՐՑ. Եթե վախից թաքնվել էր, նա ինչպե՞ս լսեց դա:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես դա լսեցի իմ սենյակից: Լուսամուտները բաց էին:

ՀԱՐՑ. Թաթարները ո՞ւմն էին ուղղում այդ խոսքերը:

ՊԱՏԱՍԽԱՆ. Դրանք ընդհանուրին էին ուղղված:

Այս պահին Խոսրովյան էֆենդին ոտքի կանգնեց և սկսեց հարցեր ուղղել վկային.

ՀԱՐՑ. Վկան անդրադարձավ Մուրսել փաշայի կողմից ստորագրված մի նամակի, որը կարդացվել էր Հայկական ազգային խորհրդում: Խորհուրդը ստորագրության մասին որևէ կասկած ունեցա՞վ:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, եղավ, որովհետև նրանք վստահ չէին, որ Մուրսել փաշան է գրել այդ նամակը:

Հետո Հայդար Ռիֆատ բեյը խաչաձև հարցաքննեց վկային.

ՀԱՐՑ. Վկան թուրքերեն գիտե՞: Որտե՞ղ է նա ապրում: Ի՞նչ քաղաքացիություն ունի:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես թուրքերեն չգիտեմ: Ապրում եմ Բեյօղլու, Բուրսա փողոցի թիվ 3: Ունեմ հայկական քաղաքացիություն: Երկու եղբայր ունեմ: Ամուսինս նախկինում օսմանյան քաղաքացիություն ուներ:

ՀԱՐՑ. Նա պետք է օսմանյան քաղաքացի լիներ իր ամուսնու քաղաքացիության պատճառով: Նա օսմանյան կառավարության թույլտվությունը ստացե՞լ է իր քաղաքացիությունը փոխելու համար:

ՊԱՏԱՍԽԱՆ. Կովկասում մի հայտարարություն հրապարակվեց, որտեղ ասվում էր, որ կարող էինք ընտրել ցանկացած քաղաքացիություն:

ՀԱՐՑ. Նա ասաց, որ երեխաներ սպանվեցին: Սակայն նա երբեք չթողեց այն բնակարանը, որտեղ ապրում էր: Այդ բանը նա որտե՞ղ տեսավ: Իր թվարկած անունների շարքում երեխաներ չկային:

ՊԱՏԱՍԽԱՆ. Դիակները կառքերի վրա դրվեցին երեք-չորս օր հետո: Այդ ժամանակ էր, որ տեսա նրանց:

ՀԱՐՑ. Նա ասաց, որ կոտորածները կանխամտածված էին, որովհետև կատարվեցին կազմակերպված ձևով: Եթե նա փողոց դուրս չէր գալիս, որտեղի՞ց գիտե, որ կոտորածները կատարվում էին կազմակերպված ձևով:

ՊԱՏԱՍԽԱՆ. *(Բացթողում)*

Նախագահող դատավորը հարցրեց. «Վկան ինչպե՞ս գիտե, որ կոտորածները դադարեցվեցին կառավարության կողմից»: Վկան պատասխանեց. «Հայտարարություններ հրապարակվեցին, բայց ես դրանք չեմ կարդացել, որովհետև փողոց չէի դուրս գալիս»: Հետո Խոսրովյան էֆենդին հարցրեց. «Կառավարությունը կոտորածների ընթացքում հայտարարություն հրապարակե՞լ է»: Վկան ասաց. «Ես տեսա, որ պատերին որոշ նյութեր էին փակցնում»:

Նա ինչպե՞ս կարող է համաձայնեցնել այս հակասությունը:

Վկան դուրս բերվեց դատարանի դահլիճից: Հետո լսվեց պաշտպանության վկա Ափիկ Մուբայաաճյանի ցուցմունքը:

Վկան ասաց, որ իր անունը Ափիկ Մուբայաաճյան է, որ անցյալ 12 տարիներին եղել է Ստամբուլի հայկական Պատրիարքարանի Հոգևոր խորհրդի քարտուղարը և իր պարտականությունն է եղել մասնակցել համայնքի կրոնական և վարչական գործերին:

Նախագահող դատավորն ասաց.

-Վկան հայտարարություններ կարող է անել միմիայն փաստերի մասին: Նա չի կարող արտահայտել իր անձնական կարծիքը:

ՀԱՐՑ. Հայկական Ազգային Խորհուրդը քննության առե՞լ է հայկական կոտորածների հարցը:

ՊԱՏԱՍԽԱՆ. Խորհուրդը այդ հարցերը քննել է 1872, 1886, 1912 թվականներին և զինադադարից հետո:

ՀԱՐՑ. Խորհուրդը ինչպե՞ս մոտեցավ կոտորածների հարցին:

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայ Պատրիարքը Օսմանյան կառավարությանը մի զեկուցագիր ներկայացրեց ներքին գործերի վերաբերյալ: Այդ զեկուցագիրը բողոքում էր, որ հայերը ենթարկվում են հալածանքի և տեղահանման:

ՀԱՐՑ. Դրա արդյունքն ի՞նչ եղավ:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այն ժամանակ վարչապետը հրամաններ արձակեց, որ վիճակը փոխանցվի Հայկական ազգային խորհրդին և հայերի պահանջները ճանաչվեն: Այդ կապակցությամբ մի զեկուցագիր պատրաստվեց և Պատրիարքը այդ զեկուցագիրը տվեց համապատասխան իշխանություններին: Կազմվեց մի հանձնաժողով: Խնդիրները վերաբերում էին բարեփոխումների պահանջներին:

(Հայդար Ռիֆատ բեյը ասաց, որ կարիք չկա լսել մի վկայի, որ նման պատմություններ է պատմում, և եթե անհրաժեշտ լինի, կարելի է ներկայացնել բնագրերը այն զեկուցագրերի, որոնց մասին այստեղ նշվեց)

Նախագահող դատավորը՝

-Թող նա ինչքան հնարավոր է արագ ասի իր ասելիքը, որովհետև չպետք է մոռանա, որ ինչ որ ինքը ասում է, բնավ առնչություն չունի այս գործի հետ: Արդարև չպետք է մոռանաք, որ այս անձնավորության ցուցմունքը չպիտի ծառայի այս դատարանի վճիռը փոխելուն, կամ շուռ տալուն: Բացարձակ պատճառ չկա, որ այս վկան այստեղ լինի: Մենք ժամանակ ենք վատնում: Վկան պետք է գնա:

Խոսրովյան էֆենդի.

-Եթե թույլ տաք, վկան կարող է այս նյութի շուրջ մի ուրվագիծ ներկայացնել:

Նախագահող դատավորը՝

-Դատարանը նման նախագծի կարիքը չունի:

Որոշվեց՝ Պատրիարքարանի քարտուղարին իբրև վկա չլսել:

ՔՍԱՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՎԿԱ

Երդվելուց հետո, Տիկին Հայկուհին (Շահինյան), այն բնակարանի տերը, որտեղ մարդասպան Թոռլաքյանն էր ապրել, ի պատասխան պաշտպան փաստաբան Խոսրովյան էֆենդիի հարցերի ասաց, որ ինքը բնակվում է Բեյօղլու, Չեդիդիյե փողոցի թիվ 102–ում, որ նա ծնվել է Տրապիզոնում, որ նա պաշտպանյալ Թոռլաքյանին ճանաչել է Տրապիզոնից, որ Թոռլաքյանները լավ ճանաչված ընտանիք են եղել, որ ինքը ապրել է Տրապիզոնի մոտ մի գյուղում, և որ երբ ինքը թողել է Տրապիզոնը, պաշտպանյալը 20 տարեկան է եղել:

Հետո նա պատասխանեց Խոսրովյան էֆենդիի հարցերին.

ՀԱՐՑ. Ի՞նչ կարող ես ասել Թոռլաքյանի բարոյականի մասին:

ՊԱՏԱՍԽԱՆ. Նա լավ մարդ է, շատ հարուստ ընտանիքից: Քուշանա գյուղի կեսը իրենց էր պատկանում:

ՀԱՐՑ. Ազգականներ ունե՞ր:

ՊԱՏԱՍԽԱՆ. Նա Հակոբ անունով հայր ուներ: Նրա հայրը մի շատ լավ մարդ էր և առանձին էր ապրում:

ՀԱՐՑ. Նա ուրիշ մեկը ունե՞ր:

ՊԱՏԱՍԽԱՆ. Նա մի շատ գեղեցիկ քույր ուներ Աղավնի անունով: Նա այնքան գեղեցիկ էր, որ ամեն մարդ ուզում էր տեսնել նրան: Նա նաև մայր և եղբայր ուներ: Այդքանը ես գիտեմ: Նա նրանց այնքան հաճախ չէր այցելում:

ՀԱՐՑ. Դու ասացիր, որ Տրապիզոնը թողել ես 12 տարի առաջ: Այդ ժամանակաշրջանում երբևիցե տեսա՞ր պաշտպանյալին:

ՊԱՏԱՍԽԱՆ. Երկու տարի առաջ եղել եմ Բաթումիում, Թբիլիսիում, Նովոռոսիյսկում և Եկատերինոդարում *(Կրասնոդար)*: Ես կորցրել էի ծնողներիս և նրանց էի փնտրում:

ՀԱՐՑ. Հարազատներիդ որտե՞ղ կորցրիր:

ՊԱՏԱՍԽԱՆ. Նրանցից շատերին ես կորցրի Տրապիզոնում: Նրանց այնտեղ էի փնտրում: Նրանք անհետացան:

ՀԱՐՑ. Ես կրկնում եմ իմ հարցը՝ պաշտպանյալին կրկին որտե՞ղ տեսար:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ավագ եղբորս և մեծ հորս գտա Թիֆլիսում: Իմ զարմիկը կտորեղենի խանութ ուներ Թիֆլիսում: Թոռլաքյանը հաճախում էր այդ խանութը:

ՀԱՐՑ. Ես կրկնում եմ իմ հարցը՝ պաշտպանյալին կրկին ե՞րբ տեսար:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես նրան հանդիպեցի երկու տարի առաջ Թիֆլիսում, 1918-ի սեպտեմբերին:

ՀԱՐՑ. Նա քեզ ի՞նչ ասաց:

ՊԱՏԱՍԽԱՆ. Երբ մենք իրար տեսանք, շատ զգացմունքային էինք, մենք լաց եղանք: Նա ինձ ասաց, որ իր հայրը, եղբայրը, քույրը, կինը և երկու փոքրիկ զավակները սպանվել են:

ՀԱՐՑ. Նա քեզ ասա՞ց, թե որտե՞ղ են սպանվել:

ՊԱՏԱՍԽԱՆ. Նա ինձ ասաց, որ նրանք սպանվել են Բաքվում, թաթարների կողմից՝ հայերի կոտորածների ժամանակ:

ՀԱՐՑ. Ի՞նչ էր քո տպավորությունը պաշտպանյալից, երբ նրան տեսար Թիֆլիսում:

ՊԱՏԱՍԽԱՆ. Նա շատ թշվառ էր, պատառոտված հագուստով, վիրավոր և վշտացած:

ՀԱՐՑ. Նա Թիֆլիսում որևէ զբաղմունք ունե՞ր:

ՊԱՏԱՍԽԱՆ. Երբ իրեն տեսա, նա ինձ ասաց, որ Բաթումում մի մեծ վաճառականի մոտ է աշխատում:

ՀԱՐՑ. Թիֆլիսից բացի, նրան նորից որևէ տեղ տեսա՞ր:

ՊԱՏԱՍԽԱՆ. Հաջորդ անգամ ես նրան Ստամբուլում տեսա: Նա ինձ լուր էր բերել Թիֆլիսի իմ եղբորից:

ՀԱՐՑ. Իր վիճակը ինչպիսի՞ն էր, երբ նրան տեսար Ստամբուլում:

ՊԱՏԱՍԽԱՆ. Նա ինձ ասաց, որ Ստամբուլում պիտի մնա մի կարճ ժամանակի համար և ինձնից խնդրեց իր համար մի սենյակ գտնեմ:

ՀԱՐՑ. Քո բնակարանում քանի՞ սենյակ ունես:

ՊԱՏԱՍԽԱՆ. Մենք չորս սենյակ ունենք:

ՀԱՐՑ. Քո ընտանիքը մե՞ծ է:

ՊԱՏԱՍԽԱՆ. Մենք հինգն ենք, ամուսին, կին և երեք երեխա:

ՀԱՐՑ. Ինչքա՞ն ժամանակ քեզ հետ մնաց նա:

ՊԱՏԱՍԽԱՆ. Նա մեզ հետ էր մինչև վերջը:

ՀԱՐՑ. Հիմա ես քեզ մի քանի հարց պիտի տամ՝ ձեր տանը նրա կյանքի վերաբերյալ: Ձեր տանը նա անբարոյական կյանք վարո՞ւմ էր:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ, ես նրան ոչ մի անբարոյական գործողությամբ զբաղվելիս չեմ տեսել:

ՀԱՐՑ. Ի՞նչ գիտես իր առողջության մասին:

ՊԱՏԱՍԽԱՆ. Չեմ կարող ասել, որ նա շատ առողջ է: Նա միշտ նիհար է եղել, մելամաղձոտ և հանդարտ: Նա միշտ իր սենյակում էր մնում:

ՀԱՐՑ. Նա գիշերները ի՞նչ էր անում:

ՊԱՏԱՍԽԱՆ. Նա մինչև առավոտ լույսը չէր անջատում: Վշտից միշտ հեկեկում ու լաց էր լինում:

ՀԱՐՑ. Ինչպե՞ս էիր կարողանում դա լսել:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այն սենյակը, որտեղ նա մնում էր, իմ սենյակին կից էր: Այդ պատճառով ես կարողանում էի լսել, որ նա ամբողջ գիշեր չէր քնում: Երբ հարցնում էի, թե ինչո՞ւ չի քնում, ոչինչ չէր ասում: Գլուխը վերցնում էր ձեռքերի մեջ և ինձ էր նայում մի քիչ հիմարավարի: Երբ խոսում էր, մշտապես խոսում էր իր մոր, կնոջ և զավակների մասին: Մի գիշեր բարձր ձայն լսեցի: Իր սենյակը մտա և տեսա նրան ուշագնաց, պառկած: Նա պառկած էր անգիտակից և բերնից փրփուր էր դուրս գալիս: Նա այս ձևով ուշագնաց է եղել երեք անգամ: Մի անգամ նա ընկավ աստիճանների վրա:

ՀԱՐՑ. Խնդրում եմ մեզ ասես, ի՞նչ գիտես պաշտպանյալի վերաբերյալ:

ՊԱՏԱՍԽԱՆ. Նա մեզ ասում էր, որ իր մասին չանհանգստանանք: Նա ասում էր, որ երբեմն իրեն թվում է, որ իր կինը և ծնողները դեռ կենդանի են, իրենց անկողիններում են. այդ է պատճառը, որ այդ նոպաներն է ունենում, բայց շուտով ավելի լավ է լինելու: Նա առավոտները վեր էր կենում ժամը 11-ին:

ՀԱՐՑ. Իր անկողինը դո՞ւ էիր հավաքում:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո:

ՀԱՐՑ. Ի՞նչ էիր սովորաբար գտնում իր անկողնում:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես իր բարձը հաճախ թաց էի գտնում:

ՀԱՐՑ. Ի՞նչ ես կարծում իր կրոնական զգացումների մասին:

ՊԱՏԱՍԽԱՆ. Նա իր սենյակում աղոթում և Աստվածաշունչն էր կարդում:

ՀԱՐՑ. Պատահո՞ւմ էր, որ բոլորովին տուն չէր գալիս:

ՊԱՏԱՍԽԱՆ. Նա գնում էր Բեշիկթաշ՝ իր հայ փախստական ընկերներին այցելելու համար և անհետանում էր:

ՀԱՐՑ. Դու իրեն երբևիցե հարբած տեսե՞լ ես:

ՊԱՏԱՍԽԱՆ. Նա խմելու սովորություն չուներ: Բայց նա երբեմն գալիս էր թեթև խմած: Երբ հարցնում էի, թե ինչո՞ւ է խմել, պատասխանում էր, որ դա արել է իր վիշտը մոռանալու համար:

ՀԱՐՑ. Հիմա նայիր իրեն, պաշտպանյալը փոխված երևո՞ւմ է:

Վկան ոտքի կանգնեց՝ պաշտպանյալին նայելու համար:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, նա շատ է փոխված:

ՀԱՐՑ. Իր ծերբակալվելուց հետո նրան տեսե՞լ ես:

ՊԱՏԱՍԽԱՆ. Նա մի քանի օր տուն չեկավ: Ես մտահոգվում էի: Երբ թերթերում կարդացի, որ նա ծերբակալված է, իր հագուստները տարա իրեն:

ՀԱՐՑ. Ինչպե՞ս իմացար, որ նա ծերբակալված է բրիտանական պահպանության ներքո:

ՊԱՏԱՍԽԱՆ. Թերթերում կարդացի:

ՀԱՐՑ. Ինչպիսի՞ն էր իր հոգեբանական վիճակը բանտում:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես իրեն տեսա ուրախ և մի տեսակ հանգստացած, ինչպես չէի տեսել նախկինում:

ՀԱՐՑ. Կարո՞ղ ես ասել, որ նա խղճի խայթ ուներ:

ՊԱՏԱՍԽԱՆ. Նա ինձ այդ մասին ոչինչ չասաց:

ՀԱՐՑ. Դու քո կյանքում մարդասպանի, կասկածյալ մարդասպանի, կամ կասկածյալի հանդիպե՞լ ես:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ:

ՀԱՐՑ. Այս մարդը մարդասպանի նմա՞ն էր:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ, այդպիսի բան չկար:

Խոսրովյան էֆենդին ավարտեց հարցաքննությունը: Հետո դատախազ Ռիկատսոն Հաթը խաչաձև հարցաքննեց վկային.

ՀԱՐՑ. Երբ վկան Տրապիզոնում էր, նա որևէ բան գիտե՞ր Թոռլաքյանի առողջական վիճակի մասին:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես իր ընտանիքի հետ հարաբերություն չեմ ունեցել:

ՀԱՐՑ. Երբ նա մնում էր ձեր տանը, բժիշկները հաճա՞խ էին այցելում իրեն:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես որևէ բժշկի չեմ տեսել, բայց նա դեղորայք էր ընդունում:

ՀԱՐՑ. Պաշտպանյալի առողջական վիճակը իրեն խանգարո՞ւմ էր ապրուստ հայթայթել այն ժամանակաշրջանում, երբ նա մնում էր ձեր տանը:

ՊԱՏԱՍԽԱՆ. Երբ ես Թիֆլիսում էի, ես նրան մի քանի անգամ տեսա կաթնամթերքների խանութում: Ես չգիտեմ, թե նա ի՞նչ էր անում: Երբ Ստամբուլում էր ապրում, նա շատ ուշ էր աշխատանքի գնում:

ՀԱՐՑ. Իր առողջական վատ վիճակը նրան խանգարո՞ւմ էր ամուսնանալու և երեխաներ ունենալու համար:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես նրա հետ այդ նյութի մասին չեմ խոսել: Համենայն դեպս, նա ամուսնացավ և երեխաներ ունեցավ:

ՀԱՐՑ. Իր հիվանդությունը նրան կանխե՞ց բանակում ծառայելուց:

ՊԱՏԱՍԽԱՆ. Նա ասաց, որ ինքը զորակոչվել է բանակ, սակայն ազատվել է խանգարիչ պատճառով:

ՀԱՐՑ. Պաշտպանյալին ինչպե՞ս հանդիպեցիր Ստամբուլում:

ՊԱՏԱՍԽԱՆ. Թիֆլիսի իմ եղբայրը հավանաբար նրան տվել էր իմ հասցեն և նա լուրեր բերեց իմ եղբոր մասին: Նա ինձ խնդրեց մի սենյակ գտնել իր համար: Ես իրեն իմ ազատ սենյակը տվեցի:

ՀԱՐՑ. Երբ պաշտպանյալը մնում էր ձեր տանը, Ջիվանշիրի մասին որևէ բան ասե՞լ է:

ՊԱՏԱՍԽԱՆ. Նա երբեք չի հիշել նրան: Այդ անունը ես երբեք չէի լսել առաջ:

ՀԱՐՑ. Պաշտպանյալը իր սրտի մեջ վրեժի որևէ զգացում արտահայտե՞լ է իր ծնողների և քրոջ սպանության կապակցությամբ:

ՊԱՏԱՍԽԱՆ. Նա այդ կարգի նյութերի շուրջ չէր խոսում: Նա միշտ ասում էր՝ «Աստված պիտի արդար լուծում տա մեր դատին»: Երկուսս էլ լաց էինք լինում, որովհետև երկուսս էլ հուզվում էինք:

ՀԱՐՑ. Ի՞նչ էիր հասկանում ասելով, որ պաշտպանյալի բերանից փրփուր էր դուրս գալիս:

ՊԱՏԱՍԽԱՆ. Իմ բնակարանում ապրելիս նա երեք անգամ ուշագնաց եղավ: Մի գիշեր բարձր ձայն լսեցի: Մտա իր սենյակը և իրեն տեսա պառկած հատակին, բերանից փրփուր էր դուրս գալիս:

ՀԱՐՑ. Նա ասաց, որ պաշտպանյալը իր տանը ոչ մի կին չէր ունենում: Իսկ տղամարդ այցելուներ ունենո՞ւմ էր:

ՊԱՏԱՍԽԱՆ. Նա ոչ մի այցելու չէր ունենում: Նա քաշվում էր իր սենյակը, լացում ու հեկեկում էր:

ՀԱՐՑ. Թեկուզ ոչ իր սենյակում, նա դրսում քահանաների և նմանների հետ հանդիպում ունենո՞ւմ էր:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես չգիտեմ, որովհետև Տրապիզոնի մեր ծանոթներից ոչ մեկը կենդանի չէր մնացել:

ՀԱՐՑ. Վկան ասաց, որ պաշտպանյալը իրեն ասել է, թե թուրք սպաները իրեն ծեծել են: Նա ասա՞ց, թե ինչի համար են ծեծել:

ՊԱՏԱՍԽԱՆ. Առիթ չեղավ, որ իրեն հարցնեմ:

ՀԱՐՑ. Դու գիտե՞ս, որ Ստամբուլի քրիստոնյաները մշտապես անհիմն պնդումներ են անում թուրքերի դեմ և, ի վերջո, պարզվում է, որ նրանք են սխալ:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես լսել եմ, որ թրքական ոստիկանությունը խփում և ծեծում էր ում որ ծերբակալում էին:

Դատախազը վերադարձավ իր տեղը: Հայդար Ռիֆատ բեյը տվեց հետևյալ հարցերը.

ՀԱՐՑ. Ստամբուլում Տրապիզոնի հայտնի ընտանիքներից վկան ո՞ւմ է ճանաչում:

ՊԱՏԱՍԽԱՆ. Կոտորածներից հետո ես Տրապիզոնի թուրքերի հետ խզել եմ իմ հարաբերությունները:

ՀԱՐՑ. Ի՞նչ է պաշտպանյալի մոր անունը:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես չգիտեմ: Հոր անունը Հակոբ էր:

ՀԱՐՑ. Նրան ո՞վ ասաց, որ Տրապիզոնի իր հարազատները սպանված են:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես հարցրել եմ մի ընկերուհու, որը ամուսնացած էր Տրապիզոնի մի ոստիկանի հետ: Նա ասաց, որ ընտանիքս սպանված է: Ես իմ հարազատներին փնտրեցի Սամսոնում, Օրդուում, Ճիրեսանում, բայց նրանցից ոչ մեկին չգտա:

ՀԱՐՑ. Ո՞վ պիտի հոգ տաներ պաշտպանյալի լվացքի մասին իր սենյակում:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես:

ՀԱՐՑ. Նա քանի՞ հատ զենք ուներ:

ՊԱՏԱՍԽԱՆ. Երբ ես հավաքում էի իր անկողինը, երկու անգամ մի ատրճանակ տեսա իր բարձի տակ:

ՀԱՐՑ. Թող նկարագրի ատրճանակը: Այն մե՞ծ էր: Ինչի՞ էր նման:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես չեմ հիշում: Ես վախեցա, երբ տեսա:

ՀԱՐՑ. Եթե հիմա տեսնի ատրճանակը, կճանաչի՞:

ՊԱՏԱՍԽԱՆ. Վստահ չեմ: Եթե տեսնեի, կարող է ճանաչեի:

ՀԱՐՑ. **Պաշտպանյալը ատրճանակը ամեն օր իր մո՞տ էր կրում:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես չգիտեմ, նա ամեն օր իր հետ էր վերցնում թե ոչ, բայց երբեմն տեսնում էի իր հետևի գրպանում:

ՀԱՐՑ. **Դու որևէ խելագար ազգական, կամ ընկեր ունե՞ս:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Փառք Աստծո, ոչ:

ՀԱՐՑ. **Վկան երբևիցե հոգեբուժական հիվանդանոց հաճախե՞լ է, հետաքրքրությունից ելնելով:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ, որովհետև նրանց չեմ սիրում:

ՀԱՐՑ. **Ի՞նչ է վկայի ամուսնու զբաղմունքը: Ի՞նչ է նրա անունը և ի՞նչ տիտղոս ունի:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Նրա անունը Կարպիս է, նա ոսկերիչ է:

ՀԱՐՑ. **Պաշտպանյալը դեպքի օրը մինչև երեկո միշտ տա՞ն է եղել:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Նա դուրս եկավ:

ՀԱՐՑ. **Նա ե՞րբ դուրս եկավ:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Նա դուրս եկավ ինչպես ամեն օր, իր սովորական ժամին, բայց երեկոյան չվերադարձավ:

ՀԱՐՑ. **Որտե՞ղ են պաշտպանյալի պատկանելիքները, կառավարությունը դրանք չի՞ բռնագրավել:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ինչ որ իրեն էր պատկանում ես հանձնել եմ: Անկողինը իմն է:

ՀԱՐՑ. **Պաշտպանյալը բրիտանական և թրքական ոստիկանությանը տված ցուցմունքի մեջ ասել է, որ իր ապրած վայրը Բեշիքթաշն է եղել: Ոստիկանության որևէ պաշտոնյա եկե՞լ է իրեն հարցաքննելու:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ, պարոն:

ՀԱՐՑ. **Ի՞նչ հաճախականությամբ էր պաշտպանյալը ճամփորդում դեպի Քինալիադա:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Նա այնտեղ մի քանի անգամ գնաց:

ՀԱՐՑ. **Որտե՞ղ էր պաշտպանյալը խմում:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես մի անգամ նրան տեսա մի շիշ բրենդի խմելիս, բայց ես նրան երբեք չեմ տեսել տանը խմելիս:

ՀԱՐՑ. **Ովքե՞ր են այն մարդիկ, որոնց հետ պաշտպանյալը սերտ կապեր էր հաստատել այստեղ:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Նա այցելում էր Բեշիքթաշի իր ընկերներին:

Նախագահող դատավորը՝

ՀԱՐՑ. **Նա անուններ պետք է տա:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես որևէ անուն չգիտեմ:

ՀԱՐՑ. **Պաշտպանյալը քանի՞ ամիս մնաց վկայի տանը:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Իմ տանն էր հունվարի սկզբից:

ՀԱՐՑ. **Նա ինչքա՞ն վարձ էր վճարում:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Սենյակի, լվացք անելու և նախաճաշի համար ես նրանից ստանում էի ամսական 30 թրքական լիրա:

ՀԱՐՑ. **Պաշտպանյալը որտե՞ղ էր ճաշում, ռեստորաններո՞ւմ թե՞ տանը:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես չգիտեմ:

ՀԱՐՑ. **Ասացիք, որ նա աշխատանքի էր գնում շաբաթը մեկ կամ երկու անգամ: Նա ի՞նչ աշխատանք ուներ:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես միայն գիտեմ, որ նա վարձը կանոնավոր վճարում էր:

ՀԱՐՑ. **Պաշտպանյալը զորակոչվել էր բանակ, ապա զորացրվել: Վկան որտեղի՞ց գիտե սա:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Թոռլաքյանն է ինձ ասել:

ՀԱՐՑ. **Ինչու՞ վկան հավատաց, որ պաշտպանյալի հարազատները սպանված են:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Չգիտեմ: Միայն գիտեմ, որ նա ինձ ասել է, որ իր հարազատները սպանված են Բաքվում:

Հայդար Ռիֆատ բեյը վերջացրեց հարցաքննությունը: Նախագահող դատավորը վկային տվեց հետևյալ հարցը.

ՀԱՐՑ. **Վկան ասաց, որ պաշտպանյալը ուշագնաց է եղել երեք անգամ, բերանին փրփուրով: Վկան կարո՞ղ է մեզ ասել, վերջին անգամ, դեպքից առաջ, ե՞րբ է պաշտպանյալը ուշագնաց եղել:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Մոտ 20 օր առաջ:

ՔՍԱՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՎԿԱ

Կարպիս (Շահինյան), ոսկերիչ, երդվելուց հետո, ի պատասխան պաշտպանության փաստաբան Խոսրովյան էֆենդիի հարցերի ասաց, որ բնակվում է Փանգալտիի մեջ, Չեդիդիյե փողոց թիվ 2, որ պաշտպանյալին ճանաչում է Տրապիզոնից և որ ինքը ևս նրան տեսել է Թիֆլիսում:

Հետո պատասխանեց Խոսրովյան էֆենդիի հարցերին.

ՀԱՐՑ. **Երբ Թիֆլիսում հանդիպեցիք, ի՞նչ քննարկեցիք իր հետ:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Պաշտպանյալը պատմեց, թե ինչքան վշտացած է իր հարազատների կորստի համար: Երբ իրեն հարցրի, թե ե՞րբ է թողել Տրապիզոնը, նա ասաց, որ ինքը և իր ընտանիքը Տրապիզոնը թողել են Առաջին Համաշխարհային պատերազմի սկզբին: Նա ասաց, որ Տրապիզոնը թողնելուց հետո գնացել է Բաթում, հետո Սուխում, ու երբ ռուսական բանակը սկսել է նահանջել և թրքական բանակը սկսել է Կովկասը գրավել, նա իր ընտանիքը ուղարկել է Բաքու, մտածելով, որ այնտեղ մնալը վտանգավոր կարող է լինել: Նա ասաց, որ ավելի ուշ գնացել է Երևան՝ միանալու համար հայկական բանակին, որ նա բանակից զորացրվել է առողջական վատ վիճակի պատճառով: Իմանալով, որ թուրք և թաթար բանակները շարժվում են դեպի Բաքու, իր ընտանիքին միացել է այդ քաղաքում: Քաղաք հասնելուց հինգ կամ տասը օր հետո սկսում են հայերին սպանել: Կոտորածների ժամանակ ինքն էլ էր վիրավորվել: Վերքերից մեկը ուսին էր, մյուսը՝ սրունքին, իսկ փամփուշտները դեռ իր մարմնի մեջ են: Նա ասաց, որ մի հայ իրեն թաքցրել է, որ նա վերադարձել է Թիֆլիս, որ նա աշխատանքի է անցել Բաթումի մի վաճառականի մոտ, որ հաճախ ճամփորդել է Բաթումի և Թիֆլիսի միջև իր վաճառականական գործերով, և որ այդ ժամանակ իր ֆինանսական դրությունը լավ էր:

ՀԱՐՑ. **Պաշտպանյալին կրկին որտե՞ղ հանդիպեցիր:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ստամբուլի իմ տանը:

ՀԱՐՑ. Կարո՞ղ ես ամսաթիվն ասել:
ՊԱՏԱՍԽԱՆ. 1921-ի հունվարին:
ՀԱՐՑ. Ի՞նչ է կնոջդ անունը:
ՊԱՏԱՍԽԱՆ. Հայկուհի:
ՀԱՐՑ. Դու այն կնոջ ամուսի՞նն ես, որ երեկ որպես վկա ցուցմունքներ տվեց:
ՊԱՏԱՍԽԱՆ. Այո: Երբ մի երեկո ես տուն վերադարձա, պաշտպանյալին իր սենյակում գտա: Նա լուրեր էր բերել իմ կնոջ եղբորից: Երբ նա հետաքրքրվեց շրջապատում վարձու սենյակ գտնելու հնարավորության մասին, կինս իրեն ասաց, որ կարող է սենյակ վարձել մեր տանը:

Նախագահող դատավորը.

ՀԱՐՑ. Ի՞նչ է կնոջդ անունը:
ՊԱՏԱՍԽԱՆ. Հայկուհի:
ՀԱՐՑ. Խնդրում եմ պատասխանել հարցերին, որ ես պիտի տամ մաքուր խղճով: Ինչպե՞ս էր պաշտպանյալը անցկացնում իր ժամանակը:

Վկայի պատասխանը նման էր մեկ օր առաջ իր կնոջ տված պատասխանին:

ՀԱՐՑ. Վկայի մոտ նկատեցի՞ր մի հիվանդություն, որը վախեցնում էր երեխաներիդ:
ՊԱՏԱՍԽԱՆ. Երբ իրեն ընթրիքի էինք կանչում, նա սեղանի վրայից առանձին ամանից էր ուտում: Կարծում եմ, որ պաշտպանյալը մի վատ և անբուժելի հիվանդություն ունի:
ՀԱՐՑ. Նկատի ունենալով, որ պաշտպանյալը ամիսներով ձեր տանն է մնացել, կարո՞ղ ես նրան վստահելի անձ համարել: Դու պետք է, որ իմանաս:
ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, ես իմ կյանքը կարող եմ նրան վստահել: Ինչքան ավելի նրան ճանաչեցի, այնքան ավելի աճեց իմ վստահությունը նրա նկատմամբ:
ՀԱՐՑ. Կարծո՞ւմ ես, որ պաշտպանյալը կարող էր մարդասպանություն կատարել:
ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ, պաշտպանյալը այդ տեսակ մարդ չէ, որ կարողանար մարդասպանություն կատարել:
ՀԱՐՑ. Տեսե՞լ ես պաշտպանյալին զենք կրելիս:
ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, ես տեսա, որ նա իր սենյակում ատրճանակ էր կրում: Նա ատրճանակը կրում էր մեջքին, ոչ թե գրպանում:
ՀԱՐՑ. Իրեն հարցրի՞ր, թե ինչու է ատրճանակ կրում:
ՊԱՏԱՍԽԱՆ. Այո:
ՀԱՐՑ. Նա ի՞նչ ասաց:
ՊԱՏԱՍԽԱՆ. Նա ասում էր՝ «Թուրքիայում ապահովություն չկա, ատրճանակը միակ բանն է որին վստահում եմ»:

Դատախազ Ռիկատսոն Հաթը խաչաձև հարցաքննեց վկային.

ՀԱՐՑ. Կովկասում ապրած ժամանակ պաշտպանյալը ինչո՞վ էր ապրում: Որևէ օժանդակություն ստանո՞ւմ էր:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ, նա իր աշխատանքով էր ապրում:
ՀԱՐՑ. Նա ի՞նչ էր անում կաթնամթերքների խանութում:
ՊԱՏԱՍԽԱՆ. Մենք նստում և գրուցում էինք:
ՀԱՐՑ. Կինը իր հե՞տ էր:
ՊԱՏԱՍԽԱՆ. Իր կինը և երեխաները գնացել էին հինգ կամ վեց ամիս առաջ:
ՀԱՐՑ. Պաշտպանյալը երբևիցե վկային ասե՞լ է, որ ուզում է վրեժ լուծել:
ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ, երբեք:
ՀԱՐՑ. Եթե պաշտպանյալը բարեպաշտ է, ինչո՞ւ է զենք կրում: Ինչպե՞ս կարող է Աստծո պաշտամունքը համապատասխանեցվել զենք կրելու հետ:
ՊԱՏԱՍԽԱՆ. Նա ասում էր, որ զենք է կրում միմիայն ինքն իրեն պաշտպանելու համար:
ՀԱՐՑ. Նրան հարցրե՞լ ես, ինչպե՞ս է հայթայթել զենքը:
ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ:
ՀԱՐՑ. Դու չգիտե՞ս, որ համաձայն գեներալ Հարինգտոնի հրամանի, զենք կրելու համար մահապատիժ է հասնում:
ՊԱՏԱՍԽԱՆ. Ես շատ զբաղված եմ իմ գործով: Ես նման բաներ չեմ հասկանում:

Դատախազն ավարտեց հարցաքննությունը: Հետո Հայդար Ռիֆատ բեյը տվեց հետևյալ հարցերը.

ՀԱՐՑ. Պաշտպանյալին ո՞ւմ հետ է տեսել տնից դուրս:
ՊԱՏԱՍԽԱՆ. Տնից դուրս ես նրան ոչ մեկի հետ չեմ տեսել:
ՀԱՐՑ. Ամռան օրերին նա իր ընկերների հետ դուրս եկե՞լ է:
ՊԱՏԱՍԽԱՆ. Ես չգիտեմ:
ՀԱՐՑ. Նա հարևաններից որևէ մեկի հետ դուրս եկե՞լ է:
ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ:
ՀԱՐՑ. Համաձայն ապահովության կանոնների, երբ մեկը սկսում է բնակվել մի թաղամասում, նա պետք է գրանցվի ոստիկանության տեղական գրասենյակում: Պաշտպանյալը գրանցվե՞լ է:
ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ:
ՀԱՐՑ. Գրանցումը պահանջվում է Միացյալ զինվորական ոստիկանության և Օսմանյան ոստիկանության կանոնների հիման վրա: Պաշտպանյալը ինչո՞ւ չի գրանցվել:
ՊԱՏԱՍԽԱՆ. Իմ տանը ապրողներին ես համարում եմ իմ հյուրը և իմ ընտանիքի անդամը:
ՀԱՐՑ. Թաղամասի խանութպանները, օրինակ՝ ծխախոտի խանութները և նպարավաճառները, պաշտպանյալին ճանաչո՞ւմ էին:
ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ:
ՀԱՐՑ. Պաշտպանյալը, հավանաբար, վկային ասած կլինի, որ իր ընտանիքը Բաքու է ուղարկել, որովհետև վտանգ էր զգում թուրք զինվորական ուժերի կողմից Կովկասը գրավվելուց հետո: Բանակը, որ գալիս էր, իր սեփական կառավարության բանակն էր: Նա այս բանը բացատրե՞ց: Ի՞նչ վտանգ էր նա սպասում և ինչի՞ց էր վախեցած:
ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, նա վախեցած էր, որ թրքական բանակը կոտորածներ կսկսի:
ՀԱՐՑ. Հայկական բանակը, որին պաշտպանյալը միացավ, ո՞ւմ դեմ կռվեց:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես չգիտեմ:
ՀԱՐՑ. **Վկան երբևիցե վկայություն տվե՞լ է Օսմանյան դատարանում:**
ՊԱՏԱՍԽԱՆ. Երբեք:
ՀԱՐՑ. **Օսմանյան ռազմական դատարաններում թուրքերի դեմ վկայություն տվե՞լ է:**
ՊԱՏԱՍԽԱՆ. Երբեք:
ՀԱՐՑ. **Վկան որտե՞ղ է եղել Համաշխարհային պատերազմի ընթացքում:**
ՊԱՏԱՍԽԱՆ. Ստամբուլում:
ՀԱՐՑ. **Առավոտյան ժամը քանիսի՞ն է գնում գործի և ե՞րբ է վերադառնում:**
ՊԱՏԱՍԽԱՆ. Առավոտյան գործի եմ գնում 8:30-ին և վերադառնում եմ երեկոյան:
ՀԱՐՑ. **Թող տա իր խանութի հասցեն:**
ՊԱՏԱՍԽԱՆ. Գրանդ բազար, Աղա Բուլվար, թիվ 5:

ՔՍԱՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՎԿԱ

Դոկտոր Կարապետ Աղաջանյանը, պատասխանելով Խոսրովյան էֆենդիի հարցերին ասաց, որ բժիշկ է, սովորել է Պետերբուրգի և Դոնի համալսարաններում, քննել է Թոռլաքյանին:

Հետո պատասխանեց Խոսրովյան էֆենդիի հարցերին.

ՀԱՐՑ. **Դու ի՞նչ նկատեցիր պաշտպանյալի մտավոր և հոգեբանական վիճակի մեջ:**
ՊԱՏԱՍԽԱՆ. Նախ ես փորձեցի գտնել, թե ախտանիշներ կայի՞ն կապված իր ուշագնացության հետ: Գտա, որ այս մարդը երբեմն կորցնում է գիտակցությունը: Արդյունքը դրսևորվեց հետևյալ ձևով. ես ուսումնասիրեցի իր ռեֆլեքսները: Դրանք գրգռված վիճակում էին: Իր նյարդերի վիճակը նույնպես վատ էր: Քննելով իր ներվերը, գտա որ նա պարատոնիկ է:

Նախագահող դատավորը.

ՀԱՐՑ. **Բացատրեցեք «պարատոնիկ» բառի իմաստը:**
ՊԱՏԱՍԽԱՆ. Դա նշանակում է կորցնել նյարդային համակարգի վերահսկումը և տատանումները: Նման վիճակները մնայուն չեն: Դրանք գալիս ու գնում են: Նման ախտանիշների առկայությունը ասում է այն մասին, որ նյարդային համակարգը առողջական լավ վիճակում չէ: Դա նաև նշանակում է, որ ուղեղի մեջ անբավարար է արյան շրջանառությունը: Այդ վիճակում ուղեղը չի կարող կատարել իր գործունեությունը: Հենվելով այդ ախտանիշների վրա, ես եզրակացրի, որ պաշտպանյալը կորցնում է իր գիտակցությունը:
ՀԱՐՑ. **Ի՞նչ ես հասկանում «կորցնել գիտակցությունը» ասելով. Ուզում ես ասել մարո՞ւմ է, թե՞ չի գիտակցում ինչ է անում:**
ՊԱՏԱՍԽԱՆ. Կարող են պատահել երկուսն էլ: Ես ինձ առաջին հերթին հարց տվեցի. այս մարդը գիտակցությունը պարբերաբա՞ր է կորցնում: Պարզեցի որ, այո: Երկրորդ, եկա այն եզրակացության, որ իր նյարդերի հավասարակշռությունը խանգարված է: Նման մարդիկ միշտ զգացմունքային են: Նրանց գործողությունները զգացմունքներով են առաջնորդվում: Դրանց մենք անվանում ենք «պաթոլոգիապես զգացմունքային հիվանդներ»: Հիվանդների մտավոր աշխուժությունը թուլացած է: Պաշտպանյալը այս վիճակի մեջ է ամեն մի տվյալ պահին:

Նախագահող դատավորը.

ՀԱՐՑ. **Այս հիվանդությունը անուն ունի՞:**
ՊԱՏԱՍԽԱՆ. Այն կոչվում է «պաթոլոգիական զգացմունքայնություն»:

Խոսրովյան էֆենդի.

ՀԱՐՑ. **Համաձայն ավելի վաղ վկաների տված ցուցմունքների, պաշտպանյալի մեծ հայրը հիվանդ է եղել: Մայրը բնությունից թույլ է եղել: Իր ընտանիքի անդամները սպանվել են: Նա նույնպես նման հիվանդություններ է ունեցել: Կարո՞ղ է նման մի մարդ գիտակցել իր գործողությունների էությունը:**
ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ:

Խոսրովյան էֆենդին վերադարձավ իր տեղը: Դատախազ Ռիկատսոն Հաթը վկային տվեց հետևյալ հարցերը.

ՀԱՐՑ. **Ինչքա՞ն ժամանակ ես եղել Ստամբուլում:**
ՊԱՏԱՍԽԱՆ. Յոթ շաբաթ:
ՀԱՐՑ. **Նախկինում այստեղ ապրե՞լ ես:**
ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ:
ՀԱՐՑ. **Կովկասում երբևէ եղե՞լ ես:**
ՊԱՏԱՍԽԱՆ. Ես ծնվել եմ Թիֆլիսում, բայց կյանքս անցկացրել եմ Ֆրանսիայում, Գերմանիայում և Ռուսաստանում:
ՀԱՐՑ. **Նա դիպլոմավո՞ր մասնագետ է, թե՞ ինքնուս:**
ՊԱՏԱՍԽԱՆ. Ես Վարշավայի համալսարանի մտավոր հիվանդությունների պրոֆեսոր եմ: Նաև գրքեր ունեմ հրատարակված:
ՀԱՐՑ. **Դու վերջին անգամ ե՞րբ տեսար պաշտպանյալին:**
ՊԱՏԱՍԽԱՆ. Ես նրան միայն մեկ անգամ եմ տեսել, մեկ ամիս առաջ:
ՀԱՐՑ. **Պաշտպանյալին միայն մեկ անգամ տեսած լինելով, նրա մասին նախկինից որևէ բան չիմանալով, կարո՞ղ է նա որպես մասնագետ դատարանին կարծիք հայտնել պաշտպանյալի մտավոր, ֆիզիկական և նյարդային վիճակի մասին:**
ՊԱՏԱՍԽԱՆ. Ես առարկայական նշանները տեսա: Առաջին քննության ժամանակ ամեն ինչ հայտնաբերեցի:
ՀԱՐՑ. **Դա կարող էր լինել մի ոճիրի հետևանք: Այդ նշանները չե՞ն կարող փոխվել իբրև հետևանք:**
ՊԱՏԱՍԽԱՆ. Առարկայական նշանները չեն փոխվում:
ՀԱՐՑ. **Դա նշանակում է, որ պաշտպանյալը կարող է հիմա վեր կենալ և մեկ ուրիշին սպանել: Այն օրը, երբ պաշտպանյալին քննեցիր, նա այդ ախտանիշները ունե՞ր:**
ՊԱՏԱՍԽԱՆ. Այո:
ՀԱՐՑ. **Մարդու մտավոր վիճա՞կն է, որ ոճիր գործելու պատճառ է դառ-**

նում, թե՞ զգայախաբությունն է, որ առաջանում է մի քանի րոպեով, ապա չքանում:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այն կարող է տևել մի քանի րոպե, կամ ամիսներ:

ՀԱՐՑ. **Ձեր կատարած միակ քննությունից հետո դուք եկաք այն եզրակացության, որ պաշտպանյալի մոտ ոճիր գործելու միտքը ծագեց նույն պահի՞ն, թե՞ մշտապես կար:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Թվում է, որ նա այդպիսին է եղել ամբողջ կյանքի ընթացքում: Որոշ նշաններ նա կարող է ժառանգած լինել:

ՀԱՐՑ. **Դա նշանակում է, որ պաշտպանյալի գործած ոճիրը կանխամտածված չէր, այլ թելադրված է պահի ազդեցությամբ: Ի՞նչ եք կարծում:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Շատ հնարավոր է:

ՀԱՐՑ. **Կարո՞ղ է մեկը, որը տառապում է պաթոլոգիական զգացմունքայնությամբ, վայրկյանապես որոշել, թե ում է ուզում սպանել:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Անկասկած:

ՀԱՐՑ. **Ուրեմն, պաշտպանյալը իր ապագա զոհին շատ օրեր առաջ չէր նախատեսել:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես ոչինչ չեմ կարող ասել պաշտպանյալի մտադրության մասին: Այսուհանդերձ, այս հիվանդությամբ տառապողները ամեն ինչ անում են պահի ազդեցության տակ:

ՀԱՐՑ. **Կատարված քննությունից ելնելով, ի՞նչ ես կարծում, պաշտպանյալը ե՞րբ էր ունեցել իր վերջին նոպան:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Դժվար է ասել:

ՀԱՐՑ. **Եթե պաշտպանյալը մի քանի անգամ տեսել է իր ապագա զոհին, եթե նա ատրճանակ է հայթայթել (այլ կերպ ասած՝ հանգամանքներ, որոնք բացահայտում են իր մտադրությունը) սրանք համապատասխանո՞ւմ են հիվանդության ախտանիշներին:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես այդ հարցին չեմ կարող պատասխանել:

ՀԱՐՑ. **Պաշտպանյալի քննության հիման վրա կարելի՞ է եզրակացնել, որ նա ի վիճակի էր իր ապրուստը հայթայթել:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Նա ի վիճակի է աշխատել և իր ապրուստը հայթայթել: Այդպիսի անհատները կարող են նորմալ ապրել, եթե նրանց պաթոլոգիական զգացմունքները գրգռող դեպքեր տեղի չունենան:

ՀԱՐՑ. **Դու այն եզրակացության եկա՞ր, որ պաշտպանյալը կարող էր ամուսնանալ և երեխաներ ունենալ:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո:

ՀԱՐՑ. **Պաշտպանյալի վիճակը կարո՞ղ էր իր երեխաներին փոխանցվել:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Կարող էր:

ՀԱՐՑ. **Պաշտպանյալի համար հնարավո՞ր էր բանակում ծառայելը:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այս հիվանդությամբ տառապող անհատները ազատված են բանակային ծառայությունից:

ՀԱՐՑ. **Նա գիտի՞, որ պաշտպանյալը ծառայել է բանակում:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես այստեղ իմացա այդ մասին:

ՀԱՐՑ. **Չէ՞ր կարող պաշտպանյալի հիվանդությունը արդյունք լինել վեներական հիվանդությունների, կամ չափից դուրս խմելուն:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Դա հնարավոր է:

ՀԱՐՑ. **Օրինակ՝ մեկը, որ իր կնոջը տեսել է մի ուրիշ մարդու հետ, կամ գիտե, որ մեկը սպանել է իր հորը կամ իր ընտանիքի մի ուրիշ անդամի, կարող**

է ոճիր գործել իմպուլսիվ զգացումներով: Ինչո՞վ է նման մարդը տարբերվում ուրիշ ոճրագործներից:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ընդհանրապես, նորմալ մարդը ենթակա է սովորական զգացմունքների; Բայց պաշտպանյալի նման հիվանդները ենթակա են պաթոլոգիական զգացմունքների:

Նախագահող դատավորը.

ՀԱՐՑ. **Ի՞նչ ես հասկանում «խիղճ» ասելով:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Խիղճը վատ-լավ տարբերելու կարողությունն է: Ըստ որում, մարդասպանություն գործելիս հիվանդի հիշողությունը թուլանում է:

Դատախազը ավարտեց հարցաքննությունը: Հետո Հայդար Ռիֆատ բեյը վկային տվեց հետևյալ հարցերը.

ՀԱՐՑ. **Ո՞րն է քո ծննդյան թիվը:**

ՊԱՏԱՍԽԱՆ. 1876

ՀԱՐՑ. **Մտավոր հիվանդությունների վերաբերյալ հրատարակված աշխատանքներ ունե՞ս:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այս նյութի շուրջ ես ունեմ 35 հրատարակված աշխատանք: Դրանցից մեկը անգլերենի թարգմանվեց 1918-ին: Այն վերաբերում էր «Լեթարգիային»:

ՀԱՐՑ. **Ե՞րբ ես դասավանդել Վարշավայի համալսարանում:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես Վարշավայի համալսարանի պրոֆեսոր էի մինչև գերմանացիների կողմից գրավումը 1915-ին:

ՀԱՐՑ. **Ո՞վ էր այն ժամանակ *(համալսարանի նախագահը):***

ՊԱՏԱՍԽԱՆ. Նախագահը Վետկով անունով մի ռուս էր, որովհետև դա ռուսական համալսարան էր: 1915-ին համալսարանը տեղափոխվեց Դոնի Ռոստով:

ՀԱՐՑ. **Վկան հիվանդին քննել է մեկ անգամ: Ինչքա՞ն ժամանակ է եղել հիվանդի հետ:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Կես ժամ:

ՔՍԱՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՎԿԱ

Աննա Գրիգորևնա Հաչգոբուսովը երդվեց և ասաց.

-Ծնվել եմ Դոնի Նախիջևանում: Հայ եմ: Մեղադրյալին ճանաչում եմ: Նա աշխատում էր ամուսնուս մոտ 1918–ի վերջերից: Ամուսինս լավ ճանաչված, ծխախոտի մեծ վաճառական է Սուխումում: Նա բիզնես ուներ տարբեր մարդկանց ու քաղաքների հետ և մեծ քանակությամբ դրամ էր ուղարկում տարբեր տեղեր՝ Թիֆլիս, Բաթում և Սուխում: Մեղադրյալը ամուսնուս համար շատ մեծ գումարներ էր տեղափոխում: Նա ամուսնուս թողեց 1920–ի հունիսին: Ամուսինս տեղափոխվեց Ղրիմ և այլևս մեղադրյալին պահել չէր կարող: Ղրիմի էվակուացիայի ժամանակ ես Ստամբուլ եկա դեկտեմբերի վերջին: Ստամբուլում մեղադրյալը ինձ այցելում էր շաբաթը մի քանի անգամ:

-Ես մեղադրյալի հետ խոսում էի հայերեն: Սկզբում ամեն ինչ լավ էր: Հետո նա տարօրինակ թվաց, մելամաղձոտ և ցրված: Մենք այլևս տեղափոխելու համար նրան դրամ չտվեցինք:

ՔՍԱՆՎԵՑԵՐՈՐԴ ՎԿԱ

Երդվելուց հետո, դոկտոր Վասիլիոս Քոնոսը, ի պատասխան պաշտպան փաստաբան Խոսրովյան էֆենդիի հարցերի ասաց, որ նա Օսմանյան պետության քաղաքացի է, որ բնակվում է Բեյօղլու, Քյուլօղլու փողոցում, որ նա մտավոր և նյարդային խանգարումների մասնագետ է, որ մի անգամ քննել է պաշտպանյալին Քրոքրոս Հոթել բանտում.

Հետո նա պատասխանեց Խոսրովյան էֆենդիի հարցերին.

ՀԱՐՑ. Ի՞նչ կարծիք կազմեցիր պաշտպանյալի առողջական վիճակի մասին:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես քննեցի իրեն և իր ամբողջ ներվային սիստեմը խանգարված գտա: Նա նաև որոշ մտավոր տկարություն ուներ:

ՀԱՐՑ. Ընդհանուր առմամբ ինչպե՞ս գտար իրեն:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես եզրակացրի, որ իր բոլոր ներվերը խառնաշփոթ պայմաններում են և աննորմալ վիճակում, որ նա իր իմացական, կամ կամային կարողությունների համար պատասխանատու չէ: Նրա արյունատար անոթները նույնպես հիվանդագին էին: Այդ ախտանիշը տանում է դեպի մարդու մոտ պատասխանատվության զգացման լրիվ չեզոքացում: Թեև բոլոր ներվերը անջատված են արյունից, այնուամենայնիվ, նրանք փոխադարձաբար միմյանց վրա ազդում են: Այդ իսկ պատճառով հիվանդի մտավոր կարողությունները խախտվում են և լրիվ կորչում է նրա դատողություններ անելու կարողությունը: Այդ պատճառով պաշտպանյալը կարող է համարվել մի անձնավորություն, որի ֆիզիկական և մտավոր կարողությունները վնասված են:

ՀԱՐՑ. Ես հիմա որոշ հարցեր պիտի տամ և դու պետք է պատասխանես դրանց: Այս փաստերը վկաների կողմից արձանագրված էին: Դատարանը պիտի որոշի դրանց էությունը: Համենայն դեպս, մենք քեզ պիտի խնդրենք այս փաստերը գնահատես որպես բժիշկ: Վկաներն ասացին, որ պաշտպանյալի հայրը առողջ մարդ չէր: Պաշտպանյալի հայրը տառապում էր ճնշվածությամբ: Մայրը և եղբայրը տառապում էին հիպոքոնդրիայով: Այն տանը, որտեղ պաշտպանյալը մնում էր, երեք անգամ ուշագնաց է եղել և բերանին փրփուրներ են առաջացել: Նա փակվում էր իր սենյակում և ընկճված կյանք էր վարում: Տանտերը նրա անկողինը հավաքելիս, բարձը թաց էր գտնում: Պաշտպանյալի հայրը, քույրը, կինը և երկու զավակները սպանվել են: Այս պատճառներով պաշտպանյալը անկարող էր հասկանալու իր արարքները: Բժշկական տեսակետից ի՞նչ կարող եք ասել պաշտպանյալին վերաբերող այդ հանգամանքների մասին:

ՊԱՏԱՍԽԱՆ. Թույլ տվեք ամենից առաջ դատարանին ասել, որ վկաների կողմից նկարագրված նման մի անձնավորություն ի վիճակի չէ վերահսկելու իր գործողությունները: Եթե ինչ որ ասացին վկաները ճիշտ է, ապա նրանք ավելին են տեսել, քան ես: Համենայն դեպս, որոշակի ոչ մեկ բան չեմ կարող ասել առանց պաշտպանյալին նոպայի ժամանակ քննելու: Չեմ կարող հանրագումարի բերող մի կարծիք տալ: Երբ ես նրան քննում էի, չգիտեի, որ այդպիսի փորձություններ է ապրել: Մի մարդ, որը նման հիվանդություններով է տառապում, չի կարող վերահսկել իր զգացումները: Նա կորցնում է պատասխանատվության զգացումը, չի կարող տարբերել սխալն ու ճիշտը:

ՀԱՐՑ. Եթե ընդունենք, որ վկաների ցուցմունքները ճիշտ են, մարդասպանությունը կատարելու ժամանակ պաշտպանյալը կարո՞ղ էր գիտակցել, թե ինքն ինչ է անում է, ճի՞շտ է, թե՞ սխալ: Նաև, բժիշկ, նկատի ունեցեք, որ պաշտպանյալի հայրը, մայրը, զավակները և կինը սպանվել էին: Պաշտպանյալը իր առջև տեսնում է իր ծնողների մարդասպանին և սպանում է նրան: Բժշկական տեսանկյունից, կարո՞ղ է նման մի անձնավորություն պատասխանատու համարվել իր գործողությունների հետևանքների համար: Կարո՞ղ է նա գիտակցել իր արածի էությունը:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես ասացի, որ պաշտպանյալը մի անհավասարակշռված անձնավորություն է, խառնաշփոթ հոգեկանով: Հետևաբար, նա չի կարող վերահսկել իր խիղճը, կամ գիտակցել. իր գործողությունները ճի՞շտ են, թե՞ սխալ: Այդ պատճառով նա չի կարող ժամանակ ունենալ վերլուծելու իր գործողությունների բնական հետևանքները: Ծայր աստիճան զգացմունքային լինելու պատճառով, նրանք գործում են պոռթկումի ձևով: Օրինակ, եթե հիվանդին հիմա քննենք, նա կարող է հանդարտ փուլում լինել և չհավանի իր *(արածը)*: Այուս կողմից շատ հավանական է, որ էպիլեպտիկ նոպայի ժամանակ անձը կարող է գործել գազանային բնազդի ազդեցության տակ:

ՀԱՐՑ. Ձեր ցուցմունքից կարո՞ղ ենք եզրակացնել, որ պաշտպանյալը իր գործողության ժամանակ չէր կարող տարբերել ճիշտը սխալից:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո:

Խոսրովյան էֆենդին ավարտեց հարցաքննությունը: Հետո դատախազ Ռիկատսոն Հաթը վկային տվեց հետևյալ հարցերը.

ՀԱՐՑ. Պաշտպանյալին որտե՞ղ քննեցիք:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես նրան բանտում քննեցի:

ՀԱՐՑ. Քննության ժամանակ ո՞վ էր ներկա:

ՊԱՏԱՍԽԱՆ. Մի անձնավորություն Բարսամյան անունով և մի բժիշկ Աղաջանյան անունով: Մեկ ուրիշն էլ կար, բայց ես նրա անունը չգիտեմ: Մինչև քննությունը կատարելս Դոկտոր Թորգոմյանն ինձ համառոտակի տեղեկացրեց պաշտպանյալի մասին:

ՀԱՐՑ. Իր առողջությա՞ն, թե՞ իր ունեցած փորձությունների մասին:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես ոչինչ չգիտեի: Ես այդ բոլորի մասին իմացա դատարանում:

Նախագահող դատավորը.

ՀԱՐՑ. Վկան ի՞նչ իմացավ Թորգոմյանից:

ՊԱՏԱՍԽԱՆ. Թորգոմյանն ինձ խնդրեց գնալ և պաշտպանյալին քննել՝ նրա առողջական վիճակը պարզելու համար: Նա ինձ նաև ասաց, որ այս մարդը սպանել է մեկին:

Դատախազը՝

ՀԱՐՑ. Վկան ասաց, որ պաշտպանյալին քննելիս ինքը եղել է Դոկտոր Աղաջանյանի հետ: Նա նույն ախտանիշնե՞րն է հայտնաբերել, ինչ Աղաջանյանը: Նա հաստատո՞ւմ է *(Աղաջանյանի)* ներկայացրած զեկուցագիրը:

ՊԱՏԱՍԽԱՆ. Մեր քննության արդյունքում ես եկա ճիշտ այն նույն եզրակացությանը, ինչ Աղաջանյանը:

ՀԱՐՑ. Վկան ասաց, թե նա աշխատանքներ է կատարել մտքի և հիշողության վերաբերյալ: Նա իրավական բժշկության վերաբերյալ ուսումնասիրություններ կատարե՞լ է:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, ես իրավական բժշկության վերաբերյալ փորձառություն եմ անցել մասնավոր հրահանգչի՝ պրն. Էռնեստ դյու Փրեի մոտ:

ՀԱՐՑ. Վկան պաշտպանյալի մոտ վեներական խախտումների նշաններ նկատե՞լ է:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ:

ՀԱՐՑ. Հնարավո՞ր է, որ շատ տարիներ առաջ պաշտպանյալի ունեցած վեներական խախտումները իրենց հետքը թողած լինեն:

ՊԱՏԱՍԽԱՆ. Դա հնարավոր չէ: Մարդ կարող է վեներական հիվանդություն ունեցած լինել: Ոչինչ չի կարելի ասել առանց արյան քննությունների: Ես որևէ նշան չտեսա, բայց չեմ կարող ասել, թե նա վեներական ախտանիշներից զերծ է:

ՀԱՐՑ. Ես կրկնում եմ իմ հարցը. հնարավո՞ր է տեսնել շատ տարիներ առաջ իր ունեցած սիֆիլիսի հետևանքները:

ՊԱՏԱՍԽԱՆ. Եթե մի մարդ սիֆիլիս, կամ այլ վեներական հիվանդություն ունեցած լինի, այն կարող էր ուղեղի կամ սրտի վրա ազդել:

ՀԱՐՑ. Հնարավո՞ր է, որ նախկինում սիֆիլիսով տառապած մարդը գործի այնպես, ինչպես պաշտպանյալը:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այն խախտումները, որ ես հայտնաբերեցի պաշտպանյալի մոտ, ոչ մի ընդհանուր բան չունեն սիֆիլիսի հետ:

ՀԱՐՑ. Քո քննության վերջում ի՞նչ եզրակացության եկար, պաշտպանյալը կարո՞ղ էր աշխատել ու իր ապրուստը հայթայթել, թե՞ անկարող էր:

ՊԱՏԱՍԽԱՆ. Նա կարող է աշխատել, բայց այն մարդիկ, որոնք իր հետ աշխատում են, պետք է իրեն լավ վերաբերվեն: Եթե նա ներվային ևս մեկ ցնցում ունենա, այլևս աշխատել չի կարողանա:

ՀԱՐՑ. Պաշտպանյալը ամուսնանալ և երեխաներ ունենալ կարո՞ղ է:

ՊԱՏԱՍԽԱՆ. Նա կարող է երեխաներ ունենալ, բայց կարող է նրանք ժառանգեն իրենց հոր նյարդային խախտումները:

ՀԱՐՑ. Պաշտպանյալի առողջական վիճակը կարո՞ղ էր վերջին տասը տարիներին արգելք լինել բանակում ծառայելու:

ՊԱՏԱՍԽԱՆ. Նա պատրաստված չէ բանակի համար: Նա կարողություն չունի և պետք է հեռու պահվի բանակային ծառայությունից:

ՀԱՐՑ. Պաշտպանյալի այդ վիճակը լինում է տարերայնորե՞ն, թե՞ երբ տեսնում է մեկին: Ի՞նչ է մտածում բժիշկը այս մասին:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այն չէր կատարվի սովորական պայմաններում, բայց կարող է տեղի ունենալ այնպիսի արտակարգ պայմաններում, որոնք իր ներվերի վրա ազդող են:

ՀԱՐՑ. Համաձայն վկայի ցուցմունքի, պաշտպանյալը կարող է անել որևէ բան, երբ նա ջղային վիճակում է, կամ երբ ներվերը խանգարված են: Այդպե՞ս է:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո:

ՀԱՐՑ. Եթե պաշտպանյալը գործում է տարերայնորեն, զգացումներից ելնելով, ապա դոկտորը ինչպե՞ս կարող է բացատրել այն, որ պաշտպանյալը ոճիրը պլանավորել էր շաբաթներով, հետապնդել է իր զոհին, ատրճանակ է գնել, ընդհանուր առմամբ նախապատրաստել է ոճիրը:

ՊԱՏԱՍԽԱՆ. Որոշ մարդիկ սպանելու ուժը ձեռք են բերում խմիչքի ազդեցության տակ: Ուրիշները, ինչպես պաշտպանյալը, պլանավորում են սպանության գործողությունը, բայց ուժ և համարձակություն չեն ունենում իրականացնելու այն: Բայց նրանք կարող են իրականացնել սպանությունը, երբ առաջնորդվում են տարերային զգացումներով այն ժամանակ, երբ հանդիպում են այն մարդուն, որին ուզում են սպանել:

ՀԱՐՑ. Մարդասպանություն կատարելու համար հիվանդ լինելը բացարձակապես անհրաժեշտ չէ: Իր կարողություններին լրիվ վերահսկող անձը նույնպես կարող է սպանել հանդիպող թշնամուն: Ձեր փորձառությունը դա չի՞ ասում:

ՊԱՏԱՍԽԱՆ. Նորմալ, ինչպես և իր գիտակցության վերահսկողությունը կորցրած մարդը, կարող է մարդասպանություն կատարել: Նորմալ մարդը երկար կմտածի այն ոճիրի մասին, որ ուզում է կատարել: Դրան հակառակ, աննորմալ մարդը կգործեր զայրույթի պահին, առանց մտածելու իր ոճիրի հետևանքների մասին:

ՀԱՐՑ. Որևէ մեկը, երբ ոճիր է գործում, դա անում է խելացնորության պահին, այնպես չէ՞:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ընդհանրապես, սպանության գործողություն կատարող անձը անցողիկ խելացնորության վիճակում է լինում: Բայց մտավոր հիվանդ անհատները, ինչպես այս դեպքում է, իրենց գործողության հետևանքների մասին չեն մտածում:

ՀԱՐՑ. Բժիշկն ասաց, որ. «Դժվար պիտի լիներ իմանալ ի՞նչն է ազդել պաշտպանյալին, առանց նրան քննելու ոճիրը կատարելու պահին»: Սա բոլոր բժիշկների՞ն է վերաբերում: Նա կարծում է, որ պաշտպանյալը էպիլեպտի՞կ է:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես չեմ կարծում, որ պաշտպանյալը էպիլեպտիկ է: Հույս ունեմ՝ ոչ: Եթե մի մարդասպան չի քննվում ոճիրը կատարելու պահին, ավելի ուշ հնարավոր չէ քննարկել, թե գործողության պահին էպիլեպտիկ նոպա ունե՞ր , թե՞ ոչ:

Ռիկատսոն Հաթը վերադարձավ իր տեղը: Խոսրովյան էֆենդին վկային հարցրեց՝

ՀԱՐՑ. Հիվանդի էպիլեպտիկ լինել-չլինելը որոշելու համար անհրաժե՞շտ է նոպան տեսնել:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո: Դա անհրաժեշտ է իրավական բժշկության նպատակով: Գործնականում մենք հիվանդներին բուժում ենք այն հիման վրա, ինչ ասում են նրա ընկերները և հարազատները: Դրան հակառակ, իրավական բժշկության նպատակով եզրակացության հանգելու և զեկուցագիր ստորագրելու համար հիվանդը պետք է բժշկական դիտարկումների մեջ լինի վեց ամիս:

ՀԱՐՑ. Բժիշկ, պատկերացրեք մի մարդ (ես նկատի չունեմ պաշտպանյալը), որը նախկինում երբեք հիվանդ չի եղել: Պատկերացրեք, որ իր ծնողնե-

րին սպանել են: Երբ նա հանդիպի այն մարդկանց սպանողին, որոնց հանդեպ խորն ակնածանք ունի, նա չի՞ կարող այնքան զայրանալ ու տխրել, որ նրան սպանել ուզենա:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես կարծում եմ, որ նորմալ մարդը պիտի չուզենա սպանել նույնիսկ այն մարդուն, որը սպանել է իր ընտանիքի անդամներին: Բայց հիվանդ և աննորմալ մարդը կարող է մեկ ուրիշի սպանել զգացումների և զայրույթի ազդեցության տակ:

Հետո Հայդար Ռիֆատ բեյը վկային տվեց հետևյալ հարցերը.

ՀԱՐՑ. **Որտե՞ղ ես սովորել:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Իմ բժշկական կրթությունը ստացել եմ Աթենքում, սակայն գործնականը ստացել եմ Փարիզում:

ՀԱՐՑ. **Թե՛ Օսմանյան կառավարությունը, թե՛ Միացյալ իշխանությունները պահանջում են, որ Ստամբուլում բժիշկները արձանագրվեն: Դոկտորը արձանագրվա՞ծ է: Եթե այո, ո՞րն է իր արձանագրության թիվը և որտե՞ղ է նա արձանագրված:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես արձանագրված եմ Առողջապահության տնօրինությունում: Իմ արձանագրության թիվը տանն է:

ՀԱՐՑ. **Որտե՞ղ էիր դու պատերազմի ժամանակ:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես Սիշլիի (Ստամբուլ) Խաղաղության հիվանդանոցում էի:

ՀԱՐՑ. **Ո՞վ է այդ ֆրանսիական հիվանդանոցի գլխավոր բժիշկը:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Պատերազմից առաջ դոկտոր Մոնսիեն և Կաստրոն էին գլխավոր բժիշկները: Հետո Մոնսիեն գնաց և Կաստրոն ու Ափոստոլիդիսը եղան գլխավոր բժիշկները: Ավելի ուշ, Ափոստոլիդիսը և ես ստանձնեցինք այդ դերը: Հետո նույն դիրքում մնացի ես և պատերազմի ժամանակ հիվանդանոցի վարչությունում աշխատեցի Մազհար Օսման բեյի հետ միասին:

ՀԱՐՑ. **Ե՞րբ է նա քննել հիվանդին:**

ՊԱՏԱՍԽԱՆ.. Ինչքան հիշում եմ, նրան քննեցի 31 օր առաջ:

ՀԱՐՑ. **Պե՞տք էր, որ հիվանդը պահվեր հետազոտման մեջ, որպեսզի դատարանի առաջ մեկնաբանություններ արվեր նման հիվանդությունների հնարավորության մասին:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես իմ որոշումը արեցի իմ սեփական կարծիքի հիման վրա: Երբ հիվանդին բանտում քննեցի, ես փաստեր տեսա, որոնք չեն կարող ջնջվել ժամանակի հետ միասին:

ՀԱՐՑ. **Առողջ մարդը կարո՞ղ է կեղծել հիվանդության ախտանշանները: Առողջ մարդը կարո՞ղ է կեղծել խելացնորության ախտանշանները:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Իմ տեսած ախտանիշերի հիման վրա ես եզրակացրի, որ դրանք իսկական են:

ՀԱՐՑ. **Երբ այս հիվանդությունը դրսևորվում է նոպաների ձևով, այն շարունակվո՞ւմ է որոշակի ժամանակի համար:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Անկարելի է ասել ինչքան այն կտևի:

ՀԱՐՑ. **Դոկտոր Աղաջանյանը Թիֆլիսի՞ց էր եկել:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես գիտեմ, որ նա ռուսաստանցի փախստական է, բայց չգիտեմ, թե որտեղից էր եկել:

ՀԱՐՑ. **Դոկտոր Աղաջանյանը նույն այն մա՞րդն է, որ Թիֆլիսում սպանեց Վրաստանի արդարադատության և ներքին գործերի նախարարներին:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես տեղյակ չեմ մարդասպանության այդ դեպքերին: Միայն գիտեմ, որ Աղաջանյանի պես մեկը այդպիսի բաներ չէր անի:

ՀԱՐՑ. **Նա պաշտպանյալին քանի՞ որոպե է քննել: Որևէ գործիք կամ նյութ օգտագործե՞լ է:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես քննությունը կատարել եմ այնպես, ինչպես պետք է աներ բժիշկը: Ես որևէ նյութի կամ գործիքի կարիքը չունեի:

ՔՍԱՆՅՈԹԵՐՈՐԴ ՎԿԱ

Դոկտոր Ջորջ Յանակին, երդում տալուց հետո, ի պատասխան պաշտպան փաստաբան Խոսրովյան էֆենդիի հարցերի ասաց, որ Հունաստանի քաղաքացի է, մտավոր և ներվային հիվանդությունների մասնագետ, որ Յեդիկուլե հիվանդանոցի ներվային և մտավոր հիվանդությունների բաժանմունքի գլխավոր բժիշկն է, և որ պաշտպանյալին առաջին անգամ տեսել է, երբ նրան քննել է նախորդ երեքշաբթի օրը, երեկոյան:

Հետո նա պատասխանեց Խոսրովյան էֆենդիի հարցերին.

ՀԱՐՑ. **Կարո՞ղ եք, խնդրեմ, նկարագրել պաշտպանյալի մոտ ձեր հայտնաբերած ախտանիշները:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես հրավիրվել էի պաշտպանյալին քննելու համար: Քննության ժամանակ ես նկատեցի, որ պաշտպանյալը զգայախաբության վիճակում է: Իմ կատարած անկողմնակալ քննությունը հանգեցրեց հետևյալ դիտարկումներին. նախ նկատեցի, որ իր մարմինը ձևախեղված էր. ականջները այլակերպված էին, մեջքին երկու սպիներ կային և մի քերծվածք կար քթին: Իրենից և մի պահակից իմացա, որ քթի քերծվածքը էպիլեպտիկ նոպայի ժամանակ ընկնելուց էր առաջացել: Պաշտպանյալի մատները դողում էին: Անկանոնություն կար ամեն ինչում: Ֆիզիկական հիվանդության ոչ մի նշան չկար: Նա շարունակ քրտնում էր, դեմքը շուտով կարմրում էր: Մարմնի վրա կարմիր նշաններ կային:

ՀԱՐՑ. **Ո՞րն էր քո եզրակացությունը:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես եզրակացրի, որ հիվանդը անհավասարակշռված է, էպիլեպտիկ և գերզգայուն:

ՀԱՐՑ. **Այս հիվանդությամբ տառապողները իրենց գիտակցությունը պարբերաբար կորցնո՞ւմ են:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Կախում ունի իրենց ունեցած գրգռվածության աստիճանից: Այսինքն, եթե գրգռվածության պատճառը ուժեղ է, նրանք կարող է կորցնեն իրենց գիտակցությունը:

Հետո Խոսրովյան էֆենդին կրկնեց իր հարցը, որը նա առաջադրում էր նախկին լսումների ժամանակ որպես վկա հանդես եկող բժիշկներին: Հարցը վերաբերում էր նրան, որ մի մարդ, որի ծնողները և հարազատները սպանվել են, որը շատ ողբերգություններ է ունեցել և որը հիվանդ է, կարո՞ղ էր գիտակցել, թե ի՞նչ է անում, և կարո՞ղ էր նա պատասխանատու լինել իր գործողությունների համար: Վկան այս հարցին պատասխանեց հետևյալ կերպ.

ՊԱՏԱՍԽԱՆ. Հիվանդը ոճիր կկատարի, որովհետև իր մտավոր հավասարակշռությունը մեծ մասամբ խանգարված է: Երբ մտավոր հավասարակշռությու-

նը խանգարված է, նա չի կարող իմանալ, թե ինչ է անում:

Հետո դատախազ Գրիբոնը, որը փոխարինում էր պրն. Ռիկատսոն Հաթին, վկային տվեց հետևյալ հարցերը.

ՀԱՐՑ. Ասվեց, որ փաստաբանները դոկտորին հրավիրեցին պաշտպանյալին քննելու համար: Ինչո՞ւ նա ավելի շուտ չէր հրավիրվել: Որևէ առանձնահատուկ բա՞ն էր տեղի ունեցել:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես հրավիրված էի քննելու պաշտպանյալի մտային ինչ-որ խանգարում:

ՀԱՐՑ. Պաշտպանյալի մոտ էպիլեպսիայի որևէ նշան նկատեցի՞ր:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ինձ այդ հարցը չէին տվել: Բայց իմ դիտարկումների համաձայն, էպիլեպսիան պաշտպանյալի կյանքում նշանակալի դեր խաղացած պիտի չլիներ:

ՀԱՐՑ. Այս գործի մասին որևէ բան գիտեի՞ր մինչև քննությունը:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այդ մասին կարդացի թերթերում: Ես շատ հետաքրքրված չէի:

ՀԱՐՑ. Բժիշկն ասաց, որ պաշտպանյալը գրգռվելու ընդունակություն չունի: Հետո ասաց, որ սա մտավոր անհավասարակշռության խնդիր է:

ՊԱՏԱՍԽԱՆ. Դրանցից մեկը կապ ունի ուղեղի հետ, մյուսը՝ ներվային սիստեմի:

ՀԱՐՑ. Ի՞նչ է տեղի ունենում, երբ պաշտպանյալի մտավոր հավասարակշռությունը խանգարվում է:

ՊԱՏԱՍԽԱՆ. Երբ որևէ պատճառով հավասարակշռությունը խանգարվում է, նա ընկնում է նոպայի մեջ:

ՀԱՐՑ. Ինչքա՞ն է տևում նոպան:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այն կարող է տևել շատ քիչ, ասենք մի քանի րոպե և կարող է տևել երկար, ասենք մի քանի ժամ:

ՀԱՐՑ. Կարո՞ղ ես մեզ մի քանի օրինակ բերել այդ մասին:

ՊԱՏԱՍԽԱՆ. Կանայք, մասնավորապես, հակված են նման գրգռումների: Սակայն սա առաջին անգամն է տեսնում եմ, որ նման հանգամանքները հասցնում են մարդասպանության:

Դատախազ Գրիբոնը ավարտեց հարցաքննությունը: Հետո Խոսրովյան էֆենդին վկային տվեց հետևյալ հարցերը.

ՀԱՐՑ. Հիվանդ կամ գրգռված վիճակում պաշտպանյալը կարո՞ղ էր կորցնել իր կամքի ուժը:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, կարող էր:

Դատախազը (դառնալով դեպի դատարանը) ասաց. «Մի ուրիշ բժիշկ կգա՞ վկայություն տալու».

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո:

ՀԱՐՑ. Պաշտպանյալը էպիլեպտի՞կ է:

ՊԱՏԱՍԽԱՆ. Հնարավոր է, բայց նա պետք է քննվի:

Վերջապես Հայդար Ռիֆատ բեյը վկային տվեց հետևյալ հարցերը.

ՀԱՐՑ. Բժիշկը լսեց պաշտպանյալի դեմ մարդասպանության մեղադրանքները: Ենթադրենք, որ դրանք ճիշտ են: Գիտականորեն հնարավո՞ր է խոսել այն մասին, թե պաշտպանյալը պատասխանատու է այս ոճիրի համար, հենվելով այն քննությունների արդյունքների վրա, որոնք կատարվել են դեպքից 60 օր առաջ:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես վկային քննել եմ:

ՀԱՐՑ. Երբ մեկնաբանում էիր մտավոր անհավասարակշռությունը, դու ասացիր, որ «կախում ունի աստիճանից»: Պատասխանատվությունը, կամ դրա բացակայությունը որոշելու չափանիշ գոյություն ունի՞:

ՊԱՏԱՍԽԱՆ. Անտարակույս, անհավասարակշռության տարբեր աստիճաններ կան, բայց որոշակի ոչինչ չի կարելի ասել:

ՔՍԱՆՈՒԹԵՐՈՐԴ ՎԿԱ

Քազիմ Նուրի Օսմանովիչը, մի բանտարկյալ, որը նույն բանտում էր, ինչ մարդասպան Թոռլաքյանը, երդվելուց հետո, ի պատասխան պաշտպան փաստաբան Խոսրովյան էֆենդիի հարցերի ասաց, որ ինքը 20 տարեկան է, որ աշխատել է որպես կոշկակար, և որ ինքը բանտում պաշտպանյալի հետ էր:

Հետո նա պատասխանեց պաշտպան փաստաբանի հարցերին.

ՊԱՏԱՍԽԱՆ. Շաբաթ գիշեր, եվրոպական ժամանակով ժամը 01:00-ին, երբ ամեն մարդ քնած էր, ես վեպ էի կարդում: Պաշտպանյալը վեր կացավ, քայլեց դեպի դուռը: Ես կարծեցի, որ զուգարան է գնում: Սակայն, մինչև դռանը հասնելը նա ուշագնաց եղավ և ընկավ: Իր քիթը քերծվեց և սկսեց արյունել: Բերանից սպիտակ փրփուր դուրս եկավ: Ես գոռացի «Միսակ, Միսակ», բայց նա չպատասխանեց: Այդ ժամանակ մեր բանտախցում գտնվողները նույնպես զարթնել էին: Նրանք ջուր բերեցին: (Պաշտպանյալը) իր գիտակցությունը վերագտավ հինգ, կամ վեց րոպե հետո: Ես ջրով շիշը վերցրի և լվացի երեսը: Ջրով շփեցի կուրծքը: Հետո տարա իր անկողինը: Նա գիշերը միշտ զգայախաբություն էր ունենում: Նախկինում նման երևույթներ տեսել էի, ուստի անհրաժեշտ չհամարեցի պահակին կանչել և ուրիշ որևէ մեկին ոչինչ չասացի:

ՀԱՐՑ. Քանի՞ հոգի կար բանտախցում:

ՊԱՏԱՍԽԱՆ. Հինգ հոգի:

ՀԱՐՑ. Երբվանի՞ց ես պաշտպանյալի հետ մնում նույն բանտախցում:

ՊԱՏԱՍԽԱՆ. Վերջին մեկ ու կես ամսվա ընթացքում:

ՀԱՐՑ. Պաշտպանյալը գիշերը լավ քնո՞ւմ էր:

ՊԱՏԱՍԽԱՆ. Գիշերը քնի մեջ խոսում էր և ես նրան արթնացնում էի:

Դատախազ Գրիբոնը վկային տվեց հետևյալ հարցերը.

ՀԱՐՑ. Դու ասացիր, որ պաշտպանյալի հետ նույն բանտախցում ես եղել վերջին մեկ ու կես ամսվա ընթացքում: Ինքդ երբվանի՞ց ես բանտում:

ՊԱՏԱՍԽԱՆ. Երկու տարի է, ինչ ես բանտում եմ: Սկզբում մի թրքական բանտում էի: Հետո փոխադրեցին ֆրանսիական բանտ, իսկ ավելի ուշ՝ բրիտանական բանտ:

ՀԱՐՑ. Ինչի՞ համար էիր ձերբակալվել:
ՊԱՏԱՍԽԱՆ. Մարդասպանության դեպքի կապակցությամբ:
ՀԱՐՑ. Դու պաշտպանյա՞լն էիր:
ՊԱՏԱՍԽԱՆ. Այո:
ՀԱՐՑ. Դատապարտվե՞լ ես:
ՊԱՏԱՍԽԱՆ. Դատապարտվել էի, բայց բրիտանացիներն ինձ ազատեցին:

Նախագահող դատավորը.

ՀԱՐՑ. Ո՞վ դատեց քեզ:
ՊԱՏԱՍԽԱՆ. Սկզբում մի թրքական դատարան:
ՀԱՐՑ. Քեզ հանցավոր ճանաչեցի՞ն:
ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ:
ՀԱՐՑ. Ինչո՞ւ չազատեցին:
ՊԱՏԱՍԽԱՆ. Դատարանը եզրակացության չհանգեց:

Դատախազը.

ՀԱՐՑ. Երկու տարի բանտում ես եղել նո՞ւյն մեղադրանքով:
ՊԱՏԱՍԽԱՆ. Այո:
ՀԱՐՑ. Երբվանի՞ց ես բրիտանական բանտում:
ՊԱՏԱՍԽԱՆ. Վերջին երեք ամիսներին:
ՀԱՐՑ. Պաշտպանյալին առաջին անգամ ե՞րբ հանդիպեցիր:
ՊԱՏԱՍԽԱՆ. Այն օրը, որ նա եկավ բանտ:
ՀԱՐՑ. Առաջ բանտում եղե՞լ ես:
ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ:
ՀԱՐՑ. Առաջ ձերբակալվե՞լ ես:
ՊԱՏԱՍԽԱՆ. Երբեք:
ՀԱՐՑ. Ձեր բանտախցիկի բանտարկյալները բոլորը մարդասպանությա՞ն մեղադրանքով են ձերբակալված:
ՊԱՏԱՍԽԱՆ.Կարծում եմ, որ նրանցից մեկը ձերբակալված է մարդասպանության մեղադրանքով, իսկ մյուսները մեղադրվում են զենք կրելու համար:
ՀԱՐՑ. Երբ պաշտպանյալը զարթնեց, աննորմալ որևէ բան նկատեցի՞ր:
ՊԱՏԱՍԽԱՆ. Ես միայն տեսա նրան վայր ընկնելիս:
ՀԱՐՑ. Նշանակում է, դու մինչև վայր ընկնելը նրան չես տեսել:
ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ, մութ էր:

Նախագահող դատավորը.

ՀԱՐՑ. Դու ինչպե՞ս կարող էիր մթին կարդալ:
ՊԱՏԱՍԽԱՆ. Մի պատուհան կար, որը բացվում էր միջանցքի վրա: Այդտեղից բավարար լույս էր գալիս:

Դատախազը՝

ՀԱՐՑ. Ուրեմն, դու կարողանում էիր կարդալ, իսկ պաշտպանյալին չէի՞ր կարողանում տեսնել:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես մտքերով տարված էի:
ՀԱՐՑ. Բանտի հատակը ի՞նչ նյութից է:
ՊԱՏԱՍԽԱՆ. Բետոն:
ՀԱՐՑ. Երբ պաշտպանյալը գետին ընկավ, գլուխը հատակին խփե՞ց:
ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, խփեց:
ՀԱՐՑ. Նա ուժե՞ղ խփեց:
ՊԱՏԱՍԽԱՆ. Բավական ուժեղ: Նա ձեռքերով որոշ շարժումներ արեց:
ՀԱՐՑ. Վկան ասաց, որ նախկինում նման իրավիճակներ տեսել է: Պաշտպանյալը նման վիճակո՞ւմ էր:
ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ:
ՀԱՐՑ. Անցյալում ուրիշ ի՞նչ էպիլեպտիկներ ես տեսել:
ՊԱՏԱՍԽԱՆ. Ես նրանց տեսել եմ այն ժամանակ, երբ իմ երկրում ծառայում էի բանակում:

Նախագահող դատավորը՝

ՀԱՐՑ. Քո զինվորական ծառայությունը որտե՞ղ ես անցկացրել:
ՊԱՏԱՍԽԱՆ. Գալիցիայում, Ավստրիական բանակում: Հետո, որպես թրքական բանակի մի մաս, ուղարկվեցի Արաբիա: Այնտեղ գերի ընկա բրիտանական բանակին:

Դատախազը՝

ՀԱՐՑ. Վկան հիշեց Բալկանյան պատերազմը: Ի՞նչ էր ուզում ասել:
ՊԱՏԱՍԽԱՆ. Բալկանյան պատերազմի ժամանակ Սերբիական բանակը գրավեց իմ երկիրը: Ավստրիական բանակը այն գրավեց համաշխարհային պատերազմի ժամանակ:
ՀԱՐՑ. Քանի՞ տարի առաջ:
ՊԱՏԱՍԽԱՆ. Շուրջ յոթ տարի առաջ:
ՀԱՐՑ. Այն ժամանակ քանի՞ տարեկան էիր:
ՊԱՏԱՍԽԱՆ. Տասներեք:
ՀԱՐՑ. Էպիլեպտիկ նոպա ունեցող զինվորներ որտե՞ղ տեսար:
ՊԱՏԱՍԽԱՆ. Սերբիական և թրքական բանակներում:
ՀԱՐՑ. Այն հաճա՞խ էր պատահում:
ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ, ոչ հաճախ:

Հետո Հայդար Ռիֆատ բեյը վկային տվեց հետևյալ հարցերը.

ՀԱՐՑ. Պաշտպանյալի հետ ընկերություն հաստատե՞լ էիր:
ՊԱՏԱՍԽԱՆ. Մենք ընկերներ չենք: Մենք պարզապես միասին ենք ապրում:
ՀԱՐՑ. Պաշտպանյալի հետ այս դատավարության մասին խոսե՞լ եք:
ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ, այս դատավարության մասին չենք խոսել: Մենք միայն գիտեինք, որ նա մեղադրվում է մարդասպանության մեջ:
ՀԱՐՑ. Քրոքըրս Հոթելի ձեր բանտախցում օճառ կա՞ր:
ՊԱՏԱՍԽԱՆ. Այո:
ՀԱՐՑ. Կարո՞ղ է մարդու բերանից փրփուր դուրս գալ՝ բերանում օճառ դնելով:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես կիմանայի հոտից: Ես կարող եմ իսկական փրփուրը տարբերել օճառի փրփուրից:

ՀԱՐՑ. Դու ասացիր, որ 20 տարեկան ես և որ յոթ տարի առաջ զինակոչվել ես ավստրիական, ապա օսմանյան բանակ: Ինչպե՞ս էր դա հնարավոր:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այն ժամանակ նրանք տարիքը շատ նկատի չէին ունենում: Նրանք զինակոչում էին որևէ մեկին, որը կարող էր ձի պահել, կամ խոհանոցում աշխատել:

ՀԱՐՑ. Առաջինը ո՞ր բանակը զինվորագրեց քեզ:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ավստրիական բանակը: Հետո ես ծառայեցի թրքական բանակի 19-րդ և 20-րդ գումարտակներում:

Հայդար Ռիֆատ բեյ՝

ՀԱՐՑ. Քո մարդասպանության գործի մեջ ո՞վ էր սպանվողը:

ՊԱՏԱՍԽԱՆ. Նիշանթաշիի Սպայս Բազարի Քեչեսիզադե Ահմետ բեյը: Թերթերն ինձ բնորոշեցին իբրև «ծառա, որն սպանեց իր տիրոջը»:

ՔՍԱՆԻՆՆԵՐՈՐԴ ՎԿԱ

Ալեքսանդր Միխայլովիչ (Չիրքին Փետրով), մի բոլշևիկ, Թոռլաքյանի բանտի համակեցող, մերժեց Աստվածաշնչի վրա երդում տալ, առարկելով, որ ինքը աթեիստ է: Այնպես որ, նա իր երդումը տվեց, ասելով. «Ես՝ Ալեքսանդր Միխայլովիչս, հաստատում եմ, որ պիտի ասեմ ճշմարտությունը, ամբողջ ճշմարտությունը և ոչինչ բացի ճշմարտությունից»:

Պատասխանելով պաշտպան փաստաբան Խոսրովյան էֆենդիի հարցերին, նա ասաց, որ ինքը Ռուսական Սովետական Հանրապետության քաղաքացի է, որ բանվորների և գյուղացիների բանակում ծառայել է որպես ուսուցիչ, որ ինքը 26 տարեկան է, որ վերջին երեք ամիսներին ձերբակալության տակ է եղել, որ ազգությամբ ռուս է, որ ձերբակալության մեջ է մի մարդասպանության գործի կապակցությամբ, և որ պաշտպանյալին առաջին անգամ բանտում է հանդիպել:

Հետո նա պատասխանեց Խոսրովյան էֆենդիի հարցերին.

ՀԱՐՑ. Դու որևէ բան գիտե՞ս պաշտպանյալի առողջական վիճակի մասին:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես տեսել եմ, որ նա գիշերները քնի մեջ խոսում է: Չորս օր առաջ տեսա, որ նա շատ հիվանդ է: Չեմ տեսել, թե ինչպես սկսվեց հիվանդությունը: Ես ձայնից զարթնեցի: Չհասկացա ինչ է տեղի ունենում: Պաշտպանյալին տեսա գետնին պառկած, իսկ ընկերները շփում էին դեմքը: Շրթունքների վրա փրփուր կար: Սա է այն ամենը, ինչ ես տեսա:

ՀԱՐՑ. Հաջորդ օրը այդ դեպքի մասին չէի՞ն խոսում:

ՊԱՏԱՍԽԱՆ. Հաջորդ օրը ես ոչինչ չտեսա: Ընկերներիս հարցրի, թե ինչ է պատահել: Նրանք չկարողացան բացատրել, որովհետև նրանցից ոչ մեկը ռուսերեն լավ չէր խոսում:

ՀԱՐՑ. Վկան հիշո՞ւմ է, որ անցյալում որևէ նման բան տեսած լինի:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո: Հայրս բժիշկ էր: Նա մտավոր հիվանդությունների մասնագետ էր: Նման դեպքեր ես շատ եմ տեսել:

ՀԱՐՑ. Որտե՞ղ և ե՞րբ:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես դրանք տեսել եմ հիվանդանոցում, որտեղ հայրս աշխատում էր 1914-ին:

Հետո դատախազը տվեց հետևյալ հարցերը.

ՀԱՐՑ. Ստամբուլում ի՞նչ էր քո զբաղմունքը:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես այստեղ ուղարկվել էի Ռուսաստանի Սովետական կառավարության կողմից:

ՀԱՐՑ. Ինչո՞ւ էիր ուղարկվել:

ՊԱՏԱՍԽԱՆ. Սովետական կառավարությունը ձեռք էր գցել մի նամակ, գրված մի ռուս գնդապետի կողմից, որը հակակառավարական գործողություններ էր կազմակերպում: Նամակն ուղարկված էր Ստամբուլում մի ռուս գեներալի: Կառավարությունն այդ նամակը տվեց ինձ, որպեսզի հասցնեմ այդ մարդուն: Այդ է իմ ձերբակալության պատճառը:

ՀԱՐՑ. Ստամբուլում ինչքա՞ն ժամանակ ես ազատ եղել մինչև ձերբակալությունդ:

ՊԱՏԱՍԽԱՆ. Տասը օր:

ՀԱՐՑ. Որտե՞ղ էիր ապրում:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես մնում էի Գալաթայում, 151 Չեսմե Սքուեր:

ՀԱՐՑ. Դու այդտե՞ղ ձերբակալվեցիր:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո:

ՀԱՐՑ. Ի՞նչ աշխատանք էիր անում և ինչպե՞ս էիր հայթայթում ապրուստդ:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես գնում էի տեսնելու ռուս գեներալին:

ՀԱՐՑ. Նա ասաց, որ գյուղատնտեսության ուսուցիչ է: Ի՞նչ էր նա սովորեցնում:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես բանակի սպաներին էի սովորեցնում:

ՀԱՐՑ. Ռուսաստանում ի՞նչ խնդիր ունեիր:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ինձ կասկածում էին որոշ քաղաքական ոճիրների կապակցությամբ, որովհետև նախկինում սպա եմ եղել: Հետո ես սովետական սպա դարձա:

ՀԱՐՑ. Որևէ դատարանի կողմից դատվե՞լ ես:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ինձ հարցաքննել են կալանվելուս երկրորդ օրը: Ուզեցին, որ մի զեկուցագիր գրեմ, ուստի գրեցի:

ՀԱՐՑ. Այդ նույն գործի կապակցությամբ ուրիշ որևէ մեկը ձերբակալվե՞լ է:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես չգիտեմ:

ՀԱՐՑ. Այն օրը, երբ պաշտպանյալի հետ այդ դեպքը տեղի ունեցավ, վկան վեր կացա՞վ իր անկողնուց:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ:

ՀԱՐՑ. Վկայի անկողինը ինչքա՞ն է հեռու պաշտպանյալի անկողնուց:

ՊԱՏԱՍԽԱՆ. Մոտավորապես յոթը ոտք:

ՀԱՐՑ. Սենյակում լույս կա՞ր:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, լույս կար, բայց չգիտեմ ինչ էր այդ: Ամեն դեպքում աչքերս տեսնում էին:

ՀԱՐՑ. Պաշտպանյալի դեմքը կարո՞ղ էիր տեսնել:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո:

ՀԱՐՑ. Ուրեմն, լույսը թույլ չէր:
ՊԱՏԱՍԽԱՆ. Ես չգիտեմ, լույսը սենյակի ներսի՞ց, թե՞ դրսից էր գալիս:
ՀԱՐՑ. Դու փրփուրը տեսա՞ր:
ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, տեսա:
ՀԱՐՑ. Դու հարցրեցի՞ր ինչ է դա:
ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ:
ՀԱՐՑ. Նա ասաց, որ հիվանդանոցներում նման դեպքեր տեսել է: Ի՞նչ է ուզում ասել:
ՊԱՏԱՍԽԱՆ. Տեսել եմ նույն դրությունը, այսինքն՝ մարդիկ մահանալիս:

Հայդար Ռիֆատ բեյը վկային տվեց հետևյալ հարցերը.

ՀԱՐՑ. Վկան ասաց, որ նա երկու ամիս եղել է պաշտպանյալի հետ: Սա առաջին անգա՞մն է, որ դա պատահել էր:
ՊԱՏԱՍԽԱՆ. Այո: Ես ուրիշ ոչ մի բան չեմ տեսել:
ՀԱՐՑ. Վկան ասաց, որ իր հայրը բժիշկ էր և ինքը նման դեպքեր տեսել էր: Կարո՞ղ է նա տարբերել կեղծ և իրական դեպքերը:
ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ, չեմ կարող:

ԵՐԵՍՈՒՆԵՐՈՐԴ ՎԿԱ

Քրոքըրս Հոթելի մեկ ուրիշ բանտարկյալ՝ Շուքրու Հուսեյնը, երդում տալուց հետո, ի պատասխան պաշտպան փաստաբան Խոսրովյան էֆենդիի հարցերի ասաց, որ 22 տարեկան է, զբաղմունքով թիավար, որ հարբածության պատճառով վերջին 12 օրերին կալանքի մեջ է, և որ անցյալ տարի ուրիշ 25 անձանց հետ բանտարկված է եղել ծովահենության մեղադրանքով: Հայտարարելով, որ ժամանել է Ռումելի Ֆեներիից, ասաց, որ Թոռլաքյանին միայն բանտում է տեսել:

Պատասխանելով մարդասպանի առողջական վիճակին վերաբերող մի հարցի, նա ասաց.
ՊԱՏԱՍԽԱՆ. Մի գիշեր, երբ քնած էի, մի ձայն լսեցի: Նայեցի և տեսա, որ պաշտպանյալի բերնից փրփուր է դուրս գալիս: Մեկը լվանում էր նրա երեսը: Հետո նա վերագտավ իր գիտակցությունը:
ՀԱՐՑ. Պաշտպանյալը իր գիտակցությունը կորցրե՞լ էր:
ՊԱՏԱՍԽԱՆ. Ես դա չգիտեմ, բայց նա չէր պատասխանում: Չգիտեմ նա իր գիտակցությունը կորցրե՞լ էր, թե՞ ոչ:
ՀԱՐՑ. Դու պաշտպանյալին դիպա՞ր, նրա մարմնի որևէ մասը շփեցի՞ր:
ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ:
ՀԱՐՑ. Նա գիշերը լա՞վ էր քնում:
ՊԱՏԱՍԽԱՆ. Ես լսում էի, որ նա գիշերը քնի մեջ խոսում էր:
ՀԱՐՑ. Դա կե՞ղծ էր, թե՞ իրական:
ՊԱՏԱՍԽԱՆ. Նա շատ դժգույն էր: Չեմ կարող ասել, որ դա կեղծ էր:
ՀԱՐՑ. Նման բան դու առաջ տեսե՞լ էիր:
ՊԱՏԱՍԽԱՆ. Ես նման մի մարդ տեսել եմ հինգ, կամ վեց տարի առաջ:
ՀԱՐՑ. Պաշտպանյալի բերանից որևէ բան դուրս գալի՞ս էր:
ՊԱՏԱՍԽԱՆ. Նրանք երեսը լվանում էին: Ես ևս տեսա, որ բերանից փրփուր է դուրս գալիս:

Հետո դատախազը վկային տվեց հետևյալ հարցերը.

ՀԱՐՑ. Ինչո՞ւ դու հայտնի դարձար իբրև բանդիտ:
ՊԱՏԱՍԽԱՆ. Մենք մտանք Շուքրու էֆենդիի խմբի մեջ: Գնացինք Անատոլիա: Այնտեղից մենք գնացինք Ալի Բահադիր գյուղը: Շուքրու էֆենդին ինձ Ստամբուլ ուղարկեց: Գնացի գյուղ: Մենք մի քիչ օրի խմեցինք: Հետո, ճանապարհին, բրիտանական զինվորների հանդիպեցինք և նրանք մեզ ձերբակալեցին:
ՀԱՐՑ. Բանդիտները միշտ ճշմարտությո՞ւնն են ասում:
ՊԱՏԱՍԽԱՆ. Ես ձեզ ճշմարտությունն եմ ասում ինձ հետ պատահածի մասին:
ՀԱՐՑ. Երբ պաշտպանյալը այդ վիճակում էր, դու քո անկողնուց վեր կացա՞ր:
ՊԱՏԱՍԽԱՆ. Ես վեր կացա և նստեցի:
ՀԱՐՑ. Պաշտպանյալը քեզնից ինչքա՞ն էր հեռու:
ՊԱՏԱՍԽԱՆ. Նա ճիշտ իմ կողքն էր:
ՀԱՐՑ. Քո անկողինը դռան մո՞տ է:
ՊԱՏԱՍԽԱՆ. Այն դռանը շատ մոտ է:
ՀԱՐՑ. Պաշտպանյալը ինչքա՞ն հեռու էր քեզանից:
ՊԱՏԱՍԽԱՆ. Շատ քիչ:
ՀԱՐՑ. Որևէ լույս կա՞ր:
ՊԱՏԱՍԽԱՆ. Նրանք լուցկիներ էին վառում:
ՀԱՐՑ. Առանց լուցկիների ամեն ինչ անտեսանելի՞ էր:
ՊԱՏԱՍԽԱՆ. Լուսամուտներից մի քիչ լույս էր գալիս:
ՀԱՐՑ. Եթե լուսամուտներից եկող լույսով կարող էին տեսնել, ինչո՞ւ էին լուցկիներ վառում:
ՊԱՏԱՍԽԱՆ. Ես ի՞նչ գիտեմ:
ՀԱՐՑ. Երբ անկողնիդ վրա նստած էիր, պաշտպանյալի գլուխը դեպի ո՞ր կողմն էր շուռ եկած:
ՊԱՏԱՍԽԱՆ. Նա պառկած էր կողքով դեպի դուռը:
ՀԱՐՑ. Պաշտպանյալը գիշերը, քնի մեջ ի՞նչ էր խոսում:
ՊԱՏԱՍԽԱՆ. Ես ի՞նչ իմանամ: Նա իր լեզվով էր խոսում:

Հետո Հայդար Ռիֆատ բեյը տվեց հետևյալ հարցերը.

ՀԱՐՑ. Դու քանի՞ անգամ ես լսել նրան քնի մեջ խոսելիս: Վերջի՞ն օրը:
ՊԱՏԱՍԽԱՆ. Փաստորեն, ես այնտեղ եմ եղել վերջին 10-12 օրը միայն:

ԵՐԵՍՈՒՆՄԵԿԵՐՈՐԴ ՎԿԱ

Ռազմական դատարանը լսեց Թոռլաքյանի ցուցմունքը: Չեռնաշղթաները հանվեցին նրա դաստակից և նա պաշտպանյալի աթոռից գնաց վկաների համար նախատեսված տեղը:

Երդվելուց հետո, Թոռլաքյանը հետևյալ կերպ պատասխանեց պաշտպան փաստաբան Խոսրովյան էֆենդիի հարցերին.

ՀԱՐՑ. Ձեր անունը՞:
ՊԱՏԱՍԽԱՆ. Միսաք:
ՀԱՐՑ. Ձեր ազգանո՞ւնը:
ՊԱՏԱՍԽԱՆ. Թոռլաքյան:
ՀԱՐՑ. Ազգությո՞ւնդ:
ՊԱՏԱՍԽԱՆ. Ես հայ եմ:
ՀԱՐՑ. Քանի՞ տարեկան ես:
ՊԱՏԱՍԽԱՆ. Երեսուներկու:
ՀԱՐՑ. Ո՞րտեղ ես ծնվել:
ՊԱՏԱՍԽԱՆ. Տրապիզոնում:
ՀԱՐՑ. Քաղաքո՞ւմ, թե՞ գյուղում:
ՊԱՏԱՍԽԱՆ. Գյուղում:
ՀԱՐՑ. Ո՞ր գյուղում:
ՊԱՏԱՍԽԱՆ. Քուշանա գյուղում:
ՀԱՐՑ. Քուշանան Տրապիզոնից ինչքա՞ն է հեռու:
ՊԱՏԱՍԽԱՆ. Մոտ չորս ժամ հեռու է:
ՀԱՐՑ. Ամուսնացա՞ծ ես:
ՊԱՏԱՍԽԱՆ. Այո:
ՀԱՐՑ. Ե՞րբ ես ամուսնացել:
ՊԱՏԱՍԽԱՆ. Ամուսնացել եմ 1912-ին:
ՀԱՐՑ. Քանի՞ զավակ ես ունեցել:
ՊԱՏԱՍԽԱՆ. Ես երկու զավակ եմ ունեցել:
ՀԱՐՑ. Տղա՞, թե՞ աղջիկ:
ՊԱՏԱՍԽԱՆ. Մեկը տղա էր, մյուսը՝ աղջիկ:
ՀԱՐՑ. Կարո՞ղ ես մեզ մի քիչ քո ընտանիքի մասին պատմել:
ՊԱՏԱՍԽԱՆ. Հորս անունը Հակոբ Թոռլաքյան էր: Սայրս պատերազմից առաջ մահացավ: Ես Աղավնի անունով մի քույր ունեի: Նաև մի եղբայր ունեի Երվանդ անունով: Կնոջս անունը Փայլիկ էր: Աղջկաս անունը Անահիտ էր, իսկ տղայիս անունը՝ Շավարշ:
ՀԱՐՑ. Քո եղբայր Երվանդը քեզանից ինչքա՞ն փոքր էր:
ՊԱՏԱՍԽԱՆ. Նա երեք տարով փոքր էր: Քույրս ինձնից տասը տարով փոքր էր:
ՀԱՐՑ. Երվանդը և Անահիտը ամուսնացա՞ծ էին:
ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ, նրանք ամուսնացած չէին:
ՀԱՐՑ. Քո կինը ի՞նչ ընտանիքից էր:
ՊԱՏԱՍԽԱՆ. Նա Գագոսյան ընտանիքից էր:
ՀԱՐՑ. Ձեր ընտանիքից վերապրողներ կա՞ն:
ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ:
ՀԱՐՑ. Ձեր ընտանիքը հարո՞ւստ էր:
ՊԱՏԱՍԽԱՆ. Այո: Մենք այգիներ, մրգաստաններ և տներ ունեինք:
ՀԱՐՑ. Քանի՞ դաշտ ունեիք:
ՊԱՏԱՍԽԱՆ. Մենք չորս դաշտ ունեինք:
ՀԱՐՑ. Հայրդ պատերազմի սկզբում քանի՞ տարեկան էր:
ՊԱՏԱՍԽԱՆ. Նա մոտ 55 տարեկան էր:
ՀԱՐՑ. Ինչպե՞ս էր նրա առողջությունը:
ՊԱՏԱՍԽԱՆ. Լավ չէր:
ՀԱՐՑ. Ձեր ընտանիքի գործերին ո՞վ էր հոգ տանում:
ՊԱՏԱՍԽԱՆ. Եղբայրս և ես էինք հոգ տանում:

ՀԱՐՑ. Երբ պատերազմն սկսվեց, դու Տրապիզոնո՞ւմ էիր:
ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, պարոն:
ՀԱՐՑ. Հորեղբայր ունեի՞ր:
ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, ունեի:
ՀԱՐՑ. Ի՞նչ էր նրա անունը:
ՊԱՏԱՍԽԱՆ. Նրա անունը Արիստակես էր, նա քահանա էր:
ՀԱՐՑ. Ինչպե՞ս էր հորեղբորդ առողջությունը:
ՊԱՏԱՍԽԱՆ. Մի քիչ մտային խանգարում ուներ: Նա նույնիսկ եկեղեցին կինոթատրոնի էր վերածել:
ՀԱՐՑ. Հայրդ կենդանի՞ է:
ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ:
ՀԱՐՑ. Քո առողջության մասին բողոքներ ունե՞ս:
ՊԱՏԱՍ ԱՆ. Ուրիշներն ասում են, որ ուշաթափվում ու ընկնում եմ: Ես շուրջս խավար եմ զգում: Զգում եմ, որ առողջական շատ վատ վիճակում եմ:
ՀԱՐՑ. Քո ընկնելու վիճակից որևէ բան հիշո՞ւմ ես:
ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ, ես որևէ բան չեմ հիշում:
ՀԱՐՑ. Այդ նոպաները պատերազմից առաջ ունեի՞ր, թե՞ դրանք հետո սկսվեցին:
ՊԱՏԱՍԽԱՆ. Այդ նոպաները պատերազմից հետո սկսվեցին:
ՀԱՐՑ. Եղբայրդ ունե՞ր նույն հիվանդությունը:
ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, նա նույնպես երբեմն ունենում էր:

Նախագահող դատավորը հարցրեց.

ՀԱՐՑ. Իսկ Ի՞նչ կասես քրոջդ՝ Աղավնու մասին:
ՊԱՏԱՍԽԱՆ. Նա որևէ հիվանդություն չուներ:
ՀԱՐՑ. Դու մեծ մորդ տեսե՞լ ես:
ՊԱՏԱՍԽԱՆ. Այո:
ՀԱՐՑ. Որևէ բան կարո՞ղ ես ասել այն մասին, թե նա ինչպես մահացավ: Իր առողջական վիճակը ինչպե՞ս էր:
ՊԱՏԱՍԽԱՆ. Նա նույնպես հիվանդ էր: Նա նույնպես ուշագնաց էր լինում և ընկնում էր:
ՀԱՐՑ. Դու որևէ բժշկի գնացե՞լ ես վիճակդ քննելու համար:
ՊԱՏԱՍԽԱՆ. Ես բժիշկների մոտ գնացել եմ, բայց շատ օգուտ չեմ տեսել:
ՀԱՐՑ. Ի՞նչ լեզուներով կարող ես կարդալ ու գրել:
ՊԱՏԱՍԽԱՆ. Ես կարող եմ գրել ու կարդալ հայերեն և կարող եմ թրքերեն խոսել:
ՀԱՐՑ. Ո՞ր դպրոցում ես կրթություն ստացել:
ՊԱՏԱՍԽԱՆ. Ես սովորել եմ Քուշանայի դպրոցում:
ՀԱՐՑ. Պատերազմը սկսվելուց հետո Տրապիզոնից ո՞ւր գնացիր:
ՊԱՏԱՍԽԱՆ. Բաթում գնացի:
ՀԱՐՑ. Ինչո՞ւ Բաթում գնալու համար թողեցիր Տրապիզոնը:
ՊԱՏԱՍԽԱՆ. Տրապիզոնում ապահով չէր:
ՀԱՐՑ. Ինչո՞ւ Տրապիզոնում ապահով չէիր զգում:
ՊԱՏԱՍԽԱՆ. Որովհետև թուրքերը սպանում էին հայերին:
ՀԱՐՑ. Պատերազմը սկսվելուց ինչքա՞ն ժամանակ հետո դու Տրապիզո-

նը թողեցիր:

ՊԱՏԱՍԽԱՆ. Պատերազմը հայտարարվելուց մեկ կամ երկու ամիս հետո:

ՀԱՐՑ. **Ինչքա՞ն մնացիր Բաքումում:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Բաքումում մնացի մինչև 1917-ը:

ՀԱՐՑ. **Դու միշտ Բաքումո՞ւմ մնացիր:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ, ես երբեմն Սուխում և Սոչի էի գնում:

ՀԱՐՑ. **Այդ վայրերում ուրիշ տրապիզոնցիների տեսե՞լ ես:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, շատ տրապիզոնցիներ կային:

ՀԱՐՑ. **Սուխումում և Սոչիում բարեկամներ ունեի՞ր:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, նրանք բոլորը դեռ այնտեղ են:

ՀԱՐՑ. **Երբ Տրապիզոնը թողեցիր, դրամ ունեի՞ր:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես մոտ 2,000 լիրայի ոսկեդրամ ունեի:

ՀԱՐՑ. **Դու մինչև 1917–ը Բաքումում, Սոչիում և Սուխումում էիր: Այդ ժամանակ ի՞նչ էր քո զբաղմունքը:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես զբաղմունք չունեի, ծախսում էի իմ ունեցած դրամը:

ՀԱՐՑ. **Ո՞ւր գնացիր 1917–ից հետո:**

ՊԱՏԱՍԽԱՆ. 1917-ից հետո ռուսները սկսեցին նահանջել: Թուրքերը Բաքում մտան: Երբ թուրքերը սկսեցին մոտենալ, հայերը վախեցան և սկսեցին փախչել: Այդ հայերի մի մասը փախավ Ղրիմ, ուրիշներ՝ Բաքու: Մենք որոշեցինք ամբողջ ընտանիքով գնալ Բաքու: Հայրս, կինս, եղբայրս, քույրս և երկու զավակներս, բոլորս գնացինք Բաքու:

ՀԱՐՑ. **Բաքումին ե՞րբ թողեցիք:**

ՊԱՏԱՍԽԱՆ. 1917-ի դեկտեմբերին:

ՀԱՐՑ. **Ընտանիքդ Բաքու ուղարկելուց հետո դու ո՞ւր գնացիր:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես Թիֆլիս գնացի:

ՀԱՐՑ. **Թիֆլիսում ինչո՞ւ մնացիր:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Թիֆլիսում ուզեցի կամավոր գրանցվել: Գրանցվեցի և տասը օր հետո գնացի Երևան: Որոշ ժամանակ հայկական բանակում մնացի որպես կամավոր: Բայց հետո, երբ ինձ քննեցին, զորացրեցին, գտնելով, որ հարմար չեմ զինվորական ծառայության համար: Բանակում միայն երկու ամիս մնացի:

ՀԱՐՑ. **Դու ասացիր, որ բանակում երկու ամիս ծառայեցիր: Ո՞ր քաղաքում մնացիր:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Երևանում:

ՀԱՐՑ. **Զորացրվելուց հետո ի՞նչ արեցիր:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Որոշ ժամանակ Երևանում մնալուց հետո, գնացի Թիֆլիս:

ՀԱՐՑ. **Ինչքա՞ն մնացիր Թիֆլիսում:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես այնտեղ մնացի մինչև 1918-ի մայիսի 25-ը:

ՀԱՐՑ. **Այնտեղից ո՞ւր գնացիր:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Արմավիր գնացի:

ՀԱՐՑ. **Ինչո՞ւ գնացիր Արմավիր:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Որովհետև վրացիները քաղաք մտան մայիսի 25-ի մոտ, և խոսակցություններ էին գնում այն մասին, որ վրացիները հայերին պիտի ձերբակալեն և հանձնեն թուրքերին:

ՀԱՐՑ. **Ի՞նչ ճամփով գնացիր Արմավիր:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես գնացի Գասպետի ճամբով: Նախ գնացի Վլադիկավկազ և հետո Արմավիր՝ գնացքով:

ՀԱՐՑ. **Ինչքա՞ն մնացիր Արմավիրում:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Մոտ երկու ամիս:

ՀԱՐՑ. **Հիշո՞ւմ ես ո՞ր ամիսներին էր դա:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես այնտեղ մնացի մինչև 1918-ի օգոստոսի 8-ը կամ 10-ը:

ՀԱՐՑ. **Դու Արմավիրում փորձեցի՞ր աշխատանք գտնել:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ, որովհետև ես հիվանդ էի:

ՀԱՐՑ. **Ի՞նչ էր քո հիվանդությունը:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Որովայնային տիֆ՝ ջերմությամբ:

ՀԱՐՑ. **Հետո ո՞ւր գնացիր:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես ուզեցի ընտանիքիս միանալ:

ՀԱՐՑ. **Ինչո՞ւ ուզեցիր միանալ ընտանիքիդ:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Որովհետև սկսեցին լուրեր տարածվել այն մասին, որ թուրքերը մոտենում են քաղաքին: Ես անհանգստացած էի:

ՀԱՐՑ. **Դու հիշո՞ւմ ես երբ մեկնեցիր Բաքվից:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես շատ լավ չեմ հիշում, բայց մեկնեցի օգոստոսի 10-ից 15-ի արանքում:

ՀԱՐՑ. **Դեպի Բաքու ճամփորդությունն ինչքա՞ն տևեց:**

ՊԱՏԱՍԽԱՆ. 10-ից 15 օր տևեց:

ՀԱՐՑ. **Ե՞րբ հասար Բաքու:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Սեպտեմբերի սկզբներին:

ՀԱՐՑ. **Այդ ճամփորդությունը այդքան երկա՞ր է տևում:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Նորմալ պայմաններում՝ ոչ: Բայց ռուսների նահանջի պատճառով ճանապարհները վտանգավոր էին, և գնացքները խճողված էին:

ՀԱՐՑ. **Արմավիրից Բաքու ինչպիսի՞ն էր քո ուղեցույցը:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես գնացի Ցիխովետսկի ուղիով՝ Ցարիցին և Աստրախան: Աստրախանից Բաքու ճամփորդեցի ծովով:

ՀԱՐՑ. **Բաքվում ո՞ւր գնացիր:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես ընտանիքս գտա:

ՀԱՐՑ. **Դու նրանց հասցեն գիտեի՞ր:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, գիտեի:

ՀԱՐՑ. **Բաքվի ո՞ր շրջանում էին ապրում:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Նրանք էրմենիքենտում էին մնում:

ՀԱՐՑ. **Դու ի՞նչ ճամփով էրմենիքենտ գնացիր:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես քաղաքի կենտրոնով գնացի:

ՀԱՐՑ. **Սեպտեմբերի ո՞ր օրը դու հասար էրմենիքենտ՝ ընտանիքիդ:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես լավ չեմ հիշում. դա սեպտեմբերի 3-ը կամ 4-ն էր:

ՀԱՐՑ. **Դու էրմենիքենտում ինչպե՞ս անցկացրիր ժամանակը ընտանիքիդ հետ:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Երբ ընտանիքիս միացա, անկողին ընկա, որովհետև ճանապարհին հիվանդացել էի:

ՀԱՐՑ. **Հետո ի՞նչ պատահեց:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայկական կոտորածը տեղի ունեցավ:

ՀԱՐՑ. **Ո՞վ էր սպանում հայերին:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Թաթարները և թուրքերը:

ՀԱՐՑ. **Թաթարները և թուրքերը էրմենիքենտ եկա՞ն:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, եկան:

ՀԱՐՑ. **Նրանք ձեր թաղամասին մոտեցա՞ն:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Կոտորածները սկսեցին սեպտեմբերի 14-ին: Ես բոլոր կողմերից

կրակոցներ էի լսում: Երբ կրակոցները լսեցի, շատ անհանգստացա, քանի որ խոսակցություններն այն մասին, թե կոտորածներ են տեղի ունենալու, կարծես իրականություն էին դառնում: Երբ կրակոցներ լսեցի, դուրս եկա: Անկանոնները իմ վրա կրակեցին: Ես վիրավորվեցի և վայր ընկա: Երբ անկանոնները անհետացան, փորձեցի տուն վերադառնալ:

ՀԱՐՑ. Քո տնից ինչքա՞ն հեռու էիր, երբ վիրավորվեցիր:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես վիրավորվեցի մեր տան ճիշտ անկյունին: Երբ տուն վերադարձա, ընկա գետին: Կինս եկավ և ինձ ոտքի կանգնեցրեց: Ինքը և երեխաներս լաց էին լինում: Մի քանի րոպեից հետո անկանոնների մի խումբ բնակարան մտավ: Ներս մտնելիս նրանք կրակում էին: Ըստ էության, ես գիտակցությունս կորցրել էի: Միայն իմ երեխաների ճիչերն էի լսում: Լսեցի, որ հայրս ասաց. «Խղճացեք երեխաներին: Մի սպանեք նրանց»: Հետո լսեցի քրոջս ճիչը: Քույրս աղաչում էր. «Ինձ մի տարեք, ինձ սպանեցեք ընտանիքիս հետ միասին»: Հետո ճիչերը դադարեցին: Մնացածը չեմ հիշում:

(Պաշտպանյալը մի բաժակ ջուր խնդրեց: Դատարանի թույլտվությամբ նրան ջուր տվեցին):

Մի կին ինձ տարավ մոտակա մի տուն: Ես այնտեղ պառկեցի անկողու մեջ: Կինը բժիշկ կանչեց: Կարճ ժամանակ հետո մի բժիշկ եկավ և քննեց ինձ: Հետո բժիշկը մի քանի օր չերևաց: Այդ կինն ասեց, որ բժշկի գրասենյակը մոտիկ է և մենք կարող ենք ոտքով գնալ:

ՀԱՐՑ. Կարո՞ղ ես հիշել, կոտորածներից քանի՞ օր հետո դու դուրս եկար:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես լավ չեմ հիշում. բայց դա պետք է լիներ 8 կամ 10 օր հետո:

ՀԱՐՑ. Հիշո՞ւմ ես անունը այն բժշկի, որը քեզ բուժեց:

ՊԱՏԱՍԽԱՆ. Նրա անունը Զախարյան էր:

ՀԱՐՑ. Դու դուրս եկար բժշկին տեսնելու համար: Ինչքա՞ն ժամանակ մնացիր դրսում:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ճանապարհին մենք մի ուրիշ կնոջ հանդիպեցինք: Նա ասաց, որ բժիշկը ևս, հայ լինելու պատճառով, սպանված է: Այնպես որ, տուն վերադարձանք և ես անկողին մտա:

ՀԱՐՑ. Ինչքա՞ն մնացիր անկողնում:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես անկողնում 5 կամ 6 օր մնացի: Շատ լավ չեմ հիշում:

ՀԱՐՑ. Դրանից հետո ե՞րբ դուրս եկար:

ՊԱՏԱՍԽԱՆ. Հիվանդանալուց 10 օր հետո:

ՀԱՐՑ. Դուրս եկար և ո՞ւր գնացիր:

ՊԱՏԱՍԽԱՆ. Դուրս եկա հայկական ներկայացուցչություն գնալու համար:

ՀԱՐՑ. Այնտեղ ի՞նչ պետք է անեիր:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես ծրագրել էի Թիֆլիս, կամ այլ վայր մեկնելու թույլտվություն ստանալ:

ՀԱՐՑ. Կարողացա՞ր թույլտվություն ստանալ:

ՊԱՏԱՍԽԱՆ. Թաթարները թույլ չտվեցին:

ՀԱՐՑ. Մինչև ե՞րբ մնացիր Բաքվում:

ՊԱՏԱՍԽԱՆ. Մինչև բրիտանացիների երկրորդ վերադարձը:

ՀԱՐՑ. Կարո՞ղ ես մի մոտավոր ամսաթիվ ասել:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես կարծում եմ, որ դա 1918-ի սեպտեմբերի սկզբներին էր:

ՀԱՐՑ. Հետո ի՞նչ տեղի ունեցավ:

ՊԱՏԱՍԽԱՆ. Երբ բրիտանացիները կրկին մտան Բաքու, ապահովությունը վերահաստատվեց: Այդպես ես կարողացա գնացքով Թիֆլիս գնալ:

ՀԱՐՑ. Դա ինչքա՞ն է տևում:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այն 20-ից 24 ժամ է տևում:

ՀԱՐՑ. Այսպես, ուրեմն, թաթարները Բաքվում սպանում էին հայերին: Կոտորածների կազմակերպիչները անկանոն խմբե՞րն էին, թե՞ կառավարությունը:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ինձ ասել են, որ կոտորածները կազմակերպել է կառավարությունը:

ՀԱՐՑ. Դու ասում ես, որ կառավարությունն էր պատասխանատու: Որտեղի՞ց գիտես դա:

ՊԱՏԱՍԽԱՆ. Որովհետև ես շատ բաներ տեսա և լսեցի: Դոկտոր Զախարյանը, որը մի անգամ այցելեց ինձ, երբ ես անկողմնում էի, մի փաստաթուղթ բերեց, գրված ռուսերեն և թրքերեն լեզուներով:

ՀԱՐՑ. Ի՞նչ էր ասված այդ փաստաթղթում:

ՊԱՏԱՍԽԱՆ. Դոկտոր Զախարյանը մեզ կարդաց այդ փաստաթուղթը: Հիշում եմ մի քանի նախադասություն: Ասված էր, որ «Խաղաղությունը և ապահովությունը պետք է պահպանվեն», բայց որ «հայերը մնում են օրենքի պաշտպանությունից դուրս»: Փաստաթուղթը ստորագրել էին Ջիվանշիրը և խան Խոյսկին: Երբ ես թույլտվության համար կառավարական գրասենյակ գնացի, Ջիվանշիրը նույնպես այնտեղ էր: Թիֆլիս գնալու թույլտվություն խնդրեցի: Նա ծաղրական ոճով ասաց. «Ինչո՞ւ պիտի թողնեմ, որ գնաս: Ես ուզում են քեզ տեսնել փողոցի անկյունում մուրալիս և մեռնելիս, որպեսզի ներքուստ լավ զգամ»: Այնտեղ գնացի մի քանի անգամ ևս, բայց չհամարձակվեցի նրան տեսնել: Իմ ընկերներից մեկին նրա մոտ ուղարկեցի, ծերբակալված բարեկամներիցս մեկին ազատ արձակելու նպատակով: Ջիվանշիրը պատասխանել էր, որ զարմացած է նման խնդրանքների համար և հարցրել, թե նա է՞լ է ուզում է բանտարկվել: Քաղաքում հենց թաթարներից եմ լսել, որ Ջիվանշիրն էր պատասխանատու կոտորածների համար:

ՀԱՐՑ. Ե՞րբ եկար Ստամբուլ:

ՊԱՏԱՍԽԱՆ. 1921-ի հունվարին:

ՀԱՐՑ. Ռուսաստանը ինչո՞ւ թողեցիր:

ՊԱՏԱՍԽԱՆ. Որովհետև բոլշևիկները Վրաստանը գրավել էին:

ՀԱՐՑ. Դու Ստամբուլ եկար այստեղ մշտական բնակությա՞ն համար:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ:

ՀԱՐՑ. Այդ դեպքում, ինչո՞ւ եկար այստեղ:

ՊԱՏԱՍԽԱՆ. Իմ նպատակն էր գնալ Միացյալ Նահանգներ:

ՀԱՐՑ. Այստեղ որտե՞ղ ապրեցիր:

ՊԱՏԱՍԽԱՆ. Բեյօղլուում, Ալթինբակակլ, Պանգալտի, Չեդիդիե փողոց, թիվ 102:

ՀԱՐՑ. Դա ո՞ւմ տունն էր:

ՊԱՏԱՍԽԱՆ. Դա պատկանում է Կարպիս Շահինյան անունով մի մարդու:

ՀԱՐՑ. Ինչքա՞ն վարձ էիր վճարում:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ամսական 30 օսմանյան լիրա:

ՀԱՐՑ. Երբ Ստամբուլ հասար, առողջական վիճակդ ինչպե՞ս էր:

ՊԱՏԱՍԽԱՆ. Լավ չէի:

ՀԱՐՑ. Գիտե՞ս, թե ինչի համար ես բանտարկված և ինչու ես դատվում:

ՊԱՏԱՍԽԱՆ. Չգիտեմ:

ՀԱՐՑ. Դու հիշո՞ւմ ես ձերբակալվելդ և բանտ դրվելդ:

ՊԱՏԱՍԽԱՆ. Չգիտեմ: Ես միայն գիտեմ, որ ձերբակալված եմ: Ես չեմ հիշում ինչի համար եմ ձերբակալված: Նաև, որ ձերբակալության ժամանակ ինձ ծեծեցին:

ՀԱՐՑ. Հիշո՞ւմ ես որտե՞ղ քեզ ծեծեցին:

ՊԱՏԱՍԽԱՆ. Գալաթասարայի թրքական ոստիկանատանը:

ՀԱՐՑ. Քո ո՞ր մասին խփեցին:

ՊԱՏԱՍԽԱՆ. Խփեցին իմ մարմնի բոլոր մասերին:

ՀԱՐՑ. Ինչպե՞ս ծեծեցին քեզ:

ՊԱՏԱՍԽԱՆ. Չեռքերով, ոտքերով և գավազաններով:

ՀԱՐՑ. Ստամբուլում Չիվանշիրին տեսա՞ր:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ:

ՀԱՐՑ. Նրան բոլորովի՞ն չտեսար:

ՊԱՏԱՍԽԱՆ. Կարծում եմ, նրան մի անգամ հանդիպեցի երեկոյան:

ՀԱՐՑ. Ինչպե՞ս անցկացրիր ժամանակդ այն երեկո, երբ կարծում ես, որ Չիվանշիրին տեսար:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես չեմ հիշում:

ՀԱՐՑ. Մոտդ զենք ունեի՞ր:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, ունեի:

ՀԱՐՑ. Երբվանի՞ց:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես այն միշտ ունեցել եմ իմ մոտ:

ՀԱՐՑ. Ինչո՞ւ էիր զենք կրում:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես այն կրում էի անձս պաշտպանելու համար, որովհետև այս երկրում միշտ գողություններ ու մարդասպանություններ են տեղի ունենում:

ՀԱՐՑ. Խղճի խայթ ունենո՞ւմ ես:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ, խիղճս լրիվ հանգիստ է:

ԽԱՉԱՏԵՎ ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

-Ես Օսմանյան հպատակ եմ: 1917-ին ցանկանում էի կամավորագրվել հայկական բանակին: Այն ժամանակ, երբ Բաքումում էի, փորձեցի, բայց չհաջողվեցի, որովհետև հիվանդ էի: Բժշկական քննության արդյունքներով ինձ մերժեցին ընդունել: Երևանում բանակին միանալուց անմիջապես հետո ինձ զորացրեցին: Երկու ամիս այնտեղ էի և մինչև քննվելս ոչինչ չէի անում: Ինձ հետ քննվեցին շատ հայեր: Հայկական բանակը պաշտպանվում էր թուրքերից: Չգիտեմ, նրանք որտե՞ղ էին պատերազմում: Մյուս հայերին ուղարկեցին ռազմաճակատ, որը, կարծում եմ, Սարիղամիշում էր: Ես հայ եմ, վտանգի տեսակետից միևնույնն է թուրքերի դեմ կռվո՞ւմ եմ, թե՞ ոչ: Բռնվելու դեպքում ինձ պիտի սպանեին, անկախ նրանից կռվո՞ւմ էի թե՞ ոչ:

Տրապիզոնը թողնելուց հետո ես այնտեղից ոչ մի գումար չեմ ստացել: Այն դրամը, որ ինձ հետ ունեի, բավարարեց մինչև 1919-ին աշխատանք գտնելս: Բացի դրանից, քույրս և կինս զարդեղեններ ունեին, որը մենք վաճառեցինք: Այն ժամանակ Բաքումում կյանքը թանկ չէր: Մեր սենյակների համար ամսական վճարում էինք 45 ռուբլի: Կարծեմ այն ժամանակ մեկ ռուբլին 12 և կես պիաստր էր: Ճամփորդելը թանկ չէր: Մենք կառքով անցանք Գասպետ լեռները: Ամեն ինչ, ներառյալ ուտելիքը, էժան էր: Պատերազմի վերջերին ամեն ինչ թանկացավ:

Երբ ես հեռացա, հորեղբայրս ստանձնեց ագարակի տնօրինումը: Հետո նրանց չեմ լսել: 1895-1896-ին, երբ երիտասարդ էի, Տրապիզոնում կոտորածներ էին տեղի ունենում: Քուշանայում՝ ոչ:

Ես հեռացա, որովհետև զրույցներ էին գնում, իբր Բաքումում կոտորածներ են լինելու: Մինչև կոտորածների օրը ես քաղաք դուրս չեկա, միայն տան շրջակայքում էի լինում: Ռմբակոծումը լսեցի: Կոտորածների առաջին օրը, երբ կրակոցները լսեցի, դուրս եկա տեսնելու, թե դա այն կոտորածնե՞րն են տեղի են ունենում, որոնց մասին խոսում էին: Չեմ կարող հիշել, փողոցներում մարդիկ կայի՞ն, թե՞ դատարկություն էր: Երբ կատարել էի մի քանի քայլ, հանդիպեցի մի խմբի: Ուզեցի հետ վազել, բայց մինչև կկարողանայի, կրակեցին: Նրանք ինձ շատ մոտ էին: Այդ ժամանակ մոտս ատրճանակ չունեի: Ընդհանրապես չունեի: Խումբը խառն էր՝ թուրքեր և թաթարներ: Նրանց կարողանում էի տարբերել իրենց դեմքերից և հագուստներից: Նրանք ինձնից մի 100-150 քայլ հեռու էին: Չգիտեի որտեղի՞ց եմ վիրավորվել: Ընկա գետին՝ գիտակցությունս կորցրած: Միայն հիշում եմ, որ բոլոր ուժերս գործադրեցի տուն վերադառնալու համար և դրանից հետո գիտակցությունս կորցրի: Չգիտեմ, թե խմբից իմ վրա կրկին կրակեցի՞ն, թե՞ ոչ: Երբ խումբը բնակարան մտավ, դրանից հետո ճիչերից ու աղաղակներից բացի ոչինչ չեմ հիշում:

Ես չգիտեմ, թե խումբը հայ տիկնոջ բնակարան այցելե՞ց, թե՞ ոչ: Չգիտեմ ի՞նչ օր էր, որ նա ինձ իր տուն տարավ: Կոտորածներից առաջ նա աշխատում էր մի լվացքատանը, բայց հետո՝ ոչ: Նա դուրս էր գալիս, բայց ես չգիտեմ թե ո՞ւր էր գնում: Ես տեսա այն թուղթը, որ բժիշկն էր բերել: Ստորագրությունները չէի կարողանում կարդալ, բայց բժիշկը դրանք կարդաց ինձ համար: Հիշում եմ անունները, որովհետև այդ անունները իմ վրա ուժեղ տպավորություն գործեցին: Երբ Բաքու գնացի, այդ անունները դարձել էին կառավարության անդամներ: Չեմ կարող հիշել, թե ով ասաց ինձ: Այցելուներից շատերը հայեր էին: Ես Չիվանշիրին նախկինում երբեք չէի տեսել, մինչև նախարարությունում նրան տեսնելս, որտեղ շատ մարդ կար և ամեն մարդ գոռում էր «Չիվանշիր» և մատնացույց անում նրան: Նա ինքնաշարժի մեջ էր: Երբ ինքնաշարժից դուրս եկավ և ուղղվեց դեպի շենքը, ես իրեն մոտիկ էի: Ատրճանակ չունեի: Երբ մի հայ Չիվանշիրին խնդրեց ազատել իր հարազատին, ես ներկա էի և լսեցի նրա օգտագործած բառը: Չեմ ճանաչում այն թաթարներին, որոնք ինձ հետ խոսեցին Չիվանշիրի մասին, բայց նրանք համեստ մարդիկ էին, որովհետև կոտորածներին հակառակ խոսեցին: Ես հանդիպեցի նրանց: Նրանք շատ քիչ դրամ ունեին:

Տիկինը ինձ 200 ռուբլի, ինչպես նաև 4 կամ 5 ոսկե լիրա տվեց, որպեսզի անձնագիրս ստանամ և Թիֆլիս գնամ: Նա իր աշխատանքով էր դրամ վաստակում: Ես չգիտեմ ինչ բան է Ռազմական օրենքը:

Երբ ճամփորդում էի Բաքումիի վաճառականի համար, շատ լավ չէի, գործն էլ լավ չէի կարողանում կատարել: 1920-ին, 7-8 ամիս այդ վիճակում էի: Չգիտեմ, այդ շրջանում ուշագնացություններ ունեցե՞լ եմ, թե՞ ոչ: Իմ դրամը վաճառականին տվեցի ի պահ: Վաճառականի համար դատարանով դրամ էի վերցնում և տնօրինում էի համաձայն իր հրահանգների: Վաճառականը ինձ աշխատանքից ազատեց 7- 8 ամիս հետո: Պատճառը չգիտեմ: Ես ինքս չեմ հիշում, որ այդ շրջանում նոպաներ ունեցած լինեմ: Մեկն ինձ ասաց, որ նոպաներ ունենում էի, բայց ես չեմ հիշում երբ:

Երբ ես առաջին անգամ Ստամբուլ եկա, հանդիպեցի վաճառականին. նա ասաց, որ Ռումինիա է գնում և ինձ աշխատանքի ընդունելու մասին տեղյակ

կպահի: Նրա մոտ աշխատանքի անցնելու հույս ունեի, այդ պատճառով արտագաղթելու ուղղությամբ քայլեր չձեռնարկեցի: Շատ լավ չեմ հիշում վաճառականին ե՞րբ հանդիպած լինելս, բայց դա այստեղ հասնելուցս մեկ ամսվա ընթացքում էր: Մի բույն էի ուզում, այդ է պատճառը, որ որևէ քայլ չարեցի մինչև իրեն հանդիպելս: Նա ինձ տեսավ երկու ամիս հետո և ասաց, որ ինձ աշխատանքի պիտի վերցնի, որ վերադառնում է Ռումինիա որոշ հարցեր կարգավորելու համար, որ նամակով ինձ կկանչի: Երբ ես ձերբակալվեցի, իրենից նամակ էի սպասում:

Ես Ստամբուլում չաշխատեցի: Շատ դրամ ունեի, որը վաճառականի մոտ աշխատելով էի վաստակել: Ատրճանակը Բաքումում գնեցի, երբ դրամ էի տանում վաճառականին: Դրա հետ միաժամանակ գնեցի փամփուշտը: Գիտեի, որ օրենքով թույլատրված չէ զենք կրել: Այն ես պահում էի իմ սեփական պաշտպանության համար: Սովորություն ունեի շատ ուշ վեր կենալ և ման գալ փողոցներով, շատ հաճախ գլխավոր փողոց Ռյու դե Փերայով: Դրսում մնում էի մինչև ուշ ժամերը, որովհետև չէի կարողանում քնել: Երբեմն սրճարաններ էի մտնում: Պանդոկներ չէի գնում: Հաճախ Թաքսըզ Գարդընզ էի գնում:

Չեմ կարող հիշել, Փեթի Շամպ *(Թեփեբաշի)* պարտեզներում եղե՞լ եմ, թե՞ ոչ, բայց գիտեմ, որ այդ փողոցով անցնում էի: Ջիվանշիրի նկատմամբ հատուկ ատելություն չունեի, միայն վստահ էի, որ նա վատ մարդ է և Աստծուն աղոթում էի, որ պատժի նրան: Երբ Բաքվում նրան տեսա, նա իմ մոտ ատելության զգացում չառաջացրեց: Նրան համարում էի կոտորածների համար պատասխանատուն: Նրան չէի ատում, որովհետև ամեն ինչ Աստծուն էի թողել: Վստահ չեմ, թե ես Ջիվանշիրին Բաքվում երազո՞ւմ տեսա , թե՞ իրականում: Կարծում եմ, որ երբ հանդիպեցի Ջիվանշիրին, տեսա նաև հորս, որը, գոռում էր՝ «Խղճա երեխաներին, մի սպանիր»: Ես նաև երեխաներիս տեսա: Ջիվանշիրին տեսա դեպի ինձ վազելիս, կարծես ինձ սպանելու էր գալիս: Հետո արյունս գլուխս տվեց, սիրտս բաբախեց, և այլևս չեմ հիշում ինչ տեղի ունեցավ: Չեմ հիշում, թե այդ ժամանակ ատրճանակը ձեռքո՞ւմս էր, թե՞ ոչ:

ԽԱՉԱՏԵՎ ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

-Երբ Ստամբուլում էի, մտածում էի նախկինում իմ ունեցած միջոցների մասին: Տրապիզոնում իմ ունեցվածքը թուրքերը բռնագրավեցին: Քանի Ստամբուլում էի, ցանկանում էի ունեցվածքս վերականգնել: Իմ վաճառականի կնոջը՝ տիկին Հաչգուրուսովին էի այցելում ամիսը մեկ կամ երկու անգամ: Նա իր ամուսնու մասին ինձ տեղեկություն էր տալիս: Նրանից դեռևս որոշ գումար՝ 3,000 լիրա ունեի ստանալու: Դա շահույթի իմ բաժինն էր և ոչ թե աշխատավարձի պարտք: Նա Բաքումում և Մոսկվայում ամենահայտնի հայ վաճառականներից մեկն էր: Նա Ռումինիայում վերջերս մի մեծ սեփականություն գնեց: Արժեքը չգիտեմ:

Որ Ջիվանշիրն է կոտորածների պատասխանատուն, ես հասկացա այն ժամանակ, երբ լսեցի իր խոսքերն ուղղված ինձ և ուրիշ հայերի, որոնք դիմել էին իրենց հարազատներին ազատ արձակելու խնդրանքով: Ջիվանշիրին Բաքվում այլևս չտեսա:

Չեմ հիշում, ինձ ձերբակալելուց հետո ի՞նչ փողոցներով տարան:

ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ

(Ջիվանշիրի ընտանիքի փաստաբանի խնդրանքով)

-Պատերազմից առաջ ես Տրապիզոնը երբեք չեմ թողել: Չեմ հիշում քանի տարեկան էի, երբ սկսեցի գնալ-գալ Քուշանայի և Տրապիզոնի միջև: Հիմա դրամ չունեմ, բայց իմ 2,000 լիրան վաճառականի կնոջ մոտ է: Տրապիզոնի իմ ունեցվածքը կարժենար 40,000-ից 50,000 լիրա ոսկով: Մենք ինքներս էինք աշխատում վարձու աշխատածեռքի հետ միասին: Դպրոցում դասավանդումը հայերեն էր: Դպրոցում հայոց լեզուն արգելված չէր: Ընտանիքիս հանդեպ վատ չեն վերաբերվել: Իմ բոլոր նախնիները Տրապիզոնի բնիկներ են եղել: Նրանք հարստացել են մինչև ինձ : Ես չգիտեմ ինչպես:

Իմ ատրճանակը նման էր դատարանում եղածին: Քուշանայում միշտ զենք կրելը մեր սովորությունն էր: Չեմ հիշում, որ ինձ երբևէ զգուշացրած լինեն, որ հիվանդ լինելու պատճառով զենք չպիտի կրեմ: Այստեղ ճամփորդելիս զենքը ինձ մոտ էր: Այն մի քանի անգամ փորձել եմ, առանց կրակելու: Երբ այն գնեցի Բաքվում, դեպի Ստամբուլ գալու ճանապարհիս, 18-20 փամփուշտ գնեցի: Սկզբում 18 հատ գնեցի:

Երբ Երևանում էի, այնտեղ կոտորածներ չկային: Որևէ կազմակերպություն ինձ չի դրդել թողնել Տրապիզոնը: Չեմ կարող հիշել ո՞ր օրը սկսեցին կոտորածները: Կարծում եմ, երբ դուրս եկա, մենակ էի: Հիշում եմ, որ բանդաները ցերեկով եկան էրմենիքենտ: Երբ տիկինը ինձ բարձրացրեց, ես նոր էի վերագտել գիտակցությունս և շուրջս ուրիշ մարմիններ չտեսա: Հարցումներ արեցի ընտանիքիս մասին, սակայն պատասխաններ չլսեցի: Բժիշկը վերքերիս խնամք տարավ: Հայկական արքեպիսկոպոսարանում շատ հայերից մեկն էի: Շատ դանդաղ էի քայլում, հարցնելով ճանապարհը:

Սա իմ առաջին այցելությունն է Ստամբուլ: Ես 4-ից 5 հազար լիրա (թղթադրամ) ունեի: Սովորաբար ճաշ չէի վերցնում: Ես չեմ կարող որևէ ռեստորանի անուն տալ: Տանն էի ընթրում: Իմ 30 դոլար վարձը նաև ընթրիքն էր ընդգրկում: Թբիլիսիում Շահինյանի հասցեն ինձ տվեց նրա փեսան: Վաճառականը իմ դրամի մի մասը ինձ փոխանցեց այստեղ գալուցս հետո: Ես անձնագիր ունեմ, բայց չգիտեմ ուր է: Իմ անունը Միացյալ ոստիկանությունը գրանցեց իմ ափ դուրս գալուց առաջ: Կարծում եմ, որ դուրս եկա Գալաթայի կողմում: Ստանդարտ ծննդյան վկայական չունեմ: Իմ ձերբակալության օրը տնից դուրս էի եկել սովորականի պես, կեսօրին: Չեմ հիշում, որ հարցաքննված լինեմ բրիտանական կամ թրքական *(ոստիկանության)* կողմից: Հիշում եմ, որ բանտում բժիշկներն ինձ քննեցին երկու անգամ: Ռիկատսոն Հաթը ինձ ասաց, որ ես պետք է փաստաբան ունենամ: Չեմ հիշում, որ ամփոփագիրը վերցված լիներ: Ես գիտեի, որ վաճառականը Ստամբուլում է:

ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ

-Ինչ վերաբերում է առողջությանս, ես շատ թույլ եմ զգում: Երբեմն աչքերս խավարում են և չեմ տեսնում. գլուխս պտտվում է և գլխացավեր եմ ունենում: Խորը շունչ քաշել չեմ կարող: Միշտ վատ երազներ եմ տեսնում: Ցավեր ունեմ վերջավորություններում: Գլուխս միշտ վատ է:

Հաստատ չգիտեմ:

ՄԵՂԱԴՐՈՂ ԿՈՂՄԻ ՎԿԱՆԵՐԸ

(ԼՐԱՑՈՒՑԻՉ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ)

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՎԿԱ

Շեֆիղ Ռուստեմ Բեգովը, «Ադրբեջան» ռուսալեզու օրաթերթի գլխավոր խմբագիրը, երդում տալուց հետո, ի պատասխան դատախազ Գրիբոնի հարցերի ասաց, որ ինքը ադրբեջանցի է, որ այժմ մնում է Սիրքեչի Ռեշադիյե պանդոկում, որ ռուսալեզու «Ադրբեջան» օրաթերթի սեփականատերն է և որ նա (ծառայել է) իբրև (Ադրբեջանի) Ներքին գործերի փոխնախարար:

Հետո նա պատասխանեց դատախազի հարցերին.

ՀԱՐՑ. 1918–ին Բաքվում քաղաքական կուսակցություն կա՞ր:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, կար: Ամենակարևորը Մուսավաթ կուսակցությունն էր: Ավելի ուշ կար Իսլամական միության կուսակցությունը և բոլորովին վերջերս՝ Սոցիալիստական կուսակցությունը:

ՀԱՐՑ. Դու այդ կուսակցություններից որևէ մեկին միացե՞լ էիր:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, ես Մուսավաթ կուսակցության կենտրոնական մարմնի անդամ էի:

ՀԱՐՑ. Կարո՞ղ ես մեզ ասել Ջիվանշիրի անձնական կյանքի մասին:

ՊԱՏԱՍԽԱՆ. Մինչև ռուսական հեղափոխությունը Ջիվանշիրը լավ ճանաչված ինժեներ էր: Միայն իր մասնագիտությամբ էր զբաղվում և քաղաքական գործերի մեջ չէր խառնվում: Հեղափոխությունից հետո նա սկսեց մասնակցել Ադրբեջանի քաղաքական և ազգային գործերին իբրև ազնիվ ազգային գործիչ: Մինչև Ադրբեջանի կառավարության կազմվելը նա հարում էր Մուսավաթ կուսակցությանը: Նա ազերի կենտրոնական կոմիտեի, ինչպես նաև Կենտրոնական ազգային կոմիտեի անդամ էր: Նա ուզում էր մուսուլմանների և հայերի միջև վեճը լուծել խաղաղ միջոցներով: Ջիվանշիրը Մուսավաթ կուսակցության մի անդամ էր միայն և իր հարստության պատճառով կուսակցության մեջ շատ հեղինակություն չուներ: Լինելով խաղաղության ուժեղ պաշտպան, նա գնաց Գյանջա և Ղարաբաղ, որպես հայերից և մուսուլմաններից կազմված այն հանձնաժողովի անդամ, որը կյանքի էր կոչված խաղաղ միջոցներով լուծելու հայ-մուսուլմանական վեճը: Ջիվանշիրը Բաքվի հայերի շրջանում շատ ընկերներ ուներ: Նա Ազերի առաջին կառավարության մեջ նշանակվեց Ներքին գործերի նախարար: Իր պաշտոնում եղած ժամանակ մուսուլմանները և հայերը շատ գոհ էին, որովհետև նա արդյունավետ գործիչ էր: Ջիվանշիրի ամբողջ պաշտոնավարության ընթացքում Հայաստանում *(ինչպես հրատարակված է)* որևէ տեղ էթնիկ անկարգություններ չկային: Ազերի և թուրք բանակների կողմից Բաքուն վերցվելուց և կառավարությունը Գյանջայից Բաքու վերադառնալուց հետո, ապահովությունը և հասարակական կարգ ու կանոնը Բաքվում վերականգնվեցին: Ցույցեր տեղի չէին ունենում շնորհիվ այն միջոցառումների, որոնք հրամայվեցին Բիհբուտ խանի կողմից: Այս կապակցությամբ Մուսավաթ կուսակցության ծրագրի մեջ հողի և աշխատավորներին վերաբերող հարցերում որոշ փոփոխություններ տեղի ունեցան:

Այդ ժամանակ Մուսաֆաթ կուսակցության ծրագրի մեջ մի փոփոխություն տեղի ունեցավ հողի և աշխատանքի հարցերում: Կուսակցությունը իրեն կոչեց ժողովրդավարական: Սա Բիհբուդ խանին մղեց հրաժարվելու կուսակցությունից և դուրս քաշվելու *(կառավարությունից)*: Նա սկսեց զբաղվել իր անձնական հարցերով: Սա այն բոլորն է, ինչ ես գիտեմ Բիհբուտ Խանի մասին:

ՀԱՐՑ. Բոլշևիկների հանդեպ առավել համակրող էին հայե՞րը, թե՞ թաթարները:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ, թաթարները բոլշևիկների հանդեպ երբեք համակրող չէին կարող լինել: Ըստ որում, հայերը համագործակցեցին բոլշևիկների հետ և մուսուլմանների սպանեցին մարտյան դեպքերի ժամանակ: 1918-ին Բաքվում ազգությունների հարաբերակցությունը հետևյալն էր. մուսուլմաններ՝ 70 տոկոս, ռուսներ՝ 20 տոկոս, այլ ցեղեր՝ 10 տոկոս:

ՀԱՐՑ. Երբ 1918–ին մենշևիկները վերցրին իշխանությունը, հայերը մենշևիկների հետ համագործակցեցի՞ն:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այն ժամանակ կազմվեց միացյալ կառավարություն: Այդ կառավարության մեջ էին բոլշևիկները, մենշևիկները և հայերը:

Նախագահող դատավորը՝

ՀԱՐՑ. Այդ քաղաքը կառավարության հսկողության տակ էր, ճի՞շտ է:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո:

ՀԱՐՑ. Ինչպե՞ս կարող էր քաղաքը հայերի և ռուսների հսկողության տակ լինել, եթե նրանք բնակչության միայն 30 տոկոսն էին կազմում:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այն ժամանակ քաղաքում կային 7,000 -ից 8,000 ռուս և 17,000 հայ զինվորներ: Կար նաև մի փոքր ռուսական նավատորմ: Բնականաբար, զինվորական ուժը գերակշիռ դիրք ուներ անգեն բնակչության նկատմամբ:

ՀԱՐՑ. Ադ կառավարությունը ինչքա՞ն ժամանակ մնաց իշխանության գլուխ:

ՊԱՏԱՍԽԱՆ. Մինչև որ հունվարին, փետրվարին և մարտին թուրքերը և ազերիները Բաքուն վերցրին:

ՀԱՐՑ. 1918–ի մարտին Բաքվում մուսուլմաններ սպանվեցի՞ն:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, ամեն մարդ գիտե որ 14,000 մուսուլման սպանվեց:

ՀԱՐՑ. Ո՞վ սպանեց նրանց:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այդ մուսուլմանները սպանվեցին հայկական բանակի կողմից: Կասկածից դուրս է, որ շատ ավելի մուսուլմաններ սպանված պիտի լինեին, եթե քաղաքում այդ ժամանակ ներկա չլիներ Թուրքիստանի ռուսական բանակը:

ՀԱՐՑ. Կոտորածների ենթարկված մուսուլմանների մեջ կանայք ու երեխաներ կայի՞ն:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո: Շատ կանայք ու երեխաներ կային: Արդարև, այդ ժամանակ հրատարակվող մի ռուսական թերթ գրեց այդ դեպքերի մասին:

ՀԱՐՑ. Բոլշևիկները Բաքու քաղաքը ռմբակոծեցի՞ն:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, ռմբակոծեցին: Պատճառն այն է, որ ռուսական նավատորմին ասել էին, որ մուսուլմանները կոտորում են քրիստոնյաներին: Այդ տեղեկության հիման վրա նավատորմը ռմբակոծեց քաղաքը:

ՀԱՐՑ. Քաղաքի ո՞ր հատվածն է, որ ռմբակոծվեց:

ՊԱՏԱՍԽԱՆ. Մուսուլմանական հատվածը:

ՀԱՐՑ. Այդ սխալ տեղեկությունը ո՞վ հասցրեց նավատորմ:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես չգիտեմ: Համենայն դեպս, 10 րոպե հետո հասկացան, որ տեղեկությունը կեղծ է և ռմբակոծումը դադարեցրին:

ՀԱՐՑ. Կարո՞ղ եք ասել՝ ի՞նչ պատահեց Սինեմա Ռեկորդին և թատրոնին:

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքում կա մի շինություն, որը կոչվում է Մացլով թատրոն: Հայ զինվորները այդ շենքի մեջ 3,000-ից 4,000 մուսուլմաններ բանտարկեցին, այդ թվում նաև կանանց ու երեխաների: Այդ ժամանակ քաղաքում էր Թուրքիստանի ռուսական գումարտակը: Այդ գումարտակի անդամները եկան և ազատ արձակեցին բանտարկյալներին:

ՀԱՐՑ. Թուրքերը Բաքուն վերցրին 1918–ի սեպտեմբերին, ճի՞շտ է:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո: Թուրքերը Բաքուն վերցրին կռվելով: Օգոստոսին երկու գրոհներ եղան Բաքվի վրա: Թրքական երկու գումարտակներ մասսայաբար ոչնչացվեցին: Թարմ համալրումով թուրքերը և ազերիները, փողոցներում կռվելով, քաղաքը վերցրին սեպտեմերի 15-ին:

ՀԱՐՑ. Թուրքերի դեմ ո՞վ էր կռվում:

ՊԱՏԱՍԽԱՆ. Սկզբնապես կռվում էին ռուսները և բրիտանացիները: Սակայն ռուսները քաշվեցին և բրիտանացիները նույնպես քաշվեցին սեպտեմբերի 14-ին: Վերջում միայն հայերն էին կռվում թուրքերի դեմ:

ՀԱՐՑ. Հայերը թուրքերի դեմ կռվում էին նաև ռուսների և բրիտանացիների կողքի՞ն:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո: Մոտավորապես 1,500 բրիտանացի զինվոր կար: Ռուսները թվով ավելի քիչ էին: Նույնիսկ այն ժամանակ կռվողների մեծամասնությունը հայերն էին:

ՀԱՐՑ. Այդ հայերը Բաքվի բնակիչնե՞ր էին, թե՞ դրսից էին եկել:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոմանք Բաքվի բնակիչներ էին, ոմանք դրսից էին եկել:

ՀԱՐՑ. Քաղաքը պաշտպանողներին հանձնվելու առաջարկություն եղա՞վ:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, հրամանատար Մուրսել փաշան *(այն ժամանակ Մուրսել բեյ* (տվել էր բոլոր երաշխիքները, որ բոլորի կյանքը պիտի ապահովված լիներ, եթե քաղաքը խաղաղությամբ հանձնվի: Սա ասված էր մի հայտարարության մեջ: Հայտարարությունը ասում էր, որ հայերը պիտի ազատ լինեն գնալու ուր որ ուզեն:

ՀԱՐՑ. Այդ հայտարարությունը քանի՞ անգամ է հրատարակվել:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ինչպես ասացի, այն հրատարակվել է մեկ անգամ Մուրսել փաշայի կողմից: Մեկ ուրիշ անգամ Արտաքին գործերի նախարար Հասան Խաչինսկին այն ուղարկեց Հայոց ազգային խորհուրդ:

ՀԱՐՑ. Ճանաչո՞ւմ ես Բայկով անունով մի ռուսի:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, ճանաչում եմ:

ՀԱՐՑ. Կարո՞ղ ես դատարանին պատմել այդ մարդու մասին:

ՊԱՏԱՍԽԱՆ. Նա փաստաբան էր Բաքվում: Քաղաքականապես ցարական հեղափոխական էր: Այս մարդն աշխատում էր Կովկասից այն կողմ բնակվող ազգերի՝ հանուն անկախության կատարվող գործողությունների դեմ: Ազերի կառավարությունը արգելեց Բայկովի մուտքը Ադրբեջան:

ՀԱՐՑ. Հայերի հետ ընկերություն անո՞ւմ եք:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, անկասկած: Ես միշտ հայերի հետ խաղաղության և անվտանգության պայմաններում ապրելուն կողմ եմ եղել: Իմ թերթի մեջ այս նյութի շուրջ շատ հոդվածներ եմ հրապարակել:

ՀԱՐՑ. Ո՞րն է ազերի կառավարության մայրաքաղաքը:

ՊԱՏԱՍԽԱՆ. Մինչև Բաքվի վերցվելը Գյանջան էր: Հետո Բաքուն եղավ մայրաքաղաք:

ՀԱՐՑ. Գյանջայում հայեր կա՞ն:

ՊԱՏԱՍԽԱՆ. Գյանջայի բնակչությունը 60,000 է, նրանցից 40,000-ը մուսուլմաններ են, 20,000-ը՝ հայեր:

ՀԱՐՑ. Գյանջայում որևէ կոտորած եղե՞լ է:

ՊԱՏԱՍԽԱՆ. Բացարձակապես ոչ: Գյանջայում որևէ կոտորած չի եղել: Ոչ մի հայ չի տուժել:

ՀԱՐՑ. Երևան քաղաքը գիտե՞ս:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, Հայաստանի մայրաքաղաքն է:

ՀԱՐՑ. Երևանում մուսուլմաններ կա՞ն:

ՊԱՏԱՍԽԱՆ. Նախկինում Երևանում շատ մուսուլմաններ կային, բայց այժմ մնացել են 10,000-ից 15,000-ը:

ՀԱՐՑ. Այնտեղ մուսուլմանները կոտորածների ենթարկվե՞լ են:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, հայերը կոտորածի ենթարկեցին մուսուլմաններին: Վերապրող մուսուլմանները փախան դեպի Ադրբեջան: 20,000-ից 25,000 մուսուլմաններ սպանվեցին: Ի լրումն դրան, Հայաստանում մուսուլմանական 200 գյուղեր բնաջնջվեցին: Այդ գյուղերի բնակիչներից ոմանք կոտորվեցին, մյուսները փախան Ադրբեջան:

ՀԱՐՑ. Մուսավաթ կուսակցության և Միություն ու Առաջադիմություն կուսակցության ծրագրերը համանմա՞ն են:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ: Մուսավաթ կուսակցությունը որոշակիորեն ժողովրդավարական կուսակցություն է: Միություն և Առաջադիմությունը, մյուս կողմից, միավորման նպատակն էր հետապնդում: Տարբերությունը երկու կուսակցությունների միջև այն է, որ մեկը հետապնդում էր կենտրոնացումը, մյուսը՝ ազատությունը:

ՀԱՐՑ. 1918–ի մարտին ազերի մտավորականները հետապնդվո՞ւմ էին հայերի կողմից:

Նախագահող դատավորը՝

-Դուք չեք կարող նման հարցեր տալ: Մի տվեք այնպիսի հարցեր, որոնք կարող են ուղղորդել վկայի պատասխանները:

Դատախազը՝

ՀԱՐՑ. Ազերի կառավարությունը ինչպե՞ս վերջ գտավ:

ՊԱՏԱՍԽԱՆ. Բոլշևիկները ներխուժեցին Ադրբեջան և կառավարությունը ընկավ:

Նախագահող դատավորը՝

ՀԱՐՑ. Դու այնտե՞ղ էիր:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, այնտեղ էի:

ՀԱՐՑ. Ո՞ր ժամանակ:

ՊԱՏԱՍԽԱՆ. 1920-ի ապրիլի 27-ին:

Դատախազը՝

ՀԱՐՑ. Ջիվանշիրը 1918–ի սեպտեմբերին մի հանրային հայտարարություն հրապարակե՞ց:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, Ջիվանշիրը նախ մի հարցազրույց ունեցավ, որը հրատարակվեց թերթերում: Հետո մի հրամանագիր հրապարակեց: Այդ հրամանագրում ասված էր, որ որոշ անպատասխանատու մարդիկ զբաղված են թալանով ու կողոպուտով, և որ այդ մարդիկ պիտի պատժվեն ռազմական դատարաններում:

ՀԱՐՑ. Այդ հայտարարությունը որևէ ազգային խմբի ակնարկո՞ւմ էր:
ՊԱՏԱՍԽԱՆ. Իհարկե ոչ: Եթե ռազմական դատարանը ինձ թույլ կտա, ես այդ հայտարարության մի օրինակը ունեմ:

Նախագահող դատավորը.

ՀԱՐՑ. Ե՞րբ էր այդ հայտարարությունը հրապարակված:
ՊԱՏԱՍԽԱՆ. Ես ճշգրիտ ամսաթիվը չգիտեմ: Համենայն դեպս, այն հրապարակվեց սեպտեմբերին: Նաև, հայտարարությունը ոչ թե Ջիվանշիրն էր ստորագրել, այլ ոստիկանապետը: Երկրորդ հայտարարության տակ Ջիվանշիրի ստորագրությունն էր: Այս թերթը բացատրում է, թե ինչ էր այդ հայտարարությունը: Այս վերջին հայտարարությունը հրապարակված էր նոյեմբերի 1-ին: *(Վկան թերթը հանձնեց դատարանին)*

Դատախազ Գրիբոնը ավարտեց հարցաքննությունը և Խոսրովյան էֆենդին խաչաձև հարցաքննեց վկային հետևյալ ձևով.

ՀԱՐՑ. Մինչև 1917–ը ի՞նչ քաղաքացիություն ունեիր:
ՊԱՏԱՍԽԱՆ. Ես Ռուսաստանի քաղաքացի էի:
ՀԱՐՑ. Երբվանի՞ց ես Ստամբուլում:
ՊԱՏԱՍԽԱՆ. Ես այստեղ եկա օգոստոսի 22-ին:
ՀԱՐՑ. Ի՞նչ դպրոցներ ես հաճախել:
ՊԱՏԱՍԽԱՆ. Ես ռուսական դպրոց եմ հաճախել: Նաև հաճախել եմ Կիևի իրավաբանական դպրոցը:
ՀԱՐՑ. Ե՞րբ դարձար «Ադրբեջանի» գլխավոր խմբագիրը:
ՊԱՏԱՍԽԱՆ. 1918-ի օգոստոսին, այլ կերպ ասած, երբ կազմավորվեց ադրբեջանական կառավարությունը:
ՀԱՐՑ. Ո՞ւմ էր պատկանում այն տպարանը, որտեղ այս թերթն էր տպվում:
ՊԱՏԱՍԽԱՆ. Բոլշևիկ կառավարությունը բռնագրավեց տպարանը: Մինչև բոլշևիկների գալը, այս տպարանը ուրիշ շատ թերթեր էր տպագրում: Դրանց թվում էին մուսուլմանական, ռուսական և հայկական թերթեր: Հետագայում բոլշևիկները բռնագրավեցին տպարանը: Այն մուսուլմանական թերթը, որ այս տպարանում էր տպվում, կոչվում էր «Քասպի»: Հայկական ռուսալեզու թերթը, որ այստեղ տպվում էր, կոչվում էր «Բաքու»: Բայց ես չգիտեմ, թե ով էր շենքի տերը:
ՀԱՐՑ. Դու ո՞ր կուսակցության հետ ես:
ՊԱՏԱՍԽԱՆ. Մուսավաթ կուսակցության:
ՀԱՐՑ. Երբվանի՞ց:
ՊԱՏԱՍԽԱՆ. Հիմնադրման օրվանից:
ՀԱՐՑ. Դու ասացիր, որ Մուսավաթ կուսակցությունը ոչ մի ձևով կապված չէ Միություն և Առաջադիմություն կուսակցության հետ, ճի՞շտ է:
ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, բացարձակապես ոչ մի ընդհանուր բան չունի դրա հետ:
ՀԱՐՑ. Ահմեդ Ագաևին ճանաչո՞ւմ ես:
ՊԱՏԱՍԽԱՆ. Այո:
ՀԱՐՑ. Երբ Ագաևը Բաքու եկավ, նա պատգամավոր դարձա՞վ:
ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, դարձավ:
ՀԱՐՑ. Գիտե՞ս, որ Ագաևը Միություն և Առաջադիմություն կուսակցության

հետ էր և այդ կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամ:
ՊԱՏԱՍԽԱՆ. Ագաևը հայտարարում էր, որ անկուսակցական է և Ադրբեջանում չի հարում ոչ մի կուսակցության: Նա պառլամենտի անդամ էր:
ՀԱՐՑ. Դու գիտե՞ս, որ մինչ այդ նա Միություն և Առաջադիմություն կուսակցության առաջնորդներից մեկն էր:
ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ:
ՀԱՐՑ. Դու «Իլերի» օրաթերթում հոդված հրատարակե՞լ ես:
ՊԱՏԱՍԽԱՆ. Այո:
ՀԱՐՑ. Դու վերջին 15 օրերի ընթացքում Ագաևի և Մուսթաֆա Քեմալ փաշայի հետ Անկարայում հանդիպում ունեցե՞լ ես:
ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ, ես հաստատ Անկարա չեմ գնացել:
ՀԱՐՑ. Դու Ստամբուլից դուրս եկե՞լ ես:
ՊԱՏԱՍԽԱՆ. Ես Ստամբուլ հասա օգոստոսի 22-ին և այլևս դուրս չեկա:
ՀԱՐՑ. Ո՞ր ժամանակաշրջանում ես ծառայել իբրև Ներքին գործերի նախարարի պաշտոնակատար:
ՊԱՏԱՍԽԱՆ. 1920-ի փերվարից մինչև ապրիլ, այսինքն՝ մինչև բոլշևիկների հասնելը:
ՀԱՐՑ. Ձեր կուսակցության մեջ ի՞նչ որակավորում է պետք ունենալ նախարար կամ փոխնախարար դառնալու համար:
ՊԱՏԱՍԽԱՆ. Ադրբեջանի որևէ քաղաքացի կարող է նախարար դառնալ:
ՀԱՐՑ. Ջիվանշիրը ե՞րբ մտավ Բաքու:
ՊԱՏԱՍԽԱՆ. Նա քաղաք մտավ կառավարության հետ, *(սեպտեմբերի)* 18-ին:
ՀԱՐՑ. Վերջին պատերազմի ընթացքում հայերը և թաթարները միշտ տարբեր քաղաքականությո՞ւն էին հետապնդում:
ՊԱՏԱՍԽԱՆ. Ռուսաստանում 40-ից 50 միլիոն թաթար կա: Հարցը ո՞ր թաթարներին է վերաբերում:

Նախագահող դատավորը՝

ՀԱՐՑ. Ադրբեջանում թաթարներ կա՞ն:
ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ, ազերի թուրքեր կան:
ՀԱՐՑ. Դա նշանակո՞ւմ է, որ Ադրբեջանում թաթար ցեղ գոյություն չունի:
ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, նրանք այնտեղ գոյություն չունեն:

Խոսրովյան էֆենդի՝

ՀԱՐՑ. Հայերը բրիտանացիների դեմ կռվեցի՞ն:
ՊԱՏԱՍԽԱՆ. Չգիտեմ:
ՀԱՐՑ. Դու «Ադրբեջանի» գլխավոր խմբագիրն ես, նախկին Ներքին գործերի փոխնախարար, խելացի մարդ ես: Այս նկատի ունենալով, ինչպե՞ս է, որ չգիտես թե հայերը բրիտանացիների դեմ կռվեցի՞ն, թե՞ ոչ:
ՊԱՏԱՍԽԱՆ. Մարդ չի կարող ամեն ինչ իմանալ, անկախ նրանից, թե ինչքան փորձառու և տեղեկացված է:
ՀԱՐՑ. 1919–ին բրիտանացիները Բաքվո՞ւմ էին:
ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ:
ՀԱՐՑ. Ինչո՞ւ նրանք դուրս եկան:
ՊԱՏԱՍԽԱՆ. Ես չգիտեմ: Սա մի բան է, որ բրիտանական հրամանատարու-

թյան գիտենալիքն է:

ՀԱՐՑ. Ո՞վ էր բրիտանացիների դեմ կռվում:

ՊԱՏԱՍԽԱՆ. Բրիտանացիների դեմ կռվող չկար: Կռիվը Բաքվի կառավարության դեմ էր:

Նախագահող դատավորը՝

ՀԱՐՑ. Ո՞վ էր այդ ուժերի դեմ կռվում:

ՊԱՏԱՍԽԱՆ. Թուրքերը և ազերիները:

Խոսրովյան էֆենդի՝

ՀԱՐՑ. Դու Ներքին գործերի նախկին փոխնախարար, «Ադրբեջանի» գլխավոր խմբագիր, և Մուսավաթ կուսակցության ազդեցիկ մի անդամն էիր, ճի՞շտ է:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո:

ՀԱՐՑ. Իբրև փոխնախարար և «Ադրբեջանի» գլխավոր խմբագիր, ի՞նչ քաղաքականություն էիր հետապնդում:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ազգային հարցում ես հետապնդում էի բոլոր ժողովուրդների միասնության նպատակը:

ՀԱՐՑ. Ես հարցնում եմ պատերազմի ժամանակ ձեր քաղաքականության մասին: Ո՞րն էր «Ադրբեջանի» քաղաքականությունն այդ ժամանակ:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ձգտել հասնել ընդհանուր խաղաղության:

ՀԱՐՑ. Հօգուտ թուրքերի՞, թե՞ Միացյալ ուժերի:

ՊԱՏԱՍԽԱՆ. Մեր թերթի քաղաքականությունը, բնականաբար, հօգուտ թուրքերի էր:

ՀԱՐՑ. Ի՞նչ է նշանակում «մեր թերթի քաղաքականությունը»:

ՊԱՏԱՍԽԱՆ. «Ադրբեջանի» քաղաքականությունն ուղղված էր Թուրքիայի՝ եվրոպական երկրների հետ խաղաղ ապրելու նպատակին:

ՀԱՐՑ. Դու նշեցիր թուրքերի և ազերիների խնդիրների միասնության մասին: Սա նշանակո՞ւմ է, որ թուրքերը և ազերիները միմյանց հետ լավ յոլա էին գնում:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո: Նրանք, բնականաբար, համաձայնության մեջ էին Ադրբեջանը և Բաքուն վերցնելու հարցերում:

ՀԱՐՑ. Երբվանի՞ց ես Ջիվանշիրին ճանաչել:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես նրան ճանաչել եմ իմ ուսանող եղած ժամանակից, այսինքն՝ 1916-ից:

ՀԱՐՑ. Բաքվում հայ ընկերներ ունե՞ս:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո:

ՀԱՐՑ. Ովքե՞ր են նրանք:

ՊԱՏԱՍԽԱՆ. Արշակ Մալխասյան, որը դաշնակցություն կուսակցության անդամ է: Փափազյան: Մի հայ ընկեր ունեի, որը «Ադրբեջանում» էր աշխատում: Անունը Տեր Սահակյան էր: Նա Թիֆլիսից էր:

ՀԱՐՑ. 1918–ի սեպտեմբերին Բաքվում կոտորած տեղի ունեցե՞լ է:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես արդեն պատասխանել եմ այդ հարցին: Կոտորած չի եղել, բայց խառնիճաղանջ դրություն կար:

ՀԱՐՑ. Քանի՞ մարդ մահացավ: Սեպտեմբերի 17–ին փողոցներում դիակներ չտեսա՞ր:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ, չտեսա: Դիակները մեկ օր առաջ վերցրել էին և խաղաղությունը վերականգնված էր:

ՀԱՐՑ. «Ադրբեջանի» տպարանը քաղաքի ո՞ր մասում է:

ՊԱՏԱՍԽԱՆ. Բարեկետ Պարկի և փողոցի դիմացն է:

ՀԱՐՑ. Այդ տպարանը հայկական եկեղեցու բակո՞ւմ է:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այն հայկական եկեղեցու բակում չէ, այլ կողքը:

ՀԱՐՑ. Այդ նույն շենքում հայ եպիսկոպոսին տեսե՞լ ես:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ: Տպարանը շենքի նկուղային հարկում էր: Չգիտեմ, թե ով էր ապրում շենքի ուրիշ մասերում:

ՀԱՐՑ. Թույլ տուր քեզ ասեմ, որ հայ եպիսկոպոսը բնակվում էր տպարանի վերևի հարկում:

ՊԱՏԱՍԽԱՆ. Հնարավոր է, բայց ես չգիտեի:

ՀԱՐՑ. Ազերի կառավարությունը ե՞րբ հասավ Բաքու:

ՊԱՏԱՍԽԱՆ. 1918-ի սեպտեմբերի 18-ին:

ՀԱՐՑ. Այդ օրը որտե՞ղ էիր:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այդ օրը ես վերադարձա Գյանջա:

ՀԱՐՑ. Գյանջան Բաքվից ինչքա՞ն է հեռու:

ՊԱՏԱՍԽԱՆ. Գնացքով 8-ից 10 ժամ է տևում:

ՀԱՐՑ. Գնացքները կարո՞ղ էին ազատ երթևեկել:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, կարող էին:

ՀԱՐՑ. Մի այսպիսի խառնաշփոթ իրադրության պայմաններում դու Բաքու եկար և մի քիչ անց հեռացար: Սրանից կարո՞ղ եմ եզրակացնել, որ դու շատ կարևոր գործ ունեիր:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես Բաքու էի եկել որպես կառավարական պաշտոնյա, օգնելու համար փախստականներին: Կարծում եմ, որ կառավարական պաշտոնյան պարտավոր է ճամփորդել որևէ քաղաք, կատարել իր պարտականությունները և շուտով վերադառնալ:

ՀԱՐՑ. Վկաներ, որոնք այստեղ ցուցմունքներ տվեցին ավելի վաղ, ասացին, որ մեծ թվով անկանոններ Բաքու մտան մինչև օսմանյան և ազերի բանակների մուտքը: Դու ի՞նչ կարծիք ունես այս մասին:

ՊԱՏԱՍԽԱՆ. Բանակը փակել էր քաղաքի մուտքը անկանոնների համար: Նույնիսկ քաղաքացիներին թույլատրված չէր քաղաք մտնել:

ՀԱՐՑ. Դու Բաքու էիր ուղարկվել փախստականների՞ համար:

ՊԱՏԱՍԽԱՆ. Բաքվում հայ և մուսուլման փախստականներ կային:

ՀԱՐՑ. Այդ փախստականները քաղաքում էին մինչև բանակի հասնելը, ճի՞շտ է:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, այդ փախստականները քաղաքում էին ավելի վաղ ժամանակից:

ՀԱՐՑ. Ո՞րն էր քո առաքելության առանձնահատկությունը:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այդ ժամանակ ես «Ադրբեջանի» տնօրենն էի և փախստականներին սատարող մարմնի ատենապետը:

ՀԱՐՑ. Այդպիսի խառնաշփոթ վիճակում ինչո՞ւ քո առաքելությանը նախապատվություն տրվեց:

ՊԱՏԱՍԽԱՆ. Փախստականները մնացել էին առանց առաջնորդության: Այդ փախստականները կարող էին սովից մեռնել, եթե կառավարությունը շտապ օգնության չգար:

ՀԱՐՑ. Ո՞ր ճամփով եկար Բաքու:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ադրբեջանից ճամփորդեցի Վրաստան: Մոտավորապես այդ ժամանակ բոլշևիկները գրավեցին Վրաստանը: Տրապիզոն հասա շատ այլ փախստականների հետ միասին: Տրապիզոնից Ստամբուլ մեկնեցի օգոստոսի 22-ին:

ՀԱՐՑ. Դու ծովո՞վ ճամփորդեցիր:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, ծովով ճամփորդեցի:

ՀԱՐՑ. «Իլերի» թերթի սեպտեմբերի 2–ի համարում դու մի հոդված ես հրատարակել Ադրբեջանի և Անատոլիայի դեպքերի կապակցությամբ: Թերթը ասում է, որ դու Անատոլիայից Ստամբուլ եկար երկու օր շուտ: Սա ճի՞շտ է:

ՊԱՏԱՍԽԱՆ. Իմ Ստամբուլ հասնելու մասին ես դատարանին բացատրություններ արդեն տվել եմ: Անձնագիրը, որ ես ինձ մոտ ունեմ, նշում է այն օրը, երբ ես այստեղ հասա:

ՀԱՐՑ. Քո հոդվածում ասում ես, որ դրությունը Անատոլիայում բավական լավ է: Դու գրում ես, որ Ստամբուլում հրատարակվող թերթերը ճշմարտությունը չեն ասում, որ դու լիազորված չես ասել մի բան, որը ճիշտ չէ, որ դու Անատոլիայի մասին ավելին գիտես քան այստեղի թերթերը: Հիմա, դու Անատոլիայո՞ւմ էիր, թե՞ ոչ: Եթե էիր, ապա ինչ որ մինչև հիմա ասացիր, ճիշտ չէ: Եթե չէիր, ուրեմն կեղծ ցուցմունք ես տալիս:

ՊԱՏԱՍԽԱՆ. Թույլ տվեք նախագահող դատավորին ասել, որ ես ռազմական դատարանում եմ գտնվում: Երդվել եմ ասելու ճշմարտությունը: Դատարանը ոչ ոքի չպետք է թույլ տա ինձ այս ձևով մեղադրելու: Ինչ վերաբերում է ձեր հարցին, ես ձեզ արդեն ասել եմ, թե ինչ ուղիով եմ ճամփորդել:

Այս պահին Խոսրովյան էֆենդին դատարանի թարգմանչին փոխանցեց «Իլերիի» համարը, որը թափահարում էր իր ձեռքում: Թարգմանիչը, Վարժապետյան էֆենդին, սկսեց դատարանի համար թարգմանել Շեֆիզ Ռուստեմ Բեգովի բացահայտումները, որոնք նա կատարել էր թերթի սեպտեմբերի 2–ի համարում: Պաշտպան փաստաբան Միզի էֆենդին փորձեց Վարժապետյան էֆենդիից հետո թարգմանել հոդվածը, բայց չկարողացավ: Հաջորդաբար, Ռեշադ Դանյալ բեյը, որը Հայդար Ռեֆատ բեյին քարտուղարական ծառայություն էր մատուցում, փորձեց և հաջողվեց: Ամբողջ հոդվածը չթարգմանվեց, բայց դատարանը թարգմանված հատվածը բավարար համարեց:

Խոսրովյան էֆենդի՝

ՀԱՐՑ. Սա նշանակում է, որ հոդվածի հեղինակը, այսինքն՝ վկան, լավ տեղեկացված է: Բայց դեռ երեկ նա ցուցմունք էր տալիս, որ այստեղ հասնելուց հետո նա Ստամբուլը չի թողել: Այս հոդվածը երազի հիման վրա՞ է գրել:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես ասացի, որ Տրապիզոնում էի: Հետո լուրեր ստացա Անատոլիայից եկողներից: «Իլերիի» մեջ իմ ակնարկներից ոչ մեկը սրանց չի հակասում:

ՀԱՐՑ. Ուրեմն, հոդվածը գրեցիր քո լսածի հիման վրա՞:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այն ես գրեցի նրա հիման վրա, ինչ որ տեսա, ինչ որ լսեցի ու կարդացի:

ՀԱՐՑ. Երեկ քո ցուցմունքի մեջ ասացիր, որ Բաքվում հայերի կոտորած տեղի չի ունեցել: Այդ է՞լ ասացիր քո լսածի հիման վրա:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես Բաքվում հայերի կոտորածներ ոչ տեսա, ոչ էլ լսեցի դրանց մասին:

ՀԱՐՑ. Դու Բաքվում մնացիր մեկ օր: Ինչպե՞ս կարող ես պարզապես մեկ օր մնալով հաստատել, թե կոտորածներ չեն եղել:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես Բաքվում մեկ օր մնացի, բայց եթե կոտորածներ եղած լինեին ես դրանց նշանները կտեսնեի:

ՀԱՐՑ. Կարծո՞ւմ ես, որ ազերիները կուզենային ասպատակել Հայաստանը, որպեսզի միանային Թուրքիայի և Անատոլիայի հետ:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ, որոշակիորեն՝ ոչ:

ՀԱՐՑ. Քո հոդվածի մեջ ասում ես, որ Ադրբեջանը դառնալու է թուրքերի քաղաքական կենտրոնը: Միաժամանակ ասում ես, որ Ադրբեջանի ապագան կախված է Անատոլիայից: Հիմա, երբ Հայաստանը կա, ինչպե՞ս կարող է Ադրբեջանը թուրքերի կենտրոնը դառնալ:

ՊԱՏԱՍԽԱՆ. Դա միայն Հայաստանը չէ: Այնտեղ նաև կա Վրաստանը: Ես ուզում եմ ասել, որ *(Ադրբեջանը)* քաղաքական կենտրոն է դառնալու: Անատոլիայի և Ադրբեջանի միջև ուրիշ ազգեր ևս կարող են ապրել:

ՀԱՐՑ. Ջիվանշիրը քեզ վստահո՞ւմ էր:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ, Ջիվանշիրը թողել էր խմբակցությունը և գործում էր Մուսավաթ կուսակցության դեմ: Նա ինչպե՞ս կարող էր ինձ վստահել:

ՀԱՐՑ. Երբ Բաքու հասար, դու պետք է որ գնացքի կայարանի շրջակայքում տեսած լինեիր կախված մարդկանց: Ո՞վ կախեց նրանց և ինչո՞ւ:

ՊԱՏԱՍԽԱՆ. Նրանց ոստիկանությունն էր կախել, որովհետև նրանք գողեր էին:

ՀԱՐՑ. Դա նշանակում է, որ Բաքվում կար մի կառավարություն, որը կարող էր հասարակական կարգը պահպանել:

ՊԱՏԱՍԽԱՆ. Կառավարություն չկար: Ժինվորական հրամանատարություն կար:

ՀԱՐՑ. Տիկին Ջիվանշիրին ճանաչո՞ւմ ես:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո:

ՀԱՐՑ. Նա հարգելի և ազնի՞վ կին է:

ՊԱՏԱՍԽԱՆ. Կասկած կա՞ այդ մասին:

ՀԱՐՑ. Երեկ քո ցուցմունքի մեջ ասացիր, որ Բաքվում հայերի կոտորածներ չեն եղել: Մինչդեռ տիկին Ջիվանշիրն ասաց, որ 3,000 հայեր են կոտորվել:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես տիկին Ջիվանշիրի պատասխանների համար պատասխանատու չեմ: Ես պատասխանատու եմ միայն իմ պատասխանների համար:

ՀԱՐՑ. Ջիվանշիրի եղբայրը նույնպես ասել է, որ հայերի կոտորածներ են տեղի ունեցել:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես Ջիվանշիրի եղբոր ասածների համար ևս պատասխանատու չեմ: Հավանաբար, տիկին Ջիվանշիրը նկատի է ունեցել այն հայերին, ովքեր զոհվեցին պատերազմի ժամանակ:

ՀԱՐՑ. Դու Բաքվում մնացել ես միայն մեկ օր և այստեղ հայտարարում ես, որ իբրև պաշտոնական անձնավորություն ավելի տեղյակ ես, քան Ջիվանշիրի կինը կամ եղբայրը: Տիկին Ջիվանշիրը այդ մասին իմացել է ենվեր և Նուրի փաշաներից:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես չգիտեմ, թե տիկին Ջիվանշիրը այդ տեղեկությունը որտեղից է ստացել: Ես ասում եմ այն, ինչ գիտեմ:

ՀԱՐՑ. Դու ծառայել ես որպես խորհրդատու՝ խորհրդային Ադրբեջանի կառավարության վերջին օրերին: Ինչպե՞ս է, որ այդքան տեղեկացված ես

ամեն ինչից:

ՊԱՏԱՍԽԱՆ. Իբրև լրագրող, բնական է, որ տեղյակ եմ եղել ամեն ինչի մասին:

ՀԱՐՑ. **Ճի՞շտ է, որ Երևանում երկու տարի ապրել ես:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես Երևանում մնացել եմ երկու օր:

ՀԱՐՑ. **Ո՞ր ամսում:**

ՊԱՏԱՍԽԱՆ. 1918-ի փետրվարին:

ՀԱՐՑ. **Եթե Երևանում երկու օր ես մնացել, ինչպե՞ս կարող ես պնդել, թե 30,000 թուրքեր են կոտորվել *(այնտեղ)*:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես Անդրկովկասյան Կոմիտեի անդամ եմ: Դա է պատճառը, որ ամեն ինչից տեղյակ եմ:

Նախագահող դատավորը՝

ՀԱՐՑ. **Ուրեմն, դու ինքդ չե՞ս տեսել:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ, ես լսել եմ: Այդ մասին նշվեց Անդրկովկասյան պառլամենտում:

Խոսրովյան էֆենդին վերադարձավ իր տեղը: Փաստաբան Միզգին տվեց հետևյալ հարցերը.

ՀԱՐՑ. **Դու ասացիր, որ մտերիմ էիր տիկին Ջիվանշիրին . . .**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ, ես ասացի, որ ճանաչում եմ նրան:

ՀԱՐՑ. **Որտե՞ղ ես հանդիպել նրան:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես նրան այստեղ հանդիպեցի:

ՀԱՐՑ. **Տիկին Ջիվանշիրը քեզ ասա՞ց, որ բրիտանացի սպաներ ծերբակալել են իր ամուսնուն:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ, նա հաստատ ոչ մի բան չասաց այդ կապակցությամբ:

ՀԱՐՑ. **Տիկին Ջիվանշիրը քեզ ասա՞ց, որ իր ամուսինը վախենում էր հայերից:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ:

ՀԱՐՑ. **Քո ցուցմունքում ասացիր, որ Ջիվանշիրը հայերի ընկերն էր: Այդքան լավ մարդը ինչո՞ւ պիտի վախենար հայերից:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ամեն մարդ գիտեր, որ խան Խոյսկին և շատ ուրիշներ սպանվեցին Թիֆլիսում և որ դաշնակները խաբեության քաղաքականություն են վարում:

ՀԱՐՑ. **Որտեղի՞ց գիտես, որ այդ անձանց հայերն են սպանել:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Թիֆլիսի ոստիկանությունը մի քանի հայերի ծերբակալեց: Հայերի ցուցմունքների համաձայն, նրանց հայեր էին սպանել:

Նախագահող դատավորը՝

ՀԱՐՑ. **Այդ հայերը դատապարտվեցի՞ն:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ, նրանք չդատապարտվեցին, բայց բանտարկվեցին:

Հայդար Ռիֆատ բեյը վկային տվեց հետևյալ հարցերը.

ՀԱՐՑ. **«Իլերիին» կատարած քո հայտարարությունների համար զղջո՞ւմ ես:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ: Որոշակիորեն ոչ: Ես խոսել եմ մի հարցի մասին, որը գիտեմ

և հասկանում եմ:

ՀԱՐՑ. **Այս սենյակում լսեցինք, որ Ջիվանշիրը ստորագրել էր մի հայտարարություն, որտեղ ասված էր թե. «Հայերը օրենքի պաշտպանությունից դուրս են» և որ «Նրանց ունեցվածքը վերցնելը օրինական է»: Այսպիսի հայտարարություն եղե՞լ է:**

Նախագահող դատավորը՝

«Խաչածև հարցաքննության մեջ դրան վերաբերող հարցադրում չկա»:

ՀԱՐՑ. **Կառավարությունը, որին Ջիվանշիրը միացավ, մուսավաթակա՞ն էր:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ, այն միացյալ կառավարություն էր:

ՀԱՐՑ. **Կարո՞ղ ես դա ապացուցել:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո: Կառավարության անդամների անունները և նրանց կուսակցությունները հրատարակված են այն գրքի մեջ, որ ադրբեջանական Արտաքին գործերի նախարարությունը հրատարակել է 1919-ին:

ՀԱՐՑ. **Ասվեց, որ դու հաստատ Անկարա գնացիր, և քեզ թույլատրված էր** գնալ Անկարա, կամ ուրիշ որևէ տեղ: Որևէ անցագիր չկա՞, որը կարող է ապացուցել դա:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, ես մի անցագիր ունեմ, որը փաստում է, որ օգոստոսի 22-ին ես Ստամբուլից *(դուրս)* ոչ մի տեղ չեմ գնացել:

Հայդար Ռիֆատ բեյը վերադարձավ իր տեղը: Հետո նախագահող դատավորը վկային տվեց հետևյալ հարցերը.

ՀԱՐՑ. **Քո ցուցմունքից պարզ է դառնում, որ քո թերթը սկսել է հրատարակվել օգոստոսի վերջին Գյանջայում, ճի՞շտ է:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո:

ՀԱՐՑ. **Քո թերթը օրաթե՞րթ է:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Երբ Գյանջայում էինք, հրատարակվում էր շաբաթը մեկ անգամ: Գյանջայից Բաքու փոխադրվելիս որոշ ժամանակ հրատարակությունը դադարեց: Հետո Բաքվում դարձավ օրաթերթ:

ՀԱՐՑ. **Գյանջայում հրատարակված վերջին համարը ո՞րն էր:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես վստահ չեմ, բայց պետք է չորրորդը լիներ, որովհետև Գյանջայում ընդամենը չորս համար հրատարակվեց:

ՀԱՐՑ. **Ե՞րբ և որտե՞ղ հրատարակվեց հինգերորդ համարը:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այն հրատարակվեց Բաքվում, հոկտեմբեր ամսին, բայց հրատարակման ճշգրիտ օրը չեմ հիշում:

ՀԱՐՑ. **Գյանջա այցելելուց հետո ե՞րբ վերադարձար Բաքու:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Երեք կամ չորս օր հետո:

ՀԱՐՑ. **Հետո վերսկսեցի՞ր թերթի հրատարակումը:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Որոշ ժամանակ ծախսեցինք մի վարչական շենք գտնելու և այլ գործերի վրա: Հետո ես սկսեցի թերթի հրատարակությունը:

ՀԱՐՑ. **Թերթի բովանդակությունը միշտ նայո՞ւմ էիր:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ, ես գործընկերներ ունեի, որոնք դա անում էին:

ՎԵՑԵՐՈՐԴ ՎԿԱ

Մեղադրող կողմի վկա Ահմեդ Համզի Կարախազադե բեյը, երդվելուց հետո, ի պատասխան մեղադրող կողմի փաստաբանի հարցերի, ասաց.

-Անունս Ահմեդ Համզի Կարախազադե է: Ես թուք լրագրող եմ: Նախկինում եղել եմ Ադրբեջանի Ազգային ժողովի անդամ: Բնակվում եմ Ստամբուլում, Մահմուդիյե բուլվար, թիվ 27: Ես Չիվանշիրին շատ լավ գիտեի: Կարող եմ ձեզ բոլոր տեղեկությունները տալ նրա կյանքի մասին: Մի ռուսական համալսարան ավարտելուց հետո, Չիվանշիրը Գերմանիայում մասնագիտանում էր ինժեներական ուղղությամբ: Նա Ռուսաստանում մի գործարան էր ղեկավարում: Քաղաքական կյանք մտավ, երբ հիմնվեց Կերենսկու կառավարությունը: Մոտավորապես այդ նույն ժամանակ կազմավորվեց Անդկովկասյան Միացյալ Հանրապետությունը: Նա այդ ժամանակ շատ արժեքավոր գործ էր կատարում ազգային հարցերում:

Նա ուզում էր, որ հայերը և թուրքերը հավասար իրավիճակ ունենան: Նա այդ ժամանակ, այս հարցերով զբաղվող մի քանի խորհուրդների կա՛մ անդամ էր, կա՛մ ղեկավարը: Նա միշտ շատ նպատակային, ջանասեր մարդ է եղել: Մի որոշ ժամանակ, 1917-ին, նա միացավ Մուսավաթ կուսակցությանը, բայց երկար չմնաց ու հրաժարվեց: Չիվանշիրը պիտի Ռուսական Ազգային ժողովի պատգամավոր ընտրվեր, որովհետև լավ ուսում ուներ և շատ հանրաճանաչ էր: Բայց Ադրբեջանում հայերի և մուսուլմանների միջև հողային վեճեր կային: Եվ որովհետև երկու կողմն էլ Չիվանշիրին վստահում էր, մտածեցին, որ հարմար կլիներ, եթե նա այդ ավելի կարևոր խնդրով զբաղվի: Միևնույն ժամանակ, Կերենսկին տապալված էր և բոլշևիկները վերցրել էին իշխանությունը: Այս սարսափելի հարվածը զգացվեց հարավային Կովկասում: Հարավային Կովկասի բոլոր ժողովուրդները միացան և կազմեցին մի կառավարություն, որը կոչվեց Անդրկովկասյան *(Միացյալ Հանրապետություն)* : Իրենց Ռուսաստանից անկախ հռչակեցին և ազգային ժողով ընտրեցին: Երբ 1919-ին կազմվեց Ադրբեջանի կառավարությունը, Չիվանշիրը դարձավ Ներքին գործերի նախարար: Ես այդ ժամանակ Գյանջայում էի:

Մուսավաթ կուսակցությունը կողմ էր ապակենտրոնացման և ազատության: Դրան հակառակ, Միություն և Առաջադիմություն կուսակցությունը կենտրոնամետ կուսակցություն էր և կողմնակից էր տարածքների միավորման: Առաջինը 15 տարվա կյանք ունեցավ, երկրորդը՝ 20 տարվա: Ես Մուսավաթ կուսակցության անդամ էի:

Երբ ես Ղարաբաղում էի (որտեղ բնակչության 60 տոկոսը մուսուլման է, իսկ 40 տոկոսը հայ), տեսա որ շատ մուսուլմանական գյուղեր ոչնչացվում էին հայերի կողմից: Գյանջայում հայերի վրա ոչ մեկը չէր հարձակվում: Այնտեղ ապրող մոտ 20,000 հայերը հաստատում են, որ կառավարությունը նրանց հետ լավ էր վարվում:

Բաքվում երկու մեծ շենքեր կային: Մեկն Իսմայիլիա շենքն էր, որը մուսուլմաններին էր պատկանում: Ազգային ժողովն իր առաջին ժողովը այնտեղ գումարեց: Մյուսը Միրզաբեկյան շենքն էր, որը հայերին էր պատկանում: Մարտ ամսվա դեպքերի ժամանակ հայերը ոչնչացրեցին Իսմայիլիա շենքը: Դրան հակառակ, Միրզաբեկյան շենքը այսօր դեռ կանգուն է:

Ինչ վերաբերում է Ադրբեջանի կառավարությանը, այն օրվանից, որ բոլշևիկները գրավեցին *(Ադրբեջանը)*, այն դադարեց գոյություն ունենալուց: Կարմիր բանակը գրավեց Ադրբեջանը և վերջ տվեց ազերի պետությանը՝ հայերի բարձրաց-

ած ապստամբության հետևանքով:

Չիվանշիրի կողմից հրապարակված հայտարարությունը ես տեսել ու կարդացել եմ: Հայտարարությունն ասում էր, որ ամեն մարդ հավասար է և պիտի իրեն պահի որպես քաղաքացի, բայց ով որ խանգարի հասարակական կարգը, պիտի խստորեն պատժվի: Հայ եպիսկոպոսը ազերի կառավարությանը շնորհակալություն հայտնեց սեպտեմբերյան դեպքերի համար և իր երախտիքը հայտնեց քրիստոնյաների և հայերի նկատմամբ լավ վերաբերմունքի համար:

Վկայի ցուցմունքը ավարտվելուց հետո նախագահող դատավորը կարդաց արձանագրությունը: Հետո պաշտպան փաստաբան Խոսրովյան էֆենդին սկսեց վկայի խաչաձև հարցաքննությունը.

<u>ՊԱՏԱՍԽԱՆ.</u> Ես թրքական և ռուսական հպատակություն ունեմ: «Ադրբեջան» օրաթերթի գլխավոր խմբագիրն էի: Թերթը սկզբնապես Գյանջայում էր հրատարակվում: Հետո՝ 1918-ին, տեղափոխվեց Բաքու: Թերթում գրել սկսեցի Բաքու տեղափոխվելուց երեք ամիս հետո, որովհետև մինչ այդ հիվանդ էի: Թերթը կանոնավոր լույս չէր տեսնում հրատարակչական նյութերի պակասի պատճառով: Թերթի սեփականատերը Շվֆիդ բեյն էր:

Երբ բրիտանացիները Բաքու եկան, բրիտանացի հրամանատարը ընդունեց Չիվանշիրին: Այս մասին վստահ եմ, որովհետև երբ գեներալ Թոմսոնը Բաքու հասավ, նա բոլոր նախարարներին ընդունեց: Իմ գործընկերներից լսել եմ, որ Չիվանշիրը նույնպես հանդիպում ունեցավ բրիտանական հրամանատարի հետ:

<u>ՀԱՐՑ</u> **Դու ասացիր, որ պառլամենտում *(հավանաբար՝ Անդրկովկասյան)* կառավարության քննարկումներ տեղի ունեցան Երևանում մուսուլմանների սպանությունների մասին: Պառլամենտի անդամներից քանի՞սն էին մուսուլման և ի՞նչ արդյունք ունեցավ այդ քննարկումը:**

<u>ՊԱՏԱՍԽԱՆ.</u> Պառլամենտում կային 40 մուսուլման և 42 հայեր, նաև 38, կամ 39 վրացիներ: Քննարկումների արդյունքում որոշվեց 15 միլիոն ռուբլի հատկացնել վայրագություններից տուժած մուսուլմաններին օգնելու համար: Որոշումը կոչ էր անում վերջ տալ կոտորածներին և օժանդակություն ցույց տալ մուսուլմաններին: Ուսումնասիրող հանձնաժողովի՝ այս նյութի շուրջ կազմած զեկուցագիրը կարդացվեց պառլամենտում: Մուսուլման անդամները ելույթներ ունեցան: Հայ մտավորականները մեղադրվեցին: Վրացիները սրա հետ համաձայն եղան: Մի միացյալ որոշում կազմվեց, որպեսզի կառավարությունը պատշաճ միջոցներ գտնի անկանոնություններին վերջ տալու համար: Մոտավորապես 15,000 ռուբլի ուղարկվեց Երևանի մուսուլմաններին, որոնք սպասում էին, որ վերջ կգտնեն իրենց նկատմամբ կիրառվող հետապնդումները և անարդարությունները:

Հետո վկան Հայդար Ռիֆատ բեյի հարցին պատասխանեց հետևյալ կերպ.

<u>ՊԱՏԱՍԽԱՆ.</u> Գլխավոր խմբագիրը պետք չէ ընդգրկվի թերթի վարչական գործերի մեջ: Գեներալ Թոմսոնը, երբ Բաքու մտավ, ճանաչեց ադրբեջանական կառավարությունը: Ես տեսա և կարդացի այս նյութի շուրջ գեներալ Թոմսոնի կողմից ստորագրված հայտարարությունը: Միաժամանակ, Խան Խոյսկին այդ հայտարարությունը կարդաց պառլամենտում: Հայտարարությունը նաև պատերին էր փակցված:

ՅՈԹԵՐՈՐԴ ՎԿԱ

Սեմենդեր բեյը, մի ադրբեջանցի ուսանող, երդվելուց հետո պատասխանեց դատախազի հարցերին.

-Անունս Սեմենդեր է: Ես ազերի թուրք եմ: 1918-ի մարտին Բաքվում եմ եղել: Բաքվից դուրս եմ եկել մոտ երկուս ու կես ամիս առաջ, ուղիղ Ստամբուլ գալու համար: Այստեղ մնում եմ Սիրքեչիում, Ռեշադիե պանդոկում:

Երբ ես Բաքվում էի, մարտ ամսին տեսա, որ հայերը սպանում էին մուսուլմաններին: Բաքվի արևմուտքում, Չեմբերքենդի թաղամասում, հայերը սպանում էին ոչ միայն մուսուլման տղամարդկանց, այլև կանանց ու երեխաներին: Որովհետև հայերը վերահսկում էին բոլոր զենքերն ու հրանոթները, մուսուլմանները անկարող էին պաշտպանվել: Հայերը բռնաբարում էին մուսուլման կանանց: Ես դա իմ սեփական աչքերով եմ տեսել: Շատ կանանց տանում էին Բոլշիվարոդա թաղամասը և այնտեղ բռնաբարում: Որովհետև իմ ապրած թաղամասը ավելի բարձր դիրք ուներ, կարողանում էի տեսնել, թե ինչ է կատարվում քաղաքում: Օրինակ՝ իմ սեփական աչքերով տեսա, թե ինչպես 18-ից 40 տարեկան կանայք և աղջիկներ բռնաբարվում էին Մայլով թատրոնում և Սինեմա Ռեկորդում: Ես Շեմակա փողոցում տեսա մի հղի կին սվինահարվելիս: Շատ կանայք սպանվում էին իրենց տներում: Մորաքույրս խոսել է մի կնոջ հետ, որի վրա հարձակվել են այդ ձևով:

Ճնշում և անարդարություն էր գործադրվում մուսուլման մտավորականների նկատմամբ, բայց ես չեմ տեսել, որ նրանց սպանեն:

Թրքական բանակը սեպտեմբերին քաղաք մտավ կռվով: Բանակը երկու հայտարարություն հրատարակեց, որոնք կոչ էին անում ժողովրդին հանձնել քաղաքը: Այդ հայտարարությունը կարդացել եմ «Վպերյոդ» թերթում, որը հրատարակվում էր դաշնակցական միության կողմից: Հայտարարությունը ստորագրված էր Մուրսել փաշայի կողմից: Այնտեղ ասված էր, որ եթե ժողովուրդը հանձնվի, չի տուժի: Ես այդ հայտարարությունը կարդացի քաղաքը գրավվելուց երկու օր առաջ: Այն ժամանակ քաղաքը վերահսկվում էր հայերի, այսինքն՝ դաշնակցական կուսակցության կողմից:

Ես տեսա թրքական բանակը քաղաք մտնելիս: Քրդերը բանակի առաջին գծում էին, բայց բանակը նրանց թույլ չտվեց քաղաք մտնել: Թրքական կանոնավոր բանակը քաղաք մտավ ավելի ուշ: Սպաները հայտարարությունը փակցրին պատերին: Այս հայտարարությունը ստորագրված էր Նուրի փաշայի կողմից: Այնտեղ ասված էր, որ թրքական բանակը վերցրել է քաղաքը և որ հասարակական կարգ ու կանոնը պիտի վերականգնվի: Պահանջվում էր, որ բոլոր զենք ունեցողներն այն հանձնեն կառավարությանը: Հրամանատարները և սպայական կազմը առաջին օրը հետ մնացին և քաղաք չմտան: Ինձ զենքերը հավաքելու պարտականություն էր տրված: Դրա շնորհիվ իմ սեփական աչքերով տեսա, որ մարդիկ բոլոր զենքերը հանձնեցին: Առաջին օրը, երբ զինվորները քաղաք մտան, քաղաքում անտերություն էր, որովհետև կառավարություն չկար:

Երկրորդ օրը, ոստիկանապետ Բահաեդդին բեյը, որ թրքական բանակի հետ էր, քաղաք մտավ և վերականգնեց ապահովությունը: Երկրորդ օրը ես քայլում էի քաղաքի փողոցներով: Թելքով փողոցի վրա տեսա երեք զինված գյուղացիներ: Նրանք մի հայի տուն էին մտնում: Այդ պահին Բահաեդդին բեյը անցնում էր ինքնաշարժով: Նա գյուղացիներին հարցրեց. «Ինչո՞ւ եք զենք կրում: Նուրի փաշայի հրամանին տեղյակ չե՞ք»: Գյուղացիներն ասացին, որ նրանք չեն իմացել այդ

կարգի մասին: *(Բահաեդդին փաշայի)* օգնականը նրանց ձեռքերը կապեց, իսկ Բահաեդդին փաշան կրակեց նրանց վրա իր ատրճանակով: Հետո ես տեսա երկու մարդկանց երկաթուղու կայարանում կախված: Իրենց կրծքին փակցված ծանուցումից իմացա, որ այդ մուսուլմաններին կախել են գողության համար: Երբ Բարեքետ Պարկ հասա, այնտեղ տեսա մի ուրիշ մուսուլման կախված: Բահաեդդին բեյը Միխայլովսկի փողոցի վրա տեսնում է մի թուրք զինվոր ձեռքին գողացված մի զույգ կոշիկ: Նրան հարցնելուց հետո, թե որտեղի՞ց են այդ կոշիկները, նրան կախել է տալիս Մետրոպոլ հյուրանոցի առջև: Երրորդ օրը, երբ Բահաեդդին բեյը Կարգովա փողոցում տեսնում է մի թուրք զինվոր ձեռքին մի կապոց, հրամայում է հայտնել, թե որտեղի՞ց է այդ կապոցը: Երբ զինվորը խոստովանում է, որ այն գողացված է, անմիջապես նրան կախել է տալիս հեռագրի սյունից: Այդ մարդը սերժանտ Ալին էր: Բահաեդդին բեյը մի թուղթ է խնդրում և թրքերենով մի քանի բան գրում: Նա հանձնարարում է, որ ներքևում գրեն հայերեն և ռուսերեն թարգմանությունը, և թուղթը փակցնել է տալիս զինվորի կրծքին: Թղթի վրա գրված էր. «Այս զինվորը կռվել է Դարդանելում և իր ազգի պարծանքը շահել: Նա գնացել է Գալիցիա և պատվով վերադարձել: Այժմ նա կախված է, որովհետև մի հայի տնից մի կապոց հագուստեղեն է գողացել»: Քսանի հասնող կախված մարդկանց եմ տեսել իմ սեփական աչքերով:

***ՀԱՐՑ.* Գիտե՞ս դեպքեր, երբ մուսուլմանները պաշտպանել են հայերին:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, ես ինքս Հովհաննիսյան ազգանունով մի հայ մտավորականի պաշտպանել եմ: Ուրիշ շատ մուսուլմաններ էլ են հայերին պաշտպանել:

***ՀԱՐՑ.* Դու որևէ դեպք գիտե՞ս, որ հայերը 1918–ի մարտին մուսուլմաններին պաշտպանեին:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ, չգիտեմ, ամեն պարագայի, դա չէր էլ սպասվում:

***ՀԱՐՑ.* Չիվանշիրին գիտեի՞ր:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, Չիվանշիրին գիտեի: Նա լավ ընտանիքից էր, Գերմանիայում ուսում առած շատ լավ ինժեներ էր: Բոլոր ազգերի մարդիկ Չիվանշիրից գոհ էին: Բայց տեղյակ չեմ, հայերը Չիվանշիրից գո՞հ էին, թե՞ ոչ: Ինչ վերաբերում է իր քաղաքական հայացքներին, ապա Չիվանշիրը հետապնդում էր տարբեր ազգությունների միջև գոյություն ունեցող վեճերը լուծելու, բոլորը միասին աշխատելու և հավասար իրավունքներով միմյանց հետ յոլա գնալու քաղաքականությունը:

Հետո Խոսրովյան էֆենդին տվեց հետևյալ հարցերը.

***ՀԱՐՑ.* Քեզ ո՞վ ասաց, որ գաս այստեղ:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես եկել եմ որպես վկա, որովհետև լսեցի, որ այստեղ զինվորական դատ կա և որ վկաների կարիք ունեն:

***ՀԱՐՑ.* Ե՞րբ ծանոթացար Բահաեդդին բեյի հետ:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես նրան հանդիպեցի թրքական բանակը Բաքու մտնելուց հետո:

***ՀԱՐՑ.* Անատոլիայում իր կատարած կոտորածներից հետո Բահաեդդին բեյը Բաքու գնա՞ց:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես կարիք չունեմ իմանալու, թե Բահաեդդին բեյը ինչ արեց: Ես Բահաեդդին բեյին միայն Բաքվում հանդիպեցի:

***ՀԱՐՑ.* Ո՞ւմ հրամանատարության տակ էր Բահաեդդին բեյը:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Բահաեդդին բեյը ոստիկանապետն էր և զեկուցում էր զինվորա-

կան կառավարությանը:

ՀԱՐՑ. Դու հայերին սիրո՞ւմ ես:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, սիրում եմ: Մենք միշտ ուզեցել ենք խաղաղ ապրել հայերի հետ:

ՀԱՐՑ. Հայերին հետապնդելու և չարչարելու համար երբևիցե դատապարտվե՞լ ես:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ:

ՀԱՐՑ. Ի՞նչ զբաղմունք ունես:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես ուսանող եմ:

ՀԱՐՑ. Ի՞նչ ես ուսանում:

ՊԱՏԱՍԽԱՆ. Երկրաբանության Ակադեմիայում եմ սովորում:

ՀԱՐՑ. Ի՞նչ է երկրաբանությունը:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես գիտեմ «Ջեոլոջի» ինչ է նշանակում:

ՀԱՐՑ. Ես կուզենայի քեզ քննել:

ՊԱՏԱՍԽԱՆ. Դուք իրավունք չունեք ինձ քննելու:

ՀԱՐՑ. Ինչո՞ւ Ստամբուլ եկար:

ՊԱՏԱՍԽԱՆ. Որպեսզի գնամ Եվրոպա և այնտեղ սովորեմ:

ՀԱՐՑ. Դու դեռ պնդո՞ւմ ես, որ 1918–ի մարտին հայերը մուսուլմանների սպանեցին:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, պնդում եմ: 1918-ի մարտին հայերը մուսուլմանների սպանեցին:

ՀԱՐՑ. Հայերեն խոսո՞ւմ ես:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ:

ՀԱՐՑ. Այդ դեպքում ինչպե՞ս կարող ես «Վպերյոդ» օրաթերթի մասին խոսել:

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայկական թերթը ռուսերեն լեզվով էր հրատարակվում: «Վպերյոդը» ռուսերեն էր հրատարակվում:

ՀԱՐՑ. Դու ասացիր, որ հայերը մուսուլմանների սպանեցին և որ դա քո աչքերով տեսար: Որևէ կապ ունե՞ս Բաքվի իրանցիների հետ:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, Բաքվի իրանցիների հետ կապեր ունեմ:

ՀԱՐՑ. Եթե Բաքվի իրանական հյուպատոսը գա այստեղ և ասի, որ հայերը մուսուլմաններին պաշտպանում էին, դու դրան կհավատա՞ս:

ՊԱՏԱՍԽԱՆ. Իրանի հյուպատոսը կարող է այդպես ասել, բայց դա ինձ չի վերաբերում:

Խոսրովյան էֆենդին մի թերթ հանեց և ուզեց այն կարդալ: Նախագահող դատավորը թույլ չտվեց, ասելով, որ դատարանը չի կարող նման տպված նյութերի ընթերցումը լսել:

Նախագահող դատավորն ասաց.

- Ասացեք վկային, որ ինչ որ *(Խոսրովյան էֆենդին)* ուզում է կարդալ, Իրանի հյուպատոսի *(Բաքվում)* գրած հոդվածն է: Հոդվածը հրապարակված է եղել *(1918–ի /* ապրիլի 5-ին:

Խոսրովյան էֆենդին ասաց.

-Այս թերթում, այս նյութի շուրջ 13 հեռագրեր կան: Դրանք պետք է կարդացվեն:

Թարգմանիչը կարդաց թերթը.

«Բաքվում Իրանի հյուպատոսին.

Հայերը պաշտպանեցին շուրջ 2,690 մուսուլմանների: Նրանց մեջ կային կանայք և երեխաներ: Հայկական Ազգային Խորհուրդը նրանց պաշտպանեց»:

Թարգմանիչը՝

-Պարոն, այս հեռագիրն ուղարկված է Բաքվում Իրանի հյուպատոսարան և Թիֆլիս՝ Հայկական Ազգային Խորհուրդ:

Վկան՝

-Ես պատասխանատու չեմ Իրանի հյուպատոսարանի խորհրդականի ասածի համար:

Խոսրովյան էֆենդին՝

ՀԱՐՑ. Ընդունո՞ւմ եք, որ հայերը պաշտպանել են մուսուլմաններին:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ, ես այդպիսի բան չլսեցի:

ՀԱՐՑ. Դու ասացիր, որ Մայլով թատրոնի մեջ շատ մուսուլմաններ կային: Ի՞նչ պատահեց նրանց հետ:

ՊԱՏԱՍԽԱՆ. Զինադադարից հետո նրանց բաց թողեցին:

ՀԱՐՑ. Ո՞ր զինադադարի:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես նկատի ունեմ այն զինադադարը, որը կնքվեց մուսուլմանների և սովետների միջև:

ՀԱՐՑ. Ասա ինձ ճշմարտությունը, Ջիվանշիրի կյանքը փրկողը մի հայ չէ՞ր:

ՊԱՏԱՍԽԱՆ. Երդվում եմ, չգիտեմ:

ՀԱՐՑ. Ի՞նչ կասես, եթե ասեմ այն Հայի անունը, ով փրկել է Ջիվանշիրի կյանքը: Շավանյան անունը քեզ ծանո՞թ է:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ, չգիտեմ:

ՀԱՐՑ. Մի քիչ առաջ դու հիշեցիր մի զինադադար, որը կնքվել էր մուսուլմանների և սովետների միջև: Ո՞վ էր այն մուսուլմանը, ով ստորագրեց զինադադարը: Ես քեզ կարող եմ ասել, որ այդ ստորագրողը Ջիվանշիրն էր:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես չգիտեմ:

ՀԱՐՑ. Ի՞նչ կասես, եթե քեզ ցույց տամ մի թերթ, որը զեկուցում է, որ Ջիվանշիրն է ստորագրել զինադադարի պայմանագիրը:

ՊԱՏԱՍԽԱՆ. Կարող է պատահել, բայց չէ՞ որ ես պարտավոր եմ ասել միայն այն, ինչ տեսել եմ:

ՀԱՐՑ. Խնդրում եմ իմ հարցին ուղիղ պատասխանես: Դու ճանաչո՞ւմ ես մի մուսուլման բժիշկ, որը բարձր դիրք էր զբաղեցնում:

ՊԱՏԱՍԽԱՆ. Սովետների մեջ բարձր դիրք զբաղեցնող մուսուլման չկար: Ես մի մուսուլման գիտեմ, որն իրենց հետ էր, բայց բարձր դիրք չէր զբաղեցնում: Այդ անձը դոկտոր Նարիման Նարիմանովն էր: Այն ժամանակ, երբ սովետները իշխա-

նության գլուխ էին, նա գնաց Մոսկվա, որովհետև դժգոհ էր սովետների և բոլշևիկների քաղաքականությունից: Երբ Նարիմանովը խորհրդի կազմում էր, ուժը և իշխանությունը հայերի ձեռքում էր:

ՀԱՐՑ. Դու պետք է պատասխանես իմ հարցերին. դու Նարիմանովի մասին շատ բան գիտես: Այդ մարդն ո՞ւր է հիմա:

ՊԱՏԱՍԽԱՆ. Նա Բաքվում է:

ՀԱՐՑ. Նա ի՞նչ է անում:

ՊԱՏԱՍԽԱՆ. Նա Սովետական Ադրբեջանի նախագահն է:

ՀԱՐՑ. Դու ասացիր, որ այս նախագահն էր, որ մուսուլմանների դեմ պայքարեց մարտ ամսին, այդպես չէ՞:

Նախագահող դատավորը՝

-Ոչ, վկան այդպիսի բան չասաց:

Դատախազը՝

-Ոչ, չասաց:

ՀԱՐՑ. Երեկ դու ասացիր, որ մարտ ամսին կռիվ էր գնում մուսուլմանների և բոլշևիկների միջև, ճի՞շտ է:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո:

ՀԱՐՑ. Ուրեմն երկու կողմն էլ զինված էին, չէ՞:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ, մուսուլմանները այն ժամանակ զինված չէին:

ՀԱՐՑ. Կարո՞ղ է զինադադար կնքվել զինված և չզինված կողմերի միջև: Ես գիտեմ զինադադարի բոլոր բաղկացուցիչները: Անզեն կողմի հետ զինադադար չի կարող կնքվել:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես այս առարկության հետ համաձայն չեմ: Բոլշևիկները փորձում էին իշխանությունը վերցնել: Այդ անելու համար նրանք պետք է կռվեին տեղական ուժերի դեմ: Քանի որ Բաքուն Ադրբեջանին է պատկանում, մուսուլմանները, բնականաբար, փորձում էին դիմադրել և կռվել բոլշևիկների դեմ իրենց անկախությունը ապահովելու համար: Ամեն պարագայի, բոլշևիկյան ուժերը այն ժամանակ այնքան մեծ չէին: Մի քանի հոգի, որոնք ներկայացան իբրև Հայկական ազգային խորհրդի անդամներ, եկան Իսմայիլիայի շենք հայտնելու համար, որ հայերը անկախ են մնալու քաղաքի համար սպասվող մարտերում: Մենք կռվին պատրաստվեցինք հենվելով այդ երաշխավորությունների վրա: Մուսուլմանները գոհ էին, որ հայերը անկախ են մնալու: Հայերը նաև վերահսկում էին զենքը: Հայերը Արևմտյան Ռուսաստանից եկել էին զգալի քանակությամբ զենքով ու զինամթերքով: Հետո կռիվը սկսվեց: Նավատորմը բոլշևիկների ունեցած ամենամեծ ուժն էր: Ռմբակոծումը սկսվեց: Զեկույցներ եկան այն մասին, որ հայերը եզրերում անցել են բոլշևիկների կողմը: Մենք փողոցներում բարիկադներ կազմեցինք նրանցից պաշտպանվելու համար: Հայերը արդեն բարիկադներ էին կանգնեցրել: Հայերը մեր վրա կրակեցին և շատ մուսուլմանների սպանեցին: Հայերը իրենց տներում գնդացիրներ էին տեղադրել: Փաստորեն, Նարան հիվանդանոցում տեղադրված գնդացիրներով նրանք հազարավորների սպանեցին:

ՀԱՐՑ. Մուսուլմանները զենքը որտեղի՞ց ստացան:

ՊԱՏԱՍԽԱՆ. Մուսուլմաններն իրենց զենքը միայն գյուղական բնակչությունից ստացան: Ամեն գյուղ նվազագույնը երկու, կամ երեք զենք ուներ:

ՀԱՐՑ. Ուրեմն, Բաքվի մուսուլմանների տներում զենք չկա՞ր:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ, դա չեմ ուզում ասել: Բաքվի մուսուլմանների տներում զենք եղել է:

ՀԱՐՑ. Հետո գյուղացիներն էին, որ մուսուլմաններին զենք տվեցին, այդպես է, չէ՞:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո: Պետք եղած քանակությամբ զենքը գյուղերից հայթայթվեց, որովհետև քաղաքում եղած զենքը բավարար չէր:

ՀԱՐՑ. Այն հարցի պատասխանը, որ հիմա պիտի տամ, ամեն մարդ գիտե: Այդ պատճառով ուզում եմ, որ կանոնավոր պատասխանես: Դու ասացիր, որ հայերը պատվիրակություն ուղարկեցին թաթարներին հայտարարելու համար, որ պատերազմում չեզոք են մնալու: Ի՞նչ էր այն մուսուլմանի անունը, որ խոսեց պատվիրակության հետ և ո՞վ էր նա:

ՊԱՏԱՍԽԱՆ. Անձը, որ խոսեց պատվիրակության հետ Թոփչուբաշիև Ալի Մերդան բեյն էր: Նա մուսուլմանների Ազգային խորհրդի նախագահն էր:

ՀԱՐՑ. Դու ասացիր, որ Ռուսաստանից եկած հայերը զինված էին: Ինչպե՞ս է հնարավոր, որ նրանք հրետանի ունենային:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո: Նրանք ռուսական ճակատից գնել էին:

ՀԱՐՑ. Կռվողները զինվորնե՞ր էին:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո:

ՀԱՐՑ. Երեկ դու ասացիր, որ տեսել ես մի կնոջ մարմին, որը սպանված է եղել երեք օր առաջ:

Նախագահող դատավորը՝

-Ոչ, նա չասաց «երեք օր առաջ», նա ասաց «նրան տեսա կռիվների երրորդ օրը»:

Խոսրովյան էֆենդին՝

ՀԱՐՑ. Ներեցեք ինձ, հարգելի դատավոր, ես սխալ թույլ տվեցի: Ո՞վ էր սպանել այն կնոջը, որի մարմինը դու տեսար:

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայերը:

ՀԱՐՑ. Ինչպե՞ս կարող ես ասել, որ հայերը սպանեցին, առանց տեսած լինելու:

ՊԱՏԱՍԽԱՆ. Որովհետև սպանվածի դուստրն ինձ ասաց:

Նախագահող դատավորը՝

-Առաջ անցնենք:

ՀԱՐՑ. Եկեք հիմա խոսենք սեպտեմբերի մասին: Հաս Զեյնալ Աբիդինին ճանաչո՞ւմ ես:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, ճանաչում եմ:

ՀԱՐՑ. Այդ մարդը մուսուլմա՞ն է, թե՞ հրեա:

ՊԱՏԱՍԽԱՆ. Նա մուսուլման է:

ՀԱՐՑ. Նա հարո՞ւստ է:

ՊԱՏԱՍԽԱՆ. Նա մուսուլմանների մեջ երկրորդ ամենահարուստ մարդն է:

ՀԱՐՑ. **Այդ մարդը Ադրբեջանի գյուղերը մի գրություն է ուղարկել, ասելով, որ Բաքվում ամեն ինչ լավ է, որ կռիվը մուսուլմանների և հայերի միջև չէր, որ մուսուլմանները հայերին ոչ մի վնաս չեն հասցրել, որ հայերը մոտավորապես 14,000 մուսուլմանների են փրկել, որ իրանական հյուպատոսությունը վկայում է դա, և որ խաղաղությունն ու ապահովությունը վերականգնված են: Այս գրության ամսաթիվը ապրիլ 1-ն է *(1918)*: Հիմա, խնդրում եմ ասել ճշմարտությունը: Քո պատասխանը էական ազդեցություն պիտի ունենա պաշտպանյալի համար:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես երդվել եմ Ղուրանի վրա: Ամեն դեպքում, ես ընդհանրապես չեմ ստում: Ես կասեմ ինչ որ գիտեմ:

ՀԱՐՑ. **Ուրեմն, խնդրում եմ ասա, այս հեռագրի մասին գիտե՞ս:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո: Ես լսել եմ, որ Իրանի հյուպատոսարանը կոտորածներից հետո ասաց, որ հայերը շատ մուսուլմանների փրկեցին: Այն մուսուլմանները, որոնք փրկվեցին, ազգությամբ ազերիներ չէին, նրանք իրանցի մուսուլմաններ էին: Ես ուրիշ տեղեկություն չունեմ:

ՀԱՐՑ. **Բաքվի հայերը վախեցե՞լ էին, երբ 1918–ի սեպտեմբերին թրքական բանակը քաղաք մտավ:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, որովհետև կարծում էին, որ մուսուլմանները հակաքրիստոնյաներ են և պիտի սպանեն նրանց: Այդ վախը միայն մեկ օր տևեց: Հետո փարատվեց:

ՀԱՐՑ. **Դու ասացիր, որ մի հայ մարդու ես փրկել: Քանի՞ օր պահեցիր այդ մարդուն:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Երկու օր:

ՀԱՐՑ. **Մուսուլմանները հայկական ունեցվածք թալանեցին, այնպես չէ՞:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, առաջին օրը:

ՀԱՐՑ. **Ի՞նչ ես կարծում, ի՞նչ արժեք կունենա հայերից կողոպտված ունեցվածքը: Կարո՞ղ ես մի գնահատում տալ:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես չգիտեմ, բայց առաջին օրը շատ խանութներ թալանվեցին:

ՀԱՐՑ. **Ի՞նչ կասեիր, եթե բրիտանական հրամանատարը զեկուցեր, որ 17,000 հայերի ունեցվածք է թալանվել:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այդ մասին որևէ տեղեկություն չունեմ:

Խոսրովյան էֆենդին վկային մի փաստաթուղթ տվեց, որը ստորագրված էր Միացյալ Ուժերի վերահսկողական մարմնի կողմից: Վկան այն կարդաց: Խոսրովյան էֆենդին հարցրեց.

ՀԱՐՑ. **Խնդում եմ ասա: Բաքվի հայերը սպանվել և թալանվե՞լ են:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ, երդվում եմ, որ կոտորած չի եղել:

ՀԱՐՑ. **Իսկ ի՞նչ կասես թալանի մասին:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, որոշ ծավալի թալան եղել է առաջին օրը, տիրող անարխիայի պատճառով:

ՀԱՐՑ. **Բահաեդդին բեյի շրջագայության ժամանակ իրեն ուղեկցո՞ւմ էիր:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ: Իրեն հանդիպում էի փողոցում:

ՀԱՐՑ. **Բահաեդդին բեյը այն ժամանակ ոստիկանապե՞տն էր:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո:

ՀԱՐՑ. **Նա երեք գյուղացիների կրակեց զենք կրելու պատճառով, այդպե՞ս է:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, ես այդ տեսա:

ՀԱՐՑ. **Ամուսնացա՞ծ ես:**

*ՊԱՏԱՍԽԱՆ.*Ոչ:

ՀԱՐՑ. **Հարազատներ ունե՞ս:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո: Ես քույր ունեմ, մի եղբայր և մայրս կա:

ՀԱՐՑ. **Քո ազգակիցները սպանել են պաշտպանյալի ամբողջ ընտանիքը: Հայերը Բաքվով շահագրգռված չէին: Բայց քո ցուցմունքով դու ինքդ քեզ համեմատեցիր մի մարդու հետ, որն ամեն ինչ կորցրել է:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես եկել եմ այստեղ, մայր ունեմ, հայր, ամեն ինչ: Այսուհանդերձ, կարող ես գնալ Բաքու և ինքդ տեսնես: Մի հատիկ տուն չես գտնի, որ վառված, ավերված չլինի, կամ կորցրած չլինի իր անդամներին:

Վկան Հայդար Ռիֆատ բեյի հարցերին պատասխանեց հետևյալ կերպ.

ՀԱՐՑ. **Նա հավատո՞ւմ է, որ Ջիվանշիրը կարող է պատգամավոր սպանած լինել: Նա հաստատ կիմանա՞ր այդ մասին, եթե նման դեպք պատահած լիներ:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Եթե այդպիսի դեպք պատահած լիներ, ես որոշակիորեն կիմանայի այդ մասին:

ՀԱՐՑ. **Նա հավատո՞ւմ է, որ Բահաեդդին բեյը կարող էր մարդ սպանել:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ: Այդ մարդը միշտ օրենքի սահմաններում էր գործում:

ՀԱՐՑ. **Քեզ մի տպված փաստաթուղթ ցույց տվեցին: Այդ փաստաթուղթը ասում էր, որ 17,000 մարդու ունեցվածք է թալանվել: Այդ փաստաթուղթը պաշտոնակա՞ն է:**

Նախագահող դատավորը՝

-Կարիք չկա նման հարցեր տալ, որովհետև այդ փաստաթուղթը ընդունելի չէ դատարանում:

Հայդար Ռիֆատ բեյ՝

ՀԱՐՑ. **Կառավարությունը որևէ բան ասե՞լ է այն մասին, որ այն հայերը, որոնց ունեցվածքը թալանված է, ներկայանան ու նրանց փոխհատուցում կվճարվի:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Կառավարությունը Բահաեդդին բեյի կողմից ստորագրված մի հայտարարություն հրապարակեց, որտեղ ասված էր, որ հետաքրքրված մարդիկ պետք է կառավարության հետ կապվեն, որ թալանված ապրանքները վերադարձվելու են և եթե դա հնարավոր չլինի անել, համարժեք փոխհատուցում է վճարվելու:

Նախագահող դատավորը՝

ՀԱՐՑ. **Վկան երեկ իր ցուցմունքի մեջ ասաց, որ մուսուլմանները որևէ զենք չունեին: Դրան հակառակ, նա այսօր ասաց, որ ժողովուրդը զենք ուներ և գյուղերից զենք էր բերվում: Նա ինչպե՞ս կարող է համաձայնեցնել այս երկու հայտարարությունները:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Իմ համեմատությունը հարաբերական էր: Մուսուլմանները միայն հրազեններ ունեին՝ հայերի ունեցած գնդացիրների և հրետանու դիմաց: Այդ հրազենները նույնիսկ փամփուշտ չունեին:

ՀԱՐՑ. Այդ դեպքում նա ինչո՞ւ ասաց, որ նրանք անզեն էին:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես նորից եմ կրկնելու. մուսուլմանները հայերի պես զինված չէին: Իրենց զենքերը միայն ինքնապաշտպանական էին:

Նախագահող դատավորը՝

-Ասացեք վկային, որ իր ակնարկները բավարար չեն:

ՈՒԹԵՐՈՐԴ ՎԿԱ

Իշխանուհի Զիբան՝ Քազար գերդաստանից, երդվելուց հետո պատասխանեց դատախազ Գրիբոնի հարցերին.

ՀԱՐՑ. Ի՞նչ է ձեր անունը:

ՊԱՏԱՍԽԱՆ. Զիբա Համիմ Գայիբովա: Ես ադրբեջանցի եմ: Ստամբուլում եմ վերջին երկու տարիներին: Ապրում եմ Երենքոյում:

ՀԱՐՑ. Մինչ այդ երկու տարին Բաքվո՞ւմ էիք:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո:

ՀԱՐՑ. 1918–ին Բաքվո՞ւմ էիք:

*ՊԱՏԱՍԽԱՆ.*Այո:

ՀԱՐՑ. Կարո՞ղ եք նկարագրել մարտյան իրադարձությունները:

ՊԱՏԱՍԽԱՆ. Կոտորած էր տեղի ունենում: Կոտորածի ժամանակ մենք տնից դուրս չէինք գալիս: Դուրս եկանք այն ժամանակ, երբ կոտորածը վերջացել էր: Մենք միայն պատահական կրակոցներ էինք լսում ու նայում էինք: Իհարկե, մի փամփուշտ կպավ մեր տանը, և լուսամուտը կոտրվեց:

ՀԱՐՑ. Քո սեփական աչքերով տեսա՞ր, թե ով էր կրակում:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ: Սակայն փամփուշտները գալիս էին հայկական շրջաններից: Ես ընդհանրապես դուրս չէի գալիս: Բայց, երբ երրորդ օրը դուրս եկա, այցելեցի մոտակա վայրերը, որտեղ հրդեհ էր բռնկվել: Տեսա մի կնոջ, որի որովայնը բացված էր: Ես 18 կանանց և երեխաների մարմիններ տեսա: Կինը հղի էր: Իր երեխային դուրս էին քաշել և կտոր-կտոր արել: Մի ծեր մարդ մեռել էր դանդաղորեն, երակները կտրելու միջոցով: Նրանք բոլորը մուսուլմաններ էին: Կոտորածները հասան մինչև մեր փողոցին կից փողոցը: Այնտեղ կանգ էին առել և դրանից հետո խաղաղ էր: Նրանք մեր փողոցը չմտան:

ՀԱՐՑ. Դրանից ինչքա՞ն ժամանակ հետո է, որ օսմանյան բանակը Բաքու մտավ:

ՊԱՏԱՍԽԱՆ. Հինգ ամիս անց, այսինքն՝ սեպտեմբերին: Հետո թուրքերը եկան և վերցրեցին քաղաքը: Նրանք քաղաք մտան կռվով:

ՀԱՐՑ. Դու քո աչքերո՞վ տեսար, որ նրանք քաղաք կռվելով մտան:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո: Ըստ որում, հայերը մեր փողոցում մի գնդացիր էին դրել: Դիմադրությունը կոտրվեց փողոցներում կռիվ մղելով:

ՀԱՐՑ. Գնդացիրները ձեր տնից երևո՞ւմ էին:

ՊԱՏԱՍԽԱՆ. Դրանք մեր դեմն էին: Հայերը դրանք գործածում էին: Ես դուրս

եկա, երբ բանակի սպաները հասան, որովհետև կարգ ու կանոնն ու ապահովությունը վերականգնվեցին նրանց քաղաք հասնելուց հետո:

ՀԱՐՑ. Որևէ բան գիտե՞ս 1918-ի կոտորածների մասին:

ՊԱՏԱՍԽԱՆ. Դրանք կոտորածներ չէին: Դրանք զինվորների քաղաք մտնելու ժամանակ տեղի ունեցած բնական դեպքեր էին: Փողոցներում պատերազմ էր գնում:

ՀԱՐՑ. Թրքական բանակի քաղաք մտնելուց հետո փողոցում որևէ դիակ տեսա՞ր:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ: Ես միայն մի զինվոր տեսա՝ կախված գողության համար: Նաև մի զինվոր տեսա, որ սպանվել էր փամփուշտից:

ՀԱՐՑ. Փողոցում որևէ դիակ չտեսա՞ր:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ: Ըստ էության, ընդամենը մի երկու անգամ եմ դուրս եկել իմ հարազատների հետ տեսակցության համար:

ՀԱՐՑ. Զիվանշիրին ճանաչո՞ւմ ես:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես նրան մոտիկից չեմ ճանաչում:

ՀԱՐՑ. Զիվանշիրին ե՞րբ ես տեսել:

ՊԱՏԱՍԽԱՆ. Զիվանշիրը քաղաք մտավ բանակի հետ միասին:

ՀԱՐՑ. Դու, անձնապես, հայերին հակակրո՞ւմ ես:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ:

ՀԱՐՑ. 1918–ին որևէ հայ քո տանը թաքցրե՞լ ես:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ:

ՀԱՐՑ. Մուսուլմանները հայերին պաշտպանեցի՞ն :

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո: Մուսուլմանները հայերին պաշտպանեցին ճիշտ այնպես, ինչպես հայերը պաշտպանեցին մուսուլմաններին:

Հետո իշխանուհի Զիբան պատասխանելով Խոսրովյան բեյի հարցերին, ասաց.

-Ես ծնվել եմ Թիֆլիսում: 32 տարեկան եմ: 1914-ին Բաքու գնացի Թեհրանի ճամփով: Ամուսինս Բաքվի առևտրական բանկի աշխատակից էր: Ամուսինս կենդանի է: Մայրս ապրում է Երենքոյում: Նախկինում ոչ մի ժամանակ որևէ դատարանում իբրև վկա հանդես չեմ եկել: Այսուհանդերձ, հասկանում եմ մարդասպանության հարցով զինվորական դատարանում իբրև վկա հանդես գալու կարևորությունը: Ես ապրում էի Բաքվի Քուբիկան շրջանում: Մեր շրջապատում շատ եվրոպացիներ կային:

ՀԱՐՑ. Երեկ դու նշեցիր, որ հայկական կողմից կրակված մի փամփուշտ կպավ ձեր տանը: Հայկական շրջանը ձեր տնից ինչքա՞ն է հեռու:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոտքով մոտ 15 րոպե:

ՀԱՐՑ. Կովկասում թաթար կանայք ինչպե՞ս են հագնվում:

ՊԱՏԱՍԽԱՆ. Բաքվում թաթարներ չկան: Միայն քիչ թվով Կազանի թաթարներ կան: Ադրբեջանցիները թուրք են:

ՀԱՐՑ. Շատ լավ: Ինչպե՞ս են հագնում մուսուլմանները:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոմանք հագնում են ինչպես ես, բայց մեծամասնությունը չադրա է կրում:

ՀԱՐՑ. Այսինքն, մեծամասնությունը քեզ նմա՞ն է հագնվում:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ: Նրանք, ովքեր գրագետ են և ուսյալ, հագնում են ինձ նման:

Այլ կերպ ասած՝ նրանք գլխարկ են հագնում և չադրա չեն կրում: Հայ կանայք եվրոպական հագուստ են հագնում:

ՀԱՐՑ. Երեկ դու ասացիր, որ *(զինադադարը)* ստորագրվելուց հետո կռիվը դադարեց, այդպե՞ս է:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո: Երեք օր հետո խաղաղություն էր:

ՀԱՐՑ. Զինադադարը ո՞վ կնքեց:

ՊԱՏԱՍԽԱՆ. Մուսուլման և հայ պատգամավորներն ու բոլշևիկները:

ՀԱՐՑ. Ժամանակդ ինչպե՞ս էիր անցկացնում Բաքվում: Թատրոն հաճա՞խ էիր գնում:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո: Օրինակ՝ ես սովորություն ունեի գնալու Թագաև ու Մայլով թատրոնները:

ՀԱՐՑ. Երեկ դուք ասացիք, որ դիակներ եք տեսել ձեր տան մոտ: Տիկին, ես կարծում եմ, որ դուք երբեք ոչ մի դիակ չեք տեսել: Հիմա ասացեք, Դուք իրո՞ք Բաքվում էիք:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո: Ես երեկ Ղուրանի վրա երդվեցի, որ միայն ճշմարտությունը պիտի ասեմ:

ՀԱՐՑ. Դուք հագնված եք եվրոպացի տիկնոջ նման և իշխանուհի եք, ճի՞շտ է:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, ես մինչև ամուսնությունը իշխանուհի էի:

ՀԱՐՑ. Դուք կապեր ունե՞ք Բաքվի բարձր խավի հետ:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո: Օրինակ՝ Ախունդով, Վելի Բեգով, էֆենդիև ընտանիքները և ուրիշներ:

ՀԱՐՑ. Որևէ նախարար ճանաչո՞ւմ եք:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ: Մենք միայն այնպիսի մարդկանց գիտեինք, ինչպես Գաբիյովը, Ռուստեմ Բեգովը, Քիլովը և Մուխթարովը, որոնք պառլամենտի պատգամավորներ էին և գործով կապված էին ամուսնուս հետ: Այս մարդկանց հետ հանդիպում էինք ընկերային հավաքների ընթացքում:

ՀԱՐՑ. Պառլամենտ գնո՞ւմ էիք:

ՊԱՏԱՍԽԱՆ. Երբեմն շաբաթը մի քանի անգամ էի գնում, երբեմն ամիսներով չէի գնում:

ՀԱՐՑ. Այն ժամանակ ո՞վ էր նախարարը:

ՊԱՏԱՍԽԱՆ. Նախարարները փոխվում էին:

ՀԱՐՑ. Անունները կարո՞ղ եք ասել:

ՊԱՏԱՍԽԱՆ. Որպես նախարար էին ծառայում, օրինակ՝ Ալի խան Խոյսկին, Ռուստեմ խան Խոյսկին, Ջիվանշիրը, Ագաևը, Հասան Մահմուդովը և Ջաֆերովը:

ՀԱՐՑ. Դուք ազնվական ընտանիքի տիկին եք: Խնդրում եմ ասեք, ո՞րն էր Ջիվանշիրի քաղաքականությունը մարտ ամսին:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ինչպես հայտնի է, պառլամենտում յուրաքանչյուր կուսակցություն ուներ իր նստելատեղերի բլոկը: Ես Ջիվանշիրին միշտ տեսնում էի անկախականների նստելատեղերի բլոկում:

ՀԱՐՑ. Այն քաղաքականությունը, որ Ջիվանշիրը վարում էր 1918–ին վավերացվա՞ծ էր կառավարության կողմից:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այն քաղաքականությունը, որ Ջիվանշիրը վարում էր, դա կառավարության քաղաքականությունն էր: Դա իր անձնական քաղաքականությունը չէր:

ՀԱՐՑ. Հենվելով այն ամենի վրա, ինչ տեսաք, 1918-ի հոկտեմբերին Բաքվում հայեր սպանվեցի՞ն:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ:

ՀԱՐՑ. Ուրեմն գտնում ես, որ հայերը վախի և հուզմունքի մեջ չէին ապրում:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո: Երբ թրքական բանակը քաղաք մտավ, հայերը պաշտպանված էին մուսուլմանների տներում:

-Ձեր ցուցմունքով բավարարված չեմ, տիկին:

Հետո իշխանուհին պատասխանեց Հայդար Ռիֆատ բեյի հարցերին.

ՀԱՐՑ. Կառավարությունը կկատարե՞ր այն ամենը՝, ինչ Ջիվանշիրը ուզում էր:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ:

ՀԱՐՑ. Այդպիսով կառավարության քաղաքականությունը Ջիվանշիրի քաղաքականությո՞ւնն էր:

ՊԱՏԱՍԽԱՆ. Բնականաբար, առանձին մարդու քաղաքականությունը չէ որ իրականացվում է:Կառավարությունը իր սեփական քաղաքականությունը ուներ:

ՀԱՐՑ. Երբ մի քաղաքականություն հաջողություն չի ունենում, դա նշանակո՞ւմ է, որ այդ քաղաքականությունը վնասակար է:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ, դա չի նշանակում, որ այդ քաղաքականությունը վնասակար է:

ՀԱՐՑ. Պաշտպան փաստաբանն ասաց, որ այս տիկինը չի տեսել դիակները, որոնց մասին իր ցուցմունքում ասել է, որ տեսել է, որ ափսոսում է դրա համար, և որ ինքը «բավարարված չէ»: Վկան ընդունո՞ւմ է այս նկատառումները և ափսոսանքի արտահայտությունները: Նա այստեղ եկել է նրան բավարարելո՞ւ, թե՞ ճշմարտությունը ասելու համար:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես երդում եմ տվել և ճշմարտությունը ասացի: Ես այստեղ չեմ եկել որևէ մեկին գոհ թողնելու համար: Այստեղ եմ եկել ճշմարտությունը ասելու համար:

ԻՆՆԵՐՈՐԴ ՎԿԱ

Յուսուֆ բեյ Կասիմովը, երդվելուց հետո, պատասխանեց դատախազ Գրիբոնի հարցերին.

Նա ասաց, որ ինքը թուրք է, մասնագիտությամբ իրավունքի հրահանգիչ: Ապա շարունակեց.

-Ես միշտ Բաքվում եմ ապրել: Ուսումս ստացել եմ ռուսական համալսարաններում: 1917-ից հետո Բաքվից դուրս չեմ եկել: Հայերը 1918-ին կոտորեցին մուսուլմաններին:

ՀԱՐՑ. Դու քո աչքերով տեսե՞լ ես դա:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես ասել եմ, որ նկարագրելու եմ այն, ինչ տեսել եմ իմ սեփական աչքերով: Եվ դա էլ ես անում եմ հիմա: 1918-ի մարտին մզկիթից դուրս էի գալիս և ուղղվում էի դեպի մեր տուն: Մի քանի ծիավորներ սկսեցին օդ կրակել: Կրակողների մեջ տեսա մի հայ ընկերոջ: Երբ մուսուլմանները այդ տեսան, սկսեցին վազել: Ես նրանցից մեկն էի: Ես վազեցի: Հայկական շրջանը գտնվում է քաղաքի մի շատ բարձր վայրում: Տեսա, որ հայերը այնտեղից հարձակվում էին մուսուլմանական թաղամասի վրա: Այս հարձակումները և պատերազմը տևեցին

երեք օր: Մի քանի հազար մուսուլման մահանալուց հետո խաղաղության համաձայնագիր ստորագրվեց:

Նախագահող դատավորը՝

ՀԱՐՑ. Վկան ինչպե՞ս գիտե, որ մի քանի հազար մուսուլման է սպանվել: Նա տեսե՞լ է:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո: Ես տեսա նրանց դիակները: Նրանցից 1,320-ին թաղեցին: Ես գնացի մուսուլմանական ազգային խորհրդի ժողովին: Խորհուրդը նիստի էր: Ժողով էր տեղի ունենում: Նրանք քննարկում էին կռիվները դադարեցնելու հնարավորությունը, մուսուլմաններին և մուսուլման զինվորներին զենքերը հանձնել ստիպելու ուղիով: Նախատեսված էր, որ այդ զենքերը պիտի հանձնվեին բոլշևիկյան գործադիր կոմիտեին: Զենքերը հանձնվեցին: Գործադիր կոմիտեն հավաստիացրել էր, որ դրանք հաջորդ օրը պետք է փոխանցվեին մուսուլմանական ազգային խորհրդին:

ՀԱՐՑ. Դու այնտե՞ղ էիր:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այնտեղ ուսանողների համար մի հատուկ տեղ կար, ես այնտեղ էի:

ՀԱՐՑ. Այդ ժողովի ընթացքում զենքերը հանձնվո՞ւմ էին:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ: Որոշ պաշտոնյաներ գնացին այդ հանձնարարությամբ և դա կազմակերպեցին:

ՀԱՐՑ. Բոլշևիկները դրանք վերադարձրի՞ն:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ: Մուսուլմանները իրենց զենքերը հանձնեցին: Հաջորդ օրը, երբ սպասում էին զենքերի համար, մի խնդիր ծագեց: Զրույցներ սկսեցին, որ քաղաքի հայերը հարձակվելու են մուսուլմանների վրա, որոնք մնացել էին առանց զենքի: Մուսուլման ղեկավարները Թազեփիր Մաջիտում սպասում էին պատասխանի ու որոշման: Ես տեսա, թե ինչպես էին թաղում մոտավորապես 600 մարդու: Մի ուրիշ անգամ միայն մեկ սենյակում տեսա 20 դիակ: Նրանց մեջ, իմ սեփական աչքերով տեսա մի կնոջ՝ կտոր-կտոր եղած և մի երեխա պատին գամված: Մի տարիքոտ մարդու վրա կրակել էին չորս անգամ: Ես նրան վիրակապեցի: Խաղաղության համաձայնագիր ստորագրվեց: Այս դեպքերը տեղի ունեցան մարտ ամսին: Հայերը բանագնացներ ուղարկեցին Մուսուլմանական ազգային ժողով, հայտնելու համար, որ իրենք չեզոք են մնալու: Հակառակ այս հավաստիացմանը, ավելի ուշ հայերը կոտորեցին անզեն մուսուլմաններին:

ՀԱՐՑ. Նկարագրիր ինչ որ տեսար:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես տեսա վիրավոր և սպանված մարդկանց: Տեսա դոկտոր Սուլթանովի և դոկտոր Ինջիևի մարմինները: Իմ հորեղբոր որդուն սպանելուց հետո նրանք պատռել էին բերանը՝ նրա ոսկե ատամները հանելու համար:

Դատախազը՝

ՀԱՐՑ. Ո՞վ էր կռվում:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես իմ հեռադիտակով տեսա, որ ավազե պարկերի հետևում թաքնված հայերը հարձակվեցին մուսուլմանների վրա: Հայերը հարձակում սկսեցին մեր տան ուղղությամբ: Դա տեսա իմ սեփական աչքերով: Եթե հայերը ինձ բռնեին, կսպանեին: Փախա դեպի մյուս փողոցը բացվող դռնից: Հորեղբորս տղան մեր տանն էր: Հայերը նրան սպանեցին, որովհետև նա հիվանդ էր և փախչել չէր կարող:

ՀԱՐՑ. Նալագով անունով մարդ ճանաչո՞ւմ ես:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, ճանաչում եմ: Բաքվի Մեծ Բազարի նրա տները վառվեցին: Նա ասել է՝ «Ես իմ տները դիտավորյալ վառեցի»: Նա հայ սպա էր:

ՀԱՐՑ. Նրանք մուսուլման մտավորականների դիպա՞ն:

ՊԱՏԱՍԽԱՆ. Դոկտոր Սուլթանովը, դոկտոր Թագիեֆը, գնդապետ Թավասարանսկին, կապիտան Եմիրժանովը, ինժեներ Մուհտարովը, բոլորը սպանվեցին: Այս բոլորը ես իմ սեփական աչքերով եմ տեսել:

ՀԱՐՑ. Տեսե՞լ ես, որ հայերը փողոցներում կռվելիս լինեն թուրք զինվորների դեմ:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, ես իմ սեփական աչքերով տեսա շատ հայերի, որոնք կրակում էին գնդացիրներով: 14-ի երեկոյան թուրքերը հարձակվեցին և հաջորդ օրը մտան քաղաք: Հայերը նրանց վրա կրակում էին գնդացիրներից:

ՀԱՐՑ. Ջիվանշիրին ճանաչո՞ւմ էիր:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, ես նրան լավ էի ճանաչում:

ՀԱՐՑ. Ջիվանշիրի ստորագրությամբ մի հայտարարություն տեսե՞լ ես:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո: Այդ հայտարարությունը ասում էր, որ հայերի ունեցվածքը թալանողները պիտի խստորեն պատժվեն:

ՀԱՐՑ. Դու տեսե՞լ ես թուրք զինվորներ՝ թալան կատարելիս:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ, չեմ տեսել:

Հետո վկան պատասխանեց Խոսրովյան էֆենդիի հետևյալ հարցերին.

ՀԱՐՑ. Քանի՞ տարեկան ես: Որտեղի՞ց ես: Հայրդ կենդանի՞ է:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես 26 տարեկան եմ: Ծնվել եմ Բաքվում: Հայրս կենդանի է: Ապրում եմ մեր տանը ընտանիքիս հետ միասին:

ՀԱՐՑ. Ձեր տանը՝ հայ հյուրեր եղե՞լ են:

ՊԱՏԱՍԽԱՆ. Մեր տանը շատ հայեր են եղել:

ՀԱՐՑ. Որտե՞ղ ես սովորել:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ռոստովի համալսարանում:

ՀԱՐՑ. Հայրդ Բաքվի ամենահարուստ մարդկանցից մեկը չէ՞:

ՊԱՏԱՍԽԱՆ. Նա հարուստներից մեկն է:

ՀԱՐՑ. Նա քանի՞ տուն ունի:

ՊԱՏԱՍԽԱՆ. Նա Բաքվում հինգ տուն ունի:

ՀԱՐՑ. Բաքվում ո՞րն է ամենաուժեղ ազգային կուսակցությունը:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ե՞րբ:

ՀԱՐՑ. Այժմ:

ՊԱՏԱՍԽԱՆ. Կոմունիստները:

ՀԱՐՑ. Մինչև 1921-ի մարտը, Բաքվում ո՞վ էր մուսուլմանական համայնքի գործերի պատասխանատուն:

ՊԱՏԱՍԽԱՆ. Մուսուլմանական ազգային խորհուրդը:

ՀԱՐՑ. Կարո՞ղ ես նշել նրա անդամներից մի քանիսի անունները:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ռեսուլ Ալի Խան Խոյսկի:

ՀԱՐՑ. Ջիվանշիրը անդա՞մ էր:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես չգիտեմ:

ՀԱՐՑ. Այդ ժամանակ Ջիվանշիրը քաղաքո՞ւմ էր:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես չգիտեմ:

ՀԱՐՑ. Ադրբեջանում որևէ բանակ կա՞ր: Կրոնական կուսակցություն

կա՞ր:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, մի գումարտակ կար:

ՀԱՐՑ. **Դա Ադրբեջանի բանա՞կն էր:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո:

ՀԱՐՑ. **Ռուսների քաշվելուց հետո, նրանք, ովքեր ռուսական արևելյան և արևմտյան ճակատներից էին և ուզեցին տուն վերադառնալ, Բաքվո՞վ էին անցնում:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Միայն Թուրքեստանի բրիգադը Բաքվով անցավ: Մյուս բրիգադները անցան Բալագարիի կայարանից:

ՀԱՐՑ. **Ուրեմն այդ զինվորների համար Բաքուն վերածվել էր կենտրոնի՞:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այդ զինվորները գալիս ու գնում էին հապճեպ, որովհետև այն ժամանակ Բաքվում կացարաններ չկային:

ՀԱՐՑ. **Ռուս զինվորները Լենինի հանդեպ հավատարիմություն տածո՞ւմ էին:**

Նախագահող դատավորը՝

-Վկային նման հարցեր չպետք է տրվեն:

Խոսրովյան էֆենդի՝

ՀԱՐՑ. **Լավ, ես դրանք բաց կթողնեմ: Ճի՞շտ է որ Ադրբեջանի զինվորականությունը վերահսկում էր Բաքվի և Թիֆլիսի միջև երթևեկության ճանապարհը:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այնտեղ ադրբեջանցի զինվորներ չկային:

ՀԱՐՑ. **Ե՞րբ կնքվեց խաղաղությունը բոլշևիկների և մուսուլմանների միջև:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Մարտի 21 -ին:

ՀԱՐՑ. **Որո՞նք էին այդ համաձայնության պայմանները:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես հիշում եմ միայն մեկ հոդվածը, որն ասում էր, թե զենքը և ազգային զինվորները պետք է հանձնվեն:

ՀԱՐՑ. **Կոտորածների առաջին օրը դու որտե՞ղ էիր և ինչպե՞ս անցկացրիր օրդ:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Առաջին օրը ես մեր տան տանիքին անցկացրի:

ՀԱՐՑ. **Քո հայրը լավ մարդ է: Նա շատ հայերի է պաշտպանել: Դու երեկ ասացիր, որ 7,000 հայերի հոգ տարաք: Ո՞ւր և ինչպե՞ս: Թվում է, թե այդ տները պատկանում են հորդ և միշտ վարձով են տրվել: Խնդրում եմ ասես մեզ:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Իմ հոր սեփականությունը, բնականաբար, նաև ինձ է պատկանում:

ՀԱՐՑ. **Դու գիտե՞ս, որ հայերը կոտորածի ենթարկվեցին սեպտեմբերին: Հայերը Բաքվից քաշվեցին բրիտանացիների հետ միասին: Ով որ մնաց, սպանվեց: Սա մի փաստ է, որ աշխարհում ամեն մարդ գիտե:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ամբողջ աշխարհը գիտե, որ մարտ ամսին հայերը մուսուլմաններին սպանեցին:

Խոսրովյան էֆենդին ավարտեց հարցաքննությունը: Հետո Հայդար Ռի-

ֆատ բեյը տվեց հետևյալ հարցերը.

ՀԱՐՑ. **Դու ասացիր, որ յոթ հայերի փրկեցիր: Դա որոշ շահի համա՞ր արեցիր:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես դա արեցի հանուն մարդկության:

ՀԱՐՑ. **Դու որևէ բան լսե՞լ ես մարտ ամսին սպանված մուսուլմանների թվի մասին:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Լսել եմ որ 13,000 է եղել:

ՀԱՐՑ. **Դա ումի՞ց լսեցիր:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ամեն մարդ էր ասում:

ՀԱՐՑ. **Հայերը նույնպե՞ս այդպես էին ասում:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես մուսուլման, հայ և հրեա ընկերներ ունեի:

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՎԿԱ

Հիքմետ բեյը, մի փաստաբան, երդվելուց հետո պատասխանեց դատախազ Գրիբոնի հարցերին.

-Անունս Հիքմետ բեյ է: Ես թուրք եմ և Օսմանյան քաղաքացի: Ես իրավաբան եմ:

ՀԱՐՑ. **Ի՞նչ էիր անում 1918–ին:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես դատախազ էի:

ՀԱՐՑ. **Տրապիզոնում եղե՞լ ես:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, 1918-ի մարտին:

ՀԱՐՑ. **Տրապիզոնի կոտորածների մասին որևէ տեղեկություն ունե՞ս:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես որևէ կոտորածի մասին չգիտեմ: Առանձին դեպքեր տեղի ունեցան: Ափսոսում եմ, որ դրանք տեղի ունեցան:

ՀԱՐՑ. **Տրապիզոնի հայերի մասին որևէ բան լսե՞լ ես: Երզնկանում եղե՞լ ես:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, եղել եմ:

ՀԱՐՑ. **Ի՞նչ տեսար այնտեղ:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Տրապիզոնը թողնելուց հետո ես ինքնաշարժով Գումուշանե հասա: Գումուշանեում ես շատ մուսուլմանների մարմիններ տեսա: Նրանց հայերն էին սպանել: Հետո գնացի Բայբուրտ: Բայբուրտում Չուրուքսու կոչվող մի տեղ կա և այնտեղ մի խանութ կա, որը պատկանում է Հուսնու բեյին: Մոտ 400 մուսուլմաններ խմբվել էին այնտեղ ու տեղում բոլորն էլ սպանվել: Կազմակերպեցի, որ մարմինները այնտեղից դուրս բերվեն և թաղվեն անհատապես: Հետո գնացի Երզինկան: Ճանապարհին տեսա մուսուլմանական տներ և մզկիթներ քանդված, նաև մզկիթներ, որ զուգարանի էին վերածված: Երզինկանը մեծ տեղ է: Տեսա, որ քաղաքի բոլոր մուսուլմանական թաղամասերը հիմնովին քանդված էին: Ես հատկապես կարող եմ հիշել Քոիրեք, Մուլլագուզել և Համիդիե թաղամասերը: Ես նաև հայկական թաղամասեր գնացի: Այնտեղ ևս մուսուլմանական շատ դիակներ տեսա և թաղել տվեցի: Նրանք իրեն տների բակերում հատուկ տեղեր էին պատրաստել. այնտեղ էին բերել մուսուլմաններին ու տեղում սպանել: Դրանք նկարել եմ: Ահա թուրքերի մի նկար, որոնց գանգերը կացնով ջախջախված են:

(նկարը փոխանցում է դատարանին)

Նախագահող դատավորը՝

-Նկարը չի կարող ցույց տալ դիակների ազգությունը:

Վկան՝

-Օրինակ՝ այս մարդուն ես հորից եմ դուրս քաշել: Շրջակայքից մարդիկ եկան և նրան ճանաչեցին: Մի ուրիշ անգամ մի թուրք կին եկավ և ճանաչեց իր աղջկան: Նա ժամերով լաց եղավ իր զավակի քայքայված մարմնի վրա: Այս բոլորը իմ աչքերով եմ տեսել և որպես ապացույց նկարել եմ: Մուսուլմանների դիակները հորի միջից դուրս հանելուց հետո ճանաչվեցին հարազատների կողմից և թաղվեցին մուսուլմանական գերեզմաններում: Մենք նաև գտանք մուսուլմաններին կոտորելու համար նրանց օգտագործած դանակները, կացինները և այլ գործիքներ:

Նախագահող դատավորը՝

ՀԱՐՑ. Ինչպե՞ս կարող ես ասել, որ այդ գործիքները օգտագործվել են կոտորածների համար: Դրանք տեսե՞լ ես կոտորածների ժամանակ օգտագործելիս: Դրանց վրա արյուն կա՞ր:
ՊԱՏԱՍԽԱՆ. Սղոցի վրա արյուն կար: Արյունը քննության տվեցի: Հաստատվեց, որ այն մարդկային արյուն է:

Նախագահող դատավորը՝

ՀԱՐՑ. Դու դրանք որտե՞ղ գտար:
ՊԱՏԱՍԽԱՆ. Ես դրանք գտա էրզինքանի մանվածքեղենի վաճառականներ Սարգիսի և Արտաշի տան բակում:

Նախագահող դատավորը՝

ՀԱՐՑ. Բոլոր գործիքների վրա արյուն կա՞ր:
ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, կար: Կացինը թուրքերին կոտորելու համար այնքան շատ էին օգտագործել, որ սայրերը բթացել էին:

Հայդար Ռիֆատ բեյ՝

-Վկան բերել է այդ կացիններից մեկը: Եթե ցանկանում եք, այն կարող է ներկայացվել դատարանին:

Նախագահող դատավորը՝

-Անկարելի է որոշել, արյունը մարդո՞ւ արյուն է, թե՞ ոչ:

Վկան՝

ՊԱՏԱՍԽԱՆ. Ձեթի փաշա մզկիթը էրզինկանի ամենահայտնի մզկիթներից մեկն է: Այն վերածվել էր զուգարանի և այդ նպատակով էլ օգտագործվում էր: Մի հայ՝ դահիճ Սոկյանը, մտել է Հաջի Մուստակ էֆենդիի տունը և ...

Նախագահող դատավորը՝

-Ասացեք վկային, թող նկարագրի միայն այն, ինչ տեսել է իր սեփական աչքերով:

Վկա՝

-Շատ լավ: Ես տեսա Հաջի Մուստակ էֆենդիի ընտանիքի անդամներին մեռած և նրանց թաղել տվեցի: Տասներեք տարեկան երեխաների թևերին փտախտ էր առաջացել, այդ պատճառով կտրեցին:

Դատախազը՝

ՀԱՐՑ. Էրզինկանում կանանց ինչպե՞ս էին վերաբերվում:
ՊԱՏԱՍԽԱՆ. Կարող եմ ասել, նրանք բոլորն էլ բռնաբարվել էին: Բժիշկները քննեցին աղջիկներին: Նրանք բոլորը կորցրել էին իրենց կուսությունը: Ես նրանց նույնիսկ նկարել եմ:
ՀԱՐՑ. Գիտե՞ք այդ շրջաններում քանի մուսուլման է սպանվել:
ՊԱՏԱՍԽԱՆ. Ես 400-ից 500 դիակներ տեսա: Վիճակագրության համաձայն, Երզնկայում 1,500 մուսուլման է սպանվել:

Խոսրովյան՝

-Դատախազը մի նոր գործ է սկսել:

Նախագահող դատավորը՝

-Պաշտպան փաստաբանները նույնպես առաջադրեցին վկայություններ, որոնք գործի հետ առնչություն չունեին:

Դատախազը՝

ՀԱՐՑ. Դու այնտեղ որևէ հայտարարություն կամ ազդարարություն տեսա՞ր:
ՊԱՏԱՍԽԱՆ. Հայտարարությունը որ ես տեսա, մուսուլմաններին արգելում էր տնից տուն գնալ, մզկիթներ մտնել, կամ առանց թույլտվության ցայտաղբյուրներից ջուր խմել և ասում էր, որ արգելքները խախտողները մահվան կդատապարտվեն:

Նախագահող դատավորը՝

ՀԱՐՑ. Դու դա տեսա՞ր:
ՊԱՏԱՍԽԱՆ. Ես այն տեսա ու կարդացի:
ՀԱՐՑ. Դրանք ի՞նչ լեզվով էին գրված:
ՊԱՏԱՍԽԱՆ. Դրանք գրված էին թրքերեն, հայերեն և այլ լեզուներով: Կնքված էին հայկական կնիքներով: Բնականաբար, ես չէի կարող այն կարդալ, որովհետև հայերեն չեմ կարդում:

Դատախազը՝

ՀԱՐՑ. Այլ քաղաքներ ու գյուղեր այցելե՞լ ես:
ՊԱՏԱՍԽԱՆ. Այո:
ՀԱՐՑ. Դու Փալու գնացի՞ր:
ՊԱՏԱՍԽԱՆ. Այո: Երբ այնտեղ հասա, քաղաքը լրիվ կործանված էր: Չկարողացա մի հատ սենյակ գտնել: Քաղաքի մուտքին մի հոր կար: Հորը բացել տվեցի: Այնտեղ շատ երեխաների դիակներ գտա: Դիակները վառված էին: Նաև տեսա մուսուլմանների դիակներ՝ շարված ցցերի վրա: Կանանց կրծքերը կտրված էին:
ՀԱՐՑ. Քեմահ գնացե՞լ ես:
ՊԱՏԱՍԽԱՆ. Գնացել եմ: Ես տեսա, որ այնտեղ ևս կատարվել էին նույն դաժանությունները: Այստեղ ևս շատ մեռած թուրքեր տեսա: Թույլ տվեք ասեմ, որ Քեմահում կատարված դաժանությունները այնքան ծավալուն չէին, բայց գյուղերում կատարված դաժանությունները ահավոր էին:
ՀԱՐՑ. Մամախաթուն գնացե՞լ ես:
ՊԱՏԱՍԽԱՆ. Մամահաթունը ջնջված էր: Մեկ հատ կանգուն տուն չգտա: Մամախաթունի մուսուլմանները սպանվելուց հետո հորերի մեջ էին նետված: Դիակների նեխվածության պատճառով անկարելի էր այդ հորերին մոտենալ:
ՀԱՐՑ .Ի՞նչ պատահեց ժողովրդի սեփականության հետ:
ՊԱՏԱՍԽԱՆ. Այն թալանվեց:

Նախագահող դատավորը՝

ՀԱՐՑ. Ինչպե՞ս գիտես:
ՊԱՏԱՍԽԱՆ. Մենք նայում էինք տների ներսը և ոչ մի բան չէինք գտնում:

Դատախազը՝

ՀԱՐՑ. Դու ասացիր, որ տներ չկային:
ՊԱՏԱՍԽԱՆ. Ես ասացի, որ Քեմահ քաղաքի մեջ դաժանություններ չէին եղել:
ՀԱՐՑ. Ավնի բեյի դատավարության մասին որևէ բան գիտե՞ս:
ՊԱՏԱՍԽԱՆ. Այո:
ՀԱՐՑ. Մուստաֆա փաշայի հրաժարականից հետո՞ է, որ այդ անձնավորությանը բաց թողեցին:
ՊԱՏԱՍԽԱՆ. Ավնի բեյը մահվան էր դատապարտվել Մուսթաֆա փաշայի կողմից և կախվել էր Բայազետում:
ՀԱՐՑ. Նրան ե՞րբ կախեցին, կհիշե՞ս:
ՊԱՏԱՍԽԱՆ. Ֆերիտ փաշայի ժամանակ, ութից ինը ամիս առաջ:
ՀԱՐՑ. Նուսրեթ բեյի դատավարության պատճառո՞վ է, որ Մուսթաֆա փաշան հրաժարական տվեց:
ՊԱՏԱՍԽԱՆ. Նուսրեթ բեյի դատավարության մեջ արձանագրված են երկու վճիռներ: Պաշտպանյալը նախ դատապարտվեց յոթ տարվա բանտարկության: Հետո նա մահվան դատապարտվեց: Մուսթաֆա փաշան հրաժարական տվեց այս անկանոնության պատճառով: Այժմ նրա կապակցությամբ հետաքննություն է տեղի ունենում:

Դատախազը վերադարձավ իր տեղը: Հետո վկան, ի պատասխան Խոսրովյան էֆենդիի հարցերի ասաց, որ ինքը ծառայել է Բուրսայի դատախազությունում մինչև սահմանադրական միապետության հռչակագիրը (1908-ի), որ ավելի ուշ նշանակվել է Էդրինեի դատախազությունում, որ նա Էդրինեում մնացել է մինչև 1918–ի փետրվարը և որ Էդրինեում կոտորածներ չեն եղել:

Հետո նա հետևյալ ձևով պատասխանեց Խոսովյան էֆենդիի հարցերին.

ՀԱՐՑ. Ի՞նչ պատահեց հայերի հետ նրանց տեղահանումից հետո:
ՊԱՏԱՍԽԱՆ. Ես նրանց, բնականաբար, բոլորին անհատապես չեմ ճանաչում, բայց իմ ճանաչածներին Ստամբուլում տեսնում եմ:
ՀԱՐՑ. Որպես դատախազ ձեր գործն էր ոճրագործներին հետապնդելը և պատժելը: Ինչպե՞ս է, որ այս հարցում լռություն պահպանվեց:
ՊԱՏԱՍԽԱՆ. Որովհետև տեղահանությունը կատարվեց օրենքի հիման վրա: Կառավարական պաշտոնյաները չէին կարող օրենքին դեմ գործել:
ՀԱՐՑ. Տրապիզոնում ո՞ւր գնացիր:
ՊԱՏԱՍԽԱՆ. Ես գնացի մի հետաքննության նպատակով: Այնտեղ երկար չմնացի: Այնտեղ աշխատեցի իբրև ընդհանուր ապահովագրական հետաքննիչ: Հետաքննում էի մուսուլմանների դեմ հայերի կատարած վայրագությունները:
ՀԱՐՑ. Դու կառավարության կողմի՞ց էիր նշանակված:
ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, ես կառավարության կողմից էի նշանակված:

Խոսրովյան էֆենդի՝ (դիմելով դատարանին)

-Այս վկայի ցուցմունքները կառավարական պաշտոնյայի ցուցմունքներ են: Դա արտոնվա՞ծ է:

Նախագահող դատավորը՝

-Ես վկային զգուշացրել եմ ցուցմունք տալ որպես միայն վկա: Հենց դա էլ վկան անում է: Հետևաբար, նա կառավարությունը չի ներկայացնում:

ՀԱՐՑ. Երզնկայում, կամ Բայբուրթում որևէ բան լսեցի՞ր այն մասին, որ հայեր են սպանվել:
ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ:
ՀԱՐՑ. Գումուշանեում որևէ հայ տեսա՞ր:
ՊԱՏԱՍԽԱՆ. Ես չէի գնացել հայերի դիակներ փնտրելու:
ՀԱՐՑ. Գումուշանեում, Երզնկայում և Բայբուրթում որևէ հայկական եկեղեցի տեսա՞ր:
ՊԱՏԱՍԽԱՆ. Երզինկայում ես տեսա Թաս Քիլիսե կոչվող մի հայկական եկեղեցի:
ՀԱՐՑ. Դու ասացիր, որ թուրքերի դիակներ տեսար: Իսկ դու տեսա՞ր, որ նրանց հայերն էին սպանել:
ՊԱՏԱՍԽԱՆ. Ես այնտեղ գնացի դեպքերից հետո: Այնտեղ լսածս տեղեկություններից իմացա, որ դա հայերն էին արել: Ես հետաքննող պաշտոնյա էի: Ակնհայտորեն, ես դա անձամբ տեսած լինել չէի կարող:
ՀԱՐՑ. Եթե դու չես տեսել *(սպանությունները)*, ինչպե՞ս կարող ես ասել,

թե երբ էին սպանվել:

ՊԱՏԱՍԽԱՆ. Դիակները 15-ից 20 օրվա էին:

ՀԱՐՑ. **Գիտե՞ս, որ նրանք դավանափոխված հայեր էին:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ինչպե՞ս կարող է այդպես լինել: Ես շփոթված եմ դատարանի առջև: Մենք մուսուլմաններին քննեցինք և այդ դիակները հարազատների կողմից ճանաչվեցին:

ՀԱՐՑ. **Դու ասացիր, որ հայերի տներում մուսուլմանների դիակներ գտար: Ինչպե՞ս է դա հնարավոր: Ավելի հավանական չէ՞, որ հայերն էին սպանվել իրենց տնելում:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Երբ հայերը հարձակվեցին մուսուլմանների վրա, նրանց կապկպեցին, տարան իրենց տները և այնտեղ սպանեցին: Մենք տեսանք, որ նրանց թաղել էին նախապես պատրաստված տեղերում:

ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ ՎԿԱ

Ալի Ասաֆ բեյը, դատախազ պրն Գրիբոնի հարցերին պատասխանեց հետևյալ կերպ.

-Անունս Ալի Ասաֆ է: Ես Իստիպից եմ, թուրք եմ: Ստամբուլի Բաիլիֆի դատարանի գրասենյակում հանրային աշխատող եմ:

ՀԱՐՑ. **Ի՞նչ էիր անում 1918–ին:**

ՊԱՏԱՍԽԱՆ. 1918-ի մարտից մինչև հոկտեմբեր աշխատում էի որպես գեներալ Ալի Շահենսկու օգնական:

ՀԱՐՑ. **Ի՞նչ աստիճան ունեիր: Ե՞րբ Բաքու մտար:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես պահեստի լեյտենանտ էի: Բաքուն խաղաղվեց սեպտեմբերի 14-ի երեկոյան: Մենք քաղաք մտանք սեպտեմբերի 15-ի առավոտյան:

ՀԱՐՑ. **Խնդրում եմ համառոտ պատմիր, երբ բանակը քաղաք մտավ, ի՞նչ տեսար:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Մենք Նուրի փաշայի, Խալիլ փաշայի, Շավինսկու և հանգուցյալ Նազիմ բեյի հետ կենտրոնական ճակատում, մի դիտակետից նայում ու հետևում էինք զարգացումներին: Սեպտեմբերի 15-ի առավոտյան, այս փաշաների հետ միասին, գնացքով մտանք քաղաք: Մուրսել փաշան, մի դիվիզիոնի հրամանատար, մեզ ողջունեց: Նուրի փաշան և Խալիլ փաշան զորքը ստուգեցին Սալյան զորանոցներից դուրս: Այնտեղից գնացինք Մետրոպոլ պանդոկ: Մենք լսեցինք, որ քաղաքում իրարանցում կա:

Նուրի փաշան սպաներին հրամայեց զսպել ամեն մի իրարանցում քաղաքում: Երբ շրջագայում էի քաղաքով, 15-ից 20 դիակ տեսա: Քանի որ քաղաքում դիմադրություն էր եղել, մտածեցի, որ նրանք պատահաբար են սպանվել: Ինձ ասացին, որ թալան է եղել: Փաշան հրամայեց թալանչիներին ձերբակալել. նրանց հետո մահապատժի ենթարկեցին:

ՀԱՐՑ. **Ովքե՞ր էին կախաղան բարձրացվողները:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Նրանցից երկուսը զինվորներ էին: Մյուսների մասին չգիտեմ: Նրանց անվանում էին հայրենակիցներ, բայց չգիտեմ, թե որտեղից էին:

Նախագահող դատավորը՝

ՀԱՐՑ. **Նրանք քաղաքացիներ՞ էին:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Դժվար է ասել: Նրանք հետաքրքիր հագուստով էին: Նուրի փաշայի խիստ միջոցառումների շնորհիվ, քաղաքը լրիվ խաղաղվեց և երկրորդ օրը բնականոն վիճակի վերադարձավ:

ՀԱՐՑ. **Ո՞վ էր հսկում Բաքուն, երբ քաղաքը խաղաղվեց:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Դրությունը բանակն էր վերահսկում:

ՀԱՐՑ. **Ջիվանշիրը ե՞րբ մտավ քաղաք:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Բանակը քաղաք մտավ կառավարությունից առաջ: Ջիվանշիրը քաղաք մտավ բանակի մտնելուց երկու կամ երեք օր հետո: Պանդոկում ընթրիք տրվեց: Այդ ժամանակ էր, որ ես իրեն տեսա:

(Դատախազը վերադարձավ իր տեղը):

Խոսրովյան՝

ՀԱՐՑ. **Ջիվանշիրին լավ ճանաչո՞ւմ էիր:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես նրա հետ տարբեր առիթներով զրուցել եմ:

ՀԱՐՑ. **Ադրբեջանական բանակ կա՞ր: Եթե կար, ինչքա՞ն զորք ուներ:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Կար, բայց դա Օսմանյան բանակն էր: Սպաները իմ ընկերներն էին:

ՀԱՐՑ. **Ադրբեջանական կառավարությունը բանակ կազմե՞լ էր:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Բաքուն վերցվելուց հետո, ադրբեջանցիներին վարժեցնելու նպատակով կազմվեց մի ռազմական կենտրոն: Նրանց զինվորները մեր զինվորներն էին:՝

ՀԱՐՑ. **Դուք ո՞ւմ դեմ էիք կռվում:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Մենք կռվում էինք հայերի դեմ: Նրանցից ոմանք ասում էին, որ ռուս են: Ռազմագերիները հայեր էին:

ՀԱՐՑ. **Բաքվում այլ բանակ կա՞ր:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Մենք լսեցինք, որ այնտեղ բրիտանական զորք կա:

ՀԱՐՑ. **Բաքվի և Գյանջայի միջև երկաթուղագիծը ո՞վ էր վերահսկում:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Մենք էինք վերահսկում:

ՀԱՐՑ. **Առաջին անգամ Ջիվանշիրին ե՞րբ հանդիպեցիր:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես նրան հանդիպեցի Գյանջայում: Այնտեղ նաև խան Խոյսկուն հանդիպեցի:

Խոսրովյանը, դիմելով դատարանին՝

-Չե՞մ կարող արդյոք հարցնել, թե ինչ է լսել:

Նախագահող դատավորը՝

-Ոչ, միայն այն, ինչ տեսել է:

Խոսրովյան՝

ՀԱՐՑ. **Մետրոպոլ պանդոկում Ջիվանշիրի հետ խոսեցի՞ր:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Խճողված էր: Ես նրա հետ չեմ խոսել: Նրա հետ խոսել եմ նախքան Բաքուն վերցվելը:

ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՎԿԱ

Մտավոր հիվանդությունների մասնագետ, դոկտոր Մազհար Օսման բեյը, երդվելուց հետո, ի պատասխան դատախազ Գրիբոնի հարցերի ասաց, որ պատերազմի ժամանակ մայոր էր, որ ներկայումս Շիշլիի ֆրանսիական հիվանդանոցի գլխավոր բժիշկն է, որ գրել է ավելի քան 5,000 բժշկական զեկուցագրեր և բուժել մոտ 650 մտավոր հիվանդների:

Պատասխանելով էպիլեպսիայի վերաբերյալ դատախազի տված հարցին, նա ասաց.

-Էպիլեպսիան մի հիվանդություն է, որն արտահայտվում է նոպաների ձևով: Այդ նոպաները երեք տեսակ են լինում: Երբ հիվանդը լուրջ նոպա է ունենում, գիտակցությունը կորցնում է: Այդպիսի հիվանդը ոչինչ չի զգում, նույնիսկ, երբ նրան սպանեն: Փոքր նոպաները գլխապտույտ են առաջացնում: Նման փոքր նոպաներին կարող են հետևել ծանր նոպաներ: Նոպաների երրորդ տեսակը հոգեբանական է: Սա հիմնականն է, որովհետև առաջին երկու կարգի նոպաների ժամանակ մարդ որևէ ոճիր գործել չի կարող: Լուրջ նոպայից հետո հիվանդը վախի մեջ է: Երբ մարդ ոճիր է գործում նման նոպայի ընթացքում կամ լուրջ նոպային հաջորդած վախի ժամանակ, բժշկական տեսակետից նրան պատասխանատու չենք համարում: Որովհետև, երբ մարդ էպիլեպտիկ նոպայի մեջ է, շատ հավանական է նա ջղագրգիռ վիճակում է լինում, նա պատասխանատու է իր գործած որևէ ոճիրի համար, բայց պատասխանատվությունը մեղմացվում է: Ամեն էպիլեպտիկ նոպա չէ, որ փոխում է մարդու էությունը: Մարդը, որի էությունը փոխված չէ, գործած ոճիրի համար պատասխանատու է համարվում: Երբ մասնագետին սրա նման դեպք է ներկայացվում, նա պետք է առաջին հերթին փորձի պարզել պաշտպանյալի վիճակը ոճիրը կատարած ժամանակ. որովհետև էպիլեպտիկը կարող է պատասխանատու լինել և չլինել: Շատ հիվանդներ ասում են, որ լուրջ նոպաներ են ունեցել: Դա որոշելու համար մենք հետաքննում ենք, թե ինչպե՞ս է կատարվել ոճիրը և հաշվի ենք առնում վկաների ցուցմունքները: Այդ պատճառով, միայն հիվանդին քննելը բավարար չէ: Նաև պետք է հետազոտվեն այն հանգամանքները, որոնց պայմաններում կատարվել է ոճիրը: Տարբեր ախտանիշերից մենք կարող ենք ասել մարդու մոտ էպիլեպսիայի աստիճանը: Օրինակ՝ պատերազմի ժամանակ 20,000 մարդ կարող է ասել, որ էպիլեպտիկ է, բայց կարող է ստացվի, որ միայն 500-ն են իրոք այդպիսին: Մասնագետը մարդու էպիլեպտիկ լինելու աստիճանը կարող է որոշել քննելով, հարցազրույցով և այլ միջոցներով: Եթե պատերազմի ժամանակ իրենց էպիլեպտիկ համարող բոլոր մարդկանց ուզենանք քննել, բոլոր հիվանդանոցները նրանցով պիտի լցվեին: Այդ պատճառով, բժիշկները նախ փնտրում են որոշ ախտանիշներ և ապա որոշում են, թե կարիք կա՞ հիվանդին քննել: Բոլոր քաղաքացիական և զինվորական դեպքերից միայն երկու կամ երեք պաշտպանյալներ են, որ նման շփոթություն են ունեցել, և սրանք այն մարդիկ են, որ մարդ են սպանել, պատահական մարդու, առանց կանխամտածվածության: Այդ պաշտպանյալները վրեժի, կամ վնաս հասցնելու մասին ոչ մտածում էին, ոչ էլ պլանավորում: Նման հանգամանքներում մարդիկ նույնիսկ իրենց ծնողներին կարող են սպանել: Հետո նրանք չեն ասում, թե երազներ են ունեցել, որովհետև նրանց ուղեղների միայն ստորին գործառնություններն են ակտիվ: Նրանք, հաստատ, չեն գիտակցում, թե ինչ են անում:

Էպիլեպտիկ նոպաները գալիս են առանց որևէ պատճառի: Այլ կերպ ասած, դրանք հուզմունքի, վախի կամ այլ հայտնի պատճառների արդյունքը չեն: Վեպերի կամ գրականության մեջ կարելի է հանդիպել նկարագրությունը այնպիսի մարդկանց, որոնք էպիլեպտիկ նոպաներ և գիտակցությունը կորցնելու դեպքեր են ունենում որևէ մեկին տեսնելու հուզումից: Սակայն, բժշկության մեջ նման դեպքեր տեղի չեն ունենում: Եթե հետազոտես բոլոր մարդասպանությունները, կտեսնես, որ հաճախ ասվում է, թե *(մարդասպանությունը)* հետևանք էր գիտակցությունը կորցնելուն, որն էլ, իր հերթին, պայմանավորված էր սիրո կամ վրեժի զգացումներով, կամ էլ դրամի ընչաքաղցությամբ: Բայց սրանք երբեք չեն ընդունվել իբրև արդարացումներ:

Խոսրովյան՝

-Վկան այստեղ իր գիտելիքնե՞րն է ցուցադրում:

Նախագահող դատավորը՝

-Վկան զեկուցում է իր բժշկական գնահատականը:

Վկա՝

-Իմ զեկույցից բխում է, որ բժշկական տեսակետից մարդ կարող է պատասխանատու լինել: Մենք այստեղ ենք դատարանին նկարագրելու համար գիտության և տեխնոլոգիայի ժամանակակից վիճակը, և ոչ թե մեր զգացումները արտահայտելու: Դատարանը կարող է նկատի առնել այլ տեսակետներ ևս: Ռազմաճակատում, ամենալարված հանգամանքներում, էպիլեպտիկ նոպաներ չեն նկատվել այն զինվորների մոտ, որոնք առաջին շարքերում են: Այդ խնդիրները նկատվել են այն զինվորների մոտ, որոնք երկրորդ և երրորդ դիրքերում են եղել: Ուզում եմ ասել, որ նույնիսկ ամենալարված հանգամանքներում առաջացած հուզմունքի հետևանքով, մարդիկ էպիլեպտիկ նոպաներ չեն ունենում: Նույնիսկ խելացնոր մարդիկ, ռազմաճակատում ծայրաստիճան լարված վիճակում, էպիլեպտիկ նոպաներ չեն ունենում:

ՀԱՐՑ. Պաշտպանյալին քննե՞լ ես:

ՊԱՏԱՍԽԱՆ. Սեպտեմբերի 20-ին մենք երեք գործակիցներիս հետ միասին, որոնք նույնպես մասնագետներ են, քննեցինք պաշտպանյալին: Մենք քննեցինք պաշտպանյալի արյունը և զրուցեցինք նրա հետ:

ՀԱՐՑ. Կարո՞ղ ես մեզ ասել քննությունների արդյունքը:

ՊԱՏԱՍԽԱՆ. Քննության վերջում մենք որոշակի եզրակացության հանգեցինք: Մարդը, որին քննեցինք, ոճիրը կատարելու պահին խելացնոր չէր: Ոճիրը կատարելու պահին առկա խելացնորությունը կարող է անցնել: Բայց ես ասում եմ, որ պաշտպանյալը ոճիրը կատարելու պահին խելացնոր չի եղել և այժմ էլ խելացնոր չէ: Երբ պաշտպանյալին քննեցի, նրա մոտ էպիլեպսիայի նշաններ չտեսա: Պատասխանները, որ նա տվեց իմ հարցերին, էպիլեպտիկի պատասխաններ

չէին: Համենայն դեպս, ամենակարևոր խնդիրն այն է, որ ոճիրը կատարելու պահին նա, որոշակիորեն, որևէ նոպա չի ունեցել, որը նրան ծերբազատեր ամեն մի պատասխանատվությունից: Եթե նույնիսկ ենթադրենք, որ այս մարդը իր կյանքում լուրջ նոպաներ է ունեցել առանց մնացորդային ազդեցությունների, նա ոճիրը կատարելու պահին շփոթված չի եղել, ոչ էլ նոպայի վիճակում է գտնվել: Այս մարդը անհավասարակշռված չէ, ոչ էլ գիտակցությունն է մթագնված: Նա քթից է խոսում, որովհետև քիթը թեթևակի ծռված է: Դա կարող է կոչվել անհավասարակշռված: Այնուամենայնիվ, ոչ ոք կատարյալ չէ: Ոչ ոք չի կարող պայքարել ժամանակի դեմ: Ավելին, իր հոր հիվանդությունը և իր մեծ հոր խելացնորությունը ոչ մի կերպ չեն նշանակում, որ նա անհավասարակշիռ պետք է լինի: Անհավասարակշիռ մարդկանց մոտ նման փաստեր չէ, որ փնտրվում են, այլ հոգեբանական ցուցմունքներ: Ես ուսումնասիրեցի հարցի այդ կողմը: Այդ տեսանկյունից ես կարող եմ որոշել, որ նա անհավասարակշիռ չէ: Անհավասարակշռություն չի նշանակում խելացնորություն: Դա մի գոտի է խելամտության և խելացնորության միջև:

ՀԱՐՑ. Պաշտպանյալը մելամաղձոտությամբ տառապո՞ւմ է:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ, նա մելամաղձոտ չէ: Մեր գործընկերներից միայն մեկն ասաց, որ նա տխուր է երևում:

Խոսրովյան էֆենդիի հարցերը՝

ՀԱՐՑ. Քանի՞ տարեկան ես:

ՊԱՏԱՍԽԱՆ. Երեսունութ:

ՀԱՐՑ. Ինչքա՞ն ժամանակ ես բժշկական ասպարեզում:

ՊԱՏԱՍԽԱՆ. Տասնութ տարի:

ՀԱՐՑ. Ե՞րբ ես նշանակում ստացել ֆրանսիական հիվանդանոցում:

ՊԱՏԱՍԽԱՆ. Պատերազմի ժամանակ: Զինադադարից հետ ֆրանսիացիներն ինձ նշանակեցին հիվանդանոցի գլխավոր բժիշկ:

ՀԱՐՑ. Պատերազմի ժամանակ հիվանդանոցը թուրքերի ձեռքո՞ւմ էր:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո:

ՀԱՐՑ. Հրատարակված հոդվածներ ունե՞ս:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես բազմաթիվ հոդվածներ ունեմ թուրքերեն և գերմաներեն: Իմ գերմաներեն հոդվածները բելգիացիներն են թարգմանել: Շատ հոդվածներ ունեմ հրատարակված բժշկական հանդեսներում: Ես Մտավոր հիվանդությունների ֆրանսիական ընկերակցության անդամ եմ:

ՀԱՐՑ. Կարո՞ղ ես ինձ տալ բրիտանացի գլխավոր գրողներից մեկի անունը:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես շատ հեղինակներ գիտեմ: Անգլերենի վրա երկու տարի եմ աշխատում, բայց նրանց գրքերը կարդալու չափ բավարար չգիտեմ:

ՀԱՐՑ. Ես հարցնում եմ նրանց լավագույնս ճանաչված որևէ հեղինակի անուն:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ֆրանկլին, Հերբերտ, Սուիկատ, և այլն:

ՀԱՐՑ. Այդ հեղինակների աշխատությունները կարդացե՞լ եք:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես տեսել եմ դրանց թարգմանությունները:

ՀԱՐՑ. Բժիշկը կարո՞ղ է նման դատավարությունում որոշակի պատասխաններ տալ:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո: Տեսությունը տարբեր է: Մասնագետը կարող է որոշակի պատասխան տալ: Եթե չգիտի, կասի, որ չգիտի:

ՀԱՐՑ. Դու ասացիր, որ տեսականորեն անկարելի է որոշակի որևէ բան ասել, բայց կարելի է՝ գործնական տեսանկյունից: Դա հետաքրքիր չէ՞:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այն, ինչ ձեզ հետաքրքիր է թվում, մեզ համար բոլորովին հետաքրքիր չէ:

ՀԱՐՑ. Քեզ հարց չի տրվել պաշտպանյալի մեղավոր, կամ ոչ մեղավոր լինելու մասին: Քեզանից սպասվում էր, որ ասեիր, թե ի՞նչ ես տեսել պաշտպանյալի մոտ:

ՊԱՏԱՍԽԱՆ. Նախ և առաջ, ես իրավաբանից ավելի լավ գիտեմ, թե ինձ ինչ է հարց է տրվել: (*Մագիար Օսման բեյը որպես օրինակ բերեց մի քանի դատավարություններ և նկարագրեց այդ դատավարություններում կայացված վճիռները*):

ՀԱՐՑ. Դու ծանո՞թ ես այն եզրակացություններին, որոնք տրվել են ավելի վաղ ցուցմունքներ տված քո գործընկերների կողմից:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո:

ՀԱՐՑ. Իմ հարցերը ձևակերպված են քո ուսուցիչների կողմից: Խնդրում եմ գիտական պատասխաններ տաս:

Նախագահող դատավորը՝

-Գուցե այնքան էլ գիտական պետք չէ, որ լինեն: Կարող է չհասկանանք:

Խոսրովյան՝

ՀԱՐՑ. Էպիլեպտիկը ցույց տալի՞ս է այնպիսի նշաններ, որոնց հիման վրա կարելի է որոշել, նա էպիլեպտի՞կ է թե՞ ոչ:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես նրանց հետ զրուցում եմ, նրանց քննում և որոշակի պատասխան եմ տալիս:

ՀԱՐՑ. Հնարավո՞ր է որոշակիորեն ասել, որ մի անձնավորություն էպիլեպտիկ է:

ՊԱՏԱՍԽԱՆ. Որոշակիորեն ասել չի կարելի, բայց նկարագրությունից ես կարող եմ ասել:

Հետո, Խոսրովյան էֆենդին առաջադրեց հարցերի մի շարք, նշելով հիվանդության որոշ ախտանիշներ: Ամփոփ, նա ասաց հետևյալը՝

ՀԱՐՑ. Ի՞նչ բան է պաթոլոգիական զգացումը:

ՊԱՏԱՍԽԱՆ. Երբ մարդու ողջ ներվային սիստեմը ցնցված է և նա ընկնում է աննորմալ վիճակի մեջ:

ՀԱՐՑ. Դոկտոր, եթե ես քեզ կանչեմ և ասեմ, թե իմ տանը պաթոլոգիական զգացումով մի հիվանդ կա, որը մարդ է սպանել. դու կասեի՞ր, որ այս մարդը պատասխանատու է:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո: Բժշկական տեսակետից նա պատասխանատու է, որովհետև յուրաքանչյուր ոճիր կատարվում է գրգռվածության վիճակում:

ՀԱՐՑ. Իսկ ի՞նչ կլինի, եթե քեզ ասեի, որ այս մարդը անհավասարակշռված է և մարդ է սպանել նոպայի պահին:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես դրան արդեն պատասխանել եմ: Նա պատասխանատու է: Համենայն դեպս, եթե նա անհավասարակշռված է, նրա պատասխանատվությունը նվազում է:

ՀԱՐՑ. Շատ լավ: Կարո՞ղ ես տալ մի բժշկի անուն, որ այդպես է ասում:

ՊԱՏԱՍԽԱՆ. Պրոֆեսորներ Հուբերտ և Դոբրեն: Նրանք բոլորը գտել են, որ նման դեպքերում պաշտպանյալները պատասխանատու են:

ՀԱՐՑ. **Նրանք պատասխանատու են նույնիսկ այն դեպքում, երբ ոճիրը կատարել են նոպայի պահի՞ն:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո: Նրանցից մեկը անհավասարակշռված վիճակում մի հինգ տարեկան աղջկա է բռնաբարել և պատասխանատու է համարվել:

ՀԱՐՑ. **Մարդու մոտ անհավասարակշռվածության նոպան կարո՞ղ է գիտակցությունը կորցնելու պատճառ դառնալ:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ, բայց նրա կամքի ուժը թուլանում է:

ՀԱՐՑ. **Զարմանալի է:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Դուք զարմանում եք այն պատճառով, որ չգիտեք:

ՀԱՐՑ. **Որևէ բան գիտե՞ս պաշտպանյալի ընտանիքի մասին:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես այդ մասին իմացա թերթերից և հենց իրենից:

ՀԱՐՑ. **Ճշգրիտ ի՞նչ գիտես:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայրը կես խելացնոր էր, բայց ապաստան չի գնացել: Իր մեծ մայրը նոպաներ էր ունենում, բայց զարթնում էր, երբ բացում էին ձեռքի ափը:

ՀԱՐՑ. **Այդ կինը էպիլեպտի՞կ էր:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Հենվելով տրված նկարագրության վրա, նա հիստերիկ էր:

ՀԱՐՑ. **Իսկ ի՞նչ կասես հորեղբոր մասին:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Նա նույնպես, կես խելացնոր էր:

ՀԱՐՑ. **Գիտե՞ս, որ պաշտպանյալը երեխա եղած ժամանակ ուշագնաց էր լինում:**

ՊԱՏԱՍԽԱՆ.. Այո, նա ինձ ասել է:

ՀԱՐՑ. **Նա քեզ նաև ասե՞լ է, որ վերջին վեց ամիսների ընթացքում վեց անգամ ուշագնաց է եղել:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Պաշտպանյալն ինձ ասել է, որ ուշագնաց է եղել ոճիրը գործելուց 15 օր առաջ և մի անգամ էլ ուշագնաց է եղել բանտում:

ՀԱՐՑ. **Այս մարդու մեծ մայրը էպիլեպտիկ էր: Եթե ցուցված է, որ նա երեխա եղած ժամանակ էպիլեպտիկ էր, սա չի՞ ապացուցում, որ պաշտպանյալը էպիլեպտիկ է:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Նույնիսկ, եթե նրա մայրը էպիլեպտիկ եղած լիներ, դա չէր նշանակի, որ ինքը ևս էպիլեպտիկ է: Ես պետք է նրան անհատապես քննեմ: Նրան պետք է հետազոտման տակ դնեմ: Հետո ես կարող եմ որոշել՝ նա էպիլեպտի՞կ է, թե՞ ոչ:

ՄԱՀՋԱՐ ՕՍՄԱՆ ԲԵՅԻ ԶԵԿՈՒՅՑԱԳԻՐԸ ԴԱՏԱՐԱՆԻՆ

Ներքոստորագրյալները,

Դասավանդող բժիշկ Մազհար Օսմանը՝ Իսկուդարի Հոգեկան ապաստարանի տնօրեն և գլխավոր բժիշկ, Շիշլիի Ֆրանսիական հիվանդանոցի գլխավոր բժիշկ և առողջապահական բարձրագույն ատյանի անդամ

Բժիշկ Լուտֆի Ակիֆը՝ Իսկուդարի Հոգեկան ապաստարանի արական բաժնի գլխավոր բժիշկ

Բժիշկ Շուքրու Հազիմը՝ մտավոր և նյարդային հիվանդությունների հիվանդանոցի գլխավոր բժիշկ

Բժիշկ Ահմեդ Շուքրուն՝ Իսկուդարի Հոգեկան ապաստարանի Կենսաքիմիական փորձարանի ղեկավարի օգնական

Հաստատում ենք

Մենք, երկար ժամանակի ընթացքում, փորձարարական մեթոդներով և բժշկական հարցազրույց ունենալով, 1921-ի սեպտեմբերի 20-ին բրիտանական բանտում զննեցինք Միսաք Թոռլաքյանին, որը մեղադրվում է Ադրբեջանի նախարար Ջիվանշիրի սպանության մեջ:

Ուշադիր ուսումնասիրելով նրա վարքը բանտում եղած ժամանակ, իր արտահայտությունները, որոնք կարող էին թելադրել ոճիրը գործելիս իր վիճակի մասին, մենք որոշեցինք, իբրև վկաներ, Բրիտանական զինվորական բարձր դատարանին ներկայացնել մեր դիտարկումներն ու եզրակացությունները՝ ներքոհիշյալ ամփոփագրով:

Պաշտպանյալն ասաց, որ 32 տարեկան է, որ ծնվել է Տրապիզոնում, որ իր կինը և երկու երեխաները սպանվել են, որ սկզբում աշխատել է որպես ագարակապան, ապա որպես վաճառականի օգնական: Նա նաև ասաց, թե իր հոր մայրը ևս հիվանդ էր և ուշագնաց էր լինում: Նա ասաց, որ երբ բացում էին իր մեծ մոր ձեռքերի ափերը, նա վերագտնում էր գիտակցությունը: Իր հոր կամ մոր կողմից որևէ մեկը, ինչպես նաև իր ազգականներից ոչ մեկը ինքնասպանություն կամ մարդասպանություն չի գործել: Թեև իր հայրը դյուրաբորբոք է եղել և հոգեկան հիվանդ, նա, ըստ ասվածի, այնքան խելացնոր չէր, որ հոգեբուժական ապաստարան ուղարկվեր: Պաշտպանյալը ասաց, որ ինքը տեղեկություն չունի, թե ե՞րբ է քայլել, կամ ե՞րբ է սկսել խոսել, կամ ի՞նչ հիվանդություն է ունեցել երեխա ժամանակ: Նա ասաց, որ երեք տարի առաջ որովայնային տիֆի նոպա է ունեցել, որ ուրիշ լուրջ հիվանդություններ չի ունեցել, մինչ այս ուրիշ ոչ մի դեպքի կապակցությամբ դատապարտյալ չի եղել, որ ինքը հանդարտ ու խաղաղ անձնավորություն է, մանկուց ի վեր դեպքից դեպք ուշագնաց է եղել, որի մասին իմացել է ուրիշներից, որ դրանք չի հիշում, որ անցյալում խելացնորության նոպաներ չի ունեցել, որ ինքը դրա հետ կապված կասկածների առումով երբեք հետազոտման չի ենթարկվել, որ իրեն երբեք հոգեբուժական ապաստարան չի հանձնարարվել, որ ալկոհոլ, մորֆին, կոկային օգտագործելու սովորություն չունի, որ զորակոչվել է բանակ, բայց երկու ամիս հետո զորացրվել է իր անհայտ հիվանդության պատճառով, որ Ստամբուլ գալուց հետո մի անգամ էպիլեպտիկ նոպա է ունեցել այն տանը, որտեղ ապրելիս է եղել, որ տան տիրուհին վկայել է այս մասին, որ բան-

տում իր բանտախցի ընկերները ասել են, թե ինքը նման վիճակից տառապում է, որ մարդասպանության օրը ինքը Ջիվանշիրին պատահաբար կանդիպել է փողոցում, որ իրեն թվացել է, թե նա իր նկատմամբ ագրեսիվ ու սպառնալի դիրք է ընդունել, և փորձել է փոխադարձել, որ մնացյալը շատ լավ չի հիշում, որ ամեն ինչ տեղի է ունեցել երազի նման, որ ի վերջո, նա զարթնել է ոստիկանատանը՝ ծեծից, որ նա այնտեղ պահվել է և բժիշկների կողմից քննվել երկու անգամ, որ այդ բժիշկները իր հետ այդքան երկար չեն զրուցել ինչպես մենք, որ իրեն քննել են, և հետևաբար, նա մեզ պիտի թույլ տա, որ քննենք իրեն: Այն բանից հետո, երբ մենք հավաստիացումներ տվեցինք, նա քաղաքավարի և միշտ երկչոտությամբ պատասխանեց մեր հարցերին, որոնք վերաբերում էին սպանության ժամանակ իր վիճակին, իր էպիլեպտիկ նոպաներին և իր մտավոր կարողություններին:

ՖԻԶԻԿԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Դատապարտյալը միջին բարձրության է, առանց դեմքի տարբերիչ նշանների: Քիթը թեթևակի թեքված է դեպի աջ: Հլու հայացք ունի, ականջները վերևում միացած են, ծեռքերը միացած չեն: Գլխին տարբերիչ նշաններ չկան, չի կակազում: Նրա մյուս օրգանները թույլ զարգացածության նշաններ ցույց չեն տալիս, բայց թեթևակիորեն քթի մեջ է խոսում: Սրտի զարկերը արագ են՝ 90 -ից 120 -ի միջև: Բաբախումը փափուկ է:

Բիբերը պայծառ են և բավական լավ են հարմարվում լույսին ու հեռավորությանը: Արմունկների և դաստակների ոսկորները երկու կողմում հավասար են և որովայնի շուրջ մաշկը նորմալ է:

Մյուս օրգանների վրա աչքի ընկնող նշաններ չկան:

(Բժշկական անծանոթ տերմին) արյան մանրէաբանական ստուգումը ցույց տվեց, որ հեղուկայնությունը բացասական է: Մեզի մեջ գլյուկոզա, կամ ալբումին չի հայտնաբերվել:

ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Ժամանակի և վայրի իր ընբռնման մեջ շեղումներ կան: Նա գիտի օրը, ամսաթիվը, ինչքան ժամանակ է մի վայրում եղել, հարևանությունը և իր գտնված վայրի հասցեն: Զգացմունքային համակվածություն կամ երևակայություններ չունի: Խոսում է միայն մղձավանջներ ունենալու մասին: Ասում է, որ ընկճված է, որ տառապում է շարունակական գլխացավով, շատ քիչ ուտելուց անգամ վքնածություն է զգում, որ մարսողական խնդիրներ չունի և որ չի կարողանում քնել: Ասում է, որ իր համար կյանքը և մահը նույնն են: Հակառակ այդ հայտարարությունների, հիվանդը մելամաղծոտության նշաններ ցույց չի տալիս: Ավելի շուտ նա ամաչկոտ է և հարցերին պատասխանում է մտածելուց հետո: Խոսակցությունը նորմալ է: Իր շարժումների, կամ խոսակցության մեջ խնդիրներ չկան: Մեր տարբեր հարցերին նա պատասխանում էր կրկնելով, որ ինքը թախծոտ է, ամեն մարդու հետ յոլա է գնում, որ ոչ մեկի հետ չի կռվում: Նա ասաց, որ ինքը չի հիշում իր ունեցած էպիլեպտիկ նոպաները, և որ այդ մասին լսել է իր շրջապատի մարդկանցից: Թվաց, որ անհանգստացած է իր երկարատև հարցաքննությունից: Ասաց, որ գիշերը քնած ժամանակ նոպաներ չեն լինում, որ երբ առավոտյան զարթնում է գլխապտույտ է ունենում, որ անկողինը չի կեղտոտում, իսկ եթե նույնիսկ երեխա ժամանակ կեղտոտել է, այժմ չի հիշում: Չի անհանգստանում փոքր նոպաների

կրկնությունից, որ նա երբեք նյարդային անկում չի ունեցել, որ իր նոպաները լինում են ցերեկով, երեք կամ չորս ամիսը մեկ անգամ, որ գիշերները ունեցած նոպաները լինում են անկողին մտնելուց առաջ, որ նա երբեմն քնի մեջ *(մղձավանջներ)* է ունենում, և որ մարդասպանությունից մինչև 15 - 20 օր առաջ նոպաներ չի ունեցել: Պատասխանների միջոցով ուզեցինք ճշտել հիվանդի մտավոր տվյալները, նա չկարողացավ ասել ԱՄՆ-ի նախագահի կամ բոլշևիկների ղեկավարի անունները: Նա կարողացավ հայերենով թվարկել տարվա ամիսները, բայց դա արեց մտածելով և բաց թողեց հոկտեմբեր և հունիս ամիսները: Երբ խնդրեցինք, որ ամիսները թվարկի դեպի հետ հերթականությամբ, նա ասաց, որ դա չի կարող անել: Նա սխալ պատասխաններ տվեց երեք ամսվա օրերի թվի և վեց շաբաթների օրերի թվի մասին տրված հարցին, ինչպես նաև այն հարցին, թե ինչքա՞ն պիտի արժենա երեք օխա կշռող որոշակի ապրանք , եթե դրա մեկ օխան արժե 120 դուրուշ: Նման հարցերին, թվային խնդիրներին նա սխալ պատասխաններ էր տալիս: Երբ հարցնում էին իր հիվանդության մասին, ասում էր. «Չեմ հիշում»:

ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

ՎԻՃԱԿԸ ԵՎ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Թոռլաքյանը ներկայումս հոգեկան հիվանդ չէ և մարդասպանության ժամանակ հոգեկան հիվանդ չի եղել: Նա մշտական կամ ժամանակավոր խելացնորության նշաններ չի ցուցաբերում: Թոռլաքյանի էպիլեպտիկության խնդիրը պետք է գնահատվի: Նախ, այն նոպաները, որ նա երկչոտությամբ նկարագրում է, էպիլեպսիայի հանգամանքներ չունեն: Քնի ժամանակ որևէ նոպայի բացակայությունը, կամ նրանց գոյություն ունեցած լինելը վկայող ախտանիշների բացակայությունը, ինչպես նաև գիտակցությունը (թեկուզ ոչ հաճախակի) կորցնելու բացակայությունը, տարբեր չեն այն ախտանշաններից, որոնք Արևելքում որպես հայց ներկայացվում են *(զինակոչիկների կամ դատապարտյալների կողմից)* խուսափելու համար զինվորական ծառայությունից, կամ ոճրային պատիժներից: Եթե նույնիսկ մենք ընդունենք այն շատ փոքր հավանականությունը, որ նա իր կյանքի ընթացքում կարող է դեպքից-դեպք նոպաներ ունեցած լինել, դրանք հիվանդի բնավորության վրա որևէ մշտական ազդեցություն չեն գործել: էպիլեպտիկների մոտ նկատվող ընդհանրական վնասը (սա շատ կարևոր է իրավական բժշկության մեջ, որովհետև օգնում է նվազեցնելու անհատի պատասխանատվությունը, բայց չի բացառում), Թոռլաքյանի մոտ գոյություն չունի: Ընդհակառակը, թվում է, թե Թոռլաքյանը մեղմ ու հանդարտ բնավորություն ունի: Նաև Թոռլաքյանի ցուցմունքից և ոճիրի իրականացման ընթացքից բացահայտվում է, որ էպիլեպտիկ նոպայի հետևանքով մտավոր շփոթվածության, կամ ներվային անկումի, կամ էպիլեպտիկ վիճակի սկսվելու հարց չկա: Նա մասնավորապես ասաց, որ էպիլեպտիկ նոպա է ունեցել 15 օր առաջ: Նոպայից 15 օր հետո հիշողության կորուստ չի կարող լինել. այդ վիճակում եղող հիվանդը չի կարող նման ոճիր գործել և հետո այս ձևով նկարագրել այն: էպիլեպսիայի ժամանակ նման ախտանիշներ չեն լինում: Հետևաբար, պարզ է, որ այս մարդասպանությունը իրականացված չէ որպես հետևանք մի էպիլեպտիկ նոպայի, որը կբերեր բժշկական ոչ-պատասխանատու վիճակի, կամ մի էպիլեպտիկ վիճակի, որը որոշ չափով կնվազեցներ պա-

տասխանատվությունը: Եթե նույնիսկ ընդունենք, որ հիվանդը բանակից զորացրվել էր իր հիվանդության պատճառով, սակայն այն հանգամանք, որ նա չկարողացավ հաստատել, թե ի՞նչն էր իր հիվանդությունը, որոշ կասկածներ է հարուցում: Ավելին. իր կրկնվող հայտարարություններն այն մասին, որ երբեք հետազոտման տակ չի եղել, որը թեկուզ մեկ անգամ լիներ երկարատև ժամանակաշրջանով և որ ինքը երբեք զինվորական հիվանդանոցում չի եղել, այն բանի ապացույցներն են, որ նա էպիլեպտիկ չէ: Աշխարհի բոլոր բանակներում էպիլեպտիկները զորացրվում են այն բանից հետո, երբ հետազոտվում են և նոպաները դիտարկվում են մասնագետների կողմից: Թոռլաքյանը նաև հոգեկան հիվանդ չէ և չունի մտային դանդաղկոտություն, որը մենք մտավոր անհավասարակշռություն ենք անվանում: Դատարանում նա ցույց տվեց, որ գեղջկական մարդու գիտելիքներ ունի և բավարար չափով խելացի է: Ինչ վերաբերում է էպիլեպտիկ լինելու մասին իր հայցին, պարզագույն հաշվումներում իր սխալները ուրիշ բան չեն, եթե ոչ կեղծիքի կոպիտ փորձեր:

Իր հոգեկան վիճակը, կամ անհավասարակշռությունը ուշադրություն են պահանջում: Նման ախտանիշները հոգեբանական նշաններ են, որոնք կարևոր են հոգեբուժական կամ իրավական բժշկության համար: Թե՛ հիվանդը, թե՛ վկաները նշեցին, որ նա որևէ մոլեգին զգացում չունի *(ոչ դյուրընթեռնելի բառ)* խմիչքի, կամ այլ մոլություններ չունի և թափառաշրջիկ կյանքի հակված չէ: Ինչպե՞ս կարող ենք անհավասարակշռված համարել մի մարդու, որը բացահայտորեն շատ քիչ է խոսում կամ ասում, կամ մեկը, որը ականջների թեթևակի տձևություն ունի: Եթե նույնիսկ ընդունենք սա իբրև բժշկական կամ տեսական սիրալիրություն, նորմալության և աննորմալության միջև ընկած մոխրագույն գոտում, որը մենք անվանում ենք հոգեպատիա, Թոռլաքյանը ավելի մոտ է կանգնած նորմալ կողմին: Աննորմալության և մարդասպանության հարաբերակցությունը որևէ երկրում ընդունված չէ: Ավելին. Լոզանի կոնֆերանսում, Փարիզի մտավոր հիվանդությունների պրոֆեսոր Ժիլերբալը առաջարկեց, որ պետք է դատարանին թողնել որոշում ընդունելու հնարավորությունը ոչ միայն այն գործերի ժամանակ, որտեղ անհավասարակշռության նշաններ կան, այլև նույնիսկ ավելի առաջացած պայմաններում եղող հիվանդների դեպքում: Սոլեբյան դատարանում պրոֆեսոր Դոբրը, որպես պաշտպանյալին մահապատժից ազատելու գործոն չնշեց նույնիսկ սադիզմը, որը անհավասարակշռության ամենալայնորեն ընդունված ախտանիշն է: Հաճախ ասվում է, որ միայն հոգեկան հիվանդները չեն, որ մարդասպանություն են կատարում, բայց հոգեկան հիվանդները նույնպես մարդասպանություն են կատարում: Ամեն դեպքում, պատժամիջոցները և ուղղիչ միջոցառումները կիրառվում են սանձելու համար ավելի շուտ հոգեպաթներին ու նորմալ մարդկանց, քան խելացնորներին:

Հետևաբար, լրիվ հանգիստ խղճով հաստատում ենք, որ՝

1. Թոռլաքյանը այժմ խելացնոր չէ և խելացնոր չէր ոճիրը գործելիս:
2. Նա ոճիրը չի կատարել ո՛չ էպիլեպտիկ նոպայի ժամանակ, ո՛չ էլ էպիլեպսիայի հետևանքով առաջացած մտավոր շփոթվածության ընթացքում, ոչ էլ *(անընթեռնելի բառ)* ազդեցության տակ, կամ էպիլեպտիկ բռնկման արդյունքում իր անձի ներքին դրդմամբ:
3. Այն ժամանակ նրա գիտակցությունը գործել է լրիվ, և այժմ ևս լրիվ գիտակից է:

Մենք նաև հաստատում ենք, որ Չիվանշիրի սպանության համար մեղադրվող Միսաք Թոռլաքյանը բժշկական տեսակետից պատասխանատու է:

(Ամսաթիվ) Սեպտեմբեր 21, 1921
(Ստորագրված) Սիմեդ Շուքրու, Լուտֆի Ակիֆ, Մազհար Օսման

ԲԺՇԿԻ ԿԱՐԾԻՔԸ

Բրիտանական բանակի բժիշկ, մայոր Դեյվիսին լսեցին իբրև բժիշկ:

Մայոր Դեյվիսը դատարանի հարցերին պատասխանեց հետևյալ կերպ.

***ՀԱՐՑ*. Ի՞նչ է ձեր անունը:**
ՊԱՏԱՍԽԱՆ. Մայոր Դեյվիս:
***ՀԱՐՑ*. Պաշտպանյալին քննե՞լ եք:**
ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, երեկ՝ կեսօրից հետո:
***ՀԱՐՑ*. Ի՞նչ դիտարկեցիք:**
ՊԱՏԱՍԽԱՆ. Ես դիտարկեցի հետևյալը. նա իր մարմնի վրա որևէ վերք չուներ: Միայն երկու սպիներ կային վզին ու մեջքին: Հարցրի, թե ի՞նչ հանգամանքներում է դրանք ստացել: Ասաց, որ դրանք վերքերի սպիներ են: Նաև մի սպի կար նրա քթին: Իր անդրադարձները չափազանցված էին: Արյան շրջանառությունը անկանոն էր: Սրտի բաբախյունը 90 էր և անկանոն: Իր ներվերի առումով, վարքը և գործողությունները հանդարտ էին: Միտքը շփոթմունքի մեջ էր: Շատ դժվարությամբ կարողացավ հիշել, թե ինչ էր կերել առավոտյան: Նա որոշակի ոչինչ չէր կարողանում ասել, թե քանի՞ բժիշկ է քննել իրեն: Հարցրի, թե որևէ բան տեսե՞լ է: Ասաց, որ տեսել է իր հարազատներին, որ նրանք իրեն նշան էին անում, շարժում էին իրենց շրթունքները, կարծես իր հետ խոսելիս լինեին: Հարցրի, թե այդ բոլորը երազո՞ւմ է տեսել: Պատասխանեց, որ ինքը մեծ մասամբ արթուն է եղել և ոչ մի ձայն չի լսել: Ես կարծիք կազմեցի, որ նա չի գիտակցում: Նա իր շուրջը կատարվածին ուշադրություն չէր դարձնում:

***ՀԱՐՑ*. Խնդրում եմ դատարանին քո կարծիքը ասես հետևյալի մասին. ոճիրը կատարելիս պաշտպանյալը գիտակի՞ց էր, թե՞ անգիտակից:**

ՊԱՏԱՍԽԱՆ. Իմ հայտարարությունները վկաների ցուցմունքների վրա են հենվում: Եթե ճիշտ է, որ իր հայրը կես խելացնոր էր, իր մայրը էպիլեպտիկ, ըստ իր վկայության, ինքը մեծ մասամբ հիվանդ է եղել, կարծում եմ, որ սա ընտանիքի համար *(բժշկական)* վատ պատմություն է: Պաշտպանյալը երեխա ժամանակ չորս տարի չի կարողացել քայլել և որոշ նոպաներ է ունեցել: Եթե նկատի առնենք այս պատմությունը և իր հարազատների մասին այս մարդու տեսակետները, ապա նա մտավոր թուլության վիճակում է: Ստամբուլում ապրելու ժամանակ նրան մի քանի անգամ տեսել են փրփրած բերանով: Բացի այդ, վկաների ցուցմունքների համաձայն, ոճիրի գիշերը նա մի քանի անգամ կրակել է: Նա չգիտի, թե դրանից հետո ինչ է տեղի ունեցել:

Դժվար է ասել, թե մարդը էպիլեպտի՞կ է, թե՞ ոչ: Ես կարծում եմ, որ նրան էպիլեպտիկ համարելու համար լուրջ նշաններ կան: Թեև շատ հազվադեպ, էպիլեպսիան կարող է տեղի ունենալ զգացմունքային նոպայից հետո, և դա կարող է

մարդուն դրդել ոճիր գործելու: Թեև կարող է թվալ, որ նա ոճիրը գործել է սթափ վիճակում, սակայն իրողությունը դա չէ: Նախ, մենք ունենք վկաների ցուցմունքը պաշտպանյալի անցյալի մասին և ցուցմունք, որ նա հանցագործությունից 15 օր առաջ նոպա է ունեցել: Այս ոճիրը, որը կատարվել է մի նոպայի ժամանակ, կարող էր կատարվել էպիլեպտիկ աշխուժացման հանգամանքներում: Այս մարդը միշտ զենք կրելու սովորություն է ունեցել: Եթե այս բոլոր գործոնները հաշվի առնենք, կարծում եմ, որ նա չէր հասկանում, թե ինքը ինչ է անում: Նա գիտակցությունը կորցրած է եղել: Հուզմունքը, որ նա ունեցել է տեսնելով Ջիվանշիրին, և իր մտքի վրա դրա գործած ազդեցությունը, կարող է այնքան ուժեղ եղած լինել, որ դառնար թեթև նոպայի պատճառ: Սա դժվար հարց է և որոշակի բան ասելը ծանր է: Ես հավատում եմ, որ հանցագործությունը գործել է մի մարդ, որն իր գործողությունները լրիվ չէր վերահսկում:

Նախագահող դատավորը՝

ՀԱՐՑ . Կարծո՞ւմ ես, որ հանցագործությունը կատարելու ժամանակ պաշտպանյալը նոպայի մեջ էր:

ՊԱՏԱՍԽԱՆ. Շատ դժվար է այդ հարցին պատասխանելը: Հնարավոր է, բայց սա իմ անձնական կարծիքն է: Այս հարցի շուրջ կարծիքների տարբերություն կա:

Նախագահող դատավորը՝

ՀԱՐՑ . Այդ պահին նա կսպաներ իր նպատակադրա՞ծ մարդուն, թե՞ պատահական մարդու *(հարցը բերվում է այնպես, ինչպես հրատարակված է եղել)*

ՊԱՏԱՍԽԱՆ. Դա դժվար է ասել: Նա կարող է ընտրեր մի մարդու, որը, իր կարծիքով, ցավ է պատճառել իրեն: Իր ցուցմունքի մեջ *(վկան)* ասաց, որ նա քայլեց դեպի Ջիվանշիրը:

ՀԱՐՑ . Դու եկար այն եզրակացության, որ պաշտպանյալը վատառողջ է իր բաբախումների և դրանց անկանոնությա՞ն պատճառով:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ես հետազոտեցի միայն այն, ինչ խնդրո առարկա էր:

ՀԱՐՑ . Էպիլեպսիայի որևէ նշան կա՞ր:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ:

ՀԱՐՑ . Այս հիվանդության հետ կապված ուրիշ փորձառություն ունեցե՞լ ես:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո: Ես գիտեմ, որ էպիլեպտիկները նման ոճիրներ գործել են:

ՀԱՐՑ . Ուրեմն, կարծո՞ւմ ես, որ մարդասպանությունը կատարված է իբրև էպիլեպսիայի արդյո՞ւնք:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո:

ՀԱՐՑ. Նման դեպքերում զգացումները, կապերը և այլ հանգամանքներ կարո՞ղ են ազդեցություն ունենալ:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ:

ՀԱՐՑ . Պաշտպանյալը ինչքա՞ն կարող է շարունակել:

ՊԱՏԱՍԽԱՆ. Մի քանի րոպե:

Դատական նիստը ավարտվեց՝ անցնելու համար մեղադրող և պաշտպանական կողմերի եզրափակիչ փաստարկների ունկնդրմանը.

ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ Է ՄԵՂԱԴՐՈՂ ԿՈՂՄԻՑ

ԲԻՀԲՈՒԴ ԽԱՆ ՋԻՎԱՆՇԻՐ

Բիհբուդ խան Ջիվանշիրը՝ Ադրբեջանի Սովետական Հանրապետության առևտրի լիազոր ներկայացուցիչը, սպանվել է հուլիսի 18-ի գիշերը, Ստամբուլում, Պերա Փալասում: Նա եղել է Կովկասի թաթարական մի հարուստ ընտանիքի ժառանգորդը: Նրանք մուսուլման սեփականատերեր են եղել, ունեցել են լայնարձակ հողատարածություններ, որոնք շահագործվել են բատրակ գյուղացիների հետ միասին, շահաբաժնային սկզբունքով:

Ջիվանշիրը ծնվել է 1880-ին Զանգեզուրում, որտեղ իր ընտանիքի ունեցվածքն է եղել: Իր սկզբնական կրթությունն ստացել է Շուշիի գիմնազիայում: Շնորհիվ այն բանի, որ այս դպրոցի գրեթե ամբողջ աշակերտությունը հայեր էին, Բիհբուդ խան Ջիվանշիրը մեծացավ հայերի շրջապատում, սովորեց նրանց լեզուն և լավ գիտեր նրանց կարողությունները, նրանց տնտեսական և քաղաքական դերը Կովկասում:

Այստեղ պետք է շեշտվի մուսուլմանական մտածելակերպի մի կարևոր կետ, որը կօգնի ավելի լավ հասկանալու Բիհբուդ խանի վերաբերմունքը հայերի հանդեպ:

Մուսուլման ցեղերը՝ թուրքերը, թաթարները, և այլն, մի մտածելակերպ ունեն, որը նույնը չէ, ինչ եվրոպական և քրիստոնյա ցեղերինը: Եվրոպական ժողովուրդների մոտ, մրցակից ցեղերի զավակների հետ նույն հաստատությունում ի մի գալը, նրանց միջև համերաշխության կապեր կառաջացնի և կստեղծի մի ընդհանուր խումբ, որը փոխադարձ հասկացողությամբ ու աջակցությամբ կփորձի լուծել գոյություն ունեցող դժվարությունները: Այս գործընթացը մուսուլմանների մոտ միշտ ձախողվել է: Ընդհակառակը, ամեն անգամ, երբ մուսուլմանները, ուրիշ ցեղերի հանդեպ ունենալով արհամարհական վերաբերմունք, հնարավորություն էին ունենում իրենք իրենց խորապես ըմբռնելու, որ այդ ցեղերը ուժեղ են և արժանի են գործոնների այն տարածքներում, որտեղ մուսուլմանները հավակնում են տիրապետել միայնակ, այն գաղափարը, որ ուրիշ ցեղեր պետք է թշնամի համարվեն ու ամեն գնով սրբվեն-մաքրվեն ու գնան, իրենց մտածելակերպի մեջ դառնում էր գերակշռող և այնտեղ միշտ դարան էր մտնում, սպասելով գործելու համար պատեհ առիթի: Լավ մուսուլմանը միայն անգիտակից տեսակն է: Իր արհամարհանքի շնորհիվ նա անկարող է պատկերացնել, որ ստորադաս ցեղերը կարող են իրենից առաջ անցնել: Ինչքան մուսուլմանը խելացի է, ինչքան շատ է երիտասարդության ժամանակ շփման մեջ եղել քրիստոնյաների հետ, այնքան շատ հնարավորություններ կան, որ նա դառնա ամենավտանգավոր քաղաքական մի դեմք: Բիհբուդ խանը այս օրենքից բացառություն լինել չէր կարող: Շուշիի դպրոցում իր աստիճաններն ստանալուց հետո, ընտանիքը նրան ուղարկեց Ռիգայի Պոլիտեխնիկ, որտեղ նա դարձավ հանքերի և անտառների ինժեներ:

1904-1905-ին նա վերադարձավ Կովկաս և գնաց Բաքու: Նա այնտեղ իր տնտեսական, ինչպես նաև քաղաքական գործունեությունների համար լայն ասպարեզ գտավ:

Մուսուլման ինժեներների պակասության պատճառով նա դարձավ տնտեսական գործակալը նավթարդյունաբերության թաթար մեծ սեփականատերերի, որոնք բիզնես և ֆինանսական գործարքներ ունեին եվրոպական կապիտալիստների հետ: Նրա քաղաքական գործունեությունն ավելի գաղտնի բնույթ ուներ:

Կովկասի մուսուլմանական բնակչությունը միշտ առաջնորդվել է Ստամբուլից եկող պան-իսլամական պրոպագանդայով: Հետագայում, թաթարներին և հայերին միմյանց դեմ լարելու ցարական կառավարության քաղաքականությունը անուղղակիորեն մեծացրեց պան-իսլամական քաղաքականության ոտքի տակի հողը: Սկսեցին երևալ առաջնորդներ, ինչպես Ահմեդ Ագաևը, Ռեսուլզադեն և այլն: Բիհբուդ խանը հարաբերություններ հաստատեց այդ ականավորների հետ և դարձավ նրանց վստահելի մարդը Բաքվում:

Թրքական սահմանադրության հռչակումից հետո, Ահմեդ Ագաևը եկավ Ստամբուլ ու դարձավ Միություն և առաջադիմություն *(կոմիտեի)* գործակալը: Բիհբուդ խանը Բաքվում հետևեց նրան: Պրոպագանդան այլևս բացառապես պան-իսլամական չէր, ավելի շատ պան-թուրանական և պան-թուրքական էր: Նա մեծ դեր խաղաց գաղտնի Կոմիտեի հիմնադրման գործում, Միություն և առաջադիմություն ընկերության մոդելով և նույն նպատակներով, այն է՝ թուրքերի տիրապետությունը և քրիստոնյա ցեղերի ճնշումը: Հենց այս կոմիտեն է, որ ավելի ուշ քաղաքական ասպարեզում պիտի դրսևորվի մուսավաթ կուսակցություն պիտակով:

Անշուշտ, այնքան ժամանակ, որ մոսկովյան ազդեցությունը Կովկասում ուժեղ էր, և բացի այն ժամանակաշրջանից, երբ մուսուլմանները ազատ էին գործելու հայերի դեմ, Ջիվանշիրի և իր գաղտնի գործակիցների գործողությունների շրջանակը սահմանափակված էր: Բայց վերջին տարիների քաղաքական անսպասելի զարգացումներով նրանց համար ստեղծվեցին մեծ հնարավորություններ:

Մեծ պատերազմի առաջին շրջաններում նրանք Կովկասում գործեցին որպես թուրքերի լրտեսներ և գործակալներ:

Ջիվանշիրը, Ագաևը, խան Խոյսկին, Թոփչուբաշիևը, Ջաֆարովը և այլն, քողարկում էին թուրք գաղտնի գործակալներին և կազմակերպեցին լրտեսության ու դավաճանության լայն ցանց: Օրինակ՝ վերոհիշյալ մուսուլման առաջնորդները Բաքվում կազմեցին, այսպես կոչված, Իսլամական մարդասիրական ընկերությունը և գործակալներ ուղարկեցին ռուսների կողմից գրավված թրքական Հայաստանի բոլոր մասերը, նրանց տրամադրելով միջոցներ (1,500 ռուբլի) , օգտագործելու համար ռուսական ռազմական շարժումների մասին թուրքերին և գերմանացիներին տեղյակ պահելու նպատակով: Ռուսական զորքի քաշվելուց հետո այդ գործակալների փաստաթղթերը ընկան Հայ զինվորների ձեռքը:

Ռուսական հեղափոխության ժամանակ, երբ Կերենսկին եկավ իշխանության գլուխ, Մուսավաթ կուսակցությունը այլևս ընդհատակում մնալու պատճառ չունենալով, հանդես եկավ Կովկասի քաղաքական դաշտում Ջիվանշիրին ունենալով որպես Գործադիր կոմիտեի առաջատար անդամ: 1917-ի հոկտեմբերի 26-ի բոլշևիկյան հեղափոխությամբ Կերենսկու տապալման շրջանում, մուսավաթ կուսակցությունը, իր թուրք գործակալների և քարոզիչների հետ միասին, դարձավ Ադրբեջանի կառավարող ուժը: Այս պետությունը հաջորդաբար ու ժամանակավորապես միացավ հայկական և վրացական պետությունների հետ՝ Կովկասի դաշնակցության կազմում:

Այդ օրվանից սկսած, Ջիվանշիրի ներդրումը ժամանակակից մուսուլմանական Կովկասի քաղաքականության մեջ ակնառու է և ոճիրների ու պատասխանատվությունների մասին ավելի լավ պատկերացում տալու համար *(բնագրում ամբողջ տողը անընթեռնելի է):*

1. ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ ՌՈՒՍ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԵՎ ՌՈՒՍ ԶԻՆՎՈՐՆԵՐԻ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ենթարկվելով Միություն և առաջադիմություն կուսակցության հրամաններին, Ադրբեջանի մուսուլման բնակչությունը մուսաֆաթիստների կողմից պետք է զինվեր, օգնելու թուրքերին՝ ոչնչացնելու դաշնակցային պետությունների քրիստոնյա ժողովուրդներին:

Մուսաֆաթ կուսակցությունից ընտրված թաթար ազգային խորհուրդը, որի կազմում Ջիվանշիրը ամենաազդեցիկ անդամն էր, կազմավորեց թաթարներից կազմված խմբեր՝ զինաթափ անելու և սպանելու համար ռազմաճակատից վերադարձող ռուս զինվորներին:

Իր մակիավելիզմի, իր նպատակները իրականացնելու համար Ջիվանշիրը ընտրել էր Հայաստանի Լոռու տարածքը: Սակայն Տրանս-կովկասյան դաշնակցության հայ անդամները սպառնացել էին խստորեն պատժել թաթար օրինազանցներին, և սպանությունների դաշտը տեղափոխվեց Զանխտար կայարան՝ Թիֆլիս-Բաքու երկաթգծի տարածքը, Ելիզավետպոլից 40 կիլոմետր արևմուտք:

Այնտեղ հարձակվում էին ռուսական բանակի ցրված զորախմբերի վրա, զինվորներից խլում էին զենքերը և մեծամասնությանը սպանում: 40,000 (ռուս) զինվորներ կոտորվեցին: Բրիտանական զինվորական միսիան, որը գնդապետ Փիքի հրամանատարությամբ դեռևս գտնվում էր Թիֆլիսում, տեղյակ է այս ոճիրի բոլոր մանրամասներին:

Միևնույն ժամանակամիջոցում, թաթար այլ խմբեր իրականացնում էին ցարական կառավարության գաղութային քաղաքականության հետևանքով արևելյան Կովկասում հաստատված ռուս խաղաղ բնակչության մասսայական կոտորածի մուսավաթական սխեման: Հազարավոր և հազարավոր ռուսներ էին կոտորվում ամենանողկալի ձևերով, չարչարում ու բռնաբարում էին կանանց, սպանում երեխաներին:

Մարելազի շրջանում Մուգեյնի, Օֆիխայլովկայի, Վոևկոյի, Թաթլանովկայի և Ելիզավետպոլի բոլոր գյուղերի ռուս բնակչությունը ջնջվեց: Ովքեր կարողացան մահից փրկվել, ստիպված էին փախչել և ապաստանել Ռուսաստանում:

Միաժամանակ, Ջիվանշիրը օգնում էր թուրք ներխուժողներին ընդդեմ հայերի, արգելակելով Բաքվի հայերի կողմից քաղաքում հավաքագրված հայ զինվորների մեկնումը, բարդություններ և դժվարություններ ստեղծելով հայկական պետության թիկունքում:

Բաքվում, թաթար Ազգային խորհուրդը, որն իր կենտրոնատեղին ուներ այնտեղ, Բիհբուդ խան Ջիվանշիրի և իր մեղսակիցների հետ փորձում էր լրիվ տիրապետություն հաստատել քաղաքի վրա և ազատվել տեղի հայերից ու ռուսներից: Այդ նպատակով Ջիվանշիրը ոչ միայն սովորեցնում ու զինում էր քաղաքի թաթարներին, այլև խմբեր էր կազմում հյուսիսային լեռնայիններից ու հարավի մուսուլման բնակչությունից: Երբ նա մտածեց, որ բավական ուժեղ է, սկսեց կռվել Բաքվում ռուսական բոլշևիկյան կուսակցության դեմ, չանսալով երկու կողմերի միջև խաղաղություն պահելու հայերի ջանքերին: (1918-ի մարտի 28): Երբ պարզվեց, որ ռուսները պարտվելու են, հայերը ստիպված էին մասնակցել հակամարտությանը, որովհետև գիտեին, թե իրենց համար ինչ էր նշանակելու թաթարների հաղթանակը: Նրանք Բաքվում դիմադրել էին թաթարներին, հետ մղելով Ջիվանշիրի կողմից կազմված այն խմբերը, որոնք գալիս էին հյուսիսից ու հարավից՝ վերջինիս փրկելու համար:

Ստիպողաբար ռուսներին օգնելուց հետո, որպեսզի վերջինները հաղթեն Բաքվում, հայերը իրենց լավագույնն արեցին թաթարներին պաշտպանելու համար, որոնք հայցում էին այդ օգնությունը: Հազարավոր մուսուլմաններ փրկվեցին և դրվեցին պարսկական հյուպատոսության հովանավորության տակ, որը բարձր գնահատեց հայերի կողմից թաթարներին ցույց տրված ծառայությունը:

Հաջի Աբդուլ Նեգել Տագաևը (՝՝՝) Բաքվի հայերին հրապարակային շնորհակալություն հայտնեց 14,000 թաթարների ապաստան տալու և մահից փրկելու համար: Այդ կապակցությամբ նա հեռագիր ուղարկեց Անդրկովկասի կառավարություն:

Ինքը՝ Չիվանշիրը, որը գերի էր վերցվել բոլշևիկների կողմից, ազատվեց հայերի միջնորդությամբ, որոնց նա օգնության հուսահատ կոչեր էր հղում: Բոլշևիկ կոմիսար Շահումյանը, որը ազգությամբ հայ էր, ազատ արձակեց նրան և կազմակերպեց նրա փախուստը Թիֆլիս:

2. ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՋԱՐԴԵՐԸ ՆՈՒԽԻՈՒՄ, ՉԵՄԱԽԱՅՈՒՄ, ԳՅՈԿՉԱՅՈՒՄ ԵՎ ԲԱՔՎՈՒՄ

1918-ի մայիսի 25-ին Ադրբեջանի ազգային խորհուրդը, Կովկաս ներխուժած թուրք ղեկավարների հրահրմամբ, անջատվեց կովկասյան պետություններից և անկախություն հռչակեց:

Չիվանշիրը՝ իրենց լավագույն գործակալը և շարժման գլխավոր շարժիչ ուժը, ինքը իրեն նշանակեց Ներքին գործերի նախարար՝ նոր կառավարության մեջ և Ելիզավետպոլը ընտրեց որպես մայրաքաղաք:

Այդ օրվանից սկսյալ, Ներքին գործոց նախարարի պաշտոնում Չիվանշիրի գլխավոր գործը դարձավ թրքական բանակի համար համալրում հավաքագրելը և հայկական տարրը ոչնչացնելը: Թրքական բանակը, որը ներառում էր Բիհբուդ անի կողմից հավաքագրված 13,000 զինվոր, Ելիզավետպոլ հասավ հունիսին և սկսեց Բաքվի պաշարումը: Մինչ այդ Չիվանշիրի կողմից կազմված այլ խմբեր Նուխիի, Չեմախայի և Գյոկչայի շրջաններում ոչնչացնում էին հայ բնակչությանը: Ավելի քան 70,000 հայեր կոտորվեցին ամենադաժան ձևերով: Երբ սեպտեմբերին Բաքուն վերցրեցին, նույն խմբերը, առաջնորդվելով Չիվանշիրի հրամաններով, կոտորեցին ուրիշ 30,000 հայերի, որոնք զոհ դարձան արյան ծարավ պան-թուրանիստ այդ հերոսին: Այդ կապակցությամբ նա ռուս հրապարակախոս Սերժ Ռաֆալովիչին ասել է. «Ես Ներքին գործերի նախարար եմ դարձել, որպեսզի հայերի հաշիվները մաքրեմ»: («Կավկազսկոյե Սլովո», թիվ 262, 3 դեկտեմբերի 1918):

Այս ձևով, Բաքվում 3-օրյա կոտորածների ընթացքում, գործելով ի գոհություն Նուրի և Մուրսել փաշաների, Բիհբուդ խանը երկու ամիս շարունակեց հետապնդել քաղաքի հայտնի հայերին: Մարդիկ, որոնց հետ մի քանի տարի առաջ ընկեր էր ձևանում, ձերբակալվեցին ու սպանվեցին: Այնպիսի մարդիկ, ինչպիսին բժիշկ Տիգրան Սաչարյանը, նախկին քաղաքապետ Զումշուտ Արությունյանցը, ինժեներ Կոնստանտին Քալանթարյանցը, իրավաբան Ստեփան Տիգրանյանը, բժիշկ Միքայել Աթաբեկյանը, Առևտրի բանկի տնօրեն Քուբլարյանը, և այլոք, որոնց մահը նույնիսկ թրքական բանակում ծառայող գերմանացի սպաների խիղճը շարժեց և բողոքներ առաջացրեց: Քեմփբել անունով մի անգլիացի սպա, որը չէր կարողացել Դանստերի զորքի հետ հեռանալ, մուսուլմանական դահիճի կերպարանքով Ներքին գործերի նախարարի արյան ծարավի որոնումներից ապաստան գտավ հայերի մոտ:

Օգտվելով թրքական աջակցությունից, Չիվանշիրը շարունակեց իր դաժանությունները մինչև նոյեմբերի սկիզբը, երբ զինադադարից հետո անգլիական բանակը մտավ Բաքու: Դրա հետևանքով իր կառավարությունը տապալվեց և եկավ համեմատաբար մի ավելի էնտենտ կառավարություն:

Հետո Չիվանշիրը մնաց Բաքվում, ջանալով ինքն իրեն դարձնել նվազ աչքի ընկնող անձնավորություն: Թեև անգլիացիների կողմից պախարակված էր որպես ոճրագործ, նա բախտ ունեցավ անտեսվելու, շնորհիվ ադրբեջանցի ագիտատորների նկատմամբ անգլիացիների ցուցաբերած ծայրահեղ ներողամտության: Սակայն, առիթը ներկայանալու դեպքում, նրանք միշտ պատրաստ էին ցույց տալու, որ անգլիացիների ամենավատ թշնամիներն են:

3. ԲԻՀԲՈՒԴ ԽԱՆԸ ԲՈԼՇԵՎԻԿ Է ԴԱՌՆՈՒՄ

1920-ի սկզբներին, Կովկասից անգլիացիների քաշվելու հետո, Ադրբեջանում պան-թուրանիստ ագիտատորների համար գործունեության նոր դաշտ բացվեց: Էնվերը եկավ Բաքու, ուր նրան միացան Նուրի և Հալիլ փաշաները: Նրանք գործի անցան Չիվանշիրի հետ և նախապատրաստեցին բոլշևիկների և թուրքերի համագործակցությունն ընդդեմ Անգլիայի: 1920-ի ապրիլի 28-ի հեղաշրջումը բոլշևիկներին Կովկասում հենակետ և միութենականներին օգնելու աճող հնարավորություններ ընձեռեց: Որպես իր ջանքերի պարգև, Չիվանշիրը նշանակվեց Արտաքին առևտրի առևտրական կոմիսար և գործուղվեց Ստամբուլ 100 թրքական փաունդ ամսական աշխատավարձով: Նա Լենինի կողմից լիազորված էր իր անունից կոնցեսիոն համաձայնություններ կնքելու: Կարծիք կար, որ նա թրքական ազգային կուսակցությունում գաղտնի քաղաքական առաքելություն ուներ:

Իր մահով Բիհբուդ խանը հատուցեց այն տխուր փառքի համար, որ ձեռք էր բերել սրի ու հրի քաշելով բարգավաճ երկրներ և ավելի քան 100,000 կանանց ու տղամարդկանց մահվան ենթարկելով: Համաձայն այն մարդկանց, որոնք իր հետ հաղորդակցություն են ունեցել, նա (թեև անկարող էր խղճի որևէ խայթ զգալ) սպասում էր այդ ճակատագրին, քանի որ մտածում էր, թե իր զոհերի հարազատները պիտի փորձեին լուծել յուրայինների վրեժը:

ԴԱՏԱԽԱԶԻ ԵԶՐԱՓԱԿԻՉ ՓԱՍՏԱՐԿՆԵՐԸ

Պարոնայք.

Ես պիտի սկսեմ հայցելով ձեր ներողամտությունը երկու պատճառով. առաջին՝ որովհետև ես դատախազի պարտականությունները ստանձնեցի այն ժամանակ, երբ դատը մի քանի շաբաթ է, ինչ արդեն տեղի էր ունենում, երկրորդ՝ որովհետև ես այնքան փորձառու և կարող իրավաբան չեմ, ինչպես մեղադրյալի փաստաբանն է. ես շատ տպավորված եմ նրա երեկվա ճառով:

Ցանկանում եմ անդրադառնալ Զինվորական Օրենսգրքի Տեղեկագրին. այնտեղ ասվում է, որ եթե փաստված է, որ որևէ մարդ սպանել է մեկ ուրիշի, ուրեմն՝ նա մեղավոր է մարդասպանության մեջ: Մեղադրյալն է, որ պետք է այնպիսի փաստեր ներկայացնի, որ մեղմացնեն հանցանքը, կամ ազատեն նրան ամեն տեսակ հանցագործության պատասխանատվությունից:

Ես հաստատում եմ, որ ներկա գործում, բացարձակապես առանց որևէ կասկածի, ապացուցված է, որ մեղադրյալը սպանել է Զիվանշիրին:
Պաշտպանությունը փորձեց ապացուցել, որ սպանվածը պատասխանատու է Բաքվում բազմաթիվ հայերի ջարդ կազմակերպելու համար, որի ընթացքում մեղադրյալը կորցրել է իր ամբողջ ընտանիքը և որ մեղադրյալը վրեժի ակնհայտ պատճառ ուներ Զիվանշիրին սպանելու. որ մեղադրյալի մտավոր վիճակը այնպիսին էր, որ նա անգիտակից էր իր արարքի ժամանակ և պատասխանատու չէր սպանության համար:

Առաջին կետի վերաբերյալ, կարծում եմ կարող եմ ասել, որ ամբողջ աշխարհը գիտե, որ հայերի կոտորածներ են եղել, ինչպես նաև մուսուլմանների, երբ վերջիններս փոքրամասնություն են կազմել. համենայն դեպս, յուրաքանչյուր կողմից բազմաթիվ գրքեր են գրվել իրենց տեսակետը պաշտպանելու համար:

Պաշտպանական կողմի 11-րդ վկան, մի քահանա անունը Վահան, որն այժմ 60 տարեկան է, ասաց, որ հայկական կոտորածներ են տեղի ունեցել այն ժամանակներից, երբ ինքը հինգ տարեկան էր: Հետևաբար, ոչ ոք չի կարող պնդել, որ մահացած Զիվանշիրն է հորինել կոտորածների գաղափարը:

Մեղադրող կողմի վկաները, երդում տալուց հետո ասացին, որ թուրքերի մուտքը Բաքու քաղաք հանդիպեց հայերի զինված դիմադրությանը: Հասկանալի է, որ սա կարող է հայերին սպանելու առիթ ծառայած լինել, և մուսուլմանները, որոնք 1918-ի մարտին կորցրել էին իրենց ընկերներին ու հարազատներին, լավ հնարավորություն են ստացել վրեժ լուծելու համար:

Բավական ընդհանուր ձևով հաստատվեց, որ երբ կոտորածներն սկսվեցին, սպանվածը Բաքու քաղաքում չի եղել: Հետևաբար դժվար է տեսնել, թէ նա ինչպե՞ս կարող է պատասխանատու համարվել:

Ես չեմ առաջարկում մանրամասնորեն մտնել պաշտպանական կողմի վկայությունների մեջ, բացառությամբ երկու դեպքի. ես իմ պարտքն եմ համարում, նախքան պաշտպանության վկայությունը քննարկելը, նշել, որ Զինվորական Օրենսգրքի ընթացակարգի համաձայն, որպես կանոն, առաջինը մեղադրող կողմը պետք է տա իր վկայությունը պաշտպանող կողմից առաջ: Սրա պատճառը բացահայտ է. քանի որ նա միակ վկան է, որ առավելություն ունի լսելու բոլոր մյուս վկաների ասածը և դրան համապատասխան տալու իր վկայությունը:

Առաջին վկան՝ Ալթունյանը, ընդհանուր առմամբ ասում է, որ 1918-ի սեպտեմ-

բերին տեսել է թաթար և թուրք զինվորների՝ Բաքվում ջարդեր իրականացնելիս, բայց նա չի նշում, թե տեսել է որևէ կոնկրետ սպանության դեպք: Հետո նա ասում է. «Ես այնտեղ էի միայն առաջին օրը»: Նա ինքը խոստովանում է, որ իր կողմից կատարված հայտարարությունները ոչ այլ ինչ են, եթե ոչ ասեկոսեներ: Այս կապակցությամբ, խնդրում եմ ձեր ուշադրությունը հրավիրել 13-րդ վկա Բայկովի ցուցմունքին, որը վկայում է թրքական զորքերի լավ կարգապահության մասին: Խոսելով 1918-ի սեպտեմբերի մասին, առաջին վկան շարունակում է ասելով, որ «Ես ենթադրում եմ, որ Զիվանշիրը պատասխանատու էր կոտորածների համար, քանի որ ներքին գործերի նախարարն էր»: Հետո ասում է՝ «Ես գիտեմ, որ Զիվանշիրը պատասխանատու էր, որովհետև նա պատասխանատու նախարար էր»: Թույլ տվեք ասեմ, որ Զիվանշիրը միացյալ կառավարության նախարար էր. այս վկան հետո ասաց, որ թաթարների հարձակումները սկսվեցին 1918-ի մարտի 7-ին: Թաթարները սկսեցին խժդժությունները, որոնք տևեցին երեք օր: Այս ցուցմունքը մյուս վկաների ցուցմունքների ուղիղ հակառակն է: Կարծում եմ, կարող եմ ասել, թե ընդհանրապես ընդունված է, որ խռովությունները սկսվել են մարտի 18-ին:

Պաշտպանության կողմի երկրորդ վկան՝ Մինաս Հայրապետյանը, ասաց, որ թուրքերի քաղաք մտնելով սկսվեցին կոտորածները, առանց տարիքի ու սեռի նկատառման, և որ հայերը կոտորվում էին անխղճորեն: Հետո նա ասում է. «Ես, ըստ էության, ոչ մի սպանություն չտեսա»: Հետո նորից ասում է՝ «Մոտ 25,000 հայեր կոտորվեցին»: Նա նաև հաստատում է, որ 70 հայ մտավորականներ բանտարկվեցին, բայց բրիտանացիների երկրորդ անգամ քաղաք մտնելով՝ ազատ արձակվեցին: Հենց ինքն էլ այդ ձևով է ազատվել: Ես գտնում եմ, որ դատարանը պիտի դժվարանա համաձայնեցնել այս երկու հայտարարությունները. առաջին, որ նա քաղաքից հեռացավ, որպեսզի խուսափի կոտորածներից, երկրորդ, որ նա բանտում է եղել մինչև բրիտանացիների երկրորդ մուտքը:

Ես իրոք կարծում եմ, որ նրա վկայությունը ուշադրության քիչ արժանի է:

Երրորդ վկան՝ տիկին Արուս Խանեդանյանը, ասաց, որ փողոցներում հազարավոր մարմիններ է տեսել. ուրիշ ոչ ոք չասաց, թե մոտավորապես նման թվով բան է տեսել: Նա նաև ասաց, որ հայերը թուրքերի և բրիտանացիների միջև կռիվներին չմասնակցեցին, և այս վկայությունից դուրս է գալիս, որ բրիտանական 1,500-անոց մի ջոկատ, առանց ուրիշի օգնության, կռվել է հարձակվող թրքական բանակի դեմ: Ես պնդում եմ, որ սա բացարձակապես ճիշտ չէ:

Չորրորդ վկան՝ Արամ Բոգդանովիչը, ասաց. «Սեպտեմբերյան կոտորածները ես ընդունում եմ հետևյալ ձևով. թուրքերը և հայերը կռվում էին: Թուրքերը հաղթում էին, ուստի տեղի ունեցան կոտորածներ»: Ես դատարանին խնդրում եմ այս հայտարարությունը համեմատել երրորդ վկայի նախորդ ցուցմունքի հետ, թե հայերը չխառնվեցին թուրքերի և հայերի միջև թշնամությանը: Ինչ վերաբերում է վեցերորդ վկայի ցուցմունքին, այն ինձ ամբողջությամբ ասեկոսե է թվում, դժվար թե անհրաժեշտ է այն մեկնաբանել. և այս կապակցությամբ պիտի համարձակվեմ ասել, որ շատ աչքի ընկնող տարբերությամբ, պաշտպանության վկաներին ավելի հանդուրժողականություն ցուցաբերվեց, քան մեղադրող կողմին:

Պաշտպանության 8-րդ, 9-րդ և 10-րդ վկաները, որոնք թվում է, թե բոլորն էլ լավ ծանոթ են Շանար գյուղին և մեղադրյալի մանկությանը, բոլորն էլ ներկայումս ապրում են Փրոթիում: Սա հնարավոր է դարձնում, որ նրանք առիթ ունեցած կլինեն միմյանց միջև փոխանակելու մեղադրյալի վերաբերյալ իրենց հիշողությունները: Թեև դա կարող է զուգադիպություն լինել, բայց կարծում եմ, որ այն

պետք է արժանանա դատարանի ուշադրությանը:

Վերցնենք 7-րդ վկա Գրիգոր Ամիրյանի հարցը: Առաջին հայացքից այն կարող է լուրջ թվալ: Բայց երբ վերանայում ես, տեսնում ես, որ նա ասում է, թե ինքը գեներալ Սեպուհի թիկնապահն է եղել: Ավելի ուշ նա ասում է, որ Գլխավոր շտաբի մեջ է աշխատել և թարգմանում էր որոշ բռնագրավված փաստաթղթեր: Նա հիշում է այժմ՝ երեք տարի անց, թե ինչ պետք է լիներ այդ հաղորդումների իսկական բովանդակությունը: Ասվում է, որ դրանք Ջիվանշիրի կողմից ստորագրված հեռագրեր էին: Ավելորդ է ասել, որ վկան չէր կարող ճանաչել ստորագրությունը:

Նա ասում է, որ գիտի նույն իմաստով հղված այլ հեռագրեր ևս: Ես գտնում եմ, որ սա կասկածելի վկայություն է, մանավանդ, որ ավելի ուշ, նա կարողանում է տալ Նուրսել փաշայի կողմից ստորագրված մի ուրիշ փաստաթղթի բովանդակությունը:

Պաշտպանության փաստաբանը իր երեկվա ճառի մեջ հիշեց մուսավաթ կուսակցությանը և հայտնեց, որ հայտնաբերել է այն փաստը, որ Միություն և առաջադիմություն կոմիտեի հետ նրանք գնում էին ձեռք-ձեռքի: Բայկովը ճիշտ է, երբ ասաց, թե ինքը մի հայտարարություն է կարդացել, որն ասում էր, թե Միություն և առաջադիմություն կոմիտեն սատարում էր մուսավաթին: Բայց ես չեմ գտնում, որ դոկտոր Պողոսյանը որևէ բան ասաց, որը հաստատեր 71-րդ էջի վրա բերված փաստը, ինչպես մեղադրյալի փաստաբանն է ասում:

Պաշտպանության 11-րդ վկա Թահմազյանը հայտարարեց, որ Ավնի բեյը իր դատավարությունից հետո մեկ շաբաթ բանտում պահվեց, նաև խոսակցություններ բերեց նրա ազատ արձակման մասին: Սա սխալ է: Իբրև մեղադրող կողմի վկա *(Հիկմետը)*, որը հարցի մասին բացահայտորեն շատ ավելին գիտե, ցուցմունք է տվել, որ Ավնի բեյին կախել են:

Օրիորդ Նորա Բրաունը՝ 17-րդ վկան, մինչև 1920-ը Բաքու չի գնացել, ուստի, նախկին դեպքերի մասին նրա տված վկայությունները չպետք է հաշվի առնվեն:

Հաճախ հիշվում է մի հայտարարություն, որը, ասում են, ստորագրված է եղել խան Հոյսկու և Ջիվանշիրի կողմից, ազդարարել է, որ բնակիչները, բացի հայերից, ապահով են: Վերջինները օրենքից դուրս են: Բայց այդ հայտարարության ի՞նչ լեզվով գրված լինելու հարցում կարծիքների տարբերություն կա: Որոշ դեպքերում ասվեց, որ այն կարդացել են վկաները, հետևաբար սա զուտ ասեկոսե է: Ուրիշ վկաներ հայտարարությունը երբեք չեն տեսել: Փաստորեն, ես կարող եմ ազդարարել, որ պաշտպանությանը չհաջողվեց որոշակիորեն ապացուցել, որ ըստ էության Ջիվանշիրը պատասխանատու էր այդ կոտորածների համար: Միանգամայն հնարավոր է, որ, ինչպես նախօրոք ասվեց, սպանությունները սկսվել են զինված ուժով թուրքերի մուտքը քաղաք դիմադրելու պատճառով: Դրանք հետո շարունակվել են մոլեռանդների կողմից, մինչև դրանց դադարեցվելը բանակի հրամանատարի կողմից, որն այդ անելու ուժն ունեցող միակ անձն էր:

Այժմ ուզում եմ դատարանի ուշադրությունը հրավիրել մի բավական հետաքրքիր հարցի վրա՝ կապված մեղադրյալի ֆինանսների հետ:

Նա հայտարարեց, որ Տրապիզոնից իր հետ բերած ամբողջ դրամը 1918-ի սեպտեմբերի շրջանում արդեն օգտագործել էր: Իր ընտանիքը զարդեղենները վաճառել էր: Հետո իրեն ազատող կինը մի քիչ դրամ էր տվել:

1918-ի վերջերից աշխատել է Բաթումիի վաճառականական հաստատությունում, մեծ քանակությամբ դրամ տեղափոխելով տարբեր տեղեր: Այժմ մեղադրյալը ասում է, որ աշխատում էր որպես «օգնություն»: Համաձայն վկայության, նա աշխատանքից ազատվել է 1920-ի հունիսին, սակայն 1921-ի հունվարին Ստամ-

բուլ հասնելիս (վեց ամիս լինելով առանց աշխատանքի), դեռ իր տրամադրության տակ ուներ 400-ից 500 թրքական լիրա: Նաև 3,000 լիրա ստանալիք ուներ, որպես հաստատության իր շահաբաժինը: Ես կուզենայի դատարանին հարցնել, թե երբևէ լսե՞լ են շահույթից բաժին ունեցող «օգնության» մասին: Ավելին. նա արտոնվեց գնալ Կովկաս, իր հետ տանելով 3,000 թրքական լիրա: Վստահաբար, բավականին ռիսկոտ քայլ՝ նման վտանգավոր ժամանակի համար, մասնավորապես՝ վաճառականի համար, 3,000 թրքական լիրան այլևս չտեսնելու զգալի հնարավորությամբ: Ակներևաբար, այդ ժամանակաշրջանում նա լրջորեն չէր տառապում անգիտակցությամբ կամ վատ առողջությամբ, այլապես դժվար թե նրան երկար ճամփորդություն վստահվեր դրամական մեծ գումարներով:

Ինչպես երևում է, Ստամբուլ հասնելուց հետո նա վաճառականին հանդիպել և ապրել է այն դրամով որ իրեն հասնում էր, և որը նա հաջողացրել էր ստանալ վաճառականից:

Պետք է ասեմ, որ ափսոսում եմ, որ այս վկայությունը չհայտնվեց մինչև մեղադրյալի խաչաձև հարցաքննությունը: Պաշտպանությունը մեզ հնարավորություն չտվեց վաճառականից լսելու մեղադրյալին հասանելիք դրամի մասին: Ըստ որում, ուզում եմ դատարանին հիշեցնել, որ երեկ, պաշտպանության փաստաբանի ճառի մեջ մեղադրյալը նկարագրվեց որպես «մի անգրագետ, անտաշ գյուղացի»:

Ամեն պարագայի, մեղադրյալը Ստամբուլ եկավ 1921-ի հունվարին և ապահովվեց առատ դրամով՝ տրված վաճառականի կամ մի այլ մարդու կողմից, այնպես որ, կարող էր առանց աշխատելու ապրել առավել կամ պակաս չափով իր ուզածի պես:

Ինչպես պաշտպան փաստաբանն ասում է, մեղադրյալը Ստամբուլ եկավ, նպատակ ունենալով արտագաղթելու մի ազատ երկիր, Ամերիկա, կամ նույնիսկ Անգլիա:

Նա միանգամից քայլեր չարեց, օրինակ՝ չհետաքրքրվեց շոգենավերով, որովհետև ուզում էր հանգստանալ: Ես կկարծեի, որ նա բավականաչափ հանգստացած պետք է լիներ 1920-ի հունիսից հետո, երբ վաճառականի մոտից ազատվել էր, մինչև 1921-ի հունվարը: Ավելի ուշ նա հանդիպում է վաճառականին և անորոշ ժամանակով սպասում է Ռումինիայում մի աշխատանք ունենալու հեռանկարով: Նորից ափսոսում եմ, որ մենք այս կետի շուրջ վաճառականից վկայություն ստանալու հնարավորությունը չունեցանք: Քանի որ նրա առողջական վիճակը բավականին վատ էր, հաճախակի նոպաներով, ենթադրվում է, որ նա չպետք է աշխատեր որպես մեծ գումարներ տեղափոխող: Մեղադրյալը ասում է, որ վեր էր կենում մոտ օրվա կեսին և թափառում էր քաղաքով: Այցելում էր Թաքսիմ Գարտընզ և այն ժամանակ՝ Փեթիթ Շամպ, երևի պարզապես ժամանակը անցկացնելու համար, հավանաբար, հույս ունենալով հանդիպելու այն մարդուն, որին համարում էր իր բոլոր տառապանքների պատասխանատուն: Ճիշտ է, որ մահացողը Ստամբուլ եկավ մեղադրյալից ավելի ուշ, բայց կարծում եմ, կարող ենք ընդունել, որ Ջիվանշիրի նման հարուստ մի թուրք, ուշ կամ շուտ, վստահաբար պիտի գար Ստամբուլ, ճիշտ այնպես, ինչպես միջոցներ ունեցող անգլիացիների մեծ մասը, ուշ կամ շուտ, վստահաբար կգնա Լոնդոն: Մեղադրյալի փաստաբանը երեկ կասկած հայտնեց Ջիվանշիրի Ստամբուլ գալու առաքելության վերաբերյալ: Ես լրիվ գոհունակությամբ, դատարանի գերագույն իմացության որոշմանն եմ թողնում այդ հայտարարության պատշաճությունը որոշելը: Մեղադրյալը վկաներին ասաց, որ երազներ էր տեսնում և իր մահացած հարազատների տե-

սիլքներն էր ունենում: Նա ընդունում է, որ կոնյակ է խմած եղել, որը, ի միջի այլոց, բավականին թանկ է: Խմել է մասամբ իր հիվանդության համար, մասամբ իբրև հայկական մի արարողություն: Թվում է, որ այդ ժամանակաշրջանում իր ճաշերը նույնպես չեն եղել ոչ հաճախակի միջանկյալ ընդմիջումներով:

Ինչ վերաբերում է Ջիվանշիրին Ստամբուլում տեսած լինելուն, մեղադրյալը նախ ասաց, որ նրան չի տեսել, հետո ինքն իրեն ուղղեց, ասելով, որ մեկ անգամ կարող է տեսած լինել, բայց կարող է դա երազ էր: Հետո նրան տեսել է երազում դեպի իրեն շտապելիս:

Այժմ, թույլ տվեք վերադառնալ այն գիշերվան, երբ կատարվեց ոճիրը, որի համար մեղադրյալը դատվում է: Ես շատ հիանում եմ մեղադրյալի փաստաբանի նկարած այդ գիշերվա պատկերով: Ես վախենում եմ, որ այն, ինչ ես պիտի ջանք թափեմ ձեր առաջ դնելու, պիտի էապես տարբերվի դրանից:

Հուլիսի 18-ին, ժամը մոտավորապես 23:50-ին, Ջիվանշիրը, իր ընտանիքի հետ, թողեց Փետիտ Շամպը և հանդարտ քայլում էր հետ՝ դեպի իր պանդոկը: Մեղադրյալը լուռ եկավ նրա հետևից, ընտրելով առավել կամ պակաս խճողված մի փողոց, մոտեցավ նրան՝ վստահ լինելու համար, որ չի վրիպի, այնքան մոտիկ, որ կինը նրա կողքին պիտի զգար վառվող վառոդի հոտը, և երեք անգամ կրակեց մարմնին:

Դատարանը երբևիցե լսե՞լ է մարդասպանության առավել նպատակադրված մի դեպք: Մահացողի եղբայրը բռնել է մեղադրյալի դաստակից և պայքարի ընթացքում վիրավորվել է իր ձախ աչքի մոտ: Հետո հաջողացրել է մեղադրյալի ձեռքը հրել դեպի վերև, այնպես, որ մյուս կրակոցները ուղղվել են դեպի օդ: Ապա եկել է կրտսեր եղբայրը և տիկին Ջիվանշիրի հետ միասին օգնել են մեղադրյալին պահելու, մինչև ոստիկանության հասնելը:

Հիմա չեմ կարողանում տեսնել, թե դատարանը այս բոլորը ինչպե՞ս կարող է համաձայնեցնել մեղադրյալի այն հայտարարության հետ, որ Ջիվանշիրին տեսել է դեպի իրեն շտապելիս: Ինչպե՞ս կարող էր նա տեսնել մի մարդու դեպի իրեն շտապելիս, երբ ինքը նրան գողեգող մոտենում էր հետևից: Գործի սառը փաստերի հիման վրա, ավելի հավանական է թվում, որ մեղադրյալը Ջիվանշիրին տեսել էր Փետիտ Շամպում և գաղտագողի հետևել էր նրան՝ կրակելու նպատակով: Հիշեցեք տիկին Ջիվանշիրի հայտարարությունն այն մասին, որ նա մեղադրյալին նախկինում տեսել էր Փետիտ Շամպում:

Պաշտպանության կողմից հրավիրված բժիշկները ասացին իրենց կարծիքը այն մասին, որ մեղադրյալը կարող է ոչ-պատասխանատու լինել իր գործողությունների համար: Մյուս կողմից, Մազհար Օսման բեյն ասաց իր կարծիքը այն մասին, որ մեղադրյալը պատասխանատու է իր գործողությունների համար: Վերջինի կարծիքը անտես չպետք է առնվի, նկատի ունենալով մտային դեպքերի բնագավառում նրա մեծ փորձառությունը: Դատարանի կողմից հրավիրված մայոր Դեյվիսը շատ, շատ վերապահ էր իր հայտարարությունների մեջ: Նա սա համարեց կարծիք տալու համար շատ դժվար գործ: Իր կարծիքը մեծ չափով ազդված էր այն փաստով, որ մեղադրյալը կրակել էր մի քանի անգամ և չէր հիշում ոճիրը: Ես ուզում եմ շեշտել, որ մեղադրյալը կրակել է մի քանի անգամ ոչ թե այն պատճառով, որ չէր ուզում փախչել, այլ, որովհետև Ջիվանշիրի եղբայրը նրա դաստակից բռնել էր: Հիմա այն մասին, որ մեղադրյալը չի հիշում իր գործողությունները: Մեղադրյալը դատարանի առաջ ասաց. «Ես չգիտեմ ինչո՞ւ եմ բանտում գտնվում» և չէր կարողանում հիշել իր ձերբակալվելն ու բանտարկվելը:

Մի ուրիշ կետ: Մայոր Դեյվիսը ասում է, որ, այսպես կոչված՝ էպիլեպտիկ վիճակում կատարված գործողությունը մարդու ընդունված սովորություն է: Մեղադրյալն իրեն ասել է, որ ինքը իր վաղ տարիքներին սովորություն է ունեցել կրակելու իր հոր ագարակում: Բայց, վստահաբար, նա նկատի ուներ զենք և ոչ թե ատրճանակ: Ես չեմ կարող երևակայել մի մարդ, որը ագարակում թրև գա և ատրճանակով կրակելու խաղ անի: Ըստ էության, սա է ներկայացվող տարբերակը:

Մի վերջին կետ. մեղադրյալն իր ցուցմունքում ասաց, որ ինքը Ջիվանշիրի նկատմամբ հատուկ ատելություն չի ունեցել և վրեժը թողել է Աստծուն: Եթե նա հատուկ ատելություն չուներ, ապա առիթ չկար, որ նա մղվեր այդպիսի ուժեղ գրգիռի, որը և իրեն հասցներ անգիտակից վիճակի:

Դատարանին է մնում որոշելու, մեղադրյալը ոճի՞ր է գործել, թե՞ տառապում է խելացնորությամբ, և որ համաձայն վկայության, այլ վճիռ հնարավոր չէ:

ԽՈՍՐՈՎՅԱՆԻ ԵԶՐԱՓԱԿԻՉ ՓԱՍՏԱՐԿՆԵՐԸ

Ձերդ մեծապատվություն.

Ես կարծում եմ, որ քիչ տարբերություն կա իր գործի արդարությանը հավատացող փաստաբանի պաշտպանական խոսքի և մի հավատացյալ մարդու կողմից Աստծուն ուղղված աղոթքի միջև: Հետևաբար, ես խնդրում եմ ներել իմ ճառի մեջ եղած սխալները, քանի որ Աստված պիտի ներեր աղոթող հոգու թոթովանքները:

Մի ամառային տաք գիշեր, երկու մարդկանց ուղիները խաչաձևվում են Ստամբուլի ամենահիանալի պանդոկներից մեկի մուտքի մոտ: Նրանցից մեկը իր կյանքի ծաղկման շրջանում էր և ուներ զանազան տիտղոսներ ու աստիճաններ: Մյուսը՝ մի կոշտ գյուղացի էր: Երկուսն էլ դուրս էին եկել փողոց, անցկացնելու իրենց ուսերին ծանրացած գիշերը: Մեկը հարուստ էր և համակրելի: Լավ ուսում էր ստացել և նախանձելի դիրք ուներ: Կինը իր հետ էր: Եղբայրները՝ իրենց ընկերուհիների հետ միասին, միայն մի քանի քայլ հետ էին: Նրան չէր կարելի համարել մի մարդ, որին բախտը և հաջողությունը չէին ժպտացել: Մյուս մարդը մի խեղճ գյուղացի էր, որն ուզում էր սպանել իր գրգռված ներվերին ոչ մի անդորրություն չպարգևող գիշերը: Նա միայնակ էր, և ոչ միայն այդ գիշեր, այլև միշտ, ամբողջ աշխարհում: Մի ժամանակ, անցյալում, նա նույնպես երջանիկ կյանք էր վարում իր կնոջ և եղբայրների հետ միասին: Սակայն, իր սիրեցյալները այլևս կենդանի չէին: Այդ պատճառով իր շրջապատում ամեն ինչ խավար էր:

Այսպիսին էր այս երկու մարդկանց վիճակը, երբ այդ սարսափելի դեպքը նրանցից մեկին բերեց այս դատարանը: Ահա թե ինչու ես պարտականություն ստանձնեցի պարզաբանելու և բացատրելու այս առեղծվածը՝ Աստծու մարգարեական օգնությամբ:

Ինչպե՞ս պետք էր բացատրվեր այս զուգադիպությունը, ճակատագրի այս անխուսափելի ոլորապտույտը: Թեև այս երկու անհատները միմյանցից տարբերվում էին իրենց ազգային պատկանելությամբ, լեզվով ու հավատով, սակայն նրանք այստեղ էին եկել՝ փախչելով նույն արյունոտ քաղաքից: Գյուղացին ապաստան էր գտել Ստամբուլում: Նա պլանավորո՞ւմ էր հաստատվել այստեղ: Ո՛չ: Նա ուզում էր արտագաղթել հեռավոր վայրեր, դեպի Արևմուտք, դեպի Բրի-

տանիա, թերևս և՝ դեպի Ամերիկա: Ինքն էլ չգիտեր ուր: Դժբախտություններն այնքան էին խեղաթյուրել նրա հոգին, որ իր կամքն ու կարողությունները անդամալուծվել, հույսերը խորտակվել էին: Փաստորեն, ապրելու ցանկություն չուներ: Մի խոսքով, իրական աշխարհը մի անիմաստ գոյություն էր իր համար: Հնարավո՞ր է, որ այլ կերպ լիներ որևէ մեկի հետ, որն ականատեսել էր եղել իր սիրեցյալների սպանությանը: Նրա աչքերն այլևս անկարող էին տեսնել այս աշխարհի իրողությունները:

Նրա աչքի առաջ միայն մեկ պատկեր էր երևում. այն, երբ նա վիրավոր պառկած էր էրմենիքենտի իր սրտաճմլիկ սենյակում՝ մարդասպանները, կատաղած գազանների նման, մասերի էին պատառոտում իր երկու զավակներին, կնոջը և քրոջը, որը Քուշանայի, հնարավոր է նաև ամբողջ Տրապիզոնի ամենագեղեցիկ աղջիկն էր, եղբորը, և նույնիսկ ծերունի, հիվանդ ու անօգնական հորը: Նա չէր կարողանում տեսնել այլ բան, քան իրեն շրջապատող խոր լռությունը: Նրա ականջները կարողանում էին լսել միայն իր հոր աղաչանքները, ուղղված մարդասպաններին՝ «Խնդրում եմ, մի դիպչեք զավակներիս»:

Սակայն, ի՞նչ կարող ենք ասել մյուս մարդու մասին: Նա ևս փախստական էր, բայց նա նախարար էր և պատգամավոր: Նա մի կուսակցության լավ ճանաչված ղեկավարն էր: Իր արտոնյալ վիճակի շնորհիվ, նա կարող էր ամբողջությամբ վայելել կյանքը: Իր ընկերները *(վկայեցին)*, որ նա փախստական չէր, որ բոլշևիկները նրան Ստամբուլ էին ուղարկել հատուկ և կարևոր առաքելությամբ, որովհետև գնահատում էին նրա ազնվությունը, ուժը և կարողությունները:

Բացատրությունները ես տարօրինակ եմ գտնում: Ինչպե՞ս կարող էր բոլշևիկների հետ համագործակցել ազգայնամոլ մի բուրժուա, որը, համաձայն վկաների ցուցմունքների, շովինիստական ձգտումներ ուներ: Ինչպե՞ս կարող էին բոլշևիկները նման կարևոր, պաշտոնական դիրք շնորհել նրան, իմանալով հանդերձ նրա գործողությունները: Նման ենթադրությունը կամ բացատրությունը անընդունելի է: Ես կարծում եմ, որ Ջիվանշիրը օգտագործեց բոլոր հնարավոր միջոցները Բաքվից փախչելու համար: Նրա պատմության արյունոտ էջերը գրված էին իր և իր մեղսակիցների ձեռքով: Ջիվանշիրի անձնավորության մեջ տեսնում ենք մի մեծ մարդասպանի, որը կարող է լրիվ խաղաղության մեջ ապրել իր խղճի հետ և, հակառակ զանգվածային մարդասպանություններ կատարած լինելուն, առանց իր կյանքի համար վախ ունենալու: Կարող է ապրել պանդոկի շքեղ սենյակում, վայելել կյանքը և արտաքին աշխարհում տպավորություն ստեղծել, որ ինքը արժանի է կյանքը վայելելու:

Գյուղացին երբեք չէր սպասում Ջիվանշիրին հանդիպել Ստամբուլում: Պարզ է, որ պաշտպանյալը Ստամբուլ հասավ 1921-ի հունվարին: Ջիվանշիրը, համաձայն իր եղբոր՝ Ջամշիդի վկայության, Ստամբուլ ոտք դրեց հինգ ամիս հետո՝ 1921-ի հունիսի 25-ին: Ճակատագրական պահը, որն այս երկու մարդկանց հանդիպեցրեց, եկավ այդ օրվանից հետո:

Երբ գյուղացին հանդիպեց նրան, ականջներում արձագանքեց հոր սրտաճմլիկ ճիչը՝ «Խիղճ ունեցեք, երեխաներիս ձեռք մի տվեք»: Իր աչքի առաջ եկան երեխաները: Նա երևակայեց, որ մարդասպանը հարձակվում է իր վրա՝ իրեն ևս սպանելու համար: Արյունը գլխին է խփել, սիրտը սկսել է կատաղի խփել: Եվ պատահել է անխուսափելին: Եվ այն մարդը, ով կազմակերպել ու իրականացրել էր Բաքվի կոտորածները, դադարում է գոյություն ունենալուց: Մի անգիտակից ձեռք սպանել էր նրան:

Ձերդ գերապատվություն.

Այժմ ես հարցնում եմ Ձեզ, իմ նկարագրած պատմությունը չի՞ պարզաբանում այս երկու մարդկանց էությունը, նրանց անցյալը, ինչպես հաստատում են այս դատարանում ներկայացված ցուցմունքները: Հետևաբար, թույլ տվեք կենտրոնանալ այն դեպքերի վրա, որոնք հրապարակվեցին Ձեր ներկայությամբ:

1915-ի գարնանը մի սև ձեռք իջավ Թուրքիայի հայերի կյանքի վրա: Աղետ եկավ մի ժողովրդի գլխին, որը գերազանցող ուժերի դեմ ծանր պայքար էր մղել պաշտպանելու համար իր կրոնը, լեզուն և գրականությունը: Սև ձեռքը իջավ ամեն մի հայի վրա: Այդ ձեռքը մարեց տիկին Գոհար Սարյանի օջախը: Նրանք կնոջը բաժանեցին ամուսնուց, վերջինին դրեցին մի նավի մեջ և սպանեցին բաց ծովում: Վերցրին նրանց ամբողջ ունեցվածքը և պատկանելիքները:

Մի ուրիշ հանգամանք էլ կա, որը լուսաբանում ու բացատրում է խնդիրը: Նայեք, ինչպես նրանք ոչնչացրին Տրապիզոնի ամենահարուստ ընտանիքներից մեկը Թահմազյան ընտանիքը, որը բաղկացած էր երեք անձից: Տեղահանման ժամանակ նրանք սպանեցին ընտանիքի նահապետին ու նրա զավակներից մեկին: Նրա մյուս որդին՝ Սուրենը, Ձեր առաջ հանդես եկավ և նկարագրեց, թե ինչպես է իր կյանքը փրկվել մի կարեկից թուրքի շնորհիվ:

Ձերդ գերապատվություն, երբ ես խոսում եմ աղետն իրականացնողների մասին, անկարելի է չհիշել բարեսիրտ և կարեկից մարդկանց: Նման լավ մարդկանցից մեկի անունը Օմար էֆենդի էր:

Մեկ ուրիշ վկա էր տիկին Ջաչո Քելլերյանը, որը վառ կերպով նկարագրեց Տրապիզոնում տեղի ունեցած աղետը: Նա առաջին տեղահանվողների խմբի մի մասն էր, իր հոր, մոր, երեք քույրերի, բոլոր հարազատների ու ընկերների հետ միասին: Նրանք բոլորն էլ ոչնչացվեցին: Դալտաբանի մոտ ժանդարմները հարձակվեցին նրանց վրա, կողոպտեցին ամեն ինչ, մինչև իսկ նրանց հագին եղած հագուստեղենը: Երբ Դալտաբան հասան, այնտեղ էր ավազակախմբի ղեկավարը: Վերջինիս հրամանով տղամարդկանց անջատեցին կանանցից, որոնք այլևս նրանց չտեսան: Տիկին Քելլերյանը մի ժանդարմ պաշտոնյայից լսել է, որ հայրը և իր բոլոր տղամարդ ազգականները սպանված են: Հետո կանանց հրամայեցին քայլել դեպի Էրզինկան: Կանանց այդ խումբը ուղարկվեց Հալեպ և Դեր-էլ-Զոր, վստահ լինելով, որ նրանք կմահանան անապատում: Նրանցից քչերը կարողացան դիմանալ այն դժվարություններին ու չարչարանքներին, որին ենթարկվում էին: Տիկին Քելլերյանը վկայեց, որ Էրզինկանի ամբողջ հայ բնակչությունը սրի է քաշվել:

Շրջանի առաջնորդ Քեմահը չէր թաքցնում այն փաստը, որ հրամայել է բոլորին անապատ քշել: Նա ավելին ասաց. ասաց, որ Քեմահում տեսել է 3,000-4,000-ից հայ երեխաների: Այդ պատճառով, Ձերդ գերապատվություն, թույլ տվեք պաշտպանել Կապույտ Գրքի 285-րդ էջում բերված պատմական փաստաթղթերի վկայությունը: Այդ փաստաթղթերում ասվում է.

«Տեղահանություններն սկսվեցին ամսվա վերջին շաբաթում: Արտաքինից ենթադրվում էր, որ տեղահանվողները պիտի ուղարկվեին այնտեղ, ուր Էրզրումի հայերն էին ուղարկվել: Սակայն նշաններ չկային, որ հայերը այնտեղ պիտի տեղափոխվեին ողջ և առողջ: Տրապիզոնում նրանց դրեցին նավերի մեջ և նետեցին բաց ծով: Ցամաքով տեղահանվողները ոչնչացվեցին ճանապարհին՝ քաղաքից մեկ ժամ հեռավորության վրա: Ջիրեսունից ուղարկվածներին նույն ճակատագիրն էր սպասում: Արևելյան Գարահիսարի հայերը, նախկինում տեղի ունեցած դեպքերի մասին տեղյակ լինելով, կառավարության հրամաններին դիմադրեցին: Արդյունքում՝ նրանց դեմ զինված ուժեր ուղարկվեցին և քաղաքի ու շրջապատի

բոլոր հայերը սրի քաշվեցին»:

Մեկ ուրիշ վկա՝ Երվանդ Օտյանը, Հայ գրականության առաջատար դեմքերից մեկը, այս դատարանում նկարագրեց հայերի մասսայական տեղահանման ողբերգությունը: Մինչև իր տեղահանումը, հայ նշանավոր մտավորականության մեծամասնությունն արդեն տեղահանված էր: Օտյանը Էրեգլիում տեսել է 5,000-ից 6,000 հայեր, տեղահանված Իզմիրից, Ադաբազարից, Էսքիշեհիրից և այլ տարածքներից: Դրանց մեծամասնությունը տարիքով մարդիկ էին, կանայք և փոքր երեխաներ, որոնք բոլորն էլ ապաստանում էին վրանների տակ: Օտյանը տեսել է վրանների տակ ապրող մոտ 7,000 հայեր Տարսուսից: Այդ փախստականները գալիս էին Ադաբազարից, Բահչեսիկից, Քոնիայից և Էդիրնեից: Հիվանդություններից օրական մահանում էր 400-ից 500 մարդ: Այդ անօգնական մարդկանց, որպես ուտելիք, տրվում էր 500-ից 600 գրամ հաց: Իսլահիեում Օտյանը տեսել է 50,000 փախստականներ Քաստամոնուից, Անկարայից, Թեքիրդաղից, Մուդանիայից և այլ վայրերից: Հալեպում հանդիպել է փախստականների Ադանայից, Հաճընից և Զեյթունից: Այն փախստականները, որոնց նա տեսել է Դիարբեքիրում, եղել են միայն կանայք ու փոքր երեխաներ: Դեր-էլ-Զորում նա տեսել է 2,000 կանանց Զեյթունից: Այդ մասին Կապույտ Գիրքը հետևյալն է ասում.

«1895-ի և 1896-ի միջև Աբդուլ Համիդը սպանել է ավելի քան 100,000 հայերի:

Նրանցից հազարավորներ իրենց կյանքը տվեցին հանուն քրիստոնեական հավատի: Եթե դավանափոխ եղած լինեին, վստահաբար, պիտի փրկած լինեին իրենց կյանքը»:

Այդ կոտորածների մասին արձանագրված է ոչ միայն մամուլում, այլև բրիտանական դեսպանության և հյուպատոսարանների պաշտոնական զեկուցագրերում: Այդ դեպքերը նույնքան որոշակի են, ինչքան այն, ինչ մեր աչքերի առաջ կատարվում է այսօր: Անցյալից ոչինչ չկա, որ հերքեր այդ դեպքերը: Դեպքերը, որոնք տեղի ունեցան 1915-ին, սովորական են թրքական քաղաքականության մեջ: Տարբերությունը անցյալի և թարմ դեպքերի միջև վերջինիս մասշտաբների մեջ է, և այն փաստի մեջ, որ տեղահանությունների ժամանակ մահերը տեղի ունեցան մշտական չարչարանքի ու տանջանքի պայմաններում: Այդ ընթացքում մասնավորապես կանայք էին ենթարկվում տանջանքների»:

Ես պիտի լռությամբ անցնեմ Դեր-էլ-Զորում կատարված ահավոր դեպքերի վրայից, որովհետև վկա Օտյանը դրանք շատ պերճախոս ձևով նկարագրեց: Հալեպում Օտյանը հանդիպել է մի ուրիշ գրողի՝ Արամ Անդոնյանին: Անդոնյանը նրան ասել է, որ իր մոտ ունի Երիտասարդ թուրքերի գաղտնի փաստաթղթեր: Ձերդ գերապատվություն, հարց եմ տալիս Ձեզ, իրավունք ունե՞ր մարդկությունը նման ոճիրներ գործել անմեղ կանանց ու երեխաների նկատմամբ:

Խաչաձև հարցաքննության ժամանակ դատախազը վկաներին հարցնում էր, թե այդ աղետների համար Հայ հեղափոխական կոմիտեները պատասխանատու չէի՞ն արդյոք իրենց գործողությունների և զինված դիմադրության համար: Այս կապակցությամբ ուզում եմ նորից մեջբերումներ անել Կապույտ Գրքի 627, 629 և 632 էջերից. «Անկարելի է ժխտել այն, ինչ տեղի ունեցավ 1915-ին: Օսմանյան Թուրքիայի հայերը արմատախիլ արվեցին իրենց տներից և քշվեցին կառավարության կողմից իրենց համար նախատեսված հեռավոր, ոչ-սանիտարական վայրեր: Ոմանք մահացան ճանապարհին, իսկ ուրիշներն իր կյանքը կորցրին նախատեսված վայրերը հասնելուց հետո: Այս ձևով իր կյանքը կորցրեց 60,000 մարդ, և մի ուրիշ 60,000-ը շարունակում է ապրել այնտեղ, որտեղ նրանց տեղահանել էին:

Ոչ առանձին հայերի սադրանքները, ոչ էլ այլ վատ վարքագիծ կարող է արդարացնել մի ամբողջ ազգի դեմ կատարված նման ոճիրը: Թուրքերը երեք առարկություններ են անում, որոնցից և ոչ մեկը արժանի չէ ուշադրության: Առաջին առարկությունն այն է, որ հայերը զինվեցին և միացան ռուսներին, որոնք հարձակվում էին օսմանյան սահմաններին: Նրանք հիշատակում են Վանի ապստամբությունը և առարկում, որ տեղահանման հրամանները արձակվեցին այդ ապստամբությունից հետո: Իրականությունն այն է, որ հայերը Վանում չեն ապստամբել: Վանի հայերը միայն պաշտպանում էին քաղաքի իրենց հատվածը, այն բանից հետո, երբ թուրք զինվորները շրջապատեցին ու հարձակվեցին իրենց վրա, և այն բանից հետո, երբ թուրքերը ոչնչացրին շրջակա գյուղերի հայերին: Թուրքերն է, որ առաջացրին ընդվզումը և դրա համար պատասխանատու անձը Ջեվդետ բեյն էր: Այս վայրենի և անպատասխանատու կառավարիչն է այդ աղետի իսկական հանցագործը: Որևէ մեկը, որ կարդա Ամերիկյան անկողմնակալ զեկուցագրի փաստաթղթերի ժողովածուի երկրորդ մասը, պիտի տեսնի, որ սա է իրողությունը:

Թուրքերի երկրորդ առարկությունն այն է, որ մինչ Օսմանյան բանակները զբաղված էին ռազմաճակատներում, Թուրքիայի բոլոր հայերը դավ էին մտել՝ ներսից ապստամբելու և երկիրը Միացյալ Ուժերին հանձնելու համար: Ենթադրենք, որ Օսմանյան կառավարությունը զինաթափեց, ձերբակալեց և տեղահանեց ազգի բոլոր անդամներին, առանց սահմանազատելու մեղավորը անմեղից, և ճնշեց ապստամբությունը մինչև այն հանդես գար: Այս առարկությունը ոչ այլ ինչ է, քան խաբեություն: Եթե որոշակի տեղեր ինչ որ հուզմունքներ կային, դրանք խուճապի հետևանք էին ու սահմանափակված էին ինքնապաշտպանությամբ: Արդարև, այդ հուզմունքներն սկսվեցին կառավարության իրագործած հարկադիր գործողություններից հետո:

Խռովությունները պիտի սկսեին այն ժամանակ, երբ Միացյալ Ուժերը Կիլիկիա ափ հանվեին: Բայց այնտեղ ցամաքահանում տեղի չունեցավ: Ափ դուրս եկան Դարդանելում, բայց այնտեղ խռովություններ տեղի չունեցան: Բոլոր դեպքերում, ի՞նչ կարող էին անել հայերը: Վերջապես, նրանց 30-ից 45 տարեկան ամրակազմ տղամարդիկ բանակ էին զորակոչվել մինչև պատերազմի սկսվելը: 15-ից 45 տարեկանները զորակոչվեցին ավելի ուշ:

Թուրքերը ասում էին, որ հայերի տրամադրության տակ կան զենքեր և ռումբեր: Միայն քիչ հայեր է, որ փոքր քանակությամբ հրացաններ ու ատրճանակներ ունեին: Նախորդող վեց տարիներին, Երիտասարդ թուրքերի կառավարման ժամանակ, նրանց արտոնված էր ինքնապաշտպանության համար զենք ունենալ: Ամեն պարագայի, Օսմանյան կայսրության թուրք քաղաքացիները նույնպես այդ իրավունքը ունեին: Ինչպես պարզվեց, նույնիսկ այդ քիչ հայերի (որոնք զորակոչումից դուրս էին մնացել) ունեցած զենքը բավարար չէր պաշտպանության համար: Արդարև, երբ 1914-1915 ձմռանը օսմանյան իշխանությունները բիրտ ձևերով սկսեցին խուզարկել տները և բռնագրավել զենքերը, շատ հայեր, իրենց թուրք հարևաններից զենք գնեցին՝ դրանք հանձնելու համար: Այս վիճակը հաստատվում է հավաստի վկայություններով: Ինչ վերաբերում է ռումբերին, ապա դա միայն առասպել է: Օրինակ՝ մի ռումբ գտնվեց քաղաքի գերեզմանոցում: Դա հայերի նկատմամբ արտակարգ կատաղի վերաբերմունքի պատճառ դարձավ: Ըստ էության, ռումբը ժանգոտած էր, վկայելով, որ այն մնացել էր Աբդուլհամիդի ժամանակներից: Երիտասարդ թուրքերը և հայերը, բնականաբար, այն ժամանակ ռումբեր պատրաստում էին, որովհետև հեղափոխական գաղտնի կազմակերպու-

թյունների անդամներ էին: Ամերիկացիների մոտ աշխատող մի *(Հայ)* դարբին դաժան տանջանքների էր ենթարկվել այն զրույցների համար, թե նա ռումբ է պատրաստում: Պարզվեց որ այդ «ռումբը» մետաղյա մի գունդ է, որը նա ստացել էր ամերիկյան դպրոցից՝ ֆիզիկական վարժությունների համար:

Չերդ գերապատվություն, մինչև այս ահավոր էջերը փակելը, իմ պարտքն եմ համարում բացատրել որոշ կետեր, որոնք բարձրացվեցին այս դատարանում:

Առաջին. մինչև 1908-ի սահմանադրական կարգի հռչակումը, հայկական գաղտնի հեղափոխական քաղաքական կոմիտե երբեք գոյություն չի ունեցել:

Երկրորդ. հայերը երբեք թուրք ազգի նկատմամբ ատելության զգացումների տուրք չեն տվել: Դա է ապացուցում սահմանադրական կարգի հռչակումից հետո Միություն և Առաջադիմություն կուսակցության նկատմամբ հայ ազգի ցուցաբերած համակրանքը: Դաշնակցությունն միությունը համագործակցում էր Միություն և Առաջադիմության հետ, որը, ենթադրվում էր, թե սատարում է այն երեք սուրբ հասկացություններին, որոնք բնութագրում էին ֆրանսիական հեղափոխությունը՝ Արդարություն, Ազատություն և Հավասարություն: Դժբախտաբար, Միություն և Ազատություն կուսակցությունն օգտագործեց այս երեք բառերը քողարկելու համար իր գազանային ծրագրերը:

Այն բանից հետո, երբ սև ձեռքը հագեցավ Թուրքիայի հայերի արյունով, իր ճանկերն ուղղեց դեպի Ռուսաստանի հայերը: Այս անգամ իբրև գործակիցներ վերցրեց քիչ թվով կովկասյան թուրքերի, որոնք հավատարիմ էին Մուսավաթ կուսակցությանը: Ես չեմ կարող ասել, թե Մուսավաթ կուսակցությունը Միություն և Առաջադիմություն կուսակցության հա՞յրն էր, թե՞ զավակը: Համենայն դեպս, այս դատարանում հետևյալ կետերը պարզվեցին ու հաստատվեցին.

Առաջին. Մուսավաթը Միություն և Առաջադիմության հետ կապեր հաստատեց և որդեգրեց վերջինիս նպատակները: Պարոն Բայկովը և դոկտոր Պողոսյանը հաստատեցին այս փաստը:

Երկրորդ, Ջիվանշիրը, Թոփչուբաշիև Ալի Մերդան բեյի, Մեհմեդ Քաչինսկու, խան Խոյսկու և ուրիշների հետ, Մուսավաթի գլխավոր ղեկավարներն էին: Բայկովը և Ռուստեմ Բեգովը վկայություն տվեցին այս մասին:

Երրորդ, Համաշխարհային պատերազմի ընթացքում, Մուսավաթ կուսակցությունը հավանություն տվեց Միություն և Առաջադիմության քաղաքական գաղափարախոսությանը, Կովկասի թուրքերի մեջ մտցրեց թուրք և մուսուլմանական միավորման ոգին և նրանց առաջ բարձրացրեց միացյալ թուրքական աշխարհի տեսլականը, որը պետք է ձգվեր Ստամբուլից մինչև Հնդկաստան:

Չերդ գերապատվություն. նաև գոյություն ունի մի պատմական հանգամանք, որն առավելապես հիմնավորվեց այս դատարանում տրված վկայությամբ: Իր անկախությունից հետո, Հայաստանը, առանց տատանվելու, կանգնեց Դաշնակիցների կողքին և չորս միլիոն ազերի թուրքերով շրջապատված լինելով հանդերձ, Ղարս-Բաքու գիծը անընդմեջ պահեց վեց ամիս, այսինքն՝ մինչև 1918-ի սեպտեմբերը, և դիմադրեց թրքական բանակին, որը դաշնակցել էր Ադրբեջանի հետ:

Նաև, այս դատարանում ներկայացված ցուցմունքը ապացուցեց, որ մինչև Բաքվի սեպտեմբերյան կոտորածները, էրմենիքենտում ապրող փախստական հայերի մեջ կային այնպիսիները, որոնք Բաքու էին փախել Քուշանայից և այլ շրջաններից. այդ թվում՝ հիվանդ և վիրավոր մարդիկ: Համաձայն Ռուստեմ Բեգովի և ուրիշների վկայության, այդ ժամանակ Ջիվանշիրը՝ մի «ուժեղ և վճռական քաղաքական գործիչ», Ներքին գործերի նախարարն էր: Մինչև Բաքու հասնելը, Սև Ձեռքը դեպի քաղաք իր ճանապարհին սկսել էր հայերի ջարդը:

Բաքվի սեպտեմբերյան ջարդերը Ջիվանշիրի կառավարության քաղաքական գործունեության վերջին օղակն էր: Այդ քաղաքականության ահավոր հետևանքները լրիվ մանրամասնությամբ նկարագրվեցին այս դատարանում: Այնուամենայնիվ, մեղադրող կողմը այժմ նախապատրաստվում է իր ներգրաված վկաների միջոցով ապացուցել, որ Բաքվի սեպտեմբերյան կոտորածները առասպել են: Մեղադրող կողմի նման դիրքը մի կարևոր իրավական խնդիր է առաջացնում, որը ես պիտի նկարագրեմ մի քիչ հետո: Այժմ ես ուզում եմ բացահայտել այդ վկաների իսկական կարգավիճակը: Ովքե՞ր են այդ վկաները:

1. Ռուստամ Բեգով, Մուսավաթ կուսակցության անդամ է և «Ադրբեջան» օրաթերթի գլխավոր խմբագիրը: Մենք բոլորս գիտենք, թե այս թերթը ինչպես մեջտեղ եկավ և այս աշխարհում իրականում ինչքան գոյատևեց: Թույլ տվեք միայն ավելացնեմ, որ իմ տպավորությունն այնպիսին է, որ այս «հարգարժան» խմբագիրը, իր հրատարակչական գործունեությունը ծավալելու համար, անհրաժեշտ համարեց տեղավորվել Բաքվի հայկական եկեղեցվո մոտ, հայ արքեպիսկոպոսի բնակարանի վերևում: Նա մեզ չի կարող ասել, թե (հայ) պատգամավորի թույլտվությունն էր իրեն պետք: Մոռացա հիշեցնելու, որ կարծեմ ասաց, թե ո՞վ է ապրել իր ներքևում և ո՞վ է եղել շենքի տերը: Իր վկայության համաձայն, Համաշխարհային պատերազմում Թուրքիայի քաղաքականությունը եղել է չեզոքությունը պատերազմող կողմերի հանդեպ:

Ես ապագա քաղաքագետներին հանձնարարում եմ ուսումնասիրել այս մարդու քաղաքական սկզբունքները, որոնք նա հայտնաբերել է ուշացումով: Այս անձնավորությունը երբեմն թվում է, միամիտ մարդ է: Երբ ես նրան հարցրի, թե հայերը երբևիցե բրիտանացիների հետ կռվե՞լ են, նա պատասխանեց. «Ես չգիտեմ»: Նա Բաքվում մնացել է միայն մեկ օր: Ենթադրաբար, այդ օրը նա Բաքվում էր շատ կարևոր առաքելությամբ: Այնուամենայնիվ, նա շատ մանրամասն տեղեկություններ տվեց այն դեպքերի մասին, որոնք անցյալում տեղի էին ունեցել Բաքվում, կամ որ պիտի տեղի ունենային ապագային: Այս մարդը նաև շփոթ մտածողություն ունի: Նա հեռավորության ընկալում չունի: Երբ նրան հարց տրվեց, թե ճամփորդե՞լ է, նա պատասխանեց. «այո»: Բայց երբ հետաքրքրվեցին, թե ո՞ւր է ճամփորդել, սկսեց խոսել իր՝ Քադիկոյ գնալու մասին:

2. Ահմեդ Համդի Քարակազադեն նույնպես գլխավոր խմբագիր է: Նա նույնպես Մուսավաթ կուսակցության անդամ է: Դրան գումարած, նա նաև (Ադրբեջանի (պառլամենտի անդամ է: Լինելով խմբագիր, նա ուժեղ հիշողություն ունի: Թեև խմբագրականներ է գրել, սակայն չի հիշում դրանց թվականները: Նա նույնիսկ չի կարողանում հիշել, թե նախկինում շաբաթը մեկ հրատարակվող թերթը ե՞րբ է վերածվել օրաթերթի: Ամեն պարագայի, նա շատ համեստ է: Ասում է, որ ինքը շատ լավ հիշողություն չունի: Այսուհանդերձ, նա ամեն ինչ գիտե: Համարձակվում է պնդել, որ երբ բրիտանացիները երկրորդ անգամ մտան Բաքու, բրիտանական գլխավոր հրամանատարը *(Ջիվանշիրը)* ընդունել է: Նա զարմանալի հանդգնությամբ հայտարարում է, որ ոչ մի բան չի լսել Բաքվում հայերի կրած չարչարանքների մասին: Սակայն նա գիտե, որ մուսուլմաններին հայերը սպանեցին Երևանում, որտեղ նա երբևիցե ոտք չի դրել:

3. Սեմենտրը Երկրաբանության Ակադեմիայի հռչակավոր ուսանողն էր: Վկան ոչ միայն բացահայտորեն հայտարարեց, որ սեպտեմբերին Բաքվում ոչ մի կոտորած չի եղել, այլև գովաբանեց Ազերի կառավարությանը՝ կոտորածները կանխելու և հայերից ամենափոքր իսկ առարկաներ գողացողներին մահապատժի ենթարկելու համար: Կարծ ասած՝ վկան ցուցմունք տվեց, որ իր աչքերով է

տեսել, թե ինչպես ժանդարմների տեսուչ Բեհաեդդին բեյը երկու օրվա ընթացքում փողոցներում կախել է 20 ավազակների: Վկան հետևել է Բեհաեդդին բեյի յուրաքանչյուր քայլին, նույնիսկ կարդացել է 20 կախյալների կրծքերին ամրացված գրությունները, որոնց նպատակն էր զգուշացնել ուրիշների: Սակայն նա երբեք չի անհանգստացել իր տեսածով:

4. Զիբա Հանիմ Գայբովա: Թե որտե՞ղ է այս վկան ծնվել և որտե՞ղ է ապրում, մնում է որպես առեղծված: Երբ այս հարցերի շուրջ հարցաքննվեց դատախազի կողմից, նա երջանկորեն պատասխանեց, որ ծնվել է Բաքվում և ապրել այնտեղ մինչև Ստամբուլ գալը: Իմ խաչաձև հարցաքննության ժամանակ նա ասաց, որ ծնվել է ոչ թե Բաքվում, այլ Թբիլիսիում, և որ մինչ 1914-ը Բաքվում չի եղել: Մի կողմից նա ասաց, որ հայերին Բաքվում չեն սպանել, մյուս կողմից ասաց, որ շատ հայեր ապաստան գտան մուսուլման տներում: Այս հակասությունը իմ ըմբռնումից դուրս է: Դուք չե՞ք հիշում, որ վկաներից մեկը (ժամանակը դեռ չի եկել նրա մասին խոսելու), ասաց, որ փրկել է իր տան նկուղում թաքնված 7,000 հայերի կյանքը: Այս կինը, որը գալիս է բարձր հասարակությունից և թատրոններ է հաճախել, նույնիսկ չի հիշում թատրոնին կից բուլվարի անունը: Դրան հակառակ, նա գիտե Բեյօղլուն և Գալատան, թեև նա Ստամբուլում եղել է մի կարճ ժամանակ միայն:

Կարճ ասած, թեև այս կինը սովոր էր հաճախել պառլամենտի նիստերին և հետաքրքրված էր քաղաքական հարցերով, չգիտե Զիվանշիրի քաղաքականության մասին և չկարողացավ պատասխանել նույնիսկ այն հարցին, թե արդյո՞ք Զիվանշիրը ծառայել է այս երկրին:

5. Յուսուֆ Քասիմով: Սա այն «հերոսն» է, որ «փրկել» է 7,000 հայերի կյանքը՝ նրանց իր նկուղում թաքցնելու միջոցով: Այս մարդը ապրել է իր հոր հետ, բայց չի հիշում, որ մի Հայ 10 տարի ապրել է իր ընտանիքի հետ նույն տանը: Նա ասաց, որ հայերը սեպտեմբերին հաստատապես կոտորածների չեն ենթարկվել՝ դա հիմնավորելով իր «սուր» հիշողությամբ: Թեև նա բավական լավ էր, որպեսզի կարողանար հիշել մի թերթում հրատարակված այն հոդվածը, որը վերաբերում էր 1918-ի սեպտեմբերին հայերի ունեցվածքին մեծ վնաս հասած լինելուն: Սակայն երբ հարցվեց թերթի անունը, այն իր հիշողությունից փախավ: Վերջում նա ասաց «Բաքու», մի ռուսալեզու թերթ, որ հրատարակվում էր Բաքվում: Հետաքրքիրն այն է, որ իր նշած ժամանակաշրջանում «Բաքուն» անհետացել էր և փոխարինվել էր Ռուստեմ Բեգովի կողմից հրատարակվող «Ազերբայջանով»:

6. Ես չգիտեմ, արժե՞ արդյոք հիշել Ալի Ասաֆի վկայությունը: Սա մի վկա է, որը բավականաչափ համեստ էր. նա ասաց, որ սեպտեմբերին փողոցներում շատ հայերի մարմիններ է տեսել:

Այս վկայությունները ներկայացվեցին, որպեսզի մեղադրող կողմը կարողանար փաստել, որ 1918-ի սեպտեմբերին *(Բաքվի)* հայերը նույնքան հանգիստ էին, ինչպես նրանք պիտի լինեին, ասենք՝ Լոնդոնում, կամ Մանչեստրում: Ակնհայտ է, թե այս վկաները ինչ ծրագրի էին ծառայում: Նրանք փորձում էին արմատախիլ անել Ադրբեջանի պատմության ամենագրգռիչ էջերից մեկը, մոռանալով, որ պատմությունը դաժան դատավոր է և ոչ մի բան չի կարող ջնջել այն, ինչ արձանագրված է: Մեղադրող կողմի նպատակը պարզ է՝ ժխտել սեպտեմբերյան կոտորածները, որպեսզի արդարացնեն դրանք կատարողներին, ու իրենց պարագլուխ Զիվանշիրին: Արդարև, այս վկաները փորձեցին նույնիսկ 1918-ի մարտի դեպքերը այլ կերպ մեկնաբանել: Պաշտպանության կողմից դատարան կանչված տարբեր ազգություններից ու տարբեր դասակարգերից բազմաթիվ վկաներ խոսեցին

մարտ ամսվա դեպքերի մասին: Այս դատարանը լսեց ճանաչված իրավաբան Բորիս Բայկովի, ռուս սպա Բորիս Հատմանի, իշխանուհի Թամարայի, Վելկա Նիսկայայի և զանազան Հայ վկաների, որոնք բոլորն էլ տեսել են մարտ ամսվա դեպքերը: Բոլորն էլ ցուցմունք տվեցին, որ մարտ ամսվա դեպքերը բոլշևիկների ու մուսուլմանների միջև քաղաքացիական պատերազմի հետևանք էին: Այդ բոլշևիկները ոչ այլ ոք էին, քան ռուսական բանակը, որը գործում էր Լենինի և Տրոցկու հրամաններով: Ռուսական բանակի մեջ ծառայում էին ռուսներ, վրացիներ, հրեաներ, թաթարներ և հայեր: Նրանք բոլորը բոլշևիկներ էին: Այն ժամանակ Բաքվի հայերը ունեին իրենց Ազգային Խորհուրդը, ճիշտ այնպես, ինչպես ռուսներն ու թաթարները: Միայն այդ Խորհուրդն էր լիազորված ներկայացնելու հայկական համայնքը: Պաշտպանության կողմից կանչված բոլոր վկաները ամենայն մանրամասնորեն նկարագրեցին, թե ինչպես Հայկական Ազգային Խորհուրդը իր ամբողջ ուժով աշխատեց փրկելու համար հազարավոր թաթարների կյանքը: Այդ վկաները ցուցմունք տվեցին, որ Հայկական Ազգային Խորհրդի մարդասիրական արարքը մուսուլմանների մոտ երախտագիտական արտահայտություններ առաջացրեց, և Թագիևը, մի ականավոր մուսուլման, Կովկասի բոլոր մուսուլմաններին հասցեագրված մի հեռագրում զեկուցեց Հայկական Ազգային Խորհրդի այդ մարդասիրական արարքի մասին:

Նույնիսկ մեղադրող կողմի վկաները ընդունեցին այս փաստերը: Ես նրանց մեջ չեմ մտցնում Ռուստեմ Բեգովին ու Ահմեդ Համդի Քարագազադեին, որոնք մարտյան դեպքերին ականատես չեն եղել: Մեղադրող կողմի մյուս վկաների ցուցմունքներից ես անում եմ հետևյալ եզրակացությունը.

1. Մարտյան դեպքերը կապված էին բոլշևիկների և թաթարների միջև բախումների հետ:

2. Բոլշևիկների շարքերում թաթարներ ևս կային: Մասնավորապես, Ազերի այժմյան նախագահ Նարիմանովը նրանց մեջ էր:

3. Այդ կռիվների ընթացքում շատ մուսուլմաններ հայերի կողմից նրանց ցույց տրված պաշտպանության շնորհիվ է, որ կարողացան փախչել՝ իրենց կայքի հետ միասին:

4. Կռիվները դադարեցին այն ժամանակ, երբ մուսուլմանների և բոլշևիկների միջև զինադադար կնքվեց:

Մարտյան դեպքերի իրական էությունն այն էր, որ քաղաքացիական պատերազմ էր տեղի ունենում բոլշևիկների և մուսուլմանների միջև: Մեղադրող կողմի մի քանի վկաներ ասացին, որ նրանք տեսել են մուսուլմաններ՝ հայերի կողմից սպանվելիս, կամ հանդիպել են մուսուլմանների մարմինների՝ սպանված հայերի կողմից: Պարզ է, որ այս վկաները սխալ են: Օրինակ Սեմենդերը ասաց, որ հայերը մուսուլման կանանց ու երեխաների տարան Վոլչու և Արուտա: Նա նաև ասաց, որ այդ ժամանակ ինքը գտնվում էր Չեմբեռլիքենտում, որը Վոլչուից և Արուտայից կես ժամ հեռու է: Ինչպե՞ս կարող էր նա այդ հեռավորության վրա տեսնել, թե ինչ է կատարվում: Երբ ես նրան հարցրի, թե հեռադիտակ ունե՞ր, նա անակնկալի եկած ձևով պատասխանեց՝ «Այո, հեռադիտակ ունեի»:

Իր քննության ժամանակ Զիբա Հանիմ Գայբովան ասաց, որ իր տան մոտ տեսել է 16 կանանց մարմիններ, որոնցից մեկի որովայնը ճղված էր և պտուղը ընկած էր նրա կողքին: Նա նաև ասաց, որ տեսել է թևերը կտրված մի տարիքոտ մարդ, ինչպես նաև մի երեխայի մարմին: Խաչաձև հարցաքննության ժամանակ նրան հարցրի՝ որտե՞ղ է տեսել այդ մարմինները: Նա պատասխանեց, որ այդ մարմինները տեսել է իր տնից ոտքով 5-6 րոպե հեռավորության մի վայրում: Երբ

նրան հարցրի թե որտեղի՞ց գիտե, որ հայերն են նրանց սպանել, նա ասաց, որ տարիքոտ մարդն է ասել իրեն: Չէ՞ որ, համաձայն իր վկայության, տարիքոտ մարդը մահացած էր:

Կարո՞ղ եմ մեջ բերել դատարանում վկայություն տալը կառավարող սկզբունքները, ըստ Անգլիական օրենքի (Քրեական օրենքի սկզբունքները, ըստ Հարիսի, էջ 417):

Վկայի հավաստիությունը կախված է փաստի իր իմացությունից, այն փաստի, որի վերաբերյալ նա ցուցմունք է տալիս, իր անկողմնակալությունից, իր ազնվությունից, իր արժանահավատությունից, ճշմարտությունը ասելու իր պարտավորվածությունից, ինչպես օրինակ՝ երդում տալով, կամ այնպիսի հայտարարությամբ, որը օրենքով կարող է փոխարինել երդմանը: Սրանց համապատասխանում է վարկի այն աստիճանը, որին ցուցմունքը արժանանում է դատարանի ատենակալների կողմից:

Մարտ ամսվա դեպքերի ժամանակ Ջիվանշիրը Բաքվո՞ւմ էր: Թափված թաթար և բոլշևիկ արյան համար պատասխանատվության մեջ նա բաժին ունե՞ր: Փաստերը ցույց են տալիս, որ մարտյան դեպքերի ժամանակ Ջիվանշիրը Բաքվում էր: Այս կապակցությամբ ես կարող եմ մեջ բերել Ջիվանշիրի կնոջ ցուցմունքը: Այնուամենայնիվ, Ջիվանշիրը պատասխանատո՞ւ էր մարտ ամսվա դեպքերի ժամանակ թափված արյան համար: Եվրոպական պատմաբանները, մասնավորապես ականատես Հենրի Բարբին, դրականորեն են պատասխանում այս հարցին, թեև այն անմիջականորեն կապված չէ Թոռլաքյանի պաշտպանության հետ: Սակայն իմ գործը մարդասպաններին գտնելն է, որոնք սպանեցին այս խեղճ մարդու ամբողջ ընտանիքը:

Ձերդ գերապատվություն, կարծում եմ, որ Անգլիական Քրեական Իրավունքի պատմության մեջ ես երբեք չեմ հանդիպել նմանը այս մեկին, որը 1918-ի սեպտեմբերին Կասպից ծովը կարմիր ներկեց: Իմ գնահատմամբ, այս գործը իր զուգահեռը չունի Անգլիայի դատավարությունների պատմության մեջ: Պարոնայք, Արևելքը պաշտոնապես կազմակերպված կոտորածների աշխարհամաս է: Արևելքում ցեղային խնդիրները լուծելու համար կառավարությունները կարիք չեն զգում խորհրդակցել քաղաքական և ընկերային գիտությունների հետ: Արևելքում նման խնդիրները լուծվում են կառավարական շրջանակներում պտտվող շրջաբերականների և ծածկագրված հեռագրերի միջոցով: Հետո, մի որոշակի օր, նախատեսված ժամին, սկսվում են կոտորածները և շարունակվում մինչև կառավարության կողմից սահմանված ժամանակը: Ինչքա՞ն են շարունակվում կոտորածները, սա մի հարց է, որը կախված է հարմարությունից և ժամանակից: Բնականաբար, Ներքին Գործերի նախարարությունը պետք է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկի և հեռատեսություն հանդես բերի, որպեսզի կառավարությանը կարողություն տա բեռնաթափելու կոտորածների վերաբերյալ ամեն պատասխանատվություն: Միևնույն ժամանակ, պետք է արդարացում ապահովի, որպեսզի կառավարության հեղինակության նկատմամբ նախապաշարում չստեղծի քրիստոնյա ուժերի մոտ, եթե վերջինները դժգոհություն կամ բողոք արտահայտեն: Դուք պետք է ընդունեք, Ձերդ գերապատվություն, որ նման հարցերում բրիտանական մտածելակերպը չի կարող համապատասխանել Արևելքի քաղաքական գիտության բարձր մակարդակին:

Թուրք-թաթարական բանակը մեծ ուժերով հարձակվեց Բաքվի վրա, որպեսզի գրավի նավթահանքերը և վառելիք ապահովի գերմանական բանակի համար: Իր հիշողությունների մեջ գեներալ Լուդենդորֆը նկարագրում է, թե ինչպես հայ-

կական բանակը ութ ամիս Բաքվից հեռու պահեց թրքական բանակը, և թե ինչպես գերմանական բանակը զրկվեց վառելիքից: Սակայն ո՛չ հայկական բանակը, ո՛չ էլ գեներալ Դանստերվիլի մի բուռ քաջ զինվորները կկարողանային ընդմիշտ դիմադրել հսկայական ուժ ունեցող թրքական բանակին: Թեև գեներալը որոշեց քաշվել Բաքվից սարսափահար 30,000 հայերի հետ միասին, սակայն նա հնարավորություն չուներ իր հետ տանելու Բաքվի ամբողջ հայ բնակչությանը:

Այսպիսով, հենց որ գեներալը և հայկական բանակը Բաքվից քաշվեցին, թաթար անկանոնները մտան քաղաք: Այն ժամանակ է, որ փոթորիկը պայթեց և կոտորածներն սկսվեցին: Իմաստ չունի քննարկել դրան հաջորդող կողոպուտները, նկատի ունենալով, որ թաթարները կոտորում էին հայերին, և կոտորածները շարունակվեցին անդադար՝ երեք օր և երեք գիշեր: Անկանոնները նույնքան ծարավ էին հայերի ունեցվածքի, ինչքան նրանց արյան համար: Սրանք հաստատվեցին մեր կողմից ներկայացված բոլոր վկաների կողմից: Բոլոր հայ և ռուս վկաները կատարված դեպքերի մասին միանման նկարագրություն տվեցին: Նրանք մեզ ասացին, թե ինչպես Տրապիզոնից և Թուրքիայի այլ քաղաքներից՝ Նուխիից, Շուշիից, Քուշանայից և Գյոքչեից էրմենիքենտում ապաստանած խեղճ հայերը դարձան նրանց առաջին զոհերը: Դոկտոր Պողոսյանը նկարագրեց, թե ինչպես էրմենիքենտում տեսավ անօգնական Աղավնիի մարմինը: Վերջինս գերադասեց մահանալ թաթարի դանակից, քան տրվել նրանց գազանային տռփանքին: Ձերդ գերապատվություն, տեռորի այդ տարիներին հայ աղջիկների կյանքի պատմությունը մարդկության պատմության ամենաողբերգական էջերն են:

Հայկական մարտիրոսության պատմության մեջ Հայ Աղջիկների մեծամասնությունը ապրել է նույն ողբերգությունը, ինչ Աղավնին: Համենայն դեպս, հնարավոր է, որ Աղավնին ավելի բախտավոր եղած լինի, քան այս մարդը: Մարդկային էակից, նրա սրտից ու նյարդերից չպետք է սպասվեր անկարելին: Ցնցումներ կան, որոնց միտքը չի կարող դիմանալ: Մարդկային էակը չի կարող սահմանն անցնել, առանց մանր կտորներ փշրվելու: Դրանից հետո նա այլևս չի ապրում և դառնում է մեռած մարդ: Իսկական մահը ավելի լավ է, քան այդ վիճակը:

Մինչև այժմ մենք տեսանք մեծ մարդասպանությունը: Այժմ թույլ տվեք նայել մարդասպաններին. ո՛չ թե վարձկալ ավազակներին, որոնք գազաններից տարբեր չեն, այլ առաջնորդ ձեռքերին, որոնք կազմակերպեցին և ուղղորդեցին նրանց՝ այն սև հոգիներին, որոնք քաղաքակրթված եվրոպացիների դիմակով աշխարհով մեկ ման են գալիս: Բաքվում 1918 -ի սեպտեմբերի կոտորածը կազմակերպված էր Ադրբեջանի կառավարության կողմից: Մենք բազմաթիվ և գերակշիռ վկայություն ունենք, որը բավական է որպես մարդասպան մեղադրելու համար այդ կառավարության ղեկավարությունը, գլխավորապես նրա Ներքին Գործերի նախարարին: Խնդրում եմ թույլ տվեք թվարկել այդ վկայության գլխավոր տարրերը.

1. Ինչպես տիկին Խաչատուրյանը վկայեց, կոտորածներից առաջ, քաջ և խղճամիտ թուրքեր հայերին ասացին, որ թողնեն հայկական թաղամասերը և վերախմբավորվեն կենտրոնական թաղամասերում: Կոտորածներից մեկ շաբաթ առաջ թաթարները սկսեցին տուն առ տուն փնտրել հայերին: Մեղադրող կողմից հանդես եկող թուրք վկաները նույնպես հաստատեցին, որ կոտորածներից առաջ այս իմաստով շշուկներ էին պտտվում:

2. Անկանոնները քաղաք մտան թրքական բանակից առաջ: Այս անկանոնները կազմված էին Ազերի թաթարներից և կոտորածների գլխավոր իրականացնողներն էին: Արդարև, այս մասին վկայեցին Դավիդ Տեր-Դավիդյանը, Բորիս Բայկո-

վը, իշխանուհի Թամարա Վոյկոնսկայան, Նիկոլա Մինդիակևը, տիկին Խաչատուրյանը, Պավել Տգիկյանը և ուրիշներ:

3. Անկանոնները փնտրում էին միայն հայերի՝ նրանց սպանելու և միայն հայերի սեփականությունը՝ թալանելու համար: Երբ մտնում էին ռուսների կամ հրեաների տները, դա անում էին միմիայն այնտեղ հայեր փնտրելու համար: Դեռ ավելին: Կոտորածների ժամանակ իշխանուհի Թամարան խնդրել է թաթար կառավարության պաշտպանությունը՝ թաթար անկանոններից, որոնք իր բնակարանն էին մտել թալանելու համար: Թաթար ժանդարմները եկան նրա բնակարանից թաթարներին դուրս քշելու համար: Լսեք թե ինչ է ասել թաթար ժանդարմը իշխանուհուն. «Ես իմ պարտականությունը արեցի. բայց դու ապրում ես մի հայու տանը: Կուզեի իմանալ, թե դու փորձում ես փրկել քո սեփական տո՞ւնը, թե՞ մի Հայու տունը: Եթե նպատակդ է փրկել Հայու տունը, ապա պետք է իմանաս, որ չես կարող հույս դնել մեր պաշտպանության վրա»:

4. Փաստորեն, բոլոր թուրք վկաներն ասացին, որ շատ հայեր ապաստան գտան իրենց տներում: Նրանցից ոչ մեկը չասաց, թե ռուսներ և հրեաներ ապաստան գտան իրենց տներում:

5. Նույնիսկ Օսմանյան բանակի սպաներ, որոնք Բաքու մտան, ասացին, որ թաթար կառավարությունն էր պատասխանատու կոտորածների համար: Նրանցից մեկը՝ մի բարեսիրտ անձնավորություն, իշխանուհու բնակարանում երեք սենյակ էր վարձել և իշխանուհու բնակարանում թաքնված հայերի համար ուտելիք էր բերում: Երբ նրան հարցրին, թե ինչո՞ւ է գթասիրտ լինում հայերի հանդեպ, այն դեպքում, երբ թուրքերը նրանցից 20,000 հոգի են սպանել, նա պատասխանեց. «Ես թրքական բանակի սպա եմ: Թրքական բանակը երբեք չի մասնակցել կոտորածներին: Միայն թաթար ղեկավարներն է, որ պետք է մեղադրվեն կոտորածների համար: Թաթարները հայերի հետ հաշիվներ ունեին մաքրելու: Դժբախտաբար, թրքական բանակը շատ ուշ հասավ կոտորածները դադարեցնելու համար»: Սա հաստատվում է իշխանուհի Թամարայի վկայությամբ: Մուրսել փաշան նույնպես, Բայկովին ասաց, որ պետք չէ հավատալ ազերի նախարարներին, որովհետև այդ նախարարները փորձում են կոտորածների մեղքը բարդել թրքական բանակի վրա:

6. Սակայն ինչո՞ւ այդքան շունչ ծախսել: Նույնիսկ Ադրբեջանի նախարարները, որոնք հեռու են կոտորածների պատասխանատվությունը ժխտելուց, իրենց մասնավոր կամ հանրային հայտարարություններում այդ կոտորածները նկարագրեցին որպես նորմալ պաշտոնական գործողություն: Իշխանուհի Թամարային ի՞նչ ասաց նախարարներից մեկը՝ Մելիք Արսլանովը: Արսլանովը ուզում էր վերցնել իշխանուհու բնակարանը: Թուրք սպան, որն ապրում էր այդ բնակարանում, թույլ չտվեց: Այդ ժամանակ, մի խոսակցության ընթացքում, իշխանուհին ասեց Արսլանովին. «Դու կրթված մարդ ես. ինչպե՞ս կարող ես նման կոտորածներ թույլ տալ»: Նախարարը պատասխանեց՝ «Մենք մեր զենքերը ցած չենք դնելու, մինչև Ադրբեջանի հայերին արմատախիլ չանենք»:

Մի օր իշխանուհին կապվեց Ադրբեջանի Ներքին Գործերի նախարարի հետ մի անձնական հարցով: Ես կարծում եմ, որ նա կապվեց այն իրերի կապակցությամբ, որ իրենից գողացել էին: Նախարարը, փորձելով իբրև եվրոպականացած անձնավորություն տպավորություն գործել ռուս իշխանուհու վրա, ասաց, որ գողերին պիտի ձերբակալել տա և խստորեն պատժի: Նախարարի պատասխանից ոգևորված, իշխանուհին փորձեց գթասրտություն արտահայտել որոշ հայերի մասին: Նախարարի պատասխանն էր՝ «Ես պնդում եմ, ձեր սեփական շահերից ելնելով, ոչ մի բան չունենաք անելու հայերի հետ: Այլապես դուք կզրկվեք կառավարության պաշտպանությունից»:

Մի ուրիշ օրինակ: Պարոն Բայկովը, մի մեծ վաճառականական հիմնարկի բիզնեսի հարցով կապվեց Ջիվանշիրի հետ: Երբ հարցրին, թե այդ հաստատությունում հայեր կա՞ն, *(Բայկովը)* պատասխանեց, որ հիմնարկի շահաբաժինների 90 տոկոսը ռուսների է պատկանում: Իրեն նարկայացված փաստաթղթերը ուսումնասիրելուց հետո, Ջիվանշիրը ասաց Բայկովին. «Այս հաստատության բիզնեսը գլխավորապես հայերի հետ է: Հետևաբար, այն կառավարության պաշտպանության արժանի չէ»:

Այժմ եկեք վերադառնանք խան Խոյսկու և Ջիվանշիրի կողմից ստորագրված հայտարարությանը: Այդ հայտարարության էությունը հետևյալն է. «Բոլոր ռուսները, վրացիները և հրեաները պետք է հանգիստ մնան և զբաղվեն իրենց բիզնեսով: Սակայն, ով որ որևէ Հայի ապաստան տա, պիտի համարվի օրենքից դուրս, այսինքն՝ պիտի համարվի, որ նա պետության դեմ քաղաքական հանցանք է գործել և պիտի պատժվի խստորեն: Որևէ մեկը, որը նույնիսկ գիտե թաքնված հայերի մասին, կամ գիտե մարդկանց մասին, որոնք ապաստան են տալիս հայերի, պետք է անհապաղ զեկուցի կառավարությանը»:

Այժմ եկեք գնանք գաղտնի փաստաթղթերին: Ամիրյանը, որը գեներալ Սեպուհի օգնականն էր, մեզ ասաց Ջիվանշիրի կողմից ուղարկված ծածկագրված հրամանների բովանդակության մասին: Այդ հրամաններում ասված էր. «Սա սուրբ պատերազմ է, որի նպատակն է միավորել թուրք ազգի բոլոր ճյուղերը: Այս նպատակի համար Հայ ազգի ոչնչացումը արտակարգ կարևոր է: Հայերը մեր քաղաքականության հաջողության ճանապարհին միակ խոչընդոտ են: Սա մի քաղաքականություն է, որը մեզ համար պիտի բացի ճանապարհը դեպի Հնդկաստան: Մենք պետք է վերացնենք հայերին և նրանց դիակների վրայով քայլենք մեր ճանապարհով: Ուստի, մի՛ խնայեք ոչ մեկին և խստորեն կատարեք այն, ինչ ձեզ հրամայված է: Միայն այս ձևով է, որ Ստամբուլը կարող է ազատագրել Հնդկաստանը»:

Ձերդ գերապատվություն, այս բոլոր կետերը շատ պարզ ցուցադրվեցին Ձեր արժանավոր դատարանում: Շատ պարզ ցուցադրվեցին նաև Ջիվանշիրի բարոյականը և նրա քաղաքական գաղափարախոսությունը: Ինչպես վկաները հաստատեցին, Ջիվանշիրը ազգայնամոլ և շովինիստ էր: Այս երկու բառերը Արևելքում այլ նշանակություն ունեն, քան Արևմուտքում: Եվրոպայում ազգայնամոլ և շովինիստ անձնավորությունները քաղաքագետներ են, որոնք հայրենասիրական մտքերն ու զգացումները հասցնում են ծայրահեղության և բացառում են ուրիշ ամեն ինչ: Դրան հակառակ, Արևելքում ազգայնամոլ և շովինիստ քաղաքագետները ճնշում, չարչարում, և, առաջին իսկ հնարավորության դեպքում, սպանում են որևէ մեկին, որն իրենց կրոնին ու ցեղին չի պատկանում. նույնիսկ նրանց, որոնք իրենց իսկ պետության քաղաքացիներն են: Ջիվանշիրի քաղաքական գաղափարախոսության լրիվ գնահատականը տալու համար թույլ տվեք ավելացնեմ, որ ինչպես Ռուստեմ Բեգովը վկայեց, Ջիվանշիրը ազդեցիկ նախարար էր: Այս ազգայնամոլ և ազդեցիկ նախարարն էր, որ սպանեց հազարավոր Հայ ընտանիքներ և այս խեղճ երիտասարդի ամբողջ ընտանիքը: Արյունարբու թաթար ավազակախումբը ամբողջ երեք օր խմեց Բաքվի բնակիչ անբախտ հայերի արյունը: Չկարծեք որ երեք օրից հետո բավարարված էին: Հետո հարձակվեցին Հայ մտավորականության վրա: Վկաները նկարագրեցին, թե ինչպես կոտորածներից հետո շարունակվեց հայերի ճնշումն ու նրանց նկատմամբ անարդար մոտեցումը,

թե ինչպես Չիվանշիրը Հայ մտավորականներին ձերբակալեց ու նրանցից ոմանց սպանեց, թե ինչպես մնացյալները փրկվեցին, երբ բրիտանացիները երկրորդ անգամ մտան Բաքու:

Մարդ պետք է տեսներ Չիվանշիրին, երբ նա դեմ առ դեմ էր գալիս իր զոհերին: Այսինքն, այն ժամանակ, երբ նա արտաբերում էր իր դաժան սրտի ամբողջ մաղձը: Մի օր Չիվանշիրը այցելեց այն բանտը, որտեղ Հայ մտավորականներն էին, անկասկած մոտիկից տեսնելու իր զոհերին և հաճույք ստանալու նրանց տառապանքներից: Այնտեղ նա հանդիպեց Ամիրյանին, որն իրեն հարցրեց, թե ինքը ե՞րբ է ազատ արձակվելու և ինչո՞ւ են հայերը ձերբակալված: Չիվանշիրը պատասխանեց, որ ինքը այդ հարցը քննության կառնի:

Ամիրյանը ասաց. «Ես ոչ մի ոճիր չեմ գործել, որպեսզի բանտարկվեի: Քաջություն ունե՞ս ասելու, որ դու ինձ այստեղ ես պահում պարզապես նրա համար, որ ես Հայ եմ: Ճիշտ այնպես, ինչպես դու անարդարորեն սպանեցիր հայերին, աժմ էլ անարդարորեն ինձ այստեղ ես պահում»: Դրան ի պատասխան Չիվանշիրը ասաց. «Դուք, հայերդ, մեղավոր եք: Ինչպես անցյալում, այսօր էլ դուք պատժվում եք, որպեսզի խելքի գաք»:

Ահավասիկ, Չիվանշիրը դեմ առ դեմ տիկին Արուսի հետ: Լսեք, թե ինչ է ասել այս վկան. «Հետո ես նրան հանդիպեցի մի ինքնաշարժի մեջ և հարցրի, թե ինչո՞ւ սպանեց իմ որբերին: Պատասխանելու փոխարեն նա իր օգնականին հրամայեց խփել ինձ և նրանցից մեկը եկավ ու խփեց ուսիս»:

Այժմ պատկերացրեք Չիվանշիրին դեմ առ դեմ այս անօգնական պաշտպանյալի հետ: Այնուամենայնիվ, Չերդ գերապատվելիություն, թույլ տվեք նկարագրել էրմենիքենտում տեղի ունեցած ահավոր դեպքերը: Ավազակները մտել էին էրմենիքենտի տների սենյակներից մեկը: Սենյակի մեկ անկյունում պառկած էր պաշտպանյալի հայրը՝ Հակոբը, Թոռլաքյան ընտանիքի տարիքոտ և հիվանդ նահապետը: Հակոբի կողքին կանգնած էին դուստրը՝ Աղավնին, փոքր որդին՝ Երվանդը և պաշտպանյալը, որը անկանոնների կողմից վիրավորվելուց հետո հաջողացրել էր սողոսկել տուն: Նա պառկած էր գետնին իր կնոջ՝ Փայլիկի թևերի մեջ: Նույն ժամանակ պաշտպանյալի երկու փոքր զավակները ճչում էին, օգնություն խնդրելով իրենց սարսափահար եղած ծնողներից:

Անկանոնները տնից հեռացան կոխոտելով իրենց յոթ զոհերի վրայով, Թոռլաքյան ընտանիքի անդամներին, Թոռլաքյան ընտանիքը արմատախիլ արած լինելու գոհունակությամբ: Միսաքը չգիտի, թե ինչքան ժամանակ մնաց անգիտակից վիճակում: Երբ նա սթափվեց, տեսավ, որ մի Հայ կին հոգ է տանում իրեն: Այդ կինը իր կյանքով բախտի քմահաճույքին էր պարտական: Մի լվացարարուհի էր, որը էրմենիքենտը թողել էր մինչև մարդասպանների գալը, և այս ձևով է, որ նա փրկել էր իր կյանքը: Երբ պաշտպանյալը իր մեջ մի փոքր ուժ գտավ, նա ուզեց քաղաքից դուրս գալ, ինչքան հնարավոր է շուտ: Այդ նպատակով նա դիմեց անցաթղթի համար: Ուստի նա, ուրիշ հայերի հետ միասին, գնաց կառավարական տուն: Մյուսների հետ միասին սպասեց շենքի դարպասների մոտ: Այդ ժամանակ մի ինքնաշարժ եկավ ու կանգնեց դարպասների մոտ. մի մարդ դուրս եկավ ինքնաշարժից և շենքի դռնով ներս մտավ: Ներկաները պաշտպանյալին ասացին, որ դա Չիվանշիրն էր: Պաշտպանյալը մոտեցավ Չիվանշիրին և անցաթուղթ խնդրեց Թբիլիսի մեկնելու համար: Չիվանշիրը պատասխանեց ծաղրանքով. «Ինչո՞ւ պիտի թույլ տամ, որ գնաս: Ես կփափագեի քեզ տեսնել փողոցում՝ շան պես սովամահ լինելիս ու մեռնելիս: Դա է, որ ինձ հաճույք է պատճառելու»:

Մեկ ուրիշ անգամ, պաշտպանյալը դարձյալ գնաց կառավարական տուն ուրիշ թշվառ հայերի հետ, հույսով ու ակնկալությամբ, որ կառավարությունը վերջապես մի քիչ խիղճ կունենա և կտա անցաթուղթը: Այնտեղ նա համարձակություն ունեցավ Չիվանշիրից խնդրելու, որպեզի ազատեն կալանքի տակ գտնվող հայերից մեկին: Չիվանշիրը այս խնդրանքին պատասխանեց ասելով. «Քո խնդրանքը ինձ անակնկալի է բերում: Իմ ցանկությունն է ձեր բոլորիդ բնաջնջել աշխարհի երեսից: Ուզո՞ւմ ես, որ քեզ և՞ս ուղարկեմ այնտեղ, որտեղ մյուս բոլորն են»:

Չերդ գերապատվություն, ահա թե ինչպես ծավալվեցին ահավոր դեպքերը Բաքվում: Ահա այսպես գործեցին Ազերի կառավարությունը և այդ կառավարության ամենաուժեղ անդամը՝ Ներքին Գործերի նախարար Չիվանշիրը: Բաքվի բնակիչ մի թաթար վկա, որի անունը չեմ հիշում, այստեղ ասաց, որ շատ տխրել էր, իմանալով Չիվանշիրի մահը: Նույն վկան ասաց, որ իրենք լաց են եղել նրա համար: Ես կուզենայի, որ նրանք լաց լինեին ոչ թե Չիվանշիրի մահվան համար, այլ իրենց սեփական վիճակի համար, այն բանի համար, որ նրանք իրենց երկրի ապագան հանձնել են մի բռնակալի, որը Բաքուն վերածեց գերեզմանատան հայերի համար և այսպիսով արատավորեց իրենց հայրենիքի պատիվն ու հեղինակությունը: Նրանք պետք է տխրեին ո՛չ թե Չիվանշիրի մահվան համար, այլ նրա զոհերի տեսարանի համար: Այդ զոհերը միայն հայեր չէին: Ո՞վ գիտե, ինչքա՜ն մուսուլմաններ իրենց գերեզմանները գնացին այդ բռնակալի հրամանով: Օրիորդ Բրաունը, իր վկայության ժամանակ հիշեց բարձր դիրք ունեցող, Բեգբուտով անունով մի խղճամիտ թաթարի: Այդ անձնավորությունը օրիորդ Բրաունին ասել է, որ Չիվանշիրը շատ հայերի մահվան պատճառ եղավ: Իմ պարտքն եմ համարում հարգանքով բարձր պահել Բեգբուտովի և նրան համակարծիք թուրքերի հիշատակը:

Մեղադրող կողմը չկարողացավ ապացուցել, (որ Բաքվում հայերի կոտորածների համար Չիվանշիրը պատասխանատու չէր): Մեղադրող կողմի իրավական առարկությունը սահմանափակվում է մի եզակի կետով. այն է՝ հերքելով, որ 1918-ի սեպտեմբերին հայերի կոտորած է տեղի ունեցել: Եթե կոտորած եղած չլիներ, բնականաբար, պատասխանատվության հարց ևս գոյություն պիտի չունենար: Եթե թաղամասում հրդեհ կա և թաղամասի ոստիկանապետը մեղադրվում է որպես պատասխանատու, ոստիկանապետը իրեն պաշտպանելու համար պիտի մտածեր երկու ուղղ մասին. առաջին, պիտի հերքեր հրդեհը: Սակայն սա ծախողված ընթացք է, որովհետև մի անգամ եթե հաստատվի, որ դեպքը տեղի է ունեցել, ոստիկանապետը կդատապարտվի:

Երկրորդ, նա պիտի ընդուներ, որ թաղամասը վառվել է հրդեհից, սակայն պիտի փորձեր ցույց տալ, թե պատճառ չկա, որ որևէ մեկի վրա պատասխանատվություն բարդվի:

Այս երկրորդը ամենախելամիտ ձևն է: Եթե պաշտպանյալը, իրոք, կատարել է իր պարտականությունները, նա կարող էր արդարացվել: Թոռլաքյանի դատավարությունում մեղադրող կողմը զարմանալիորեն ընտրեց ծախորդ ձևը: Նա հերքեց Բաքվի կոտորածները: Մենք փաստեցինք այն և ցույց տվեցինք, որ Չիվանշիրը պատասխանատու էր այդ ամենի համար:

Չերդ գերապատվություն, մենք կարող էինք բավարարվել, ապացուցելով Բաքվի կոտորածները և ասել՝ «Ահա մի քաղաք, որի ողջ բնակչությունը սպանված է: Ներքին գործերի նախարարը մեղավոր է, որովհետև նա չի կանխել սպանությունները, ուստի պետք է պատժվի»: Սակայն մենք այդտեղ կանգ չառանք: Անառարկելի և անջնջելի ապացույցներով մենք հաստատեցինք, որ Ներքին գոր-

ծերի նախարարությունը, ավելի ճիշտ ինքը՝ Ներքին գործերի նախարարը, պլանավորեց, կազմակերպեց և իրականացրեց սպանությունները:

Ձերդ գերապատվություն, Ջիվանշիրը և իր գործընկերները մասսայական մարդասպաններ են, որոնք կարող են ամբողջ ազգեր ոչնչացնել:

Ձերդ գերապատվություն. այն փաստաբանը, որն ստանձնում է սպանության գործով մեղադրվողի պաշտպանությունը, իր գործի հանդեպ արդար չի լինի, եթե ուշադրությամբ չհետազոտի պաշտպանյալի հոգու մեջ առաջացած հուզումները, փոթորիկները, որոնք պոռթկում են նրա սրտում, և այն ցավը, որը չարչարում է նրա միտքը: Նա կթերանար իր պարտականության մեջ, եթե ինքն իրեն հարց չտար՝ «Ինչպե՞ս պիտի գործեի ինքս, եթե ես լինեի մեղադրյալի փոխարեն՝ նույն պայմաններում և հանգամանքներում»:

Ձերդ գերապատվություն, կարեկցանք ունեցեք այս թշվառ երիտասարդի հանդեպ: Ես այս հարցը մի քանի անգամ տվել եմ ինքս ինձ: Այստեղ, Ձերդ գերապատվություն, այն տալիս եմ ինձ մեկ անգամ ևս: Իմ հորը, եղբորը, քրոջը սպանում են իմ աչքի առջև: Սպանում են իմ կնոջը, զավակներին, նրանց խեղդամահ են անում իմ աչքի առջև այնպես, որ ես կուզենայի կուրանալ, նրանք սևացնում են աշխարհն իմ շուրջը: Հետո նրանք թույլ են տալիս, որ մարդասպանը ապրի ամենաշքեղ պանդոկներում, ամենաշքեղ ինքնաշարժերով պտտվի աշխարհով: Հետո դատարանները իրենց դռները փակում են տուժածների առջև: Ձերդ գերապատվություն, եթե այս խեղճ երիտասարդի տեղը մեկ ուրիշը լիներ, ի՞նչ պիտի աներ այս պայմաններում և հանգամանքներում: Ահա այս է հարցը: Բացի դրանից, ի՞նչ պատիժ պիտի սահմաներ օրենքը, եթե այդ մարդը սպաներ ոճրագործներին :

Ձերդ գերապատվություն, այս հարցն առաջին անգամ է դրվում բրիտանական դատարանի առջև: Խնդրում եմ ինձ ներեք և թույլ տվեք ազատորեն արտահայտել իմ կարծիքը արդարադատության ատյանի առջև մի ազգի, որը հպարտ է իր ազատությամբ: Այս արտակարգ հանգամանքներում որևէ մեկը պիտի սպաներ *(Ջիվանշիրին)* և օրենքը այդ անձնավորությանը պիտի մոտենար հանդուրժողականությամբ:

Ձերդ գերապատվություն, բրիտանական քրեական օրենսգիրքը հենված է մարդկային զգացումների լիակատար ճանաչման վրա: Օրենքը անտարբեր չէ հոգեբանական վիճակների ու զգացումների նկատմամբ, և ինչ որ գրգռող է կոչվում, օրինականորեն քննված և արտոնված է: Սպանության ակտը կարող է կանխամտածված և ոչ կանխամտածված լինել: Ոչ կանխամտածված սպանության բնորոշ նշաններից մեկը գրգիռն է, որը կարող է մարդուն մղել կատարելու մի գործողություն, առանց մտածելու այն մասին, թե հետո ի՞նչ կարող է պատահել. և սա կարող է ավարտվել սպանությամբ: Հետևաբար, ես հարց եմ տալիս, կա՞ արդյոք մի այլ զայրույթ, որն իր լարվածությամբ համեմատելի լիներ այն զայրույթի հետ, որն առաջանում է տեսնելիս մի մարդու, որն սպանել է քո սիրելիներին: Այստեղ կա մի մարդասպան, որն արհամարհեց արդարությունը, իր մեջ երեք տարուց ավելի արմատացած այն ամուր վստահությամբ, որ իր կյանքի մնացած մասը պիտի ապրի խաղաղության և անվտանգության մեջ, որովհետև նա ստիպված պիտի չլիներ հաշվետվություն տալու իր գործած ոճիրների համար, որովհետև իրենից վերև կամ ներքև իշխանություն կամ ուժ գոյություն չուներ, և որովհետև չկար դատարան, ուր իր զոհերը կարող էին դիմել: Երբ նման մի մարդասպան ինքն իրեն ցուցադրում է հանրությանը, մի՞թե սա գրգռիչ չէ:

Ձերդ գերապատվություն. այս մարդը դատարանում է, որովհետև սպանել է

Ջիվանշիրին: Սակայն որտե՞ղ է չար դիտավորությունը: Ինչպես օրենքում սահմանված է, չար դիտավորությամբ կատարված գործողությունը մեկնաբանվում է որպես մի սխալ գործողություն, որն իրականացվում է դիտավորյալ և կանխամտածված ձևով: Այդպիսի գործողությունը չի կարող արդարացվել կամ բացատրվել:

Ձերդ գերապատվություն: Ես այս գնահատումը կատարում եմ, ընդունելով, որ պաշտպանյալի աթոռին նստած է ոչ թե Թոռլաքյանը, այլ մեկը, որը մտային հիվանդությամբ չի տառապում: Մեզ հայտնի հանգամանքներում դիտավորություն, կամ կանխամտածվածություն չկար: Որտեղ գրգռում կա, այնտեղ դիտավորություն և կանխամտածվածություն լինել չի կարող: Այո, ոճիր կատարելու համար չար դիտավորություն կամ ոճրային նպատակներ չեն եղել: Չար դիտավորություն կամ ոճրային նպատակներ չէին կարող լինել, որովհետև՝

1. Հաստատված է, որ Թոռլաքյանը Ստամբուլ հասավ 1921-ի սկզբներին, շատ ավելի վաղ, քան Ջիվանշիրը և իր եղբայրը հասան այս քաղաքը՝ 1921 -ի հունիսի 25 -ին:

2. Հաստատված է, որ Թոռլաքյանը զենք է կրել Բաթումիից Ստամբուլ ճամփորդության ժամանակ:

Այժմ, Ձերդ գերապատվություն, ես այդ պատկերացված անձնավորությանը հանում եմ պաշտպանյալի աթոռից և խնդիրը քննում եմ՝ նայելով Թոռլաքյանին, այս խեղճ երեխային, որ ինքն է տառապել ուրիշ մարդկանց կողմից կատարված սպանություններից ու կյանքի զրկանքներից: Այս դժբախտ երեխան հիվանդ մարդ է, որը ծեր ողորմածության կարիքն ունի: Այդ ոճիրը կատարելիս, նրա զգացումները կուրացած են եղել:

Երեխայի զգացմունքային և մտավոր վիճակը ծեր դատարանի առջև լրիվ բացահայտվեցին: Վկաները հաստատեցին, որ՝

1. Նրա մեծ մայրը էպիլեպտիկ է եղել, հայրը՝ մտավոր խանգարումով և պարանոիդ, կասկածով, որ դուրս գալուց որևէ մեկը իրեն պետք է սպանի: Հորեղբայրը մտավոր հիվանդ էր:

2. Մինչև չորս տարեկան նա չի կարողացել քայլել, պարբերաբար հիվանդացել է՝ բերանում փրփուրով:

3. Ստամբուլում եղած ժամանակ նա մի քանի անգամ ուշագնաց է եղել բերանում փրփուր: Նա երբեմն անջատվում էր, սևեռուն նայում՝ գլուխն առած ձեռքերի մեջ: Երբ ժամանակ առ ժամանակ ապաքինվում էր, իր ընտանիքի մասին ասում էր՝ «Թվում է, որ նրանք հավաքված են իմ շուրջը»: Նա միշտ տխուր էր ու ընկճված և իր ամբողջ ժամանակը իր սենյակում էր անցկացնում: Սովորություն ուներ թաղման մեղեդիներ երգել:

Իր հիվանդությունը կրկնվեց ոճրից երկու շաբաթ առաջ: Բանտում եղած ժամանակ ևս նա մի նոպա ունեցավ: Բժիշկները, դոկտոր Կարապետ Աղաջանյանը՝ մտավոր և հոգեբանական հիվանդությունների մասնագետ և Վարշավայի համալսարանի ֆակուլտետի անդամ, դոկտոր Ջորջ Ջիլանակիսը՝ Յեդիկուլեի հունական հիվանդանոցի մտավոր և հոգեբանական հիվանդությունների մասնագետ, դոկտոր Վասիկիոս Քոնոսը՝ մտավոր և հոգեբանական հիվանդությունների մասնագետ, վկայեցին, որ պաշտպանյալի մտավոր ախտանիշները ցույց են տալիս, որ նա տառապում է կամքի ուժի թուլությամբ: Արդյունքում՝ նա չի հասկանում իր վարքի կամ գործողությունների առանձնահատկությունը և որ կարող է դրանց համար պատասխանատու լինել, և եթե նույնիսկ հասկանար, կարող է չգիտակցեր, թե իր արածը ոճիր է: Այդ վկաները ցուցմունք տվեցին պաշտպանու-

թյան համար:

Մի ուրիշ բժիշկ, որը կանչված էր մեղադրող կողմից՝ Մազհար Օսման բեյը, ասաց, որ ինքը կարող էր պաշտպանյալին ախտորոշել որպես էպիլեպտիկ, եթե պաշտպանյալի վերաբերյալ վկաների տված տեղեկությունը ճիշտ է: Դատարանի կողմից կանչված մի վկա՝ դոկտոր Դեյվիսը, ցուցմունք տվեց, որ բոլոր հանգամանքները, ամբողջությամբ վերցրած հաշվի առնելու դեպքում, այս մարդը չի իմացել, թե ինքը ինչ է անում: Նա ավելացրեց, որ Ջիվանշիրին տեսնելիս նրա մոտ առաջացած հուզմունքն ու գրգռությունը, որոնք բխում էին իր ընտանիքի և հարազատների հիշատակից, իրենց հերթին առաջացրին մի տեսակ նոպա, ներվային ցնցում, մարդասպանության մոլուցք, և նա մարդասպանությունը կատարել է այդ վիճակում գտնվելիս: Վկան նաև ասաց, որ պաշտպանյալը կարող էր դանակահարել Ջիվանշիրին և կարող էր մտածել, որ Ջիվանշիրը ուզում էր իր վրա հարձակվել:

Ես չեմ հիշում մի այլ դատավարություն, երբ բժիշկները հասած լինեն այսքան պարզ եզրակացության, ինչպես այս դեպքում: Նրանք ձեզ ասացին, որ Ջիվանշիրին սպանելու ժամանակ Թոռլաքյանն իր գործողությունների վրա լրիվ վերահսկողություն չի ունեցել: Գիտությունը կարո՞ղ էր մի այլ եզրակացության հանգել: Ի՞նչ բան կարող էր առավել բնական լինել, քան ընդունելը, որ Թոռլաքյանի հիվանդ մտածողությունը չէր կարող դիմադրել այն ցնցմանը, որ նա այդ ճակատագրական գիշերն ունեցավ «Փերա Փալաս» պանդոկի դիմաց՝ տեսնելով Ջիվանշիրի խավար դեմքը: Ամեն դեպքում, կարո՞ղ էր մի առողջ մտածողություն չազդվել նման ցնցումից: Մարդկային ներվերը ո՛չ քարից են և ո՛չ էլ երկաթից: Եթե նույնիսկ լինեին, չէ՞ որ երկաթից և քարից սարքված շատ քաղաքներ թաղվել են Վեզուվ լեռան լավաների տակ:

Ոչ, Ձերդ գերապատվություն, այս երիտասարդը մի դժբախտ, հիվանդ անձնավորություն է: Ո՞վ գիտե, նա հիմա ինչ ձայներ է լսում: Արդյոք խոսողը իր հա՞յրն է, թե՞ դուստրը: Թերևս նա իրեն տեսնում է իր սիրելիներով շրջապատված: Թերևս իրեն հրավիրում են գնալ իրենց մոտ, մի ուրիշ աշխարհ, որտեղ մարդիկ այլևս ցավ չեն զգում: Ո՛չ, Ձերդ գերապատվություն, Բաքվում մահացած հազարավոր հայեր ձեզ են նայում՝ ձիթենու ճյուղերն իրենց ձեռքերին: Հետևաբար, մի՛ վախեցեք: Թոռլաքյանին ինձ հանձնեցեք, որպեսզի փառաբանի Ամենակարողին, որն ամեն ինչ տեսնում է:

ՀԱՅԴԱՐ ՌԻՖԱՏ ԲԵՅԻ ԶԵԿՈՒՅԱԳԻՐԸ

Հետո Հայդար Ռիֆատ բեյը մեղադրող կողմին հանձնեց մի զեկուցագիր, որի համառոտագրությունը բերվում է ստորև:

Բեհբուդ Խան Ջիվանշիրը սպանվեց մի մարդու կողմից, որը գործում էր անհատականորեն, կամ հրահանգված էր մեկ ուրիշի կողմից: Ոստիկանությունը և այլ իշխանություններ չկարողացան հետախուզել այս երկրորդ հնարավորությունը: Պաշտպանական կողմը կանչել էր 30 վկաների, բայց մեղադրող կողմին ասվել էր, որ կարելի է կանչել միայն 12 վկաների: Մենք այդպես էլ արեցինք:

Պաշտպանությունը իր վկաների միջոցով կիրառեց հետևյալ մարտավարությունը՝

1. Պաշտպանյալը մի միամիտ մարդ է Տրապիզոնից, բայց ոճիրը կատարված է ազերի նախարարի դեմ: Որովհետև պաշտպանյալը Թուրքիայից է, գտնվեցին վկաներ, որոնք քաղաքակիրթ աշխարհի ուշադրությունը գրավելու համար պիտի ասեին, թե փախել են թրքական բռնապետությունից, թե դուրս են հանվել իրենց գյուղերից: Սա նոր քարոզչության համար էր:

2. Զոհը Ներքին գործերի նախարարն էր Ադրբեջանի, որի մայրաքաղաքը Բաքուն է: Ընդունենք, որ պաշտպանյալի հայրը, քույրը, կինը և զավակները Բաքու գնացին: Ընդունենք, որ նրանք բոլորը այնտեղ սպանվեցին: Ընդունենք, որ նրանք բոլորը սպանվեցին պաշտպանյալի աչքերի առջև: Ընդունենք, որ պաշտպանյալի հայրը և հորեղբայրը մտավոր խանգարում ունեին և էպիլեպտիկներ էին: Վերջապես, բժշկությունը երկրաչափության նման չէ: Ինչքան սխալներ են եղել գլխավոր դատավարություններում: Ուրեմն, թերևս դատարանին կարողանանք մղել համաձայնվելու, որ պաշտպանյալը խելացնոր է կամ էպիլեպտիկ: Մենք կարող ենք ասել, որ նա չի սպանել, կամ, եթե նույնիսկ սպանել է, նա չգիտի, որ ինքն է արել այդ:

Ահա այսպես էր ձևավորված պաշտպանությունը:

Մեղադրող կողմի փաստարկները հենվում էին հետևյալ մոտեցման վրա՝

1. Ո՞վ է մարդասպանը:
2. Ո՞րն էր պաշտպանական կողմի վկաների ցուցմունքների բովանդակությունը:
3. Ինչքա՞ն անհիմն է հիվանդության մասին պատմությունը, և ինչքա՞ն աննշան է գիտական արժեքը այն բժիշկների ցուցմունքների, որոնք այստեղ բերվեցին իբրև մասնագիտական ցուցմունքներ հաստատելու համար, որ պաշտպանյալը հիվանդ է:
4. Դիմում պատժի համար:

Եվ այսպես, ո՞վ է մարդասպանը:

1. Բիհբուդ խան Ջիվանշիրը, Ադրբեջանի նախկին Ներքին գործոց նախարարը, սպանվեց 1921-ի հուլիսի 17-ին, ժամը մոտավորապես 23:30-ին, Փերա Փալաս պանդոկի դիմաց, երբ նա կնոջ և երկու եղբայրների հետ միասին Թեփեբաշի թատրոնից վերադառնում էր Պերա Փալասի իր բնակարանը: Ետևի կողմից երեք փամփուշտ արձակվեց և երեքն էլ դիպան Բիհբուդ խանին:

2. Այդ ժամանակ Ջամշիդ խանը քայլում էր Բիհբուդ խանից առաջ: Հենց որ

լսեց կրակոցի ձայնը, նա ետ նայեց և տեսավ, որ մեկը ատրճանակով կրակում է իր եղբոր վրա: Ջամշիդ խանը հաստատեց այդ անձնավորությանը: Բիհբուդ խանը փորձեց բռնել այդ մարդուն, սակայն իր վերքերի լրջության պատճառով չկարողացավ և գետին ընկավ: Ջամշիդ խանը կարողացավ բռնել այդ անծանոթ մարդուն, սակայն այս անգամ այդ մարդը կրակեց նաև նրա վրա և փամփուշտը քերծեց նրա հոնքը: Այդ օրվանից Ջամշիդ խանը կորցրել է ձախ ականջի լսողությունը:

3. Դեպքի ժամանակ Բիհբուդ խանի կինը քայլում էր նրա կողքից և լսեց ետևից եկող կրակոցի ձայնը: Կրակոցը այնքան մոտիկից էր, որ նա կարողանում էր զգալ վառոդի հոտը: Թեև տիկին Ջիվանշիրը առաջին կրակոցից հետո առաջ ցատկեց, սակայն նա կարողացավ տեսնել ամուսնու գետին ընկնելը և պայքարը հարձակվողի ու Ջամշիդ խանի միջև: Տիկին Ջիվանշիրը և երիտասարդ Սուրհեյ խանը նույնպես հասան անծանոթ հարձակվողի վրա և բռնեցին ձեռքերից: Տիկին Ջիվանշիրը հաստատեց այդ մարդուն: Դա նույն անձնավորությունն է, որին տեսել ու հաստատել է Ջամշիդ խանը:

4. Այդ ժամանակ դեպքի վայր հասավ թուրք ոստիկանության մի պաշտոնյա: Այս նվիրյալ պաշտոնյան, որը Գալաթասարայի ոստիկանության կենտրոնում գրանցված է որպես թիվ 205, Ալի էֆենդին էր: Նա դեպքի վայր հասավ անմիջապես, փչելով իր սուլիչը: Նա Բիհբուդ խանին տեսավ երեսն ի վայր գետնին պառկած, և մի կին ու երկու տղամարդիկ, որոնք պայքարում էին պահել մի մարդու, որը փորձում էր փախչել: Նա նաև տեսավ, որ այդ մարդը ձեռքին ատրճանակ ուներ: Ալի էֆենդին այդ մարդու դաստակներից բռնեց: Մոտավորապես այդ ժամանակ, մի ուրիշ թուրք ոստիկանության պաշտոնյա, Միացյալ ուժերի ծառայության մի հսկիչ ջոկատի հետ միասին հասան դեպքի վայր և ձերբակալեցին այդ մարդուն: Նրան տարան Գալաթասարայի ոստիկանատան կենտրոնական գրասենյակ: Հետո նա կալանավորվեց, նախ՝ Ֆրանսիական Առաջին ոստիկանատանը, հետո՝ բրիտանական ոստիկանությունում ու տարվեց Քրոքըր պանդոկ:

Ալի էֆենդին վերցրեց մարդու ատրճանակը: Ավելի ուշ ատրճանակը փոխանցվեց բրիտանական ոստիկանություն: Դատարանում ատրճանակը ցույց տվեցին այս մարդուն: Նրան հարցրին՝ «Այս ատրճանակը քո՞նն է»: Նա պատասխանեց. «Իմ ատրճանակին նման է, բայց ես չգիտեմ, ի՞մն է, թե՞ ոչ»: Ալի էֆենդին, երդում տալուց հետո դատավորին ցուցմունք տվեց, որ դա այն ատրճանակն է, որ նա վերցրել է այդ մարդուց: Ջինվորական դատարանը Ալի էֆենդիին հարցրեց, թե կրակոցի ձայնը լսելուց հետո ինչքա՞ն ժամանակ անցավ, մինչև նա հասավ դեպքի վայրը: Նա ասաց, որ նա հերթապահական ծառայության մեջ էր և գտնվում էր փողոցի անկյունում, և որ «դա տևել է ընդամենը մեկ վայրկյան»:

Դատական ատյանի թույլտվությամբ ես իրեն հարցրի. «Հնարավո՞ր է, որ մեկ ուրիշը կրակած լինի ատրճանակից և մինչև քո հասնելը փախած լինի»: Ալի էֆենդին, երդման տակ, պատասխանեց, որ դա անկարելի է:

Ալի էֆենդին հաստատեց ինքնությունը այն մարդու, որին նա ձերբակալել և վերցրել էր նրա ատրճանակը: Սա նույն մարդն է, որի անձը հաստատեցին տիկին Ջիվանշիրը, Ջամշուդ խանը և Սուրհեյ խանը:

5. Ջիվանշիրին տարան մոտակա բրիտանական հիվանդանոց: Հիվանդանոցի հերթապահ բժիշկ կապիտան Հիլը դատարանին ասաց, որ հիվանդը մահացել է նրան հասցված երեք վերքերից, որ յուրաքանչյուր վերքը առանձին-առանձին նշանակալի չի եղել, բայց երեքը միասին են պատճառել մահը, և որ զոհը որևէ հիվանդությամբ չի տառապել: Ջիվանշիրը մահացել է հիվանդանոց ընդունվելուց 35 րոպե հետո: Սակայն բրիտանական ապահովության ծառայությունը անմիջապես չի քննել *(պաշտպանյալի)* ատրճանակը, որոշելու համար, թե նրանից նո՞ր են կրակել: Ավելին. բրիտանական ոստիկանությունը և Ջինվորական դատարանը Բիհբուդ խանի մարմնից հանված փամփուշտները չեն համեմատել պաշտպանյալի ատրճանակի փամփուշտների հետ: Առավել ևս, ո՛չ բրիտանական ոստիկանությունը, ո՛չ էլ Ջինվորական դատարանը, ատրճանակի և դրա հետ կապված մանրամասների կապակցությամբ այս մարդու բնակարանում ոչ մի հետազոտություն չեն կատարել: Մինչդեռ, դատարանին ներկայացված ցուցմունքներից պարզ է, որ տիկին Ջիվանշիրի, Ջամշիդ և Սուրհեյ խան եղբայրների և ոստիկան Ալի էֆենդիի կողմից ինքնությունը հաստատված այս անձը ինքը մարդասպանն է, որը ոչ այլ ոք է, քան Միսաք Թոռլաքյանը՝ ձեր դատարանում կանգնած իբրև դատապարտյալ:

(Հայդար Ռիֆատ բեյը մեկ առ մեկ դիտարկեց պաշտպանական կողմի 29 վկայությունները և հետևյալ ձևով մեկնաբանեց Թոռլաքյանի ցուցմունքը, որը 30-րդն էր):

-Թոռլաքյանը պատերազմ հայտարարվելուց երկու ամիս անց Տրապիզոնից գնում է Բաքում, որովհետև թուրքերը հայերին սպանում էին: Երբ թուրքերը մոտենում են Բաքումին, նա իր ընտանիքը ուղարկում է Բաքու և ինքը Թիֆլիսում *(հայկական բանակի)* կամավոր է արձանագրվում ու գնում է Երևան: Հիվանդ լինելով հանդերձ, նա ուզում է ծառայել որպես կամավոր: Համենայն դեպս, նրան *(հայկական բանակից)* զորացրում են: Որոշ ժամանակ անց՝ սեպտեմբերի 14-ին, Բաքվի մի փողոցի անկյունում նա վիրավորվում է ու վերադառնում տուն: Մի քանի րոպե հետո իր տան վրա հարձակում է տեղի ունենում: Թեև նա կորցնում է գիտակցությունը, բայց կարողանում է լսել ամեն ինչ: Ճիչերը դադարում են: Մնացյալը նա հիշում է հետևյալ ձևով. մի կին, որին չի ճանաչում, իր թևից բռնած տանում է հարևան տունը: Իրեն պառկեցնում է ու բժիշկ կանչում: Տան մեջ եղած բոլոր մարմինները վերցված են լինում: Ինքը կենդանի մնաց: Ո՞վ վերցրեց մարմինները, բժիշկնե՞րը, թե՞ մարդասպանները: Բնականաբար, ո՛չ: Հավանաբար դա կառավարությունն արեց: Եթե կառավարությունն էր հայերին սպանել, իրեն ինչո՞ւ կենդանի թողեցին:

Այժմ նա չգիտե, թե ինչո՞ւ է ինքը բանտում: Նա չգիտե, թե ինքը ինչո՞ւ է այս դատարանում: Ոչ էլ գիտե, թե ինչպե՞ս է ձերբակալվել: Սակայն նա գիտե, որ երբ ձերբակալվեց, Գալաթասարայի թրքական ոստիկանատանը թուրք ոստիկանները իրեն ծեծեցին: Մինչդեռ ֆրանսիացիներն էին, որ նրան հանձնեցին մարդասպանությունից հետո: Սա երևում է նախորդ փաստաթղթերից:

Նա մի բան ևս գիտե: Իրեն, հավանաբար, ծեծել են ձեռքերով, ոտքերով և գավազաններով: Նա գիտե սա: Սակայն նա մտածում է, որ դեպքի գիշերը ինքը կարող է Ստամբուլում հանդիպած լինել Ջիվանշիրին: Նա չգիտե: Սա նույնպես շատ թույլ հեռանկար է: Նա կարող է Ստամբուլում Ջիվանշիրին տեսած լինել և տեսած չլինել: Կարող է դա երազ էր: Միևնույն ժամանակ (նա ասում է). «Ես տեսա հորս, քրոջս և կնոջս. հայրս ասում էր՝ «Խղճացեք զավակներիս»: Գեղեցիկ քույրն ասում էր՝ «Ո՛չ, ինձ մի տարեք, ինձ սպանեցեք իմ սիրեցյալների հետ միասին» (հետո նա ասում է). «Ջիվանշիրը հարձակվեց իմ վրա, նա ուզում էր ինձ սպանել»:

Նա մեղադրող կողմին ասաց. «Ես միացա մի բանակի, որպեսզի կռվեմ թուրքերի դեմ: Ես գիտեի, որ կարող են պատժել ինձ: Ես Տրապիզոնը թողեցի, որովհետև Տրապիզոնում կոտորածներ էին տեղի ունենում, թեև 1895-ին ոչ իմ գյու-

ղում»: Այսինքն՝ համաշխարհային պատերազմից 20 տարի առաջ: Ինչ որ պատճառով, նա այս բաները հիշում է:

Նա որտեղի՞ց վերցրեց ատրճանակը՝ մարդասպանության գործիքը: Նա հիշում է՝ Բաքումից: Բայց չի հիշում Թեփեբաշի զբոսայգի մտած լինելը:

Նա Ջիվանշիրի հանդեպ ատելություն ունեցե՞լ է: Ասում է, որ ազդված էր նրա չար գործերից: Դեպքի օրը նա ե՞րբ թողեց Շահինյանի տունը: Նա այդ մասին հիշեց դատարանում. ասաց՝ «Կեսօրվա մոտ»:

Դեպքից հետո նա ինչո՞ւ ասաց ոստիկանին, որ ապրել է Բեշիքթաշում: Ինչ որ պետք էր ասվեր թաքնվելու, կամ տեսադաշտից դուրս մնալու համար, նա չի մոռացել:

Երբ հարցրին, թե ինչո՞ւ ոստիկանին սուտ ասաց իր բնակավայրի մասին, նա պատասխանեց. «Տարբերություն չկա. Բեշիքթաշում իմ ընկերները իմ ճիշտ հասցեն գիտեն»:

Պաշտպանությունը ուշադիր է նաև պաշտպանյալին որպես հիվանդ ու էպիլեպտիկ ներկայացնելու գործում:

Եթե ցույց են տալիս, որ նա էպիլեպտիկ է, ուրեմն՝

«էպիլեպտիկ հոգեկանը» պետք է հաստատվի: Այլապես, պաշտպանյալը պիտի ներկայացվի իբրև հիվանդ և ոճիրը պիտի կատարած լինի մեծ ցնցումի և զգացմունքային լարվածության վիճակի պայմաններում, այսինքն՝ խելացնորության վիճակում:

1. Իրականությունն այն է , որ հոգեբանական հեռանկարով էպիլեպսիայի քիչ հավանականություն կա: Հնարավորությունը որոշակիորեն բացառված է: Դա բացառել են հենց պաշտպանյալի սեփական բառերը: Պաշտպանյալը ինքն է ցուցմունք տվել, որ իր կյանքում մեկ անգամ իսկ չի տառապել հոգեբանական էպիլեպսիայով: Հոգեբանական էպիլեպսիայի գլխավոր ախտանիշն այն է, որ հիվանդը հարձակվում է պատահականորեն: Հիվանդը հարձակվում է իր մոտ գտնվող որևէ մեկի վրա: Նա չի փնտրում գլխավոր թշնամուն, իր թշնամիների շարքում չի փնտրում բարձր դիրք ունեցող մտավորականին, առանց դիպչելու մեկ ուրիշի: Մասնավորապես, նա չի գիտակցում, թե ինչ է անում: Նա չի հիշում, թե ինչ է արել: Նաև պետք է շեշտել, որ հոգեբանական էպիլեպսիան վախից կամ հուզմունքից չի առաջանում: Այն դրսի գործոնից չի առաջանում: Թոռլաքյանը մի հետաքրքիր պատկեր նկարագրեց, երբ ասաց. «Ես երա՞զ էի տեսնում, թե՞ դա իրոք Ջիվանշիրն էր: Ես չգիտեմ: Թվաց, որ նա իմ վրա է հարձակվում ինձ սպանելու համար: Այդ ժամանակ հայրս ճչում էր. «Խնդրում եմ, խղճա զավակներիս»: Ես հորս ձայնը լսեցի»: Ներգործելու այս փորձը զգացմունքային տեսակետից վատ չէ: Այո, դեպքը կատարվելուց հետո, Թոռլաքյանը փորձել է փախչել 2, 3, 5 վայրկյանների ընթացքում: Նա փորձել է փախչել: Ավելին, այդ ընթացքում նա կրակել է Ջիվանշիրի փոքր եղբոր՝ Ջամշիդ խանի վրա, որը նրան բռնել էր: Նա փորձել է ամեն ինչ անել փախչելու համար երեք հոգու ձեռքերից, որոնք իրեն բռնել էին:

Ի՞նչ են ցույց տալիս այս տեսարանները, ու նրա փախչելու փորձերը: Բնականաբար՝ գիտակից լինելու մի վիճակ: Սակայն գիտակից վիճակում լինելը և հիշողությունը երբեք միասին չեն գնում հոգեբանական էպիլեպսիայի հետ: Հետևաբար, եթե նույնիսկ Թոռլաքյանը էպիլեպսիա ուներ, այն հոգեբանական էպիլեպսիա չէր: Այս փաստը անտեսված է մեր երկրի հոգեկան հիվանդությունների հայտնի որոշ մասնագետների կողմից, իսկ որոշ շատ լավ թուրք մասնագետների պատիվ է բերում: Այդ մասնագետները բոլորն էլ համաձայնվեցին, որ պաշտպանյալը էպիլեպսիայի ախտանիշներ, ինչպես օրինակ՝ հոգեբանական

գրգռվածություն, լեզուն խածնել, կամ խոսակցական յուրահատկություններ չի ցուցաբերել:

2. Թոռլաքյանը չի տառապում նաև իր առողջական վիճակի վերաբերյալ պաշտպանության կողմից առաջ քաշված հանգամանքով, այն է՝ ժամանակավոր խելացնորություն: Թոռլաքյանը շատ լավ է հիշում, որ իրեն ծեծել են, ծեծել են թուրք ոստիկանները, ծեծել են թրքական ոստիկանատանը: Նա այս մասին պատմեց բրիտանական զինվորական դատարանին՝ առանց որևէ մանրամասնություն մոռանալու: Համաձայն մանկավարժ՝ դոկտոր Մազհար Օսման էֆենդիի, «Գրգռվածության դերը խելացնորության հարցում նույնքան անկարևոր է, ինքան էպիլեպսիայի հարցում»: Այն դիտարկումների կապակցությամբ, որ պաշտպանյալը խոսում է քթի մեջ, որ նրա քիթը թեթևակի թեքված է, որ իր զարկերակը 90-ից բարձր է, որ սրտի զարկը բարձր է և որ հաստացած երակներ ու թույլ ձեռքեր ունի, թվարկվածների կապակցությամբ (Մազհար Օսմանին) հարցրին. «Թոռլաքյանը ենթակա կլինե՞ր խելացնորության նոպայի, եթե տեսներ մի նախարարի, որին նա պատասխանատու է համարում այն կոտորածների համար, որոնք նա կարծում է, թե տեղի են ունեցել Բաքվում»: Նրա պատասխանը «Ոչ» էր: Հետո նա ավելացրեց. «Շատ մարդիկ կան, որոնք իրենց քթի մեջ կամ շվշվոցով են խոսում: Աստված օգնի մեզ, եթե նրանք բոլորը մարդասպաններ դառնալու թեկնածուներ լինեին»:

«Երակների կարծրացում 40-ից բարձր տարիքի բոլոր մարդկանց մոտ տեղի է ունենում: Դրան հակառակ, 40-ից հետո հակամետությունը դեպի խելացնորություն և էպիլեպսիա, նվազում է: Նշված մյուս ախտանշանները իրավական բժշկության մեջ արժեք չունեն»:

Անցյալ տարի Փարիզում մի հոգեբույժ-պրոֆեսոր, ելույթ ունենալով Լոզանի կոնֆերանսում, ասաց. «Մեզ մի՛ հարցրեք, թե որպես մտավոր անհավասարակշռության հետևանք՝ կե՞ս, քառո՞րդ, թե՞ մեկ հինգերորդ պատասխանատվություն է հասնում: Հենվելով ոճիրի վրա, ինքներդ որոշեցեք ատյաններում»: Նրան ծափահարեցին բոլոր մասնագետները:

Մեկ ուրիշ պրոֆեսոր ասաց. «Դուք ի՞նչ կանեք կատաղած շան հետ: Չէ՞ որ նրան կսատկացնեք: Ուստի մեզ մի հարցրեք, ի՞նչ անել սրանց հետ»:

Այժմ, եկեք կարդանք բժիշկների ցուցմունքների համառոտագրությունները:

Դոկտոր Աղաջանյանն ասաց, որ նա էպիլեպտիկ է, բայց այդ կապակցությամբ որևէ գիտական բացատրություն չտվեց: Նա նաև ասաց, որ սա պիտի լիներ վերջին հնարավորությունը:

Դոկտոր Ջինալաքիսը ասաց. «Չեմ կարծում, որ նա էպիլեպտիկ է: Թվում է, նա մելամաղձոտ է»: Դրան ի պատասխան, փաստաբանը հարցրեց. «Եթե մտային այս վիճակի մեջ գտնվող մի անձնավորություն հանդիպի մի մարդու, որին կասկածում է իր ողջ ընտանիքը սպանած լինելու մեջ, սա բավական պիտի լինե՞ր նրան խելացնորության վիճակի հասնելու համար»: Բժիշկն ասաց. «Հնարավոր է: Չկա բացարձակ պատճառ կամ ելք»:

Դոկտոր Քոնոսը ասաց, որ ինչ որ ինքը լսել, կամ տեսել է, իրավական բժշկության առումով բավական չէ պաշտպանյալին որպես էպիլեպտիկ ախտորոշելու համար: Նա ավելացրեց, որ պաշտպանյալի մոտ դիտարկել է անհավասարակշռության նշաններ:

Դասավանդող դոկտոր Մազհար Օսման բեյն ասաց. «Պաշտպանյալը հոգեբանական անհավասարակշռության նշաններ ցույց չի տալիս: Նյութական անհավասարակշռության նշաններն այն տեսակը չեն, որ լրջորեն հաշվի առնվեն իրա-

վական բժշկության մեջ: Թոռլաքյանը խելացնոր չէ այժմ, ինչպես խելացնոր չի եղել ոճիրը գործելու ժամանակ: Նա ժամանակավոր խելացնորությունից չի տառապել և նման նոպա չի ունեցել : Ինչ վերաբերում է էպիլեպսիային, ապա, եթե նույնիսկ նա ունի այդ հիվանդությունը, իր հոգեկանը դրանից չի ազդվել: Էպիլեպտիկներին յուրահատուկ ներվային վիճակ այստեղ չկա: Իր սեփական ցուցմունքից պարզ է, որ սպանությունը կատարելու պահին իր միտքը շփոթ չի եղել, հոգեբանական անկում, կամ էպիլեպտիկ նոպա չի ունեցել: Իր նոպան եկել է *(ոճրից)* 15 օր առաջ: Եթե նույնիսկ սա ճիշտ է, 15 օր հետո նոպայի նշաններ չէին կարող լինել»:

Ինչ վերաբերում է բրիտանացի բժշկի ցուցմունքին, նա ընդունեց, որ հնարավոր է, որ *(էպիլեպսիան)* ազդած լինի, եթե պաշտպանյալի ցուցմունքը ճշմարիտ է: Բայց նա հրաժարվեց որևէ որոշակի բան ասել: (Նկատի ունենալով, որ մասնագետների Լոզանի կոնֆերանսը այս հնարավորությունը ժխտել էր, դատավորի հայեցողությանն է մնում վկաների ցուցմունքների ճշմարտացիությունը որոշելը): Սա այն ամենն է, ինչ կարող ենք ունենալ բժիշկների կարծիքներից՝ հիվանդության բժշկական տեսանկյունից:

Ինչ վերաբերում է հարցի բարոյական կողմին, Թոռլաքյանը Թուրքիայում մի խորամանկ փախստական է: Ավելին. նա փախավ մի երկիր, որ պատերազմի մեջ էր իր սեփական պետության դեմ: Նա այդ երկրում որպես կամավոր արձանագրվեց: Այսպիսով, նա ոչ միայն փախստական է, այլև դավաճան: Նա փախավ ոչ միայն թաքնվելու, այլ թշնամուն ծառայելու համար: Նա փախավ իր սեփական երկրի դեմ փամփուշտներ կրակելու համար: Նա ասաց, որ իբրև կամավոր արձանագրվեց, գիտենալով հանդերձ, որ ինքը հիվանդ է: Հայերը Թուրքիայում միշտ ըմբոստացել են: Թեև ըմբոստացումը անկախության և ազատության համար բավականին օրինական է, սակայն ձախողության դեպքում պատիժը հավասարապես օրինական և նորմալ է: Փոխանակ հերոսաբար ընդուներ իր պատիժը, նա փախավ Թուրքիայից, որը կերակրել էր իրեն, հարստացրել էր ընտանիքը, հարգել էր իր լեզուն, կրոնքը, պատիվը և ավանդությունները. չէր պատժել իր գյուղը, որովհետև այնտեղ ապստամբություն չէր եղել: Նա փախավ մի երկիր, որը պատերազմի մեջ էր Թուրքիայի դեմ: Նա այնտեղ արձանագրվեց որպես կամավոր՝ թուրքերի դեմ կռվելու համար: Դաւռախազին բացահայտորեն ասաց, որ նա այդ գործողությունները կատարեց իմանալով հանդերձ, թե իրեն ինչ պատիժ է սպասում: Նա անընդհատ հիշեց Ջիվանշիրի կողմից կատարված մի քանի վիրավորական արտահայտություններ: Բայց նա չասաց, թե ինքը քանի՞ կյանք է խլել որպես իր մի քանի վերքերի վրեժ: Այն մարդկանց շարքում, որոնց նա հանդիպեց Ստամբուլում, մենք տեսնում ենք մի քահանայի, որը մահվան էր դատապարտված Թուրքիայի դեմ լրտեսելու համար: Ոճրից մի քանի օր առաջ, Թոռլաքյանը իր զոհին հետապնդել է Թեփեբաշիի այգում: Ջիվանշիրի կինը դա հասկացել է, և դրա մասին ցուցմունք տվեց այս դատարանում: Սակայն պաշտպանյալը ստեց: Այս փաստը նրանք թաքցրին և սպասեցին: Թալեաթ փաշայի սպանողը արդարացվել էր: Ըստ Դյոչ Զեյթունգի, Բեռլինի մարդասպանի բերնից ևս փրփուր էր դուրս գալիս: Նա ևս հաճախակի ուշագնաց էր լինում: Այնտեղ ևս, տնատերը, որտեղ նա սենյակ էր վարձել, պաշտպանության կողմից վկայություն տվեց: Շատ գեղեցիկ: Մեզ ասվում է, որ այն պլանը, որ հաջողվեց Բեռլինում, որոշակիորեն պիտի գործի Ստամբուլում: Արդյունքում, մի երազի հիման վրա վախկոտ ձևով կատարված է մի ահավոր մարդասպանություն: Զարմանալիորեն, այս երազը ընդգրկում է հատվածներ, որոնք չեն համապատասխանում պաշտպանյալի նպատակներին:

Պաշտպանյալը ներկայացնում է այնպես, որ ամեն ինչ կարծես երազի մեջ է կատարվում, բայց խուսափում է այդ կյանք փրկող երազից՝ թուրքերի մի սխալը հիշատակելու համար *(նախադասությունը՝ այնպես ինչպես հրատարակության մեջ է)*: Բայց խորաթափանցություն չի ունենում մոռանալու, որ դեպքից հետո թրքական ոստիկանատանը իրեն ծեծել են: Նա ասում է, որ սա երազ չէ, այլ իրականություն:

ԴԻՄՈՒՄԸ ՊԱՏԺԻ ՀԱՄԱՐ

«Բիհբուդ խան Ջիվանշիրը, Ներքին գործերի նախկին նախարարը Ադրբեջանի Հանրապետության, որը ճնշված և անարդար վերաբերմունքի արժանացած մյուս ազգերի հետ միասին նվաճել էր ազատ և անկախ լինելու իրավունքը, մի կրթված, զարգացած և կարեկից երիտասարդ մարդ էր: Կարեկից լինելը և գիտությունը նրա համար այնքան կարևոր էին, որ նա հրաժարվեց Մուսավաթի ազգայնական կուսակցությունից: Թերևս նա իր կյանքում կատարած միակ սխալի զոհն էր:

Ընկեր Միդի Բաուզեն, Ջիվանշիրի հաջորդը և Կովկասյան հանրապետությունների դաշնակցության Արտաքին առևտրի նախարարը, Ջիվանշիրի գերեզմանի վրա, իր դամբանականում ասաց. «Դու և ես երբեք չենք եղել նույն կրոնից, նույն մասնագիտության կամ նույն սկզբունքների: Սակայն ես այստեղ եմ եկել, ավաղ, քո գերեզմանի վրա ասելու մի ճշմարտություն: Դու աշխատեցիր քո ազգի յուրաքանչյուր անդամի լավի համար, առանց նախապաշարումների: Երբ մեր նավահանգիստ էին հասնում ալյուր և այլ մթերքներ, դու առաջարկում էիր դրանք բաժանել Կովկասյան դաշնակցության հանրապետությունների միջև, նրանց արտահանումներին համապատասխան: Այն ժամանակ դու պնդում էիր, որ օգնություն ուղարկվի Հայաստան, որովհետև, դու ասում էիր՝ դիմելով մյուսներին. «Եթե անենք այն, ինչ դուք առաջարկում եք, Հայաստանում ամեն մարդ սովամահ կլինի 15 օրվա ընթացքում»: Եվ ահա, մի հայի որդի է, որ պատճառ դարձավ, որ այսօր դու գերեզմանում լինես»: Ջիվանշիրի թաղման ժամանակ այս խոսքերը 800-900 մարդ լսեց: Այս դամբանականը, ինչպես նաև մյուսները, գերեզմանի մոտ թարգմանվեցին թուրքերենի:

Հետազոտությունը, վկաների ցուցմունքները, կրակողն ու փախչողը այլ մարդ լինելու անկարելիությունը պարզորեն ցույց են տալիս, թե ով է մարդասպանը: Քրիստոնեական կրոնը հայ մարդասպանին ասում է. «Եթե մի երեսիդ ապտակեն, մյուս երեսդ դեմ տուր»: Մարդասպանը այս խորհրդի լրիվ հակառակն է արել, կամ, ամենաքիչը, հակադրվել է դրան: Վերջապես, Ջիվանշիրը նրան չի ապտակել, այլ օգնել է, որ սովամահությունից փրկի նրա ամբողջ ազգը:

Ինչ վերաբերում է ազգությանը (դրանով պայմանավորված մարդասպանությանը), մահապատիժը հին է այնքան, ինչքան դատավարական արդարադատության պատմությունն է: Ճիշտ է, որ քաղաքակիրթ աշխարհում ժամանակակից ձգտումը ուղղված է դեպի այս պատժի մեղմացումը: Որոշ տեղերում *(մահվան պատիժը)* վերանում է արագորեն, ուրիշ տեղերում ավելի դանդաղ: Չկա երկիր, որտեղ այս պատժի հակառակորդներ չլինեն: Այնուամենայնիվ, որովհետև այս պատիժը տրվում է մի մարդու ա՛յն երկրում, որտեղ նա գործել է ոճիրը, հանուն այդ ազգի, և այդ ազգի լավության համար, այլ մարդկանց կողմից նման ոճիր կատարելը կանխելու համար, ապա այդ դատավճիռը ընդունելով է, որ պետք է

հարգվեն երկրի հաստատությունները, օրենքներն ու ավանդությունները: Թրքական քրեական օրենսգրքի 170-րդ հոդվածը սահմանում է, որ եթե մի անձնավորություն կանխամտածված ձևով մարդասպանություն է կատարում, նա պետք է իրավականորեն մահապատժի ենթարկվի: Դրա նման, բրիտանական օրենքի 36-րդ գլխի 6-րդ և 7-րդ հոդվածները, որոնք անվանված են Վիլիամ Չորրորդի անունով, սահմանում է, որ նման մարդասպանություն կազմակերպող անձը պետք է մահապատժի ենթարկվի:

Այս գործում որևէ պլանավորում եղե՞լ է: Թոռլաքյանն իր զոհին հետապնդել է: Նա սպասել է մի քանի օր: Նա գտել է մի մեկուսացած վայր: Նա կրակել է իր զոհի հետևից: Սրանք բոլորը մի պլանի վկայություններ են: Կասկած չկա, որ Թոռլաքյանը գործում էր մի գաղտնի կազմակերպության անունից: Երեսուն վկաներ անմիջապես այստեղ եկան նրան պաշտպանելու համար: Պաշտպանյալը դուրս է մնացել Տրապիզոնի տարրական դպրոցից և նույնիսկ չի կարողացել թուրքերեն խոսել սովորել: Մինչդեռ, նա մասնագետ բժշկի նման սովորել է մտավոր անհավասարակշռության ախտանիշների, էպիլեպսիայի և խելացնորության մասին: Տրված մի ազդանշանով, երեք հայտնի բժիշկներ գնացին նրա բանտախուցը: Մինչև նրանց այցելելը, նա կարողացավ կազմակերպել, որ մի ուրիշ բժիշկ նախապատրաստի նրանց: Թեև նա ասաց, որ գրպանում ոչ մի պեննի չի ունեցել, փաստաթղթերից բացահայտ է, որ նա կարողացել է վարձել երեք գլխավոր փաստաբանների և մեկ թարգմանչի՝ հետաքննությունների և դատական լսումների ավելի քան երկու ամիսների ընթացքում:

Ամենակարևորը՝ Չիվանշիրը իմացել էր, որ իրեն սպանելու են: Այդ մասին նա խոսել է ոչ միայն իր կնոջ, այլև ընկերների հետ:

Վերջին երկու ամիսներին, պաշտպանյալը Ստամբուլի ամբողջ բնակչության ուշադրությունը կենտրոնացրել է թերթերի վրա՝ բոլոր լեզուներով: Մի մարդ, որ ոչ ոք էր, առանց բացարձակ ոչ մի առանձնահատկության, դարձել է մի նշանավոր մարդ: Ոճիրից երեք օր առաջ Չիվանշիրի կինը նկատել էր, որ Թեփեբաշիի զբոսայգում իրենց հետևում են: Սա փաստում է, որ պլանավորում կար: Պաշտպանյալը ոստիկանությանը տվեց իր ընկերների բնակության հասցեն որպես իրենը, որպեսզի ոստիկանությունը ժամանակ կորցնի և այդ ժամանակամիջոցում ոչնչացվի որևէ փաստ: Սա վկայում է, որ նա ոճիրը պլանավորել էր և այն կատարել է լրիվ զգոն վիճակում: Մարդասպանությունը կատարվել է որոշակի պլանի շրջանակներում, որը մտադրված լինելու մի ուրիշ վկայություն է: Նա սպասեց մինչև Չիվանշիրը դուրս եկավ թատրոնից և գնդակահարեց իր տան մուտքի մոտ, գիշերվա կեսին: Նրա վրա կրակեց մեջքից, օգտվելով փողոցի ամայի լինելուց: Չիվանշիրի հանդեպ խոր ատելությունն ու զզվանքը պլանավորված լինելու մեկ ուրիշ վկայություն է: Հետևաբար, քանի որ Թոռլաքյանը մարդասպան է և նա ոճիրը կատարել է կանխամտածված ձևով, նա արժանի է մահապատժի: Այդ պատիժը լրիվ համապատասխանում է իր գործած ոճրի լրջությանը և ոճրի մեջ նրա պատասխանատվությանը, ուստի այն ճիշտ պատիժ է: Այս պատիժը ինչքան անհրաժեշտ է, նույնքան և ճիշտ է, որովհետև այն կծառայի Ստամբուլի (որտեղ տեղի է ունեցել ոճիրը) ամբողջ բնակչության բարեկեցության պահպանման և ապահովության շահերին: Այն անհրաժեշտ է, որովհետև սա վրիժառությամբ, կամ դավաճանությամբ պայմանավորված առաջին մարդասպանությունը չէ: Անցյալ տարի Ադրբեջանի նախկին վարչապետ և Արտաքին գործերի նախարար խան Խոյսկին սպանվեց նույն ձևով մի ուրիշ հայի կողմից: Եթե այն ժամանակ այդ հայը բռնվեր, այս ոճիրը պատահած չէր լինի: Ոճիրը չէր կատար-

վի, եթե հայը, որն սպանեց Ադրբեջանի Ազգային ժողովի նախկին ատենապետ դոկտոր Հուսեյն Ագաևին, նույն տարում բռնված լիներ: Եթե այս մարդիկ բռնված լինեին, այս մարդասպանությունների ներքին պատմությունը հայտնի կդառնար, իսկ նրանց կազմակերպիչները՝ անկարող: Նաև, եթե այն դատավորները, որոնք այս տարի Բեռլինում դատեցին Թալեաթ փաշայի մարդասպանին, ցուցաբերեին արդարության ոգի, որը բավարարեր ամենաքիչը Բուլղարիայի վարչապետ Ռադոսլավովին, ապա Բիհբուդ խանի սպանությունը տեղի չէր ունենա: Այս մարդասպանությունը նման դեպքերի մի երկար շղթայի մեկ օղակն է: Այդ շղթան կոտրելու և նրա հետագա առաջընթացը դադարեցնելու համար անհրաժեշտ է ջարդել և ոչնչացնել այս օղակը, որը մեր ձեռքում է, բռնված է:

Առարկությունը, թե «մահապատիժը չափազանց խիստ է» և որ այն «անդարձելի հրաման է», այս գործում տեղ չունի: Ժամանակը, վայրը, արդի ընկերային և իրավական պայմանները միասին, լիազորում են այս պատիժը: Անկախ նրանից, թե ինչքան խիստ կարող է լինել մահապատիժը, այս դեպքում այն անհրաժեշտություն է, որովհետև հանրային կարգ ու կանոնը և հասարակության ապահովությունը պահպանելը սուրբ պարտականություն է: Այն ձեռքը, որը կրակեց մի առողջ մարդու վրա, որն իր կնոջ և եղբայրների հետ տուն էր վերադառնում, կրակեց հետևից, մթնով, առանց զգուշացնելու, առանց դողալու կամ տատանվելու, կատարված ներքին մղումով ընդունված որոշմամբ, հավանաբար, որպես դավադրության մի մաս, պետք է կոտրվի:

Պաշտպանության համար ներկայացված բոլոր վկաները հայեր էին, և մեղադրության համար բոլոր ներկայացվածները՝ մուսուլմաններ: Ինչի՞ մասին է խոսում սա: Դա չի՞ ասում, որ կատարված ոճիրը կապ ունի ազգային խնդրի հետ: Դա չի՞ ասում, որ հայերը որոշ մուսուլմանների ասում են. «Մենք պիտի կրակենք ձեզ վրա և մենք չպիտի պատժվենք, օգտվելով քաղաքակրթության և բժշկության որոշ խակ տեսությունների վակուումից. մենք ամեն միջոցի պիտի դիմենք մարդասպաններին փրկելու համար»: Մուսուլմաններն ասում են. «Խնդրում ենք, մի արեք դա: Մենք պիտի պատժենք որևէ մեկին, որ անի դա»: Ի՞նչը կարող է լինել ավելի բնական ու արդար, քան մուսուլմանների կեցվածքը:

Ձերդ գերապատվություն, խնդրում եմ կշռադատեք վկաների ցուցմունքները և այն գործը, որը մարդասպանը ուզում է կառուցել՝ հենվելով ստերի վրա: Հաշվի առեք թուրք բժշկական մասնագետների զեկուցագիրը, որը համատեղելի է մեր երկրում հոգեբուժության ամենաառաջավոր սկզբունքների հետ:

Հիշեցեք, որ Չիվանշիրի մարդասպանը անցյալ մեկ տարվա ընթացքում կատարված մարդասպանությունների երկար շարքի մեջ միայն մեկն է, որ այդ մարդասպանությունների մեջ միայն Բեռլինինն էր, որ բռնվեց ու արդարացվեց: Հիշեցեք, որ ամենաքիչը ամբողջ Ադրբեջանը ընդբռնումով և անձկանոք սպասում է այն գործողությանը, որը պիտի ձեռնարկվի Չիվանշիրի մարդասպանի նկատմամբ: Հնարավորությունը, որը ձեզ ընձեռված է, շատ մեծ է և սուրբ: Մեկ մարդասպանի պատժելով հնարավոր պիտի լինի փրկել բազմաթիվ մարդկանց՝ մարդասպաններ կամ զոհեր լինելուց, և հավանաբար, վերջ տալու քաղաքական սպանությունների այս ողբերգությանը: Այսօր միայն դուք ունեք անհրաժեշտ որոշումը կայացնելու ուժը: Սա մի որոշում է, որն սպասված է հետաքրքրությամբ և նույնիսկ հուզմունքով, այն դեպքում, երբ ուրիշները դրան սպասում են տխրությամբ ու հաշտվելով ճակատագրի հետ: Հույս ունենք, որ ձեզ կառաջնորդեն արդարությունն ու ճշմարտությունը:

ԴԱՏԱՎՃԻՌԸ

1921-ի նոյեմբերի 4-ին՝ ուրբաթ օրը, Ստամբուլի օրաթերթերը հրապարակեցին «Հավաս» և «Ռոյթըրզ» լրատվական գործակալությունների հետևյալ հրապարակումը.

«Ստամբուլ, 3 (S.H.R.) (հավելումը անհայտ) Միսաք Թոռլաքյանի դատավարության վճիռը հայտարարվել է այսօր: Մարդասպանության գործում մեղադրյալի հանցանքը հաստատվեց, սակայն դատարանը նրան գտավ անմեղսունակ և ոչ պատասխանատու»:

Մի քանի օր հետո թերթերը հայտարարեցին, որ հայկական պատրիարքարանին հանձնված Միսաք Թոռլաքյանը, հունական նավով Ստամբուլից մեկնել է Պիրեա:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

«Միսաք Թոռլաքյանի Դատավարությունը» աշխատության հայերեն հրատարակության առթիվ 3

Նախաբան 5

Անձնական ծանոթություն 7

Ակնարկ 1918-ին Կովկասում տիրող իրավիճակի մասին....9

Լսումներ Զինվորական դատարանում....12

Մեղադրող կողմի վկաները....13

Մեղադրվող կողմի վկաները 17

Մեղադրող կողմի վկաները (Լրացուցիչ վկայություն)....162

Մահզար Օսման բեյի զեկուցագիրը դատարանին....203

Եզրափակում....205

Բժշկի կարծիքը 207

Ներկայացված է մեղադրող կողմից

Բիհբուդ խան Ջիվանշիր....209

Դատախազի եզրափակիչ փաստարկները 214

Խոսրովյանի եզրափակիչ փաստարկները 219

Հայդար Ռիֆատ բեյի զեկուցագիրը....237

Դիմումը պատժի համար 243

Դատավճիռը....246

ՎԱՐԴԳԵՍ ԵՂԻԱՅԱՆ, ԱՐԱ ԱՐԱԲՅԱՆ

«ՄԻՍԱՔ ԹՈՐԼԱՔՅԱՆԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ»

Թարգմանություն անգլերենից

Թարգմանիչ **ՎԱՀԵ ԳԱԲՈՒՋՅԱՆ**

VARTKES YEGHIAYAN & ARA ARABYAN

"THE CASE OF MISAK TORLAKIAN"

Translated by **VAHE GABUJYAN**

Խմբագիր
ՍԵՅՐԱՆՈՒՀԻ ԳԵՂԱՄՅԱՆ

Սրբագրիչ
ԶԱՐՈՒՀԻ ՄԽԻԿՅԱՆ

Համակարգչային շարվածքը
ՀԱՅԿ ԳԵՂԱՄՅԱՆԻ

Համակարգչային էջադրումը
ՄԱՆԵ ԼԱԼԱՅԱՆԻ

«Գրաբեր» ՍՊԸ հրատարակչություն
ԵՐԵՎԱՆ 2008

"Graber" LTD
Yerevan 2008

Չափսը 70x100, 1/16: Ծավալը 15.5 տպ. մամուլ:
Թուղթը օֆսեթ: Տպաքանակը 400 օրինակ:

Տպագրվել է «ՎՄՎ-ՊՐԻՆՏ» ՍՊԸ հրատարակչության տպարանում
Հասցեն՝ Ազատության 24, հեռ. 28 54 28
E-mail: vmv_print@yahoo.com